Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ

Հոդված 4.2. Քննչական մարմինը

1. Քննչական մարմինը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով, քննչական ենթակայության կանոններին համապատասխան նախաձեռնում է քրեական վարույթ և իրականացնում նախաքննություն:

~~1. Քննչական մարմինը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով կազմակերպում և իրականացնում է նախաքննություն:~~

2. Քննչական մարմնի ղեկավարին նշանակում և ազատում է լիազորված մարմնի ղեկավարը՝ վարչապետի համաձայնությամբ:

(4.2-րդ հոդվածը լրաց. 23.03.18 ՀՕ-268-Ն)

Հոդված 13. Պայքար հանցագործությունների դեմ

Ազգային անվտանգության մարմինները սույն օրենքով և այլ օրենքներով իրենց առջև դրված խնդիրների լուծման նպատակով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացնում են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, գաղտնի քննչական գործողություններ, կատարում են ~~հետաքննություն և~~ նախաքննություն՝Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված քննչական ենթակայության կանոններին համապատասխան ~~ուղղված իրենց քննչական ենթակայությանը վերապահված հանցագործությունների բացահայտմանը, կանխմանը և խափանմանը~~:

Ազգային անվտանգության մարմինների վրա օրենքով կարող են դրվել հանցագործությունների դեմ պայքարի այլ խնդիրներ:

~~Հանցագործությունների դեմ պայքարի ոլորտում ազգային անվտանգության մարմինների գործունեությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քրեական, քրեական դատավարության և օպերատիվ-հետախուզական գործունեությունը կանոնակարգող օրենսդրությանը, սույն օրենքին և ենթաօրենսդրական նորմատիվ ակտերին համապատասխան:~~

Ազգային անվտանգության մարմիններն օրենքով իրենց իրավասությանը հանձնված գործերով իրականացնում են դեպքի վայրի պահպանություն, որի կանոնները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ազգային անվտանգության մարմինները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, ունեն և օգտագործում են ձերբակալվածներին պահելու վայրեր:

(13-րդ հոդվածը լրաց. 01.03.18 ՀՕ-133-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-268-Ն)

Հոդված 15. Ազգային անվտանգության մարմինների լիազորությունները

(վերնագիրը խմբ. 23.03.18 ՀՕ-268-Ն)

1. Ազգային անվտանգության մարմինները՝

1) իրենց իրավասության սահմաններում ապահովում են Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը, պետական սահմանների անձեռնմխելիությունը, տարածքային ամբողջականությունը, սահմանադրական կարգը, քաղաքացիների իրավունքները, ազատությունները և օրինական շահերը, ամրապնդում են հանրապետության պաշտպանունակությունը.

2) գաղտնի հիմունքներով համագործակցում են դրա համար համաձայնություն տված անձանց հետ.

3) օրենքով սահմանված կարգով իրականացնում են ~~հետաքննություն, նախաքննություն և~~ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ~~, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ ունեն և օգտագործում են ձերբակալվածներին պահելու վայրեր~~.

4) ներթափանցում են հետախուզական և այլ գործունեություն իրականացնող օտարերկրյա պետությունների հատուկ ծառայություններ ու կազմակերպություններ, ինչպես նաև հանցավոր խմբավորումներ, որոնց գործունեությունը կարող է վնասել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանը.

5) օրենքով սահմանված կարգով տեղեկատվական անվտանգության ոլորտում իրականացնում են պետական վերահսկողություն, ինչպես նաև համակարգում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պաշտպանվող տեղեկատվության գաղտնագրային և տեխնիկական պաշտպանության բնագավառի գործունեությունը, սահմանում են Հայաստանի Հանրապետությունում տեխնիկական հետախուզություններին հակազդման կազմակերպման միասնական կարգը.

6) ծառայողական պարտականությունները կատարելիս օգտագործում են պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին պատկանող կապի և դրա հայտնաբերման միջոցները, իսկ անհետաձգելի դեպքերում՝ նաև կազմակերպություններին ու ֆիզիկական անձանց պատկանող կապի և դրա հայտնաբերման միջոցները՝ համարժեք հատուցմամբ.

7) հանցագործությունների կանխման ~~կանխարգելման~~, հանցագործություն կատարած կամ դրանց կատարման մեջ կասկածվող անձանց հետապնդելու և ձերբակալելու, շտապ բժշկական օգնության կարիք ունեցող ֆիզիկական անձանց

բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ հասցնելու, ինչպես նաև դեպքի վայր մեկնելու համար, անհետաձգելի դեպքերում օգտագործում են ֆիզիկական անձանց և կազմակերպություններին պատկանող տրանսպորտային միջոցները: Ազգային անվտանգության մարմինները, օրենքով սահմանված կարգով, պարտավոր են հատուցել նրանց ծախսերը կամ պատճառած վնասը.

8) հանցագործության կատարման մեջ կասկածվող անձանց հետապնդելիս օրենքով սահմանված կարգով մուտք են գործում ֆիզիկական անձանց պատկանող բնակելի և այլ շինություններ, հողամասեր, կազմակերպությունների շինություններ, եթե բավարար տվյալներ կան ենթադրելու, որ այնտեղ հանցագործություն է կատարվում կամ կատարվել է, և հապաղումը կարող է վտանգի տակ դնել քաղաքացիների կյանքն ու առողջությունը.

9) ստուգում են ֆիզիկական անձանց և պաշտոնատար անձանց՝ անձը հաստատող փաստաթղթերը, եթե հանցագործության կատարման մեջ նրանց կասկածելու համար բավարար հիմքեր կան.

10) ձերբակալում են այն անձանց, որոնք ներթափանցել են կամ ներթափանցվելու փորձ են կատարել հատուկ ռեժիմային օբյեկտների և պահպանվող այլ օբյեկտների հսկվող տարածքներ, ինչպես նաև ստուգում են նրանց անձը հաստատող փաստաթղթերը, նրանցից ստանում են բացատրություններ, կատարում են այդ անձանց զննում, նրանց իրերի ու փաստաթղթերի զննում և առգրավում.

11) սահմանված կարգով պետական մարմիններ և կազմակերպություններ են ներկայացնում առաջարկություններ կամ միջնորդություններ անվտանգության սպառնալիքների և այն հանցագործությունների կատարմանը նպաստող պատճառների ու պայմանների վերացման մասին, որոնց բացահայտումը, կանխումն ու խափանումը վերապահված են լիազորված մարմնի իրավասությանը.

12) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից, օրենքով սահմանված կարգով, ստանալ տեղեկություններ (այդ թվում՝ առցանց), որոնք անհրաժեշտ են ազգային անվտանգության մարմինների վրա դրված պարտականությունների կատարման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ տեղեկությունների ստացման հատուկ կարգ է սահմանված.

13) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարմինների գործունեության համակարգման և արդյունքների ամփոփման համար ունեն տեղեկատվական համակարգեր, վերլուծության, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական նպատակներով տեսագրման, ձայնագրման, կինոնկարահանման, լուսանկարահանման և տեխնիկական կենտրոններ.

14) անցկացնում են քրեագիտական և այլ փորձաքննություններ ու հետազոտություններ.

15) ազգային անվտանգության մարմինների իրավասության սահմաններում, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, ոլորտային համագործակցությունը կանոնակարգող փաստաթղթերի, իսկ բացառիկ դեպքերում՝ փոխադարձության հիման վրա, համագործակցում են օտարերկրյա պետությունների

հատուկ ծառայությունների և իրավապահ մարմինների հետ ու սահմանված կարգով, փոխգործակցության հիման վրա, նրանց հետ փոխանակում են օպերատիվ տեղեկություններ, հատուկ տեխնիկական և այլ միջոցներ.

16) իրենց իրավասության սահմաններում, օրենքով սահմանված կարգով, մասնակցում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի նախագծերի մշակմանը և կնքում քաղաքացիաիրավական պայմանագրեր.

17) իրականացնում են միջոցառումներ՝ ուղղված սեփական անվտանգության ապահովմանը (այդ թվում՝ լիազորված մարմնի համակարգում օտարերկրյա պետությունների տեխնիկական հետախուզության միջոցներին հակազդելը), ազգային անվտանգության մարմինների պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանմանը, օգտագործում են տեխնիկական միջոցներ՝ օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների և կազմակերպությունների, հանցավոր խմբերի և առանձին անձանց ներթափանցման կանխման ու խափանման նպատակով.

18) ազգային անվտանգության մարմինների աշխատակիցների, ազգային անվտանգության մարմինների ստորաբաժանումների, շինությունների և տրանսպորտային միջոցների քողարկման նպատակով օգտագործում են պետական մարմինների և կազմակերպությունների փաստաթղթերը, այլ միջոցները, որոնք անհրաժեշտ են քողարկման համար.

19) անցկացնում են Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հիմնահարցերի գիտական հետազոտություններ.

20) պայմանագրային հիմունքներով օգտվում են ֆիզիկական անձանց և կազմակերպությունների բնակելի և այլ շինություններից.

21) կադրերի մասնագիտական նախապատրաստության նպատակով, օրենքով սահմանված կարգով, ունեն համապատասխան ուսումնական հաստատություններ.

22) հատուցմամբ կամ անհատույց իրականացնում են կադրերի պատրաստում օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների, կազմակերպությունների անվտանգության ծառայությունների համար, եթե դա չի հակասում ազգային անվտանգության մարմինների գործունեության սկզբունքներին.

23) վարչապետին և նրա հանձնարարությամբ այլ պետական մարմիններ և կազմակերպություններ տեղեկատվություն են ներկայացնում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանն առնչվող հարցերի մասին.

24) բացահայտում, կանխում և խափանում են Հայաստանի Հանրապետության անվտանգության դեմ ուղղված՝ օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների և կազմակերպությունների, ինչպես նաև առանձին անձանց հետախուզական և այլ քայքայիչ գործունեությունը.

25) հետախուզական տեղեկություններ են հավաքում Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման, նրա տնտեսական, գիտատեխնիկական և պաշտպանական ներուժի հզորացման, պետության անվտանգության ամրապնդման նպատակով.

26) բացահայտում, կանխում և խափանում են իրենց քննչական ենթակայությանը վերապահված, ինչպես նաև օրենքով նախատեսված իրենց լիազորությունների կատարման ընթացքում հայտնի դարձած այլ հանցագործությունները, իրականացնում են այդ հանցագործությունները կատարած կամ դրանց կատարման մեջ կասկածվող անձանց հետախուզումը.

27) բացահայտում, կանխում և խափանում են ահաբեկչական գործողությունները.

28) մշակում և պետական համապատասխան մարմինների հետ համատեղ իրականացնում են միջոցառումներ՝ ուղղված պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն երևույթների, օտարերկրյա պետությունների հետ կապված՝ զենքի և թմրանյութերի ապօրինի շրջանառության, դրանց մաքսանենգության, հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելու, զինված կազմավորումների, հանցավոր խմբերի, Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոխելու նպատակ ունեցող անձանց և կազմակերպությունների դեմ պայքարին.

29) իրենց իրավասության սահմաններում ապահովում են անվտանգությունը Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում և հիմնարկներում, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում.

30) իրենց իրավասության սահմաններում ապահովում են Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական համալիրի, ատոմային էներգետիկայի, տրանսպորտի և կապի, էկոնոմիկայի, ֆինանսների և արդյունաբերության, ռազմավարական (ստրատեգիական) օբյեկտների, ինչպես նաև առաջնային գիտական մշակումների ոլորտների անվտանգությունը.

31) մասնակցում են պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանության վերաբերյալ միջոցառումների մշակմանը և իրականացմանը, վերահսկում են պետական մարմիններում, զինվորական կազմավորումներում, կազմակերպություններում պետական և ծառայողական գաղտնիքի պահպանումը, սահմանված կարգով իրականացնում են միջոցառումներ՝ կապված քաղաքացիներին պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններին առնչվելու թույլտվության հետ.

32) անցկացնում են միջոցառումներ՝ ուղղված Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս նրա կազմակերպությունների և քաղաքացիների անվտանգության ապահովմանը.

33) Հայաստանի Հանրապետության տարածքում ապահովում են օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների անվտանգությունը.

34) իրենց իրավասության սահմաններում, իրավասու պետական մարմինների հետ համատեղ, մասնակցում են Հայաստանի Հանրապետության տարածքում անցկացվող հավաքների և հանրային միջոցառումների անվտանգության ապահովմանը.

35) ռադիոհսկողության ճանապարհով իրականացնում են հաղորդող ռադիոէլեկտրոնային միջոցների, ռադիոտվյալների և ռադիոառաքումների գրանցումն ու կենտրոնացված հաշվառումը, բացահայտում են Հայաստանի Հանրապետության

ազգային անվտանգությանն սպառնացող կամ հակահիրավական նպատակներով օգտագործվող ռադիոէլեկտրոնային միջոցների ռադիոառաքումները և ռադիոալիքները.

36) օրենսդրությանը համապատասխան՝ մասնակցում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելուն և դադարեցնելուն, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կողմից Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելուն ու տարածքից դուրս գալուն, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու ռեժիմին վերաբերող հարցերի լուծմանը.

37) պահպանում են Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարմինների մոբիլիզացիոն պատրաստվածությունը.

38) մասնակցում են Հայաստանի Հանրապետության տեղեկատվական-հեռահաղորդակցական համակարգերում պետական տեղեկատվական պաշարների պաշտպանության, տեղեկատվության գաղտնագրային և տեխնիկական պաշտպանության, տեխնիկական հետախուզություններին հակազդման բնագավառներում պետական քաղաքականության մշակմանը և իրացնում են դա.

39) Հանրապետության նախագահին, վարչապետին, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան պաշտոնատար անձանց ապահովում են կառավարական կապով և հատուկ կապի այլ տեսակներով.

40) իրականացնում են ազգային անվտանգության մարմինների համար կադրերի պատրաստումը, նրանց վերապատրաստումը և որակավորման բարձրացումը.

41) օրենսդրությանը համապատասխան՝ իրականացնում են Հայաստանի Հանրապետության պետական սահմանի պահպանությունը.

42) կազմակերպում և իրականացնում են հակահետախուզական գործունեություն, որոշում են հակահետախուզական միջոցառումների անցկացման և դրանք իրականացնելիս գաղտնի մեթոդների ու միջոցների օգտագործման կարգը, ինչպես նաև սահմանում են ազգային անվտանգության մարմինների կողմից օտարերկրյա պետությունների հատուկ ծառայություններ և կազմակերպություններ ներթափանցելու կարգը.

43) աջակցում են Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զինվորական կազմավորումների, ինչպես նաև դրանց կառավարման մարմինների մարտունակության և մարտական պատրաստության պահպանմանն ու ամրապնդմանը.

44) ստանում, մշակում և վերլուծում են Հայաստանի Հանրապետության անվտանգությանն սպառնացող վտանգի մասին տեղեկատվությունը, կանխատեսում են դրա վտանգը.

45) օրենքով սահմանված կարգով ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ մասնակցում են իրականացվող միջոցառումներին.

46) սահմանում են ազգային անվտանգության մարմիններում իսկական և պայմանական անվանումների կիրառման և շնորհման կարգը.

47) օրենքով սահմանված կարգով սահմանում են հատուկ նշանակության հողերի օգտագործման սահմանափակումներ և նորմեր, մշակում և ներկայացնում են

առաջարկություններ՝ հատուկ նշանակության հողերի օգտագործման կարգի, պաշտպանական գոտիների, հատուկ կարգավորման դրույթների, քաղաքաշինական գործունեություն ծավալելու կարգի վերաբերյալ.

48) իրենց իրավասության սահմաններում հրապարակում են ազգային անվտանգության ապահովման հարցերի վերաբերյալ ակտեր ու հետևում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից դրանց կատարմանը.

49) ազգային անվտանգության մարմինների պաշտոնական ներկայացուցիչներին գործուղում են օտարերկրյա պետություններ՝ այդ պետությունների հատուկ ծառայությունների կամ իրավասու մարմինների համաձայնությամբ միջազգային բնույթի հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով.

50) վարչապետին ու նրա հանձնարարությամբ՝ պետական կառավարման համակարգի և տարածքային կառավարման մարմիններին իրազեկում են Հայաստանի Հանրապետության անվտանգությանն սպառնացող վտանգի մասին.

51) ապահովում են Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգությունը և իրենց իրավասության սահմաններում պայքարում են տնտեսական հանցագործությունների դեմ.

52) ռադիոհաճախականությունների բաշխումը և նշանակումը տնօրինող կազմակերպություններից ստանում են ռադիոհաճախականությունների տիրույթներ, ինչպես նաև վարձակալում են Հայաստանի Հանրապետության համապատասխան կազմակերպություններից կապի գծերն ու կապուղիները՝ Հայաստանի Հանրապետությունում և նրա տարածքից դուրս կառավարական կապի ու հատուկ կապի այլ տեսակների բացառիկ օգտագործման համար.

53) ապահովում են Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի, Կառավարության, վարչապետի, նախարարությունների, ինքնավար մարմինների, տարածքային կառավարման մարմինների, Բարձրագույն դատական խորհրդի, դատարանների, դատախազության, քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության, Կենտրոնական բանկի, պետական այլ մարմինների, Հայաստանի Հանրապետության տարածքում տեղակայված զորամասերի (բացառությամբ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերի), ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների, օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների փոստատարային օպերատիվ կապը (բացառությամբ դիվանագիտական փոստի).

54) փոխադրում են պետական և դիվանագիտական մարմինների հատուկ կարևորության, հույժ գաղտնի, գաղտնի և այլ ծառայողական թղթակցությունները, ապահովում են դրանց պահպանումը.

55) լիազորված մարմնում գործունեության համակարգման և արդյունքների ամփոփման համար ստեղծում են կապի, տեղեկատվական և տվյալների փոխանցման համակարգեր, տեղեկատվության պաշտպանության միջոցներ (այդ թվում՝ նաև կրիպտոգրաֆիկական պաշտպանության միջոցներ), Հայաստանի Հանրապետության

օրենսդրությանը համապատասխան՝ սահմանում են լիազորված մարմնի գործունեությանը վերաբերող օպերատիվ, արխիվային և այլ նյութերի հաշվառման, պահպանման ու օգտագործման կարգը.

56) իրենց իրավասության սահմաններում ընդհանրացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության կիրառման պրակտիկան, դրա կատարելագործման վերաբերյալ սահմանված կարգով առաջարկություններ ներկայացնում վարչապետին, մասնակցում են համապատասխան նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակմանը, իրենց գործունեության իրավական ապահովումը կազմակերպելիս իրականացնում են ազգային անվտանգության մարմինների մեթոդական ղեկավարումը.

57) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ սահմանում են լիազորված մարմնում գործավարության և արխիվային գործի կազմակերպման միասնական պահանջները.

58) մամուլում և զանգվածային լրատվության մյուս միջոցներով կազմակերպում են ազգային անվտանգության մարմինների գործունեությանը վերաբերող հրապարակումներ և հաղորդումներ.

59) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչություններում կազմակերպում, իրականացնում և վերահսկում են տեխնիկական հետախուզություններին հակազդման հատուկ միջոցառումներ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում են տեղեկատվական տեխնոլոգիաների, տեղեկատվական-հեռահաղորդակցական համակարգերի ներդրման, ծրագրային ուղեկցման, պաշտպանական միջոցների փորձաքննության իրականացումը.

60) հանցավոր ոտնձգություններից ապահովում են ազգային անվտանգության մարմինների զինծառայողների և քաղաքացիական անձնակազմի, այդ մարմիններին աջակցող անձանց, ազգային անվտանգության մարմինների քննչական ենթակայությանը վերապահված գործերով քրեական դատավարության մասնակիցների, նրանց ընտանիքների անդամների և հարազատների կյանքի, առողջության, պատվի և արժանապատվության, ինչպես նաև գույքի պաշտպանությունը.

61) կազմակերպում են քաղաքացիների ընդունելությունը, իրենց իրավասության սահմաններում քննարկում նրանց հանրագրերը, դիմումները և բողոքները.

62) սահմանված կարգով պատրաստում են օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների պաշտոնատար անձանց, հաստիքային գաղտնի աշխատողներին և այդ մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող անձանց, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից ստեղծված կազմակերպությունները, հիմնարկները, շահագործվող շինությունները, հատուկ տեխնիկական և տրանսպորտային միջոցները քողարկող փաստաթղթեր.

63) մասնակցում են սպառազինության և հատուկ տեխնիկայի, ստեղծվող սպառազինությանն ու հատուկ տեխնիկային ներկայացվող տեխնիկական պահանջների մշակմանը, իրականացնում են սպառազինության և հատուկ տեխնիկայի կուտակման,

պահպանման ու վերանորոգման, ինչպես նաև դրանց մատակարարման և վերանորոգման պատվերների տեղաբաշխում.

64) ազգային անվտանգության մարմինների պարտականությունների կատարման համար սահմանված կարգով ունեն հատուկ ստորաբաժանումներ:

(15-րդ հոդվածը փոփ. 09.04.07 ՀՕ-146-Ն, 23.03.18 ՀՕ-221-Ն, խմբ. 23.03.18 ՀՕ-268-Ն)

Հոդված 18. Համագործակցությունը Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների հետ

Ազգային անվտանգության մարմինները կարող են համագործակցել պետական մարմինների և կազմակերպությունների հետ:

Ազգային անվտանգության մարմիններն իրավապահ մարմինների հետ համագործակցում են հանցագործությունների բացահայտման և կանխման ու այլ հարցերի լուծման նպատակով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ-, քննչական և գաղտնի քննչական~~և քննչական~~ գործողություններ իրականացնելիս, որոնք սահմանվում են օրենքով:

Ազգային անվտանգության մարզային մարմիններն իրենց օպերատիվ-հետախուզական գործունեության մեջ անկախ են պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններից ու դրանց պաշտոնատար անձանցից:

Ազգային անվտանգության մարմինները Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով կարող են օգտագործել Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման այլ ուժերի հնարավորությունները:

Պետական մարմինները և կազմակերպությունները պարտավոր են աջակցել ազգային անվտանգության մարմիններին դրանց կողմից իրենց վրա դրված պարտականությունները կատարելիս:

Հայաստանի Հանրապետությունում փոստային կապի, էլեկտրոնային կապի, այդ թվում՝ հեռակոդային, գաղտնի, արբանյակային կապի համակարգերի ծառայություններ մատուցող կազմակերպությունները և քաղաքացիները պարտավոր են ազգային անվտանգության մարմինների պահանջով ապարատային միջոցների կազմում ընդգրկել լրացուցիչ սարքավորումներ և ծրագրային միջոցներ, ինչպես նաև անհրաժեշտ պայմաններ ստեղծել ազգային անվտանգության մարմինների կողմից օպերատիվ-տեխնիկական միջոցառումներ անցկացնելու համար:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության խնդիրների լուծման նպատակով ազգային անվտանգության մարմինների սպայական անձնակազմը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, կարող է գործուղվել պետական մարմիններ և կազմակերպություններ՝ նրանց թողնելով

զինվորական ծառայության մեջ: Նշված սպաներին կենսաթոշակ նշանակվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործուղվող սպաները կենսաթոշակի ընտրության և ստանալու իրավունք ունեն՝ ըստ մինչև գործուղվելը կամ գործուղվելուց հետո զբաղեցրած պաշտոնի:

Օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների, իրավապահ մարմինների և կազմակերպությունների հետ ազգային անվտանգության մարմինների համագործակցությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, ոլորտային համագործակցությունը կանոնակարգող փաստաթղթերի, իսկ բացառիկ դեպքերում՝ փոխադարձության հիման վրա:

(18-րդ հոդվածը փոփ., լրաց. 23.03.18 ՀՕ-268-Ն)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 108.1. Աշխատողի պաշտոնավարման ~~լիազորությունների~~ կասեցման իրավական հետևանքները

1. Մեղադրյալի կարգավիճակ ունեցող աշխատողի, այդ թվում՝ հանրային ծառայության մեջ գտնվող անձի պաշտոնավարման՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածով սահմանված կարգով կասեցման պահից մինչև պաշտոնավարման կասեցման վերացումը նրա աշխատատեղը (պաշտոնը) պահպանվում է, իսկ հանրային ծառայության մեջ գտնվող անձի դեպքում վճարվում է նաև ամսական հատուցում՝ հիմնական աշխատավարձի հիսուն տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափը՝ մնացած վճարումը կատարելով քրեական վարույթի՝ ռեաբիլիտացնող հիմքով ավարտի դեպքում:

2. Մեղադրյալի կարգավիճակ ունեցող աշխատողի պաշտոնավարման կասեցման ընթացքում նա չի կարող օգտվել իր ամենամյա արձակուրդի իրավունքից:

~~1. Կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող աշխատողի, այդ թվում՝ հանրային ծառայության մեջ գտնվող անձի լիազորությունների՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածով սահմանված կարգով կասեցման պահից մինչև կասեցման վերաբերյալ որոշման վերացումը նրա աշխատատեղը (պաշտոնը) պահպանվում է, իսկ հանրային ծառայության մեջ գտնվող անձի դեպքում վճարվում է նաև ամսական հատուցում՝ հիմնական աշխատավարձի հիսուն տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափը՝ մնացած վճարումը կատարելով քրեական գործի՝ արդարացնող հիմքով ավարտի դեպքում:~~

~~2. Կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող աշխատողի լիազորությունների կասեցման ընթացքում նա չի կարող օգտվել իրամենամյա արձակուրդի իրավունքից:~~

3. Պաշտոնավարման ~~Լիազորությունների~~ կասեցումը արգելք չէ աշխատանքային պայմանագիրը լուծելու համար, եթե կասեցման ժամանակահատվածում առաջացել է աշխատանքային պայմանագիրը լուծելու՝ օրենքով նախատեսված հիմքերից որևէ մեկը:

4. Հանրային ծառայության մեջ գտնվող անձի դեպքում սույն հոդվածի 1-ին մասը կիրառվում է, եթե ոլորտային օրենքներով այլ բան նախատեսված չէ:

(108.1-ին հոդվածը լրաց. 25.03.21 ՀՕ-124-Ն)

(25.03.21 ՀՕ-124-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 108.2. Աշխատողի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու իրավական հետևանքները

1. Աշխատողի, այդ թվում՝ հանրային ծառայության մեջ գտնվող անձի նկատմամբ կալանքը~~կալանավորումը~~ որպես խափանման միջոց կիրառելու պահից մինչև այն այլ խափանման միջոցով փոխելը կամ վերացնելը աշխատողի լիազորությունները համարվում են կասեցված:

2. Կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածում աշխատողի աշխատատեղը (պաշտոնը) պահպանվում է: Կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածում հանրային ծառայության մեջ գտնվող անձի աշխատավարձը չի պահպանվում:

3. Կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածում աշխատողը չի կարող օգտվել իր ամենամյա արձակուրդի իրավունքից:

4. Աշխատողի նկատմամբ կալանքը~~կալանավորումը~~ որպես խափանման միջոց կիրառելն արգելք չէ աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու համար, եթե կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածում առաջացել է աշխատանքային պայմանագիրը լուծելու՝ օրենքով նախատեսված հիմքերից որևէ մեկը:

5. Հանրային ծառայության մեջ գտնվող անձի դեպքում սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերը կիրառվում են, եթե ոլորտային օրենքներով այլ բան նախատեսված չէ:

(108.2-րդ հոդվածը լրաց. 25.03.21 ՀՕ-124-Ն)

(25.03.21 ՀՕ-124-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 165. Ամենամյա արձակուրդի համար անհրաժեշտ աշխատանքային ստաժը

Աշխատանքային տարում, որի համար տրամադրվում է ամենամյա արձակուրդ, ներառվում են՝

1) փաստացի աշխատած ժամանակահատվածը.

2) այն ժամանակահատվածը, որի ընթացքում, օրենսդրությանը համապատասխան, պահպանվում են աշխատողի աշխատատեղը (պաշտոնը) և աշխատավարձը՝ ամբողջությամբ կամ մասամբ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածով սահմանված կարգով~~152-րդ հոդվածով սահմանված կարգով կասկածյալի կամ~~ մեղադրյալի կարգավիճակ ունեցող՝ հանրային ծառայության մեջ գտնվող անձին հատուցում վճարելու այն ժամանակահատվածների, երբ քրեական վարույթի~~քրեական գործի~~ ավարտի դեպքում կայացվել է մեղադրական դատավճիռ, կամ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ ռեաբիլիտացնող~~ոչ արդարացնող~~ հիմքով.

3) աշխատողի ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածը.

4) վճարովի ամենամյա արձակուրդի ժամանակահատվածը.

5) հարկադիր պարապուրդում աշխատողի գտնվելու ժամանակահատվածը՝ նախկին աշխատանքին վերադառնալու դեպքում.

6) օրինական գործադուլի ժամանակահատվածը.

6.1) վարժական հավաքների մասնակցելու, զորահավաքային զինվորական ծառայություն իրականացնելու կամ որպես զինվորական ծառայության մեջ չգտնվող անձ (կամավորական)՝ կամավորական հիմունքներով Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ պաշտպանության ոլորտում պետական լիազոր մարմնի հետ ռազմական փոխօգնության պայմանագրերի հիման վրա այլ երկրների պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու ժամանակահատվածը.

7) օրենսդրությամբ սահմանված այլ ժամանակահատվածներ:

(165-րդ հոդվածը փոփ. 24.06.10 ՀՕ-117-Ն, լրաց. 09.10.20 ՀՕ-460-Ն, 25.03.21 ՀՕ-124-Ն)

(09.10.20 ՀՕ-460-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Դիմողին ներկայացվող պահանջները

Հոդված 27.

1. Որակավորման քննությանը կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող այլ անձինք, որոնք ունեն միջնակարգ կրթություն:

2. Որակավորման քննություններին մասնակցել չի թույլատրվում այն անձին, որը՝

1) դատարանի վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատարանի վճռով զրկվել է ֆինանսատնտեսական հարաբերությունների իրականացման բնագավառում որևէ պաշտոն զբաղեցնելու իրավունքից, բացառությամբ

եթե դատվածությունը մարված կամ վերացված է~~դատվածությունը հանված կամ մարված է~~:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **գույք՝** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գույք, այդ թվում՝ կրիպտոարժույթ.

2) **ապօրինի ծագում ունեցող գույք՝** գույք, այդ թվում՝ մեկ միավոր գույք, մի քանի միավոր գույք կամ մեկ միավոր գույքի բաժին, որի ձեռքբերումը սույն օրենքով նախատեսված կարգով չի հիմնավորվում օրինական եկամուտներով՝ անկախ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց առաջ կամ հետո ձեռք բերված լինելու հանգամանքից, ինչպես նաև այդպիսի գույքի օգտագործումից ստացվածը (պտուղները, արտադրանքը, եկամուտները).

3) **օրինական եկամուտ՝** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1277-րդ հոդվածի համաձայն որոշված կիրառելի իրավունքի նորմերի պահպանմամբ, Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով, կրիպտոարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված եկամուտներն առանց հարկերի և պարտադիր վճարների, այդ թվում՝

ա. աշխատանքի վարձատրությունը կամ դրան հավասարեցված այլ վճարումներ,

բ. գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի օգտագործման կամ օգտվելու իրավունքի համար ցանկացած հեղինակային իրավունքից, ցանկացած արտոնագրից, ապրանքային նշանից, նախագծից կամ մոդելից, պլանից, գաղտնի բանաձևից կամ գործընթացից, էլեկտրոնային հաշվողական մեքենաների և տվյալների բազայի համար ծրագրերի կամ արդյունաբերական, առևտրային, գիտական սարքավորումներ օգտագործելու կամ օգտվելու համար իրավունքի կամ արդյունաբերական, տեխնիկական, կազմակերպական, առևտրային, գիտական փորձի վերաբերյալ տեղեկություն տրամադրելու համար ստացվող հատուցումը (ռոյալթի) և հեղինակային վարձատրությունը,

գ. ստացված փոխառությունները (վարկերը),

դ. տրված փոխառությունների դիմաց ստացված տոկոսը և այլ հատուցում,

ե. շահաբաժինները,

զ. խաղատներում կամ շահումներով խաղերում ստացված եկամուտները (շահումները),

է. մրցույթների կամ մրցությունների, ինչպես նաև վիճակախաղերի իրային կամ դրամական շահումները (մրցանակները),

ը. նվիրատվության կամ օգնության կարգով ստացված գույքը (նաև դրամական միջոցները),

թ. ժառանգության կարգով ստացված գույքը (նաև դրամական միջոցները),

ժ. ապահովագրական հատուցումները,

ժա. ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտը,

ժբ. գույքն օտարելուց ստացված եկամուտը,

ժգ. վարձակալության դիմաց ստացված վճարը կամ այլ հատուցում,

ժդ. միանվագ վճարները,

ժե. գույքային իրավունքներից ստացված եկամուտը,

ժզ. քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված եկամուտը,

ժէ. կենսաթոշակը,

ժը. գյուղատնտեսական արտադրանքի իրացումից կամ գյուղատնտեսական գործունեությունից ստացված եկամուտը.

4) 4) սույն օրենքով նախատեսված հանցանք՝ Հայաստանի Հանրապետության տարածքում կամ դրա սահմաններից դուրս կատարված արարք, որը պարունակում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածով, 188-րդ հոդվածով, 189-րդ հոդվածով, 210-րդ հոդվածի 3-4-րդ մասերով, 218-րդ հոդվածով, 219-րդ հոդվածով, 220-րդ հոդվածով, 252-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, 253-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 254-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 255-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով կամ 3-րդ մասով (եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով) կամ 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով կամ 3-րդ մասով (եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով) կամ 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 257-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ մասերով, 258-րդ հոդվածի 3-րդ մասով, 267-րդ հոդվածով, 274-րդ հոդվածով, 275-րդ հոդվածով, 276-րդ հոդվածով, 282-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով կամ 3-րդ մասով (եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով), 284-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով կամ 3-րդ մասով (եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով), 291-րդ հոդվածով, 296-րդ հոդվածով, 298-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով, 299-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով, 308-րդ հոդվածով, 310-րդ հոդվածով, 318-րդ հոդվածի 2-րդ մասով, 319-րդ հոդվածի 2-րդ մասով, 320-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 321-րդ 2-րդ մասի 1-ին կետով, 322-րդ հոդվածով, 323-րդ հոդվածով, 324-րդ հոդվածով, 325-րդ հոդվածով, 331-րդ հոդվածով, 335-րդ հոդվածի 3-րդ մասով, 340-րդ հոդվածով, 393-րդ հոդվածով, 394-րդ հոդվածով, 399-րդ հոդվածով, 435-րդ հոդվածով, 436-րդ հոդվածով, 437-րդ հոդվածով, 438-րդ հոդվածով, 439-րդ հոդվածով, 440-րդ հոդվածով, 441-րդ հոդվածով, 442-րդ հոդվածով, 443-ին հոդվածով, 444-րդ հոդվածով, 445-րդ հոդվածով, 486-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 486-րդ հոդվածի 3-րդ մասով (եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով

պայմանավորված ազդեցությունն օգտագործելով), 482-րդ հոդվածով, 505-րդ հոդվածով կամ 549-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշները.

~~**սույն օրենքով նախատեսված հանցագործություն՝** Հայաստանի Հանրապետության տարածքում կամ դրա սահմաններից դուրս կատարված արարք, որը պարունակում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 125.1-ին հոդվածով, 132-րդ հոդվածով, 132.2-րդ հոդվածով, 154.2-րդ հոդվածով, 154.9-րդ հոդվածով, 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-ին կետով կամ 3-րդ մասով (եթե կատարվել է պաշտոնական դիրքն օգտագործելով), 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով կամ 3-րդ մասով (եթե կատարվել է պաշտոնական դիրքն օգտագործելով), 180-րդ հոդվածի 3-րդ մասով, 182-րդ հոդվածի 3-րդ մասով, 189.1-ին հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով կամ 3-րդ մասով (եթե կատարվել է պաշտոնական դիրքն օգտագործելով), 190-րդ հոդվածով, 191-րդ հոդվածով, 195-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 201-րդ հոդվածով, 202-րդ հոդվածով, 215.1-ին հոդվածով, 217-րդ հոդվածով, 217.1-ին հոդվածով, 222-րդ հոդվածով, 223-րդ հոդվածի 3-րդ մասով, 223.1-ին հոդվածով, 223.2-րդ հոդվածով, 223.3-րդ հոդվածով, 223.4-րդ հոդվածով, 224-րդ հոդվածի 3-րդ մասով, 233-րդ հոդվածով, 235-րդ հոդվածի 3-րդ մասով, 235.1-ին հոդվածով, 261-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով, 262-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով, 266-րդ հոդվածով, 267.1-ին հոդվածով, 274-րդ հոդվածով, 308-րդ հոդվածով, 309-րդ հոդվածով, 310-րդ հոդվածով, 310.1-ին հոդվածով, 311-րդ հոդվածով, 311.1-ին հոդվածով, 311.2-րդ հոդվածով, 312-րդ հոդվածով, 312.1-ին հոդվածով, 312.2-րդ հոդվածով, 313-րդ հոդվածով, 314-րդ հոդվածով, 314.2-րդ հոդվածով, 314.3-րդ հոդվածով, 332-րդ հոդվածի 3-րդ մասով, 338.3-րդ հոդվածով, 352-րդ հոդվածով կամ 375-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշները.~~

5) **անձին պատկանող գույք՝** գույք, որը՝

ա. սեփականության իրավունքով պատկանում է տվյալ անձին, այդ թվում՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքի դեպքում՝ անձին պատկանող բաժինը, իսկ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքի դեպքում՝ գույքն ամբողջությամբ,

բ. սեփականության իրավունքով պատկանում է այլ անձի, կամ որի նկատմամբ սեփականության իրավունք չի ծագել, բայց որի իրական շահառու է հանդիսանում տվյալ անձը,

գ. ուսումնասիրվող ժամանակահատվածում տվյալ անձն անհատույց կամ փաստացի անհատույց կամ շուկայականից էականորեն ցածր գնով փոխանցել է իր հետ փոխկապակցված անձի.

6) **իրական շահառու՝** ֆիզիկական անձ, որի անունից, օգտին կամ որի հաշվին իրականացվել է գործարքը (գործողությունը), կամ ֆիզիկական անձ, որը վերահսկում է կամ վերահսկել է գործարքը (գործողությունը) կամ այն անձին, որի անունից կամ օգտին իրականացվել է գործարքը (գործողությունը).

7) **փոխկապակցված անձ՝** անձի հետ փոխկապակցված իրավաբանական անձ, մերձավոր ազգական կամ ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որի հետ տվյալ անձը վարում է ընդհանուր տնտեսություն կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն, կամ ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որին տվյալ

անձն անհատույց կամ փաստացի անհատույց կամ շուկայականից էականորեն ցածր գնով փոխանցել է գույք.

8) **փոխկապակցված իրավաբանական անձ՝** «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ և 26-րդ կետերի իմաստով փոխկապակցված համարվող իրավաբանական անձ.

9) **մերձավոր** ազգական՝ ընտանիքի անդամը, չափահաս զավակը, ծնողը, քույրը, եղբայրը (այդ թվում՝ համահայրը կամ համամայրը), տատը, պապը, թոռները, հորեղբայրը, մորաքույրը, հորաքույրը, մորեղբայրը կամ նրանց ընտանիքի անդամները, անձի ամուսնու ծնողները, վերջիններիս համար՝ փեսան և հարսը.

10) **ընտանիքի անդամ՝** ամուսինը, անչափահաս զավակը, խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը կամ ուսումնասիրվող ժամանակահատվածում ոչ պակաս, քան մեկ տարվա ընթացքում 180 օր համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ.

11) **պաշտոնատար անձ՝** ուսումնասիրությունն սկսելու պահին «Հանրային ծառայության մասին» օրենքի գործող խմբագրության իմաստով հանրային պաշտոն զբաղեցնող կամ զբաղեցրած անձ կամ այդպիսի պաշտոնին համարժեք պաշտոն զբաղեցրած անձ: Անձը համարվում է համարժեք պաշտոն զբաղեցրած, եթե իր իրականացրած գործառույթներին նույնական կամ նմանատիպ գործառույթներ իրականացնող անձն ուսումնասիրությունն սկսելու պահին «Հանրային ծառայության մասին» օրենքի գործող խմբագրության իմաստով համարվում է հանրային պաշտոն զբաղեցնող անձ.

12) **ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթ՝** ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման նպատակով իրավասու մարմնի նախաձեռնած ընթացակարգ, որն սկսվում է հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություն սկսելու վերաբերյալ որոշման կայացմամբ, ներառում է գույքի քաղաքացիական բռնագանձման հայցի հարուցումը և ավարտվում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով կամ սույն օրենքով նախատեսված այլ հիմքերով.

13) **հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություն** (այսուհետ՝ ուսումնասիրություն)՝ ընթացակարգ, որն ուղղված է ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության, դրա ծավալների և շահագրգիռ անձանց շրջանակի վերաբերյալ տվյալներ ձեռք բերելուն.

14) **շուկայականից էականորեն ցածր գին՝** գործարքի հատուցման արժեք, որը 80 և ավելի տոկոսով ցածր է նույն, իսկ դրա բացակայության դեպքում՝ համանման գույքի օտարման ժամանակահատվածում այդպիսի գույքի օտարման գործարքների իրական արժեքից.

15) **իրավասու մարմին՝** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պատասխանատու ստորաբաժանում.

16) **շահագրգիռ անձ՝** անձ, որի իրավունքների և պարտականությունների վրա առերևույթ կարող է ազդել գույքի բռնագանձումը.

17) **առաջին ատյանի դատարան՝** Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

(3-րդ հոդվածը լրաց. 03.03.21 ՀՕ-91-Ն)

Հոդված 5. Ուսումնասիրություն սկսելու հիմքերը

1. Սույն օրենքով նախատեսված կարգով իրավասու մարմինը կարող է սկսել ուսումնասիրություն հետևյալ հիմքերի առկայության դեպքում.

1) առկա է օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատական ակտ, որով հաստատվում է սույն օրենքով նախատեսված հանցանքներից~~սույն օրենքով նախատեսված հանցագործություններից~~ որևէ մեկի կատարումը, և տվյալ քրեական գործի նյութերով առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ դատապարտված անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, որը չի բռնագանձվել դատավճռով.

2) նախաձեռնված քրեական վարույթով անձի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել ~~հարուցված քրեական գործով անձը որպես մեղադրյալ է ներգրավվել~~ սույն օրենքով նախատեսված հանցանքներից ~~սույն օրենքով նախատեսված հանցագործություններից~~ որևէ մեկի կատարման համար, և առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ մեղադրյալին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է~~որ առկա է~~ ապօրինի ծագում ունեցող գույք.

3)~~-~~ առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ համապատասխան անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, սակայն սույն օրենքով նախատեսված հանցանքներից որևէ մեկի կատարման առնչությամբ քրեական հետապնդումն անհնար է հետևյալ հիմքերից մեկով.

ա. անձը համաներմամբ ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից.,

բ. անձը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր կամ հատուկ մասի դրույթների ուժով ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից,

գ. անձը մահացել է,

դ. անձն արարքի կատարման պահին չի հասել քրեական պատասխանատվության ենթարկելու՝ օրենքով նախատեսված տարիքին.

~~առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ առկա է ապօրինի ծագում ունեցող գույք, սակայն սույն օրենքով նախատեսված հանցանքներից սույն օրենքով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարման առնչությամբ քրեական հետապնդումը կամ քրեական գործի հարուցումն անհնար է հետևյալ հիմքերից մեկով.~~

~~ա. ընդունվել է համաներման մասին օրենք,~~

~~բ. անցել են վաղեմության ժամկետները,~~

~~գ. անձը մահացել է,~~

դ. անձն արարքը կատարելու պահին չի հասել քրեական պատասխանատվության ենթարկվելու՝ օրենքով նախատեսված տարիքին.

4)առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ համապատասխան անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, սակայն սույն օրենքով նախատեսված հանցանքներից որևէ մեկի կատարման առնչությամբ հարուցված քրեական հետապնդման ժամկետը կասեցվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասերով նախատեսված հիմքերից որևէ մեկով. առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ առկա է ապօրինի ծագում ունեցող գույք, սակայնսույն օրենքով նախատեսված հանցանքներից սույն օրենքով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարման առնչությամբ հարուցված քրեական գործը կասեցվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից որևէ մեկով.

5) «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներով հայտնաբերված տվյալներով առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ պաշտոնատար անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք:

2. Ուսումնասիրության շրջանակներում ներառված գործողությունները կարող են ձեռնարկվել նաև սույն օրենքով նախատեսված կարգով միջազգային փոխօգնության տրամադրման անհրաժեշտություն առաջանալու դեպքում:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա ուսումնասիրություն կարող է սկսվել նաև օտարերկրյա դատարանի կայացրած մեղադրական դատական ակտի առկայության դեպքում, եթե այն ճանաչվել է Հայաստանի Հանրապետությունում:

Հոդված 10. Քրեական վարույթին զուգահեռ ուսումնասիրություն իրականացնելու առանձնահատկությունները

1. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում արված հայտարարությունները և դատավարության ընթացքում տրված ցուցմունքները, քրեական դատավարության կանոններին համապատասխան, չեն կարող օգտագործվել դրանք տված անձի կամ վերջինիս մերձավոր ազգականների դեմ քրեական վարույթիքրեական գործի շրջանակներում, բացառությամբ սուտ ցուցմունք տալու կամ սուտ մատնության դեպքի առնչությամբնախաձեռնված քրեական վարույթով հարուցված քրեական գործով, կամ եթե անձն ինքն է ներկայացնում իր ցուցմունքը կամ հայտարարությունը՝ որպես ապացույց նախաձեռնված քրեական վարույթով քրեական գործով:

2. Նախնական ապահովման միջոցների կիրառումից, իսկ կիրառման անհրաժեշտության բացակայության դեպքում՝ ուսումնասիրության արդյունքների

նախնական ամփոփումից անմիջապես հետո իրավասու մարմնի որոշմամբ հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրության ընթացքը կասեցվում է, եթե հայցի հիմքում դրվելու են նախնական քննության տվյալներ, որոնք չեն հրապարակվել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից: Սույն հոդվածի հիման վրա ուսումնասիրության ընթացքի կասեցման որոշում կայացնելու դեպքում կասեցվում են ուսումնասիրության ընթացքի հետ կապված բոլոր ժամկետները: Նախնական քննության ավարտից հետո կասեցված ժամկետների ընթացքը շարունակվում է ժամկետի մնացած մասով:

3. Սույն օրենքով նախատեսված վարույթին զուգահեռ ընթացող քրեական գործի վարույթի ավարտվելը, այդ թվում՝ արդարացման դատավճռի կայացումը, կամ արդարացնող հիմքով քրեական գործի վարույթը կարճելը կամ քրեական հետապնդումը դադարեցնելը հիմք չեն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի դադարեցման համար:

Հոդված 21. Հաշտության համաձայնությամբ գործի վարույթն ավարտելու և դատարանում գործի վարույթի կասեցման առանձնահատկությունները

1. Գործին մասնակցող անձինք Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կարող են գործն ավարտել սույն օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված պահանջներին համապատասխանող հաշտության համաձայնությամբ:

2. Դատարանում քաղաքացիական գործի հարուցումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված հիմքերից բացի, դատարանը նաև իրավունք ունի կասեցնելու գործի վարույթն այն անձի դիմումի հիման վրա, որի գույքի առնչությամբ իրականացվել է ուսումնասիրությունը, եթե ուսումնասիրությունն սկսվել է սույն օրենքով նախատեսված 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով, և զուգահեռ ընթացող քրեական վարույթով դիմողի՝ մեղադրյալի կարգավիճակ ունենալը ~~դիմողի՝ որպես մեղադրյալ ներգրավված լինելը~~ դժվարացնում է նրա արդյունավետ մասնակցությունը հարուցված քաղաքացիական գործին:

3. Դատարանը չի կարող կասեցնել գործի վարույթը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով, բացառությամբ եթե անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև սահմանադրական կամ քրեական դատավարության կարգով քննվող այլ հարցով կամ գործով եզրափակիչ ակտ կայացնելը: Քաղաքացիական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ հարցով կամ գործով համապատասխան եզրափակիչ ակտը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի իմաստով հանդիսանում է նոր հանգամանք, եթե դրանով

անվավեր է ճանաչվել այն գործարքը, կամ վերացվել է այն հանգամանքը կամ փաստը, որը հիմք է ծառայել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վճռի կայացման համար:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 22. Բանկի ղեկավարները, նրանց որակավորման կարգը

1. Բանկի ղեկավարներ են համարվում բանկի խորհրդի նախագահը, նրա տեղակալը և խորհրդի անդամները, գործադիր տնօրենը, նրա տեղակալները, գլխավոր հաշվապահը, նրա տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը, նրա անդամները, բանկի տնօրինության անդամները, ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը և համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը, ինչպես նաև բանկի տարածքային ստորաբաժանումների ղեկավարները և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները՝ բանկի դեպարտամենտի, վարչության, բաժնի, ինչպես նաև Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած չափանիշներով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի խորհրդի կարծիքով որևէ կերպ բանկի հիմնական գործունեության հետ կապված կամ գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո աշխատող կամ բանկի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ ազդեցություն ունեցող աշխատակիցները:

2. Բանկի ղեկավար չեն կարող լինել՝

ա) դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատվածություն ունեցող անձինք.

բ) դատարանի կողմից ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից զրկված անձինք.

գ) սնանկ ճանաչված և չմարված (չներված) պարտավորություններ ունեցող անձինք.

դ) անձինք, որոնց որակավորումը կամ մասնագիտական գիտելիքները չեն համապատասխանում Կենտրոնական բանկի սահմանած մասնագիտական կամ որակավորման համապատասխանության չափանիշերին.

ե) անձինք, որոնք անցյալում կատարել են այնպիսի արարք, որը Կենտրոնական բանկի հաստատած ուղեցույցով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի կարծիքով հիմք է տալիս կասկածելու, որ տվյալ անձը՝ որպես բանկի ղեկավար, չի կարող պատշաճորեն կառավարել բանկի գործունեության համապատասխան ոլորտը, կամ նրա

գործողությունները կարող են հանգեցնել բանկի սնանկացմանը, ֆինանսական վիճակի վատթարացմանը կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկմանը.

զ) քրեական վարույթով մեղադրյալի կարգավիճակ ունեցող անձինք:

~~զ) անձինք, որոնք քրեական գործով ներգրավված են որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ~~:

3. Կենտրոնական բանկն իրավունք ունի սահմանելու բանկի ղեկավարների որակավորման կարգ և մասնագիտական համապատասխանության չափանիշներ:

4. *(կետն ուժը կորցրել է 03.03.04 ՀՕ-46-Ն)*

4. Բանկի խորհրդի նախագահը կամ խորհրդի անդամը չի կարող միաժամանակ լինել տվյալ բանկի գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատակից, ինչպես նաև այլ բանկի կամ վարկային կազմակերպության խորհրդի անդամ, գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատակից, բացառությամբ եթե տվյալ բանկը և այլ բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում են միմյանց հետ փոխկապակցված անձինք: Սույն օրենքի 21.3-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքում բանկի խորհրդի անդամը կարող է միաժամանակ լինել այլ բանկի խորհրդի անդամ:

Բանկի գործադիր տնօրենը, գործադիր տնօրենի տեղակալը, գլխավոր հաշվապահը, տնօրինության անդամները, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը կամ անդամները չեն կարող միաժամանակ լինել այլ բանկի գործադիր տնօրեն, գործադիր տնօրենի տեղակալ, գլխավոր հաշվապահ, տնօրինության անդամ, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար կամ անդամներ:

Բանկի գործադիր մարմնի անդամները բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքներից, կարող են կատարել վճարովի այլ աշխատանք միայն բանկի խորհրդի համաձայնությամբ:

(22-րդ հոդվածը խմբ., փոփ. 23.10.01 ՀՕ-253, փոփ. 03.03.04 ՀՕ-46-Ն, խմբ., լրաց. 15.11.05 ՀՕ-227-Ն, լրաց. 25.10.17 ՀՕ-188-Ն, 16.09.20 ՀՕ-437-Ն)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ

Հոդված 3. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) **դատախազ**՝ գլխավոր դատախազը, նրա տեղակալները, զինվորական դատախազը, Երևան քաղաքի դատախազը, գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարները, զինվորական դատախազի տեղակալները, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազները, մարզերի դատախազները, կայազորների զինվորական դատախազները, գլխավոր դատախազության ավագ դատախազներն ու դատախազները, գլխավոր

դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարների տեղակալները, Երևան քաղաքի դատախազի տեղակալները, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի և կայազորների զինվորական դատախազների տեղակալները, գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ավագ դատախազներն ու դատախազները, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի և կայազորների զինվորական դատախազությունների ավագ դատախազներն ու դատախազները, զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարները, զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազներն ու դատախազները, զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ավագ դատախազներն ու դատախազները.

2) **դատախազություն**՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը, զինվորական կենտրոնական դատախազությունը, Երևան քաղաքի դատախազությունը, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունները, մարզերի դատախազությունները, կայազորների զինվորական դատախազությունները.

3) **դատախազության կառուցվածքային ստորաբաժանում՝** գլխավոր դատախազության և զինվորական կենտրոնական դատախազության կազմում գործող վարչություն և բաժին.

4) **դատախազական ակտ՝** որոշում, հրաման, կարգադրություն, միջնորդագիր,հանձնարարություն ~~հանձնարարական, ցուցում~~.

5) **աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում**՝ դատախազներին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված գործառույթների իրականացմանն աջակցող ստորաբաժանում:

(3-րդ հոդվածը լրաց. 21.01.20 ՀՕ-26-Ն)

Հոդված 12. Գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումը և կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը

1. Գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումը կազմված է կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարից, կառուցվածքային ստորաբաժանման ավագ դատախազներից և դատախազներից, իսկ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքում՝ նաև տեղակալից (տեղակալներից):

2. Գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումը կարող է ունենալ կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի տեղակալ (տեղակալներ): Գլխավոր դատախազության վարչությունը կարող է ունենալ նաև բաժիններ:

3. Գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման (այսուհետ՝ ստորաբաժանում) ղեկավարը՝

1) ղեկավարում, կազմակերպում և համակարգում է իր ղեկավարած ստորաբաժանման գործունեությունը.

2) ապահովում է գլխավոր դատախազի հրամանների, հանձնարարությունների ~~հանձնարարականների~~, ինչպես նաև գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալի հանձնարարությունների~~հանձնարարականների~~ կատարումը.

3) առաջարկություն է ներկայացնում գլխավոր դատախազին կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալին՝ կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի տեղակալի, կառուցվածքային ստորաբաժանման ավագ դատախազների և դատախազների (այսուհետ՝ ստորաբաժանման դատախազներ) միջև աշխատանքի բաժանում կատարելու վերաբերյալ.

4) առաջարկներ է ներկայացնում գլխավոր դատախազին կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալին՝ իր ղեկավարած ստորաբաժանման դատախազներին խրախուսելու կամ նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, ինչպես նաև նրանց առաջխաղացման վերաբերյալ.

5) առաջարկներ է ներկայացնում դատախազության գլխավոր քարտուղարին իր նշանակած քաղաքացիական ծառայողներին խրախուսելու կամ նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ.

6) վերահսկողություն է իրականացնում ստորաբաժանման աշխատակիցների կողմից աշխատանքային կարգապահության պահպանման և ամրապնդման, նրանց կողմից պարտականությունների ժամանակին և պատշաճ կատարման նկատմամբ.

7) իրականացնում է դատախազության՝ Սահմանադրությամբ նախատեսված իրավասության շրջանակում օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

4. Գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը իր ղեկավարած ստորաբաժանման գործունեության համար պատասխանատվություն է կրում գլխավոր դատախազի և գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալի առջև:

5. Գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալի հանձնարարությամբ կամ իր նախաձեռնությամբ գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարն իր իրավասության շրջանակներում՝

1) կարող է Երևան քաղաքի դատախազից, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներից պահանջել վարույթի~~գործեր և~~ նյութեր, դրանց հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն.

2) գլխավոր դատախազին կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալին առաջարկություններ ներկայացնել Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազությունների կողմից դատախազության լիազորությունների կազմակերպման և իրականացման արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

6. Գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված լիազորություններն իրականացնում է անձամբ կամ ստորաբաժանման դատախազների միջոցով:

7. Գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված լիազորություններն իրականացնելիս խախտումներ հայտնաբերելու դեպքում սույն օրենքով սահմանված կարգով կարգապահական վարույթ

հարուցելու միջնորդությամբ օրենքով սահմանված կարգով դիմում է գլխավոր դատախազին կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալին:

8. Գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները և կառուցվածքային ստորաբաժանումների դատախազներն իրականացնում են սույն օրենքի 5-րդ գլխով սահմանված լիազորությունները:

(12-րդ հոդվածը խմբ. 21.01.20 ՀՕ-26-Ն)

Հոդված 25. Հսկողությունը մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ

1. Մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն (այսուհետ՝ հսկողություն)~~, որպես կանոն,~~ իրականացնում է վերադաս դատախազի կողմից նման հանձնարարություն ստացած դատախազը, կամ հսկողությունը ստանձնում է անձամբ վերադաս դատախազը: Ի սկզբանե հսկողություն իրականացնող վերադաս դատախազը կարող է տվյալ քրեական վարույթով ~~գործով~~ հսկողությունը հանձնարարել ստորադաս դատախազի:

2. Հսկողություն իրականացնելիս դատախազն ինքնուրույն է և գործում է առանց վերադաս դատախազի թույլտվության և համաձայնության:

3. Գլխավոր դատախազը կամ հսկողություն իրականացնող դատախազը կարող է դիմել իրավասո~~ն մինչդատական քրեական վարույթ իրականացնող համապատասխան~~ մարմին հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող անձի նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու միջնորդությամբ: Միջնորդությունն ուղարկվում է խախտում թույլ տված պաշտոնատար անձի վերադասին, որը պարտավոր է այն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, սկսել ծառայողական քննությունը և արդյունքների մասին տեղեկացնել համապատասխան միջնորդությամբ դիմած դատախազին:

~~4. Մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով:~~

Հոդված 26. Մեղադրանքի պաշտպանությունը դատարանում

1. Մեղադրանքի պաշտպանությունը դատարանում~~, որպես կանոն,~~ իրականացնում է տվյալ քրեական վարույթով նախաքննության օրինականության նկատմամբ ~~գործով~~ հսկողություն իրականացրած դատախազը, բացառությամբ երբ նրան օրենքով նախատեսված դեպքերում փոխարինում է վերադաս դատախազը կամ վերադաս դատախազի հանձնարարությամբ՝ այլ դատախազ:

2. Վերադաս դատախազն իրավունք ունի մեղադրանքը պաշտպանող դատախազի դատավարական լիազորությունների իրականացմանը ներգրավելու նաև այլ

դատախազների: Եթե տվյալ քրեական գործով հսկողությունն իրականացրել է գլխավոր դատախազը, ապա մեղադրանքի պաշտպանությունը դատարանում իրականացնում է գլխավոր դատախազը կամ նրա հանձնարարությամբ՝ այլ դատախազ:

3. Դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազը կոչվում է հանրային մեղադրող:

Հոդված 27. Դատարանների վճիռների, դատավճիռների և որոշումների բողոքարկումը

1. ~~Քրեական վարույթին~~ ~~Գործին~~ մասնակցող դատախազը պարտավոր է բողոքարկել օրինական ուժի մեջ չմտած այն դատական ակտը, որը, իր կարծիքով, հիմնավոր չէ կամ ապօրինի է:

2. ~~Դատարանների՝ քրեական գործերով օրինական~~ Օրինական ուժի մեջ չմտած դատական ակտը կարող է բողոքարկել դատաքննությանը~~դատական քննությանը~~ մասնակցած հանրային մեղադրողը~~մեղադրող դատախազը~~ կամ վերադաս դատախազը:

3. Դատարանների՝ քաղաքացիական կամ վարչական գործով պետական շահերին վերաբերող օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը կարող է բողոքարկել դատական քննությանը մասնակցած դատախազը կամ վերադաս դատախազը:

4. Դատավճիռը~~Քրեական գործերով դատական ակտը~~ քաղաքացիական հայցի մասով դատախազը կարող է բողոքարկել, եթե այն վերաբերում է պետական շահերին:

5. Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք կարող են բերել միայն գլխավոր դատախազը կամ նրա տեղակալները:

6. Պետական շահերին վերաբերող քաղաքացիական կամ վարչական այն գործով, որում դատախազությունը մասնակցություն չի ունեցել, օրինական ուժի մեջ մտած, ինչպես նաև օրինական ուժի մեջ չմտած դատական ակտը կարող է բողոքարկվել միայն այն դեպքում, եթե նշված գործով ներգրավված պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, ի պատասխան դատախազության հարցմանը, հայտնել է, որ չի բողոքարկելու համապատասխան դատական ակտը: Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը դատախազության՝ սույն մասով նախատեսված հարցմանը պարտավոր է պատասխանել հարցումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

7. Բողոքը պաշտպանում է բողոք բերած դատախազը, իսկ եթե բողոք բերել է վերադաս դատախազը, ապա բողոքը պաշտպանում է ինքը կամ իր հանձնարարությամբ՝ այլ դատախազ:

8. Վերադաս դատախազը վերաքննիչ կամ վճռաբեկ վարույթին մասնակցությունը կարող է հանձնարարել այլ դատախազի (դատախազների):

9. Դատախազի բերած բողոքը կարող է հետ վերցնել բողոք բերած դատախազը կամ վերադաս դատախազը:

10. Դատախազն իրավունք ունի դատարանում անարգել ծանոթանալու վարույթի ~~գործի~~ նյութերին և անվճար ստանալու դրանց պատճենները~~գործի նյութերի պատճենը~~:

Հոդված 30. Դատախազական ակտերը

1. Օրենքով նախատեսված դեպքերում և կարգով դատախազն ընդունում է որոշում, արձակում հրաման կամ կարգադրություն, ներկայացնում կամ առարկություն ~~միջնորդագիր~~, տալիս հանձնարարությունհանձնարարական կամ ցուցում, ինչպես նաև ընդունում է օրենքով նախատեսված այլ ակտեր:

2. Սույն օրենքով սահմանված իր լիազորություններն իրականացնելիս, ինչպես նաև դատավարական օրենսգրքերով նախատեսված դեպքերում և կարգով դատախազն ընդունում է համապատասխան որոշումներ:

3. Հրամանը դատախազության գործունեության կազմակերպման, դատախազության լիազորությունների իրականացման քաղաքականության, դատախազության համակարգում առանձին հիմնարար հարցերի կարգավորման՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում դատախազության կազմավորման և գործունեության կարգը սահմանող իրավական ակտ է, որն ընդունում է գլխավոր դատախազը կամ նրա տեղակալները:

4. Կարգադրությունը դատախազության համակարգում կազմակերպական, արարողակարգային և նման այլ հարցերի կարգավորմանն ուղղված ներքին իրավական ակտ է, որն ընդունում են վերադաս դատախազները:

5. Հանցագործության պատճառների և նպաստող պայմանների, ինչպես նաև պետական շահերի խախտումներ հայտնաբերելու դեպքերում խախտման պատճառների և նպաստող պայմանների վերացման նպատակով դատախազը կարող է միջնորդագիր ներկայացնել դրանք վերացնելու իրավասություն ունեցող մարմին կամ պաշտոնատար անձին, որը պարտավոր է դրա քննարկման արդյունքների և ձեռնարկած միջոցառումների մասին մեկամսյա ժամկետում գրավոր հայտնել միջնորդագիրը ներկայացրած դատախազին:

6. Հանձնարարություն տալու, առարկություն ներկայացնելու հիմքերն ու դատավարական կարգը սահմանված են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով:

~~6. Հանձնարարականը կամ ցուցումն իրենց իրավասության սահմաններում վերադաս դատախազի կողմից ստորադաս դատախազին օրենքով սահմանված կարգով տրված բանավոր կամ գրավոր, իսկ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված լիազորություններն իրականացնելիս միայն գրավոր հրահանգ է՝ կատարելու որոշակի գործողություններ, կայացնելու որոշումներ կամ ձեռնպահ մնալու որևէ գործողություն կատարելուց:~~

Հոդված 32. Վերադաս և ստորադաս դատախազների փոխհարաբերությունները

1. Վերադաս և ստորադաս դատախազների փոխհարաբերությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով:

~~1. Վերադաս դատախազի հանձնարարականները և ցուցումները պարտադիր են ստորադաս դատախազի համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ստորադաս դատախազը գտնում է, որ հանձնարարականը կամ ցուցումն անօրինական է կամ անհիմն: Այդ դեպքում ստորադաս դատախազը, առանց վերադաս դատախազի հանձնարարականը կամ ցուցումը կատարելու, գրավոր առարկություն է ներկայացնում հանձնարարական տված դատախազի վերադասին, բացառությամբ այն դեպքերի, երբ հանձնարարականը կամ ցուցումը տվել է գլխավոր դատախազը: Եթե վիճարկվող հանձնարարականը կամ ցուցումը բանավոր է, ապա մինչև իր առարկությունը ներկայացնելը ստորադաս դատախազը կարող է վերադաս դատախազից հայցել գրավոր հանձնարարական կամ ցուցում:~~

~~2. Եթե ստորադաս դատախազը վերադաս դատախազի տված հանձնարարականը կամ ցուցումը համարել է անօրինական կամ անհիմն և դրա վերաբերյալ առարկություն ներկայացրել հանձնարարական կամ ցուցում տված դատախազի վերադասին, և նրա կողմից հանձնարարականը կամ ցուցումը համարվել է օրինական և հիմնավոր, ապա վերադաս դատախազն իր պատճառաբանված որոշմամբ կարող է ստորադաս դատախազին հեռացնել վարույթից և գործը տեղափոխել իր կամ մեկ այլ դատախազի վարույթ:~~

2.Եթե ստորադաս դատախազը վերադաս դատախազի տված հանձնարարությունը համարել է անօրինական կամ անհիմն և դրա վերաբերյալ առարկություն ներկայացրել հանձնարարություն տված դատախազի վերադասին և նրա կողմից հանձնարարությունը համարվել է օրինական և հիմնավոր, ապա վերադաս դատախազն իր պատճառաբանված որոշմամբ կարող է ստորադաս դատախազին հեռացնել վարույթից և մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության իրականացումը հանձնարարել այլ դատախազի կամ այն իրականացնել անձամբ:

~~3. Ստորադաս դատախազը պարտավոր է՝~~

~~1) վերադաս դատախազի պահանջով նրան ներկայացնել իր գործունեության մասին հաշվետվություններ, տեղեկատվություն, իր վարույթում գտնվող գործեր և նյութեր.~~

~~2) կատարել վերադաս դատախազի բոլոր օրինական և հիմնավոր հանձնարարականները և ցուցումները, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերի.~~

~~3) ապահովել դատախազության՝ Սահմանադրությամբ նախատեսված իրավասության շրջանակում օրենքով իրենց վրա դրված լիազորությունների կատարումը:~~

3. Ստորադաս դատախազը պարտավոր է վերադաս դատախազի պահանջով նրան ներկայացնել իր գործունեության մասին հաշվետվություններ, տեղեկատվություն և իրեն հանձնարարված վարույթի նյութեր:

~~4. Անմիջական վերադաս դատախազը՝~~

~~1) հետևում է դատախազի՝ օրենքով սահմանված պարտականությունների կատարման օրինականությանը, խախտում հայտնաբերելիս հանձնարարական կամ ցուցում է տալիս ստորադաս դատախազին, անհրաժեշտության դեպքում համապատասխան զեկուցագիր է ներկայացնում վերադաս դատախազին.~~

~~2) դատախազի արձակուրդի, գործուղման կամ ժամանակավոր այլ բացակայության, ինչպես նաև դատախազի պաշտոնը թափուր մնալու դեպքերում ըստ անհրաժեշտության վերաբաշխում է նրա պարտականություններն այլ դատախազների միջև.~~

~~3) իրականացնում է դատախազության՝ Սահմանադրությամբ նախատեսված իրավասության շրջանակում օրենքով վերադաս դատախազին և իրեն վերապահված այլ լիազորություններ:~~

4. Անմիջական վերադաս դատախազը՝

1) անհրաժեշտության դեպքում համապատասխան զեկուցագիր է ներկայացնում վերադաս դատախազին՝ դատախազի կողմից իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կապակցությամբ.

2) դատախազի արձակուրդի, գործուղման կամ ժամանակավոր այլ բացակայության, ինչպես նաև դատախազի պաշտոնը թափուր մնալու դեպքերում ըստ անհրաժեշտության վերաբաշխում է նրա պարտականություններն այլ դատախազների միջև:

5. Վերադաս դատախազը կոնկրետ վարույթով դատախազության լիազորությունների իրականացումը կարող է հանձնարարել մի քանի դատախազների և նշանակել դատախազական խմբի ղեկավար: Դատախազական խմբի ղեկավարը կազմակերպում և համակարգում է դատախազական խմբի աշխատանքը:

~~6. Վերադաս դատախազն իրավասու է վերացնելու կամ փոփոխելու ստորադաս դատախազի անհիմն կամ անօրինական ակտերը, գործողությունը (անգործությունը)՝~~

~~1) դատախազի ակտերի կամ դատախազի գործողությունների (անգործության) դեմ օրենքով սահմանված կարգով իրավասու անձանց բերած բողոքները կամ առարկությունները լուծելիս կամ~~

~~2) իր նախաձեռնությամբ ստորադաս դատախազի ակտերի օրինականությունն ստուգելիս:~~

7. Անմիջական վերադաս դատախազն իրավասու է իր որոշմամբ ստորադաս դատախազից քրեական վարույթը ~~դատախազի վարույթից գործը~~ տեղափոխելու մեկ այլ դատախազի կամ իր վարույթ՝

1) օրենքով սահմանված կարգով ստորադաս դատախազին վարույթից հեռացնելու դեպքում կամ

2) ստորադաս դատախազի նկատմամբ հայտնած բացարկը կամ ինքնաբացարկը բավարարելու դեպքում կամ

3) ստորադաս դատախազի՝ արձակուրդում կամ գործուղման մեջ գտնվելու դեպքում կամ

4) ստորադաս դատախազի լիազորությունները օրենքով սահմանված կարգով դադարեցնելու կամ կասեցնելու դեպքում կամ

5) ստորադաս դատախազի վերապատրաստման դասընթացներին մասնակցելու կամ հիվանդության կամ իր լիազորությունների պատշաճ իրականացումն անհնարին դարձնող նմանատիպ այլ դեպքերում:

8. Վերադաս դատախազն ստորադաս դատախազին պատճառաբանված որոշմամբ հեռացնում է վարույթից՝

1) ստորադաս դատախազի կողմից իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կամ

2) տվյալ վարույթին~~գործով~~ իր մասնակցությունը բացառող հանգամանքների մասին իրազեկված լինելու պայմաններում ինքնաբացարկի միջնորդություն չներկայացնելու դեպքում:

9. Սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված դեպքերում վարույթից հեռացված դատախազի նկատմամբ սույն օրենքով սահմանված կարգով կարող է հարուցվել կարգապահական վարույթ:

Հոդված 69. Դատախազի իրավական պաշտպանությունը

1. Դատախազն իր գործունեությունն իրականացնելիս անկախ է և ենթարկվում է միայն օրենքին:

2. Դատախազը չի կարող ազատվել զբաղեցրած պաշտոնից, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

3. Դատախազի պաշտոնեական պարտականությունների կատարմանը խոչընդոտներ ստեղծելը, նրա գործունեության կապակցությամբ նրան վիրավորելը, դատախազի և նրա ընտանիքի անդամների կյանքի, առողջության կամ գույքի նկատմամբ ոտնձգություն գործադրելը կամ դրա սպառնալիքն առաջացնում են օրենքով նախատեսված պատասխանատվություն:

4. Գլխավոր դատախազին կամ գլխավոր դատախազի տեղակալին չի թույլատրվում իր լիազորությունների իրականացման կապակցությամբ ազատությունից զրկել առանց էթիկայի հանձնաժողովի համաձայնության, բացառությամբ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա ազատությունից զրկելու դեպքերի, կամ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Եթե քննարկվում է գլխավոր դատախազին կամ նրա տեղակալին ազատությունից զրկելուն համաձայնություն տալու հարցը, ապա նրանք էթիկայի հանձնաժողովի կողմից նշված հարցի քննարկմանը չեն մասնակցում:

5. Գլխավոր դատախազի տեղակալի կամ դատախազի նկատմամբ քրեական հետապնդում հարուցում և տվյալ ~~գործով մինչդատական քրեական~~ վարույթի նկատմամբ դատախազական հսկողությունն իրականացնում է գլխավոր դատախազը կամ նրա հանձնարարությամբ՝ տեղակալը, իսկ գլխավոր դատախազի նկատմամբ՝ գլխավոր դատախազի տեղակալը:

(69-րդ հոդվածը լրաց. 25.03.21 ՀՕ-129-Ն)

Հոդված 73. Դատախազի վարքագծի կանոնները պաշտոնեական հարաբերություններում

1. Պաշտոնեական հարաբերություններում դատախազը պարտավոր է՝

1) գործել Սահմանադրությանը, սահմանադրական օրենքներին, օրենքներին համապատասխան,

2) պահպանել աստիճանակարգված ենթակայության սկզբունքը, որը չի խոչընդոտում վերադաս կամ անմիջական վերադաս դատախազին զերծ մնալու ստորադաս դատախազի նկատմամբ այնպիսի վարքագիծ դրսևորելուց կամ խոսքեր արտահայտելուց, որը կարող է արատավորել դատախազի պատիվն ու արժանապատվությունը, վարկաբեկել նրա հեղինակությունը.

3) լինել անկախ և անաչառ.

4) դրսևորել անհրաժեշտ հետևողականություն՝ օրենքով նախատեսված սահմանափակումները պահպանելիս.

5) ունենալ ինքնուրույն համոզմունք և դատախազական ակտերը կայացնել ինքնուրույն, որը չի խոչընդոտում իրավական հարցերի շուրջ դատախազ գործընկերներից խորհուրդ ստանալը.

6) բարեխղճորեն կատարել իր պաշտոնեական պարտականությունները, առաջնահերթության կարգով կատարել իր լիազորությունները՝ օրենքով դատախազին թույլատրված գործունեության այլ տեսակների նկատմամբ.

7) ապահովել իր պատշաճ մասնագիտական պատրաստվածությունը ու արհեստավարժությունը, միջոցներ ձեռնարկել ներպետական ու միջազգային իրավունքի վերաբերյալ իր մասնագիտական գիտելիքների հարստացման, հմտությունների և անձնական հատկանիշների շարունակական կատարելագործման ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում մասնագիտական աջակցություն ցույց տալ գործընկերներին.

8) ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներով՝ միջոցներ ձեռնարկել օրինականությունն ամրապնդելու, իրավախախտումների պատճառներն ու դրանց կատարմանը նպաստող պայմանները բացահայտելու և վերացնելու համար.

9) դատական նիստերին մասնակցել պատշաճ համազգեստով, ցանկացած պայմաններում ու իրավիճակում լինել զուսպ, զգացմունքներում՝ կայուն, խուսափել դատախազի կոչմանն անհարիր այնպիսի վարքագիծ դրսևորելուց կամ խոսքեր արտահայտելուց, որոնք կարող են արատավորել դատախազի ու դատախազության հեղինակությունն ու բարի համբավը.

10) իր պարտականություններն իրականացնելիս դրսևորել անաչառություն, զերծ մնալ իր խոսքով կամ վարքագծով կողմնակալություն ցուցաբերելուց, խտրականություն դրսևորելուց կամ նման տպավորություն ստեղծելուց, գործել այնպես, որ նրա անաչառության և անկողմնակալության նկատմամբ անհարկի կասկած չհարուցվի, չառաջնորդվել ենթադրություններով, հույզերով, անձնական վերաբերմունքով և այլ

կողմնակի ազդեցությամբ, որը չի խոչընդոտում դատախազին ազատորեն արտահայտելու իր կարծիքը ծառայողական հարցերին առնչվող լուծումների վերաբերյալ.

11) ողջամտության սահմաններում իրեն դրսևորել այնպես, որ նվազագույնի հասցվեն վարույթից ~~կամ գործի քննությունից~~ հեռացման (ինքնաբացարկի) անհրաժեշտություն առաջացնող դեպքերը.

12) այլ նպատակներով չօգտագործել, չհրապարակել կամ այլ կերպ մատչելի չդարձնել պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ իրեն հայտնի դարձած ոչ հրապարակային տեղեկատվությունը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

13) համբերատար, արժանապատիվ, հարգալից և բարեկիրթ վերաբերմունք ցուցաբերել դատավարության մասնակիցների, գործընկերների և բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ դատախազը շփվում է ի պաշտոնե.

14) պաշտոնեական պարտականությունների իրականացման ընթացքում թույլ տրված խախտումների ու թերությունների բացահայտմանն ու անաչառ քննադատությանը վերաբերվել ըմբռնումով և միջոցներ ձեռնարկել դրանք վերացնելու համար.

15) գործընկերների հետ հարաբերություններում նպաստել առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորմանը, նրանց նկատմամբ լինել հարգալից, հավասարակշռված, հարգել նրանց կարծիքը, պատրաստակամություն դրսևորել օգնելու և աջակցելու իր գործընկերներին, անիրավաչափորեն չմիջամտել գործընկերների պաշտոնեական լիազորությունների իրականացմանը, որը չի խոչընդոտում դատախազին ազատորեն արտահայտելու իր կարծիքը ծառայողական հարցերին առնչվող լուծումների վերաբերյալ:

Հոդված 74. Դատախազի վարքագծի կանոնները արտապաշտոնեական հարաբերություններում

1. Արտապաշտոնեական հարաբերություններում դատախազը պարտավոր է՝

1) չօգտագործել դատախազի պաշտոնի հեղինակությունը ի շահ իրեն կամ այլ անձի.

2) թույլ չտալ շահերի բախում, որ իր ընտանեկան, հասարակական կամ այլ բնույթի հարաբերությունները որևէ կերպ ազդեն ի պաշտոնե իր լիազորությունների պատշաճ իրականացման վրա.

3) խուսափել իր կամ դատախազության հեղինակությունը վարկաբեկող, պատիվն ու արժանապատվությունն արատավորող, անաչառության վրա ազդող, որոշակի անձանցից նյութական և այլ կախվածության մեջ դնող կապերից.

4) զերծ մնալ վարույթի ~~գործի~~ վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցների հետ անհարկի շփումներից, ցանկացած պայմաններում ու իրավիճակում լինել զուսպ, զգացմունքներում՝ կայուն, խուսափել դատախազի կոչմանն անհարիր այնպիսի

վարքագիծ դրսևորելուց կամ խոսքեր արտահայտելուց, որոնք կարող են արատավորել դատախազի ու դատախազության հեղինակությունն ու բարի համբավը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ

Հոդված 5. Դատավորի գործունեության անհամատեղելիության պահանջները

1. Դատավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

2. Դատավորի նկատմամբ կիրառելի են հանրային ծառայողի համար ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ օրենքով սահմանված կարգավորումները:

3. Դատավորը պետք է ձգտի կառավարել իր ներդրումներն այնպես, որ նվազագույնի հասցնի այն գործերի կամ քրեական վարույթների քանակը, որոնցով նա պետք է ինքնաբացարկ հայտնի:

4. Դատավորը կարող է զբաղեցնել պաշտոն ոչ առևտրային կազմակերպությունում, եթե՝

1) իր գործունեությունն այդ պաշտոնում իրականացնում է անհատույց, և

2) այդ պաշտոնը չի ենթադրում ֆինանսական միջոցների տնօրինում, կազմակերպության անունից քաղաքացիաիրավական գործարքների կնքում կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կազմակերպության ներկայացուցչության իրականացում:

5. Դատավորը չի կարող գործել որպես կտակակատար կամ գույքի հավատարմագրային կառավարիչ, բացառությամբ այն դեպքերի, երբ նա անհատույց գործում է իր մերձավոր ազգականի կամ իր խնամակալության կամ հոգաբարձության ներքո գտնվող անձի գույքի կապակցությամբ:

6. Սույն օրենսգրքի իմաստով՝ մերձավոր ազգական է՝

1) դատավորի ամուսինը.

2) դատավորի կամ նրա ամուսնու ծնողը.

3) դատավորի կամ նրա ամուսնու զավակը, զավակի ամուսինը, հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբայրը, քույրը, պապը, տատը, թոռը, ծոռը.

4) դատավորի կամ նրա ամուսնու եղբոր կամ քրոջ ամուսինը, զավակը.

5) դատավորի կամ նրա ամուսնու որդեգրողը կամ որդեգրվածը:

Հոդված 12. Դատավարության լեզուն

1. Հայաստանի Հանրապետությունում դատավարության լեզուն հայերենն է:

2. Բոլոր փաստաթղթերը դատարան են ներկայացվում հայերեն կամ հայերեն պատշաճ թարգմանությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

3. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի դատավարությանը մասնակցելու իր նախընտրած լեզվով, եթե նա ապահովում է հայերեն պատշաճ թարգմանությունը:

4. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են դատավարությանը մասնակցել հայերենով:

5. ~~Քրեական գործով հ~~ ~~Հայերենին~~ Հայերենին չտիրապետող մեղադրյալին դատարանը պարտավոր է պետական միջոցների հաշվին ապահովել թարգմանչի ծառայություններով, բացառությամբ երբ մեղադրյալը ցանկանում է իր հաշվին ապահովել թարգմանությունը:

6. Վարչական գործով դատավարության մասնակցին, քաղաքացիական գործով՝ գործին մասնակցող անձին, իսկ քրեական վարույթով~~գործով~~՝ տուժողին դատարանը պետական միջոցների հաշվին ապահովում է թարգմանչի ծառայություններով, եթե նա չունի հայերեն հաղորդակցվելու հնարավորություն և ապացուցում է, որ բավարար միջոցներ չունի վճարովի թարգմանություն ապահովելու համար:

7. Լսողական կամ խոսակցական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձն ունի սուրդոթարգմանչի միջոցով դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորություն՝ սույն հոդվածով թարգմանչի համար նախատեսված կարգով:

8. ~~Քրեական գործերով դատավարությանը~~ Քրեական վարույթին մասնակցող՝ տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի համար դատավարական փաստաթղթերի և դատական ակտերի հասանելիությունն ապահովվում է օգնականի միջոցով՝ պետական միջոցների հաշվին: Վարչական գործով դատավարության մասնակիցը, իսկ քաղաքացիական գործով՝ գործին մասնակցող անձն ունի պետական միջոցների հաշվին օգնականի իրավունք, եթե ապացուցում է, որ բավարար միջոցներ չունի վճարովի օգնական ունենալու համար:

9. Պետական միջոցների հաշվին թարգմանչի, սուրդոթարգմանչի կամ տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցելու անհրաժեշտության դեպքում այդ անձը նշանակվում է դատարանի որոշմամբ: Այդ անձին նշանակելու, նրա վարձատրության չափը և կարգը սահմանում է Կառավարությունը:

Հոդված 21. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում դատավորների մասնագիտացումը

1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներն ունեն քաղաքացիական կամ քրեական մասնագիտացում:

~~1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում գործը քննում են քաղաքացիական կամ քրեական մասնագիտացման դատավորները:~~

2. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քրեական վարույթները ~~քրեական գործերը~~, պատժի կատարման հետ կապված օրենքով նախատեսված հարցերը ~~օրենքով նախատեսված գործերը~~ քննում է միայն քրեական մասնագիտացման դատավորը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի: Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի իրավասությանը ենթակա մյուս գործերը քննում է քաղաքացիական մասնագիտացման դատավորը:

2.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ~~քննության ենթակա մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերը~~մինչդատական վարույթի դատական երաշխիքների վարույթները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում դատարանների թույլտվությամբ անցկացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին բոլոր միջնորդությունները և բողոքները քննում են միայն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քրեական մասնագիտացման առանձին դատավորները:

2.2 Համապատասխան մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննության ենթակա մինչդատական վարույթի դատական երաշխիքների վերաբերյալ վարույթները քննում են միայն տվյալ մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քրեական մասնագիտացման առանձին դատավորները:

~~2.2. Համապատասխան մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննության ենթակա մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերը, բացառությամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների, քննում են միայն տվյալ մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քրեական մասնագիտացման առանձին դատավորները:~~

2.3. Սույն հոդվածի 2.2-րդ մասով նախատեսված դատավորները, ի լրումն նույն մասով նախատեսված գործերի, քննում են նաև սույն օրենսգրքով քրեական մասնագիտացման դատավորին վերապահված այլ գործեր:

3. Բարձրագույն դատական խորհուրդը քաղաքացիական և քրեական մասնագիտացման դատավորներից կարող է ընտրել դատավորներ, որոնք, ի լրումն համապատասխան մասնագիտացման գործերի, քննում են առանձին տեսակի (անչափահասների, Հայաստանի Հանրապետություն անօրինական տեղափոխված և անօրինական պահվող երեխաների վերադարձի և այլն) գործեր:

4. Առանձին տեսակի գործերի ցանկը, յուրաքանչյուր դատարանի համար նման գործեր քննող դատավորների քանակը և ընտրության կարգը սահմանում է Բարձրագույն դատական խորհուրդը:

(21-րդ հոդվածը լրաց. 25.06.20 ՀՕ-341-Ն, լրաց., փոփ. 25.03.20 ՀՕ-197-Ն, փոփ., խմբ., լրաց. 03.02.21 ՀՕ-265-Ն, փոփ. 14.04.21 ՀՕ-331-Ն)

(25.03.20 ՀՕ-197-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

(03.02.21 ՀՕ-265-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

(14.04.21 ՀՕ-331-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 32. Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի նախագահը

1. Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի նախագահի պաշտոնավարման ժամկետը երեք տարի է:

2. Ի լրումն դատավորի լիազորությունների՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի նախագահը՝

1) ապահովում է դատարանի բնականոն գործունեությունը, ներառյալ՝ վերահսկում են դատարանի աշխատակազմի գործունեությունը.

2) դատավորներին տրամադրում է արձակուրդ.

3) ներկայացնում է դատարանն այլ մարմինների հետ հարաբերություններում.

4) դատարանի բնականոն գործունեության ապահովման հետ կապված հարցերով դիմում է Բարձրագույն դատական խորհուրդ, Ընդհանուր ժողով և Ընդհանուր ժողովի հանձնաժողովներ.

5) դատավորի կողմից վարքագծի կանոնի առերևույթ խախտում հայտնաբերելիս այդ մասին համապատասխան հաղորդում է ներկայացնում Ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին (այսուհետ՝ էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով).

6) իրականացնում է այլ լիազորություններ:

3. Առաջին ատյանի դատարանի նախագահը Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգով հաստատում է մինչդատական վարույթի դատական երաշխիքների ~~քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության~~ շրջանակներում ներկայացված միջնորդությունների, բողոքների և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննությունն իրականացնող դատավորների հերթապահությունների ժամանակացույցը: Դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվում են միայն ժամանակացույցով հերթապահությանը ներգրավված դատավորների նստավայրերի վերաբերյալ տվյալները:

4. Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի նախագահը կարող է այլ դատավորի նշանակել իրեն փոխարինող արձակուրդի կամ գործուղման մեջ լինելու, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակության դեպքերի համար:

5. Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի նախագահի կողմից փոխարինող չնշանակվելու, լիազորությունների կասեցման, դադարման կամ դադարեցման դեպքերում նրան փոխարինում է տվյալ դատարանի այն դատավորը, որը տվյալ ատյանի դատարանում ունի դատավորի առավել երկար փորձառություն: Փորձառության

հավասար ժամկետ ունեցող մեկից ավելի դատավորի առկայության դեպքում նախապատվությունը տրվում է տարիքով ավագ դատավորին:

(32-րդ հոդվածը փոփ. 25.03.20 ՀՕ-197-Ն, խմբ. 03.02.21 ՀՕ-265-Ն)

(25.03.20 ՀՕ-197-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

(03.02.21 ՀՕ-265-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 40. Դատավորների միջև գործերի բաշխման և վերաբաշխման կարգը

1. Դատավորների միջև գործերը բաշխվում, վերաբաշխվում են, և կոլեգիալ դատական կազմերը ձևավորվում են մասնագիտացման սկզբունքի և պատահական ընտրության, ինչպես նաև սույն գլխում ամրագրված կանոնների հիման վրա՝ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգով: Բարձրագույն դատական խորհուրդը կարող է սահմանել մինչդատական վարույթի դատական երաշխիքների շրջանակներում ներկայացված միջնորդությունների, բողոքներիմինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ներկայացված միջնորդությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների բաշխման, վերաբաշխման առանձնահատկությունները: Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ մինչդատական վարույթի դատական երաշխիքների շրջանակներում ներկայացված միջնորդությունները, բողոքներըմինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերը և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունները քննող առանձին դատավորների միջև այլ գործեր չեն բաշխվում:

2. Օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող գործերը բաշխվում և վերաբաշխվում են՝ ապահովելով գաղտնիությունը:

(40-րդ հոդվածը փոփ. 25.03.20 ՀՕ-197-Ն, լրաց. 03.02.21 ՀՕ-265-Ն)

(25.03.20 ՀՕ-197-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

(03.02.21 ՀՕ-265-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 42. Առաջին ատյանի դատարանում գործերի բաշխումը

1. Դատարանում ստացված գործն անհապաղ մուտքագրվում է Համակարգչային ծրագրում: Մուտքագրված գործերը հավասարաչափ բաշխվում են տվյալ դատարանի դատավորների միջև՝ առանց հաշվի առնելու մուտքագրման հերթականությունը: Հավասարաչափ բաշխման չափանիշները սահմանում է Բարձրագույն դատական խորհուրդը սույն օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգում:

2. Դատավորի վարույթում առանձնակի բարդության գործի առկայության դեպքում դատավորը կարող է դիմել Բարձրագույն դատական խորհուրդ՝ առաջարկելով իր անուն-

ազգանունը ժամանակավորապես հանել բաշխման ցանկից կամ սահմանել իրեն բաշխվելիք գործերի առանձին տոկոսաչափ: Դատավորի դիմումը հիմնավոր համարելու դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը որոշում է կայացնում դատավորի անուն-ազգանունը գործերի բաշխման ցանկից ժամանակավորապես հանելու կամ նրան բաշխվելիք գործերի առանձին տոկոսաչափ նախատեսելու վերաբերյալ՝ դրա համար սահմանելով որոշակի ժամանակահատված, որը չի կարող գերազանցել վեց ամիսը: Դատավորի դիմումի հիման վրա Բարձրագույն դատական խորհուրդը կարող է որոշում կայացնել վեց ամիս ժամկետը երկարաձգելու մասին, եթե առանձնակի բարդության գործի քննությունը չի ավարտվել:

3. Դատավորի անուն-ազգանունը հանվում է գործերի բաշխման ցանկից՝

1) արձակուրդի դեպքում՝ արձակուրդի և դրան նախորդող տասնօրյա ժամանակահատվածով.

2) այլ դատարան գործուղվելու դեպքում՝ գործուղման և դրան նախորդող տասնօրյա ժամանակահատվածով: Գործուղման վայրի դատարանի գործերի բաշխման ցանկից գործուղված դատավորի անունը հանվում է գործուղման ժամանակահատվածի ավարտից մեկ ամիս առաջ.

3) ժամանակավոր անաշխատունակության, վերապատրաստման դասընթացներին մասնակցելու, օտարերկրյա գործուղման կամ լիազորությունները կասեցնելու դեպքում՝ համապատասխան ժամկետով.

4) պաշտոնավարման ժամկետն ավարտվելու դեպքում՝ պաշտոնավարման ժամկետի ավարտից երեք ամիս առաջ.

5) սույն օրենսգրքով նախատեսված այլ դեպքում:

4. Եթե առաջին ատյանի դատարանն ունի նստավայր, որում գործում է նույն մասնագիտացումն ունեցող առնվազն երկու դատավոր, ապա գործերի բաշխումն իրականացվում է ընդհանուր կարգով՝ հիմք ընդունելով նստավայրի սպասարկման տարածքը:

5. Եթե առաջին ատյանի դատարանի նստավայրում առկա է համապատասխան մասնագիտացման միայն մեկ դատավոր, ապա սույն հոդվածով նախատեսված գործերի բաշխման կարգը տվյալ նստավայրում չի կիրառվում, իսկ գործը հանձնվում է այդ դատավորին:

6. Այն դեպքում, երբ մուտքագրված գործը, համաձայն օրենքի, ենթակա է քննության դատավորների կոլեգիալ կազմով, ապա տվյալ գործը հանձնվում է դատական կազմը նախագահող դատավորին:

7. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը չեն կիրառվում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում գործերի բաշխման կարգի նկատմամբ:

8. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում քրեական վարույթները ~~գործերը~~ բաշխելիս կարող է հաշվի առնվել դատարանի նստավայրի և վարույթի նյութերն ~~գործն~~ ուղարկած դատախազության համապատասխան ստորաբաժանման միջև հեռավորությունը, եթե դրանով չեն խախտվում սույն հոդվածի 1-ին մասի պահանջները:

Հոդված 43. Վերաքննիչ դատարանում գործերի բաշխումը

1. Կոլեգիալ և միանձնյա կարգով քննվող գործերը Համակարգչային ծրագրում մուտքագրվում և բաշխվում են միմյանցից առանձին:

2. Ձևավորված դատական կազմերը փոփոխվում են յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ի դրությամբ:

2.1. Վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով կայացված ակտերի վերանայման գործերը բաշխվում են միայն վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող առանձին դատավորների միջև, իսկ վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով կայացված ակտերի վերանայման գործերը՝ միայն վերաքննիչ քաղաքացիական դատարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող առանձին դատավորների միջև:

3. Վերաքննիչ քրեական դատարանում մինչդատական վարույթի դատական երաշխիքների շրջանակներում կայացված ակտերի, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննության արդյունքում կայացված ակտերի վերանայման վարույթները բաշխվում են միայն վերաքննիչ քրեական դատարանի՝ մինչդատական քրեական վարույթի դատական երաշխիքների և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննության հետ կապված վարույթներով վերանայում իրականացնող առանձին դատավորների միջև:

~~3. Վերաքննիչ քրեական դատարանում մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննության հետ կապված գործերով կայացված ակտերի վերանայման գործերը բաշխվում են միայն վերաքննիչ քրեական դատարանի՝ մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների քննության հետ կապված գործերով վերանայումն իրականացնող առանձին դատավորների միջև:~~

(43-րդ հոդվածը լրաց. 03.02.21 ՀՕ-265-Ն, 14.04.21 ՀՕ-331-Ն)

(03.02.21 ՀՕ-265-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

(14.04.21 ՀՕ-331-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 45. Դատարանների, Վճռաբեկ դատարանի պալատների նախագահներին, Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամներին, Ընդհանուր ժողովի հանձնաժողովների անդամներին, մինչդատական քրեական

վարույթի դատական երաշխիքների շրջանակներում միջնորդություններ և բողոքներ ~~նկատմամբ դատական վերահսկողության գործեր~~ քննող դատավորներին և վերաքննիչ քրեական դատարանի դատավորներին գործերի բաշխման առանձնահատկությունները

(վերնագիրը խմբ. 03.02.21 ՀՕ-265-Ն)

1. Հավասարաչափ բաշխման չափանիշներից սահմանվում են հետևյալ նվազեցումները.

1) 10 տոկոս՝ Ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողովի (այսուհետ՝ Ուսումնական հարցերի հանձնաժողով) անդամների համար.

2) 25 տոկոս՝ էթիկայի և կարգապահական հարցերի, ինչպես նաև դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովների անդամների համար.

3) 25 տոկոս՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահների համար.

4) 30 տոկոս՝ մասնագիտացված դատարանների նախագահների համար.

5) 35 տոկոս՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի նախագահի համար.

5.1) 50 տոկոս՝ Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների համար.

5.2) 60 տոկոս՝ Վճռաբեկ դատարանի նախագահի համար.

6) 95 տոկոս՝ Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամների համար:

2. Բարձրագույն դատական խորհրդի նախագահ ընտրված դատավորի անուն-ազգանունը հանվում է գործերի բաշխման ցուցակից Բարձրագույն դատական խորհրդի նախագահի պաշտոնավարման ժամկետով:

2.1. Սույն օրենսգրքի 43-րդ հոդվածի 2.1-ին մասով նախատեսված դատավորների համար Բարձրագույն դատական խորհուրդը կարող է սահմանել հավասարաչափ բաշխման չափանիշներից նվազեցման տոկոսաչափ:

3. Սույն օրենսգրքի 21-րդ հոդվածի 2.2-րդ մասով և 43-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դատավորների համար Բարձրագույն դատական խորհուրդը կարող է սահմանել Հավասարաչափ բաշխման չափանիշներից նվազեցման տոկոսաչափ:

(45-րդ հոդվածը փոփ., խմբ., լրաց. 25.03.20 ՀՕ-197-Ն, խմբ. 03.02.21 ՀՕ-265-Ն, լրաց. 14.04.21 ՀՕ-331-Ն, փոփ. 09.02.22 ՀՕ-22-Ն)

(25.03.20 ՀՕ-197-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

(03.02.21 ՀՕ-265-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

(14.04.21 ՀՕ-331-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

(09.02.22 ՀՕ-22-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 51. Դատավորի անձեռնմխելիությունը

1. Դատավորը, Սահմանադրության 164-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, չի կարող պատասխանատվության ենթարկվել արդարադատություն և որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ, ինչպես նաև դատավորի կարգավիճակից բխող իրավունքներ իրականացնելիս հայտնած կարծիքի կամ կայացրած դատական ակտի համար, բացառությամբ երբ առկա են հանցագործության կամ կարգապահական խախտման հատկանիշներ:

2. Սահմանադրության 164-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Բարձրագույն դատական խորհրդի համաձայնությամբ:

3. Դատավորն իր լիազորությունների իրականացման կապակցությամբ առանց Բարձրագույն դատական խորհրդի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո:

4. Ի լրումն Սահմանադրության 27-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավունքի՝ ազատությունից զրկելու պահից դատավորն իրավունք ունի հեռախոսազանգով կամ հաղորդակցման այլ միջոցներով այդ մասին անհապաղ տեղեկացնել Բարձրագույն դատական խորհրդի նախագահին կամ այլ անդամի:

5. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում դատավորին ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանասուներկու ժամից ավելի: Դատավորին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում են Բարձրագույն դատական խորհրդի նախագահը և գլխավոր դատախազը: Դատավորին ձերբակալելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է Բարձրագույն դատական խորհուրդ և գլխավոր դատախազին: Դատավորին ազատությունից զրկած մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են ապահովել Բարձրագույն դատական խորհրդի նախագահի և մյուս անդամների անարգել մուտքն այն վայր, որտեղ պահվում է ազատությունից զրկված դատավորը, և ապահովել նրանց տեսակցությունը դատավորի հետ, եթե Բարձրագույն դատական խորհրդի տվյալ անդամի վերաբերյալ քրեական հետապնդման մարմինը տեսակցությունը սահմանափակող որոշում չի կայացրել:

6. Դատավորի նկատմամբ քրեական հետապնդման հարուցումը և տվյալ գործով մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատախազական հսկողությունն իրականացնում է գլխավոր դատախազը կամ նրա հանձնարարությամբ՝ տեղակալը:

7. Քրեական վարույթի շրջանակում դատավորի նկատմամբ գործողությունները կատարվում են՝ առավելագույնս ապահովելով մինչդատական քրեական վարույթի գաղտնիությունը, դատավորի հեղինակության ու անկախության նկատմամբ հարգանքը, բացառելով դատավորի գործունեությանը ուղղակի կամ անուղղակի որևէ միջամտություն:

8. Պաշտոնավարման ընթացքում և լիազորությունները դադարեցվելուց կամ դադարելուց հետո դատավորը չի կարող հարցաքննվել որպես վկա այն վարույթով~~գործով,~~ որի շրջանակում նա իրականացրել է իր լիազորությունները՝ որպես դատավոր:

(51-րդ հոդվածը լրաց. 25.03.20 ՀՕ-197-Ն)

(25.03.20 ՀՕ-197-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 52. Դատարանի շենքում ապացուցողական ~~քննչական~~ գործողություններ կատարելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդին իրազեկելը

1. Քրեական վարույթի ~~գործի~~ շրջանակներում ապացուցողական ~~քննչական~~ գործողություններ կատարելու նպատակով դատարանի շենք մուտք գործելուց առաջ մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազն անհապաղ իրազեկում է Բարձրագույն դատական խորհրդին:

2. Առանց Բարձրագույն դատական խորհրդին իրազեկելու դատարանի շենք մուտք գործելու դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը համապատասխան անձանց պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ դիմում է գլխավոր դատախազին կամ քննչական մարմնի ղեկավարին:

3. Գլխավոր դատախազից կամ քննչական մարմնի ղեկավարից ողջամիտ ժամկետում պատասխան չստանալու դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս պաշտոնական հայտարարությամբ:

Հոդված 53. Քրեական հետապնդման մեջ չգտնվող դատավորի մասնակցությամբ ապացուցողական ~~քննչական~~ գործողություններ կատարելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդին իրազեկելը

1. Քրեական հետապնդման մեջ չգտնվող դատավորի մասնակցությամբ ապացուցողական ~~քննչական~~ գործողություն կատարելու անհրաժեշտության դեպքում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազը ապացուցողական ~~քննչական~~ գործողությունն սկսելուց առնվազն մեկ օր առաջ իրազեկում է Բարձրագույն դատական խորհրդին, իսկ առանց դատարանի թույլտվության իրականացվող ապացուցողական~~քննչական~~ գործողության մասին՝ նաև համապատասխան դատավորին:

2. Քրեական հետապնդման մեջ չգտնվող դատավորի մասնակցությամբ ապացուցողական~~քննչական~~ գործողությունը կատարվում է նախապես դատավորի հետ համաձայնեցված ժամանակ և վայրում, բացառությամբ դատարանի թույլտվությամբ իրականացվող ապացուցողական~~քննչական~~ գործողության: ապացուցողական~~Քննչական~~ գործողությունը իրականացնելիս առավելագույն չափով ապահովվում է ապացուցողական~~քննչական~~ գործողության գաղտնիությունը, դատավորի հեղինակության և անկախության նկատմամբ հարգանքը՝ բացառելով դատավորի գործունեությանը ուղղակի կամ անուղղակի որևէ միջամտություն:

3. Սույն հոդվածում ամրագրված պահանջների խախտմամբ ապացուցողական~~քննչական~~ գործողություն իրականացվելու դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը համապատասխան անձանց պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ դիմում է գլխավոր դատախազին կամ քննչական մարմնի ղեկավարին:

4. Գլխավոր դատախազից կամ քննչական մարմնի ղեկավարից ողջամիտ ժամկետում պատասխան չստանալու դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս պաշտոնական հայտարարությամբ:

(53-րդ հոդվածը փոփ., խմբ. 25.03.20 ՀՕ-197-Ն)

(25.03.20 ՀՕ-197-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 83. Բարձրագույն դատական խորհրդի՝ Ազգային ժողովի կողմից ընտրված անդամին ներկայացվող անհամատեղելիության պահանջները և նրա գործունեության երաշխիքները

1. Ազգային ժողովի կողմից ընտրված՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամը չի կարող զբաղվել քաղաքական գործունեությամբ, զբաղեցնել պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

2. Բարձրագույն դատական խորհրդի անդամի վարձատրությունը սահմանվում է օրենքով, և այն չի կարող պակաս լինել Վճռաբեկ դատարանի դատավորի վարձատրությունից:

3. Եթե անձը Ազգային ժողովի կողմից ընտրվել է Բարձրագույն դատական խորհրդի անդամ Սահմանադրական դատարանի դատավոր պաշտոնավարելու ընթացքում, ապա Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունների ավարտից հետո օրենքով կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու դեպքում կենսաթոշակի չափը հաշվարկելիս համարվում է, որ նա կենսաթոշակի է անցել դատավորի պաշտոնից:

4. Եթե անձը Ազգային ժողովի կողմից ընտրվել է Բարձրագույն դատական խորհրդի անդամ Սահմանադրական դատարանի դատավոր պաշտոնավարելու ընթացքում, և նրա՝ որպես Սահմանադրական դատարանի դատավոր ստացած վարձատրության չափը գերազանցում է Բարձրագույն դատական խորհրդի անդամի համար օրենքով սահմանված վարձատրության չափը, ապա նրա՝ որպես Սահմանադրական դատարանի դատավոր ստացած վարձատրությունը պահպանվում է, իսկ պակաս լինելու դեպքում նա վարձատրվում է Բարձրագույն դատական խորհրդի անդամի համար օրենքով սահմանված չափով: Սույն մասով սահմանված երաշխիքը կիրառվում է նաև Ընդհանուր ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամների նկատմամբ:

5. Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ կիրառվում են («mutatis mutandis») սույն օրենսգրքի 51-րդ, 53-55-րդ, 57-60-

րդ, 62-64-րդ հոդվածները և 21-րդ գլխի կանոնները՝ այնքանով, որքանով կիրառելի են, և եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքով:

6. Բարձրագույն դատական խորհրդի շենքում ապացուցողական ~~քննչական~~ գործողություններ կատարելու նկատմամբ տարածվում են սույն օրենսգրքի 52-րդ հոդվածում ամրագրված դրույթները:

Հոդված 89. Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները

1. Բարձրագույն դատական խորհուրդը՝

1) կազմում և հաստատում է դատավորների թեկնածուների, ներառյալ՝ առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակները.

2) Հանրապետության նախագահին առաջարկում է նշանակման ենթակա, ներառյալ՝ առաջխաղացման կարգով նշանակման ենթակա դատավորների թեկնածուներին.

3) Հանրապետության նախագահին առաջարկում է նշանակման ենթակա դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների թեկնածուներին.

4) Ազգային ժողովին առաջարկում է Վճռաբեկ դատարանի դատավորների և նախագահի թեկնածուներին.

4.1) օրենքով սահմանված դեպքում և կարգով նշանակում (առաջադրում) է Բարձրագույն դատական խորհրդի ներկայացուցիչ (անդամ) մրցութային խորհուրդներում (մրցութային հանձնաժողովներում) և այլ մարմիններում.

5) լուծում է դատավորին մեկ այլ դատարան գործուղելու հարցը.

6) լուծում է իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցը.

7) լուծում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը.

8) լուծում է դատավորի լիազորությունների դադարեցման հարցը.

9) արձանագրում է դատավորի լիազորությունների դադարման հիմք հանդիսացող հանգամանքի առկայությունը.

10) հաստատում է իր, ինչպես նաև դատարանների ծախսերի նախահաշիվները.

11) իր և դատարանների բյուջետային հայտը ներկայացնում է Կառավարություն՝ օրենքով սահմանված կարգով պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար.

12) հաստատում է իր և դատարանների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը և սահմանված կարգով ներկայացնում Կառավարություն.

13) բաշխում է դատարանների պահուստային ֆոնդի միջոցները.

14) լուծում է իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցը.

15) լուծում է Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը.

16) լուծում է Բարձրագույն դատական խորհրդի անդամի և նախագահի լիազորությունները դադարեցնելու հարցը.

17) արձանագրում է Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունների դադարման հիմք հանդիսացող հանգամանքի առկայությունը.

18) քննարկում է դատարանի կամ դատավորի անկախությունը վտանգող ցանկացած հարց և իրավասու մարմիններից պահանջում է հարցի լուծման ուղղությամբ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ.

18.1) քննարկում է դատարանների բնականոն գործունեության հարցերը, իր լիազորությունների շրջանակում լուծում դրանք կամ դրանց լուծման նպատակով դիմում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ.

18.2) պարբերաբար ամփոփում է դատական պրակտիկան և վիճակագրությունը և ամփոփման արդյունքների հիման վրա կազմում զեկույցներ.

19) իրավասու պետական մարմիններին առաջարկներ է ներկայացնում դատական իշխանությանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործման վերաբերյալ.

20) դատական իշխանությանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ տալիս է կարծիք.

21) հաստատում է դատական իշխանությանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերը դատարաններում շրջանառելու կարգը.

22) հաստատում է զանգվածային լրատվության միջոցների հետ իր և դատարանների փոխհարաբերության կանոնները.

23) հաստատում է դատարան փաստաթղթերի հանձնման, ըստ տեսակների՝ գործերի դասակարգման և դատարանների գործավարության այլ կանոններ.

24) Կառավարության համաձայնությամբ ավելացնում է առանձին դատարանների դատավորների թվակազմը, կրճատում է իր կողմից ավելացված դատավորների թվակազմը.

25) սահմանում է առաջին ատյանի դատարանների՝ սույն օրենսգրքով չսահմանված նստավայրերը, նստավայրերի սպասարկման տարածքը, հաստատում է դատավորների՝ ըստ նստավայրերի և մասնագիտացման բաշխումն ու թվակազմը.

26) սահմանում է դատարանի նիստերի դահլիճի և դատավորի աշխատասենյակի տիպային կահավորման նկարագրությունը.

27) սահմանում է դատավորների ներքին աշխատանքային կարգապահության կանոնները, դատական կազմի բացակայող դատավորներին փոխարինելու կարգը.

28) սահմանում է գործերի քննության (այդ թվում՝ ըստ փուլերի) միջին տևողության ուղենիշային ժամկետներ՝ ըստ գործերի առանձին տեսակների և բարդության.

29) սահմանում է դատավորի ծանրաբեռնվածությունը հաշվարկելու կարգը, ինչպես նաև դատավորի ծանրաբեռնվածության չափորոշիչները.

30) սահմանում է մինչդատական վարույթի դատական երաշխիքների շրջանակներում ներկայացված միջնորդությունները, բողոքներըքրեական վարույթի

~~նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ներկայացված միջնորդությունները~~ և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունները քննող դատավորների հերթապահություն սահմանելու կարգը.

31) հաստատում է Դատական դեպարտամենտի կանոնադրությունը և իրականացնում Դատական դեպարտամենտի հիմնադրի բոլոր լիազորությունները.

32) նշանակում և ազատում է Դատական դեպարտամենտի ղեկավարին.

33) Դատական դեպարտամենտի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է դատական կարգադրիչների ծառայության պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերը, ինչպես նաև սահմանում է Դատական դեպարտամենտի հաստիքների քանակը.

34) ***(կետն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-75-Ն)***

35) ***(կետն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-75-Ն)***

36) հաստատում է դատական կարգադրիչների վերապատրաստում անցկացնելու կարգը.

37) դատական կարգադրիչների ուսուցման ծրագրերում ներառման նպատակով Արդարադատության ակադեմիա է ներկայացնում առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ առաջարկություններ.

38) սահմանում է դատական կարգադրիչների ուսումնառության ժամաքանակը.

39) սահմանում է դատական կարգադրիչներին որպես խրախուսանք շնորհվող կրծքանշանների տեսակները և ձևերը.

40) սահմանում է դատական կարգադրիչի կրծքանշանի տեսակները և ձևերը.

41) սահմանում է դատական կարգադրիչներին համազգեստ հատկացնելու և կրելու կարգը.

42) սահմանում է դատական կարգադրիչների ծառայությունում առաջին անգամ որպես դատական կարգադրիչ ծառայության անցնող քաղաքացիների երդման կարգը.

43) հաստատում է իր աշխատակարգը.

44) սահմանում է Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների շենքերի անցագրային կարգը և անվտանգության կանոնները.

44.1) դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման ստուգման գործընթացին փորձագետների մասնակցության անհրաժեշտության դեպքում սահմանում է փորձագետների ներգրավման կարգը և նրանց ներկայացվող պահանջները.

45) իրականացնում է սույն օրենսգրքով սահմանված այլ լիազորություններ:

2. Բարձրագույն դատական խորհուրդը սույն հոդվածի 1-ին մասի 22-րդ, 25-րդ, 34-36-րդ, 41-րդ և 44-րդ կետերով նախատեսված իր լիազորություններն իրականացնելիս, ինչպես նաև մյուս լիազորությունների իրականացման ժամանակ նորմատիվ կարգավորում սահմանելիս ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

(89-րդ հոդվածը լրաց. 13.09.19 ՀՕ-181-Ն, փոփ. 21.01.20 ՀՕ-75-Ն, լրաց. 25.03.20 ՀՕ-197-Ն, խմբ. 18.09.20 ՀՕ-441-Ն, 03.02.21 ՀՕ-265-Ն, լրաց. 14.04.21 ՀՕ-331-Ն, լրաց., փոփ. 09.02.22 ՀՕ-22-Ն)

(25.03.20 ՀՕ-197-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

(03.02.21 ՀՕ-265-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

(14.04.21 ՀՕ-331-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 150. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության ժամկետը

1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը Բարձրագույն դատական խորհուրդը քննում է կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությունն ստանալու պահից եռամսյա ժամկետում:

2. Բացառիկ դեպքերում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության ժամկետը Բարձրագույն դատական խորհրդի հիմնավորված որոշմամբ կարող է ոչ ավելի, քան երեք ամսով երկարաձգվել, իսկ փորձաքննություն նշանակվելու դեպքում՝ փորձաքննության կատարման համար անհրաժեշտ ժամկետով:

3. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը կասեցվում է, եթե նույն փաստերի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ ~~հարուցվել է քրեական գործ~~, և այն վերսկսվում է քրեական վարույթի ավարտից հետո:

4. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը Բարձրագույն դատական խորհուրդը կարճում է, եթե կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը վերսկսելուց հետո առկա են սույն օրենսգրքի 160-րդ հոդվածով նախատեսված դատավորի լիազորությունների դադարման հիմքեր: ~~Քրեական գործով օրինական ուժի մեջ մտած~~ Օրինական ուժի մեջ մտած արդարացման կամ մեղադրական դատավճիռը կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննելիս պարտադիր է Բարձրագույն դատական խորհրդի համար միայն այն փաստերով, որոնցով հաստատված են որոշակի գործողությունների կատարումը և դրանք կատարած անձինք:

(150-րդ հոդվածը փոփ., լրաց. 25.03.20 ՀՕ-197-Ն)

(25.03.20 ՀՕ-197-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 165. Դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու կապակցությամբ դատավորի լիազորությունների կասեցումը

1. Դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու կապակցությամբ դատավորի լիազորությունները կասեցվում են Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ մինչև քրեական ~~գործով~~ վարույթի ավարտը:

1.1. Դատավորի նկատմամբ ոչ իր լիազորությունների իրականացման կապակցությամբ քրեական հետապնդում հարուցելու դեպքում Գլխավոր դատախազն այդ մասին անհապաղ տեղեկացնում է Բարձրագույն դատական խորհրդին:

2. Դատավորի լիազորությունները կասեցնելու ընթացքում դատավորն ստանում է հատուցում՝ որպես ոչ աշխատողի մեղքով պարապուրդում գտնվող:

(165-րդ հոդվածը լրաց. 25.03.20 ՀՕ-197-Ն)

(25.03.20 ՀՕ-197-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 31. Երեխայի իրավունքների պաշտպանությունը նրան պատասխանատվության ենթարկելիս

1. Երեխան ունի անձեռնմխելիության իրավունք, որը պաշտպանվում է օրենքով:

2. Քրեական վարույթում երեխայի իրավունքները և դրանց իրականացման կարգը սահմանվում են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով:

~~Երեխան ունի անձի անձեռնմխելիության իրավունք, որը պաշտպանվում է օրենքով: Երեխային չի կարելի ձերբակալել, խուզարկել կամ կալանավորել այլ կերպ, քան սահմանված է օրենքով:~~

~~Երեխայի ձերբակալման կամ կալանավորման մասին անհապաղ հայտնվում է ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին:~~

~~Ազատազրկման դատապարտված յուրաքանչյուր երեխա ունի օրենքով սահմանված կարգով ազատազրկման դատավճիռը բողոքարկելու իրավունք:~~

~~***(4-րդ մասն ուժը կորցրել է 05.11.03 ՀՕ-27-Ն)***~~

~~Արգելվում է երեխային չափահասների հետ միասին կալանքի տակ պահելը:~~

~~Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում երեխային քրեական պատասխանատվության ենթարկելիս փաստաբանի (հոգեբանի, մանկավարժի) ներկայությունը հետաքննության, նախաքննության և դատաքննության ընթացքում պարտադիր է:~~

~~Երեխան պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ծնողների կամ մերձավոր ազգականների դեմ:~~

~~Արգելվում է որպես վկա ցուցմունքներ վերցնելու կամ սեփական հանցանքը խոստովանելու համար երեխայի նկատմամբ բռնության, սպառնալիքի և այլ ապօրինի գործողությունների կիրառումը:~~

(31-րդ հոդվածը փոփ. 05.11.03 ՀՕ-27-Ն)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 7. Զինվորական ծառայության ժամկետը հաշվարկելու կարգը

1. Զինվորական ծառայության ընդհանուր ժամկետում ներառվում է զինծառայողի՝ սույն օրենքով սահմանված զինվորական ծառայության մեջ գտնվելու ամբողջ ժամանակահատվածը: Զինվորական ծառայության ընդհանուր ժամկետը որոշվում է օրացուցային հաշվարկով: Օրենքով կարող է սահմանվել նաև զինվորական ծառայության ժամկետի արտոնյալ հաշվարկ:

2. Զինվորական ծառայության ժամկետում չեն հաշվարկվում զինծառայողի՝

1) ազատազրկման կամ կարճաժամկետ ազատազրկման ~~կալանքի~~ ձևով պատիժը կրելու ժամանակահատվածը.

2) ձերբակալման կամ որպես խափանման միջոց կիրառված կալանավորման ժամանակահատվածը.

3) զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու կամ օրենքով սահմանված կարգով ապացուցված ինքնախեղման կամ դիտավորությամբ իր առողջական վիճակն այլ եղանակով վատթարացրած զինծառայողի բուժման մեջ գտնվելու ժամանակահատվածները՝ անկախ պատճառներից, ինչպես նաև զինծառայողի պահանջով իր առողջական վիճակի կրկնակի հետազոտման մեջ գտնվելու ժամանակահատվածը, եթե հետազոտման արդյունքներով զինծառայողի բուժման անհրաժեշտությունը բացակայում է.

4) ռազմաուսումնական հաստատություններից կարգապահական տույժի կարգով կամ անբավարար առաջադիմության կամ ուսումնառությունից հրաժարվելու համար հեռացված կուրսանտների ուսման կամ սույն օրենքի 54-րդ հոդվածի 4-րդ մասում նշված դեպքում պայմանագրային զինվորական ծառայության ժամանակահատվածը՝ սույն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության ընդհանուր ժամկետում.

5) սույն օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասում նշված անձի կողմից պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում պայմանագրից հրաժարվելու դեպքում՝ սույն օրենքի 28-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն ամսական արձակուրդում գտնվելու օրերը՝ սույն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության ընդհանուր ժամկետում.

6) սույն օրենքի խախտմամբ պայմանագրային զինվորական ծառայություն անցած լինելու ժամանակահատվածը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում պարտադիր զինծառայության սահմանված ժամկետը լրացվում է բաց թողնված օրացուցային օրերի քանակով՝ պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով:

4. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված դեպքերում նշված ժամկետները հաշվարկվում են զինծառայողի զինվորական ծառայության ժամկետում, եթե զինծառայողն օրենքով սահմանված կարգով ձեռք է բերել արդարացվածի կարգավիճակ:

Հոդված 10. Զինծառայողների կազմերը, զինվորական կոչումները և դրանց կրման ժամկետները

1. Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում սահմանվում են զինծառայողների հետևյալ կազմերը և զինվորական կոչումները.

1) շարքային կազմ՝ «շարքային» և «եֆրեյտոր» զինվորական կոչումներով.

2) ենթասպայական կազմ, որն իր հերթին բաղկացած է՝

ա. կրտսեր ենթասպայական կազմից՝ «կրտսեր սերժանտ», «սերժանտ», «ավագ սերժանտ», «ավագ» զինվորական կոչումներով,

բ. ավագ ենթասպայական կազմից՝ «ենթասպա», «ավագ ենթասպա» զինվորական կոչումներով.

3) սպայական կազմ, որն իր հերթին բաղկացած է՝

ա. կրտսեր սպայական կազմից՝ «լեյտենանտ», «ավագ լեյտենանտ», «կապիտան» զինվորական կոչումներով,

բ. ավագ սպայական կազմից՝ «մայոր», «փոխգնդապետ» «գնդապետ» զինվորական կոչումներով,

գ. բարձրագույն սպայական կազմից՝ «գեներալ-մայոր», «գեներալ-լեյտենանտ», «գեներալ-գնդապետ», «բանակի գեներալ» զինվորական կոչումներով:

2. Զինվորական կոչումների կրման ժամկետներն են՝

1) կրտսեր սերժանտ՝ 1 տարի.

2) սերժանտ, ավագ սերժանտ, ավագ՝ 2 տարի.

3) ենթասպա՝ 3 տարի.

4) լեյտենանտ՝ 2 տարի.

5) ավագ լեյտենանտ՝ 2 տարի.

6) կապիտան՝ 3 տարի.

7) մայոր՝ 3 տարի.

8) փոխգնդապետ՝ 4 տարի:

3. «Շարքային», «եֆրեյտոր», «ավագ ենթասպա», «գնդապետ» և բարձր մյուս զինվորական կոչումների կրման համար ծառայության ժամկետ չի սահմանվում:

4. Զինվորական կոչումները (բացառությամբ բարձրագույն սպայական կազմի) լինում են առաջին և հերթական: Շարքային կազմի համար առաջին զինվորական կոչում

է համարվում «շարքային» զինվորական կոչումը, ենթասպայական կազմի համար՝ «կրտսեր սերժանտ» զինվորական կոչումը, սպայական կազմի համար՝ «լեյտենանտ» զինվորական կոչումը: Ենթասպայական և սպայական կազմերի (բացառությամբ բարձրագույն սպայական կազմի) մյուս զինվորական կոչումները համապատասխան կազմերում համարվում են հերթական զինվորական կոչումներ:

5. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված զինվորական կոչումների կրման ժամկետը հաշվարկվում է կոչում շնորհելու օրվանից: Այդ ժամկետում ներառվում են նաև՝

1) զինծառայողին ոչ իրավաչափ քրեական պատասխանատվության ենթարկելու, զինվորական կոչումից զրկելու կամ զինվորական կոչումն իջեցնելու կամ կարգապահական տույժ ստացած լինելու կամ ռեաբիլիտացնող~~հանցագործության դեպքի կամ արարքում հանցակազմի բացակայության~~ հիմքով կարճված քրեական վարույթով ձերբակալման կամ որպես խափանման միջոց կիրառված կալանավորման, ինչպես նաև անօրինական զորացրելու և հետագայում վերականգնելու հետևանքով ընդհատված ժամանակահատվածները.

2) պահեստազորում գտնվելու ժամանակաշրջանը, ընդ որում, պահեստազորում հաշվառված անձանց համար տվյալ զինվորական կոչումը կրելու ժամկետը սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետներից մեկ տարով ավելի է:

6. Պահեստազորից զինվորական ծառայության ընդունված զինծառայողների՝ ունեցած զինվորական կոչումով ծառայության ժամկետում հաշվարկվում է պահեստազորում շնորհված զինվորական կոչումը կրելու ժամանակը:

Հոդված 15. Հերթական զինվորական կոչում շնորհելը

1. Հերթական զինվորական կոչում շնորհվում է հաջորդական կարգով, եթե զինծառայողի զբաղեցրած զինվորական պաշտոնի խմբին համապատասխանում է շնորհվող զինվորական կոչմանը հավասար կամ բարձր զինվորական կոչում: Հերթական զինվորական կոչումը շնորհվում է նախորդ զինվորական կոչումը կրելու ժամկետն ավարտվելու դեպքում:

2. Բարձրագույն ռազմաուսումնական հաստատությունների ունկնդիր, ադյունկտ (ասպիրանտ), օրդինատոր կամ դոկտորանտ սպայական կազմի զինծառայողներին հերթական զինվորական կոչում, մինչև «գնդապետ» զինվորական կոչումը ներառյալ, շնորհվում է նախկին կոչումով ծառայության ժամկետը լրանալու օրը, եթե հերթական զինվորական կոչումը համապատասխանում է մինչև ուսման ընդունվելն զբաղեցրած զինվորական պաշտոնով նախատեսված զինվորական կոչմանը:

3. Հերթական զինվորական կոչումը վաղաժամկետ շնորհվում է խրախուսման կարգով, բայց ոչ բարձր զբաղեցրած զինվորական պաշտոնի համար սահմանված զինվորական կոչումից:

4. Զինվորական կոչումը կրելու ժամկետը լրացած զինծառայողներին զինվորական ծառայության ընթացքում խրախուսման կարգով կարող է շնորհվել զբաղեցրած պաշտոնով նախատեսված զինվորական կոչումից մեկ աստիճան բարձր զինվորական կոչում՝ մինչև «փոխգնդապետ» զինվորական կոչումը ներառյալ:

5. Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով պատժի դատապարտվելու և պատիժը պայմանականորեն չկիրառելու կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով զինվորական ծառայության մեջ սահմանափակման կամ կարճաժամկետ ազատազրկման ~~կալանքի~~ ձևով պատիժը կրելու կամ ձերբակալման կամ որպես խափանման միջոց կիրառված կալանավորման կամ «հերթական զինվորական կոչում ստանալու ժամկետի կասեցում» կարգապահական տույժի կրման ժամանակահատվածները չեն հաշվարկվում զինվորական կոչումով ծառայության կրման ժամկետում: Սույն մասում նշված, ինչպես նաև զինծառայողի նկատմամբ քրեական գործ հարուցված կամ ծառայողական քննություն նշանակված կամ կարգապահական տույժ ստացած լինելու ժամանակահատվածներում զինծառայողին չի շնորհվում հերթական զինվորական կոչում:

6. Զինված ուժերի և այլ զորքերի բժիշկ-մասնագետների զինվորական կոչումներին ավելացվում են «բժշկական ծառայության» բառերը: Սույն օրենքի համաձայն՝ պահեստազորում հաշվառված կամ պաշտոնաթող քաղաքացիների զինվորական կոչումներին համապատասխանաբար ավելացվում են «պահեստազորի» և «պաշտոնաթող» բառերը:

7. Զինվորական կոչում շնորհելու կարգը, ներկայացման և զինվորական կոչում շնորհելու հրամանների ձևերը սահմանում է պետական լիազոր մարմնի ղեկավարը:

8. Պահեստազորում հաշվառված քաղաքացիներին հերթական զինվորական կոչում շնորհվում է պահեստազորային պատրաստության շրջանակներում կազմակերպվող միջոցառումներին մասնակցելուց հետո՝ միջոցառումը ղեկավարող պաշտոնատար անձի ներկայացմամբ:

9. Պահեստազորում հաշվառված քաղաքացիներին հերթական զինվորական կոչում կարող է շնորհվել երկու անգամ:

10. Պահեստազորից պայմանագրային զինվորական ծառայության ներգրավված զինծառայողներին հերթական կոչում շնորհվում է՝

1) ենթասպայական կազմի կոչումներ՝ երեք ամիս հետո.

2) ավագ լեյտենանտ և կապիտան՝ վեց ամիս հետո.

3) մայոր, փոխգնդապետ և գնդապետ՝ մեկ տարի հետո:

11. Պետական լիազոր այլ մարմիններից տեղափոխված զինծառայողներին հերթական կոչում շնորհվում է՝

1) ենթասպայական կազմի կոչումներ, ավագ լեյտենանտ և կապիտան՝ երեք ամիս հետո.

2) մայոր, փոխգնդապետ և գնդապետ՝ վեց ամիս հետո:

12. Զինծառայողի զինվորական կոչումը կարող է իջեցվել օրենքով սահմանված կարգով՝ համապատասխան կարգապահական տույժ տալու միջոցով: Զինծառայողը զինվորական կոչումից կարող է զրկվել դատական կարգով, ինչպես նաև սույն օրենքի 54-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքում՝ մինչև շարքային՝ պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով:

Հոդված 19. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի կազմակերպումը

1. Պարտադիր զինվորական ծառայությունը կազմակերպվում է զորակոչի միջոցով: Զորակոչի ենթակա են 18 տարին լրացած արական սեռի քաղաքացիները՝ մինչև 27 տարին լրանալը, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցած ու պահեստազորի սպայական կազմ որակավորված արական սեռի քաղաքացիները՝ մինչև 35 տարին լրանալը (այսուհետ՝ պահեստազորի սպայական կազմ): Հայտարարված զորակոչին պարտադիր զինվորական ծառայության ենթակա են նաև այն քաղաքացիները և պահեստազորի սպայական կազմը, որոնց համապատասխանաբար 27 և (կամ) 35 տարին լրանում է տվյալ զորակոչի ընթացքում:

2. Պարտադիր զինվորական ծառայության ենթակա չէ այն քաղաքացին, որը նախկինում դատապարտվել է ազատազրկման՝ ծանր կամ առանձնապես ծանր կամ առնվազն երկու անգամ դիտավորությամբ կատարած հանցագործության համար և ազատազրկման ձևով պատիժ է կրել երեք տարուց ոչ պակաս ժամկետով, կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 198-րդ կամ 201-րդ կամ 393-րդ կամ 402-րդ կամ 463-րդ կամ 465-րդ կամ 467-րդ կամ 526-րդ կամ 527-րդ հոդվածներով ~~139-րդ կամ 142-րդ կամ 266-րդ կամ 272-րդ կամ 327.2-րդ կամ 327.3-րդ կամ 327.5-րդ կամ 362-րդ հոդվածով կամ 363-րդ հոդվածի 2-րդ և (կամ) 3-րդ մասերով~~ նախատեսված արարքներ կատարելու համար:

3. Հայտարարված զորակոչի ժամանակ պարտադիր զինվորական ծառայության չի կարող զորակոչվել այն անձը, որը պատիժ է կրում ազատազրկման կամ կարճաժամկետ ազատազրկման ~~կալանքի~~ ձևով, կամ որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում, բացառությամբ քաղաքացու նկատմամբ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից խուսափելու պատճառով հարուցված քրեական հետապնդման, եթե քաղաքացին գրավոր ցանկություն է հայտնել զորակոչվելու պարտադիր զինվորական ծառայության:

4. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչը հայտարարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ: Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանվում են նաև զորակոչի կազմակերպման հետ

կապված գործողությունները, զորակոչի կազմակերպման մարմինները, զորակոչի ժամկետը և սույն օրենքով նախատեսված ժամկետում պարտադիր զինվորական ծառայություն անցած զինծառայողների զորացրման մասին:

5. Պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչը հայտարարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ տարվա ընթացքում ոչ պակաս, քան մեկ անգամ: Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանվում են նաև զորակոչի կազմակերպման հետ կապված գործողությունները, պարտադիր զինվորական ծառայություն անցնելու ժամկետը, զորակոչի ենթակա անձանց թվաքանակը և այն զինվորական հաշվառական մասնագիտությունը, որն ունեցող պահեստազորի սպայական կազմի քաղաքացիները ենթակա են զորակոչի, ինչպես նաև նախատեսված ժամկետում պարտադիր զինվորական ծառայություն անցած սպաների զորացրման մասին:

6. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայության համապատասխան զորակոչերի կազմակերպման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ յոթնօրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի կողմից տրվում է զորակոչի անցկացման և սահմանված ժամկետում պարտադիր զինվորական ծառայություն անցած զինծառայողներին զինվորական ծառայությունից արձակելու մասին հրաման:

(19-րդ հոդվածը լրաց. 21.06.18 ՀՕ-344-Ն)

Հոդված 30. Պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու կարգը և պայմանագրային զինվորական ծառայության մեջ գտնվելու սահմանային տարիքը

1. Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում պայմանագրային զինվորական ծառայություն կարող են անցնել՝

1) 18 տարին չլրացած քաղաքացիները՝ ռազմաուսումնական հաստատություններ ընդունվելու դեպքում.

2) պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողները, ներառյալ՝ սույն օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված անձինք.

3) նախկինում պայմանագրային զինվորական ծառայություն չանցած և մինչև 45 տարեկան՝ պահեստազորում հաշվառված արական սեռի քաղաքացիները և իգական սեռի քաղաքացիները՝ անկախ պահեստազորում հաշվառված լինելու հանգամանքից, ինչպես նաև պահեստազորի շարքային կամ կրտսեր ենթասպայական կազմերում հաշվառված մինչև 50 տարեկան քաղաքացիները՝ զորամասային օղակում ծառայության նշանակվելու դեպքում:

2. Պայմանագրային զինվորական ծառայության չի կարող ընդունվել այն քաղաքացին՝

1) որն օրենքի խախտումով չի անցել պարտադիր զինվորական ծառայություն.

2) որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում, կամ որն ունի չվերացված~~չհանված~~ կամ չմարված դատվածություն.

3) որն առողջական վիճակի պատճառով պիտանի չէ զինվորական ծառայության համար:

3. Պայմանագիր կնքելը մերժելու դեպքում պետական լիազոր մարմինը պարտավոր է այդ մասին եռօրյա ժամկետում գրավոր ծանուցել քաղաքացուն՝ նշելով մերժման հիմքերը և պատճառները:

4. Պայմանագրային զինվորական ծառայության մեջ գտնվելու սահմանային տարիքը սահմանվում է՝

1) շարքային, կրտսեր ենթասպայական և ավագ ենթասպայական կազմերի զինվորական կոչումներ ունեցող զինծառայողների համար՝ մինչև 50 տարեկանը.

2) կրտսեր սպայական կազմի զինվորական կոչումներ ունեցող զինծառայողների համար՝ մինչև 52 տարեկանը.

3) ավագ սպայական կազմի «մայոր» և «փոխգնդապետ» զինվորական կոչումներ ունեցող զինծառայողների համար՝ մինչև 55 տարեկանը.

4) ավագ սպայական կազմի «գնդապետ» զինվորական կոչում ունեցող զինծառայողների համար՝ մինչև 58 տարեկանը.

5) բարձրագույն սպայական կազմի «գեներալ-մայոր» և «գեներալ-լեյտենանտ» զինվորական կոչումներ ունեցող զինծառայողների համար՝ մինչև 60 տարեկանը.

6) բարձրագույն սպայական կազմի «գեներալ-գնդապետ» և «բանակի գեներալ» զինվորական կոչումներ ունեցող զինծառայողների համար՝ մինչև 65 տարեկանը:

5. Սահմանային տարիքի հասած պայմանագրային զինծառայողների զինվորական ծառայության մեջ գտնվելու ժամկետները կարող են երկարաձգվել մինչև 5, իսկ դասախոսական, գիտահետազոտական կամ բժշկական բնույթի մասնագիտական պաշտոններ զբաղեցնող կամ պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով սահմանված հազվագյուտ մասնագիտություններ ունեցող զինծառայողներինը՝ մինչև 10 տարի ժամկետով, յուրաքանչյուր դեպքում՝ մեկական տարով՝ պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով սահմանված կարգով և կոլեգիալ որոշման հիման վրա:

(30-րդ հոդվածը փոփ. 21.06.18 ՀՕ-344-Ն, փոփ., լրաց. 04.06.19 ՀՕ-57-Ն, փոփ. 19.04.21 ՀՕ-170-Ն)

Հոդված 34. Պայմանագրի գործողությունը դադարեցնելու կամ կասեցնելու պայմանները

1. Պայմանագրի գործողությունը դադարում է՝

1) սույն օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում՝ զինծառայողին զորամասի (զինվորական կառավարման մարմնի) անձնակազմի ցուցակներից հանելու օրը.

2) զինծառայողի հետ հերթական պայմանագիր կնքելու դեպքում՝ հերթական պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը.

3) սույն օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում՝ զինծառայողին տեղափոխող մարմնի անձնակազմի ցուցակներում գրանցելու օրը.

4) օրենքով սահմանված ժամկետում պարտադիր զինվորական ծառայություն չանցած զինծառայողին ռազմաուսումնական հաստատությունից ազատելիս (հեռացնելիս)՝ ռազմաուսումնական հաստատության անձնակազմի ցուցակներից հանելու օրը.

5) սույն օրենքի 54-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում՝ նույն հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-րդ և 9-րդ կետերով նախատեսված հիմքերի ծագման օրը:

2. Պայմանագրի գործողությունը կասեցվում է՝

1) սույն օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերում նշված դեպքերում՝ մինչև նշված կետերով նախատեսված հանգամանքները վերանալու օրը.

2) զինծառայողի կողմից զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու ժամանակահատվածում.

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով զինծառայողին կարճաժամկետ ազատազրկման ~~կալանքի~~ ձևով պատժի դատապարտելիս՝ մինչև պատժի կրման ավարտի օրը.

4) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության պատվերով բարձրագույն ուսումնական հաստատություն ավարտած իգական սեռի զինծառայողին երեխայի խնամքի համար արձակուրդ տրամադրելիս՝ մինչև արձակուրդի ավարտի օրը:

3. Պայմանագրի գործողությունը դադարեցնելու կամ կասեցնելու դեպքում պայմանագրի օրինակներում կատարվում է դադարման կամ կասեցման հիմքի մասին համապատասխան գրառում՝ ամսաթվի և տարեթվի նշումով:

Հոդված 36. Պայմանագրային զինծառայողին բարձր զինվորական պաշտոնի նշանակելը

1. Պայմանագրային զինծառայողը նշանակվում է բարձր պաշտոնի՝

1) ծառայության մեջ առաջխաղացման կարգով.

2) մրցույթի կամ ատեստավորման արդյունքներով.

3) կազմակերպչական-հաստիքային միջոցառումների կապակցությամբ:

2. Մրցութային կարգով նշանակման ենթակա պաշտոնների ցանկը, նշանակման կարգը և պայմանները սահմանում է պետական լիազոր մարմինը:

3. Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով պատժի դատապարտվելու և պատիժը պայմանականորեն չկիրառելու, ինչպես նաև իր նկատմամբ քրեական հետապնդում իրականացվելու կամ ծառայողական քննություն նշանակված լինելու դեպքերում պայմանագրային զինծառայողը չի կարող բարձր պաշտոնի նշանակվել մինչև սահմանված փորձաշրջանի կամ քրեական վարույթի~~քրեական գործի~~ կամ ծառայողական քննության ավարտը, իսկ ազատազրկման հետ չկապված պատժի դատապարտված կամ կարգապահական տույժ ստացած պայմանագրային

զինծառայողը՝ մինչև դատվածությունը կամ կարգապահական տույժը հանելը կամ մարելը մինչև դատվածությունը մարվելը կամ վերացվելը կամ կարգապահական տույժը կրելու ժամկետը լրանալը կամ այն հանվելը:

Հոդված 40. Պայմանագրային զինծառայողին զինվորական պաշտոնից ազատելը

1. Պայմանագրային զինծառայողը զինվորական պաշտոնից ազատվում է՝

1) այլ պաշտոնի նշանակվելու դեպքում.

2) հաստիքների կրճատման, այդ թվում՝ ստորաբաժանման լուծարման պատճառով.

3) ատեստավորման արդյունքներով զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու կամ կարգապահական տույժի կարգով.

4) զինծառայողի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրվելիս կամ հարուցված քրեական հետապնդման շրջանակներում Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածով սահմանված կարգով հարկադրանքի միջոց կիրառելու մասին որոշում կայացնելիս.

4) զինծառայողի նկատմամբ կալանքը կամ պաշտոնավարման կասեցումը որպես խափանման միջոց ընտրվելիս.

5) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով կարճաժամկետ ազատազրկման կալանքի կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու արգելքի ձևով պատժի դատապարտվելու դեպքում.

6) հիվանդանոցային բուժման մեջ գտնվող պայմանագրային զինծառայողի՝ զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելիս.

7) սույն օրենքի 44-րդ հոդվածով նախատեսված դեպքում.

8) մեկ ամսից ավելի ժամկետով անհարգելի պատճառով ծառայության չներկայանալու դեպքում.

9) գերության մեջ գտնվելու դեպքում.

10) վեց ամիսը գերազանցող ժամկետով ռազմաուսումնական (կամ առկա ուսուցմամբ ոստիկանական ուսումնական) հաստատություններ, համապատասխան սպայական կամ սերժանտական դասընթացներ, ասպիրանտուրա, դոկտորանտուրա, կլինիկական օրդինատուրա կամ ինտերնատուրա ընդունվելու կամ Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության ռազմաուսումնական կամ այլ հաստատությունում վերապատրաստման գործուղվելու դեպքում.

11) զինվորական ծառայությունից արձակվելու դեպքում:

2. Պայմանագրային զինծառայողին զինվորական պաշտոնից ազատում է տվյալ պաշտոնին նշանակելու իրավասություն ունեցող հրամանատարը (պետը):

3. Բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոն զբաղեցնող պայմանագրային զինծառայողին զինվորական պաշտոնից ազատումն իրականացվում է սույն օրենքի 35.1-ին հոդվածով բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական

պաշտոնի նշանակելու համար սահմանված կարգով: Բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնից ազատումը կարող է իրականացվել անկախ այն հանգամանքից՝ առկա են սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքեր, թե ոչ:

(40-րդ հոդվածը խմբ., լրաց. 21.06.18 ՀՕ-344-Ն, փոփ. 25.03.21 ՀՕ-137-Ն)

Հոդված 41. Պայմանագրային զինծառայողին կադրերի տրամադրության տակ թողնելը

1. Պայմանագրային զինծառայողները թողնվում են պետական լիազոր մարմնի կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ սույն օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դեպքերում՝ երկու ամսից ոչ ավելի, իսկ հղիության և ծննդաբերության կամ երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող պայմանագրային զինծառայողի հաստիքը կրճատվելու դեպքում՝ մինչև արձակուրդի ավարտը.

2) 4-րդ կետով սահմանված դեպքում՝ մինչև ընտրված խափանման միջոցը փոխելու ~~կամ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածով սահմանված կարգով հարկադրանքի միջոց կիրառելու մասին որոշումը~~ վերացնելու օրվան հաջորդող 30-րդ օրը, բայց ոչ ավելի, քան պայմանագրի ժամկետը լրանալը, իսկ զինծառայողի հետախուզման մեջ գտնվելու դեպքում՝ վեց ամսից ոչ ավելի, բացառությամբ ռազմաուսումնական հաստատություններ ավարտած զինծառայողների, որոնց պայմանագրով նախատեսված ծառայության ժամկետը չի ավարտվել.

3) 5-րդ կետով սահմանված՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով կարճաժամկետ ազատազրկման ~~կալանքի~~ ձևով պատժի դատապարտվելու դեպքում՝ պատժի կրման ամբողջ ժամկետով.

4) 6-րդ կետով սահմանված դեպքում (ներառյալ՝ արձակումը ձևակերպելու ժամկետը)՝ 1 ամսից ոչ ավելի.

5) 7-րդ կետով սահմանված դեպքում՝ երեք ամսից ոչ ավելի.

6) 8-րդ կետով սահմանված դեպքում՝ մինչև վերադառնալը կամ օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչվելը.

7) 9-րդ կետով սահմանված դեպքում՝ մինչև ազատվելը.

8) 10-րդ կետով սահմանված դեպքում՝ մինչև ուսումնառության և սույն օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հերթական արձակուրդի ավարտը:

1.1. Սույն օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքում պայմանագրային զինծառայողը պետական լիազոր մարմնի կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ թողնվում է երկու ամսից ոչ ավելի ժամկետով:

2. Պայմանագրային զինծառայողներին կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ թողնելու կարգը սահմանում է պետական լիազոր մարմնի ղեկավարը:

(41-րդ հոդվածը լրաց. 21.06.18 ՀՕ-344-Ն, փոփ., լրաց. 04.06.19 ՀՕ-57-Ն, փոփ. 25.03.21 ՀՕ-137-Ն)

Հոդված 61. Զինծառայողների դրամական ապահովությունը

1. Զինծառայողների դրամական ապահովությունը զինծառայողների նյութական ապահովության և նրանց կողմից ծառայողական պարտականությունների կատարումը խթանելու միջոց է:

2. Զինծառայողների դրամական ապահովությունն իրականացվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված սկզբունքներին և հիմնական պայմաններին համապատասխան: Սույն հոդվածով սահմանված՝ զինծառայողների դրամական ապահովությանը վերաբերող դրույթները տարածվում են նաև քրեակատարողական ծառայության և փրկարար ծառայության ծառայողների վրա՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համապատասխան ոլորտները կարգավորող օրենքների պահանջներին համապատասխան:

3. Զորակոչի միջոցով պարտադիր զինվորական ծառայություն անցնող շարքային կազմի զինծառայողների (ներառյալ՝ ծառայության ընթացքում կրտսեր ենթասպայական կազմի զինվորական կոչում ստացած և պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր չկնքած զինծառայողների) և սույն օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պայմանագիր կնքած զինծառայողների, ինչպես նաև ռազմաուսումնական կամ ոստիկանական ուսումնական հաստատություններում սովորող կուրսանտների ու սովորողների դրամական ապահովության կարգը և չափերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Զինծառայողների դրամական ապահովությունը բաղկացած է զինվորական (այլ հատուկ) կոչումներին համապատասխանող զինվորական պաշտոնների դասակարգման խմբերին և զինվորական ծառայության ստաժներին համարժեք պաշտոնային դրույքաչափերից (այսուհետ՝ պաշտոնային դրույքաչափ), օրենքով սահմանված կարգով տրվող հավելումներից և լրավճարներից: Սույն հոդվածով զինծառայողների դրամական ապահովությունը սահմանող դրույթները տարածվում են նաև զորակոչի միջոցով պարտադիր զինվորական ծառայություն անցնող սպայական կազմի և զորահավաքային զորակոչի միջոցով զինվորական ծառայություն անցնող զինծառայողների վրա:

5. Զինծառայողների պաշտոնային դրույքաչափը որոշվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխան հավելվածով սահմանված պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցների և պետական պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի արտադրյալով: Պետական պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը սահմանվում

է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով:

6. Զինվորական ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխան հավելվածով սահմանված՝ տվյալ պաշտոնի խմբի սանդղակի գործակիցների միջոցով:

7. Յուրաքանչյուր սանդղակ բաղկացած է յոթ մակարդակից, որոնցից յուրաքանչյուրում սահմանվում է նվազագույն պաշտոնային դրույքաչափից մինչև առավելագույնը հաշվարկելու՝ բազային աշխատավարձի նկատմամբ բազմապատիկ գործակից:

8. Առաջին անգամ զինվորական պաշտոնում նշանակված անձի պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է տվյալ պաշտոնի խմբի սանդղակում՝ ունեցած զինվորական ծառայության ստաժին համապատասխանող գործակցի միջոցով:

9. Նախորդ պաշտոնի նկատմամբ սահմանված կարգով ավելի բարձր կամ ցածր պաշտոնի նշանակված զինծառայողի պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է նոր պաշտոնի խմբի սանդղակում՝ ունեցած զինվորական ծառայության ստաժին համապատասխանող գործակցի միջոցով:

10. Զինծառայողին զինվորական ծառայության ստաժի համար սահմանվում է պաշտոնային դրույքաչափի բնականոն աճ՝ պաշտոնային դրույքաչափի նվազագույն մեծությունից առավելագույնը:

11. Պաշտոնային դրույքաչափի բնականոն աճը յուրաքանչյուր սանդղակի ներսում իրականացվում է հետևյալ սխեմայով.

1) 1-7-րդ մակարդակների համար սահմանվում է պաշտոնային դրույքաչափի միավոր ավելացում՝ կախված զինվորական ծառայության ստաժից.

2) մինչև 2 տարվա զինվորական ծառայության ստաժի դեպքում պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է տվյալ պաշտոնի խմբին համապատասխանող սանդղակի 1-ին մակարդակի գործակցի միջոցով.

3) 2-ից մինչև 5 տարվա զինվորական ծառայության ստաժի դեպքում պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է տվյալ պաշտոնի խմբին համապատասխանող սանդղակի 2-րդ մակարդակի գործակցի միջոցով.

4) 5-ից մինչև 10 տարվա զինվորական ծառայության ստաժի դեպքում պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է տվյալ պաշտոնի խմբին համապատասխանող սանդղակի 3-րդ մակարդակի գործակցի միջոցով.

5) 10-ից մինչև 15 տարվա զինվորական ծառայության ստաժի դեպքում պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է տվյալ պաշտոնի խմբին համապատասխանող սանդղակի 4-րդ մակարդակի գործակցի միջոցով.

6) 15-ից մինչև 20 տարվա զինվորական ծառայության ստաժի դեպքում պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է տվյալ պաշտոնի խմբին համապատասխանող սանդղակի 5-րդ մակարդակի գործակցի միջոցով.

7) 20-ից մինչև 25 տարվա զինվորական ծառայության ստաժի դեպքում պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է տվյալ պաշտոնի խմբին համապատասխանող սանդղակի 6-րդ մակարդակի գործակցի միջոցով.

8) 25 և ավելի տարվա զինվորական ծառայության ստաժի դեպքում պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է տվյալ պաշտոնի խմբին համապատասխանող սանդղակի 7-րդ մակարդակի գործակցի միջոցով.

9) սանդղակի 7-րդ մակարդակից պաշտոնային դրույքաչափը մնում է անփոփոխ:

12. Պաշտոնային դրույքաչափի բնականոն աճի հերթական միավոր ավելացումն իրականացվում է սահմանված զինվորական ծառայության ստաժը լրանալուն հաջորդող ամսվա 1-ից:

13. Սույն օրենքով սահմանված կարգով հաստիքների կրճատման, այդ թվում՝ ստորաբաժանման լուծարման կամ հիվանդանոցային բուժման մեջ գտնվող պայմանագրային զինծառայողի՝ զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու կամ պայմանագրային զինծառայողին այլ պետական մարմիններ տեղափոխելու կամ գերության մեջ գտնվելու պատճառով զինվորական պաշտոնից ազատված և կադրերի տրամադրության տակ թողնված զինծառայողների համար պահպանվում է պաշտոնային դրույքաչափը՝ օրենքով սահմանված կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ թողնելու ժամանակահատվածում: Սույն մասի համաձայն՝ գերության մեջ գտնվող զինծառայողի համար պաշտոնային դրույքաչափը պահպանվում է, և դրա վճարումն իրականացվում է պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով սահմանված կարգով միայն այն դեպքում, երբ զինծառայողի կողմից գերության մեջ գտնվելու փաստի կապակցությամբ անցկացված ծառայողական քննության արդյունքում հիմնավորվում է, որ գերության մեջ հայտնվելը զինծառայողի՝ զորամասը կամ ծառայության վայրը կամ մարտադաշտն ինքնակամ թողնելու և (կամ) կամովին գերի հանձնվելու հետևանք չէ, կամ եթե առկա չէ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 548-րդ ~~382-րդ~~ հոդվածի հատկանիշներով հարուցված քրեական վարույթ: Սույն օրենքով սահմանված կարգով քրեական հետապնդման շրջանակներում պաշտոնավարման ~~լիազորությունների~~ կասեցման հիմքով զինվորական պաշտոնից ազատված և կադրերի տրամադրության տակ թողնված զինծառայողի համար պահպանվում է պաշտոնային դրույքաչափի 50 տոկոսը, բայց ոչ պակաս, քան օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափը՝ օրենքով սահմանված կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ թողնելու ժամանակահատվածում:

14. Ռազմաուսումնական կամ ոստիկանական ուսումնական հաստատություններն ավարտած և սկզբնական սպայական զինվորական կոչում ստացած զինծառայողների համար՝ մինչև պաշտոնի նշանակումը, իսկ ռազմաբժշկական ուսումնական հաստատություններն ավարտած և ինտերնատուրայում կամ օրդինատուրայում կամ պետական լիազոր մարմնի պատվերով ինտերնատուրայի կրթական ծրագրով սովորելու հրամանագրված զինծառայողների համար՝ նաև ինտերնատուրայում և օրդինատուրայում սովորելու ընթացքում, պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց

վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված սպայական կազմի նվազագույն խմբի 2-րդ մակարդակի գործակցով:

15. Արձակուրդում (բացառությամբ երեխայի խնամքի համար արձակուրդի) կամ գործուղման մեջ գտնվող զինծառայողների, ինչպես նաև սույն օրենքով սահմանված կարգով վեց ամիսը գերազանցող ժամկետով ռազմաուսումնական (կամ առկա ուսուցմամբ ոստիկանական ուսումնական) հաստատություններ, համապատասխան սպայական կամ սերժանտական դասընթացներ, ասպիրանտուրա, դոկտորանտուրա, կլինիկական օրդինատուրա կամ ինտերնատուրա ընդունվելու կամ Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության ռազմաուսումնական կամ այլ հաստատությունում վերապատրաստման գործուղվելու պատճառով զինվորական պաշտոնից ազատված և կադրերի տրամադրության տակ թողնված զինծառայողների համար պահպանվում է դրամական ապահովությունը՝ արձակուրդում կամ գործուղման մեջ գտնվելու կամ օրենքով սահմանված կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ թողնելու ժամանակահատվածում:

16. Զինվորական ծառայությունից արձակվող և զինվորական ծառայության ընթացքում չօգտագործված արձակուրդ ունեցող զինծառայողներին տրվում է փոխհատուցում՝ ոչ ավելի, քան զինվորական ծառայությունից արձակվելու և դրան նախորդող երկու տարվա չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափով: Սույն մասում նշված դեպքում չօգտագործված արձակուրդի օրերի հաշվարկում չեն ներառվում զինծառայողի՝ սույն օրենքի համաձայն՝ զինվորական ծառայության ընդհանուր ժամկետում չներառվող ժամանակահատվածների օրերը:

17. Անհարգելի պատճառով ծառայության չներկայացած օրերի համար զինծառայողներին դրամական ապահովություն չի հաշվարկվում:

18. Զինծառայողներին տրվող հավելումը դրամական ապահովության բաղկացուցիչ մաս է, որը սահմանվում է պաշտոնային դրույքաչափի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ կամ բացարձակ դրամական մեծությամբ և տրվում է՝ ելնելով զինվորական ծառայության առանձնահատկություններից: Զինծառայողներին տրվող հավելումների դեպքերը, չափերն ու տրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

19. Ծառայողական գործունեության գնահատման և (կամ) հատուկ առաջադրանքների և (կամ) աշխատանքների որակյալ կատարման համար զինծառայողներին կարող են տրվել պարգևատրումներ՝ օրենքով սահմանված կարգով:

(61-րդ հոդվածը խմբ. 21.06.18 ՀՕ-344-Ն, լրաց. 04.06.19 ՀՕ-57-Ն, փոփ. 21.01.20 ՀՕ-21-Ն, լրաց. 19.11.20 ՀՕ-487-Ն, 25.03.21 ՀՕ-137-Ն)

(19.11.20 ՀՕ-487-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

(61-րդ հոդվածի 16-րդ մասը՝ զինծառայողի՝ չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց փոխհատուցում ստանալու հնարավորությունը զինվորական ծառայությունից արձակվելու և դրան նախորդող երկու տարվա ժամանակահատվածով սահմանափակելու մասով, 10.07.2018 ՍԴՈ-1424 որոշմամբ ճանաչել Հայաստանի

Հանրապետության Սահմանադրության 29, 60, 73-րդ և 82-րդ հոդվածներին հակասող և անվավեր:)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 10. Հանձնաժողովի անդամին ներկայացվող պահանջները

1. Հանձնաժողովի անդամ կարող է նշանակվել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, բարձրագույն կրթությամբ և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք, ով ունի առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն երեք տարին՝ քաղաքական, ինքնավար, վարչական կամ օրենքով ստեղծված պետական մարմնի անդամի պաշտոններում կամ կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, համակարգման գործառույթներ ունեցող այլ պաշտոններում (անկախ պետական կամ մասնավոր ոլորտում կատարած աշխատանքից):

2. Հանձնաժողովի անդամներից առնվազն մեկը պետք է ունենա բարձրագույն իրավաբանական, առնվազն մեկը՝ բարձրագույն տնտեսագիտական կրթություն:

3. Հանձնաժողովի անդամ չի կարող նշանակվել այն անձը, որը դատապարտվել է հանցագործության կատարման համար՝ անկախ դատվածությունը մարված կամ վերացված ~~հանված~~ լինելու հանգամանքից, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ ռեաբիլիտացնող ~~արդարացնող~~ հիմքերով, որի նկատմամբ հարուցված է ~~իրականացվում է~~ քրեական հետապնդում, որն ունի Կառավարության սահմանած ցանկով նախատեսված՝ դատավորի նշանակմանը խոչընդոտող հիվանդություն:

4. Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել Հանձնաժողովի անդամ:

5. Հանձնաժողովի անդամը պաշտոնավարում է մինչև 65 տարին լրանալը:

(10-րդ հոդվածը խմբ. 13.09.19 ՀՕ-180-Ն)

(23.03.18 ՀՕ-208-Ն օրենքի 3-րդ հոդվածի փոփոխությունը հնարավոր չէ կատարել, քանի որ 10-րդ հոդվածի 5-րդ մասում «քաղաքացիական» բառը բացակայում է)

Հոդված 18. Հանձնաժողովի անդամի լիազորությունների դադարումը, դադարեցումը և կասեցումը

(վերնագիրը փոփ. 13.09.19 ՀՕ-180-Ն)

1. ***(մասը հանվել է 13.09.19 ՀՕ-180-Ն)***

2. Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարում են, եթե՝

1) ավարտվել է նրա լիազորությունների ժամկետը.

1.1) լրացել է նրա պաշտոնավարման տարիքը.

1.2) նա «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով հրաժարական է տվել.

1.3) նա օրենքով սահմանված կարգով զրկվել է որոշակի պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

2) նա կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կամ ձեռք է բերել այլ պետության քաղաքացիություն.

3) նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա ճանաչվել է անգործունակ, անհայտ բացակայող կամ հայտարարվել է մահացած.

4) նրա նկատմամբ կայացվել է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ, կամ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ ռեաբիլիտացնող ~~արդարացնող~~ հիմքով.

5) նա մահացել է:

3. ***(մասը հանվել է 13.09.19 ՀՕ-180-Ն)***

4. Հանձնաժողովի անդամի լիազորությունները Հանձնաժողովի եզրակացության հիման վրա՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով դադարեցվում են, եթե՝

1) նա պաշտոնավարման ընթացքում ձեռք է բերել Հանձնաժողովի անդամի լիազորությունների իրականացմանը խոչընդոտող հիվանդություն.

2) նա երկարատև անաշխատունակության կամ այլ հարգելի պատճառով մեկ տարվա ընթացքում բացակայել է Հանձնաժողովի նիստերի առնվազն կեսից.

3) նա մեկ տարվա ընթացքում ավելի քան երկու անգամ անհարգելի բացակայել է Հանձնաժողովի նիստերից.

4) նա խախտել է Հանձնաժողովի անդամի անհամատեղելիության պահանջները.

5) նա խախտել է քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքը.

6) ի հայտ են եկել փաստեր, որ նա նշանակման պահին չի համապատասխանել ներկայացվող պահանջներին:

4.1. Հանձնաժողովի նախագահը կամ սույն օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով նրան փոխարինող Հանձնաժողովի անդամը սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված եզրակացությունը դրա ընդունման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է Ազգային ժողովի նախագահին:

4.2. Հանձնաժողովի անդամի լիազորությունները կասեցվում են սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված եզրակացության ընդունման դեպքում:

5. Ազգային ժողով հրաժարական ներկայացնելիս Հանձնաժողովի անդամն անհապաղ տեղեկացնում է Հանձնաժողովի նախագահին: Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված այլ դեպքերում Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարելուց, ինչպես նաև Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, Հանձնաժողովի նախագահը կամ սույն օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով

սահմանված կարգով նրան փոխարինող Հանձնաժողովի անդամն այդ մասին տեղեկացնում է Ազգային ժողովի նախագահին:

(18-րդ հոդվածը փոփ., խմբ., լրաց. 13.09.19 ՀՕ-180-Ն, խմբ. 25.03.20 ՀՕ-199-Ն)

Հոդված 25. Հայտարարագրերի ստուգումը և վերլուծությունը

1. Հանձնաժողովն իրականացնում է՝

1) հայտարարագիր լրացնելու և ներկայացնելու պահանջների պահպանման ստուգում.

2) հայտարարագրված տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգում.

3) հայտարարագրված տվյալների մաթեմատիկական վերլուծություն.

4) ռիսկային ցուցանիշների հիման վրա հայտարարագրերի վերլուծություն.

5) հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքներ պարունակող լրատվամիջոցների հրապարակումների կամ անձանց գրավոր դիմումների հիման վրա հայտարարագրերի վերլուծություն:

2. Հայտարարագրերի վերլուծության ընթացքում Հանձնաժողովն իրավասու է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ անձանցից պահանջելու և ստանալու (այդ թվում՝ էլեկտրոնային հարցման եղանակով) հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց առնչվող տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկություններ, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ, ինչպես նաև վարկային բյուրոյից վարկային տեղեկատվություն կամ վարկային պատմություն: Հայտարարագրերի վերլուծության ընթացքում գույքի փաստացի տիրապետումը, ինչպես նաև երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող գույքը հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերելը կամ հայտարարատուի կողմից այդ գույքից փաստացի օգուտ ստանալը կամ այդ գույքը տնօրինելն ստուգելու նպատակով Հանձնաժողովն իրավասու է դիմելու օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ:

2.1. Հայտարարագրերի վերլուծության ընթացքում Հանձնաժողովն իրավասու է Կենտրոնական բանկ ուղղված հարցման միջոցով պահանջելու և ստանալու հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց բանկային պահատուփերի առկայության, հաշիվների առկայության, հաշվի մնացորդի, հայտարարագրման ենթակա գործարքի վերաբերյալ տեղեկություն, ինչպես նաև պահանջվող ժամանակահատվածում հաշվի համախառն մուտքի և համախառն ելքի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն՝ հարցման մեջ նշելով անձի տվյալները, վերաբերելի ժամանակահատվածը կամ ամսաթիվը: Բանկային գաղտնիք կազմող

տեղեկությունների փոխանցման կարգը սահմանվում է Կենտրոնական բանկի և հանձնաժողովի համատեղ իրավական ակտով: Հանձնաժողովն իրավասու է նաև հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու օտարերկրյա բանկերից, ինչպես նաև օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերից կամ ներկայացուցչություններից:

2.2. Բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալուց հետո Հանձնաժողովն իրավասու է հայտարարատուից պահանջելու ներկայացնել լրացուցիչ նյութեր, իսկ սույն հոդվածի 9-րդ մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում՝ նյութերն ուղարկելու գլխավոր դատախազություն:

3. Տեղեկությունները և փաստաթղթերը Հանձնաժողովին տրամադրվում են անվճար՝ հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան հարցումն ստանալուց հետո՝ տասն օրվա ընթացքում, եթե հարցման մեջ այլ ժամկետ նշված չէ, կամ հարցման հասցեատերը պահանջը կատարելու համար այլ ողջամիտ ժամկետ չի առաջարկում, որը չի կարող գերազանցել 30 օրը: Կենտրոնական դեպոզիտարիան և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման իրավունք ունեցող այլ անձինք, ինչպես նաև վարկային բյուրոները տեղեկություններն ու փաստաթղթերը տրամադրում են անվճար՝ Հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի ներկայացրած հայտարարագրերի թվին հավասար թվով հարցումներ ներկայացվելու դեպքում:

4. Հայտարարագրերի վերլուծության գործընթացում ապահովվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև սույն հոդվածի 2-րդ մասում նշված կազմակերպությունների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մշակված տեղեկատվական բազաների հետ Հանձնաժողովի տեղեկատվական բազայի փոխգործարկելիությունը և հայտարարագրման ենթակա տվյալներին Հանձնաժողովի առցանց հասանելիությունը:

5. Հանձնաժողովն իրավասու է իր կողմից բացահայտման ենթակա հանգամանքների վերաբերյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից, պետական կամ համայնքային հիմնարկից, պետական կազմակերպությունից կամ դրանց պաշտոնատար անձանցից պահանջելու անցկացնել անվճար ուսումնասիրություններ, կատարելու անվճար փորձաքննություններ և ներկայացնելու դրանց արդյունքները:

5.1. Հանձնաժողովն իրավասու է հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունների դադարեցումից հետո՝ երկու տարվա ընթացքում, անձի գույքի էական փոփոխության (գույքի ավելացում, պարտավորությունների նվազում կամ ծախս) կասկածի դեպքում նրանից պահանջելու ներկայացնել գույքի և եկամուտների իրավիճակային հայտարարագիր:

6. Եթե հայտարարագրերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովը հանգում է եզրակացության, որ հայտարարագիրն օրենքով սահմանված ժամկետում ներկայացված չէ կամ ներկայացված է համապատասխան պահանջների կամ կարգի խախտմամբ, կամ

հայտարարագրված տվյալը սխալ է կամ ոչ ամբողջական, ապա հարուցում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ:

6.1. Եթե սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված հայտարարատուն դատավոր կամ Բարձրագույն դատական խորհրդի անդամ է, ապա Հանձնաժողովը, վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելուն զուգահեռ, հարուցում է կարգապահական վարույթ: Վարույթի ընթացքում ձեռք բերված նյութերը դատավորին կամ Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդության հետ ներկայացվում են Բարձրագույն դատական խորհուրդ:

6.2. Եթե սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված հայտարարատուն Սահմանադրական դատարանի դատավոր է, ապա Հանձնաժողովը, վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելուն զուգահեռ, նյութերն ուղարկում է Ազգային ժողովի խմբակցություններ՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 109-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգով Սահմանադրական դատարանի դատավորի լիազորություններն էական կարգապահական խախտման հիմքով դադարեցնելու համար Սահմանադրական դատարան դիմելու հարցի քննարկման առաջարկությամբ:

7. Եթե հայտարարագրերի վերլուծության արդյունքում մնում են կասկածներ, որ հայտարարատու պաշտոնատար անձի, այդ թվում՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված՝ կուսակցության ղեկավար մարմնի պաշտոնատար անձի կամ իր ընտանիքի կազմի մեջ մտնող անձի գույքի էական փոփոխությունը (գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը) կամ ծախսը ողջամտորեն չի հիմնավորվում օրինական եկամուտներով, կամ վերջիններիս մոտ առկա է չհայտարարագրված կամ ոչ ամբողջական հայտարարագրված գույք, կամ եկամտի աղբյուրն օրինական կամ արժանահավատ չէ, ապա Հանձնաժողովն իրավասու է՝

1) հայտարարատուից հայցելու պարզաբանում կամ լրացուցիչ նյութեր՝ դրանք ներկայացնելու համար տրամադրելով նվազագույնը 10, իսկ առավելագույնը՝ 30 օր ժամկետ.

2) «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հայտարարատուի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձից, հայտարարագրված կամ հայտարարագրման ենթակա գործարքի կողմ հանդիսացող յուրաքանչյուր անձից կամ այն անձից, որին սեփականության իրավունքով կարող է պատկանել հայտարարատուի կողմից փաստացի տիրապետվող կամ օգտագործվող անշարժ գույքը, տրանսպորտային միջոցը կամ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով թանկարժեք գույքը, պահանջելու ներկայացնել գույքի և եկամուտների իրավիճակային հայտարարագիր, եթե վերը նշված կասկածները կարող են փարատվել իրավիճակային հայտարարագրով ներկայացնելու ենթակա տվյալների վերլուծությամբ: Սույն կետով նախատեսված դեպքում Հանձնաժողովը կայացնում է որոշում՝ նշելով այն հանգամանքները, որոնք կարող են պարզվել իրավիճակային հայտարարագիրը ներկայացնելով:

8. Ստացված եկամուտը չի համարվում օրինական, եթե միանվագ ստացվող կամ տրվող գումարը գերազանցում է 1.000.000 Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, սակայն հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձը դրամական միջոցներով փոխառություն հանձնելը կամ ստանալը, հանձնած կամ ստացած դրամական միջոցներով փոխառության դիմաց վճարներ (տոկոսներ կամ այլ հատուցում) հանձնելը կամ ստանալը, դրամական միջոցներ նվիրատվություն ստանալը, դրամական միջոցներով արտահայտված շահաբաժիններ ստանալը, ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտ ստանալը, գույքը օտարելուց եկամուտ ստանալը, վարձակալության դիմաց վճար կամ այլ հատուցում ստանալը, քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից եկամուտ ստանալը, վճարներ ստանալը, գույքային իրավունքներից եկամուտ ստանալը կատարել է կանխիկ ձևով:

9. Եթե հայտարարատուն սահմանված ժամկետում չի տրամադրում պարզաբանում կամ լրացուցիչ նյութեր, կամ դրանք բավարար չեն առկա կասկածները փարատելու համար, ապա Հանձնաժողովը նյութերն անհապաղ, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում ուղարկում է գլխավոր դատախազություն:

9.1. Եթե սույն հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարատուն դատավոր կամ Բարձրագույն դատական խորհրդի անդամ է, ապա Հանձնաժողովը, նյութերը գլխավոր դատախազություն ուղարկելուն զուգահեռ, հարուցում է կարգապահական վարույթ: Վարույթի ընթացքում ձեռք բերված նյութերը դատավորին կամ Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդության հետ ներկայացվում են Բարձրագույն դատական խորհուրդ:

9.2. Եթե սույն հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարատուն Սահմանադրական դատարանի դատավոր է, ապա Հանձնաժողովը, նյութերը գլխավոր դատախազություն ուղարկելուն զուգահեռ, դրանք ուղարկում է Ազգային ժողովի խմբակցություններ՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 109-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգով Սահմանադրական դատարանի դատավորի լիազորություններն էական կարգապահական խախտման հիմքով դադարեցնելու համար Սահմանադրական դատարան դիմելու հարցի քննարկման առաջարկությամբ:

10. Գլխավոր դատախազությունը նյութերի ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ տեղեկացնում է Հանձնաժողովին՝ կցելով համապատասխան փաստաթղթի ~~որոշման~~ պատճենը:

(25-րդ հոդվածը լրաց., խմբ., փոփ. 25.03.20 ՀՕ-199-Ն, լրաց., փոփ. 19.01.21 ՀՕ-52-Ն, լրաց. 29.12.20 ՀՕ-5-Ն)

(29.12.20 ՀՕ-5-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 26. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթը

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

2. Սույն հոդվածով սահմանված վարույթ հարուցելու մասին որոշումը եռօրյա ժամկետում ուղարկվում է հայտարարատուին, իսկ եթե վարույթը հարուցվել է դիմումի հիման վրա՝ նաև դիմողին:

3. Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4. Եթե վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում Հանձնաժողովը գալիս է այն հետևության, որ կատարված արարքում առկա են հայտարարագիրը դիտավորությամբ չներկայացնելու կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու կամ հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելու առերևույթ հատկանիշներ, ապա վարույթի նյութերն անհապաղ, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում Հանձնաժողովն ուղարկում է գլխավոր դատախազություն՝ ընդունելով վարույթը կասեցնելու մասին որոշում: Որոշումն ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում, որոշման պատճենն ուղարկվում է հայտարարատուին, իսկ եթե վարույթը հարուցվել է դիմումի հիման վրա՝ նաև դիմողին:

5. Գլխավոր դատախազությունը նյութերի ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ տեղեկացնում է Հանձնաժողովին՝ կցելով համապատասխան փաստաթղթի ~~որոշման~~ պատճենը:

6. Քրեական վարույթ չնախաձեռնելու մասին տեղեկանալու~~գործի հարուցումը մերժելու~~, քրեական վարույթը ~~գործի վարույթը~~ կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չհարուցելու ~~չիրականացնելու~~ մասին որոշումն ստանալու պահից Հանձնաժողովը հնգօրյա ժամկետում վերսկսում է կասեցված վարույթը, իսկ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռն ստանալու դեպքում նույն ժամկետում կարճում է վարույթը:

Հոդված 31. Վարույթի հարուցումը և դրա հետագա ընթացքը

1. Հանձնաժողովը վարույթ հարուցելու մասին որոշումն ընդունում է դիմումն ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

2. Վարույթ հարուցելու մասին որոշումը եռօրյա ժամկետում ուղարկվում է դիմողին և համապատասխան պաշտոն զբաղեցնող անձին:

3. Հանձնաժողովն իրավասու է դիմողից պահանջելու տասնօրյա ժամկետում քննարկվող հարցի առնչությամբ ներկայացնել լրացուցիչ նյութեր, իսկ սույն գլխով նախատեսված համապատասխան պաշտոն զբաղեցնող անձից՝ գրավոր պարզաբանում՝ դրան կցելով իր փաստարկների հիմնավորվածությունը հավաստող նյութեր:

4. Վարույթի շրջանակում Հանձնաժողովն իրավասու է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից, պետական կազմակերպություններից կամ դրանց պաշտոնատար անձանցից, այլ անձանցից պահանջելու և ստանալու Հանձնաժողովում քննարկվող հարցին առնչվող ցանկացած նյութ, փաստաթուղթ կամ տեղեկություն, ինչպես նաև իր կողմից բացահայտման ենթակա հանգամանքների վերաբերյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից, պետական կամ համայնքային հիմնարկից, պետական կազմակերպությունից կամ դրանց պաշտոնատար անձանցից պահանջելու անցկացնել անվճար ուսումնասիրություններ, կատարելու անվճար փորձաքննություններ և ներկայացնելու դրանց արդյունքները:

5. Եթե վարույթի ընթացքում Հանձնաժողովը գալիս է այն հետևության, որ կատարված արարքը պարունակում է առերևույթ հանցագործության հատկանիշներ, ապա վարույթի նյութերն անհապաղ, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում ուղարկում է գլխավոր դատախազություն՝ ընդունելով վարույթը կասեցնելու մասին որոշում: Որոշումն ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում, որոշման պատճենն ուղարկվում է համապատասխան պաշտոն զբաղեցնող անձին, իսկ եթե վարույթը հարուցվել է դիմումի հիման վրա՝ դիմողին:

6. Գլխավոր դատախազությունը նյութերի ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ տեղեկացնում է Հանձնաժողովին՝ կցելով համապատասխան փաստաթղթի ~~որոշման~~ պատճենը:

7. Քրեական վարույթ չնախաձեռնելու մասին տեղեկանալու ~~գործի հարուցումը մերժելու~~, քրեական վարույթը ~~գործի վարույթը~~ կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չհարուցելու ~~չիրականացնելու~~ մասին որոշումն ստանալու պահից Հանձնաժողովը հնգօրյա ժամկետում վերսկսում է կասեցված վարույթը, իսկ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռն ստանալու դեպքում նույն ժամկետում կարճում է վարույթը:

(31-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-208-Ն, խմբ. 25.03.20 ՀՕ-199-Ն)

Հոդված 40.1. Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգումը

1. Հանձնաժողովն ստուգում է կուսակցության ներկայացրած տարեկան հաշվետվության համապատասխանությունը «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված պահանջներին:

2. Եթե կուսակցության հաշվետվության ստուգման արդյունքում Հանձնաժողովը պարզում է, որ հաշվետվության մեջ առկա են սխալ կամ ոչ ամբողջական տվյալներ, ապա կուսակցությանը տրամադրում է նվազագույնը 10-օրյա, առավելագույնը՝ 30-օրյա ժամկետ՝ դրանց վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու և տվյալները շտկելու նպատակով:

3. Հաշվետվության հավաստիությունն ստուգելու նպատակով Հանձնաժողովի պահանջի դեպքում կուսակցությունը պարտավոր է հինգ օրվա ընթացքում տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն՝ կուսակցության բանկային մուտքերի և ելքերի վերաբերյալ, ներկայացնել հաշվապահական հաշվառման և ներկայացրած հաշվետվության հավաստիությունն ստուգելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր, ներառյալ՝ բանկային ավանդի, վարկային, գույքի առուվաճառքի, վարձակալության պայմանագրերը:

4. Հաշվետվության ստուգման ընթացքում Հանձնաժողովն իրավասու է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, իրավաբանական և ֆիզիկական անձանցից պահանջելու և ստանալու (այդ թվում՝ էլեկտրոնային հարցման եղանակով) կուսակցության հաշվետվության ստուգման համար անհրաժեշտ առնչվող տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կապված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկություններ, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ, ինչպես նաև վարկային բյուրոյից վարկային տեղեկատվություն կամ վարկային պատմություն:

5. Հաշվետվության ստուգման նպատակով Հանձնաժողովն իրավասու է բանկային գաղտնիք կազմող տեղեկություններին ծանոթանալու նպատակով Կենտրոնական բանկին ուղղված հարցման միջոցով պահանջելու և ստանալու հաշվետվություն ներկայացնելու պարտականություն ունեցող կուսակցության հաշիվների առկայության, հաշվի համախառն մուտքի և համախառն ելքի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն, ինչպես նաև բանկային պահատուփերի առկայության վերաբերյալ տվյալներ՝ հարցման մեջ նշելով կուսակցության տվյալները, վերաբերելի ժամանակահատվածը կամ ամսաթիվը: Սույն մասում նշված տեղեկությունների փոխանցման կարգը սահմանվում է Կենտրոնական բանկի և հանձնաժողովի համատեղ իրավական ակտով:

6. Բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալուց հետո Հանձնաժողովն իրավասու է կուսակցությունից պահանջելու ներկայացնել լրացուցիչ նյութեր:

7. «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով նախատեսված պետական նպատակային ֆինանսավորման միջոցների օգտագործումն ստուգելիս Հանձնաժողովը կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կազմի և տարածքային ստորաբաժանումների վերաբերյալ տեղեկատվությունը ստանում է իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից:

8. Հանձնաժողովը կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքում իրականացնում է «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 10-13-րդ մասերով նախատեսված լիազորությունները:

9. Կուսակցության կողմից Հանձնաժողովի սահմանած ժամկետում հաշվետվության համապատասխանությունը «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված պահանջներին չհիմնավորվելու և հաշվետվության ստուգման արդյունքում «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի պահանջների խախտումներ հայտնաբերվելու դեպքում Հանձնաժողովը հարուցում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ:

10. Առերևույթ հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում Հանձնաժողովը գործի նյութերն անհապաղ, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում ուղարկում է գլխավոր դատախազություն:

11. Եթե վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում Հանձնաժողովը հանգում է այն հետևության, որ կատարված արարքում առկա են առերևույթ հանցագործության հատկանիշներ, ապա վարույթի նյութերն անհապաղ, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում Հանձնաժողովն ուղարկում է գլխավոր դատախազություն՝ ընդունելով վարույթը կասեցնելու մասին որոշում: Քրեական վարույթ չնախաձեռնելու մասին տեղեկանալու ~~գործի հարուցումը մերժելու~~, քրեական վարույթը ~~գործի վարույթը~~ կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չհարուցելու ~~չիրականացնելու~~ մասին որոշումն ստանալու պահից Հանձնաժողովը հնգօրյա ժամկետում վերսկսում է կասեցված վարույթը, իսկ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռն ստանալու դեպքում նույն ժամկետում կարճում է վարույթը:

12. Գլխավոր դատախազությունը նյութերի ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ տեղեկացնում է Հանձնաժողովին՝ կցելով համապատասխան փաստաթղթի ~~որոշման~~ պատճենը:

13. Այն կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգումը, որոնց հաշվետվությունները ենթակա են պարտադիր աուդիտի, իրականացվում է սույն օրենքով սահմանված՝ աուդիտորական եզրակացությունն ստանալուց հետո:

14. Պետական ֆինանսավորում ստանալու իրավունք ունեցող կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգումն իրականացվում է աուդիտորական եզրակացությունը ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հունիսի 15-ը:

(40.1-ին հոդվածը լրաց. 29.12.20 ՀՕ-5-Ն)

(29.12.20 ՀՕ-5-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

««ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 7-Ի ԹԻՎ ՀՕ-208-Ն ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 3. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 40.3-րդ հոդվածով.

«**Հոդված 40.3. Նախընտրական հիմնադրամներ կատարվող նվիրատվությունների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ վերահսկողությունը**

1. Հանձնաժողովը «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով և սույն օրենքով սահմանված կարգով ստուգում է թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամներ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի համապատասխանությունն օրենքով սահմանված պահանջներին:

2. Նախընտրական հիմնադրամներ կատարված նվիրատվությունների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ թափանցիկությունն ու հրապարակայնությունն ապահովելու նպատակով Ազգային ժողովի յուրաքանչյուր խմբակցություն Հանձնաժողովում կարող է նշանակել Հայաստանի Հանրապետությունում աուդիտորի որակավորում ստացած ընտրական իրավունք ունեցող մեկ աուդիտորի: Ազգային ժողովի խմբակցությունների՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում նշանակված աուդիտորները վարձատրվում են երկու ամսվա համար՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի եռապատիկի չափով: Նրանց գործունեությունն ավարտվում է ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակումից հետո՝ 5-րդ օրը:

3. Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների ժամանակ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում մինչև մեկ ամիս ժամկետով պայմանագրային հիմունքներով կարող է ընդգրկվել մինչև 5 մասնագետ:

4. Հանձնաժողովը թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամներ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման նպատակով իրականացնում է նախընտրական հիմնադրամի մուտքերի և ծախսերի համադրում, դրանց օրինականության, հայտարարագրում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգում: Այդ նպատակով Հանձնաժողովն իրավասու է՝

1) ստանալու համապատասխան տեղեկություններ, Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Քներ, փաստաթղթերի պատճեններ՝ թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ այն բանկերից, որտեղ նախընտրական հիմնադրամներ ձևավորելու համար բացվել են ժամանակավոր հատուկ հաշվեհամարներ.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, իրավաբանական և ֆիզիկական անձանցից պահանջելու և ստանալու (այդ թվում՝ էլեկտրոնային հարցման

եղանակով) թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների՝ իրենց նախընտրական հիմնադրամներ կատարած նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման համար անհրաժեշտ առնչվող տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ.

3) ապրանքներ մատակարարող, ծառայություններ մատուցող կամ աշխատանքներ կատարող ֆիզիկական և իրավաբանական անձանցից պահանջելու և ստանալու համապատասխան տեղեկություններ, Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Քներ, փաստաթղթերի պատճեններ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում քաղաքացիաիրավական գործարքների հիման վրա ձեռք բերված ապրանքների, կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների և իրականացված վճարումների վերաբերյալ, այդ թվում՝ անհատույց ձեռք բերված ապրանքների, կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների վերաբերյալ:

5. Հայտարարագրերի ստուգման նպատակով Հանձնաժողովն իրավասու է բանկային գաղտնիք կազմող տեղեկություններին ծանոթանալու նպատակով Կենտրոնական բանկին ուղղված հարցման միջոցով պահանջելու և ստանալու հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող թեկնածուի կամ կուսակցության հաշիվների առկայության, հաշվի համախառն մուտքի և համախառն ելքի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն, ինչպես նաև բանկային պահատուփերի առկայության վերաբերյալ տվյալներ՝ հարցման մեջ նշելով թեկնածուի կամ կուսակցության տվյալները, վերաբերելի ժամանակահատվածը կամ ամսաթիվը: Սույն մասում նշված տեղեկությունների փոխանցման կարգը սահմանվում է Կենտրոնական բանկի և Հանձնաժողովի համատեղ իրավական ակտով:

6. Հանձնաժողովը թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը ստանալուց հետո՝ 7 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից մեկ օր առաջ, ստուգում և ստուգման արդյունքներով կազմում է եզրակացություն: Հանձնաժողովը եզրակացությունն անհապաղ հրապարակում է իր համացանցային կայքում:

7. Եթե նախընտրական հիմնադրամում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրի ստուգման արդյունքով արձանագրվել են «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված պահանջների խախտումներ, ապա Հանձնաժողովը հարուցում է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ:

8. Առերևույթ հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում Հանձնաժողովը գործի նյութերն անհապաղ, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում ուղարկում է գլխավոր դատախազություն:

9. Եթե վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում Հանձնաժողովը գալիս է այն հետևության, որ կատարված արարքում առկա են առերևույթ հանցագործության հատկանիշներ, ապա վարույթի նյութերն անհապաղ, բայց

ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում Հանձնաժողովն ուղարկում է գլխավոր դատախազություն՝ ընդունելով վարույթը կասեցնելու մասին որոշում: Քրեական ~~գործի հարուցումը մերժելու~~ վարույթ չնախաձեռնելու մասին տեղեկանալու, ~~գործի վարույթը~~ քրեական վարույթկարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում ~~չիրականացնելու~~ չհարուցելու մասին որոշումն ստանալու պահից Հանձնաժողովը հնգօրյա ժամկետում վերսկսում է կասեցված վարույթը, իսկ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռն ստանալու դեպքում նույն ժամկետում կարճում է վարույթը:

10. Գլխավոր դատախազությունը նյութերի ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ տեղեկացնում է Հանձնաժողովին՝ կցելով համապատասխան փաստաթղթի ~~որոշման~~ պատճենը:

11. Սույն հոդվածով նախատեսված հայտարարագրերի էլեկտրոնային ձևը սահմանում է Հանձնաժողովը: Հայտարարագրի ձևը ներառում է նաև ուղեցույց հայտարարագիրը կազմելու և ներկայացնելու կարգի և ժամկետների մասին:»:

Հոդված 4. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 40.4-րդ հոդվածով.

«Հոդված 40.4. Հանրաքվեի և տեղական հանրաքվեի քարոզչության նպատակով կատարված նվիրատվությունների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ վերահսկողությունը

1. Հանձնաժողովն ստուգում է «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքով և «Տեղական հանրաքվեի մասին» օրենքով նախատեսված՝ հանրաքվեի և տեղական հանրաքվեի քարոզչության հիմնադրամ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ ներկայացված հայտարարագրերի համապատասխանությունը համապատասխանաբար «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքով և «Տեղական հանրաքվեի մասին» օրենքով սահմանված պահանջներին: Հանձնաժողովը քարոզչության հիմնադրամներ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման նպատակով իրականացնում է նախընտրական հիմնադրամի մուտքերի և ծախսերի համադրում, դրանց օրինականության, հայտարարագրում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգում: Այդ նպատակով Հանձնաժողովն իրավասու է քարոզչության կողմերից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, իրավաբանական և ֆիզիկական անձանցից պահանջելու և ստանալու (այդ թվում՝ էլեկտրոնային հարցման եղանակով) հայտարարագրերի ստուգման համար անհրաժեշտ առնչվող տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ:

2. Հայտարարագրերի ստուգման նպատակով Հանձնաժողովն իրավասու է բանկային գաղտնիք կազմող տեղեկություններին ծանոթանալու նպատակով

Կենտրոնական բանկին ուղղված հարցման միջոցով պահանջելու և ստանալու հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող քարոզչության կողմերի հաշիվների առկայության, հաշվի համախառն մուտքի և համախառն ելքի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

3.~~ուղղ.~~ Հանձնաժողովը քարոզչության կողմերի ներկայացրած հայտարարագրերն ստանալուց հետո՝ 7 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան հանրաքվեի կամ տեղական հանրաքվեի արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից մեկ օր առաջ ստուգում և ստուգման արդյունքներով կազմում է եզրակացություն: Հանձնաժողովը եզրակացությունն անհապաղ հրապարակում է իր համացանցային կայքում:

4. Առերևույթ հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում Հանձնաժողովը գործի նյութերն անհապաղ, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում ուղարկում է գլխավոր դատախազություն: Գլխավոր դատախազությունը նյութերի ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ տեղեկացնում է Հանձնաժողովին՝ կցելով համապատասխան փաստաթղթի ~~որոշման~~ պատճենը:

5. Սույն հոդվածով նշված բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների փոխանցման կարգը սահմանվում է Կենտրոնական բանկի և Հանձնաժողովի համատեղ իրավական ակտով:

6. Սույն հոդվածով նախատեսված հայտարարագրերի էլեկտրոնային ձևը սահմանում է Հանձնաժողովը: Հայտարարագրի ձևը ներառում է նաև ուղեցույց հայտարարագիրը կազմելու և ներկայացնելու կարգի և ժամկետների մասին:»:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 15. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներին ներկայացվող հիմնական պահանջները

1. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի պաշտոն կարող է զբաղեցնել Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որը՝

1) ունի Հայաստանի Հանրապետությունում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն կրթության որակավորման աստիճան կամ օտարերկրյա պետությունում ձեռք բերած համապատասխան որակավորման աստիճան, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է օրենքով սահմանված կարգով.

2) անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի անձանց) կամ ազատված է նման ծառայությունից օրենքով սահմանված կարգով ու հիմքով.

3) տիրապետում է հայերենին.

4) ունի ռուսերենից, անգլերենից և ֆրանսերենից առնվազն մեկ ստանդարտացված թեստային համակարգով կամ Կառավարության սահմանած այլ կարգով ստուգվող լեզվական գիտելիքների համապատասխան մակարդակի իմացություն: Սույն կետի պահանջը չի տարածվում կրտսեր պաշտոններ զբաղեցնող անձանց վրա.

5) բավարարում է պաշտոնին ներկայացվող սույն օրենքով նախատեսված պահանջները, և առկա չեն պաշտոնի նշանակման համար սույն օրենքով սահմանված սահմանափակումները:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի պաշտոնում չի կարող նշանակվել այն անձը՝

1) որը դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) որը օրինական ուժի մեջ մտած դատական ակտով զրկվել է հանրային ծառայությունում պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

3) որը դատապարտվել է հանցագործության համար՝ անկախ դատվածությունը մարված կամ վերացված ~~մարված կամ հանված~~ լինելու հանգամանքից.

4) որի նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում.

5) որի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է, կամ քրեական հետապնդում չի հարուցվել ոչ ռեաբիլիտացնող ~~չի իրականացվել ոչ արդարացնող~~ հիմքով.

6) որն ունի Կառավարության հաստատած ցանկով նախատեսված՝ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու դեպքում լիազորությունների իրականացումը խոչընդոտող հիվանդություն կամ ֆիզիկական արատ.

7) որը, լինելով դատավոր կամ նախկին դատավոր, վերջին երեք տարվա ընթացքում ստացել է խիստ նկատողություն կամ օրենքով սահմանված ավելի ծանր կարգապահական տույժ՝ անկախ կարգապահական տույժի՝ սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից.

8) որը, լինելով դատախազ, քննիչ, նախկին դատախազ կամ նախկին քննիչ, վերջին երեք տարվա ընթացքում ստացել է խիստ նկատողություն կամ օրենքով սահմանված ավելի ծանր կարգապահական տույժ՝ անկախ կարգապահական տույժի՝ սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից.

9) որը, լինելով հետաքննիչ, օպերլիազոր, նախկին հետաքննիչ կամ նախկին օպերլիազոր, վերջին երեք տարվա ընթացքում ստացել է խիստ նկատողություն կամ օրենքով սահմանված ավելի ծանր կարգապահական տույժ՝ անկախ կարգապահական տույժի՝ սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից.

10) որը, լինելով փաստաբան կամ նախկին փաստաբան, վերջին երեք տարվա ընթացքում ստացել է խիստ նկատողություն կամ օրենքով սահմանված ավելի ծանր կարգապահական տույժ՝ անկախ կարգապահական տույժի՝ սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից:

3. Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող պաշտոններ զբաղեցնող անձանց ֆիզիկական պատրաստականության, առողջական վիճակի հետ կապված պահանջները սահմանում է Կառավարությունը:

4. Հակակոռուպցիոն կոմիտեում պաշտոն զբաղեցնելու սահմանային տարիքը 60 տարեկանն է: Սահմանային տարիքը լրանալուց հետո հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը կարող է մինչև հինգ տարի ժամկետով երկարաձգել պաշտոնավարման ժամկետը: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի պաշտոնների սահմանային տարիքը 65 տարեկանն է:

Հոդված 24. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին պաշտոնից ազատելը

1. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը, բացառությամբ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալի, պաշտոնից ազատվում է՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու դեպքում.

2) անձնական նախաձեռնությամբ՝ գրավոր դիմումի հիման վրա, այդ թվում՝ 20 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժը լրանալու կապակցությամբ.

3) սույն օրենքով նախատեսված սահմանային տարիքը լրանալու կապակցությամբ, եթե սույն օրենքով սահմանված կարգով այն չի երկարաձգվել.

4) հաստիքների կրճատման, հակակոռուպցիոն կոմիտեի լուծարման կամ վերակազմակերպման դեպքում, եթե հակակոռուպցիոն կոմիտեում ծառայողին համապատասխան պաշտոնում նշանակելը հնարավոր չէ, և հաստիքների կրճատումը պայմանավորված է հաստիքների ընդհանուր թվի կրճատմամբ.

5) հիվանդության կամ ֆիզիկական արատի պատճառով ծառայությանը ոչ պիտանի լինելու դեպքում.

6) օրինական ուժի մեջ մտած դատական ակտով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու դեպքում.

7) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա մահացած հայտարարվելու կամ անհայտ բացակայող ճանաչվելու դեպքում.

8) եթե նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է, կամ քրեական հետապնդում չի իրականացվել ոչ արդարացնող հիմքով.

9) նրա նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու դեպքում.

10) նրա նկատմամբ պաշտոնից ազատում կարգապահական տույժ նշանակելու դեպքում.

11) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում ավելի քան 140 օր ծառայության չներկայանալու դեպքում՝ չհաշված հղիության և ծննդաբերության կամ կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդը.

12) ատեստավորման արդյունքներով զբաղեցրած պաշտոնին նրա չհամապատասխանելու դեպքում.

13) սույն օրենքով նախատեսված ատեստավորմանը երկու անգամ անընդմեջ անհարգելի պատճառներով չներկայանալու դեպքում.

14) սույն օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սահմանափակումներից որևէ մեկի ի հայտ գալու դեպքում.

15) սույն օրենքի պահանջների խախտմամբ պաշտոնի նշանակված լինելու դեպքում:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի պարտականությունները համարվում են դադարած նրա մահվան դեպքում:

3. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալի լիազորությունները վաղաժամկետ դադարելու դեպքերն են՝

1) պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալը.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելը.

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նրա անգործունակ, անհայտ բացակայող ճանաչվելը կամ մահացած հայտարարվելը.

4) նրա մահը.

5) նրա նկատմամբ կայացված դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի առկայությունը.

6) նրա նկատմամբ կայացված՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով ~~ոչ արդարացնող հիմքով~~ քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չհարուցելու ~~չիրականացնելու~~ մասին որոշման առկայությունը.

7) հրաժարականի դիմում Կառավարություն ներկայացնելը և վերջինիս կողմից այն հաստատվելը:

4. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են, եթե՝

1) նա պաշտոնավարման ընթացքում ձեռք է բերել հիվանդություն կամ ֆիզիկական արատ, որը տևական ժամանակահատվածով խոչընդոտում է կամ խոչընդոտելու է իր պաշտոնեական պարտականությունների կատարումը.

2) ի հայտ է եկել սույն օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սահմանափակումներից որևէ մեկը.

3) նա խախտել է «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված սահմանափակումները և անհամատեղելիության պահանջները.

4) նա խախտել է քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքը.

5) ի հայտ են եկել փաստեր, որ նա նշանակման պահին չի համապատասխանել ներկայացվող պահանջներին:

5. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի լիազորությունների ժամկետը լրանում է նրա նշանակման օրվան հաջորդող վեցերորդ տարվա նույն օրը:

Հոդված 34. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգը

1. Կարգապահական տույժը նշանակվում է, եթե վեց ամսից ավելի չի անցել կարգապահական խախտումը հայտնաբերելու օրվանից՝ չհաշված հիվանդության կամ արձակուրդում գտնվելու ժամանակաշրջանը. ընդ որում, նշանակվող տույժը պետք է համապատասխանի կատարված խախտման բնույթին:

2. Տույժերը ձևակերպվում են գրավոր: Կարգապահական յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ:

3. Կարգապահական տույժի մասին հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը տեղեկացվում է դրա նշանակումից հետո՝ հնգօրյա ժամկետում:

4. Եթե կարգապահական տույժ նշանակվելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա այն համարվում է մարված: Սույն մասի դրույթները չեն տարածվում սույն օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-6-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերի վրա:

5. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ կարգապահական տույժերը կարող են կիրառվել միայն ծառայողական քննության արդյունքների հիման վրա:

6. Ծառայողական քննության ժամանակահատվածում հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի լիազորությունները կարող են ժամանակավորապես դադարեցվել, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ, պաշտոնում մնալով, նա կխոչընդոտի ծառայողական քննության անցկացումը: Այդ դեպքում հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վարձատրությունը պահպանվում է:

7. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում հարուցված լինելու դեպքում նրա պաշտոնավարումը կարող է կասեցվել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով:

~~7. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում իրականացվելիս նրա լիազորությունները կարող են ժամանակավորապես դադարեցվել մինչև քրեական հետապնդումը դադարեցնելը կամ մինչև տվյալ գործով դատարանի դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:~~

8. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողն իրավունք ունի իր նկատմամբ նշանակված կարգապահական տույժի մասին որոշումն օրենքով սահմանված կարգով բողոքարկելու դատարան:

9. Կարգապահական տույժի ենթարկված հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը չի ազատվում նույն արարքի համար օրենքով սահմանված քաղաքացիական, վարչական կամ քրեական պատասխանատվությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ կարգապահական տույժը կիրառվել է առաքինության ստուգման շրջանակներում կատարված խախտման հիմքով:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 9. Հանրային պաշտոններում նշանակելու իրավասությունը

1. Նախարարի տեղակալին նախարարի առաջարկությամբ պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է վարչապետը:

2. Կառավարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարին վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում է Կառավարությունը, բացառությամբ տեսչական մարմինների:

3. Տեսչական մարմնի ղեկավարին Տեսչական մարմնի կառավարման խորհրդի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը:

4. Կառավարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալին Կառավարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

5. Վարչապետին ենթակա պետական մարմնի ղեկավարին նշանակում և ազատում է վարչապետը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

6. Վարչապետին ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալին վարչապետին ենթակա պետական մարմնի ղեկավարի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

7. Նախարարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարին համապատասխան նախարարի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

8. Նախարարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալին նախարարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարի առաջարկությամբ նշանակում և ազատում է համապատասխան նախարարը:

9. Մարզպետների տեղակալներին մարզպետի առաջարկությամբ պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է վարչապետը:

10. Պետական հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց նշանակում և ազատում է այն պետական մարմնի ղեկավարը կամ ենթակա պետական մարմնի ղեկավարը, որտեղ նրանք լինելու են աշխատանքային հարաբերությունների մեջ, բացառությամբ սույն հոդվածի 14-րդ և 14.1-ին մասերով նախատեսված դեպքերի:

11. Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարին և նրա տեղակալներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հանրապետության նախագահը:

12. Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարին և նրա տեղակալներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Ազգային ժողովի նախագահը:

13. Վարչապետի աշխատակազմի ղեկավարին և նրա տեղակալներին, վարչապետի աշխատակազմի գրասենյակի ղեկավարին, բացառությամբ փոխվարչապետի գրասենյակի ղեկավարի, պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է վարչապետը:

14. Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի օգնականին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հանրապետության նախագահի

աշխատակազմի ղեկավարը: Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի օգնականին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը: Վարչապետի աշխատակազմի ղեկավարի օգնականին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է վարչապետի աշխատակազմի ղեկավարը: Փոխվարչապետի գրասենյակի ղեկավարին, խորհրդականին, օգնականին, մամուլի քարտուղարին, ռեֆերենտին, արարողակարգի պատասխանատուին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է համապատասխան փոխվարչապետը: Անվտանգության խորհրդի քարտուղարի օգնականին, խորհրդականին և մամուլի քարտուղարին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Անվտանգության խորհրդի քարտուղարը:

14.1. Դատավորի օգնականին պաշտոնի նշանակում, պաշտոնից ազատում, արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է Դատական դեպարտամենտի ղեկավարը, իսկ Սահմանադրական դատարանի դատավորի օգնականին՝ Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարը՝ համապատասխան դատավորի առաջարկությամբ:

15. Համայնքային վարչական և համայնքային հայեցողական պաշտոններում նշանակում և այդ պաշտոններից ազատում է համայնքի ղեկավարը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

16. Փոխվարչապետին, նախարարին, Անվտանգության խորհրդի քարտուղարին, Կառավարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարին, վարչապետի աշխատակազմի ղեկավարին, տեսչական մարմնի ղեկավարին, վարչապետին ենթակա պետական մարմնի ղեկավարին, մարզպետին, վարչապետի աշխատակազմի գրասենյակի ղեկավարին, բացառությամբ փոխվարչապետի գրասենյակի ղեկավարի, արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է վարչապետը:

17. Նախարարի տեղակալին, Կառավարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալին, տեսչական մարմնի ղեկավարի տեղակալին, վարչապետին ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալին, մարզպետի տեղակալին արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է անմիջական ղեկավարը:

18. Նախարարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարին արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է համապատասխան նախարարը, իսկ նախարարությանը ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալին արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է անմիջական ղեկավարը:

19. Պետական հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է անմիջական ղեկավարը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

20. Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարին արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է Հանրապետության նախագահը, իսկ աշխատակազմի ղեկավարի տեղակալներին, աշխատակազմի ղեկավարի օգնականին՝ Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարը:

21. Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարին արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է Ազգային ժողովի նախագահը, իսկ աշխատակազմի ղեկավարի տեղակալներին, աշխատակազմի ղեկավարի օգնականին՝ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը:

22. Վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալներին, աշխատակազմի ղեկավարի օգնականին արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է վարչապետի աշխատակազմի ղեկավարը:

23. Փոխվարչապետի գրասենյակի ղեկավարին, խորհրդականին, օգնականին, մամուլի քարտուղարին, ռեֆերենտին, արարողակարգի պատասխանատուին արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է համապատասխան փոխվարչապետը:

24. Անվտանգության խորհրդի քարտուղարի օգնականին, խորհրդականին և մամուլի քարտուղարին արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է Անվտանգության խորհրդի քարտուղարը:

25. Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարին պաշտոնի նշանակում, պաշտոնից ազատում, արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է վարչապետը:

26. Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչին պաշտոնի նշանակում, պաշտոնից ազատում, արձակուրդ տրամադրում և խրախուսանքի միջոցներ կիրառում է վարչապետը:

27. Քրեական հետապնդման շրջանակներում օրենքով սահմանված դեպքերում և կարգով հանրային պաշտոն զբաղեցնող անձի պաշտոնավարումը (լիազորությունները) կասեցվելիս~~լիազորությունները կասեցվելիս~~ նրան պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու իրավասություն ունեցող մարմինը կամ պաշտոնատար անձը նշանակում է պարտականությունները կատարող, եթե օրենքով նրա պարտականությունները կատարելու վերաբերյալ այլ բան նախատեսված չէ:

Հոդված 14. Հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք չունեցող անձը

1. Հանրային ծառայության ընդունվելու իրավունք չունի այն անձը, որը՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատական կարգով զրկվել է հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

3) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը հանրային ծառայության տվյալ պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել իր լիազորությունների իրականացմանը.

4) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով մարված կամ վերացված չէ~~հանված կամ մարված չէ~~.

5) օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներից բացի, պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաև համայնքային ծառայությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով կարող են սահմանվել նաև այլ պահանջներ:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիվանդությունների ցանկը հաստատում է Կառավարությունը՝ հաշվի առնելով հանրային ծառայության տվյալ տեսակի առանձնահատկությունները:

(9-րդ հոդվածը լրաց. 08.05.19 ՀՕ-35-Ն, 10.07.19 ՀՕ-144-Ն, փոփ., լրաց. 21.01.20 ՀՕ-11-Ն, լրաց. 25.03.21 ՀՕ-135-Ն, փոփ. 16.12.21 ՀՕ-416-Ն)

(21.01.20 ՀՕ-11-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 19. Դիմողին ներկայացվող պահանջները

1. Որակավորման քննությանը կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող այլ անձինք, որոնք ունեն միջնակարգ կրթություն:

2. Որակավորման քննություններին մասնակցել չի թույլատրվում այն անձին, որը՝

1) դատարանի վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատարանի վճռով զրկվել է ֆինանսատնտեսական հարաբերությունների իրականացման բնագավառում որևէ պաշտոն զբաղեցնելու իրավունքից, բացառությամբ եթե դատվածությունը մարված կամ վերացված է ~~դատվածությունը հանված կամ մարված է~~:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ

Հոդված 8.1. Քննչական մարմինը

1. Քննչական մարմինը հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Քննչական մարմինը նախաձեռնում է քրեական վարույթ և իրականացնում է նախաքննություն՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված քննչական ենթակայության կանոններին համապատասխան: ~~Քննչական մարմինը կազմակերպում և իրականացնում է նախաքննություն հարկային մարմնի քննչական ենթակայությանը վերապահված հանցագործություններով:~~

3. Քննչական մարմնի ղեկավարին նշանակում և ազատում է հարկային մարմնի ղեկավարը՝ վարչապետի համաձայնությամբ:

4. Քննչական մարմնում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում են սույն օրենքով սահմանված կարգով:

5. Քննչական մարմնում ինքնավար պաշտոնների դասակարգման, դասային աստիճանների տրման, մրցույթի անցկացման կարգը և պաշտոններին ներկայացվող չափանիշները սահմանում է Կառավարությունը:

6. Քննչական մարմնում ինքնավար պաշտոնների անվանացանկը հաստատում և (կամ) փոփոխում է հարկային մարմնի ղեկավարը:

7. Սույն օրենքով սահմանված կատարողականի գնահատման հարաբերությունները չեն տարածվում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վրա:

8. Սույն օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված դասային աստիճանները շնորհվում են նաև քննչական մարմնում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց:

(8.1-ին հոդվածը լրաց. 23.03.18 ՀՕ-262-Ն, 21.01.20 ՀՕ-17-Ն)

Հոդված 9. Հարկային մարմնի լիազորությունները

(վերնագիրը փոփ. 23.03.18 ՀՕ-262-Ն)

1. Հարկային մարմինը՝

1) Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքին համապատասխան՝ իրականացնում է հարկային վարչարարություն՝

ա. հարկ վճարողների հաշվառում,

բ. հարկ վճարողների սպասարկում,

գ. հարկ վճարողների հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառում,

դ. հարկային հսկողության իրականացում և հարկային հսկողության հարակից ընթացակարգերի կիրառում,

ե. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքին համապատասխան՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ իրեն վերապահված գործերով վարույթի իրականացում, հարկային իրավախախտումների բացահայտման ուղղությամբ անհրաժեշտ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացում՝ օրենքով սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության, հարկային հարաբերությունները կարգավորող մյուս

իրավական ակտերի՝ հարկային պարտավորությունների գծով պահանջների խախտման համար օրենքով սահմանված պատասխանատվության կիրառում,

զ. հարկային պարտավորությունների կատարման ապահովում, հարկերի և այլ պարտադիր վճարների հավաքման կազմակերպում,

է. հարկային վեճերի լուծում, հարկ վճարողների բողոքների քննարկում և որոշումների ընդունում,

ը. հարկ վճարողների նկատմամբ օրենքով սահմանված կարգով հսկողության իրականացում,

թ. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով տնտեսավարող սուբյեկտների մոտ օրենքով սահմանված կարգով ստուգումների և ուսումնասիրությունների իրականացում,

ժ. միջազգային պայմանագրերի շրջանակներում հարկային վարչարարության իրականացում.

2) իրականացնում է բյուջեների՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների հաշվառումը, ապահովում է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները.

3) իրականացնում է տեղեկատվական տեխնոլոգիաների և դրանց առնչվող համակարգերի կառավարումը (մշակում, ներդնում և սպասարկում).

4) կազմակերպում է հարկային ծառայողների ուսուցումը, վերապատրաստումը.

5) միջազգային պայմանագրերի շրջանակներում օտարերկրյա իրավասու մարմինների հետ հարկման նպատակով փոխանակում է տեղեկատվություն (ըստ՝ դիմում-պահանջի, ինքնաբերական և ավտոմատ եղանակով).

6) իրականացնում է նախաքննություն հարկային մարմնի ենթակայությանը վերապահված հանցագործությունների վերաբերյալ վարույթով, ինչպես նաև հետաքննություն՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով.

7) վերահսկողություն է իրականացնում պետական տուրքի հաշվարկման և գանձման կարգի պահպանման նկատմամբ:

2. ***(մասն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-262-Ն)***

3. ***(մասն ուժը կորցրել է 05.11.03 ՀՕ-28-Ն)***

(9-րդ հոդվածը խմբ., փոփ. 05.11.03 ՀՕ-28-Ն, 14.12.04 ՀՕ-191-Ն, լրաց. 08.07.05 ՀՕ-149-Ն, 24.10.05 ՀՕ-209-Ն, փոփ. 24.10.07 ՀՕ-234-Ն, լրաց. 23.10.08 ՀՕ-176-Ն, փոփ. 22.12.10 ՀՕ-268-Ն, խմբ., լրաց. 21.12.17 ՀՕ-276-Ն, խմբ., փոփ. 23.03.18 ՀՕ-262-Ն, փոփ. 21.01.20 ՀՕ-17-Ն)

Հոդված 39. Հարկային ծառայողի պարտականությունները

1. «Հանրային ծառայության մասին» օրենքի 19-րդ հոդվածով նախատեսված հիմնական պարտականություններից բացի, հարկային ծառայողի հիմնական պարտականություններն են՝

1) իր իրավասությունների սահմաններում հարկային մարմնի լիազորությունների իրականացումը.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում հարկ վճարողների հարկային պարտավորությունների հաշվարկումը, ինչպես նաև սահմանված կարգով հաշվարկված գումարների վճարման առաջադրումը.

3) ***(կետն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-17-Ն)***

4) օրենքով սահմանված դեպքերում և կարգով քրեական վարույթ նախաձեռնելը և նախաքննություն կատարելը.~~օրենքով սահմանված դեպքերում հետաքննության գործերի սկսումը~~.

4.1) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով գաղտնի քննչական գործողություններ և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ կատարելը.

5) պետական, ծառայողական և օրենքով պահպանվող այլ գաղտնիքն օրենքով սահմանված կարգով պահպանելը, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.

6) հարկ վճարողների, նրանց ներկայացուցիչների և հարկային հարաբերությունների այլ մասնակիցների նկատմամբ պատասխանատու և ուշադիր վերաբերմունքի ցուցաբերումը.

7) ***(կետն ուժը կորցրել է 21.12.17 ՀՕ-276-Ն)***

8) հարկային ծառայության գործառույթների և հարկային ծառայողի վարքագծի կանոնների պահանջներով խստագույնս առաջնորդվելը.

9) ***(կետն ուժը կորցրել է 29.11.11 ՀՕ-296-Ն)***

(39-րդ հոդվածը փոփ. 05.11.03 ՀՕ-28-Ն, 29.11.11 ՀՕ-296-Ն, 21.12.17 ՀՕ-276-Ն, խմբ., փոփ. 21.01.20 ՀՕ-17-Ն)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ

Հոդված 3. Մաքսային ծառայության հասկացությունը

1. Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայությունը մաքսային մարմինների միասնական կենտրոնացված համակարգն է:

2. Պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) քննչական մարմինը քրեական վարույթներով իրականացնում է նախաքննություն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված քննչական ենթակայության կանոններին համապատասխան:

~~Պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) քննչական մարմինն իրականացնում է նախաքննություն նաև մաքսային ծառայության քննչական ենթակայությանը վերապահված հանցագործությունների վերաբերյալ վարույթով:~~

(3-րդ հոդվածը խմբ. 23.03.18 ՀՕ-263-Ն)

Հոդված 8. Մաքսային ծառայության պաշտոնի նշանակման պայմանները

1. Մաքսային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, բարձրագույն կրթություն ունեցող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք՝

1) հաջողությամբ ավարտել են սույն գլխով նախատեսված՝ մաքսային ծառայողի պատրաստման դասընթացը, մաքսային մարմնի ուսումնական կենտրոնի կողմից ստացել են հավաստագիր և ընդգրկվել են մաքսային ծառայողների թեկնածուների ցուցակում կամ

2) մաքսային ծառայողներ են և անցել են սույն գլխով նախատեսված անհրաժեշտ վերապատրաստում:

2. Մաքսային ծառայության պաշտոնի անձնագիրը (աշխատատեղի նկարագիրը) մաքսային ծառայության իրավասությունը սահմանող իրավական ակտերից և խնդիրներից բխող՝ մաքսային ծառայողի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը նկարագրող և այդ գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ ու կոմպետենցիաներ նախատեսող, կառավարման համակարգում տեղակայվածությունը նախատեսող և սույն օրենքով սահմանված կարգով կոմիտեի ղեկավարի հաստատած փաստաթուղթն է:

3. Մաքսային ծառայության բարձրագույն, գլխավոր, առաջատար և կրտսեր թափուր պաշտոններ առաջանալու դեպքում այդ պաշտոններն զբաղեցվում են մաքսային ծառայողների թեկնածուների ցուցակում ներառված անձանցից կամ վերապատրաստում անցած մաքսային ծառայողներից հարցազրույցի միջոցով, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

4. Կառավարությունը սահմանում է մաքսային մարմինների կողմից իրականացվող՝ գաղտնի քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական գործունեության հետ կապված այն պաշտոնների անվանացանկը, որոնցում նշանակումները կատարում է կոմիտեի ղեկավարը առանց սույն օրենքով նախատեսված պաշտոնների նշանակման պայմանների պահպանման:

(8-րդ հոդվածը լրաց. 24.12.04 ՀՕ-71-Ն, 10.06.13 ՀՕ-69-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-263-Ն, խմբ., փոփ., լրաց. 21.01.20 ՀՕ-18-Ն, խմբ. 16.12.21 ՀՕ-424-Ն)

(16.12.21 ՀՕ-424-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 21. Հերթական հատուկ կոչումներ շնորհելը հետաձգելը

1. Զբաղեցրած պաշտոնին հասանելիք առավելագույն հատուկ կոչում կրող մաքսային ծառայողին հերթական կոչում շնորհելը հետաձգվում է մինչև նրա պաշտոնի համապատասխան փոփոխելը, կամ սույն օրենքի 19-րդ հոդվածի հինգերորդ մասի 2-3-րդ կետերին կամ վեցերորդ մասին համապատասխան խրախուսելը:

2. Մաքսային ծառայողին, որն ունի գրավոր կարգապահական տույժ, կամ որի նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում կամ անցկացվում է ծառայողական քննություն ծառայողական կարգուկանոնը նրա խախտելու փաստի առթիվ, հատուկ կոչման շնորհման ներկայացնելը հետաձգվում է համապատասխանաբար մինչև կարգապահական տույժի կրման ժամկետի ավարտը կամ ծառայողական քննության ավարտը կամ հարուցված քրեական հետապնդման դադարեցումը՝ ռեաբիլիտացնող հիմքով ~~կամ հարուցված քրեական հետապնդման կարճումը կամ ծառայողական քննության ավարտը՝ արդարացման հիմքերով~~:

3. Մաքսային ծառայողի անմիջական ղեկավարը (ղեկավարները) մաքսային ծառայողին հերթական հատուկ կոչում շնորհելուն ներկայացնելն անհիմն հետաձգելու դեպքում կրում է (են) օրենքով նախատեսված պատասխանատվություն:

4. Մաքսային ծառայողին հերթական հատուկ կոչում շնորհելուն ներկայացնելն անհիմն հետաձգելու դեպքում մաքսային ծառայողն իրավունք ունի պահանջել սահմանված բավարարումների փոխհատուցում այն չափով, որը նա կարող էր ստանալ, եթե նրան ժամանակին շնորհվեր հասանելիք կոչումը:

5. Մաքսային ծառայողի վարքագծի (էթիկայի) կանոնները խախտելու կամ ծառայողական պարտականությունները պարբերաբար չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար մաքսային ծառայողին հերթական հատուկ կոչման ներկայացնելը կարող է պատճառաբանված մերժվել՝ ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

(21-րդ հոդվածը լրաց. 18.11.09 ՀՕ-212-Ն)

Հոդված 24. Մաքսային ծառայողի հիմնական պարտականությունները

(վերնագիրը լրաց. 21.01.20 ՀՕ-18-Ն)

1. «Հանրային ծառայության մասին» օրենքի 19-րդ հոդվածով նախատեսված հիմնական պարտականություններից բացի, մաքսային ծառայողների հիմնական պարտականություններն են՝

1) ***(կետն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-18-Ն)***

2) ***(կետն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-18-Ն)***

3) ***(կետն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-18-Ն)***

4) ***(կետն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-18-Ն)***

5) ***(կետն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-18-Ն)***

6) օրենքով սահմանված դեպքերում և կարգով նախաձեռնել քրեական վարույթ և իրականացնել նախաքննություն՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված՝ քննչական ենթակայության կանոններին համապատասխան, կատարել գաղտնի քննչական գործողություններ և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ~~սկսել հետաքննության և նախաքննության գործերը~~.

6.1) մաքսանենգության և օրենքով նախատեսված դեպքերում մտավոր սեփականության իրավունքի խախտման գործերով իրականացնել դեպքի վայրի պահպանություն, որի կանոնները սահմանում է Կառավարությունը.

7) մասնակցել կոմիտեի ղեկավարի հաստատած ծրագրով անցկացվող ուսումնավարժական հավաքներին, մրցույթներին և այլ ծառայողական միջոցառումներին:

8) ***(կետն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-18-Ն)***

9) ***(կետն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-18-Ն)***

2. ***(մասն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-18-Ն)***

(24-րդ հոդվածը փոփ. 11.04.03 ՀՕ-539-Ն, լրաց. 18.11.09 ՀՕ-212-Ն, 01.03.18 ՀՕ-137-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-263-Ն, լրաց., փոփ. 21.01.20 ՀՕ-18-Ն)

(21.01.20 ՀՕ-18-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 26. Մաքսային ծառայողների կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների ու զենքի օգտագործման դեպքերը և կարգը

1. Մաքսային մարմնի հանրային ծառայողն իրավունք ունի գործադրելու ֆիզիկական ուժ, կիրառելու հատուկ միջոցներ, ինչպես նաև հրազեն՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով: Նախքան ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի օգտագործման իրավասություն ստանալը, այնուհետև՝ պարբերաբար, մաքսային մարմնի հանրային ծառայողները, կոմիտեի սահմանած կարգով անցնում են հատուկ պատրաստություն և պիտանիության ստուգումներ: Նշված անձինք պարտավոր են ունենալ նաև տուժածներին առաջին բուժօգնություն ցուցաբերելու հմտություն:

2. Սույն օրենքի 27-29-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում և կարգով՝ մաքսային մարմնի հանրային ծառայողն իրավունք ունի կիրառել ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք:

3. Մաքսային մարմնի հանրային ծառայողը ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք կիրառելուց առաջ նախազգուշացնում է այդ մտադրության մասին՝ տալով իր պահանջները կատարելու համար բավարար ժամանակ, բացառությամբ անակնկալ, զինված, ռազմական տեխնիկայի և տրանսպորտային այլ միջոցների օգտագործմամբ

հարձակումների և այլ իրադրությունների, եթե նման նախազգուշացումն ստեղծված իրավիճակում անտեղի է, անհնարին կամ կարող է առաջացնել վտանգ իր կամ այլ անձանց կյանքին և առողջությանը, հանգեցնել այլ ծանր հետևանքների:

4. Իրավախախտման վտանգավորության աստիճանից և դա կատարող անձի ինքնությունից, ինչպես նաև դիմադրության ուժից ելնելով՝ վտանգի վերացմանն ուղղված գործողությունների հետևանքով հնարավոր վնասները մաքսային մարմնի հանրային ծառայողը պետք է հասցնի նվազագույնի:

5. Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառման դեպքում մաքսային մարմնի հանրային ծառայողն անմիջապես զեկուցում է վերադասության կարգով, իսկ զենքի կիրառման բոլոր դեպքերի մասին՝ նաև դատախազին:

Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառման հետևանքով առաջացած մարմնական վնասվածքների, մահվան բոլոր դեպքերի մասին մաքսային մարմնի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն անմիջապես տեղյակ է պահում առողջապահության համապատասխան մարմիններին և իրավասու դատախազին: ~~առողջապահության և դատախազության համապատասխան մարմիններին:~~

(26-րդ հոդվածը խմբ. 07.04.09 ՀՕ-96-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-263-Ն, լրաց. 21.01.20 ՀՕ-18-Ն)

(21.01.20 <u>ՀՕ-18-Ն</u> օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 28. Հատուկ միջոցների կիրառումը

1. Մաքսային մարմնի հանրային ծառայողներն իրավունք ունեն կիրառել ձեռնաշղթաներ, ռետինե մահակներ, արցունքաբեր նյութեր, փականքները բացելու գործիքներ, տրանսպորտային միջոցները հարկադրաբար կանգնեցնելու համար նախատեսված միջոցներ, էլեկտրահարող սարքեր, կայծային պարպիչներ, ծառայողական շներ, ուշադրությունը շեղող լուսաձայնային միջոցներ:

2. Իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս մաքսային մարմնի հանրային ծառայողները հատուկ միջոցներ կարող են կիրառել՝

1) իրենց և (կամ) այլ անձանց վրա կատարված հարձակումը կանխելու համար.

2) մաքսային մարմնին պատկանող կամ նրա հսկողության տակ գտնվող շինությունների, կառույցների և տրանսպորտային միջոցների վրա կատարված հարձակումը կանխելու համար.

3) դիմադրություն ցույց տվող իրավախախտին վարչական ձերբակալության ենթարկելու կամ մաքսային մարմնի շենք կամ դրան փոխարինող այլ շինություն հասցնելու համար, եթե այդ դիմադրությունը կարող է վնաս պատճառել շրջապատին կամ իրենց.

4) տրանսպորտային միջոցը կանգնեցնելու համար, եթե դրա վարորդը չի կատարում մաքսային ծառայողի օրինական պահանջները:

2.1. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերից բացի, մաքսային մարմնի հանրային ծառայողները ծառայողական շներ կարող են կիրառել նաև՝

1) մաքսային հսկողության իրականացման շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետություն ապօրինի ներմուծվող կամ Հայաստանի Հանրապետությունից ապօրինի արտահանվող թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների, զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, պայթուցիկ սարքերի և յուրահատուկ հոտ ունեցող այլ ապրանքների որոնման ժամանակ.

2) ապացուցողական գործողությունների, գաղտնի քննչական գործողությունների ~~քննչական գործողությունների~~ և օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման շրջանակներում՝ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների, զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, պայթուցիկ սարքերի և յուրահատուկ հոտ ունեցող այլ ապրանքների որոնման ժամանակ:

2.2. Ծառայողական շների կիրառման, վարժեցման և պահման կարգը հաստատվում է մաքսային մարմնի ղեկավարի հրամանով:

3. Հղիության կամ հաշմանդամության ակնհայտ նշաններով անձանց, անչափահասների նկատմամբ հատուկ միջոցներ չեն կիրառվում, բացառությամբ նշված անձանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու, խմբակային կամ այլ հարձակումների, մարդկանց կյանքի և առողջության համար վտանգավոր գործողությունների դեպքերի:

(28-րդ հոդվածը լրաց. 21.01.20 ՀՕ-18-Ն, 26.05.21 ՀՕ-216-Ն)

(21.01.20 ՀՕ-18-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍԻՆ»
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 10. Պատասխանատվությունը Պաշտպանի գործունեությանը խոչընդոտելու համար

1. Պաշտպանի գործունեությանը օրենքով չնախատեսված ցանկացած միջամտություն արգելվում է:

~~2. Պաշտպանին Սահմանադրությամբ և սույն օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանը ցանկացած ձևով խոչընդոտելը, ինչպես նաև Պաշտպանին սպառնալը կամ նրան վիրավորանք հասցնելը կամ նրա նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելն առաջացնում են քրեական պատասխանատվություն:~~

2. Պաշտպանին Սահմանադրությամբ և սույն օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը, Պաշտպանի նկատմամբ սպառնալիքը կամ նրա մասին արատավորող կամ նրա իրավունքներին ու օրինական

շահերին այլ վնաս պատճառող տեղեկություն հրապարակելը կամ նրա գույքը ոչնչացնելը կամ վնասելը կամ նրա նկատմամբ բռնություն գործադրելը, ինչպես նաև Պաշտպանին վիրավորանք հասցնելը կամ նրա նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելն առաջացնում են քրեական պատասխանատվություն:

3. Պաշտպանի պահանջած նյութերը, փաստաթղթերը, տեղեկությունները կամ պարզաբանումները սույն օրենքով սահմանված ժամկետներում չտրամադրելն առաջացնում է վարչական պատասխանատվություն:

(10-րդ հոդվածը փոփ. 13.06.18 ՀՕ-355-Ն)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՄՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՐԱՑՄԱՆ

Հոդված 3. Հայաստանի Հանրապետության օրենսգրքերի (բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի), օրենքների, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումների, նախարարությունների և գերատեսչությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, առանձին իրավաբանական անձանց ակտերի իմաստով որպես հաշվարկային հիմք չի կարող ընդունվել սույն օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձը:

Նշված ակտերում որպես հաշվարկային հիմք պահպանվում է գործող 1000 դրամը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ

Հոդված 8. Ոստիկանության ծառայողի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը

1. Ոստիկանության ծառայողի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը սահմանված են «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով:

2. Ոստիկանության ծառայողի նկատմամբ կիրառվող տույժերը ձևակերպվում են գրավոր և հաշվառվում անձնական գործում:

(նախադասությունը հանվել է 15.11.10 ՀՕ-170-Ն)

3. Կարգապահական տույժի ենթարկված ոստիկանության ծառայողը չի ազատվում քրեական պատասխանատվությունից, եթե նա, կարգապահական խախտումից բացի,

կատարել է քրեորեն հետապնդելի արարք: Ոչ ~~արդարացնող~~ ռեաբիլիտացնող հիմքերով քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատված ոստիկանության ծառայողները կարող են տվյալ արարքի համար ենթարկվել կարգապահական պատասխանատվության:

4. Ոստիկանության ծառայողի նկատմամբ ղեկավարի (հրամանատարի) իրավունքների սահմաններից դուրս կարգապահական տույժ կիրառելու համար նա միջնորդում է այդ իրավունքն ունեցող վերադաս ղեկավարին (հրամանատարին):

5. ***(պարբերությունն ուժը կորցրել է 24.10.06 ՀՕ-170-Ն)***

Ոստիկանության գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողների նկատմամբ «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով նախատեսված կարգապահական տույժերը կիրառելու իրավունքը վերապահվում է ոստիկանության պետին: Ոստիկանության այլ պաշտոնատար անձանց կարգապահական տույժեր կիրառելու իրավունքը պատվիրակում է ոստիկանության պետը՝ իր հրամանով, որով սահմանվում են նաև կարգապահական տույժերի կիրառման սահմանները:

(8-րդ հոդվածը փոփ. 24.10.06 ՀՕ-170-Ն, 15.11.10 ՀՕ-170-Ն, լրաց. 19.03.12 ՀՕ-36-Ն)

Հոդված 18. Ծառայողական քննություն նշանակելու առիթները

Ծառայողական քննություն նշանակելու առիթներն են՝

ա) ոստիկանության ծառայողի կողմից իրավախախտում կատարելու մասին Ազգային ժողովի պատգամավորի, Մարդու իրավունքների պաշտպանի, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ֆիզիկական և իրավաբանական անձանց գրավոր հաղորդումները, դիմումները.

բ) դատախազի կամ քննիչի հաղորդումը կամ միջնորդագիրը՝ համապատասխանաբար ոստիկանության ծառայողի թույլ տված կարգապահական խախտման կամ խախտման պատճառների ու դրանց կատարմանը նպաստող պայմանների մասին.

գ) լրատվության միջոցի հաղորդումը ոստիկանության ծառայողի թույլ տված իրավախախտման մասին.

դ) ոստիկանության ծառայողի կողմից վարչական իրավախախտում կատարելու փաստով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի համաձայն կազմված արձանագրությունները.

ե) իրավախախտման անմիջական հայտնաբերումը ոստիկանության ծառայությունների (ստորաբաժանումների) ղեկավարների կամ նրանց լիազորած անձանց կողմից.

զ) ոստիկանության ծառայողի, ոստիկանության ծառայության (ստորաբաժանման) ղեկավարի զեկուցագիրը ոստիկանությունում հայտնաբերված իրավախախտման մասին՝

հասցեագրված ծառայողական քննություն նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին.

է) ոստիկանության ծառայողի զեկուցագիրը՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված դեպքերում:

(18-րդ հոդվածը լրաց. 19.03.12 ՀՕ-36-Ն)

Հոդված 20. Ծառայողական քննության ընթացքում պարզաբանման ենթակա հանգամանքները

1. Ծառայողական քննության ընթացքում պարզաբանման ենթակա հանգամանքներն են՝

ա) իրավախախտման դեպքը և հանգամանքները (կատարման ժամանակը, տեղը, եղանակը և այլն).

բ) իրավախախտման հատկանիշները.

գ) ոստիկանության ծառայողի մեղավորությունը իրավախախտում կատարելու մեջ.

դ) իրավախախտումներ ծնող պատճառները և դրանց նպաստող պայմանները.

ե) այն հանգամանքները, որոնցով ծառայողական քննությանն աջակցող անձինք և այլք հիմնավորում են իրենց պահանջները:

2. Ծառայողական քննության ընթացքում հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում ոստիկանության պետի կամ տեղակալի հանձնարարությամբ ծառայողական քննության նյութերը (համապատասխան եզրակացությամբ) ուղարկվում են ~~հակակոռուպցիոն կոմիտե՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով նախատեսված հանցավոր արարքների վերաբերյալ դեպքերով կամ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարմիններ՝ պետական ծառայություն իրականացնող անձանց այլ հանցագործությունների վերաբերյալ դեպքերով~~ նախաքննության մարմին՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված քննչական ենթակայության կանոններին համապատասխան: Ծառայողական քննություն իրականացնող ոստիկանության ստորաբաժանումում պահպանվում են նյութերի պատճենները, և դրանց ընթացքը լուծվում է սույն օրենքով սահմանված կարգով: ***(նախադասությունը հանվել է 19.03.12 ՀՕ-36-Ն)***

(20-րդ հոդվածը փոփ. 19.03.12 ՀՕ-36-Ն, խմբ. 24.03.21 ՀՕ-159-Ն)

Հոդված 22. Ծառայողական քննության ընթացքի կասեցման հիմքերը և վերսկսումը

1. Ծառայողական քննություն իրականացնող անձն այն ամբողջությամբ կամ համապատասխան մասով կարող է կասեցնել՝

~~ա) ոստիկանության ծառայողի վերաբերյալ հակակոռուպցիոն կոմիտեի կամ ազգային անվտանգության մարմինների քննարկմանն ուղարկված նյութերով, հետաքննության և նախաքննության այլ մարմիններում քննվող նյութերով կամ քրեական գործերով մինչև համապատասխան որոշում կայացնելը կամ մինչև ոստիկանության ծառայողի նկատմամբ կայացրած դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը.~~2

ա) ոստիկանության ծառայողի վերաբերյալ նախաքննության մարմին ուղարկված նյութերով մինչև քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրություն կազմելը կամ քրեական վարույթ նախաձեռնելուց հրաժարվելը կամ եզրափակիչ դատավարական ակտն օրինական ուժի մեջ մտնելը.

~~բ) եթե ծառայողական քննության ժամկետն ավարտվելուց հետո հայտնի չէ ոստիկանության ծառայողը, որն այդ գործով պետք է ենթարկվի կարգապահական տույժի.~~

գ) եթե հայտնի չէ կարգապահական տույժի ենթակա ոստիկանության ծառայողի գտնվելու վայրը.

դ) եթե կարգապահական տույժի ենթակա ոստիկանության ծառայողը ծանր հիվանդ է կամ գտնվում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս և առանց նրա մասնակցության հնարավոր չէ լուծել ծառայողական քննության վերջնական ընթացքը.

ե) եթե գործում է անհաղթահարելի ուժ, որը ժամանակավորապես խոչընդոտում է ծառայողական քննության կատարմանը.

զ) եթե ոստիկանության ծառայողի կողմից իրավախախտում կատարելու մասին հաղորդումը (դիմումը) միաժամանակ հասցեագրված է ոստիկանությանը, Հայաստանի Հանրապետության դատախազությանը, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեին կամ ազգային անվտանգության մարմիններին.

է) փորձաքննություն նշանակվելու դեպքում՝ մինչև փորձագիտական եզրակացության ստացումը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերի վերացվելու դեպքում ծառայողական քննությունը վերսկսվում է: Ծառայողական քննության ժամկետի մեջ չի հաշվվում այն ժամանակը, որի ընթացքում այն կասեցվել է: Ծառայողական քննությունը վերսկսելուց հետո այն ավարտվում է ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում: Սույն հոդվածի 1-ին մասի ~~«բ» և «գ» կետերով~~ «գ», «դ» և «է» կետերով նախատեսված հիմքերով ծառայողական քննությունը կասեցված լինելու դեպքում ծառայողական քննություն իրականացնող անձը կարող է լրացուցիչ բացատրություններ վերցնել կամ նյութերով այլ անհրաժեշտ գործողություններ կատարել՝ առանց ծառայողական քննությունը վերսկսելու:

~~2.1. Նախաքննության մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կամ 2-րդ կետով նախատեսված հիմքերով քրեական գործով վարույթի կասեցման դեպքում ծառայողական քննությունը վերսկսվում է ծառայողի արարքին գնահատական տալու համար:~~

3. Սույն հոդվածի 1-ին մասի ~~«բ»,~~ «գ» և «դ» կետերով նախատեսված հիմքերով ծառայողական քննությունը կարող է կասեցվել առավելագույնը մեկ տարի ժամանակով:

4. Ծառայողական քննության անցկացման ընթացքում ծառայողական քննության նյութերը հակակոռուպցիոն կոմիտե կամ ազգային անվտանգության մարմիններ կամ ոստիկանության մեկ այլ ստորաբաժանում ուղարկելու դեպքում ծառայողական քննություն իրականացնող անձը այդ մասին գրավոր տեղեկացնում է այն քաղաքացուն, կազմակերպությանը կամ պաշտոնատար անձին, ումից ստացվել է դիմումը կամ հաղորդումը:

(22-րդ հոդվածը փոփ., լրաց. 19.03.12 ՀՕ-36-Ն, խմբ., լրաց. 17.12.14 ՀՕ-219-Ն, փոփ., խմբ. 24.03.21 ՀՕ-159-Ն)

Հոդված 23. Ծառայողական քննության դադարեցումը

1. Ծառայողական քննությունը ցանկացած փուլում դադարեցվում է, եթե՝

ա) կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող ոստիկանության ծառայողը մահացել է, և կարգապահական պատասխանատվության ենթակա ոստիկանության այլ ծառայողներ չկան.

բ) կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող ոստիկանության ծառայողը, իրեն լրիվ մեղավոր ճանաչելով, տվել է գրավոր համաձայնություն իր նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու, ինչպես նաև հիմնավորված բացատրություն՝ քննվող դեպքի վերաբերյալ.

գ) կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող ոստիկանության ծառայողի արարքում բացակայում են կարգապահական խախտման հատկանիշները.

դ) կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող ոստիկանության ծառայողի մասնակցությունը կարգապահական խախտման կատարմանն ապացուցված չէ, և սպառված են նոր փաստական տվյալներ ձեռք բերելու բոլոր հնարավորությունները.

ե) լրացել է սույն օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ծառայողական քննությունը կասեցնելու առավելագույն ժամկետը.

զ) ծառայողական քննության արդյունքում հայտնի չի դառնում ոստիկանության այն ծառայողը, որն այդ գործով պետք է ենթարկվի կարգապահական տույժի, և կատարվել են խախտում կատարելու մեջ կասկածվող ծառայողի հայտնաբերելուն ուղղված անհրաժեշտ բոլոր գործողությունները:

2. Ծառայողական քննությունը դադարեցնելու վերաբերյալ ծառայողական քննությունն իրականացնող անձը կազմում է եզրակացություն, որը ներկայացվում է ծառայողական քննություն նշանակած անձի քննարկմանը:

3. Ծառայողական քննություն նշանակած անձը քննարկում է եզրակացությունը և կայացնում համապատասխան որոշում:

Հոդված 25. Ծառայողական քննություն իրականացնող անձի լիազորությունները

Ծառայողական քննություն իրականացնող անձի լիազորություններն են՝

ա) սահմանված ժամկետներում անցկացնել լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ ծառայողական քննություն՝ կատարված գործողություններին տալով համապատասխան փաստաթղթային ձևակերպում.

բ) ծառայողական քննություն նշանակած պաշտոնատար անձի և ծառայողական քննություն իրականացնող անձի անմիջական ղեկավարի պահանջով պարբերաբար նրան ներկայացնել ծառայողական քննության նյութերը և զեկուցել քննության ընթացքի մասին.

գ) ոստիկանության ծառայություններից, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ մարմիններից և կազմակերպություններից սահմանված կարգով պահանջել փաստաթղթեր, նյութեր և տվյալներ, որոնք կարող են տեղեկություններ պարունակել իրավախախտման և դրան առնչվող անձանց մասին.

դ) վերցնել գործի համար նշանակություն ունեցող և ոստիկանությունում պահվող կամ գտնվող իրեր և փաստաթղթեր.

ե) վերցնել բացատրություններ (լրացուցիչ բացատրություններ) կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող ոստիկանության ծառայողից, ծառայողական քննությանն աջակցող անձանցից, այլ անձից.

զ) կատարել զննություն.

~~է) նշանակել փորձաքննություն.~~

է) կայացնել փորձանմուշներ ստանալու որոշում և նշանակել փորձաքննություն.

ը) «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգով միջնորդություն ներկայացնել կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող ոստիկանության ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին՝ ժամանակավորապես դադարեցնելու կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող ոստիկանության ծառայողի լիազորությունները, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ պաշտոնում մնալով՝ նա կխոչընդոտի ծառայողական քննությանը.

թ) մինչև ծառայողական քննության ավարտը կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող ոստիկանության ծառայողին ծանոթացնել ծառայողական քննության նյութերին, ներառյալ՝ եզրակացությանը, բացառությամբ պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տվյալների.

ժ) իր իրավասության սահմաններում լուծել կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող ոստիկանության ծառայողի միջնորդությունները.

ժա) պարզաբանել կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող ոստիկանության ծառայողի, մասնագետի, թարգմանչի, այլ անձի իրավունքներն ու պարտականությունները:

Ծառայողական քննություն իրականացնող անձն ունի սույն օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ

~~Սույն օրենքը կարգավորում է ոստիկանության հասկացությունը, խնդիրները, իրավական հիմքերն ու սկզբունքները, պարտականությունները և իրավունքները, կառուցվածքը, պատասխանատվության կարգը, իրավական ու սոցիալական ապահովության պետական երաշխիքները, ինչպես նաև ոստիկանության ֆինանսավորման, նյութատեխնիկական ապահովման և գործունեության վերահսկողության սկզբունքները:~~

Սույն օրենքը կարգավորում է ոստիկանության հասկացությունը, խնդիրները կազմակերպման և գործունեության իրավական հիմքերն ու սկզբունքները, պարտականությունները և իրավունքները, կառուցվածքը, ինչպես նաև իրավական ու սոցիալական ապահովության պետական երաշխիքները, ոստիկանության ֆինանսավորման, նյութատեխնիկական ապահովման և գործունեության վերահսկողության կարգը:

(նախաբանը խմբ. 01.06.06 ՀՕ-123-Ն)

Հոդված 1. Ոստիկանության հասկացությունը

Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը միասնական համակարգ կազմող պետական կառավարման համակարգի մարմին է (այսուհետ՝ ոստիկանություն), որը սույն օրենքի 2-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված խնդիրներն իրականացնելիս ~~սույն~~ օրենքով նախատեսված դեպքերում, կարգով և սահմաններում ունի հարկադրանք կիրառելու իրավունք:

(1-ին հոդվածը խմբ. 01.06.06 ՀՕ-123-Ն, լրաց. 23.03.18 ՀՕ-272-Ն)

Հոդված 2. Ոստիկանության խնդիրները

Ոստիկանության խնդիրներն են օրենքին համապատասխան ապահովել՝

1) մարդու անվտանգությունը՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում.

2) հանցագործությունների ու վարչական իրավախախտումների նախականխումը, կանխումը և խափանումը.

3) հանցագործությունների հայտնաբերումը և բացահայտումը~~, քրեական գործով նախնական քննությունը~~.

3.1) << քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով հետաքննության կատարումը.

3.2) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ապացուցողական և վարութային այլ գործողությունների կատարմանն օժանդակությունը.

4) հասարակական կարգի պահպանությունը և հասարակական անվտանգությունը.

4.1) ճանապարհային երթևեկության անվտանգությունը.

5) սեփականության բոլոր ձևերի հավասար պաշտպանությունը.

6) սույն օրենքով նախատեսված սահմաններում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրենց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելիս ~~օգնություն ցույց տալը~~ օժանդակությունը:

Ոստիկանության վրա այլ խնդիրներ կարող են դրվել միայն սույն օրենքով:

(2-րդ հոդվածը խմբ. 01.06.06 ՀՕ-123-Ն, լրաց. 03.06.20 ՀՕ-295-Ն)

Հոդված 3. Ոստիկանության գործունեության սկզբունքները

Ոստիկանության գործունեությունը հիմնվում է օրինականության, անձի իրավունքների և ազատությունների, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության ու հրապարակայնության սկզբունքների վրա:

Ոստիկանությունն իր լիազորություններն~~իրավունքներն~~ իրականացնելիս պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների հարգման և պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, լիազորությունների իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով~~, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ~~:

Ոստիկանության հարկադրական բնույթի լիազորությունների իրականացումը պետք է ուղղված լինի Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակներին, իսկ դրանց հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Ոստիկանությունն իր խնդիրներն իրականացնելիս համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման, այլ իրավապահ մարմինների, ինչպես նաև կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հետ:

Բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի՝ ոստիկանության գործունեությանը միջամտությունն արգելվում է:

(3-րդ հոդվածը խմբ. 01.06.06 ՀՕ-123-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-272-Ն)

Հոդված 4. Ոստիկանության գործունեության իրավական կարգավորումը

Ոստիկանության գործունեությունը կարգավորվում է Սահմանադրությամբ, սույն օրենքով, այլ օրենքներով ու իրավական ակտերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Ոստիկանության գործունեությունը կարգավորող այլ օրենքներով և իրավական ակտերով ~~ոստիկանության վրա դրվող պարտականությունները~~ ոստիկանությանը

վերապահվող լիազորությունները պետք է համապատասխանեն սույն օրենքի 2-րդ հոդվածում թվարկված խնդիրներին:

(4-րդ հոդվածը լրաց. 01.06.06 ՀՕ-123-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-272-Ն)

Հոդված 5. Ոստիկանության գործունեությունը և մարդու անձեռնմխելիության երաշխիքները

(վերնագիրը խմբ. 01.06.06 ՀՕ-123-Ն)

Իր~~Օրենքով իրեն վերապահված~~ լիազորությունների շրջանակներում ոստիկանությունը պաշտպանում է մարդու իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև օրինական շահերը՝ անկախ նրա սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

~~Ոստիկանության գործողությունները չպետք է խախտեն մարդու արժանապատվությունը, կյանքի, պատվի ու բարի համբավի, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության, սեփականության իրավունքը, ինչպես նաև մյուս իրավունքներն ու ազատությունները: Ոստիկանության կողմից մարդուն խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ենթարկվելը պատժվում է օրենքով:~~

Ոստիկանության գործողությունները չպետք է խախտեն մարդու կյանքի, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը, արժանապատվությունը, պատիվն ու բարի համբավը, սեփականության իրավունքը, ինչպես նաև մյուս իրավունքներն ու ազատությունները: Ոստիկանության կողմից մարդուն խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ենթարկվելը առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Ոստիկանության կողմից մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումները թույլատրելի են միայն օրենքով նախատեսված դեպքերում, կարգով և սահմաններում: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Ոստիկանության ծառայողները մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակման ցանկացած դեպքում անմիջապես պարտավոր են նրա համար մատչելի և հասկանալի լեզվով ներկայացնել սահմանափակման հիմքերն ու պատճառները, ծանոթացնել և բացատրել դրանից բխող իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև աջակցել իրավունքների իրացմանը:

Մարդու խնդրանքով իր իրավունքների ու պարտականությունների ծանուցումը կատարվում է գրավոր: Ծանուցման ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը հաստատում է Կառավարությունը: Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումից բխող իրավունքների բանավոր ծանուցման

մասին արձանագրության և մարդու՝ ազատությունից զրկման հետ կապված իրավունքների մասին գրավոր ծանուցման ձևերը հաստատում է ոստիկանության պետը:

~~Ոստիկանությունը պարտավոր է ձերբակալված անձանց իրական հնարավորություն ընձեռել օգտվելու իրավաբանական օգնություն ստանալու իրավունքից, ոստիկանություն բերելու պահից սկսած՝ երեք ժամվա ընթացքում, տեղյակ պահել նրանց հարազատներին, իսկ նրանց բացակայության դեպքում՝ աշխատանքի կամ ուսման վայրի վարչակազմին՝ նրանց գտնվելու վայրի մասին:~~ Ոստիկանությունը պարտավոր է ոստիկանության վարչական շենք մուտք գործելու պահից, սակայն ոչ ուշ, քան անձին ազատությունից փաստացի զրկելուց հետո 3 ժամը լրանալու պահից, ձերբակալված անձին իրական հնարավորություն ընձեռել օգտվելու իրավաբանական օգնություն ստանալու իրավունքից, ինչպես նաև իր ընտրած անձին տեղեկացնել իր գտնվելու վայրի մասին, հաղորդակցվել և տեսակցել փաստաբանի հետ և իր ցանկության դեպքում ենթարկվել բժշկական զննման: Անհրաժեշտության դեպքում ~~միջոցներ են ձեռնարկվում նրանց~~ ոստիկանությունը միջոցներ է ձեռնարկում ձերբակալված անձին բժշկական և (կամ) այլ օգնություն ցույց տալու, ինչպես նաև ձերբակալման կապակցությամբ անձի կամ նրա ընտանիքի անդամների կյանքին, առողջությանը, գույքին սպառնացող վտանգը վերացնելու ուղղությամբ:

Ոստիկանությունը պարտավոր է ձերբակալված անձին իրական հնարավորություն ընձեռել օրենքով նախատեսված դեպքերում օգտվելու Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով՝ մեղադրյալին վերապահված իրավունքներից:

Ոստիկանությունը պարտավոր է մարդուն հնարավորություն ընձեռել ծանոթանալու այն փաստաթղթերին կամ նյութերին, որոնք անմիջականորեն առնչվում են նրա իրավունքներին և ազատություններին, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Ոստիկանությունն իրավասու չէ հավաքելու, պահելու, օգտագործելու և տարածելու մարդու անձնական և ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկություններ, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Ոստիկանության կողմից վարվող էլեկտրոնային շտեմարաններից պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև իրավաբանական անձանց անձնական տվյալներ փոխանցվում են օրենքով ուղղակի նախատեսված դեպքերում: Ոստիկանությունն ապահովում է էլեկտրոնային շտեմարանների հասանելիությունը քրեական հետապնդում իրականացնող մարմինների համար՝ իրենց լիազորությունների շրջանակում տեղեկատվությունն օգտագործելու նպատակով, բացառությամբ պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկություններ պարունակող շտեմարանների, որոնցում ներառված տեղեկությունները կարող են տրամադրվել «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

(5-րդ հոդվածը խմբ. 01.06.06 ՀՕ-123-Ն, 06.12.17 ՀՕ-226-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-272-Ն, լրաց. 31.05.19 ՀՕ-46-Ն)

(5-րդ հոդվածի 6-րդ մասը՝ այն մասով, որով չեն ապահովվում ազատությունից փաստացի զրկված անձանց համար այդ իսկ պահից իրավունքների պաշտպանության՝ սահմանադրորեն նախատեսված շրջանակներում, անհրաժեշտ

իրավական երաշխիքներ, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի պահանջներին հակասող և անվավեր 24.01.17 ՍԴՈ-1339 որոշմամբ)

Հոդված Ոստիկանությունում խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վեր
5.1. աբերմունքի նախականխումը

1. ~~Մարդու իրավունքների պաշտպանության, խոշտանգման~~ Խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի հնարավոր դեպքերի կանխարգելման և բացահայտման նպատակով ոստիկանության ստորաբաժանումների վարչական շենքերի մուտքերն ու ելքերը կահավորվում են տեսագրող, իսկ ոստիկանության ստորաբաժանումների վարչական շենքերում հարցաքննության համար օգտագործվող տարածքները (աշխատասենյակները)՝ տեսաձայնագրող համակարգերով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված սարքերը պետք է տեղակայվեն այնպես, որ հնարավոր լինի տեսագրել ոստիկանության ստորաբաժանումների վարչական շենքեր անձանց մուտք գործելու և ելքի ժամանակը, տեսաձայնագրել ոստիկանության ծառայողների կողմից Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քրեական վարույթին ներգրավվման ենթակա կամ ներգրավված անձանց մասնակցությամբ իրականացվող վարութային գործողությունները~~իրականացվող հարցաքննությունները~~:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տեսագրությունները ոստիկանությունում պահպանվում են երեք ամիս, իսկ տեսաձայնագրությունները՝ երկու տարի:

4. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տեսագրություններն ու տեսաձայնագրությունները տրամադրվում են՝

1) հարցաքննված անձին, ինչպես նաև նրա ներկայացուցչին.

2) քրեական վարույթն իրականացնող մարմնին.

3) Մարդու իրավունքների պաշտպանին՝ իր իրավասությունների սահմաններում սկսված քննարկման շրջանակում.

4) ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի անդամներին:

5. Նախաքննության ~~Նախնական քննության~~ տվյալներ պարունակող տեսաձայնագրությունները (տեսագրությունները) տրամադրվում են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով՝ միայն վարույթն իրականացնող մարմնի գրավոր թույլտվությամբ: Վարույթն իրականացնող մարմնի գրավոր թույլտվությունն ստանալու պարտականությունը կրում է ոստիկանությունը:

6. Սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով նախատեսված անձանց տեսաձայնագրությունները (տեսագրությունները) տրամադրվում են «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ժամկետներում:

7. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տեսագրություններն ու տեսաձայնագրությունները սույն հոդվածի 4-րդ մասով չնախատեսված անձանց կարող են տրամադրվել «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում, կարգով և ժամկետներում:

~~8. Ոստիկանության ստորաբաժանումների վարչական շենքերում հարցաքննության համար օգտագործվող տարածքները (աշխատասենյակները) տեսաձայնագրող համակարգերով կահավորված լինելու դեպքում արգելվում է հարցաքննությունների իրականացումը տեսաձայնագրող համակարգերով չկահավորված այլ տարածքներում (աշխատասենյակներում):~~

9. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակներով իրականացվող տեսաձայնագրությունները ապացուցողական գործողության~~հարցաքննության~~ արդյունքների քրեադատավարական ամրագրման ձև չեն հանդիսանում և քրեական վարույթի~~գործի~~ նյութերին չեն կցվում:

10. Սույն հոդվածով նախատեսված նպատակների համար ոստիկանության ստորաբաժանումներում տեղադրված տեսագրող և տեսաձայնագրող համակարգերի տեխնիկական բնութագրերը, տեսագրությունների և տեսաձայնագրությունների պահպանման, օգտագործման կարգը, ինչպես նաև տեսագրմանն առցանց հետևելու, տեսագրություններին և տեսաձայնագրություններին հասանելիություն ունեցող ոստիկանության ծառայողների շրջանակը սահմանվում են ոստիկանության պետի հրամանով:

(5.1-ին հոդվածը լրաց. 13.12.19 ՀՕ-310-Ն)

Հոդված 10. Ոստիկանության պարտականությունները մարդու անվտանգությունն ապահովելիս և նրա իրավունքներն ու ազատությունները պաշտպանելիս

(վերնագիրը խմբ. 01.06.06 ՀՕ-123-Ն)

Ոստիկանությունը օրենքով սահմանված կարգով և դեպքերում պարտավոր է՝

1) պաշտպանել մարդու կյանքը, առողջությունը, պատիվը, արժանապատվությունը, իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը հանցավոր և այլ ոտնձգություններից.

2) բժշկական կազմակերպություն ներկայացնել~~բերման ենթարկել~~ ոչ հոժարակամ հետազոտությունից և (կամ) բուժումից խուսափող անձանց.

2.1) հոգեբուժական կազմակերպություն ներկայացնել ~~բերման ենթարկել~~ ոչ հոժարակամ հոսպիտալացումից խուսափող անձանց.

3) առողջապահական մարմինների հետ համատեղ իրավախախտումների կանխարգելման նպատակով հսկողություն ապահովել այն անձանց նկատմամբ, ովքեր ունեն հոգեկան առողջության խնդիր, տառապում են գինեմոլությամբ, թմրամոլությամբ, ինչպես նաև շրջապատի համար վտանգ ներկայացնող այլ հիվանդություններով, հոգեկան առողջության խնդիր ունեցող կամ հոգեկան առողջության խնդիր ունենալու

վերաբերյալ կասկածներ առաջացնող անձանց օրենքով սահմանված կարգով հոսպիտալացնելու կամ հետազոտելու միջնորդությամբ դիմել առողջապահական մարմիններ.

3.1) օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձանց, ինչպես նաև անչափահասներին սահմանված կարգով հոգեբուժական հաստատություն հոսպիտալացնելու դեպքում այդ մասին տեղյակ պահել վերջիններիս օրինական ներկայացուցիչներին:

4) ***(կետն ուժը կորցրել է 07.06.19 ՀՕ-66-Ն)***

Ոստիկանությունը պարտավոր է միջոցներ ձեռնարկել հանցագործություններից և այլ իրավախախտումներից, դժբախտ պատահարներից~~դեպքերից~~ տուժած, ինչպես նաև կյանքի կամ առողջության համար վտանգավոր այլ վիճակներում գտնվող մարդկանց օգնություն ցույց տալու համար:

Ոստիկանությունն օրենքով սահմանված դեպքերում պարտավոր է միջոցներ ձեռնարկել օրենքով նախատեսված պաշտպանության ենթակա անձանց կյանքը, առողջությունը և (կամ) գույքը պաշտպանելու ուղղությամբ: ~~Պաշտպանության ենթակա անձանց նկատմամբ ոստիկանության կողմից պաշտպանության միջոցներն իրականացվում են Կառավարության որոշմամբ սահմանված կարգով:~~

(10-րդ հոդվածը խմբ. 01.06.06 ՀՕ-123-Ն, լրաց. 18.11.09 ՀՕ-213-Ն, 09.06.17 ՀՕ-107-Ն, խմբ., լրաց. 09.02.18 ՀՕ-114-Ն, փոփ., լրաց. 07.06.19 ՀՕ-66-Ն, փոփ. 18.06.20 ՀՕ-353-Ն)

Հոդված 10.1. Ոստիկանության պարտականություններն օրենքով պաշտպանության ենթակա անձանց կյանքի, առողջության և (կամ) գույքի պաշտպանությունն ապահովելիս

1. Քրեական դատավարության մասնակից չհանդիսացող և այլ օրենքներով պաշտպանության ենթակա անձանց կյանքի, առողջության և (կամ) գույքի պաշտպանությունն ապահովելիս ոստիկանությունը պարտավոր է՝

1) համագործակցելով այլ իրավասու մարմինների հետ՝ իրականացնել պաշտպանվող անձի անձնական պահպանությունը, նրա բնակարանի կամ այլ գույքի պահպանությունը, պաշտպանվող անձի բնակարանը կամ այլ գույքը սարքավորել հակահրդեհային կամ ազդանշանային տեխնիկական միջոցներով, փոխել նրա բնակարանի կամ անձնական այլ հեռախոսահամարները կամ նրան պատկանող տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշները.

2) պաշտպանվող անձի անձնական անվտանգության ապահովման համար նրան տրամադրել անհատական պաշտպանության միջոցներ, ինչպես նաև նրան հայտնել սպասվող վտանգի մասին.

3) պաշտպանվող անձին ժամանակավոր կամ մշտապես փոխադրել բնակության այլ վայր:

2. Ոստիկանության՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պարտականություններն իրականացնելու հետ կապված հարաբերությունների վրա տարածվում են քրեական

վարույթում հատուկ պաշտպանության միջոցների կիրառման՝ ՀՀ կառավարության սահմանած կարգն ու պայմանները, եթե իրավական այլ ակտերով այլ բան նախատեսված չէ:

(10.1-ին հոդվածը լրաց. 07.06.19 ՀՕ-66-Ն)

Հոդված 11. Ոստիկանության պարտականությունները հանցագործությունների և այլ իրավախախտումների դեմ պայքարելիս

Ոստիկանությունը օրենքով սահմանված կարգով և դեպքերում պարտավոր է՝

1) կանխել և խափանել հանցագործություններն ու այլ իրավախախտումները, հանցանք կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում կատարել ձերբակալում և դրան ուղեկցող անձնական խուզարկություն, մինչև ոստիկանության վարչական շենք բերելն անհապաղ ազատ արձակել իր նախաձեռնությամբ ձերբակալված անձին, եթե վերացել է այդ անձին արգելանքի տակ պահելու անհրաժեշտությունը, ներկայացնել հանցանք կամ բերել ~~բերման ենթարկել հանցանք կամ~~ վարույթ պահանջող այլ իրավախախտում կատարած անձանց, պարզել հանցագործություններ և այլ իրավախախտումներ ծնող պատճառներն ու դրանց նպաստող պայմանները, ձեռնարկել համապատասխան միջոցներ դրանք վերացնելու ուղղությամբ.

2) ձեռնարկել օրենքով նախատեսված միջոցներ հանցագործությունները հայտնաբերելու և բացահայտելու նպատակով~~ուղղությամբ~~.

3) իր լիազորություններն իրականացնելու կապակցությամբ առերևույթ հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու նպատակով այդ մասին հաղորդում ներկայացնել քննիչին կամ դատախազին.

~~3) հարուցել քրեական գործեր, իրականացնել անհետաձգելի քննչական գործողություններ՝ հանցագործություն կատարած անձանց և հանցագործության հետքերը հայտնաբերելու, ամրապնդելու, հանցագործությունը բացահայտելու նպատակով.~~

~~4) հարուցված քրեական գործերով իրականացնել կասկածյալի ձերբակալում և օրենքով նախատեսված այլ գործողություններ, միջոցներ ձեռնարկել հանցագործությամբ պատճառված նյութական վնասի հատուցումն ապահովելու ուղղությամբ.~~

4) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով կատարել գաղտնի քննչական գործողություններ, օժանդակել ապացուցողական և վարութային այլ գործողությունների կատարմանը, պահպանել հանցագործության դեպքի վայրը.

5) հայտնաբերել հանցագործություն կատարած և քննությունից~~հետաքննության, նախաքննության ու դատական մարմիններից~~ թաքնվող կամ~~, քրեական պատասխանատվությունից,~~ պատիժը կրելուց խուսափող անձանց, անհայտ կորած

անձանց, օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ անձանց, ինչպես նաև հանցավոր ճանապարհով ձեռք բերվածհափշտակված գույքը.

6) իրականացնել՝

ա) վարչական իրավախախտումների դեպքերով գործերի վարույթ և վարչական ձերբակալում,

բ) քննությունից, կամ դատից, պատիժը կրելուց խուսափող անձանց ու հանցավոր ճանապարհով ձեռք բերվածհափշտակված գույքի հետախուզում,

գ) պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների պետական և հասարակական մարմինների հետ համապատասխան միջոցառումներ՝ առանց հսկողության թողնված անչափահասների, ինչպես նաև հաշվառման մեջ գտնվող անչափահասների կողմից կատարվող հանցագործությունները կանխելու և անչափահասներին դաստիարակելու ուղղությամբ.

7) աջակցել՝

ա) հանրային ծառայողներին և այլ պաշտոնատար անձանց՝ օրենքով նախատեսված իրենց լիազորությունները պատգամավորներին, պաշտոնատար անձանց իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս, եթե առանձին քաղաքացիներ չեն ենթարկվում նրանցայդ անձանց օրինական պահանջներին կամ խոչընդոտում են նրանց լիազորությունների պաշտոնեական գործունեության իրականացմանը,

բ) ազգային անվտանգության մարմիններին՝ պետական իշխանության դեմ ուղղված ծանր հանցագործությունների դեմ պայքարելիս և ազգային անվտանգության ապահովմաննանվտանգությանն ուղղված այլ միջոցառումներ իրականացնելիս,

գ) զինվորական կոմիսարիատներին՝ զինակոչային հաշվառումներ, հավաքներ և զորակոչեր իրականացնելիս,

դ) դատախազությանը, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական կազմակերպություններին՝ իրենց կանոնադրական գործառույթներն իրականացնելիս պաշտոնեական պարտականությունները կատարելիս.

ե) քրեական վարույթն իրականացնող մարմիններին՝ քննչական և դատավարական գործողությունների կատարման ընթացքում:

Ոստիկանությունը պարտավոր է Կառավարության սահմանած կարգով ընդունել, գրանցել և հաշվառել հանցագործությունների ու այլ իրավախախտումների, պատահարների վերաբերյալ դիմումներն ու հաղորդումները, դրանց տալ համապատասխան ընթացք, պահպանել հանցագործության դեպքի վայրը:

Ոստիկանությունը կրում էՈստիկանությունն իրականացնում է նաև օրենքով սահմանված այլ պարտականություններ:

(11-րդ հոդվածը խմբ. 01.06.06 ՀՕ-123-Ն, փոփ. 19.05.14 ՀՕ-34-Ն, լրաց. 01.03.18 ՀՕ-129-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-272-Ն, լրաց. 03.06.20 ՀՕ-295-Ն)

Հոդված 15. Ոստիկանության պարտականությունները քաղաքացիների և կազմակերպությունների գույքը պահպանելիս

Ոստիկանությունը պարտավոր է՝

1) ապահովել, այդ թվում՝ պայմանագրային հիմունքներով, օբյեկտների և գույքի պետական պահպանությունը, վերահսկել այլ կազմակերպությունների կողմից այդ ուղղությամբ իրականացվող գործունեությունը, հայտնաբերված թերությունների վերացման նպատակով տալ պարտադիր կատարման ենթակա կարգադրագրեր.

2) անհետաձգելի միջոցներ ձեռնարկել իրեն հանձնված տիրազուրկ գույքի, գտանքի և գանձերի պահպանությունն ապահովելու ուղղությամբ, մինչև դրանք համապատասխան պետական մարմիններին~~մարմիններ~~ կամ պաշտոնատար անձանց հանձնելը.

3) ապահովել գտնված և ոստիկանություն հանձնված փաստաթղթերի, իրերի, թանկարժեք և այլ գույքի պահպանությունը, միջոցներ ձեռնարկել օրենքով սահմանված կարգով դրանք օրինական տերերին վերադարձնելու ուղղությամբ:

Ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների, ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների ցանկերը հաստատում է Կառավարությունը:

Ոստիկանության՝ պետական պահպանության գործառույթ իրականացնող ծառայության ռազմականացված ստորաբաժանումների ծառայության կարգը սահմանում է ոստիկանության պետը:

(15-րդ հոդվածը լրաց. 31.05.19 ՀՕ-46-Ն)

~~**Հոդված 17.**~~ ~~**Ոստիկանության պարտականությունները հատուկ հանձնարարություններով հարկադրանքի միջոցներ իրականացնելիս**~~

~~Ոստիկանությունը օրենսդրությամբ սահմանված դեպքերում պարտավոր է՝~~

~~1) կատարել՝~~

~~ա) դատախազի, քննիչի՝ հետախուզական աշխատանքներ և քննչական գործողություններ կատարելու մասին գրավոր հանձնարարությունները, դատախազի ցուցումները,~~

~~բ) դատարանի, դատախազի, քննիչի որոշումները իրենց կանչով ներկայանալուց խուսափող անձանց բերման ենթարկելու կամ հետախուզում հայտարարելու մասին,~~

~~գ) ձերբակալված և կալանավորված անձանց ուղեկցում և պահպանում՝ Կառավարության սահմանած կարգով.~~

~~2) պահել բերման ենթարկված, ձերբակալված, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կալանավորված անձանց.~~

~~3) օժանդակել հարկադիր կատարման ծառայություններին դատական վճիռների և դատավճիռների կատարումն ապահովելիս:~~

~~***(17-րդ հոդվածը խմբ. 01.06.06 ՀՕ-123-Ն, փոփ., խմբ. 29.04.09 ՀՕ-104-Ն, լրաց. 31.05.19 ՀՕ-46-Ն)***~~

Հոդված 17. Ոստիկանության պարտականությունները հատուկ հանձնարարություններով հարկադրանքի միջոցներ իրականացնելիս

1. Ոստիկանությունը պարտավոր է՝

1) կատարել՝

ա. դատախազի՝ ոստիկանության ծառայողի անօրինական գործողությունը դադարեցնելուն կամ որոշումը վերացնելուն և դրանց հետևանքները չեզոքացնելուն ուղղված հանձնարարությունները.

բ. քննիչի՝ նախաքննության համակողմանիությանն ու բնականոն ընթացքի ապահովմանն ուղղված հանձնարարությունները.

գ. ձերբակալված և կալանավորված անձանց ուղեկցում և պահպանում՝ Կառավարության սահմանած կարգով.

2) պահել բերման ենթարկված, ձերբակալված, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կալանավորված անձանց.

3) օժանդակել հարկադիր կատարման ծառայություններին դատական վճիռների և դատավճիռների կատարումն ապահովելիս.

4) աջակցել քննիչին ապացուցողական և վարութային այլ գործողություններ կատարելիս:

Հոդված 19. Ոստիկանության իրավունքները հանցագործությունները և այլ իրավախախտումները կանխելիս

Ոստիկանությունը հանցագործությունները և այլ իրավախախտումները կանխելու նպատակով իրավունք ունի՝

~~1) քաղաքացիներից, օտարերկրյա քաղաքացիներից և քաղաքացիություն չունեցող անձանցից (այսուհետ՝ քաղաքացիներ), ինչպես նաև պաշտոնատար անձանցից պահանջելու դադարեցնել ոստիկանության, պատգամավորների, պատգամավորության թեկնածուների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, պաշտոնատար անձանց՝ օրենսդրությամբ սահմանված լիազորությունների իրականացմանը խոչընդոտող գործողությունները կամ նրանց հեռացնելու տվյալ վայրից.~~

1) պահանջելու դադարեցնել ոստիկանության, հանրային այլ ծառայողների, պաշտոնատար անձանց լիազորությունների, Ազգային ժողովի պատգամավորի, համայնքի ավագանու անդամի և համայնքի ղեկավարի թեկնածուների՝ օրենսդրությամբ սահմանված իրավունքների իրականացմանը խոչընդոտող գործողությունները կամ նման գործողություններ կատարող անձանց հեռացնելու տվյալ վայրից.

2) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ և կազմակերպություններ ներկայացնելու իրավախախտումների կատարման պատճառների ու դրանց նպաստող պայմանների վերացմանն ուղղված միջնորդագրեր ու առաջարկություններ.

3) Կառավարության սահմանած կարգով իրականացնելու վարչական իրավախախտում կատարած, քրեական հետապնդման ենթարկվող~~հանցագործության մեջ մեղադրվող~~, դատապարտված անձանց, ինչպես նաև քաղաքացիներին և կազմակերպություններին պատկանող հատուկ հաշվառման ենթակա առարկաների, սարքավորումների և փաստաթղթերի հաշվառում: Հատուկ հաշվառման ենթակա առարկաների, սարքավորումների և փաստաթղթերի ցանկը հաստատում է Կառավարությունը.

4) ստեղծել և վարել Հայաստանի Հանրապետությունում շրջանառվող փաստաթղթերի նմուշօրինակների միասնական հավաքածու: Հայաստանի Հանրապետությունում շրջանառվող փաստաթղթերի նմուշօրինակների միասնական հավաքածու ստեղծելու, դրա կազմավորման և վարման կարգը հաստատում է Կառավարությունը:

Ոստիկանությունը հանցագործություններ և այլ իրավախախտումներ կանխելու՝ օրենքով իր վրա դրված խնդիրներն իրականացնելիս իրավունք ունի օրենքով սահմանված կարգով և հիմքերով՝

1) հանցագործություն կամ վարույթ պահանջող վարչական իրավախախտում կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի~~կասկածանքի բավարար հիմքերի~~ առկայության դեպքում ստուգելու քաղաքացիների, ինչպես նաև պաշտոնատար անձանց ինքնությունը հավաստող փաստաթղթերը, օրենքով սահմանված դեպքերում ձերբակալել~~բերման ենթարկելու~~ նրանց.

2) քաղաքացիներից, պաշտոնատար անձանցից, կազմակերպություններից պահանջելու և ստանալու անհրաժեշտ բացատրություններ, տվյալներ, տեղեկանքներ, փաստաթղթեր և (կամ) դրանց պատճեններ.

3) մասնակցելու երկաթուղային, օդային, ջրային տրանսպորտի ուղևորների, ձեռքի իրերի և ուղեբեռների ստուգմանը:

Սույն օրենքի իմաստով անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածն առկա է այն դեպքում, երբ՝

1) անձը բռնվել է ենթադրյալ հանցանքը կամ վարչական իրավախախտումը կատարելիս կամ այն կատարելուց անմիջապես հետո.

2) ականատեսն ուղղակի մատնանշում է տվյալ անձին որպես ենթադրյալ հանցանքը կամ իրավախախտումը կատարողի.

3) տվյալ անձի կամ նրա հագուստի կամ նրա կողմից օգտագործվող այլ իրերի վրա, նրա մոտ կամ նրա բնակարանում, ներառյալ՝ տրանսպորտային միջոցում, հայտնաբերվել են ենթադրյալ հանցագործության կամ վարչական իրավախախտման կատարմանը նրա առնչությունը վկայող բացահայտ հետքեր.

Ենթադրյալ հանցագործություն կամ վարչական իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածը կարող է հիմնվել նաև նման կասկածի տեղիք տվող այլ հանգամանքների վրա ևս (տեխնիկական միջոցներով ենթադրյալ հանցագործության կամ վարչական իրավախախտման փաստի արձանագրում, հետախուզման մեջ գտնվող անձի հետ նմանության առկայություն և այլն):

~~Սույն օրենքում օգտագործվող «բավարար հիմքեր» հասկացությունն իր մեջ ներառում է այն դեպքերը, երբ՝~~

~~ա) անձը բռնվել է հանցագործություն կամ վարչական իրավախախտում կատարելիս, կատարելուց անմիջապես հետո,~~

~~բ) ականատեսները, այդ թվում՝ տուժողը, ուղղակի մատնանշում են տվյալ անձին՝ որպես հանցագործությունը կամ վարչական իրավախախտումը կատարողի,~~

~~գ) տվյալ անձի կամ նրա հագուստի վրա, նրա կողմից օգտագործվող այլ իրերի վրա, նրա մոտ կամ նրա բնակարանում կամ տրանսպորտային միջոցում հայտնաբերվել են հանցագործության կամ վարչական իրավախախտման առնչությունը վկայող բացահայտ հետքեր:~~

~~Ոստիկանության ծառայողները կարող են հայտնաբերել նաև անձին հանցագործության կամ այլ իրավախախտման մեջ կասկածելու հիմք տվող այլ տվյալներ (տեխնիկական միջոցներով տրանսպորտի արագությունը կամ վարորդի ոչ սթափ լինելը որոշելու, հետախուզման մեջ գտնվող հանցագործի հետ այս կամ այն անձի նմանության առկայության, ոստիկանության ծառայողին հանկարծակի նկատած անձի կողմից փախուստի փորձ կատարելու դեպքերում և այլն):~~

(19-րդ հոդվածը խմբ. 01.06.06 ՀՕ-123-Ն, խմբ., լրաց. 21.02.07 ՀՕ-74-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-272-Ն, լրաց. 31.05.19 ՀՕ-46-Ն)

Հոդված 20. Ոստիկանության իրավունքները հանցագործություններ հայտնաբերելիս և բացահայտելիս

Ոստիկանությունը հանցագործություններ հայտնաբերելիս և բացահայտելիս իրավունք ունի՝

1) գրանցելու, լուսանկարելու, ձայնագրելու, տեսանկարահանելու հանցագործության կատարման կասկածանքով ~~բերման ենթարկված,~~ ձերբակալված~~, հանցագործության կատարման մեջ մեղադրվող~~ անձանց, ստանալու մատնադրոշմային նմուշներ նրանց ինքնությունը պարզելու կամ նույնացում կատարելու նպատակով, իր գործունեությունը արձանագրելու նպատակով օգտագործելու տեղեկատվական համակարգեր, տեսաձայնագրման, կինո-լուսանկարահանման սարքավորումներ, ինչպես նաև այլ տեխնիկական և հատուկ միջոցներ.

~~2) իր վարույթում գտնվող գործերով և նյութերով ծանուցելու քաղաքացիներին, ինչպես նաև պաշտոնատար անձանց՝ ներկայանալ ոստիկանություն, բերման ենթարկելու առանց հարգելի պատճառների ներկայանալուց խուսափողներին, քննելու հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձանց.~~

~~3) հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձանց ուղարկելու կամ հասցնելու բժշկական հաստատություն՝ նրանց օրգանիզմում ալկոհոլի կամ թմրամիջոցների առկայությունը պարզելու նպատակով, եթե ստուգման արդյունքն անհրաժեշտ է հանցագործության փաստը հաստատելու կամ հերքելու կամ գործն օբյեկտիվորեն քննելու համար.~~

~~4) հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձանց հետապնդելիս հանցագործություն կատարվելու կամ կատարված լինելու, ինչպես նաև դժբախտ պատահարի մասին բավարար տվյալների առկայության դեպքում վթարների, համաճարակների, զանգվածային անկարգությունների ժամանակ քաղաքացիների և հասարակական անվտանգության ապահովման անհրաժեշտության, ինչպես նաև հետաձգում չհանդուրժող այլ դեպքերում մուտք գործելու բնակարաններ, շինություններ, տարածքներ, հողամասեր, այդ թվում՝ արգելքները վերացնելու միջոցով:~~

~~Բնակարան, շինություն, տարածք կամ հողամաս մուտք գործելուց հետո կազմվում է արձանագրություն, որում հստակ նշվում են դրա գտնվելու վայրը, անհրաժեշտ գործողությունները կատարելու ավարտի օրը, ժամը, տարածքում կատարված բոլոր գործողությունները, այդ գործողություններին մասնակցած անձանց անունները, ազգանունները, պաշտոնները, բնակության վայրերը:~~

~~Արձանագրության մեկ օրինակը տրվում կամ ուղարկվում է բնակարանի, շինության, տարածքի կամ հողամասի սեփականատիրոջը կամ նրա լիազորած անձին:~~

~~Եթե ոստիկանությունը բնակարան, շինություն, տարածք կամ հողամաս մուտք է գործել դրա սեփականատիրոջ կամ նրա լիազորած անձի բացակայությամբ, ապա անհրաժեշտ գործողությունները կատարելուց հետո բնակարան, շինություն, տարածք կամ հողամաս մուտք գործած անձանց կողմից պետք է ապահովվի դրա հետագա անվտանգությունը:~~

~~Եթե սույն կետով նախատեսված գործողությունները կատարվել են քաղաքացիների կամ պաշտոնատար անձանց կամքին հակառակ, ապա ոստիկանությունն այդ մասին 24 ժամվա ընթացքում ծանուցում է դատախազին.~~

3) ենթադրյալ հանցագործություն կատարելու անմիջականերեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով ձերբակալված անձին ուղարկելու կամ տեղափոխելու բժշկական հաստատություն՝ նրա օրգանիզմում ալկոհոլի կամ թմրամիջոցների առկայությունը պարզելու նպատակով, եթե ստուգման արդյունքն անհրաժեշտ է ենթադրյալ հանցագործության փաստն արձանագրելու համար.

4) ենթադրյալ հանցագործություն կատարելու անմիջականերեն ծագած հիմնավոր կասկածի հիման վրա անձանց հետապնդելիս, դժբախտ պատահարի մասին բավարար տվյալների առկայության դեպքում, վթարների, համաճարակների, զանգվածային անկարգությունների, ժամանակ, ինչպես նաև անձանց կյանքին կամ առողջությանը անմիջական սպառնացող վտանգի դեպքում, մուտք գործելու բնակարաններ, շինություններ, տարածքներ, հողամասեր, այդ թվում՝ արգելքները վերացնելու միջոցով, եթե դա անհրաժեշտ է պետական անվտանգության, հասարակական կարգի, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով, եթե հետապնդվող նպատակներին հնարավոր չէ հասնել այլ՝ անձի անձնական կյանքի պաշտպանության իրավունքին և սեփականության իրավունքին նվազ միջամտությամբ:

Բնակարան, շինություն, տարածք կամ հողամաս մուտք գործելուց հետո կազմվում է արձանագրություն, որում հստակ նշվում են դրա գտնվելու վայրը, անհրաժեշտ գործողությունները կատարելու ավարտի օրը, ժամը, տարածքում կատարված բոլոր

գործողությունները, այդ գործողություններին մասնակցած անձանց անունները, ազգանունները, պաշտոնները, բնակության վայրերը:

Արձանագրության մեկ օրինակը տրվում կամ ուղարկվում է բնակարանի, շինության, տարածքի կամ հողամասի սեփականատիրոջը կամ նրա լիազորած անձին:

Եթե ոստիկանությունը բնակարան, շինություն, տարածք կամ հողամաս մուտք է գործել դրա սեփականատիրոջ կամ նրա լիազորած անձի բացակայությամբ, ապա անհրաժեշտ գործողությունները կատարելուց հետո բնակարան, շինություն, տարածք կամ հողամաս մուտք գործած անձանց կողմից պետք է ապահովվի դրա հետագա անվտանգությունը:

Եթե սույն կետով նախատեսված գործողությունները կատարվել են քաղաքացիների կամ պաշտոնատար անձանց կամքին հակառակ, ապա ոստիկանությունն այդ մասին 24 ժամվա ընթացքում գրավոր ծանուցում է դատախազին.

~~5) հանցագործության առկայության դեպքում իրականացնելու Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դատավարական գործողություններ.~~

5) առերևույթ հանցագործության առկայության դեպքում օրենքով սահմանված կարգով իրականացնելու օպերատիվ-հետախուզական միջոցառումներ և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով՝ դատավարական գործողություններ.

6) կատարելու փորձաքննություններ՝ քրեական գործերով, ինչպես նաև գիտատեխնիկական հետազոտություններ՝ օպերատիվ-հետախուզական գործունեության նյութերով.

6.1) Կառավարության սահմանած կարգով իրականացնելու քրեագիտական հաշվառումներ.

6.2) կենսաբանական ծագում ունեցող հետքերով ծանր և առանձնապես ծանր, ինչպես նաև սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործություն կատարած անձանց հայտնաբերելու (բացահայտելու) նպատակով իրականացնել կենսաբանական ծագման նմուշներում հայտնաբերված և նույնականացված ԴՆԹ (դեզօքսիռիբոնուկլեինաթթու) բնութագրերի հաշվառումներ:

Հաշվառման ենթակա են հանցագործության դեպքի վայրից վերցված քրեական գործով չպարզված անձանց և մեղադրյալից Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով վերցված նմուշներից դատագենետիկական փորձաքննությունների արդյունքում հայտնաբերված ԴՆԹ բնութագրերը:

Փորձագիտական հիմնարկները դատագենետիկական փորձաքննությունն ավարտելուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր են էլեկտրոնային եղանակով և Կառավարության որոշմամբ սահմանված կարգով ոստիկանությանը տրամադրել դատագենետիկական փորձաքննությունների արդյունքում հայտնաբերված ԴՆԹ բնութագրերը:

ԴՆԹ բնութագրերը պահվում են 80 տարի ժամկետով, բացառությամբ քրեական հետապնդումը դադարեցնելու կամ չիրականացնելու մասին որոշում կայացվելու կամ

արդարացնող հիմքով քրեական ~~գործի~~ վարույթը կարճվելու կամ արդարացման դատավճիռ կայացվելու դեպքերի, որոնց պարագայում ԴՆԹ բնութագիրը ենթակա է ոչնչացման՝ ոստիկանության տեղեկատվական կենտրոնից այդ մասին տեղեկատվությունն ստանալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում: Եթե դեպքի վայրից վերցված ~~քրեական գործով~~ինքնությունը չպարզված անձի ԴՆԹ բնութագիրը նույնացվում է քրեական վարույթի~~գործի~~ քննությամբ հետագայում պարզված և հանցագործության մեջ չմեղադրվող անձի հետ, ապա այդ մասին ոստիկանությունում տեղեկատվություն ստանալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, տվյալ ԴՆԹ բնութագիրը ոչնչացվում է:

ԴՆԹ բնութագրերի փոխանցման, մշակման և հաշվառման էլեկտրոնային համակարգերը պետք է ունենան Կառավարության որոշմամբ սահմանված բավարար պաշտպանվածության մակարդակ: Կառավարության որոշմամբ սահմանված բավարար պաշտպանվածության մակարդակ չունեցող էլեկտրոնային համակարգերի միջոցով ԴՆԹ բնութագրերի հաշվառումն արգելվում է:

ԴՆԹ բնութագրերը չեն կարող օգտագործվել սույն կետով չնախատեսված նպատակներով:

Սույն կետի պահանջների նկատմամբ հսկողությունն իրականացնում է անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.

7) անհրաժեշտության դեպքերում օգտվելու կազմակերպությունների և քաղաքացիների տրանսպորտի և կապի միջոցներից՝ օրենսդրությամբ սահմանված կարգով նյութական ծախսերի փոխհատուցմամբ:

Ոստիկանությունն իրավունք ունի իրականացնելու նաև ~~օպերատիվ-հետախուզական և այլ~~ օրենքներով իրեն վերապահված այլ գործողություններ:

(20-րդ հոդվածը խմբ. 01.06.06 ՀՕ-123-Ն, լրաց. 17.12.14 ՀՕ-220-Ն, 06.12.17 ՀՕ-226-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-272-Ն)

Հոդված 21. Ոստիկանության իրավունքները վարչական իրավախախտումները կանխելիս և բացահայտելիս

Ոստիկանությունը, վարչական իրավախախտումները կանխելիս և բացահայտելիս, իրավունք ունի՝

1) կազմել վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ.

2) իրականացնել վարչական ձերբակալում, կիրառել վարչական իրավախախտումների մասին օրենքով նախատեսված այլ միջոցներ.

3) ձերբակալել ոստիկանության պահպանության ենթակա տարածքներ և օբյեկտներ ապօրինի մուտք գործած կամ մուտք գործելու փորձ կատարող անձանց, ստուգել նրանց ինքնությունը հավաստող փաստաթղթերը, վերցնել բացատրություններ, կատարել անձնական զննություն, ինչպես նաև այն իրերի ու առարկաների, տրանսպորտային

միջոցների զննություն, որոնց օգնությամբ այդ տարածքները կամ օբյեկտները մուտք են գործել կամ մուտք գործելու փորձ են կատարել.

4) ձերբակալել և համապատասխան հիմնարկներ տեղափոխել~~հասցնել~~ նշանակված բժշկական ու դաստիարակչական բնույթի հարկադրական միջոցներից խուսափող անձանց.

5) քաղաքացիներից, ինչպես նաև պաշտոնատար անձանցից օրենքով սահմանված կարգով վերցնել ձերբակալման, անձնական կամ իրերի զննության ժամանակ հայտնաբերված ակնհայտ կեղծիքի հատկանիշներ պարունակող փաստաթղթերը, առանց համապատասխան թույլտվության պահվող քաղաքացիական շրջանառությունից հանված առարկաները, նյութերը և իրերը.

6) կատարել փորձաքննություններ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով:

(21-րդ հոդվածը փոփ. 01.06.06 ՀՕ-123-Ն)

Հոդված 22. Ոստիկանության իրավունքները հասարակական կարգը պահպանելիս

(վերնագիրը խմբ. 01.06.06 ՀՕ-123-Ն, փոփ. 07.02.18 ՀՕ-99-Ն)

Հասարակական կարգը պահպանելիս ոստիկանությունն իրավունք ունի՝

1) բժշկական հիմնարկներ կամ ոստիկանության հատուկ ընդունիչ կայաններ հասցնելու և մինչև սթափվելն այնտեղ պահելու հարբած վիճակում հասարակական վայրերում գտնվող այն անձանց, ովքեր կորցրել են ինքնուրույն տեղաշարժվելու կամ շրջապատում կողմնորոշվելու ունակությունը կամ կարող են վնաս պատճառել շրջապատին: Կարող է վերոնշյալ հիմնարկներ կամ կայաններ հասցնել և պահել նաև բնակության մշտական վայր չունեցող թափառաշրջիկներին կամ ինքնությունը չպարզված անձանց.

2) հասարակական վտանգը կանխելու նպատակով ոստիկանության հատուկ ընդունիչ կայաններ կամ հոգեբուժական կազմակերպություններ հասցնելու հոգեկան առողջության խնդիր ունեցող կամ հոգեկան առողջության խնդիր ունենալու վերաբերյալ կասկածներ առաջացնող անձանց:

Անձին օրենքով սահմանված կարգով ոստիկանության բաժին բերելուց հետո վերջինիս հոգեկան առողջության խնդիր ունենալու վերաբերյալ կասկածներ առաջանալու դեպքում ոստիկանության համապատասխան ստորաբաժանման ղեկավարը կամ նրա տեղակալը անձին հետազոտելու կամ հոսպիտալացնելու միջնորդությամբ դիմում է առողջապահական մարմիններ, և շտապ օգնության մեքենաների միջոցով ոստիկանության ծառայողների ուղեկցությամբ կազմակերպվում է տվյալ անձի տեղափոխումը համապատասխան առողջապահական կազմակերպություն:

Ոստիկանության համապատասխան ստորաբաժանման ղեկավարի կամ տեղակալի կողմից անձին հետազոտելու և (կամ) բուժելու կամ հոսպիտալացնելու միջնորդությամբ առողջապահական մարմիններ դիմելու և դրա հետևանքով վերջիններիս կողմից համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու յուրաքանչյուր որոշակի դեպքում

անձին անազատության մեջ պահելու ժամկետը չպետք է գերազանցի 72 ժամը: Նշված ժամկետում անձի հոսպիտալացման անհրաժեշտության մասնագիտական հիմնավորվածությունը հաստատվելու դեպքում նրա հոգեբուժական հիվանդանոցային ոչ հոժարակամ հոսպիտալացման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով.

3) վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով բժշկական հիմնարկներ հասցնելու վարակիչ հիվանդություններով տառապող անձանց.

4) մինչև դաստիարակչական հսկողության հանձնելը կամ իրավասու այլ մարմին ներկայացնելը պահելու առանց հսկողության թողնված անչափահասներին.

5) արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով հատուկ կացարան հասցնելու և մինչև համապատասխան որոշման կայացումն այնտեղ պահելու օրենքով սահմանված կարգի խախտմամբ Հայաստանի Հանրապետություն մուտք գործած, Հայաստանի Հանրապետությունում ապօրինի գտնվող օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց.

6) ժամանակավորապես սահմանափակելու կամ արգելելու տրանսպորտի երթևեկությունը և հետիոտնի շարժը, ինչպես նաև պարտավորեցնելու նրանց մնալ որոշակի տարածքներում կամ օբյեկտներում, փողոցներում և ճանապարհներին՝ իրենց կյանքի, առողջության կամ գույքի պաշտպանության ապահովման կամ ապացուցողական կամ վարութային այլ գործողություններ~~քննչական և օպերատիվ հետախուզական գործողություններ~~ կատարելու համար՝ այդ մասին անմիջապես տեղեկացնելով վերադասության կարգով:

Տրանսպորտի երթևեկությունը և հետիոտնի շարժը կարող են ժամանակավորապես սահմանափակվել նաև հավաքների և հանրային միջոցառումների անցկացման ժամանակ.

7) մարզական, մշակութային և այլ հանրային միջոցառումների անցկացման ժամանակ, բացի բարեգործական և պետական մարմինների կողմից իրականացվող միջոցառումներից, պայմանագրային հիմունքներով ապահովելու հասարակական կարգը և ճանապարհային երթևեկության անվտանգությունը:

Հատուկ ընդունիչ կայաններում պահվող անձանց վրա տարածվում են ձերբակալված անձանց՝ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի առաջին մասի 1-12-րդ ու 14-րդ կետերով, երրորդ մասով և 14-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները:

Հանցագործությունները կանխելիս կամ բացահայտելիս, հասարակական կարգի պահպանությունը (այդ թվում՝ ճանապարհային երթևեկության անվտանգությունը) ապահովելիս ոստիկանությունը կարող է հանրային վայրերում օգտագործել անշարժ տեսանկարահանող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցներ: Հանրային վայրերում տեխնիկական միջոցներով վերահսկողություն իրականացնելիս այդ մասին հրապարակվում է նախազգուշացում: Սույն մասով նախատեսված նախազգուշացումը կատարվում է վերահսկողության մասին տեսանելի վայրերում ցուցանակներ տեղադրելու

և տեխնիկական միջոցներով վերահսկվող փողոցների հասցեները կամ վերահսկվող տարածքների նկարագրերը ոստիկանության պաշտոնական կայքէջում հրապարակելու միջոցով: Հանրային վայրերում անշարժ տեսանկարահանող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցները տեղադրվում են ոստիկանության համապատասխան տարածքային մարմնի ղեկավարի կամ ճանապարհային ոստիկանության պետի որոշմամբ՝ հաշվի առնելով տվյալ տարածքում կատարվող հանցագործությունների և հասարակական կարգի խախտումների կանխարգելման անհրաժեշտությունը՝ համաձայնեցնելով համապատասխան համայնքի ղեկավարի հետ: Մասնավոր սեփականություն հանդիսացող հանրային վայրերում անշարժ տեսանկարահանող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցները տեղադրվում, կամ սեփականատիրոջ տեխնիկական միջոցներին ոստիկանության համար հասանելիությունն ապահովվում է սեփականատիրոջ համաձայնությամբ՝ նրա հետ կնքված պայմանագրով:

Հանցագործությունները կանխելիս կամ բացահայտելիս, հասարակական կարգի պահպանությունն ապահովելիս ոստիկանության ծառայողները կարող են օգտագործել շարժական տեսաձայնագրող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցներ ոստիկանության տվյալ լիազորությունների իրականացմամբ սահմանափակվող ժամկետում: Տեսաձայնագրող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցն ամրացվում է ոստիկանության ծառայողի համազգեստին կամ գտնվում է ոստիկանության ծառայողի ձեռքում կամ ոստիկանության ծառայողական տրանսպորտային միջոցում: Ոստիկանության ծառայողները պետք է տեսաձայնագրող և լուսանկարահանող տեխնիկական միջոցները կրեն տեսանելի ձևով, բացառությամբ ~~գաղտնի~~ օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների իրականացման դեպքերի: Սույն մասով նախատեսված տեսաձայնագրող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցներով ոչ գաղտնի վերահսկողության մասին ոստիկանության ծառայողը պարտավոր է բանավոր նախազգուշացնել իր հետ անմիջականորեն հաղորդակցվող անձին:

Տեսաձայնագրումը, տեսանկարահանումը և լուսանկարահանումն իրականացվում են միայն ծառայողական (ոչ անձնական) տեխնիկական միջոցներով:

Տեխնիկական միջոցով իրավախախտում հայտնաբերելու կամ ամրագրելու դեպքում ոստիկանության ծառայողն իրավունք չունի դադարեցնելու կամ ընդհատելու տեսանկարահանումը կամ տեսաձայնագրումը:

Տեսանյութերը կամ լուսանկարները ոչնչացվում են դրանց ամրագրումից յոթ օր հետո , բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Տեսանյութերի կամ լուսանկարների ոչնչացումը ոստիկանության համապատասխան տարածքային մարմնի ղեկավարի կամ ճանապարհային ոստիկանության պետի որոշմամբ տարաժամկետվում է, եթե՝

1) տեխնիկական միջոցներով հայտնաբերվել կամ ամրագրվել է հանցագործության դեպք կամ հասարակական կարգի (այդ թվում՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ոլորտի օրենսդրության) խախտում.

2) անձանց կողմից բողոքարկվել են ոստիկանության ծառայողների գործողությունները, կամ ոստիկանության ծառայողի կողմից թույլ տրված

իրավախախտման մասին լրատվության միջոցի հաղորդման հիման վրա նշանակվել է ծառայողական քննություն.

3) անձինք իրենց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանն աջակցելու խնդրանքով դիմել են ոստիկանություն:

Տեսանյութերը կամ լուսանկարները կարող են օգտագործվել հանցագործությունների կամ հասարակական կարգի խախտումների դեպքերի քննության, ոստիկանության ծառայողների գործողությունների վերաբերյալ բողոքները քննելու, անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն աջակցելու, հասարակական հնչեղություն ստացած դեպքերով ոստիկանության ծառայողի նկատմամբ իրականացված ծառայողական քննության ավարտից հետո վերջինիս վերագրվող կարգապահական խախտման դեպքի կամ խախտման հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը հրապարակայնացնելու նպատակով՝ առանց այլ անձանց նույնականացնող տվյալների հրապարակման կամ դրանց նվազագույն հրապարակմամբ:

Տեսանյութերը կամ լուսանկարներն այլ նպատակներով օգտագործելը (այդ թվում՝ հրապարակելը) արգելվում է:

Եթե տեխնիկական միջոցներով հայտնաբերվում կամ ամրագրվում է իրավախախտում, ապա տեսանյութերը կամ լուսանկարները ոստիկանությունում պահվում են մինչև հանցագործության կամ հասարակական կարգի խախտման դեպքի քննության (այդ թվում՝ բողոքարկման վարույթի) կամ ծառայողական քննության ավարտը, եթե օրենքով այլ ժամկետ նախատեսված չէ: Անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանն աջակցելու դեպքում տեսանյութերը կամ լուսանկարները պահվում են մինչև անձի խախտված իրավունքների և օրինական շահերի վերականգնումը, բայց ոչ ավելի, քան վեց ամիս ժամկետով:

Անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն աջակցելու դեպքում տեսանյութերը կամ լուսանկարները ծանոթացվում կամ տրամադրվում են աջակցության խնդրանքով ոստիկանություն դիմած անձին՝ այլ անձանց տվյալներն ապանձնավորելուց հետո՝ աջակցության համար պիտանի, անհրաժեշտ և չափավոր ծավալով՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Տեսանյութերի և լուսանկարների պահոց մուտք գործելու և տվյալներին ծանոթանալու իրավունք ունեցող ոստիկանության պաշտոնատար անձանց ցանկը, տվյալներից օգտվելու, տվյալները պահպանելու, ոչնչացնելու կարգը, տեսանկարահանող, լուսանկարահանող, տեսաձայնագրող տեխնիկական միջոցների ցանկը, շարժական տեխնիկական միջոցներ օգտագործելու վերաբերյալ որոշում կայացնող պաշտոնատար անձանց շրջանակը սահմանվում են ոստիկանության պետի հրամանով:

(22-րդ հոդվածը խմբ. 01.06.06 ՀՕ-123-Ն, լրաց. 18.11.09 ՀՕ-213-Ն, փոփ. 14.04.11 ՀՕ-78-Ն, փոփ., լրաց. 07.02.18 ՀՕ-99-Ն, 09.02.18 ՀՕ-114-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-272-Ն, փոփ., լրաց. 13.12.19 ՀՕ-310-Ն, խմբ., փոփ. 18.06.20 ՀՕ-353-Ն)

Հոդված 23. Ոստիկանության իրավունքները զենքի պահպանման և օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս

~~Ոստիկանությունն իրավունք ունի, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, վերահսկողություն իրականացնել զենքի, ռազմամթերքի և պայթուցիկ նյութերի պահպանման, օգտագործման, փոխադրման, տեղափոխման, ինչպես նաև դրանց շրջանառությունն իրականացնող կազմակերպությունների նկատմամբ:~~

~~Անցկացնել զենքի զննություն՝ առևտրի, պահման և ոչնչացման վայրերում: Սահմանված կարգով անհատույց առգրավել և օրենսդրությամբ սահմանված կարգով ոչնչացնել հանրապետության տարածքում շրջանառությունն արգելված զենքը:~~

~~Ապօրինի զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր պահելու, տեղափոխելու մասին ստույգ տվյալների առկայության դեպքում իրականացնել իրերի, բեռների, ծանրոցների, տրանսպորտային միջոցների զննում, խուզարկում և այդպիսի առարկաների առգրավում:~~

1. Ոստիկանությունն օրենքով սահմանված կարգով իրավունք ունի.

1) վերահսկողություն իրականացնել զենքի, զինամթերքի և պայթուցիկ նյութերի պահպանման, օգտագործման, փոխադրման, տեղափոխման, ինչպես նաև դրանց շրջանառությունն իրականացնող կազմակերպությունների նկատմամբ.

2) անցկացնել զենքի զննություն՝ առևտրի, պահման և ոչնչացման վայրերում: Սահմանված կարգով անհատույց առգրավել և ոչնչացնել հանրապետության տարածքում շրջանառությունն արգելված զենքը.

3) ապօրինի զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր պահելու, տեղափոխելու մասին ստույգ տվյալների առկայության դեպքում իրականացնել իրերի, բեռների, ծանրոցների, տրանսպորտային միջոցների զննում և այդպիսի առարկաների առգրավում:

Հոդված 24. Ոստիկանության իրավունքները ճանապարհային երթևեկության անվտանգությունն ապահովելիս

Ճանապարհային երթևեկության անվտանգությանն սպառնալու կամ ճանապարհային երթևեկության կանոնները խախտվելու դեպքերում, ինչպես նաև տրանսպորտային միջոցների հետախուզման, տրանսպորտային միջոցներով ապօրինի բեռներ, հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույք~~, առարկաներ~~, հանցագործության գործիքներ և հանցագործության հետքեր կրող այլ առարկաներ, ինչպես նաև հետախուզվող անձանց տեղափոխման մասին տեղեկություններ կամ հիմնավոր կասկածներ առկա լինելու դեպքերում ոստիկանությունն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով՝

1) կանգնեցնել տրանսպորտային միջոցները, ստուգել ճանապարհային երթևեկությանը մասնակցելու իրավունք վերապահող և փոխադրվող բեռի փաստաթղթերը.

2) օրենքով սահմանված դեպքերում և կարգով արգելել տրանսպորտային միջոցների և դրանց կցորդների շահագործումը.

3) վարորդների կամ քաղաքացիների ներկայությամբ զննել տրանսպորտային միջոցները, ինչպես նաև փոխադրվող բեռը՝ քաղաքացիական շրջանառությունից հանված առարկաներ, նյութեր և իրեր, հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույք~~, առարկաներ~~, հանցագործության գործիքներ և հանցագործության հետքեր կրող այլ առարկաներ տեղափոխելու մասին տեղեկություններ կամ հիմնավոր կասկածներ առկա լինելու դեպքերում.

4) տրանսպորտային միջոցները վարելուց մեկուսացնել այն անձանց, որոնց նկատմամբ բավարար հիմքեր կան ենթադրելու ոչ սթափ վիճակում գտնվելու մասին, ինչպես նաև տրանսպորտային միջոց վարելու իրավունքը հավաստող փաստաթղթեր չունեցող անձանց՝ արգելանքի տակ դնելով տրանսպորտային միջոցները և ապահովելով ուղևորների տեղափոխումն ու բեռների պահպանումը.

5) արգելանքի տակ դնել հետախուզման մեջ գտնվող, ինչպես նաև մարդու կյանքին կամ առողջությանը վնաս պատճառած ճանապարհատրանսպորտային պատահարի առաջացման պատճառ հանդիսացած կամ դրան մասնակից ավտոտրանսպորտային միջոցները.

6) սահմանափակել կամ արգելել փողոցներում և ճանապարհներին կատարվող շինարարական, վերանորոգման և այլ աշխատանքները, ինչպես նաև տրանսպորտի երթևեկությունը, եթե ճանապարհային երթևեկության անվտանգության պահանջներն ապահովված չեն.

7) իր իրավասության սահմաններում հսկողություն իրականացնել ճանապարհային երթևեկության կազմակերպման, տեխնիկական միջոցների տեղադրման և շահագործման աշխատանքների համար նախատեսված պահանջների պահպանման նկատմամբ:

(մասն ուժը կորցրել է 21.02.07 ՀՕ-74-Ն)

Ոստիկանությունը սույն հոդվածի 1-ին, 3-րդ և 6-րդ կետերով նախատեսված լիազորություններից օգտվում է նաև լիազորած մարմնի կողմից հատուկ միջոցառումներ իրականացնելիս:

(24-րդ հոդվածը լրաց. 01.06.06 ՀՕ-123-Ն, խմբ., փոփ., լրաց. 21.02.07 ՀՕ-74-Ն, լրաց. 17.12.14 ՀՕ-220-Ն)

Հոդված 27. Ոստիկանության իրավունքները զինծառայողների կատարած հանցագործությունների և վարչական իրավախախտումների դեմ պայքարելիս

1. Ոստիկանությունն իրավունք ունի.

1) հանցանք կատարած լինելու անմիջական ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում ձերբակալել զորամասերի, զինվորական այլ կազմակերպությունների տարածքներից դուրս ենթադրյալ հանցագործություն կատարած

զինծառայողներին, կատարել դրան ուղեկցող անձնական խուզարկություն և այդ մասին անհապաղ հայտնել իրավասու դատախազին.

2) օրենքով նախատեսված դեպքերում ձերբակալել զորամասերի, զինվորական այլ կազմակերպությունների տարածքներից դուրս ենթադրյալ վարչական իրավախախտում կատարելու մեջ կասկածվող զինծառայողներին:

~~Ոստիկանությունն իրավունք ունի ձերբակալել զորամասերի, զինվորական այլ կազմակերպությունների տարածքներից դուրս հանցագործություն, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև՝ վարչական իրավախախտում կատարելու մեջ կասկածվող զինծառայողներին, հարուցել քրեական գործեր, կատարել անհետաձգելի քննչական գործողություններ և օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում հանձնել ըստ ենթակայության:~~

(27-րդ հոդվածը լրաց. 21.12.06 ՀՕ-16-Ն)

Հոդված 28. Ոստիկանության իրավունքները քաղաքացիներին, ինչպես նաև պաշտոնատար անձանց և զանգվածային լրատվության միջոցները հանցագործությունների և վարչական իրավախախտումների դեմ տարվող պայքարում ներգրավելով

Ոստիկանությունն իրավունք ունի՝

1) քաղաքացիներից, ինչպես նաև պաշտոնատար անձանցից և կազմակերպություններից անհատույց ստանալ կոնկրետ հանցագործությանն~~հանցագործության հետ~~ առնչվող տեղեկատվություն, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար օրենքով սահմանված է հատուկ կարգ.

2) անհատույց օգտագործել պետությանը պատկանող զանգվածային լրատվության միջոցները՝ հանցագործության կամ այլ իրավախախտման հանգամանքների պարզաբանման, ինչպես նաև հանցագործություն կամ այլ իրավախախտում կատարած և քննությունից~~հետաքննությունից, նախաքննությունից, դատաքննությունից~~ խուսափող, ինչպես նաև անհայտ կորած անձանց հայտնաբերելու համար.

3) ներգրավել քաղաքացիներին, ինչպես նաև պաշտոնատար անձանց, կազմակերպություններին, վերջիններիս համաձայնությամբ, հանցագործությունը կամ վարչական իրավախախտումը բացահայտելու, հանցագործին կամ իրավախախտողին ձերբակալելու գործում, այդ աշխատանքին օժանդակելու և կամովին ստանձնած պարտավորությունները պատշաճ կատարելու համար խրախուսել նրանց:

Հոդված 29. Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների ու հրազենի գործադրման հիմքերը, պայմանները և սահմանները

Ոստիկանության ծառայողը որպես բացառիկ միջոց գործադրում է ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով,

այնքանով, որքանով դա անհրաժեշտ է իր պարտականությունները կատարելու համար, եթե այլ միջոցներով այդ պարտականությունների կատարումը հնարավոր չէ ապահովել:

Ոստիկանության ծառայողները պարտավոր են անցնել հատուկ պատրաստություն, որի շրջանակում սովորում են բանակցություններ վարելու և համոզելու հմտություններ՝ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրումը սահմանափակելու նպատակով, ինչպես նաև պարբերաբար անցնել ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրման անհրաժեշտություն առաջացնող իրադրություններում գործելու ունակությունը որոշող ստուգումներ: Համապատասխան պատրաստականություն անցնելուց հետո ոստիկանության ծառայողն իրավունք ունի պահելու և կրելու հրազեն ու հատուկ միջոցներ:

Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրման ընտրությունը կատարելիս ոստիկանության ծառայողն առաջնորդվում է՝ ելնելով ստեղծված իրավիճակից, իրավախախտման բնույթից ու իրավախախտի անձից:

Ոստիկանության ծառայողը ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն գործադրելուց առաջ պարտավոր է նախազգուշացնել դրանք գործադրելու մասին՝ բավարար ժամանակ տրամադրելով օրինական պահանջները կատարելու և իրավախախտումը դադարեցնելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց գործադրման հապաղումն անմիջական սպառնալիք է ստեղծում քաղաքացիների կամ ոստիկանության ծառայողի կյանքի ու առողջության համար կամ կարող է առաջացնել այլ ծանր հետևանքներ, կամ երբ ստեղծված իրավիճակում այդպիսի նախազգուշացումն անհնար է:

Ոստիկանության ծառայողը պարտավոր է նաև՝

1) ձգտել, որ իրավախախտին պատճառվող վնասը հասցվի նվազագույնի.

2) ցուցաբերել կամ ապահովել մարմնական վնասվածքներ ստացած անձանց առաջին բուժօգնություն՝ բժշկական կազմակերպություններին անհապաղ հայտնելով մարմնական վնասվածքների ու մահվան բոլոր դեպքերի մասին.

3) ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ, հրազեն գործադրելու (օգտագործելու) հետևանքով վիրավորվածների կամ մահվան բոլոր դեպքերի, ինչպես նաև հատուկ միջոցներ (բացառությամբ ձեռնաշղթաների և ռետինե մահակի) և հրազեն գործադրելու (օգտագործելու) յուրաքանչյուր դեպքի մասին անհապաղ զեկուցել վերադասության կարգով:

Ոստիկանությունը պարտավոր է սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքերի մասին սեղմ ժամկետում հայտնել տուժածների մերձավոր ազգականներին:

Օրենքով չնախատեսված դեպքերում ոստիկանության ծառայողի կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրումը կամ սահմանների անցումով դրանց գործադրումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն~~պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով~~:

Ոստիկանության պետը ոստիկանության ծառայողի կողմից ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ, հրազեն գործադրելու (օգտագործելու) հետևանքով վիրավորվածների կամ մահվան բոլոր դեպքերի մասին անհապաղ տեղեկացնում է դատախազին:

Սույն հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով, 8-րդ մասով և սույն օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերում տեղեկացումը կատարվում է գրավոր՝ նշելով ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների, հրազենի գործադրման անհրաժեշտությունը փաստող հանգամանքները և իրավական հիմքերը, այն անձանց շրջանակը, որոնց նկատմամբ գործադրվել են դրանք, գործադրված հատուկ միջոցների, հրազենի և ռազմամթերքի տեսակը և քանակը, մարմնական վնասվածքներ ստացած անձանց առաջին բուժօգնությանն ուղղված միջոցառումները, մարմնական վնասվածքներ ստացած անձանց կամ մահացածներին տեղափոխելու վայրերը, եթե տեղափոխումն իրականացրել են ոստիկանության ծառայողները:

(29-րդ հոդվածը լրաց., փոփ. 01.06.06 ՀՕ-123-Ն, խմբ., լրաց. 07.04.09 ՀՕ-94-Ն, 22.12.10 ՀՕ-7-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-272-Ն)

Հոդված 38. Ոստիկանության ծառայողի իրավական ապահովության պետական երաշխիքները

(վերնագիրը փոփ. 01.06.06 ՀՕ-123-Ն)

Ոստիկանության ծառայողը գործադիր իշխանության ներկայացուցիչ է և գտնվում է օրենքի ու պետության պաշտպանության ներքո:

Ոստիկանության ծառայողի օրինական պահանջների կատարումը պարտադիր է բոլոր քաղաքացիների և պաշտոնատար անձանց համար: Դրանք չկատարելը կամ ոստիկանության ծառայողի պարտականությունների կատարմանը խոչընդոտող գործողություններն առաջացնում են պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

Ոստիկանության ծառայողը պատասխանատվություն չի կրում սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրմամբ հանցագործություն կատարած անձին պատճառած ֆիզիկական կամ նյութական վնասի համար:

Սույն օրենքով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում գործող ոստիկանության ծառայողը ենթակա չէ պատասխանատվության՝ ձեռնարկություններին, հիմնարկներին, կազմակերպություններին և քաղաքացիներին պատճառած վնասի համար, եթե չեն խախտվել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները: Այդ վնասը հատուցվում է պետության հաշվին:

Ոստիկանության ծառայողի գործունեության վրա տարածվում են օրենքով սահմանված անհրաժեշտ պաշտպանության, ծայրահեղ անհրաժեշտության, հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու, ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի, հիմնավորված ռիսկի և հրաման կամ կարգադրություն կատարելու կանոնները:

Ոստիկանության ծառայողն իր պարտականությունները կատարելիս ենթարկվում է միայն իր անմիջական և ուղղակի պետերին, և ոչ ոք իրավասու չէ միջամտելու նրա օրինական գործողություններին, բացի օրենքով ուղղակիորեն լիազորված անձանցից: Ոչ

ոք իրավունք չունի ստիպել ոստիկանության ծառայողին կատարելու այլ՝ սույն օրենքով իրեն չվերապահված պարտականություններ:

Ղեկավարներից (անմիջական կամ ուղղակի) կամ այլ լիազորված պաշտոնատար անձանցից օրենքին հակասող ակնհայտ անօրինական հրամաններ, հրահանգներ և կարգադրություններ ստանալիս ոստիկանության ծառայողը պարտավոր է ղեկավարվել միայն օրենքի պահանջներով՝ այդ մասին տեղյակ պահելով վերադասին:

Ակնհայտ անօրինական հրամանով-, հանձնարարությամբ կամ կարգադրությամբ դիտավորյալ հանցանք կատարած ոստիկանության ծառայողները, ինչպես նաև անօրինական կարգադրություն, հանձնարարություն կամ հրաման տվող պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում ընդհանուր հիմունքներով, իսկ ակնհայտ անօրինական հրամանը , հանձնարարությունը կամ կարգադրությունը չկատարելը բացառում է պատասխանատվությունը:

Հանցագործության կատարման կասկածանքով ձերբակալված կամ կալանավորված ոստիկանության ծառայողները պահվում են առանձնացված կալանատներում և մեկուսարաններում:

Ոստիկանության բոլոր ծառայողները ենթակա են կյանքի պարտադիր պետական ապահովագրման՝ համապատասխան բյուջետային միջոցների հաշվին: Ոստիկանության ծառայողների ապահովագրության և ապահովագրական գումարների վճարման կարգն ու պայմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

(38-րդ հոդվածը փոփ. 01.06.06 ՀՕ-123-Ն)

Հոդված 42. Ոստիկանության գործունեության նկատմամբ վերահսկողությունը և հսկողությունը

Ոստիկանության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է վարչապետը:

(պարբերությունն ուժը կորցրել է 16.12.16 ՀՕ-12-Ն)

Ոստիկանությունում ներգերատեսչական հսկողությունն իրականացվում է ոստիկանության պետի սահմանած կարգով:

~~Ոստիկանության օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:~~

Ոստիկանության կողմից իրականացվող օպերատիվ-հետախուզական գործունեության և հետաքննության նկատմամբ հսկողությունն ու վերահսկողությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

~~Պետական այլ մարմիններն ու կազմակերպություններն իրավասու չեն միջամտելու ոստիկանության օպերատիվ-հետախուզական և քրեադատավարական գործունեությանը, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությանը:~~

(42-րդ հոդվածը խմբ. 01.06.06 ՀՕ-123-Ն, փոփ. 16.12.16 ՀՕ-12-Ն, փոփ., խմբ. 23.03.18 ՀՕ-272-Ն)

~~**Հոդված 42[1]. Ոստիկանության գործունեության հսկողությունը**~~

~~Ոստիկանության կողմից կատարվող հետաքննության օրինականության նկատմամբ հսկողությունն իրականացնում են դատախազության մարմինները՝ օրենքով սահմանված կարգով:~~

~~*(42[1]-րդ հոդվածը լրաց. 01.06.06 ՀՕ-123-Ն, փոփ. 19.05.14 ՀՕ-34-Ն)*~~

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 28. Անձին՝ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառումը մերժելու հիմքերը

1. Անձի որպես անհատ ձեռնարկատիրոջ հաշվառումը մերժվում է, եթե՝

1) նա արդեն հաշվառված է որպես անհատ ձեռնարկատեր.

2) նրա ներկայացրած փաստաթղթերը կամ տեղեկատվությունը ամբողջական չեն.

3) նա օրենքով սահմանված կարգով զրկվել է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքից, և դատվածությունը ~~սահմանված կարգով հանված կամ մարված չէ~~մարված կամ վերացված չէ:

2. Որպես անհատ ձեռնարկատեր՝ անձի հաշվառումն աննպատակահարմարության շարժառիթով մերժել չի թույլատրվում:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված թերության առկայության դեպքում անձին անմիջապես հնարավորություն է տրվում շտկելու կամ լրացնելու ներկայացված փաստաթղթերը, որից հետո իրականացվում է հաշվառումը:

4. Եթե անձը հրաժարվում է շտկել կամ լրացնել ներկայացված փաստաթղթերը, ապա անձի դիմումն ընդունելու օրվանից հետո՝ երկօրյա ժամկետում, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կամ 3-րդ կետով նախատեսված դեպքում դիմումը անմիջապես գրավոր մերժվում է՝ մերժման հիմք(եր)ի պարտադիր նշումով:

5. Հաշվառման մերժման մասին որոշումը հաստատվում է գործակալության էլեկտրոնային ստորագրությամբ և ուղարկվում է անձի նշած էլեկտրոնային փոստի հասցեով (անձի կողմից էլեկտրոնային փոստի հասցե տրամադրելու դեպքում): Մերժման մասին որոշումը հասանելի է դառնում նաև համացանցում՝ տեղեկատվական համակարգում համապատասխան ծածկագիրը մուտքագրելու պայմանով:

Հոդված 36. Իրավաբանական անձանց պետական գրանցման մերժման հիմքերը և կարգը

1. Իրավաբանական անձի գրանցումը մերժելու հիմքերն են՝

1) իրավաբանական անձի կազմավորման՝ օրենքով սահմանված կարգի խախտումը.

2) սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված փաստաթղթերը չներկայացնելը.

3) ներկայացված փաստաթղթերի անհամապատասխանությունն օրենքին կամ իրավաբանական անձի ներկայացրած այլ փաստաթղթերին, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասում նշված դեպքի.

4) նոր գրանցվող (ստեղծվող) առևտրային կազմակերպության հիմնադրի, ինչպես նաև գործադիր մարմնի ղեկավարի՝ օրենքով սահմանված կարգով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկված և դատվածությունը~~՝ սահմանված կարգով հանված կամ մարված չլինելը~~մարված կամ վերացված չլինելը.

5) անվանման անհամապատասխանությունը օրենքով սահմանված պահանջներին, եթե անվանման գրանցումը մերժվել է, և անձը չի ներկայացրել այլ անվանում.

6) ռեդոմիցիլացման նպատակով դիմել է այն պետության իրավաբանական անձ, որը նշված է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պետությունների ցանկում, որոնց իրավաբանական անձինք չեն կարող ռեդոմիցիլացվել Հայաստանի Հանրապետության տարածքում:

2. Առևտրային կազմակերպությունների կանոնադրության անհամապատասխանությունն օրենքին հիմք չէ իրավաբանական անձի պետական գրանցումը մերժելու համար:

3. Իրավաբանական անձի գրանցումն այն ստեղծելու աննպատակահարմարության շարժառիթով մերժելն արգելվում է:

4. Իրավաբանական անձի գրանցումը մերժելու հիմքեր հայտնաբերելու դեպքում փաստաթղթերն ընդունելու օրվանից սույն օրենքի 35-րդ հոդվածով նախատեսված ժամկետներում գրանցումը գրավոր մերժվում է՝ մերժման հիմք(եր)ի պարտադիր նշումով: Եթե սույն օրենքով, առանձին կազմակերպական-իրավական ձև ունեցող իրավաբանական անձանց վերաբերյալ համապատասխան օրենքներով կամ այլ օրենքներով սահմանված են պետական գրանցման այլ ժամկետներ, ապա մերժումը կարող է կատարվել այդ ժամկետներում:

5. Պետական գրանցումը մերժելու դեպքում մերժման համար հիմք համարվող փաստաթղթերը, ինչպես նաև վճարված պետական տուրքը և սույն օրենքով նախատեսված այլ վճարները չեն վերադարձվում:

6. Իրավաբանական անձի պետական գրանցման մերժումը պետք է լինի պատճառաբանված և հղում պարունակի օրենքի այն կոնկրետ նորմերին, որոնց պահանջները խախտվել են իրավաբանական անձը ստեղծելիս, կամ որոնց հակասում է ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը:

7. Իրավաբանական անձի գրանցման մերժումը ստորագրվում է գործակալության աշխատակցի կողմից էլեկտրոնային ստորագրության միջոցով, և մերժման մասին էլեկտրոնային փաստաթուղթն ուղարկվում է անձի տրամադրած էլեկտրոնային փոստի հասցեին, ինչպես նաև հասանելի է դառնում համացանցում՝ տեղեկատվական համակարգում համապատասխան ծածկագիրը մուտքագրելու պայմանով:

8. Հասարակական միավորումների, հիմնադրամների, ինչպես նաև իրավաբանական անձանց վերակազմակերպմամբ (բացառությամբ վերակազմավորման դեպքերի) պայմանավորված պետական գրանցման մերժման մասին որոշումը թղթային կրիչի վրա կամ էլեկտրոնային ստորագրության միջոցով ստորագրում է գործակալության ղեկավարը:

9. Մերժման մասին որոշումը ընդունված է համարվում այն դիմողի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու կամ համացանցում հասանելի դառնալու պահից:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 16. Պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակելը և ազատելը

1. Գործադիր մարմնի պաշտոնում կարող է նշանակվել բարձրագույն կրթություն ունեցող՝ Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացին, որն ունի հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

1.1. Պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակվում են մրցույթով:

1.2. Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Հարցազրույցի ամբողջ ընթացքը տեսանկարահանվում է:

1.3. Պետական կազմակերպության գործադիր մարմնի թափուր պաշտոնը համալրելու համար անցկացվող մրցույթի թեստավորման փուլը հաղթահարած մասնակիցները հարցազրույցի ժամանակ մրցութային հանձնաժողով են ներկայացնում համապատասխան պետական կազմակերպության զարգացման և բարեփոխման իրենց մշակած հայեցակարգը:

1.4. Պետական կազմակերպությունների գործադիր մարմինների մրցույթի, ընտրության (նշանակման) ընդհանուր կարգը և չափորոշիչները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

1.5. Մինչև գործադիր մարմնի թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարելը և անցկացնելը պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձը թափուր պաշտոնում

ժամանակավոր պաշտոնակատար է նշանակում սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները բավարարող անձի կամ կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված լինելու դեպքում՝ գործադիր մարմնի տեղակալին մինչև վեց ամիս ժամկետով:

1.6. Եթե գործադիր մարմնի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթը համարվում է չկայացած, ապա ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման ժամկետը կարող է երկարաձգվել պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձի որոշմամբ՝ սույն հոդվածի 1.5-րդ մասով սահմանված ժամկետը չգերազանցող ժամկետով:

1.7. Պետական կազմակերպության գործադիր մարմնի թափուր պաշտոնը կարող է ժամանակավորապես զբաղեցնել տվյալ պաշտոնի համար հայտարարված մրցույթի հավակնորդներին ներկայացվող պահանջները բավարարող անձը:

1.8. Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձը, պահպանելով սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում որոշակի ժամկետով կատարում է նշանակում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի՝

ա) հղիության և ծննդաբերության արձակուրդի դեպքում.

բ) մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի դեպքում.

գ) պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու դեպքում.

դ) իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարինության դեպքում.

ե) օրենքով սահմանված այլ դեպքերում:

2. Գործադիր մարմնի պաշտոնում չի կարող նշանակվել այն անձը՝

ա) որը դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը մարված կամ վերացված չէ~~հանված չէ~~.

բ) որին օրենքի համաձայն արգելվել է ղեկավար պաշտոններ զբաղեցնել.

գ) որը նախընթաց երեք տարիների ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և իրենց պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար:

3. Գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ, եթե՝

ա) նա դիմում է այդ մասին.

բ) լրացել է նրա 65 տարին.

գ) նա իր գրավոր համաձայնությամբ ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում կամ անցել է իր պաշտոնի հետ անհամատեղելի այլ աշխատանքի.

դ) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով նա ավելի քան չորս ամիս անընդմեջ չի ներկայացել աշխատանքի.

ե) նա ավելի քան երեք օր անընդմեջ անհարգելի պատճառներով չի ներկայացել աշխատանքի.

զ) նա նշանակվել է օրենքի պահանջների խախտմամբ, կամ առաջ են եկել սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված հանգամանքները.

է) նա իր գործառույթներն իրականացնելիս պետական կազմակերպությանը կամ պետությանն իր մեղքով հասցրել է վնաս, որի գումարը գերազանցում է պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի մեկ տոկոսը.

ը) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նա ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած.

թ) օրինական ուժի մեջ է մտել նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը.

ժ) նա կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.

ժա) դատական կարգով նրա ղեկավարած պետական կազմակերպությունը ճանաչվել է սնանկ, կամ այն ունի դատական կարգով որոշված և դատարանի կողմից համապատասխան վճիռն ընդունվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, իր մեղքով չկատարված գույքային պարտավորություն.

ժբ) պետական կազմակերպության կողմից վճարման ենթակա հարկերը կամ պարտադիր այլ վճարները իր մեղքով՝ սահմանված ժամկետից հետո հաշվետու ժամանակաշրջանում չի վճարել.

ժգ) մեկ տարվա ընթացքում օրենսդրության խախտման համար ենթարկվել է կրկնակի կարգապահական պատասխանատվության.

ժդ) առկա են օրենքով սահմանված այլ հիմքեր:

4. Գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարում են նրա մահվամբ:

5. Սույն հոդվածի 3-րդ կետի «բ», «գ», «ը», «թ», «ժ», «ժբ» և «ժգ» ենթակետերով նախատեսված դեպքերում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են համապատասխան իրադարձությունը տեղի ունենալու կամ համապատասխան որոշումը, վճիռը կամ դատավճիռն ուժի մեջ մտնելու հաջորդող օրը:

Սույն հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված դեպքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են դիմումում նշանակված օրվանից:

Սույն հոդվածի 4-րդ կետում նախատեսված դեպքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են մահվան պահից:

Սույն հոդվածի 3-րդ կետի այլ ենթակետերով նախատեսված դեպքերում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են համապատասխան իրադարձությանը հաջորդող մեկ ամսվա ընթացքում:

6. Բարձրագույն ուսումնական հաստատությունների ռեկտորների ընտրություններն իրականացվում են «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

7. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության գործադիր մարմնի պաշտոնում ընտրությունը (նշանակումը) իրականացվում է «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և դրանից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերին համապատասխան:

8. Հանրակրթության ոլորտի պետական ուսումնական հաստատության գործադիր մարմնի պաշտոնում ընտրությունը (նշանակումը) իրականացվում է «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և դրանից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերին համապատասխան:

(16-րդ հոդվածը լրաց. 04.06.02 ՀՕ-357-Ն, 04.02.04 ՀՕ-33-Ն, փոփ. 24.10.07 ՀՕ-227-Ն, 05.02.13 ՀՕ-1-Ն, խմբ., լրաց., փոփ. 09.12.20 ՀՕ-490-Ն, լրաց. 01.07.21 ՀՕ-287-Ն, խմբ. 10.12.21 ՀՕ-392-Ն)

(09.12.20 ՀՕ-490-Ն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, Կառավարությունը սահմանում է պետական կազմակերպությունների գործադիր մարմինների մրցույթի, ընտրության (նշանակման) ընդհանուր կարգը և չափորոշիչները:)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 3. Ստուգումների նպատակը և անցկացման կարգը

1. Ստուգման նպատակը տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտում օրենքի և այլ իրավական ակտերի հիման վրա պետական մարմիններին ներկայացված կամ հրապարակված հաշվետվությունների արժանահավատությունը պարզելը, Հայաստանի Հանրապետության օրենքների ու այլ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողություն իրականացնելը և տնտեսավարող սուբյեկտի գույքային իրավունքները պաշտպանելը, իսկ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան նշանակված ստուգումների դեպքում նաև տնտեսավարող սուբյեկտի գործունեության հետ կապված առանձին տարրերի փաստացի իրավիճակը պարզելն է:

1.1. Բոլոր ստուգումները, բացառությամբ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի, նյութական պահուստի օրենսդրության պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված ստուգումների, ինչպես նաև Հայաստանի

Հանրապետության պետական բյուջեի կատարման ուղղությամբ տարվող աշխատանքների՝ ներառյալ պետական պատվերի տեղադրման (գնումների գործընթացի) ճշտության և օրինականության նկատմամբ հսկողությունը, անցկացվում են բացառապես ստուգաթերթերի հիման վրա, որոնք հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ստուգաթերթերը մշակվում են յուրաքանչյուր համապատասխան ոլորտի և գործունեության տեսակի համար՝ հիմնվելով ստուգում իրականացնող յուրաքանչյուր մարմնի հսկողության ոլորտի և աշխատանքի առանձնահատկությունների վրա:

Ստուգաթերթի հարցերն ընդգրկում են տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված այն պահանջների սպառիչ ցանկը, որոնց խախտումը կարող է վնաս հասցնել մարդու կյանքին կամ առողջությանը, կենդանիներին, շրջակա միջավայրին, քաղաքացիների, իրավաբանական անձանց կամ պետության գույքային իրավունքներին:

Ստուգաթերթերի հարցերը ձևավորվում են նվազագույն բավարարության սկզբունքի համաձայն և չեն ընդգրկում այն պահանջները, որոնց պահպանումը չի նպաստում տնտեսավարող սուբյեկտի գործունեությունից առաջացող ռիսկերի նվազեցմանը:

Ստուգաթերթերի հարցերը չեն կարող անմիջականորեն հղում պարունակել նորմատիվ իրավական ակտերին: Հարցի ձևակերպման համար հիմք հանդիսացող իրավական նորմերը նշվում են առանձին սյունակով՝ յուրաքանչյուր հարցի դիմաց:

Ստուգաթերթերը պարտադիր կարգով տեղադրվում են ստուգում իրականացնող համապատասխան մարմինների պաշտոնական ինտերնետային կայքերում:

2. Ստուգումն սկսելուց առաջ համապատասխան պետական մարմնի ղեկավարը (փոխարինող պաշտոնատար անձը) ստուգում իրականացնելու մասին հրապարակում է հրաման կամ հանձնարարագիր, որտեղ նշվում են ստուգում իրականացնող մարմնի անվանումը, ստուգվող տնտեսավարող սուբյեկտի լրիվ անվանումը, իսկ քաղաքաշինության բնագավառում իրականացվող ստուգումների դեպքում՝ ստուգման ենթակա քաղաքաշինական օբյեկտի անվանումը, ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը, ստուգաթերթով նախատեսված այն հարցերի շրջանակը, որոնք անհրաժեշտ է պարզաբանել տվյալ ստուգման ընթացքում (Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի, նյութական պահուստի օրենսդրության պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված ստուգումների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման ուղղությամբ տարվող աշխատանքների՝ ներառյալ պետական պատվերի տեղադրման (գնումների գործընթացի) ճշտության և օրինականության նկատմամբ հսկողության դեպքերում ստուգման հարցերը), ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանը, ստուգման նպատակը, ժամկետը, ստուգման իրավական հիմքերը, սույն օրենքի 4-րդ հոդվածի 3.1-ին մասով նախատեսված դեպքերում՝ նաև ստուգումն անցկացնելու անհրաժեշտությունը հիմնավորող հանգամանքները, իսկ նույն մասով նախատեսված դիմում կամ տեղեկատվություն ստանալու դեպքերում՝ նաև դրանք տրամադրողի տվյալները: Հրամանում կամ հանձնարարագրում չնշված պաշտոնատար

անձինք չեն կարող մասնակցել ստուգմանը: Ծառայողական պարտականությունները կատարելու անհնարինության պատճառով ստուգումն իրականացնող պաշտոնատար անձին այլ անձով փոխարինելու դեպքում փոփոխությունը կատարվում է հրամանով, որի մասին տնտեսավարող սուբյեկտը ծանուցվում է սույն հոդվածով սահմանված կարգով:

(պարբերությունը հանվել է 21.12.17 ՀՕ-299-Ն)

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ըստ անհրաժեշտության կամ անօրինական աշխատանքի բացահայտմանն ուղղված ստուգումների դեպքում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի որոշմամբ հրամանի կամ հանձնարարագրի տրման լիազորությունը կարող է փոխանցվել Հայաստանի Հանրապետության աշխատանքի պետական տեսչության պետին:

(պարբերությունն ուժը կորցրել է 07.12.11 ՀՕ-309-Ն)

3. Հրամանի կամ հանձնարարագրի երկու օրինակը, ստուգումն սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին, բացառությամբ արտադրական կանեփի արտադրության, արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի ոլորտում օրինական շրջանառության նկատմամբ, վիճակախաղերի, շահումով խաղերի և գրավատների կազմակերպման համապատասխան լիցենզիա (թույլտվություն) ստացած կազմակերպիչների կողմից գործունեության իրականացման համար նախատեսված պարտադիր պահանջների պահպանման, շրջակա միջավայրի պահպանության (բնապահպանության) ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի՝ օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ունեցող անձի կողմից շրջակա միջավայրի և ընդերքօգտագործման օրենսդրության, այդ թվում՝ ընդերքօգտագործման նախագծերի, պայմանագրերի, ծրագրերի և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման պետական փորձաքննական եզրակացության պահանջների և պայմանների կատարման կամ պահպանման նկատմամբ, չափագիտական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման, հարգադրոշմման, մանրածախ առուվաճառքի, թանկարժեք մետաղների զտարկման, բանկային ոսկու, ստանդարտացված ձուլակտորների արտադրության նկատմամբ և օտարվող ապրանքների չափագիտական վերահսկողության իրականացման, Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կողմից ժամկետանց ապրանքների, բացառությամբ սննդամթերքի վաճառքի, ինչպես նաև նորմատիվ փաստաթղթերի պահանջներին արտադրանքի, բացառությամբ սննդամթերքի ծառայությունների, բացառությամբ հանրային սննդի ոլորտի համապատասխանության վերահսկողության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից առանց պայմանագրի կնքման աշխատող պահելու կամ աշխատանքային պայմանագրում Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերով նախատեսված պայմանները չներառելու դեպքերի բացահայտմանն ուղղված դեպքերում իրականացվող

ստուգումների, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կամ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից ըստ անհրաժեշտության իրականացվող ստուգումների և (կամ) բնապահպանական տեսչական մարմինների, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կողմից ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտներում իրականացվող ստուգումների, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից դեղերի շրջանառության ոլորտում օրենքով նախատեսված գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներում, «Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքից բխող պարտավորությունների կատարման ստուգումների, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող լիցենզավորված անձանց մոտ՝ արյան, դրա բաղադրամասերի որակի, անվտանգության և փոխներարկումային բժշկական օգնության և սպասարկման գործունեության մասով իրականացվող ստուգումների և պետական հիգիենիկ ու հակահամաճարակային ծառայության մարմինների կողմից բնակչության ջրամատակարարման և ջրօգտագործման, քիմիական նյութերի և կենսաբանական միջոցների կիրառման, դպրոցական և նախադպրոցական հիմնարկների ու բնակավայրերի բարվոք սանիտարական վիճակի նկատմամբ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության՝ անասնաբուժական պետական տեսչության մարմինների կողմից կենդանական ծագման մթերքի և հումքի, կերերի և լրացակերերի վերամշակման, պահպանման, տեղափոխման և իրացման, կենդանիների պահվածքի, տեղափոխման, իրացման, սպանդի գործընթացներում անասնաբուժասանիտարական անվտանգության, Հայաստանի Հանրապետության անասնաբուժության բնագավառի օրենսդրության, կենդանիների հիվանդությունների, կենդանիների և մարդկանց համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերացման միջոցառումների կազմակերպման և իրականացման խախտումների բացահայտմանն ուղղված դեպքերում, բույսերի կարանտինի և երկրագործության պետական տեսչության մարմինների կողմից կարանտինային վնասատուների, բույսերի հիվանդությունների և մոլախոտերի դեմ պայքարի աշխատանքների նկատմամբ, կարանտինային ստուգման և համապատասխան մշակման չենթարկված արտասահմանյան երկրներից բերված նյութերը սահմանային երկաթուղային կայարաններից, ավտոկայարաններից, օդանավակայաններից և սահմանային այլ կետերից արտահանման նկատմամբ, հողօգտագործողների կողմից ոչ կարանտինային մոլախոտերի դեմ պայքարի ուղղությամբ միջոցներ չձեռնարկելու նկատմամբ, ժամկետանց, անորակ և արտադրությունից դուրս եկած բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների նկատմամբ, ինչպես նաև համապատասխան անվանացանկում չընդգրկված և ոչ թույլատրելի պայմաններում վաճառվող, հողում և բուսական ծագում ունեցող մթերքներում թունանյութերի և պարարտանյութերի թույլատրելի մնացորդային առավելագույն քանակների գերազանցման նկատմամբ գյուղատնտեսության ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի կազմում գործող

համապատասխան պետական տեսչության կողմից առանց անհրաժեշտ տեխնոլոգիական սարքավորումների և համապատասխան տեխնոլոգիական գործընթացներ իրականացնելու, սննդամթերքի արտադրության, վերամշակման և իրացման փուլերում օգտագործվող տրանսպորտային միջոցներին, արտադրամասերին, պահեստային և այլ տարածքներին ներկայացվող պահանջների և կանոնների պահպանման, սննդամթերքի արտադրության համար օգտագործվող պարենային հումքին, ջրին, օժանդակ նյութերին, սննդային հավելումներին, սննդամթերքի հետ շփվող նյութերին և վերամշակված սննդամթերքին և դրանց պահման պայմաններին ներկայացվող պահանջների, ախտահանող նյութերի և կրծողների ու վնասատուների դեմ պայքարի միջոցների օգտագործմանը ներկայացվող պահանջների և դրանց պահման պայմանների, մակնշմանը ներկայացվող պահանջների ապահովման, սննդամթերքի անվտանգության, հրդեհապայթունավտանգ շարժական օբյեկտներում հրդեհային անվտանգության հետ առնչվող օրենքների և այդ օրենքների հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի կիրառման խախտումների բացահայտմանն ուղղված դեպքերում, իրականացվող ստուգումների: Վերջինս պարտավոր է ստորագրել 1 օրինակի վրա՝ հաստատելով, որ ծանուցված է ստուգման անցկացման մասին: Ստորագրված օրինակը վերադարձվում է ստուգող պետական մարմնի պաշտոնատար անձին:

Չափագիտական վերահսկողություն կարող է իրականացվել նաև առանց ստուգման հրամանի նախապես ծանուցման:

4. Ստուգումը կատարող պաշտոնատար անձը (անձինք) ստուգումն իրականացնելու մասին հրամանում կամ հանձնարարագրում նշված նպատակի շրջանակներից դուրս գալու իրավունք չունի (չունեն):

Ստուգում իրականացնող անձինք, բացառությամբ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի, նյութական պահուստի օրենսդրության պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված ստուգումների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման ուղղությամբ տարվող աշխատանքների՝ ներառյալ պետական պատվերի տեղադրման (գնումների գործընթացի) ճշտության և օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող անձինք, պետք է պատասխանեն բացառապես տվյալ գործունեության համար նախատեսված ստուգաթերթում ընդգրկված հարցերին և ստուգեն դրանք կարգավորող նորմերի կատարման պահանջները:

5. Ստուգման ընթացքում նոր հանգամանքներ և անհրաժեշտություն առաջանալու դեպքում ստուգման նպատակներն ու շրջանակները կարող է փոփոխել համապատասխան պետական մարմինը՝ ստուգում կատարող պաշտոնատար անձի (անձանց) գրավոր հիմնավորմամբ, իսկ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան նշանակված ստուգումների դեպքում՝ ~~հետաքննության մարմինը կամ~~ քննիչը՝ պատճառաբանված որոշմամբ: Փոփոխման մասին գրավոր տեղեկացվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող անձին՝ նրան ներկայացնելով նախկին հրամանին կամ հանձնարարագրին կից նոր հրամանը կամ հանձնարարագիրը:

(3-րդ հոդվածը փոփ. 03.04.01 ՀՕ-172, 14.12.01 ՀՕ-282, 06.11.02 ՀՕ-453-Ն, 11.12.02 ՀՕ-480-Ն, 25.12.03 ՀՕ-68-Ն, 14.12.04 ՀՕ-186-Ն, 24.12.04 ՀՕ-53-Ն, 08.07.05 ՀՕ-150-Ն, 08.07.05 ՀՕ-152-Ն, 11.11.05 ՀՕ-218-Ն, 08.12.05 ՀՕ-250-Ն, լրաց. 23.05.06 ՀՕ-84-Ն, 07.07.06 ՀՕ-162-Ն, 27.11.06 ՀՕ-195-Ն, փոփ. 22.02.07 ՀՕ-108-Ն, 24.10.07 ՀՕ-237-Ն, լրաց. 13.11.07 ՀՕ-265-Ն, փոփ. 06.12.07 ՀՕ-297-Ն, լրաց. 21.08.08 ՀՕ-144-Ն, փոփ., լրաց. 04.02.10 ՀՕ-17-Ն, 23.06.11 ՀՕ-243-Ն, լրաց. 15.11.11 ՀՕ-276-Ն, փոփ. 07.12.11 ՀՕ-309-Ն, 22.06.12 ՀՕ-168-Ն, լրաց., փոփ. 19.12.12 ՀՕ-242-Ն, լրաց. 30.09.13 ՀՕ-108-Ն, 21.06.14 ՀՕ-130-Ն, 20.11.14 ՀՕ-179-Ն, փոփ. 07.05.15 ՀՕ-40-Ն, 16.05.16 ՀՕ-85-Ն, 17.05.16 ՀՕ-92-Ն, 17.11.17 ՀՕ-205-Ն, 21.12.17 ՀՕ-299-Ն, 21.03.18 ՀՕ-195-Ն, լրաց., փոփ. 19.11.19 ՀՕ-220-Ն, լրաց. 04.03.20 ՀՕ-131-Ն, 09.07.20 ՀՕ-369-Ն, փոփ., լրաց. 03.03.21 ՀՕ-93-Ն, լրաց. 01.07.21 ՀՕ-290-Ն, 26.05.21 ՀՕ-232-Ն)

Հոդված 4. Ստուգման ժամկետները

1. Տնտեսավարող սուբյեկտի մոտ մեկ ստուգման ժամկետը կարող է սահմանվել ոչ ավելի, քան 15 անընդմեջ աշխատանքային օր, ընդ որում, ստուգման առաջին օր է համարվում ստուգումը փաստացի սկսելու օրը: Ստուգումը փաստացի սկսելու օր է համարվում ստուգվող օբյեկտում պահվող ստուգման մատյանում համապատասխան գրառում կատարելու օրը:

Տնտեսավարող սուբյեկտի ստուգման մատյանը պարունակում է տեղեկություններ՝ տարվա ընթացքում կատարվող ստուգումների, ստուգումն իրականացնող համապատասխան պետական մարմնի, ստուգող պաշտոնատար անձանց կազմի, ստուգման հարցերի, նպատակի, ժամկետների մասին: ***(նախադասությունը հանվել է 07.05.15 ՀՕ-40-Ն)***

2. Ստուգման ժամկետը չպետք է գերազանցի ստուգում իրականացնելու մասին համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) հրամանում կամ հանձնարարագրում նշված ժամկետը: Անհրաժեշտության դեպքում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի գրավոր հիմնավորմամբ՝ համապատասխան պետական մարմնի ղեկավարի (փոխարինող պաշտոնատար անձի) հրամանով կամ հանձնարարագրով, սույն հոդվածի 1-ին կետով սահմանված ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 10 անընդմեջ աշխատանքային օր, իսկ ստուգվող ժամանակաշրջանի որևէ ֆինանսական տարվա արդյունքով 3,0 մլրդ դրամ և ավելի իրացման շրջանառության կամ համախառն եկամուտ հայտարարագրած տնտեսավարող սուբյեկտների մոտ մինչև 75 անընդմեջ աշխատանքային օր: Դրա մասին պետք է տեղեկացվի ստուգվող օբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող անձին: Ստուգման ընթացքում առանձին տեղեկությունների ճշտման անհրաժեշտություն առաջանալու կամ ստուգմանն առնչվող փաստաթղթերը ~~հետաքննության, նախաքննության կամ դատարանի վճռի~~ քննիչի որոշման կամ դատական ակտի հիման վրա առգրավված լինելու կամ տարերային աղետի պատճառով կամ ստուգման իրականացումն անհնարին դարձնող այլ անկանխատեսելի հանգամանքի բերմամբ ստուգում իրականացնող

պաշտոնատար անձի (անձանց) գրավոր զեկուցագրի հիման վրա ստուգում իրականացնելու մասին հրաման տվող պաշտոնատար անձի հրամանով ստուգման ընթացքը կասեցվում է՝ մինչև կասեցման հիմքի վերացումը, բայց ոչ ավելի, քան 90 աշխատանքային օրով, իսկ օտարերկրյա պետություններ և քրեական վարույթ իրականացնող մարմիններ հարցումներ կատարելու դեպքում՝ հարցման պատասխանը ստանալուց հետո, ինչպես նաև ստուգմանն առնչվող փաստաթղթերը ~~հետաքննության, նախաքննության կամ դատարանի վճռի~~ քննիչի որոշման կամ դատական ակտի հիման վրա առգրավված լինելու դեպքում՝ դրանք վերադարձվելուց հետո ոչ ավելի, քան 10 աշխատանքային օրով: Ստուգման փաստացի ժամկետի ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 30 անընդմեջ աշխատանքային օրը, իսկ ստուգվող ժամանակաշրջանի որևէ ֆինանսական տարվա արդյունքով 3,0 մլրդ դրամ և ավելի իրացման շրջանառություն կամ համախառն եկամուտ հայտարարագրած տնտեսավարող սուբյեկտների մոտ՝ 90 աշխատանքային օրը (չհաշված կասեցման ժամկետը):

Ստուգման ժամկետը երկարաձգող կամ կասեցնող կամ կասեցման ժամկետը երկարաձգող կամ կասեցված ստուգումը վերսկսելու ակտն ուժի մեջ է մտնում ստուգվող սուբյեկտին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Միևնույն պետական մարմնի կողմից միևնույն տնտեսավարող սուբյեկտում և միևնույն բնագավառում ստուգումները՝ կախված տնտեսավարող սուբյեկտի ռիսկայնության աստիճանից, իսկ քաղաքաշինության բնագավառում իրականացվող ստուգումների դեպքում՝ միևնույն քաղաքաշինական օբյեկտում՝ կախված քաղաքաշինական օբյեկտի ռիսկայնության աստիճանից, իրականացվում են հետևյալ հաճախականությամբ՝

1) բարձր ռիսկայնության սուբյեկտների մոտ, իսկ քաղաքաշինության բնագավառում իրականացվող ստուգումների դեպքում՝ քաղաքաշինական օբյեկտներում՝ ոչ ավելի հաճախ, քան տարին 1 անգամ.

2) միջին ռիսկայնության սուբյեկտների մոտ, իսկ քաղաքաշինության բնագավառում իրականացվող ստուգումների դեպքում՝ քաղաքաշինական օբյեկտներում՝ ոչ ավելի հաճախ, քան 3 տարին 1 անգամ.

3) ցածր ռիսկայնության սուբյեկտների մոտ, իսկ քաղաքաշինության բնագավառում իրականացվող ստուգումների դեպքում՝ քաղաքաշինական օբյեկտներում՝ ոչ ավելի հաճախ, քան 5 տարին 1 անգամ:

Սույն մասով սահմանված տարիներով հաշվարկվող ժամկետը լրանում է ժամկետի վերջին տարվա համապատասխան ամսին և ամսաթվին:

Յուրաքանչյուր տարվա ստուգումների տարեկան ծրագիրը հաստատելիս և (կամ) փոփոխություններ կատարելիս սույն մասով սահմանված ստուգումների հաճախականությունը կիրառվում է՝ ելնելով ծրագրի հաստատման և (կամ) փոփոխությունների կատարման տարվա արդյունքներով տնտեսավարող սուբյեկտների, իսկ քաղաքաշինության բնագավառում իրականացվող ստուգումների դեպքում՝ քաղաքաշինական օբյեկտների ռիսկայնության աստիճաններից:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է այն կազմակերպությունների ցանկը, որոնցում, կախված վերջիններիս գործունեության

ոլորտի՝ հանրության և պետության համար կենսական նշանակությունից, տվյալ ոլորտը վերահսկող ստուգում իրականացնող պետական մարմինների կողմից ստուգումներ, բացառության կարգով, կարող են իրականացվել վեց ամիսը մեկ անգամ:

Ստուգում իրականացնող մարմինն իրավունք ունի մեկ տարվա ընթացքում մեկից ավելի անգամ ստուգումներ իրականացնելու քաղաքաշինական օբյեկտներում և ճանապարհաշինական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ, որոնցում պետական սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացվում է քաղաքաշինական գործունեություն՝ այդ ծրագրերով նախատեսված աշխատանքների ողջ ժամանակահատվածում՝ դրանց կատարման որակի նկատմամբ վերահսկողությունն ապահովելու նպատակով:

3.1. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված սահմանափակումները չեն տարածվում այն դեպքերի վրա, երբ՝

1) լրացել է ստուգում իրականացնող անձի կամ ստուգում իրականացնող պետական մարմնի կողմից տնտեսավարող սուբյեկտին օրենքով նախատեսված իրավասությունների շրջանակներում տրված նախկին ստուգմամբ հայտնաբերված թերությունների և խախտումների վերացման վերաբերյալ հանձնարարականի (կարգադրագրի) ժամկետը.

1.1) իրականացվում են ստուգում իրականացնող անձի կամ ստուգում իրականացնող պետական մարմնի կողմից տնտեսավարող սուբյեկտին օրենքով նախատեսված իրավասությունների շրջանակներում տրված նախկին ստուգմամբ հայտնաբերված թերությունների և խախտումների վերացման վերաբերյալ հանձնարարականի (կարգադրագրի) պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված ստուգումներ.

2) ստուգում իրականացնող պետական մարմինը Հայաստանի Հանրապետության վարչապետից ստացել է հանձնարարական, քաղաքացիներից, իրավաբանական անձանցից, անհատ ձեռնարկատերերից ստացել է դիմում, իսկ պետական մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ գրավոր տեղեկատվություն՝

ա. քաղաքացիների կյանքին, առողջությանը, իրավաբանական և ֆիզիկական անձանց, պետության օրինական շահերին, կենդանիներին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելու վտանգի, ինչպես նաև բնական կամ տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների առաջացման վտանգի մասին,

բ. քաղաքացիների կյանքին, առողջությանը, իրավաբանական և ֆիզիկական անձանց, պետության օրինական շահերին, կենդանիներին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելու, ինչպես նաև բնական կամ տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների առաջացման մասին,

գ. սպառողի իրավունքների խախտման մասին (այն քաղաքացիների դիմումի դեպքում, որոնց իրավունքները խախտվել են).

3) տնտեսավարող սուբյեկտը տվյալ կամ դրան նախորդող տարվա ընթացքում չի ներկայացրել առնվազն երկու հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող՝ օրենքով սահմանված հաշվետվություններ.

4) տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը դիմում է ներկայացրել իր կազմակերպությունում ստուգում իրականացնելու վերաբերյալ.

5) ***(կետը հանվել է 21.12.17 ՀՕ-299-Ն)***

5.1) ***(կետը հանվել է 21.12.17 ՀՕ-299-Ն)***

5.2) բնապահպանական հարկով հարկման բազայի և (կամ) բնօգտագործման վճարի բազայի փաստացի ծավալների ու դրանց չափաքանակների (սահմանափակումների) ստուգումներ ընդերքօգտագործող այն տնտեսավարող սուբյեկտների մոտ, որոնք, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքին համապատասխան, ընդգրկված են հարկային մարմնի ստուգումների տարեկան ծրագրում.

5.3) Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքով սահմանված ընդերքաբանական փորձաքննության ներկայացված նյութերի և փաստացի իրականացված աշխատանքների հետ համեմատման, ինչպես նաև դրանց արժանահավատության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով ընդերքօգտագործման ոլորտի լիազոր մարմինը ներկայացրել է համապատասխան գրություն.

6) Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվում են ստուգումներ քաղաքաշինության բնագավառը կարգավորող օրենսդրությամբ նախատեսված բարձր կամ բարձրագույն ռիսկայնության շինարարության օբյեկտներում, կամ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից իրականացվում են ստուգումներ՝ տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության համաձայն.

6.1) իրականացվում են նյութական պահուստի վերաբերյալ օրենսդրության պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված ստուգումները.

7) համապատասխան լիցենզիա (թույլտվություն) ստացած տնտեսավարող սուբյեկտի կողմից իրականացվում է վիճակախաղերի, շահումով խաղերի, ինտերնետային շահումով խաղերի կամ խաղատների կազմակերպման ոլորտի գործունեություն.

8) տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտումներ կատարվելու փաստը բացահայտվել և հիմնավորվել է այլ տնտեսավարող սուբյեկտում անցկացված ստուգման ընթացքում.

9) ստուգումը նշանակվել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան:

Սույն մասի 1-9-րդ կետերով նախատեսված դեպքերում անցկացվող ստուգումների ընթացքում պարզաբանվում են միայն այն հարցերը, որոնք հիմք են հանդիսացել այդ ստուգումներն իրականացնելու համար:

Այն դիմումները, որոնցով հնարավոր չէ ճշտել դիմումատուի անձը, ինչպես նաև սույն հոդվածի 3.1-ին մասի 2-րդ կետով նախատեսված փաստերի մասին տվյալներ չպարունակող դիմումները ստուգում անցկացնելու հիմք չեն կարող լինել:

4. Եթե առկա են սույն օրենքով սահմանված վերստուգումներ անցկացնելու իրավական հիմքերը, ստուգող մարմինն իրավունք ունի սույն հոդվածի 3-րդ մասով մեկ

ստուգման համար սահմանված ժամանակահատվածում իրականացնել կրկնակի ստուգում: ***(նախադասությունը հանվել է 21.12.17 ՀՕ-299-Ն)***

Կրկնակի ստուգում անցկացնելու հիմքեր ներկայացրած անձինք կրկնակի ստուգմամբ այդ հիմքերը չհաստատվելու (չհիմնավորվելու) դեպքում ենթակա են պատասխանատվության Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

(4-րդ հոդվածը փոփ. 03.04.01 ՀՕ-172, 11.12.02 ՀՕ-480-Ն, 14.12.04 ՀՕ-186-Ն, 15.12.05 ՀՕ-28-Ն, փոփ. 11.10.07 ՀՕ-214-Ն, լրաց. 30.09.08 ՀՕ-167-Ն, լրաց. 04.02.10 ՀՕ-17-Ն, փոփ., լրաց., խմբ. 23.06.11 ՀՕ-243-Ն, լրաց. 07.12.11 ՀՕ-309-Ն, փոփ. 22.06.12 ՀՕ-168-Ն, լրաց., խմբ. 19.12.12 ՀՕ-242-Ն, լրաց. 21.06.14 ՀՕ-130-Ն, փոփ. 07.05.15 ՀՕ-40-Ն, 16.05.16 ՀՕ-85-Ն, 01.03.17 ՀՕ-66-Ն, փոփ., խմբ. 21.12.17 ՀՕ-299-Ն, լրաց. 04.03.20 ՀՕ-131-Ն, խմբ., լրաց., փոփ. 09.07.20 ՀՕ-369-Ն, լրաց. 16.07.20 ՀՕ-401-Ն, փոփ. 03.03.21 ՀՕ-93-Ն, լրաց. 26.05.21 ՀՕ-232-Ն)

Հոդված 5. Վերստուգումներ անցկացնելու իրավական հիմքերը

Վերստուգումն ստուգում իրականացնող մարմնի կողմից նույն տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգված ժամանակաշրջանի և ստուգված հարցերի երկրորդ և ավելի անգամ ստուգումն է, իսկ կրկնակի ստուգումը՝ սույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամանակահատվածում կատարված երկրորդ և ավելի անգամ ստուգումն է: Ֆինանսատնտեսական գործունեության վերստուգումներ կարող են իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության վարչապետի գրավոր հանձնարարությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան նշանակված ստուգումների դեպքում՝ ~~հետաքննության մարմնի կամ~~ քննիչի պատճառաբանված որոշմամբ:

Վերստուգումներ կարող են անցկացվել հետևյալ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում.

ա) տնտեսավարող սուբյեկտը լուծարելիս.

բ) տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի խնդրանքով.

գ) Հայաստանի Հանրապետության վարչապետի գրավոր հանձնարարությամբ.

դ) եթե օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված են նախորդ ստուգողի այն հանցավոր գործողությունները, որոնք նա թույլ է տվել ստուգումը կատարելիս.

ե) պետական գույքի մասնավորեցման լիազորված պետական մարմնի պահանջով, եթե ստուգման անհրաժեշտությունը պայմանավորված է պետական կամ 51 տոկոսից ավելի պետական մասնակցությամբ տնտեսավարող սուբյեկտի մասնավորեցման նախապատրաստական աշխատանքների իրականացմամբ.

զ) սույն օրենքի 7 հոդվածի «ը» ենթակետով նախատեսված դեպքերում.

է) ***(ենթակետը հանվել է 11.12.02 ՀՕ-480-Ն)***

ը) սույն օրենքի 11-րդ հոդվածի երրորդ կետով սահմանված դեպքում.

թ) սույն օրենքի 4-րդ հոդվածի 3.1-ին մասի 1-9-րդ կետերով սահմանված դեպքերում.

ժ) Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան վերստուգում նշանակելու դեպքում՝ վերստուգումներն իրականացնել այն մասով, որի համար հիմք է հանդիսացել որոշում կայացնելը:

(5-րդ հոդվածը փոփ. 03.04.01 ՀՕ-172, 06.11.02 ՀՕ-453-Ն, 25.12.03 ՀՕ-68-Ն, 14.12.04 ՀՕ-186-Ն, 11.12.02 ՀՕ-480-Ն, փոփ. 11.10.07 ՀՕ-214-Ն, լրաց. 04.02.10 ՀՕ-17-Ն, փոփ. 23.06.11 ՀՕ-243-Ն, լրաց. 19.12.12 ՀՕ-242-Ն, խմբ. 05.02.13 ՀՕ-2-Ն, խմբ., փոփ. 21.12.17 ՀՕ-299-Ն)

Հոդված 11. Ստուգումն իրականացնող անձանց պատասխանատվությունը և գործողությունների բողոքարկումը

1. Սույն օրենքի պահանջների խախտմամբ ստուգում իրականացնող անձինք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Ստուգումն իրականացնող անձանց գործողությունները, ինչպես նաև ստուգման արդյունքում կազմված ակտը երկու ամսվա ընթացքում, եթե օրենքով այլ բան չի նախատեսվում կարող են բողոքարկվել այն պետական մարմնին, որին անմիջականորեն ենթարկվում է (են) ստուգող անձը (անձինք), կամ «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բողոքարկման հանձնաժողով, կամ դատարան: Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը մինչև բողոքի նկատմամբ պատասխան ստանալը կարող է թույլ չտալ շարունակելու ստուգումը, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածի երրորդ կետով սահմանված դեպքերի և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան նշանակվող ստուգումների:

3. Բողոքները վերադասության կարգով քննության են առնվում, և դրանց վերաբերյալ որոշումներն ընդունվում են ոչ ուշ, քան բողոքն ստացվելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում: Նշված ժամկետում բողոքի վերաբերյալ պատասխան չտրվելու դեպքում բողոքում բերված փաստարկները համարվում են ընդունված: Սույն կետով սահմանված ժամկետի հաշվարկն սկսվում է գրավոր բողոքը համապատասխան մարմնում մուտքագրվելու օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվանից:

4. Ընդունված որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

5. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան ստուգումը նշանակելու մասին ~~հետաքննության մարմնի կամ~~ քննիչի որոշումը բողոքարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, իսկ նշված ստուգման ընթացքում ստուգող անձի գործողությունները և ստուգման արդյունքում կազմված ակտը՝ սույն հոդվածի 2-4-րդ մասերով սահմանված կարգով:

6. Սույն հոդվածով նախատեսված որոշումների վերաբերյալ վերադասության կարգով ընդունված որոշումները կարող են բողոքարկվել «Տեսչական մարմինների

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բողոքարկման հանձնաժողով:

(11-րդ հոդվածը փոփ. 03.04.01 ՀՕ-172, փոփ. 11.12.02 ՀՕ-480-Ն, փոփ., լրաց. 04.02.10 ՀՕ-17-Ն, փոփ. 23.06.11 ՀՕ-243-Ն, լրաց. 21.06.14 ՀՕ-130-Ն, 17.12.14 ՀՕ-258-Ն, փոփ. 07.05.15 ՀՕ-40-Ն, 21.12.17 ՀՕ-299-Ն)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 9. Վարկային կազմակերպության ղեկավարները, նրանց մասնագիտական չափանիշներն ու որակավորման կարգը

1. Վարկային կազմակերպության ղեկավարներ են վարկային կազմակերպության խորհրդի (տնօրենների կամ դիտորդ խորհրդի) նախագահը, նրա տեղակալը և խորհրդի անդամները, գործադիր տնօրենը, նրա տեղակալը, վարչության նախագահը, նրա տեղակալը, վարչության անդամները, գլխավոր հաշվապահը, նրա տեղակալը, վերստուգիչ հանձնաժողովի նախագահը, նրա տեղակալը և վերստուգիչ հանձնաժողովի անդամները:

2. Վարկային կազմակերպության ղեկավար չեն կարող լինել՝

ա) դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատվածություն ունեցող անձինք.

բ) դատարանի կողմից ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից զրկված անձինք.

գ) սնանկ ճանաչված և չմարված (չներված) պարտավորություններ ունեցող անձինք.

դ) անձինք, որոնց որակավորումը կամ մասնագիտական գիտելիքները չեն համապատասխանում Կենտրոնական բանկի սահմանած մասնագիտական կամ որակավորման համապատասխանության չափանիշներին.

ե) ~~անձինք, որոնք քրեական գործով ներգրավված են որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ~~քրեական վարույթով մեղադրյալի կարգավիճակ ունեցող անձինք..

զ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձինք:

3. Վարկային կազմակերպության ղեկավարների (բացառությամբ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների) որակավորման, մասնագիտական համապատասխանության չափանիշները և կարգը սահմանում է Կենտրոնական բանկը:

4. Կենտրոնական բանկի սահմանած դեպքերում վարկային կազմակերպության ղեկավարները պետք է ունենան որակավորման, մասնագիտական

համապատասխանության վկայական և Կենտրոնական բանկի սահմանած կարգով գրանցված լինեն Կենտրոնական բանկում: Սույն կետով նախատեսված գրանցումը կատարվում է դիմելու պահից 15-օրյա ժամկետում: Վարկային կազմակերպության ղեկավարի գրանցման համար նշանակություն ունեցող փաստեր պարզաբանելու նպատակով 15-օրյա ժամկետը կարող է կասեցվել, բայց ոչ ավելի, քան մեկ անգամ և առավելագույնը երեք ամիս ժամկետով:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ

Հոդված 27. Վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկան հատուցմամբ վերցնելը

Վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկան հատուցմամբ վերցնելն այն է, որ առարկան հարկադիր կարգով վերցվում է և այնուհետև իրացվում, ստացված գումարը հանձնելով նախկին սեփականատիրոջը՝ վերցված առարկայի իրացման ծախսերի պահումով:

Հրազենը և ռազմամթերքը~~զինամթերքը~~ հատուցմամբ վերցնել չի կարող կիրառվել այն անձանց նկատմամբ, որոնց համար որսորդությունը գոյության հիմնական աղբյուրն է:

Հատուցմամբ վերցնում կիրառելու կարգը և վերցնելու ենթակա առարկաների տեսակները սահմանվում են ԽՍՀ Միության օրենսդրությամբ, սույն օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության այլ օրենսդրությամբ:

Հոդված 28. Վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավումը

Վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավումն այն է, որ այդ առարկան, հարկադիր կարգով անհատույց դարձվում է պետական սեփականություն: Բռնագրավվել կարող է միայն այն առարկան, որը խախտողի անձնական սեփականությունն է, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերով այլ բան չի նախատեսված:

Հրազենի, որսի այլ գործիքների և ռազմամթերքի~~զինամթերքի~~ բռնագրավում չի կարող կիրառվել այն անձանց նկատմամբ, որոնց համար որսորդությունը գոյության հիմնական աղբյուրն է:

Բռնագրավում կիրառելու կարգը, բռնագրավման ոչ ենթակա առարկաների ցանկը սահմանվում է ԽՍՀ Միության օրենսդրությամբ, սույն օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության այլ օրենսդրությամբ:

(28-րդ հոդվածը խմբ. 11.05.92, 23.06.97 ՀՕ-133)

~~Հոդված 40.16. Կազմակերպությունների կողմից օրենքով արգելված ժամանակահատվածում բարեգործություն կատարելը~~

~~1. Ընտրությունների կամ հանրաքվեի նշանակման որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ընտրությունների կամ հանրաքվեի արդյունքների ամփոփումն ընկած ժամանակահատվածում այն կազմակերպությունների կողմից, որոնց անվանումները կարող են ասոցացվել ընտրություններին մասնակցող կուսակցությունների անվանումների հետ, կամ կուսակցությունների կողմից ղեկավարվող կազմակերպությունների կողմից, ինչպես նաև այն կազմակերպությունների կողմից, որոնց հիմնադիրը (հիմնադիրները) կամ ղեկավարը տվյալ ընտրություններում առաջադրվել է են որպես թեկնածու, բարեգործություն կատարելն այն համայնքներում, որտեղ անցկացվում են ընտրություններ՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում կազմակերպության պաշտոնատար անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով:~~

~~(40.16-րդ հոդվածը լրաց. 07.05.21 ՀՕ-205-Ն)~~

~~(հոդվածը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին վերաբերելի մասով 07.05.21~~

Հոդված 41.7. Հեղինակային և հարակից իրավունքները խախտելը

1. Հեղինակությունը յուրացնելը կամ հեղինակային կամ հարակից իրավունքի օբյեկտն ապօրինի օգտագործելը կամ առանց հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջ համաձայնության նրա ստեղծագործությունն իրացնելը, եթե դա մանր չափերի գույքային վնաս է պատճառել հեղինակին կամ այլ իրավատիրոջ՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով:

2. Սույն հոդվածի իմաստով մանր չափ է համարվում 500. 000 ՀՀ դրամը չգերազանցող գումարը (արժեքը):

Հոդված 41.8. Արտոնագրային իրավունքը խախտելը

1. Արտոնագրային իրավունքի օբյեկտն ապօրինի օգտագործելը կամ մինչև այդ իրավունքի պաշտոնական ճանաչումը դրա էության վերաբերյալ առանց հայտատուի

համաձայնության տեղեկություն տարածելը կամ դրա հեղինակությունը յուրացնելը, եթե դա մանր չափերի գույքային վնաս է պատճառել՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով:

2. Սույն հոդվածի իմաստով մանր չափ է համարվում 500.000 ՀՀ դրամը չգերազանցող գումարը (արժեքը):

Հոդված 44[1] ~~**Մանր չափերով թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի**~~**Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի**

(վերնագիրը լրաց. 06.12.17 ՀՕ-242-Ն)

1. Առանց իրացնելու նպատակի մանր չափերով թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) ապօրինի արտադրելը, պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, տեղափոխելը կամ առաքելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:~~1. Առանց իրացնելու նպատակի մանր չափերով թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր ապօրինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը կամ առաքելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով~~:

2. Նույն արարքները մեկ տարվա ընթացքում կրկին անգամ կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով:

3. Սույն օրենսգրքում թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մանր չափեր են համարվում անսովոր գործածողի, այսինքն՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), ինչպես նաև խիստ ներգործող նյութեր չգործածող, 18 տարին լրացած և գործնականում առողջ անձի օրգանիզմի վրա հոգեներգործուն ազդեցություն թողնելու համար բավարար թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի նվազագույն չափերից մինչև դրանց հնգապատիկը ներառող չափերը:

3.1. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մանր չափերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ հիմք ընդունելով սույն հոդվածի 3-րդ մասով ամրագրված չափորոշիչը:

4. 4. Այն անձը, որը կամովին հանձնել է իր մոտ եղած մանր չափերի թմրամիջոցը, հոգեմետ (հոգեներգործուն) նյութը, դրանց պատրաստուկը կամ դրանց համարժեք նյութը (անալոգ), ազատվում է սույն հոդվածով նախատեսված իրավախախտման համար

վարչական պատասխանատվությունից:~~Այն անձը, որ կամովին հանձնել է իր մոտ եղած մանր չափերի թմրամիջոցները կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերը, ազատվում է սույն հոդվածով նախատեսված իրավախախտման համար վարչական պատասխանատվությունից:~~

(44[1] -ին հոդվածը լրաց. 26.05.08 ՀՕ-77-Ն, լրաց., խմբ. 06.12.17 ՀՕ-242-Ն)

Հոդված 47.3 Դեղերի շրջանառության ոլորտի պահանջները խախտելը

(վերնագիրը խմբ. 17.05.16 ՀՕ-89-Ն)

~~1. Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի) կամ գրանցումն օրենքով սահմանված կարգով կասեցված կամ օրենքի խախտմամբ դեղեր ներմուծելը կամ արտադրելը կամ պահպանելը կամ բաշխելը կամ իրացնելը կամ կիրառելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր անվանմամբ դեղի՝~~

~~1) մինչև 10 փաթեթի դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհինգապատիկի չափով.~~

~~2) 10-ից մինչև 30 փաթեթի դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև երեքհարյուրհինգապատիկի չափով.~~

~~3) 30 և ավելի փաթեթի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:~~

~~2. Դեղանյութերը, դեղաբուսական հումքը, հետազոտվող դեղագործական արտադրանքը օրենքի խախտմամբ արտադրելը կամ ներմուծելը կամ իրացնելը կամ պահպանելը կամ բաշխելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր անվանմամբ արտադրանքի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհինգապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:~~

3. Դեղատներից իրացման կամ բաց թողնման ենթակա հիմնական դեղերի ցանկին համապատասխան նվազագույն տեսականի չապահովելը՝

առաջացնում է նախազգուշացում:

4. Դեղատներում ոչ դեղագիտական խորհրդատվության տրամադրումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում աշխատանքները կատարողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգապատիկի չափով, իսկ գործատուի նկատմամբ՝ հարյուրապատիկի չափով:

5. Դեղատների առևտրի սրահներում, սպասասրահներում պիտանիության ժամկետն անցած դեղեր պահելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

6. Բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, դեղատներում կաթիլաներարկման լուծույթներ պատրաստելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսնապատիկից երեքհարյուրապատիկի չափով:

7. Դեղատոմսով բաց թողնվող դեղերի առանց դեղատոմսի իրացումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր անվանմամբ դեղի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

8. Դեղատոմսով բաց թողնվող դեղերի դեղատոմսերի լրացումը, դուրսգրումը և իրացումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չնախատեսված ձևաթղթերի վրա՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

9. Օրենքով նախատեսված կարգով հաստատված դեղագրությունների պահանջները խախտելը կամ պատրաստված դեղերի որակի, ձևավորման, փաթեթավորման, պիտակավորման, պահպանման, իրացման պահանջները խախտելը կամ դեղատանը պատրաստված դեղերը առանց պիտանիության ժամկետի նշման բաց թողնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկից երկուհարյուրապատիկի չափով:

10. Դեղի գրանցման հավաստագրի իրավատիրոջ կողմից գրանցված դեղերի վնասակար կողմնակի ազդեցության վերաբերյալ արձանագրված դեպքերի մասին չհայտնելը կամ դրանց վերաբերյալ տեղեկություններ հրապարակելը առանց նախապես կամ միաժամանակ առողջապահության բնագավառի լիազոր պետական կառավարման մարմնին հայտնելու՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկից երկուհարյուրապատիկի չափով:

11. Դեղի մակնշման մեջ, ընդհանուր բնութագրում և ներդիր-թերթիկում Հայաստանի Հանրապետությունում դեղի մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը ներառելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսնապատիկից երեքհարյուրապատիկի չափով:

12. Դեղ չհամարվող ցանկացած արտադրանքի (այդ թվում՝ գեղարարական (կոսմետիկ) միջոցների, կենսաակտիվ հավելումների) փաթեթի վրա և (կամ) օգտագործման հրահանգում բուժական ցուցումների նշումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր անվանմամբ արտադրանքի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից հարյուրապատիկի չափով:

13. Դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի և հետազոտվող դեղագործական արտադրանքի փաթեթավորմանը կամ պիտակավորմանը կամ մակնշմանը ներկայացվող պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր անվանմամբ դեղի կամ արտադրանքի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով:

14. Օրենքով նախատեսված կարգի խախտմամբ առանց հայերեն ներդիր-թերթիկի դեղերի իրացումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր անվանմամբ դեղի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

15. Դեղի գրանցման հավաստագրի իրավատիրոջ կողմից գրանցված արտադրանքի անվտանգության, արդյունավետության, որակի վերաբերյալ հետգրանցումային շրջանում հայտնաբերված և (կամ) կատարված յուրաքանչյուր նոր տվյալի և (կամ) փոփոխության մասին գրավոր կարգով առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնին չհայտնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով:

16. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից պիտանիության ժամկետն անցած դեղեր կիրառելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով:

17. Օրենքով նախատեսված դեպքերում կամ օրենքով նախատեսված կարգով դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, հետազոտվող դեղագործական արտադրանքի շրջանառությունը չդադարեցնելը կամ շրջանառությունից չհանելը (հետկանչ չիրականացնելը)՝

առաջացնում է տուգանքի նշանակում յուրաքանչյուր անվանմամբ դեղի կամ արտադրանքի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով:

18. Դեղատոմսով բաց թողնվող դեղի՝ դեղատանը առկա նույն ակտիվ բաղադրատարրը պարունակող նույն դեղաչափով և դեղաձևով փոխադարձաբար փոխարինելի բոլոր դեղերի վերաբերյալ սպառիչ տեղեկատվություն չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից յոթանասունապատիկի չափով:

19. Դեղերի գները կարգավորող որոշումները չկատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի իննհարյուրապատիկից հազարապատիկի չափով:

20. Դեղերի արտադրության կամ մեծածախ իրացման լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից օրենքով նախատեսված հաշվետվություն չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ աշխատավարձի երկուհարյուրհիսնապատիկից երեքհարյուրապատիկի չափով:

21. Դեղերի առաքման տեխնիկական կամ մասնագիտական պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հարյուրհիսնապատիկի չափով:

22. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 4-21-րդ մասերով նախատեսված արարքները կրկին կատարելը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքի չափերի կրկնապատիկի չափով:

23. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված արարքը կրկին կատարելը վարչական տույժի միջոց կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ դեղատներից իրացման կամ բաց թողնման ենթակա հիմնական դեղերի ցանկին համապատասխան նվազագույն տեսականիում ընդգրկված յուրաքանչյուր անվանում դեղի համար՝ նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

(47³ -րդ հոդվածը լրաց. 08.04.08 ՀՕ-7-Ն, խմբ. 17.05.16 ՀՕ-89-Ն)

Հոդված 47.12. Բժշկի կողմից հղիության արհեստական ընդհատում (աբորտ) կատարելուց առաջ և հետո օրենքով նախատեսված անհրաժեշտ միջոցառումներ չիրականացնելը

1. Բժշկի կողմից հղիության արհեստական ընդհատումից (աբորտից) առաջ կնոջը հղիության արհեստական ընդհատման հնարավոր բացասական հետևանքների վերաբերյալ անվճար խորհրդատվություն չտրամադրելը կամ խորհրդատվություն տրամադրելու մասին բժշկական փաստաթղթերում գրառումներ չկատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քառասնապատիկից հինգապատիկի չափով:

2. Բժշկի կողմից հղիության արհեստական ընդհատումից (աբորտից) անմիջապես հետո կնոջը անցանկալի հղիությունը կանխելու միջոցների և (կամ) մեթոդների ընտրության վերաբերյալ անվճար բժշկասոցիալական խորհրդատվություն չտրամադրելը կամ խորհրդատվություն տրամադրելու մասին բժշկական փաստաթղթերում գրառումներ չկատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քառասնապատիկից հինգապատիկի չափով:

~~3. Բժշկի կողմից հղիության արհեստական ընդհատման (աբորտի) բժշկական միջամտությունից անմիջապես առաջ հղի կնոջը հղիության արհեստական ընդհատման վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու՝ օրենքով նախատեսված ժամանակահատված չտրամադրելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից հարյուրապատիկի չափով:~~

4. Սույն հոդվածով նախատեսված արարքը կրկին կատարելը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքի կրկնապատիկի չափով:

(47.12-րդ հոդվածը լրաց. 29.06.16 ՀՕ-135-Ն)

~~Հոդված 47.13.~~ ~~Օրենքով թույլատրված դեպքերում հղիության արհեստական ընդհատում (աբորտ) իրականացնելիս օրենքով նախատեսված պարտադիր փաստաթղթերը չստանալը~~

~~1. Օրենքով թույլատրված հղիության արհեստական ընդհատման (աբորտի) դեպքում բժշկի կողմից հղի կնոջ կամ նրա օրինական ներկայացուցչի գրավոր դիմումը կամ գրավոր համաձայնությունը չստանալը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից հարյուրապատիկի չափով։~~

~~2. Բժշկի կողմից օրենքով նախատեսված դեպքում հղիության արհեստական ընդհատումն առանց բժշկական հանձնաժողովի որոշման իրականացնելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի իննսունապատիկից հարյուրապատիկի չափով։~~

~~3. Սույն հոդվածով նախատեսված արարքը կրկին կատարելը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար՝ սույն հոդվածով նախատեսված տուգանքի կրկնապատիկի չափով։~~

~~***(47.13-րդ հոդվածը լրաց. 29.06.16 ՀՕ-135-Ն)***~~

~~Հոդված 47.27.~~ ~~Ոչ հոժարակամ հոսպիտալացման կարգը խախտելը~~

~~1. Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին հարկադիր հոսպիտալացնելուց հետո հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմնի կողմից 72 ժամվա ընթացքում հոգեբուժական հանձնաժողով չհրավիրելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով։~~

~~2. Հարկադիր հոսպիտալացման հիմնավորվածությունը մասնագիտական հոգեբուժական հանձնաժողովի եզրակացությամբ հաստատվելու դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով անձին հոգեբուժական հիվանդանոցային հարկադիր բուժման ենթարկելու համար հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմնի կողմից 72 ժամվա ընթացքում դատարան չդիմելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի վաթսունապատիկի չափով։~~

~~3. Հիվանդանոցային հարկադիր բուժում իրականացնող բժիշկ-հոգեբույժի կողմից ամիսը առնվազն մեկ անգամ հոգեբուժական կազմակերպության հոգեբուժական հանձնաժողովին հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի վիճակի մասին մասնագիտական գրավոր կարծիք չներկայացվելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից մինչև հարյուրհինգապատիկի չափով:~~

~~4. Մինչև օրենքով սահմանված վեցամսյա ժամկետի լրանալը հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մոտ հարկադիր բուժման օրենքով սահմանված հիմքերը վերանալու դեպքում հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմնի կողմից հարկադիր հոսպիտալացման ենթարկվելու վերաբերյալ դատարանի վճիռը վերացնելու պահանջով դատարան չդիմելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից մինչև հարյուրհինգապատիկի չափով:~~

~~5. Սույն հոդվածով նախատեսված արարքը կրկին կատարելը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար՝ սույն հոդվածով նախատեսված տուգանքի կրկնապատիկի չափով:~~

~~***(47.27-րդ հոդվածը լրաց. 18.06.20 ՀՕ-351-Ն)***~~

Հոդված 52[1].—Ուրիշի գույքն ապօրինաբար օգտագործելը

1. Սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով նրա գույքն օգտագործելը՝ առանց այդ գույքն իրենը դարձնելու նպատակի, որը մանր չափերի գույքային վնաս է պատճառել՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հինգապատիկի չափով:

2. Սույն հոդվածի իմաստով՝ մանր չափ է համարվում 500.000 ՀՀ դրամը չգերազանցող գումարը (արժեքը):

Հոդված 53. Գույքը ոչնչացնելը կամ վնասելը

1. Ուրիշի գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որը մանր չափերի գույքային վնաս է պատճառել՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հինգապատիկի չափով:

2. Սույն հոդվածով նախատեսված մանր չափ է համարվում ուրիշի գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու պահին 30.000 ՀՀ դրամից միչև 500.000 ՀՀ դրամը չգերազանցող գումարը (արժեքը):

~~**Հոդված 53. Մանր չափերով հափշտակությունը կամ գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը**~~

~~***(վերնագիրը խմբ. 23.06.11 ՀՕ-220-Ն)***~~

~~1. Մանր չափերով հափշտակությունը՝ գողության, եթե չի պարունակում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածով նախատեսված~~

~~հանցագործության հատկանիշներ, խարդախության, յուրացման, վատնման, համակարգչային տեխնիկայի օգտագործման միջոցով՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով:~~

~~2. Ուրիշի գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որը մանր չափերի վնաս է պատճառել՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հիսնապատիկի չափով:~~

~~3. Սույն հոդվածով նախատեսված մանր չափ է համարվում՝~~

~~1) գողության միջոցով հափշտակություն կատարելու պահին Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկը չգերազանցող գումարը (արժեքը).~~

~~2) խարդախության, յուրացման, վատնման, համակարգչային տեխնիկայի օգտագործման միջոցով հափշտակություն կատարելու, ինչպես նաև ուրիշի գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու պահին Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկը չգերազանցող գումարը (արժեքը):~~

~~***(53-րդ հոդվածը խմբ. 07.03.01 ՀՕ-156, 23.06.11 ՀՕ-220-Ն, լրաց. 14.11.19 ՀՕ-219-Ն)***~~

Հոդված 53[2]. Գույքի պահպանության կամ պաշտպանության պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը

1. Գույքի պահպանության կամ պաշտպանության պարտականություն ունեցող անձի կողմից այդ պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը դրանց նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով, եթե այդ անձի անզգուշության հետևանքով տեղի է ունեցել այդ գույքի մանր չափերի հասնող հափշտակում, վնասում կամ կորուստ՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հիսնապատիկի չափով:

2. Սույն հոդվածի իմաստով մանր չափ է համարվում 500.000 ՀՀ դրամը չգերազանցող գումարը (արժեքը):

Հոդված 53[3]. Գույքային վնաս պատճառելը խաբեության, վստահությունը չարաշահելու կամ ապօրինի այլ եղանակով

1. Խաբեության, վստահությունը չարաշահելու կամ կեղծ տեղեկություն տարածելու կամ ապօրինի այլ եղանակով մեկ ուրիշին մանր չափերի գույքային վնաս պատճառելը, որը դրսևորվել է բաց թողնված օգուտի, գույքի մաշվածության կամ հարկադրված ծախսեր կատարելու ձևով՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հիսնապատիկի չափով:

2. Սույն հոդվածի իմաստով մանր չափ է համարվում 500.000 ՀՀ դրամը չգերազանցող գումարը (արժեքը):

Հոդված 53[4]. Գույքային վնաս պատճառելը սպառնալիքի կամ բռնություն գործադրելու միջոցով

1. Անձին գործարք կնքելուն կամ գործարք կնքելուց հրաժարվելուն, պարտավորություն ստանձնելուն կամ այլ արարքի կատարմանը հարկադրելը, որը մանր չափերի գույքային վնաս է պատճառել և կատարվել է՝

1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ անձի դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով,

2) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նրանց օրինական տնօրինության, տիրապետման, օգտագործման կամ պահպանության տակ գտնվող գույքը ոչնչացնելու, վնասելու վերցնելու կամ չվերադարձնելու սպառնալիքով,

3) շանտաժով կամ

4) հարկադրանքի այլ եղանակով՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից հիսնապատիկի չափով:

2. Սույն հոդվածի իմաստով մանր չափ է համարվում 500.000 ՀՀ դրամը չգերազանցող գումարը (արժեքը):

Հոդված 53[5]. Գրավառուին վնաս պատճառելը

1. Գրավ դրված գույքը թաքցնելը, օտարելը, ոչնչացնելը, վնասելը կամ որևէ այլ կերպ ոչ պիտանի դարձնելը, որով խոչընդոտվել է գրավառուի գույքային իրավունքի իրականացումը, և նրան մանր չափերի գույքային վնաս է պատճառվել՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից քառասնապատիկի չափով:

2. Սույն հոդվածի իմաստով մանր չափ է համարվում 500.000 ՀՀ դրամը չգերազանցող գումարը (արժեքը):

Հոդված 53[6]. Բնական գազի, նավթի, ջրի խողովակաշարերին կամ էլեկտրական ցանցին կամ հեռահաղորդակցության կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներին ապօրինի միացում կատարելը կամ դրանց չափման համար նախատեսված սարքերի ցուցմունքներն ապօրինի փոխելը կամ դրանց բնականոն աշխատանքը խաթարելը

1. Ուրիշին պատկանող բնական գազի, նավթի, ջրի խողովակաշարին կամ էլեկտրական ցանցին կամ հեռահաղորդակցության կամ էլեկտրոնային

հաղորդակցության միջոցին ապօրինի միացում կատարելը կամ ուրիշին պատկանող բնական գազի, նավթի, ջրի խողովակաշարին կամ էլեկտրական ցանցին կամ հեռահաղորդակցության կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցի չափման համար նախատեսված սարքի ցուցմունքն ապօրինի փոխելը կամ դրա բնականոն աշխատանքը խաթարելը, որը մանր չափերի գույքային վնաս է պատճառել՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից երեսնապատիկի չափով:

2. Սույն հոդվածի իմաստով մանր չափ է համարվում 500.000 ՀՀ դրամը չգերազանցող գումարը (արժեքը):

Հոդված 54[2]. **Հողի բերրի շերտի օգտագործման և շինարարական աշխատանքներ կատարելու հետևանքով հանված հողի բերրի շերտի վաճառքի կարգերը խախտելը~~Հողի բերրի շերտի օգտագործման կարգը խախտելը~~**

Հողի բերրի շերտի օգտագործման կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հիսնապատիկի չափով:

Շինարարական աշխատանքներ կատարելու հետևանքով հանված հողի բերրի շերտի վաճառքի կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հիսնապատիկի չափով:

(54[2]-րդ հոդվածը լրաց. 11.12.02 ՀՕ-495-Ն)

Հոդված 54[4]. **Հողերի պահպանության կանոնները խախտելը**

Հողերը ջրային և հողմային հողատարումից, ողողումներից, ճահճացումից, կրկնակի աղակալումից, կարծրացումից, արտադրական և կենցաղային թափոններով, քիմիական և ռադիոակտիվ նյութերով աղտոտումից, սողանքներից, անապատացումից, հողերի վիճակը վատթարացնող այլ բացասական ազդեցություններից սահմանված կանոններով չպահպանելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրհիսնապատիկի չափով:

Հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտը չկուտակելը, չպահպանելը, ոչ արդյունավետ և ոչ նպատակային օգտագործելը, ապօրինի

տեղափոխելը, շինարարական աշխատանքներ կատարելու հետևանքով հանված բերրի շերտը ապօրինի վաճառելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրապատիկի չափով:

(54[4]-րդ հոդվածը լրաց. 11.12.02 ՀՕ-495-Ն)

Հոդված 63[7]. Ջրերն աղտոտելը

1. Ջրերն աղտոտելը՝ բնական կամ արհեստական ծագման մակերևութային կամ ստորերկրյա ջրերը, խմելու ջրամատակարարման աղբյուրներն աղտոտելը, աղբոտելը, խցանելը, սպառելը կամ դրանց բնական հատկությունները կամ որակական բաղադրությունն այլ կերպ փոփոխելը կամ ջրային ռեսուրսը հյուծելը, որը մանր չափերի գույքային վնաս է պատճառել, կամ ջրերը ռադիոակտիվ, քիմիական, կենսաբանական կամ այլ վտանգավոր նյութով կամ թափոնով աղտոտելը կամ ջրային ռեսուրսներին այլ վնաս պատճառելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով:

2. Սույն հոդվածի իմաստով՝ մանր չափ է համարվում 500.000 ՀՀ դրամը չգերազանցող գումարը (արժեքը):

Հոդված 66. Ծառերը, թփերը կամ բուսածածկն ապօրինի հատելը կամ ապօրինի ձեռք բերված կոճղերը, ծառերը կամ թփերը տեղափոխելը

1. Պետական, համայնքային սեփականություն հանդիսացող կամ այլ անձանց պատկանող ծառը, թուփը կամ բուսածածկն ապօրինի հատելը կամ ոչնչացնելը կամ մինչև աճի դադարեցման աստիճանի վնասելը կամ ապօրինի ձեռք բերված կոճղը կամ քամատապալ, ձյունակոտոր, արմատախիլ արված կամ արմատից հատված կամ մասնատված ծառը կամ թուփը տեղափոխելը, եթե դրա հետևանքով պատճառվել է հարյուր հազար դրամը չգերազանցող գույքային կամ այլ վնաս անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին՝

առաջացնում են տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երկուհարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:

~~**Հոդված 66. Ծառերը, թփերը ապօրինի հատելը կամ ոչնչացնելը, պետական, համայնքային կամ այլ անձանց սեփականություն հանդիսացող բուսածածկը ոչնչացնելը կամ մինչև աճի դադարեցման աստիճանի վնասելը**~~

~~***(վերնագիրը խմբ. 10.07.19 ՀՕ-121-Ն)***~~

~~Անտառային հողերում, ինչպես նաև անտառային հողերի մեջ չմտնող տարածքներում ծառերը, թփերը ապօրինի հատելը կամ ոչնչացնելը, կամ հատումներն արգելված ծառերը, թփերը հատելը կամ ոչնչացնելը, պետական, համայնքային կամ այլ անձանց սեփականություն հանդիսացող բուսածածկը ոչնչացնելը կամ մինչև աճի դադարեցման աստիճանի վնասելը՝~~

~~առաջացնում են տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երկուհարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:~~

~~***(66-րդ հոդվածը փոփ. 02.09.93 ՀՕ-79, 11.12.02 ՀՕ-495-Ն, 24.12.04 ՀՕ-68-Ն, խմբ. 10.07.19 ՀՕ-121-Ն)***~~

Հոդված 79. Ծառերը, թփերը կամ բուսածածկն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը

1. Պետական, համայնքային սեփականություն հանդիսացող կամ այլ անձանց պատկանող ծառը, թուփը կամ բուսածածկը ոչնչացնելը կամ վնասելը, որը կատարվել է կրակի, պայթուցիկ նյութի կամ առավել վտանգի այլ աղբյուրի հետ անզգույշ վերաբերմունքի արդյունքով, եթե դրա հետևանքով անզգուշությամբ պատճառվել է մանր չափերի գույքային վնաս անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երեքհարյուրհիսնապատիկի չափով::

2. Սույն հոդվածի իմաստով մանր չափ է համարվում 500.000 ՀՀ դրամը չգերազանցող գումարը (արժեքը):

~~**Հոդված 79.**~~ ~~**Հրկիզման կամ կրակի հետ անփույթ վարվելու հետևանքով անտառներում ծառերը, թփերը, մատղաշը և մշակաբույսերը ոչնչացնելը կամ վնասելը**~~

~~Հրկիզման հետևանքով անտառներում ծառերը, թփերը, մատղաշը և մշակաբույսերը ոչնչացնելը կամ վնասելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երեքհարյուրհիսնապատիկի չափով:~~

~~Կրակի հետ անփույթ վարվելու հետևանքով անտառներում ծառերը, թփերը, մատղաշը և մշակաբույսերը ոչնչացնելը կամ վնասելը, ինչպես նաև անտառների հակահրդեհային կանոնները խախտելը՝~~

~~առաջացնում են տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրվաթսունապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երեքհարյուրապատիկի չափով:~~

Հոդված 80. Մթնոլորտային օդն աղտոտելը

1. Մթնոլորտն աղտոտող նյութերի արտանետումը, առանց լիազորված մարմնի թույլտվության՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. Մթնոլորտային օդն աղտոտելը՝ սահմանված նորմատիվի գերազանցմամբ արտանետումներով, սարքավորումների, կառույցների կամ այլ օբյեկտների շահագործման կանոնը խախտելու հետևանքով կամ այլ եղանակով մթնոլորտային օդն աղտոտելը կամ դրա բնական հատկություններն այլ ձևով փոփոխելը, որը մանր չափերի գույքային կամ այլ վնաս է պատճառել գյուղացիական տնտեսությանը, շինություններին, մշակութային արժեքներին, կենդանական կամ բուսական աշխարհին, հողին կամ ջրերին կամ առաջացրել է այլ հետևանք՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով:

3. Սույն հոդվածի իմաստով՝ մանր չափ է համարվում 500.000 ՀՀ դրամը չգերազանցող գումարը (արժեքը):

~~**Հոդված 80. Աղտոտող նյութերի արտանետումը մթնոլորտ՝ նորմատիվների գերազանցմամբ կամ առանց թույլտվության. վնասակար ֆիզիկական ներգործությունները մթնոլորտային օդի վրա**~~

~~Մթնոլորտն աղտոտող նյութերի արտանետումը, առանց լիազորված մարմնի թույլտվության՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:~~

~~Մթնոլորտն աղտոտող նյութերի առավելագույն թույլատրելի արտանետումների կամ ժամանակավոր համաձայնեցված սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների գերազանցումը, մթնոլորտային օդի վրա առավելագույն թույլատրելի վնասակար ֆիզիկական ներգործությունների նորմատիվների գերազանցումը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով:~~

~~***(80-րդ հոդվածը փոփ. 02.09.93 ՀՕ-79, 06.11.02 ՀՕ-459-Ն, 11.12.02 ՀՕ-495-Ն)***~~

Հոդված 88. Կենդանական, այդ թվում՝ ձկան պաշարների պահպանության, որսի և ձկնորսության, ինչպես նաև կենդանական աշխարհից օգտվելու մյուս կանոնները խախտելը

(վերնագիրը փոփ. 10.07.19 ՀՕ-121-Ն)

Կենդանական, այդ թվում՝ ձկան պաշարների պահպանության, որսի և ձկնորսության, ինչպես նաև կենդանական աշխարհից օգտվելու մյուս կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրքառասունապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով՝ խախտողի անձնական սեփականություն հանդիսացող հրացանների ու որսորդական միջոցների, ինչպես նաև հիշյալ խախտումները կատարելու գործիք համարվող մյուս առարկաների և կենդանիների բռնագրավմամբ:

~~Որսի կանոնները կոպիտ խախտելը (որսը առանց դրա թույլտվության կամ արգելված վայրերում, կամ արգելված ժամանակ, կամ արգելված գործիքներով կամ եղանակներով), ինչպես նաև որսի մյուս կանոնները պարբերաբար խախտելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկից մինչև երկուհարյուրհիսնապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրյոթանասունապատիկից մինչև երկուհարյուրհիսնապատիկի չափով՝ խախտողի անձնական սեփականություն համարվող հրացանների ու որսորդական միջոցների, ինչպես նաև հիշյալ խախտումները կատարելու միջոց համարվող մյուս առարկաների և կենդանիների բռնագրավմամբ և որսորդության իրավունքի զրկմամբ մինչև 3 տարի ժամանակով:~~

Սևանա լճում ձկնորսության նպատակով օգտագործվող լողամիջոցները արդյունագործական որսի համար ստեղծված կամ նախատեսված մուտքի և ելքի տեղամասերից դուրս տարածքներից մուտք և ելք իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը որսի թույլտվության ժամանակահատվածում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

(88-րդ հոդվածը փոփ. 02.09.93 ՀՕ-79, 11.12.02 ՀՕ-495-Ն, 23.05.11 ՀՕ-178-Ն, 10.07.19 ՀՕ-121-Ն, լրաց. 26.05.21 ՀՕ-219-Ն)

Հոդված 88[1]. Ապօրինի որսը

1. Վայրի կենդանի կամ թռչուն ապօրինի որսալը, որը կատարվել է՝

1) առանց համապատասխան թույլտվության,

2) դրանց որսի համար արգելված ժամանակ՝ մանր չափերի գույքային վնաս պատճառելով, կամ

3) արգելված վայրում՝ մանր չափերի գույքային վնաս պատճառելով՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկից մինչև երկուհարյուրհիսնապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրյոթանասունապատիկից մինչև երկուհարյուրհիսնապատիկի չափով՝ խախտողի անձնական սեփականություն համարվող հրացանների ու որսորդական միջոցների, կամ հիշյալ խախտումները կատարելու միջոց համարվող մյուս առարկաների և կենդանիների բռնագրավմամբ և որսորդության իրավունքի զրկմամբ 2-ից 3 տարի ժամանակով:

Հոդված 89. Ջրային կենդանիներ ապօրինի որսալը կամ ջրային կենդանիներ կամ ջրային բույսեր ապօրինի արդյունահանելը

Ձուկ կամ ջրային այլ կենդանի ապօրինի որսալը կամ ձուկ, ջրային այլ կենդանի կամ ջրային բույս ապօրինի արդյունահանելը, որը կատարվել է

1) առանց համապատասխան թույլտվության, կամ

2) դրանց որսի կամ արդյունահանման համար արգելված ժամանակ, կամ

3) արգելված վայրում, կամ

4) արգելված միջոցներով:

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով՝ որսի միջոցով ձեռք բերվածի, որսի գործիքների, լողունակ միջոցների և դրանց բոլոր այն պատկանելիքների բռնագրավմամբ, որոնք խախտումներ կատարելու գործիք են դարձել:

~~**Հոդված 89. Ապօրինաբար ձկնորսությամբ և ջրային որսորդության այլ տեսակներով զբաղվելը**~~

~~Գետերում, լճերում, ջրամբարներում և ջրի այլ աղբյուրներում ձկան, գազանների և ջրային այլ որսով զբաղվելը առանց թույլտվության, կամ արգելված ժամանակ, կամ չթույլատրված վայրերում, կամ չթույլատրված գործիքներով, եղանակներով ու ձևերով, եթե հասցված վնասը չի գերազանցում սահմանված նվազագույն աշխատավարձի եռապատիկը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով՝ որսի միջոցով ձեռք բերվածի, որսի գործիքների, լողունակ միջոցների և դրանց բոլոր այն պատկանելիքների բռնագրավմամբ, որոնք խախտումներ կատարելու գործիք են դարձել:~~

~~***(89-րդ հոդվածը փոփ. 02.09.93 ՀՕ-79, 11.12.02 ՀՕ-495-Ն, 23.05.11 ՀՕ-178-Ն)***~~

Հոդված 94. Բնության հատուկ պահպանվող տարածքների ռեժիմը խախտելը

1. Պետական արգելոցի, արգելավայրի, ազգային պարկի, բնության հուշարձանի կամ պետության կողմից հատուկ պահպանվող բնական այլ տարածքի կամ օբյեկտի ռեժիմը խախտելը, որն առաջացրել է մանր չափերի գույքային կամ այլ վնաս՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրհիսնապատիկի չափով:

2. Սույն հոդվածի իմաստով՝ մանր չափ է համարվում 500.000 ՀՀ դրամը չգերազանցող գումարը (արժեքը):

~~**Հոդված 94. Պետության կողմից հատուկ պահպանվող բնական օբյեկտների պահպանության կանոնները և ռեժիմը խախտելը**~~

~~Պետության կողմից հատուկ պահպանվող բնական օբյեկտների պահպանական ռեժիմը և արգելոցների, արգելավայրերի, անտառագոտիների, ազգային և բնական զբոսայգիների ներքին կարգի կանոնները խախտելը, կամ էլ բնության պահպանվող օբյեկտները ոչնչացնելը կամ վնասելը, ինչպես նաև արգելոցներում և հատուկ պահպանվող մյուս տերիտորիաներում կենդանական աշխարհից օգտվելու սահմանված կարգը խախտելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրհիսնապատիկի չափով:~~

~~***(94-րդ հոդվածը փոփ. 02.09.93 ՀՕ-79, 11.12.02 ՀՕ-495-Ն)***~~

Հոդված 124[6]. Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրությունը խախտելը, որի հետևանքով առաջացել է վթարային իրադրություն կամ ճանապարհատրանսպորտային պատահար, պատահարի մասնակից վարորդի կողմից պարտականությունները չկատարելը

(վերնագիրը խմբ. 07.02.12 ՀՕ-2-Ն)

1. Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրությունը խախտելը, որի հետևանքով առաջացել է վթարային իրադրություն՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 2 միավոր:

2. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջները չկատարելը կամ խախտելը կամ ճանապարհային երթևեկության կանոնները խախտելը, որի հետևանքով առաջացած ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով անձի առողջությանը պատճառվել է թեթև վնաս՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանիննապատիկի չափով:

3. Ճանապարհատրանսպորտային պատահարին առնչություն ունեցող վարորդի կողմից ճանապարհատրանսպորտային պատահարին առնչություն ունեցող վարորդի՝ օրենքով սահմանված պարտականությունները չկատարելը~~, եթե դա չի պարունակում հանցագործության հատկանիշներ~~՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով:

4. ***(մասն ուժը կորցրել է 09.12.19 ՀՕ-279-Ն)***

5. ***(մասն ուժը կորցրել է 09.12.19 ՀՕ-279-Ն)***

6. ***(մասն ուժը կորցրել է 09.12.19 ՀՕ-279-Ն)***

(124^6 - րդ հոդվածը լրաց. 21.02.07 ՀՕ-73-Ն, խմբ. 07.02.12 ՀՕ-2-Ն, խմբ., փոփ. 09.12.19 ՀՕ-279-Ն, լրաց., փոփ. 09.12.19 ՀՕ-300-Ն)

Հոդված 128. Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձանց կողմից տրանսպորտային միջոցներ վարելը, առանց վարորդական վկայականի կամ այլ փաստաթղթերի կամ ուժը կորցրած վարորդական վկայականով կամ այլ փաստաթղթերով տրանսպորտային միջոցներ վարելը, Հայաստանի Հանրապետության քաղաքացու կողմից այլ երկրի վարորդական վկայականով կամ օտարերկրացու կողմից Հայաստանի Հանրապետությունում չգործող վարորդական վկայականով տրանսպորտային միջոցներ վարելը կամ տրանսպորտային միջոցների վարումն այդ իրավունքը չունեցող անձին հանձնելը

(վերնագիրը խմբ. 07.02.12 ՀՕ-2-Ն, փոփ. 09.12.19 ՀՕ-300-Ն)

1. Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցված անձանց կողմից տրանսպորտային միջոցներ վարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով:

2. ***(մասն ուժը կորցրել է 21.12.15 ՀՕ-178-Ն)***

3. Առանց վարորդական վկայականի կամ այլ փաստաթղթերի տրանսպորտային միջոցներ վարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի եռապատիկի չափով:

4. Ուժը կորցրած վարորդական վկայականով կամ ուժը կորցրած այլ փաստաթղթերով տրանսպորտային միջոցներ վարելը, Հայաստանի Հանրապետության քաղաքացու կողմից այլ երկրի վարորդական վկայականով տրանսպորտային միջոց վարելը, ինչպես նաև օտարերկրացու կողմից Հայաստանի Հանրապետությունում չգործող (ՄԱԿ-ի 1968 թվականի «Ճանապարհային երթևեկության մասին» կոնվենցիայի պահանջները չբավարարող) վարորդական վկայականով տրանսպորտային միջոց վարելը՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

5. Տրանսպորտային միջոցը տասնվեց տարին չլրացած կամ տվյալ տեսակի տրանսպորտային միջոց վարելու իրավունք չունեցող կամ տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված կամ տրանսպորտային միջոց վարելու իրավունքը կասեցված կամ այն անձին հանձնելը, որը տրանսպորտային միջոցը հանձնող անձի համար ակնհայտորեն տվյալ իրադրությունում իր ֆիզիկական կամ հոգեկան վիճակի հետևանքով չէր կարող տրանսպորտային միջոցն անվտանգ վարել՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով: ~~Տրանսպորտային միջոցների վարումն այդ իրավունքը չունեցող անձին հանձնելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:~~

6. Սույն հոդվածում այլ փաստաթղթեր ասելով պետք է հասկանալ տրանսպորտային միջոցի հաշվառման փաստաթղթերը, մաքսային փաստաթղթերը, վարորդական վկայականում նշված դեպքերում՝ նաև բժշկական տեղեկանքը և այլն, որոնք չեն ներառում լիազորագիրը, ուղեգիրը, բեռնաուղեգիրը:

7. Սույն օրենսգրքի իմաստով՝

1) անձը համարվում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված, եթե նա օրենքով սահմանված կարգով զրկվել է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից, և զրկման ժամկետը չի լրացել:

2) անձը համարվում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող, եթե նա սահմանված կարգով չի ստացել տվյալ կարգի տրանսպորտային միջոց վարելու իրավունքի վարորդական վկայական կամ սահմանված կարգով ստացել է վարորդական վկայական, սակայն օրենքով սահմանված կարգով զրկվել է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից, և զրկման ժամկետը լրանալուց հետո սահմանված կարգով չի

վերականգնել տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը, բացառությամբ ուսումնական վարման դեպքերի:

3) տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը համարվում է կասեցված, եթե նրա՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքն օրենքով սահմանված կարգով կասեցվել է, և կասեցման ժամկետը չի լրացել:~~Սույն օրենսգրքի իմաստով անձը համարվում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող, եթե նա սահմանված կարգով չի ստացել տվյալ կարգի տրանսպորտային միջոց վարելու իրավունքի վարորդական վկայական կամ սահմանված կարգով ստացել է վարորդական վկայական, սակայն օրենքով սահմանված կարգով զրկվել է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից և զրկման ժամկետը լրանալուց հետո սահմանված կարգով չի վերականգնել տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը, բացառությամբ ուսումնական վարման դեպքերի:~~

8. Սույն օրենսգրքի իմաստով անձը համարվում է առանց վարորդական վկայականի, եթե նա ունի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք, սակայն վարելու ընթացքում իր մոտ չունի վարորդական վկայական:

9. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) վարչական իրավախախտում կատարած անձին իրազեկում է վարորդական վկայականը կամ այլ փաստաթուղթն իրավախախտումը հայտնաբերելու պահից 24 ժամվա ընթացքում լիազորված մարմնին (պաշտոնատար անձին) ներկայացնելու դեպքում վարչական պատասխանատվությունից կամ վարչական տույժը կատարելու պարտականությունից ազատվելու հնարավորության մասին: Անձը վարչական պատասխանատվության չի ենթարկվում, իսկ վարչական տույժ նշանակված լինելու դեպքում անձն ազատվում է այն կատարելու պարտականությունից, եթե իրավախախտումը հայտնաբերելու պահից 24 ժամվա ընթացքում լիազորված մարմին (պաշտոնատար անձին) է ներկայացնում վարորդական վկայականը կամ այլ փաստաթուղթ:

(128-րդ հոդվածը խմբ. 02.07.91, 02.09.93 ՀՕ-79, 03.12.96 ՀՕ-102, փոփ. 16.12.05 ՀՕ-26-Ն, խմբ. 21.02.07 ՀՕ-73-Ն, 07.02.12 ՀՕ-2-Ն, փոփ., լրաց. 21.06.14 ՀՕ-78-Ն, 21.12.15 ՀՕ-178-Ն, փոփ. 09.12.19 ՀՕ-300-Ն)

Հոդված 131. ~~Հետիոտների և~~Ուղևորների, հետիոտների, հեծանվորդների կամ ճանապարհային երթևեկության մյուս մասնակիցների կողմից ճանապարհային երթևեկության կանոնները խախտելը

~~1. Հետիոտների և ճանապարհային երթևեկության մյուս մասնակիցների կողմից (բացառությամբ տրանսպորտային միջոցների վարորդների) ճանապարհային երթևեկության կանոնները խախտելը, ճանապարհային երթևեկության կարգավորման ազդանշաններին չենթարկվելը, ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները խախտելը՝~~

~~առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի եռապատիկի չափով:~~

1. Ուղևորների, հետիոտների, հեծանվորդների կամ ճանապարհային երթևեկության մյուս մասնակիցների կողմից (բացառությամբ տրանսպորտային միջոցների վարորդների) ճանապարհային երթևեկության կանոնները խախտելը, հետիոտների, հեծանվորդների և ճանապարհային երթևեկության մյուս մասնակիցների կողմից ճանապարհային երթևեկության կարգավորման ազդանշաններին չենթարկվելը, ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները խախտելը՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի եռապատիկի չափով:

2. Հետիոտների կողմից ճանապարհով (այդ թվում՝ մայթերով կամ հետիոտնային արահետներով, իսկ դրանց բացակայության դեպքում՝ կողնակներով) շարժվելու կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

3. Հետիոտների կողմից ճանապարհի երթևեկելի մասը հատելու կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

4. Տրանսպորտային միջոցի ուղևորի կողմից ընթացքի ժամանակ տրանսպորտային միջոցի դռները բացելը կամ կանգնած տրանսպորտային միջոցի դռները բացելը, եթե դա խոչընդոտում է երթևեկության մյուս մասնակիցներին, ինչպես նաև ուղևորների կողմից տրանսպորտային միջոցից իրեր և առարկաներ նետելը՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

5. Մոպեդները, հեծանիվները կամ լծասայլերը վարելու կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

6. Սույն հոդվածի առաջինից հինգերորդ մասերով նախատեսված արարքներ կատարելը, որոնք ստեղծել են վթարային իրադրություն՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

6.1. Սույն հոդվածի 1-5-րդ մասերով նախատեսված արարքները կատարելը, եթե դրանք մարդու առողջությանն անզգուշությամբ պատճառել են թեթև վնաս՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

7. Ճանապարհներով անասուններ քշելու կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

(131-րդ հոդվածը խմբ. 10.03.90, 02.09.93 ՀՕ-79, 03.12.96 ՀՕ-102, 21.02.07 ՀՕ-73-Ն, 07.02.12 ՀՕ-2-Ն, փոփ. 09.12.19 ՀՕ-300-Ն)

Հոդված 140. Ճանապարհները, երկաթուղային գծանցները և ճանապարհի այլ ինժեներական կառույցները վնասելը

(վերնագիրը խմբ. 07.02.12 ՀՕ-2-Ն)

1. Ճանապարհները, երկաթուղային գծանցները, ճանապարհի այլ ինժեներական կառույցները կամ ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցները վնասելը, փակելը, հանելը կամ տեղադրելը, ինչպես նաև ճանապարհային երթևեկության համար խոչընդոտներ ստեղծելը (այդ թվում՝ ճանապարհի ծածկույթը աղտոտելու, առանց համապատասխան թույլտվության ճանապարհի վրա բացօթյա առևտուր իրականացնելու, շինարարական նյութեր կամ այլ իրեր ու առարկաներ ճանապարհին թողնելու միջոցով)՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով:

2. Առանց համապատասխան թույլտվության կամ իրավասու մարմինների հետ համաձայնեցման՝ ճանապարհի վրա շինարարական աշխատանքներ կատարելը կամ գովազդ տեղադրելը, ինչպես նաև ճանապարհների հետ հատումներ բացելը՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով:

3. ***(մասն ուժը կորցրել է 09.12.19 ՀՕ-300-Ն)***

4. Ինքնակամ ճանապարհային նշաններ (այդ թվում՝ ինքնաշեն) տեղադրելը կամ ապամոնտաժելը, ինչպես նաև ինքնակամ գծանշումներ կատարելը կամ դրանք փոփոխելը՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով:

5. Առանց համապատասխան թույլտվության կանգնակների, արգելապատնեշների կամ այլ պարագաների միջոցով երթևեկելի մասը սահմանափակելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով՝ սահմանափակող իրերի և առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:

6. Սույն հոդվածի 1-5-րդ մասերով նախատեսված արարքները կատարելը, եթե դրանք մարդու առողջությանն անզգուշությամբ պատճառել են թեթև վնաս՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով:

(140-րդ հոդվածը խմբ. 02.07.91, 02.09.93 ՀՕ-79, 03.12.96 ՀՕ-102, փոփ. 16.12.05 ՀՕ-26-Ն, խմբ. 21.02.07 ՀՕ-73-Ն, 07.02.12 ՀՕ-2-Ն, 21.06.14 ՀՕ-78-Ն, փոփ., խմբ. 09.12.19 ՀՕ-300-Ն)

Հոդված 157.17. **Համայնքի ղեկավարի կողմից պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում չկայացնելը կամ իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը չապահովելը**

Հոդվածն ուժը կորցրել է~~1. Համայնքի ղեկավարի կողմից պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում չկայացնելը կամ իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը չապահովելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երկուհազարհինգհարյուրապատիկի չափով:~~

(157.17-րդ հոդվածը լրաց. 16.12.21 ՀՕ-401-Ն)

Հոդված 169. Ապօրինի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը

1. Ապօրինի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը, այսինքն՝ առանց պետական հաշվառման կամ գրանցման ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելը կամ առանց հատուկ թույլտվության կամ առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա (բացառությամբ մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման) կամ առանց ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկից երեսնապատիկի չափով:

2. Սույն հոդվածի համաձայն՝ պետությանը պատճառված վնասի հաշվարկում ներառվում է նաև պետական գրանցման, ինչպես նաև հատուկ թույլտվության, լիցենզիայի տրման, ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար գանձման ենթակա պետական տուրքի չափը:

~~**Հոդված 169.**~~ ~~**Ապօրինի ձեռնարկատիրությունը**~~

~~Ապօրինի ձեռնարկատիրությամբ զբաղվելը, այսինքն՝ առանց իրավաբանական անձի պետական գրանցման կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը կամ առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելը (բացառությամբ մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման)՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկից երեսնապատիկի չափով:~~

~~Սույն հոդվածի համաձայն՝ պետությանը պատճառված վնասի հաշվարկում ներառվում է նաև պետական գրանցման, ինչպես նաև հատուկ թույլտվության (լիցենզիայի) համար գանձման ենթակա պետական տուրքի գումարի չափը:~~

~~***(169-րդ հոդվածը փոփ. 11.05.92, 02.09.93 ՀՕ-79, 03.12.96 ՀՕ-102, 23.06.97 ՀՕ-133, 10.10.00 ՀՕ-96, լրաց., փոփ. 26.12.08 ՀՕ-244-Ն, խմբ. 05.10.10 ՀՕ-138-Ն, 21.12.10 ՀՕ-220-Ն, լրաց. 16.12.16 ՀՕ-18-Ն)***~~

Հոդված 169.30. Կանխամտածված կեղծ գովազդը

1. Գովազդատուի, գովազդ արտադրողի կամ գովազդակրի կողմից սպառողին հումքի, ապրանքի, մատուցվող ծառայության որակի, գնի կամ այլ առանձնահատկության վերաբերյալ մոլորության մեջ գցելը, եթե դրա հետևանքով անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին պատճառվել է մանր չափերի գույքային վնաս՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով:

2. Սույն հոդվածի իմաստով մանր չափ է համարվում 500.000 ՀՀ դրամը չգերազանցող գումարը (արժեքը):

Հոդված 171.3. Մենաշնորհ գերիշխող կամ բանակցային~~Գերիշխող~~ դիրքի չարաշահումը

Տնտեսավարող սուբյեկտի մենաշնորհ կամ գերիշխող կամ բանակցային ուժեղ ~~գերիշխող~~ դիրքի չարաշահումը տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձի համար՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկից մինչև հինգհազարապատիկի չափով:

Հոդված 171.4. Համակենտրոնացումը չհայտարարագրելը կամ արգելված համակենտրոնացումը գործողության մեջ դնելը

1. Տնտեսվարող սուբյեկտի կողմից հայտարարագրման ենթակա համակենտրոնացումը չհայտարարագրելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատկից չորսհազարապատիկի չափով:

2. Տնտեսավարող սուբյեկտի կողմից Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի որոշմամբ արգելված համակենտրոնացումը գործողության մեջ դնելը տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձի համար՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկից մինչև հինգհազարապատիկի չափով:

3. Համակենտրոնացման մասնակից ֆիզիկական անձի կողմից Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի որոշմամբ արգելված համակենտրոնացումը գործողության մեջ դնելը ֆիզիկական անձի համար՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկից մինչև հինգհազարապատիկի չափով:

~~Հոդված 171.4. Արգելված համակենտրոնացումը գործողության մեջ դնելը~~

~~Տնտեսավարող սուբյեկտի կողմից Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի որոշմամբ արգելված համակենտրոնացումը գործողության մեջ դնելը տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձի համար՝~~

~~առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկից մինչև հինգհազարապատիկի չափով:~~

~~2. Համակենտրոնացման մասնակից ֆիզիկական անձի կողմից Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի որոշմամբ արգելված համակենտրոնացումը գործողության մեջ դնելը ֆիզիկական անձի համար՝~~

~~առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկից մինչև հինգհազարապատիկի չափով:~~

~~*(171.4-րդ հոդվածը փոփ., լրաց. 03.03.21 ՀՕ-94-Ն)*~~

Հոդված 177. Երեխային հակահասարակական գործողություններ կատարելուն ներգրավելը

1. 18 տարին լրացած անձի կողմից երեխային ոչ սթափ վիճակի հասցնելը, որը դրսևորվել է վերջինիս կողմից ոգելից խմիչքներ օգտագործելով կամ ուժեղ ներգործող կամ այլ թմրեցնող նյութերի ոչ բժշկական նպատակներով օգտագործելով, կամ երեխային թափառաշրջիկության կամ մուրացկանության դրդելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է այն անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության, խնամքի կամ բուժման պարտականությունը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քառասնապատիկի չափով:

Հոդված 178. Երեխայի դաստիարակության, ուսուցման կամ խնամքի պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը

1. Ծնողի, այլ օրինական ներկայացուցչի կամ այլ անձի կողմից, որի վրա երեխայի դաստիարակության, ուսուցման կամ խնամքի պարտականություն է դրված, այդ պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝
առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով:

~~**Հոդված 177. Անչափահասին հարբած վիճակի հասցնելը**~~

~~Ծնողների կամ այլ անձանց կողմից անչափահասին հարբած վիճակի հասցնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:~~

~~***(177-րդ հոդվածը խմբ. 02.09.93 ՀՕ-79, փոփ. 07.02.12 ՀՕ-2-Ն)***~~

~~**Հոդված 178. Ծնողների և նրանց փոխարինող անձանց կողմից երեխաների դաստիարակության և ուսուցման պարտականությունները չկատարելը**~~

~~Ծնողների կամ նրանց փոխարինող անձանց կողմից անչափահաս երեխաների դաստիարակության և ուսուցման պարտականությունները չարամտորեն չկատարելը, անչափահասների կողմից թմրամիջոցներ օգտագործելն առանց բժշկի նշանակման կամ նրանց կողմից այլ իրավախախտումներ կատարելը (բացի սույն հոդվածի երրորդ մասով նախատեսված իրավախախտումներից)՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում ծնողների կամ նրանց փոխարինող անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով:~~

~~***(մասն ուժը կորցրել է 07.02.12 ՀՕ-2-Ն)***~~

~~Հասարակական վայրերում մինչև տասնվեց տարեկան դեռահասների հարբած վիճակում երևալը, ինչպես նաև նրանց կողմից ոգելից խմիչքներ օգտագործելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում ծնողների կամ նրանց փոխարինող անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:~~

~~***(178-րդ հոդվածը խմբ. 23.10.87, 02.09.93 ՀՕ-79, փոփ. 07.02.12 ՀՕ-2-Ն)***~~

Հոդված 190. Ապօրինի կերպով քաղաքացիական ողորկափող հրազեն ձեռք բերելը, պահելը, ուրիշ անձանց տալը, փոխադրելը, առաքելը կամ իրացնելը, քաղաքացիական ողորկափող հրազենի փամփուշտներ կամ դրա հիմնական բաղկացուցիչ մասեր ձեռք բերելը, պահելը, փոխադրելը, առաքելը, իրացնելը կամ

կրելը, գազային, օդաճնշիչ, նետողական կամ որսորդական շեղբավոր սառը զենք ձեռք բերելը և պահելը

1. Ապօրինի կերպով քաղաքացիական ողորկափող հրազեն ձեռք բերելը, պահելը, ուրիշ անձանց տալը, փոխադրելը, առաքելը կամ իրացնելը

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի քառասնապատիկի չափով՝ զենքի բռնագրավմամբ:

2. Նույն գործողությունները այն անձի կողմից կատարելը, որը սույն հոդվածի առաջին մասով նախատեսված խախտումներից որևէ մեկի համար մեկ տարվա ընթացքում ենթարկվել է վարչական տույժի՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով՝ զենքի բռնագրավմամբ:

3. Ապօրինի կերպով քաղաքացիական ողորկափող հրազենի փամփուշտներ կամ դրա հիմնական բաղկացուցիչ մասեր ձեռք բերելը, պահելը փոխադրելը, առաքելը, իրացնելը կամ կրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով՝ քաղաքացիական ողորկափող հրազենի փամփուշտների կամ դրա հիմնական բաղկացուցիչ մասերի բռնագրավմամբ:

4. Նույն գործողությունները այն անձի կողմից կատարելը, որը սույն հոդվածի երրորդ մասով նախատեսված խախտումներից որևէ մեկի համար մեկ տարվա ընթացքում ենթարկվել է վարչական տույժի՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի քառասնապատիկի չափով՝ քաղաքացիական ողորկափող հրազենի փամփուշտների կամ դրա հիմնական բաղկացուցիչ մասերի բռնագրավմամբ:

5. Ապօրինի կերպով գազային, օդաճնշիչ, նետողական կամ որսորդական շեղբավոր սառը զենք ձեռք բերելը և պահելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով՝ զենքի բռնագրավմամբ:

6. Սույն հոդվածում նշված զենքը, փամփուշտները կամ դրա բաղկացուցիչ մասերը կամովին հանձնած անձն ազատվում է դրա համար վարչական պատասխանատվությունից:

~~**Հոդված 190.**~~ ~~**Քաղաքացիների կողմից ողորկափող որսորդական հրազեն ձեռք բերելու, պահելու, ուրիշին տալու կամ վաճառելու կարգը խախտելը**~~

~~Առանց ոստիկանության թույլտվության քաղաքացիների կողմից ողորկափող որսորդական հրազեն ձեռք բերելը, պահելը, ուրիշ անձանց տալը կամ վաճառելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով՝ զենքի բռնագրավմամբ կամ առանց դրա:~~

~~Նույն գործողությունները այն անձի կողմից կատարելը, որը սույն հոդվածի առաջին մասով նախատեսված խախտումներից որևէ մեկի համար մեկ տարվա ընթացքում ենթարկվել է վարչական տույժի՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով՝ զենքի բռնագրավմամբ:~~

~~*(190-րդ հոդվածը խմբ. 02.09.93 ՀՕ-79, փոփ. 07.02.12 ՀՕ-2-Ն)*~~

Հոդված 191. Հրազենը և ռազմամթերքը~~զինամթերքը~~ պահելու կամ փոխադրելու կանոնները խախտելը

Զենք պահելու համար ոստիկանության թույլտվություն ունեցող քաղաքացիների կողմից ողորկափող որսորդական հրազենը և ակոսավոր հրազենն ու ռազմամթերքը~~զինամթերքը~~ պահելու կամ փոխադրելու կանոնները խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով կամ զենքի և ռազմամթերքի~~զինամթերքի~~ հատուցմամբ վերցնում:

Նույն գործողությունները այն անձի կողմից կատարելը, որը սույն հոդվածի առաջին մասով նախատեսված խախտումներից որևէ մեկի համար մեկ տարվա ընթացքում ենթարկվել է վարչական տույժի՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի քառասնապատիկի չափով՝ զենքի և ռազմամթերքի~~զինամթերքի~~ բռնագրավմամբ կամ առանց դրա:

Հրազենը և ռազմամթերքը~~զինամթերքը~~ պահելու կամ փոխադրելու կանոնները ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների այն աշխատողների կողմից խախտելը, որոնք պատասխանատու են դրանց անվթարության համար, ինչպես նաև նրանց կողմից հրազենը և ռազմամթերքը~~զինամթերքը~~ ոչ ըստ նպատակի օգտագործելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով:

Նույն գործողությունները այն անձի կողմից կատարելը, որը մեկ տարվա ընթացքում սույն հոդվածի երրորդ մասով նախատեսված խախտումներից որևէ մեկի համար ենթարկվել է վարչական տույժի՝

առաջացնում են տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

(191-րդ հոդվածը խմբ. 02.09.93 ՀՕ-79, փոփ. 07.02.12 ՀՕ-2-Ն)

Հոդված 193. Ողորկափող որսորդական հրազենը և ռազմամթերքը~~զինամթերքը~~ հրացնելուց խուսափելը

Ողորկափող որսորդական հրազենը և ռազմամթերքը~~զինամթերքը~~ հրացնելուց այն քաղաքացիների խուսափելը, որոնց զենք և ռազմամթերքը~~զինամթերք~~ պահելու թույլտվությունը չեղյալ է հայտարարվել ոստիկանության կողմից որսորդական ընկերություններից դուրս գալու կապակցությամբ՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով՝ զենքի և ռազմամթերքի~~զինամթերքի~~ հատուցմամբ առգրավումով:

(193-րդ հոդվածը խմբ. 02.09.93 ՀՕ-79, փոփ. 07.02.12 ՀՕ-2-Ն)

~~Հոդված 201[1]. Վտանգավոր և այլ թափոնների փոխադրման և հեռացման կարգը խախտելը~~

~~Վտանգավոր և այլ թափոնների փոխադրման համար պատասխանատու անձի կողմից դրանց փոխադրման սկզբի և ավարտի մասին իրավասու պետական մարմնին սահմանված ժամկետներում չհայտնելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրհինգապատիկի չափով:~~

~~Վտանգավոր և այլ թափոնների հեռացման համար պատասխանատու անձի կողմից դրանց ստացման և հեռացման գործողությունների մասին իրավասու պետական մարմնին սահմանված ժամկետներում չհայտնելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրհինգապատիկի չափով:~~

~~(201[1] - ին հոդվածը լրաց. 29.04.96 ՀՕ-53, փոփ. 11.12.02 ՀՕ-495-Ն)~~

~~Հոդված 201[2]. Վտանգավոր և այլ թափոնների անօրինական շրջանառությունը~~

~~Վտանգավոր և այլ թափոնների անօրինական շրջանառություն կատարելը, որն էական վնաս չի պատճառել՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրհինգապատիկի չափով:~~

~~(201[2] - րդ հոդվածը լրաց. 29.04.96 ՀՕ-53, փոփ. 11.12.02 ՀՕ-495-Ն)~~

~~Հոդված 204.1. Արգելանքի տակ գտնվող կամ բռնագրավման ենթակա գույքի նկատմամբ ապօրինի գործողությունները~~

~~Արգելանքի տակ գտնվող կամ բռնագրավման ենթակա գույքը վատնելը, օտարելը, թաքցնելը կամ ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելն այն անձի կողմից, որին այդ գույքը վստահված է եղել, ինչպես նաև վարկատու կազմակերպության ծառայողի կողմից կալանքի տակ գտնվող դրամական միջոցներով (ավանդներով) բանկային գործառնություններ իրականացնելը՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:~~

~~*(204.1-ին հոդվածը լրաց. 16.05.16 ՀՕ-82)*~~

Հոդված 204.2. Պարտապանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի և գույքային իրավունքների կազմի, քանակի և գտնվելու վայրի մասին ներկայացվող հայտարարագրում տվյալներ թաքցնելը կամ կեղծ տվյալներ ներկայացնելը

1. Պարտապանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի և գույքային իրավունքների կազմի, քանակի և գտնվելու վայրի մասին ներկայացվող հայտարարագրում տվյալներ թաքցնելը կամ կեղծ տվյալներ ներկայացնելը, որը հանգեցրել է մանր չափերի պարտավորության հարկադիր կատարման անհնարինության՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով:

2. Սույն հոդվածի իմաստով մանր չափ է համարվում 500.000 << դրամը չգերազանցող գումարը (արժեքը):

~~**Հոդված 206.[9] Դատական ակտը դիտավորությամբ չկատարելը**~~

~~Օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը (բացառությամբ գումարի բռնագանձման պահանջի և քաղաքացիաիրավական պայմանագրերից բխող պարտավորությունների) այդ ակտերում սահմանված ժամկետներում, իսկ ժամկետներ սահմանված չլինելու դեպքում այդ ակտերն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, քաղաքացիների կողմից դիտավորությամբ չկատարելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով:~~

~~*(206[9] - րդ հոդվածը լրաց. 22.12.10 ՀՕ-10-Ն)*~~

Հոդված 206.16.[ուղղ] Անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը դիտավորությամբ չկատարելը

1. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով, ինչպես նաև 8-րդ հոդվածի 5-րդ մասի 5~~6~~-8-րդ կետերով նախատեսված պահանջները ընտանիքում բռնություն գործադրած անձի կողմից դիտավորությամբ չկատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից հարյուրապատիկի չափով:

(206.16-րդ հոդվածը լրաց.13.12.17 ՀՕ-324-Ն)

Հոդված 223. Վարչական դատարանները

(վերնագիրը փոփ. 07.02.12 ՀՕ-2-Ն)

Վարչական դատարանները քննում են՝

1) սույն օրենսգրքի 41.5, 97^2, 97^3, 147, 166^1, 172.3 հոդվածներով, 180^1, 182, 183^1, 189^2 - 189^6, 189.9-189.10, 189.25, 189.26-189.28 հոդվածներով, 198^2 հոդվածի չորրորդ մասով և 206^5, 206^{10}, 206^{11}, 206^{12}, 20613, 206.16, 206.14 հոդվածներով նախատեսված դեպքերում՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների (պաշտոնատար անձանց) հայցադիմումով.

2) սույն օրենսգրքի 170^5, 189^7, 189^{18} հոդվածներով և 198^2 հոդվածի հինգերորդ մասով նախատեսված դեպքերում՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հայցադիմումով.

3~~) սույն օրենսգրքի 206^9 հոդվածով նախատեսված դեպքում՝ դատավճռի, վճռի կամ այլ դատական ակտի կատարումն ապահովող պետական մարմնի (պաշտոնատար անձի) հայցադիմումով.~~

4) սույն օրենսգրքի 206^8 հոդվածով նախատեսված դեպքում՝ մարդու իրավունքների պաշտպանի հայցադիմումով.

5) սույն օրենսգրքի 206.15-րդ հոդվածով նախատեսված դեպքում՝ Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի հայցադիմումով.

5.1) սույն օրենսգրքի 206.17-րդ հոդվածով նախատեսված դեպքում՝ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմի ղեկավարի (Դատական դեպարտամենտի ղեկավարի) հայցադիմումով.

6) սույն օրենսգրքի 40.1-40.4 և 40.6-40.16 հոդվածներով նախատեսված դեպքերում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու իրավասություն ունեցող պետական մարմինների (պաշտոնատար անձանց) կամ համապատասխան ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուների կամ այդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև հանրաքվեի ժամանակ քարոզչության կողմերի հայցադիմումով:

(223-րդ հոդվածը փոփ 01.07.91, 11.05.92, 02.09.93 ՀՕ-79, 19.05.95 ՀՕ-137, 04.11.96 ՀՕ-85, 03.12.96 ՀՕ-102, 02.12.97 ՀՕ-162, 19.03.99 ՀՕ-287, 10.10.00 ՀՕ-96, 11.09.01 ՀՕ-215, 01.12.03 ՀՕ-47-Ն, 24.03.05 ՀՕ-78-Ն, լրաց. 01.06.06 ՀՕ-115-Ն, 21.02.07 ՀՕ-73-Ն, փոփ. 22.12.10 ՀՕ-10-Ն, խմբ. 08.02.11 ՀՕ-48-Ն, փոփ. 26.05.11 ՀՕ-165-Ն, լրաց. 19.03.12 ՀՕ-34-Ն, փոփ. 07.02.12 ՀՕ-2-Ն, լրաց. 17.05.16 ՀՕ-51-Ն, փոփ., լրաց. 16.12.16 ՀՕ-8-Ն, փոփ. 01.03.17 ՀՕ-45-Ն, լրաց. 09.06.17 ՀՕ-106-Ն, 17.01.18

ՀՕ-49-Ն, 09.06.17 ՀՕ-106-Ն, 13.12.17 ՀՕ-324-Ն, փոփ., լրաց. 07.09.18 ՀՕ-376-Ն, լրաց. 08.05.19 ՀՕ-30-Ն, 25.03.20 ՀՕ-206-Ն, փոփ. 07.05.21 ՀՕ-205-Ն, լրաց. 03.03.21 ՀՕ-120-Ն, 30.06.21 ՀՕ-303-Ն)

(հոդվածը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին վերաբերելի մասով 07.05.21 ՀՕ-205-Ն օրենքի փոփոխությամբ ուժի մեջ կ

Հոդված 224. Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը

(վերնագիրը խմբ. 07.02.12 ՀՕ-2-Ն)

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը քննում է սույն օրենսգրքի 41.7-41.8-րդ, 43.1-ին հոդվածի 7-րդ մասով, 44.1-րդ, 44.2-րդ, 47.14-րդ, 521-ին, 53-րդ, 532-536-րդ, 637-րդ, 881-ին, 95-րդ, 110.1-ին, 110.2-րդ, 111-րդ, 123-123.4-րդ (բացառությամբ 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված իրավախախտումների), 123.5-րդ (բացառությամբ ութերորդ, իններորդ, տասնչորսերորդ և տասնհինգերորդ մասերով նախատեսված իրավախախտումների), 123.6-123.7-րդ, 124-124.4-րդ, 124.6-րդ, 125-126-րդ, 128-րդ, 129.2-րդ, 129.3-րդ, 131-րդ, 132-րդ, 134-րդ, 135.1-րդ, 135.2-րդ, 139-րդ, 140-րդ, 153-րդ, 160-րդ, 169.23-րդ, 169.30-րդ, 172.2-րդ, 173-րդ, 173.2-րդ, 175-րդ, 177-րդ, 178-րդ, 178.1-րդ, 178.2-րդ, 179.1-ին, 180-րդ (բացառությամբ հինգերորդ և վեցերորդ մասերով նախատեսված իրավախախտումների), 181-րդ, 182.3-րդ, 182.4-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-8-րդ, 9-րդ (բացառությամբ պաշտպանության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի և սահմանապահ զորքերի զինծառայողների (աշխատակիցների) կողմից մեկուսացման կանոնների խախտման վերաբերյալ իրավախախտումների) և 10-րդ մասերով, 182.5-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-10-րդ (բացառությամբ սույն օրենսգրքի 223.3-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումների), 12-14-րդ մասերով, 183-րդ, 184-րդ, 186-րդ (եթե իրավախախտումը կատարվել է ոստիկանության ենթակայության՝ ձերբակալվածներին պահելու վայրերում), 189.8-րդ, 190-193-րդ, 195.1-196-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով, 201-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և 204.2-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:~~1. Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը քննում է սույն օրենսգրքի 43.1-ին հոդվածի 7-րդ մասով, 44.1, 44.2, 47.14, 53, 95, 110.1, 110.2, 111, 123-123.4 (բացառությամբ 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված իրավախախտումների), 123.5 (բացառությամբ ութերորդ, իններորդ, տասնչորսերորդ և տասնհինգերորդ մասերով նախատեսված իրավախախտումների), 123.6-123.7, 124-124.4, 124.6, 125-126, 128, 129.2, 129.3, 131, 132, 134, 135.1, 135.2, 139, 140, 153, 160, 169.23, 172.2, 173, 173.2, 175, 177, 178, 178.1, 179.1, 180 (բացառությամբ հինգերորդ և վեցերորդ մասերով նախատեսված իրավախախտումների), 181, 182.3, 182.4-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-8-րդ, 9-րդ (բացառությամբ պաշտպանության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի և սահմանապահ զորքերի զինծառայողների (աշխատակիցների) կողմից մեկուսացման կանոնների խախտման վերաբերյալ իրավախախտումների) և 10-րդ մասերով, 182.5-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-10-րդ (բացառությամբ սույն օրենսգրքի 223.3-~~

~~ող հոդվածով նախատեսված իրավախախտումների), 12-14-ող մասերով, 183, 184, 186 (եթե իրավախախտումը կատարվել է ոստիկանության ենթակայության՝ ձերբակալվածներին պահելու վայրերում), 189.8, 190-193, 195.1-196, 199, 200 հոդվածներով և 201-ող հոդվածի 1-ին և 2-ող մասերով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:~~

~~2. Հայաստանի Հանրապետության ոստիկանության անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հրամանով սահմանված պաշտոնատար անձինք:~~

(224-ող հոդվածը փոփ. 25.06.86, 30.09.87, 10.03.90, 02.07.91, 02.09.93 ՀՕ-79, 14.06.94 ՀՕ-105, 03.12.96 ՀՕ-102, 24.12.04 ՀՕ-68-Ն, 24.11.04 ՀՕ-136-Ն, խմբ. 16.12.05 ՀՕ-26-Ն, փոփ. 16.12.05 ՀՕ-32-Ն, խմբ., փոփ. 21.02.07 ՀՕ-73-Ն, լրաց. 07.04.09 ՀՕ-89-Ն, փոփ. 18.05.09 ՀՕ-132-Ն, լրաց. 18.05.10 ՀՕ-65-Ն, 09.02.12 ՀՕ-7-Ն, փոփ. 27.02.12 ՀՕ-24-Ն, լրաց., փոփ. 19.03.12 ՀՕ-34-Ն, լրաց. 21.03.12 ՀՕ-107-Ն, լրաց., փոփ. 30.11.11 ՀՕ-289-Ն, խմբ. 07.02.12 ՀՕ-2-Ն, լրաց. 19.12.12 ՀՕ-247-Ն, փոփ. 19.06.13 ՀՕ-94-Ն, լրաց. 21.06.14 ՀՕ-101-Ն, փոփ. 20.11.14 ՀՕ-173-Ն, 21.12.15 ՀՕ-178-Ն, 01.03.17 ՀՕ-49-Ն, լրաց. 17.11.17 ՀՕ-204-Ն, 21.12.17 ՀՕ-11-Ն, 22.05.18 ՀՕ-331-Ն, 13.12.17 ՀՕ-324-Ն, փոփ. 11.09.18 ՀՕ-381-Ն, լրաց., խմբ. 09.12.19 ՀՕ-300-Ն, լրաց. 04.09.20 ՀՕ-405-Ն, 09.10.20 ՀՕ-456-Ն, 20.01.21 ՀՕ-59-Ն, փոփ. 27.05.21 ՀՕ-268-Ն)

Հոդված 230. Առողջապահության ոլորտում և աշխատանքային օրենսդրության նկատմամբ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը

(վերնագիրը խմբ. 21.03.18 ՀՕ-173-Ն, 04.12.19 ՀՕ-266-Ն)

1. Սույն օրենսգրքի 41-ող, 41.1-ին, 41.2-ող, 41.6-ող, 42-43-ող[ուղղ.], 45-47.5-ող, 47.7-47.12~~3~~-ող հոդվածներով, 47.15-ող հոդվածի 1-3-ող, 7-9-ող մասերով, 47.18-47.26~~7~~-ող, 47.28-ող, 80-86-ող (եթե դրանք համարվում են մթնոլորտային օդի պահպանության սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի խախտումներ), 87-ող (Առողջապահության ոլորտում և աշխատանքային օրենսդրության նկատմամբ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի հանձնարարականները չկատարելու մասով), 96.1-ին, 152-ող հոդվածներով, 156.1-ին հոդվածի 4-ող և 4.1-ին մասերով, 158-ող հոդվածի 19-ող մասով, 158.1-ին, 169.5-ող, 169.8-ող հոդվածներով, 173.1-ին հոդվածի 3-ող մասով, 173.3-ող հոդվածով, 182.4-ող հոդվածի 3-ող, 4-ող և 11-ող մասերով, 182.5-ող հոդվածի 3-ող (դեղորայքի ձեռքբերման և շրջանառության հետ կապված իրավախախտումների մասով), 11-ող (դեղերի և բժշկական նշանակության ապրանքների արտադրման ու ներմուծման հետ կապված իրավախախտումների մասով) և 14-ող մասերով, 198-ող հոդվածով, 201-ող հոդվածի 3-5-ող մասերով և 213.2-ող հոդվածով (դեղերի և բժշկական նշանակության գույքի մասով) նախատեսված վարչական իրավախախտումների

վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Առողջապահության ոլորտում և աշխատանքային օրենսդրության նկատմամբ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը:

2. Առողջապահության ոլորտում և աշխատանքային օրենսդրության նկատմամբ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեն տեսչական մարմնի ղեկավարը, ղեկավարի տեղակալները և տարածքային կենտրոնների պետերը:

(230-րդ հոդվածը փոփ. 14.06.94 ՀՕ-105, 26.12.02 ՀՕ-499-Ն, 25.12.03 ՀՕ-31-Ն, 14.12.04 ՀՕ-187-Ն, 24.03.05 ՀՕ-78-Ն, լրաց. 06.12.07 ՀՕ-296-Ն, փոփ. 18.03.08 ՀՕ-8-Ն, 24.06.10 ՀՕ-118-Ն, խմբ. 21.03.18 ՀՕ-173-Ն, լրաց. 13.02.20 ՀՕ-96-Ն, փոփ. 04.03.20 ՀՕ-130-Ն, լրաց. 06.05.20 ՀՕ-269-Ն, 04.09.20 ՀՕ-405-Ն, 18.06.20 ՀՕ-351-Ն, 09.10.20 ՀՕ-456-Ն, 17.09.20 ՀՕ-444-Ն, խմբ. 04.12.19 ՀՕ-266-Ն, 15.07.21 ՀՕ-311-Ն, լրաց. 05.05.21 ՀՕ-196-Ն, 27.05.21 ՀՕ-229-Ն, փոփ. 27.05.21 ՀՕ-268-Ն)

Հոդված 242[2]. Ընդերքի օգտագործման ու պահպանման բնագավառում պետական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը

(վերնագիրը փոփ. 21.03.18 ՀՕ-185-Ն)

Ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում պետական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը քննում է վարչական գործեր և նշանակում վարչական տույժեր սույն օրենսգրքի 49-րդ, 59-րդ, 60-րդ (բացառությամբ լեռնային աշխատանքների անվտանգ կատարման և ռադիոակտիվ հսկողության մասերի), 60[1] -րդ (բացառությամբ ընդերքն օգտակար հանածոների արդյունահանման հետ չկապված նպատակով շահագործելու դեպքի)~~, 169[4] -րդ~~ հոդվածներով ~~(օգտակար հանածոների մասով)~~ նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ:

(242[2] - րդ հոդվածը լրաց. 28.11.11 ՀՕ-283-Ն, փոփ. 21.03.18 ՀՕ-185-Ն)

Հոդված 244[11]. Քաղաքաշինության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը

(վերնագիրը փոփ. 10.06.19 ՀՕ-65-Ն)

Քաղաքաշինության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը քննում է սույն օրենսգրքի 152.2-րդ հոդվածի 2-րդ մասով, 156.1-ին հոդվածով, 157.1-157.14-րդ և 157.16-157.18-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը, ինչպես նաև 152-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ քաղաքաշինական նորմերի խախտման մասով:

Քաղաքաշինության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեն՝

1) քաղաքաշինության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարը և նրա տեղակալները՝ 157.1-157.14-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում՝ տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից բարձր չափով, 157.16-րդ հոդվածով նախատեսված դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով, 152.2-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով, 152-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով, ինչպես նաև ~~157.17-րդ և~~ 157.18-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում.

2) քաղաքաշինության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանումների ղեկավարները՝ 157.1-157.14-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում՝ տուգանք՝ մինչև սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, 157.16-րդ հոդվածով նախատեսված դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսնապատիկի չափով, իսկ 152-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի եռապատիկի չափով.

3) քաղաքաշինության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ծառայողները՝ նախազգուշացում:

(244[11] - րդ հոդվածը լրաց. 04.11.03 ՀՕ-30-Ն, փոփ 24.05.06 ՀՕ-72-Ն, փոփ., լրաց. 19.12.12 ՀՕ-247-Ն, լրաց. 29.04.15 ՀՕ-31-Ն, փոփ. 10.06.19 ՀՕ-65-Ն, լրաց. 05.05.21 ՀՕ-196-Ն, փոփ., լրաց. 16.12.21 ՀՕ-401-Ն)

~~**Հոդված 244.16.**~~ ~~**Արգելանքի տակ գտնվող կամ բռնագրավման ենթակա գույքի նկատմամբ ապօրինի գործողությունների վերաբերյալ գործերի քննությունը**~~

~~Սույն օրենսգրքի 204.1 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր նշանակում է համապատասխան արգելանք կամ կալանք կիրառած պետական մարմնի ղեկավարը կամ նրա տեղակալը:~~

~~***(244[16] - րդ հոդվածը լրաց. 16.05.16 ՀՕ-82-Ն)***~~

Հոդված 263. Անձնական զննություն և իրերի զննություն

Անձնական զննություն կարող են կատարել ոստիկանության, ռազմականացված պահպանության, քաղաքացիական ավիացիայի, մաքսային հիմնարկների և սահմանապահ զորքերի՝ դրա համար լիազորված պաշտոնատար անձինք, իսկ ԽՍՀ Միության և Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերով ուղղակիորեն

նախատեսված դեպքերում՝ նաև դրա համար լիազորված մյուս մարմինների պաշտոնատար անձինք:

Անձնական զննություն կարող է կատարել զննության ենթարկվողի հետ նույն սեռին պատկանող լիազորված անձը՝ և նույն սեռին պատկանող երկու ընթերակաների ներկայությամբ:

Իրերի զննություն կարող են կատարել ոստիկանության, ռազմականացված պահպանության, քաղաքացիական ավիացիայի, մաքսային հիմնարկների, հարկային տեսչության մարմինների, սահմանապահ զորքերի, անտառային պահպանության մարմինների, ձկան պահպանության մարմինների, որսի կանոնների պահպանության նկատմամբ պետական հսկողություն իրականացնող մարմինների՝ դրա համար լիազորված պաշտոնատար անձինք, իսկ ԽՍՀ Միության և Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերով ուղղակիորեն նախատեսված դեպքերում՝ նաև դրա համար լիազորված մյուս մարմինների պաշտոնատար անձինք:

Իրերի, ձեռնածանրոցի, բագաժի, որսի և ձկնորսության գործիքների, որսի արդյունքների և այլ առարկաների զննությունը, որպես կանոն, կատարվում է այն անձի ներկայությամբ, որի սեփականության կամ տնօրինության տակ են գտնվում դրանք: Հետաձգում չհանդուրժող դեպքերում նշված իրերը, առարկաները կարող են զննության ենթարկվել սեփականատիրոջ (տիրապետողի) բացակայությամբ՝ երկու ընթերակաների մասնակցությամբ:

Անձնական զննության և իրերի զննության մասին կազմվում է արձանագրություն կամ համապատասխան նշում է արվում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կամ վարչական ձերբակալման վերաբերյալ արձանագրության մեջ:

Անձնական զննությունն ու իրերի զննությունը մաքսային հիմնարկներում կատարվում է օրենքով սահմանված կարգով:

(263-րդ հոդվածը փոփ. 23.06.97 ՀՕ-133, 07.02.12 ՀՕ-2-Ն, 16.05.16 ՀՕ-82-Ն)

Հոդված 264. Իրեր և փաստաթղթեր վերցնելը

Ձերբակալման, անձնական զննության կամ իրերի զննության ժամանակ հայտնաբերված իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող իրերը և փաստաթղթերը վերցվում են սույն օրենսգրքի 261 և 263 հոդվածներում նախատեսված մարմինների պաշտոնատար անձանց կողմից: Վերցված իրերն ու փաստաթղթերը ընդհուպ մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը պահվում են այն մարմինների (պաշտոնատար անձանց) կողմից որոշվող տեղերում, որոնց իրավունք է վերապահված վերցնելու իրերը և փաստաթղթերը, իսկ գործը քննելուց հետո, նայած գործի քննության արդյունքներին, դրանք սահմանված կարգով բռնագրավվում կամ վերադարձվում են տիրոջը կամ ոչնչացվում, իսկ իրերը հատուցմամբ վերցնելու դեպքում իրացվում են: Ինքնաթոր օղին և տնային եղանակով պատրաստված այլ թունդ ոգելից խմիչքները, դրանց արտադրության համար ապարատները ոչնչացվում են գործը քննելուց հետո:

(մասն ուժը կորցրել է 16.05.16 ՀՕ-82-Ն)

Իրեր և փաստաթղթեր վերցնելու դեպքում այդ մասին կազմվում է արձանագրություն կամ համապատասխան նշում է արվում վարչական իրավախախտման վերաբերյալ, իրերի զննության կամ վարչական ձերբակալման վերաբերյալ արձանագրության մեջ:

Այնպիսի խախտում կատարելու դեպքում, որի համար, սույն օրենսգրքին համապատասխան, կարող է վարչական տույժ նշանակվել տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկելու ձևով, վարորդից վերցվում է վարորդական վկայականը մինչև գործի վերաբերյալ որոշում կայացնելը, և տրվում է տրանսպորտային միջոց վարելու իրավունքի ժամանակավոր թույլտվություն, որի մասին նշում է կատարվում իրավախախտումների վերաբերյալ արձանագրության մեջ: Տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկելու որոշում կայացնելու դեպքում վարորդական վկայականը չի վերադարձվում: Սույն օրենսգրքի 123-րդ, 123.1-ին, 123.3-րդ հոդվածներով, 123.4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 123.5-րդ, 123.6-րդ, 123.7-րդ, 124-րդ, 124.1-ին, 124.2-րդ, 124.3-րդ, 124.4-րդ, 124.5-րդ, 124.6-րդ, 125-րդ, 126-րդ և 129.2-րդ հոդվածներով նախատեսված իրավախախտում կատարած՝ Հայաստանի Հանրապետությունում մշտապես չբնակվող անձանց վարորդական վկայականները վերցվում են մինչև գործով կայացված որոշման կատարումը՝ տալով տրանսպորտային միջոց վարելու իրավունքի ժամանակավոր թույլտվություն, որի մասին նշում է կատարվում իրավախախտումների վերաբերյալ արձանագրության մեջ: Ժամանակավոր թույլտվության գործողության ժամկետը երկարաձգվում է մինչև գանգատարկման համար սահմանված ժամկետը լրանալը կամ գանգատի առթիվ որոշումն ընդունելը:

(մասն ուժը կորցրել է 21.02.07 ՀՕ-73-Ն)

Սույն օրենսգրքի 173, 190 հոդվածներով, 191 հոդվածի առաջին և երկրորդ մասերով, 192 և 193 հոդվածներով նախատեսված խախտումներ կատարելու դեպքում ոստիկանության աշխատողները իրավունք ունեն մինչև գործի քննությունը վերցնել հրազենը, ինչպես նաև ռազմամթերքի~~զինամթերքը~~, որի մասին գրանցվում է արձանագրության մեջ՝ նշելով վերցվող զենքի մակնիշը կամ մոդելը, տրամաչափը, սերիան և համարը, զինամթերքի քանակն ու տեսակը: Պաշտոնեական պարտականությունների իրականացման ընթացքում իրավախախտում կատարած անձի իրերի վերցնում, անձնական զննություն և իրերի զննություն կիրառվում է միայն հետաձգում չհանդուրժող դեպքերում:

Սույն օրենսգրքի 184 հոդվածով նախատեսված խախտումներ կատարվելու դեպքում ոստիկանության աշխատողները իրավունք ունեն վերցնելու ԽՍՀՄ շքանշան, մեդալ, պատվավոր կոչման կրծքանշան, շքանշանների ժապավեններ և մեդալների շերտաձողիկներ կամ Հայաստանի Հանրապետության, մյուս միութենական կամ ինքնավար հանրապետության պետական պարգև և դրանց կրծքանշաններ: Գործը քննելուց հետո իրավախախտողից վերցված ԽՍՀՄ շքանշանը, մեդալը, պատվավոր կոչման կրծքանշանը, Հայաստանի Հանրապետության, մյուս միութենական կամ ինքնավար հանրապետության պետական պարգևը, ինչպես նաև դրանց կրծքանշանները ենթակա են վերադարձման դրանց օրինական տիրոջը, իսկ եթե նա հայտնի չէ, ուղարկվում են համապատասխանաբար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի

նախագահություն, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահություն, միութենական կամ ինքնավար հանրապետության Գերագույն խորհրդի նախագահություն:

(264-րդ հոդվածը խմբ. 30.09.87, 10.03.90, լրաց., փոփ. 21.02.07 ՀՕ-73-Ն, 07.02.12 ՀՕ-2-Ն, փոփ. 21.12.15 ՀՕ-178-Ն, 16.05.16 ՀՕ-82-Ն, 09.12.19 ՀՕ-300-Ն, խմբ. 20.01.21 ՀՕ-27-Ն)

(20.01.21 ՀՕ-27-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 283. Գործի վերաբերյալ որոշման հայտարարումը և որոշման պատճենի հանձնումը

Որոշումը հայտարարվում է անհապաղ՝ գործի քննությունն ավարտելուն պես:

Որոշման պատճենը երեք աշխատանքային օրվա ընթացքում անձամբ հանձնվում է այն անձին, որի վերաբերյալ այն ընդունվել է, ինչպես նաև տուժողին՝ նրա խնդրանքով: Որոշումը համարվում է անձամբ հանձնված, եթե՝

1) այն ստորագրությամբ առձեռն հանձնվել է հասցեատիրոջը, կամ հասցեատերը հրաժարվել է որոշումն ստանալուց, և առկա է որոշումը հանձնողի նշումն այդ մասին.

2) այն ուղարկվել է հասցեատիրոջ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով՝ «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, և այդ օրենքով համարվում է պատշաճ ծանուցված.

3) պաշտոնական էլեկտրոնային փոստ չունեցող հասցեատիրոջ գրավոր դիմումի հիման վրա այն ուղարկվել է էլեկտրոնային փոստով կամ հեռահաղորդակցության այլ (այդ թվում՝ բջջային հեռախոսահամարին կարճ հաղորդագրություն ուղարկելու) միջոցով, և դրանք հավաստում են պարտավոր անձի կողմից վարչական ակտի մասին ծանուցումն ստացած լինելու փաստը.

4) հասցեատերը դիմել է տուգանքի վճարումը տարաժամկետելու խնդրանքով կամ բողոքարկել է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշումը, որոնց դեպքում որոշումը հանձնելու օր է համարվում տարաժամկետելու խնդրանքով դիմելու կամ բողոքարկելու օրը:

Եթե հնարավոր չէ որոշումը հանձնել առձեռն, կամ հասցեատերը չունի պաշտոնական էլեկտրոնային փոստ (բնակչության պետական ռեգիստրի տվյալների համաձայն՝ անձը չունի նույնականացման քարտ, կամ պետական ռեգիստրի գրանցամատյանում չկա տեղեկատվություն իրավաբանական անձի էլեկտրոնային փոստի վերաբերյալ) և գրավոր չի դիմել որոշման մասին իր հայտնած հեռահաղորդակցության միջոցով ծանուցելու խնդրանքով, կամ սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված կարգով որոշումը հանձնելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, չի ստացվել հավաստում պարտավոր անձի կողմից վարչական ակտի մասին ծանուցումն ստացած լինելու փաստի մասին, ապա որոշումն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հետադարձ ծանուցմամբ տվյալ վարչական վարույթի ընթացքում անձի հայտնած հասցեով, իսկ դրա բացակայության դեպքում՝ անձի

հաշվառման հասցեով: Եթե փոստով ուղարկված որոշումը վերադարձվել է, կամ ծանուցման փաստը չի հաստատվել, կամ հասցեատերը հրաժարվել է ստանալ պատշաճ կարգով ուղարկված (հանձնվող) որոշումը, և առկա է որոշումը հանձնողի նշումն այդ մասին, ապա որոշումը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Այն դեպքերում, երբ որոշումը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, ապա որոշումը համարվում է հանձնված (պատշաճ ծանուցված) որոշման մասին ծանուցումն ինտերնետային կայքում տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը: Սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված դիմումի առկայության դեպքում Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրվելու հետ մեկտեղ որոշումը ևս մեկ անգամ ուղարկվում է դիմումում մատնանշված հեռահաղորդակցության միջոցով:

Որոշումը հասցեատիրոջ էլեկտրոնային, այդ թվում՝ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկվելու դեպքում անձն ստանում է ծանուցում որոշման առկայության մասին, ինչպես նաև համապատասխան էլեկտրոնային հղումը, որի միջոցով կայացված որոշումը հնարավոր կլինի ներբեռնել կամ տեսանելի լինել ինտերնետային կայքի միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում առնվազն ծանուցման մեջ արտացոլվում է որոշման եզրափակիչ մասը: Բջջային հեռախոսահամարին հաղորդագրությամբ ծանուցման դեպքում անձը ստանում է կարճ հաղորդագրություն որոշման առկայության մասին՝ որոշման համարի կամ այլ տվյալի նշումով, որի օգտագործմամբ անձը ինտերնետային կայքի միջոցով հնարավորություն կունենա դիտելու կամ ներբեռնելու որոշումը:

Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերի որոշման պատճենը հանձնվում է այն անձին, որի վերաբերյալ որոշումը կայացվել է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքով սահմանված կարգով:

Սույն օրենսգրքի 173 հոդվածով և 191 հոդվածի առաջին և երկրորդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների գործերով, այն անձի նկատմամբ որոշման պատճենը, որին ձեռնարկության, հիմնարկի, կազմակերպության կողմից հրազենը, ինչպես նաև ռազմամթերքը~~զինամթերքը~~ վստահվել է պաշտոնեական պարտականությունները կատարելու կապակցությամբ, կամ այդպիսիք տրվել են ժամանակավոր օգտագործման նպատակով, ուղարկվում է համապատասխան ձեռնարկությանը, հիմնարկին կամ կազմակերպությանը՝ ի գիտություն, և ոստիկանությանը՝ այդ անձին հրազենից օգտվելն արգելելու մասին հարցը քննելու համար:

(283-րդ հոդվածը խմբ. 18.08.93 ՀՕ-73, լրաց., փոփ. 07.02.12 ՀՕ-2-Ն, խմբ. 29.09.14 ՀՕ-146-Ն, փոփ., լրաց. 21.12.15 ՀՕ-178-Ն, փոփ. 16.05.16 ՀՕ-82-Ն, խմբ. 25.10.17 ՀՕ-177-Ն, փոփ. 09.12.19 ՀՕ-300-Ն)

Հոդված 309. Առարկան հատուցմամբ վերցնելու մասին որոշման կատարումը

Հատուցմամբ վերցնելու մասին որոշման հիման վրա վերցված առարկաները որոշում կայացրած մարմնի (պաշտոնատար անձի) կողմից հանձնվում են վերցնելու ենթակա գույքի գտնվելու վայրի կոմիսիոն խանութ կամ պետական կամ կոոպերատիվ առևտրի՝ այդ նպատակի համար հատկացված հատուկ խանութներ՝ իրացման համար:

Հրազենի և ռազմամթերքի~~զինամթերքի~~ հատուցմամբ վերցնելու մասին որոշումը կատարում են ոստիկանությունը:

Հատուցմամբ վերցված առարկայի իրացումից ստացված գումարները, սույն օրենսգրքի 27 հոդվածին համապատասխան, հանձնվում են նախկին սեփականատիրոջը, պահելով վերցված առարկայի իրացման հետ կապված ծախսերը:

ԽՍՀ Միության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կարող է սահմանվել առարկան հատուցմամբ վերցնելու մասին որոշումների կատարման այլ կարգ:

(309-րդ հոդվածը փոփ. 07.02.12 ՀՕ-2-Ն)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 27. Համայնքի ղեկավարի պաշտոնակատարը

1. Մինչև համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր պարտականությունների ստանձնումը սույն օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ, 3.1-ին, 3.2-րդ և 4-րդ մասերով նախատեսված որոշումը (արձանագրությունը, հաղորդումը, վկայականը) Հայաստանի Հանրապետության կառավարություն (մարզպետարան) մուտքագրվելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, Հայաստանի Հանրապետության վարչապետը նշանակում է քաղաքային բնակավայր ընդգրկող, իսկ մարզպետը՝ բացառապես գյուղական բնակավայրերից բաղկացած համայնքի ղեկավարի պաշտոնակատար: Համայնքի ղեկավարի պաշտոնակատարը պետք է լինի Հայաստանի Հանրապետության քաղաքացի:

2. Համայնքի ղեկավարի կողմից մեկ ամսից ավելի իր ծառայողական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում մինչև դրա առաջացնող հանգամանքների վերացումը նրա լիազորությունների կատարումը դրվում է համայնքի ղեկավարի տեղակալի վրա, իսկ այդ պաշտոնը թափուր լինելու պարագայում մարզպետը նշանակում է համայնքի ղեկավարի պաշտոնակատար:

2.1. Համայնքի ղեկավարի լիազորությունների ժամկետը լրանալու դեպքում Հայաստանի Հանրապետության վարչապետը նշանակում է քաղաքային բնակավայր ընդգրկող, իսկ մարզպետը՝ բացառապես գյուղական բնակավայրերից բաղկացած

համայնքի ղեկավարի պաշտոնակատար մինչև օրենքով սահմանված կարգով նորընտիր համայնքի ղեկավարի լիազորությունների ստանձնումը:

2.2. Համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնը թափուր լինելու պարագայում համայնքի ղեկավարի կողմից մինչև մեկ ամիս ժամկետով իր ծառայողական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում ավագանու նիստ հրավիրելու և վարելու պարտականությունները դրվում են համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա: Այդ ընթացքում համայնքի ավագանու նիստի օրակարգում չեն կարող ընդգրկվել համայնքի զարգացման ծրագրի, բյուջեի, տարեկան աշխատանքային պլանի նախագծերը, ինչպես նաև ավագանու նիստի ընթացքում չեն կարող ներկայացվել համայնքի ղեկավարի՝ սույն օրենքով նախատեսված հաշվետվությունները:

3. Համայնքի ղեկավարի պաշտոնակատարի պաշտոնավարման ընթացքում չեն կարող կատարվել աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպությունների կառուցվածքային և հաստիքացուցակի փոփոխություններ:

3.1. Քրեական հետապնդման շրջանակներում օրենքով սահմանված դեպքերում և կարգով համայնքի ղեկավարի պաշտոնավարումը~~լիազորությունները~~ կասեցվելիս սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պաշտոնատար անձինք նշանակում են համայնքի ղեկավարի պաշտոնակատար:

(27-րդ հոդվածը լրաց. 09.06.17 ՀՕ-94-Ն, 18.06.20 ՀՕ-335-Ն, 25.03.21 ՀՕ-136-Ն, խմբ., լրաց. 17.11.21 ՀՕ-354-Ն)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 5. Փաստաբանական գործունեությունը

1. Փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով:

2. Փաստաբանը կարող է իրականացնել հետևյալ գործունեությունը՝

1) խորհրդատվություն, ներառյալ՝ վստահորդներին խորհրդատվություն տրամադրելը նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, փաստաթղթերի ուսումնասիրումը, իրավաբանական բնույթի այլ փաստաթղթերի կազմումը (այսուհետ՝ խորհրդատվություն).

2) ներկայացուցչություն, ներառյալ՝ ներկայացուցչությունը դատարանում (այսուհետ՝ դատական ներկայացուցչություն).

3) քրեական ~~գործերով~~ վարույթներովպաշտպանություն.

4) օրենքով նախատեսված դեպքում և կարգով վկային իրավաբանական օգնություն ցույց տալը:

3. Սույն հոդվածով նախատեսված դատական ներկայացուցչությունը կամ դրա կազմակերպումը որպես պարբերաբար կամ վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություն կարող է իրականացնել միայն փաստաբանը, բացառությամբ՝

1) մերձավոր ազգականի, այդ թվում՝ ծնողի, զավակի, որդեգրողի, որդեգրվածի, հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբոր կամ քրոջ, պապի, տատի, թոռան, ինչպես նաև ամուսնու կամ ամուսնու ծնողի, փեսայի կամ հարսի համար անվճար ներկայացուցչություն իրականացնելու դեպքերի.

2) մերձավոր ազգականին (ազգականներին) կանոնադրական կապիտալի կեսից ավելի բաժնեմասերը պատկանող իրավաբանական անձի շահերը դատարանում ներկայացնելու դեպքերի:

4. Սույն հոդվածով նախատեսված քրեական ~~գործերով~~ վարույթներով պաշտպանությունը կարող է իրականացնել միայն փաստաբանը:

5. Փաստաբանական գործունեություն չի համարվում փաստաբանի կողմից աշխատանքային պայմանագրի հիման վրա գործատուին իրավաբանական օգնություն ցույց տալը, բացառությամբ փաստաբանի մոտ աշխատող փաստաբանի կողմից իրականացվող գործունեության:

6. Քաղաքացիական դատավարությունում փաստաբան չհանդիսացող անձանց կողմից դատական ներկայացուցչություն իրականացնելու դեպքերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով:

Հոդված 17. Փաստաբանը

1. Փաստաբան է այն անձը, որն ունի իրավաբան բակալավրի կամ իրավաբան դիպլոմավորված մասնագետի որակավորում և ստացել է համապատասխան արտոնագիր՝ փաստաբանական գործունեություն իրականացնելու համար:

(մասն ուժը կորցրել է 08.12.11 ՀՕ-339-Ն)

Իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ փաստաբանը՝

1) խորհրդատվություն է տրամադրում իրավական հարցերով ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր.

2) կազմում է դիմումներ, բողոքներ, գանգատներ, միջնորդություններ և իրավական բնույթի այլ փաստաթղթեր, ինչպես նաև դրանց նախագծեր.

3) որպես վստահորդի ներկայացուցիչ մասնակցում է քաղաքացիական և վարչական դատավարությանը, մասնակցում է գործի քննությանը Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանում.

4) որպես ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցում է քրեական դատավարությանը և վարչական իրավախախտումների գործերով վարույթին.

5) որպես վստահորդի ներկայացուցիչ մասնակցում է գործերի քննությանը արբիտրաժային տրիբունալում կամ վեճեր լուծող այլ մարմիններում.

6) ներկայացնում է վստահորդի շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական միավորումներում և այլ կազմակերպություններում, օտարերկրյա պետությունների պետական իշխանության մարմիններում, դատարաններում, ~~հետաքննության կամ~~ նախաքննության մարմիններում, միջազգային դատական մարմիններում, օտարերկրյա պետությունների ոչ կառավարական մարմիններում, եթե այլ բան նախատեսված չէ տվյալ երկրի օրենսդրությամբ, միջազգային դատական մարմինների և այլ միջազգային կազմակերպությունների կանոնադրային փաստաթղթերով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Փաստաբանն իրավունք ունի ցույց տալու օրենքով չարգելված իրավաբանական այլ օգնություն: ***(նախադասությունը հանվել է 08.12.11 ՀՕ-339-Ն)***

(մասն ուժը կորցրել է 08.12.11 ՀՕ-339-Ն)

Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար:

Հոդված 18. Փաստաբանի հիմնական իրավունքները

(մասն ուժը կորցրել է 08.12.11 ՀՕ-339-Ն)

Փաստաբանը իրավունք ունի՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական, վարչական և քրեական դատավարության օրենսգրքերով սահմանված կարգով ներկայացնելու կամ պաշտպանելու ֆիզիկական և իրավաբանական անձանց շահերը, ինչպես նաև ներկայացնելու վստահորդի շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ոչ պետական մարմիններում և կազմակերպություններում.

2) օրենքով չարգելված եղանակով ձեռք բերելու, ամրագրելու և ներկայացնելու վստահորդի շահերից բխող ապացույցներ (տեղեկություններ), այդ թվում՝ օգտագործելու տեխնիկական միջոցներ՝ տեսաձայնագրող, ձայնագրող, ֆոտո, բազմացնող կամ այլ սարքավորումներ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, կամ դա չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը.

3) դիմելու պետական, տեղական ինքնակառավարման մարմիններին, անհատ ձեռնարկատերերին և իրավաբանական անձանց (այսուհետ՝ տնտեսավարող սուբյեկտներ)՝ իրավաբանական օգնություն ցույց տալու համար անհրաժեշտ փաստաթղթեր (տեղեկություններ) ստանալու պահանջով: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են տասնօրյա ժամկետում փաստաբանին տրամադրել պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները) կամ դրանց պատճենները, բացառությամբ, երբ այդ մարմինների գործունեությունը կարգավորող օրենքներով այլ բան է նախատեսված, կամ պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները) օրենքով պահպանվող գաղտնիք են պարունակում: Փաստաթղթերի (տեղեկությունների) տրամադրման մերժումը պետք է տրվի գրավոր և պատճառաբանված: Սույն կետում նշված դեպքում փաստաբանից կարող է գանձվել

փաստաթղթերի (տեղեկությունների) կամ դրանց պատճենների տրամադրման համար վճար, որը չի կարող գերազանցել դրա պատրաստման ծախսերը, եթե օրենսդրությամբ վճարման այլ չափ նախատեսված չէ.

4) համաձայնության դեպքում գրավոր հարցման ենթարկելու անձանց, ~~ովքեր, ենթադրվում է~~որոնք ենթադրաբար, որ տիրապետում են գործին կամ վարույթին վերաբերող տեղեկատվությանը, որով փաստաբանն իրավաբանական օգնություն է ցույց տալիս.

5) պայմանագրային հիմունքներով ~~մասնագետներ ներգրավելու~~ներգրավելու մասնագետ կամ թարգմանիչ՝ իրավաբանական օգնություն ցույց տալու հետ կապված այլ մասնագիտական գիտելիքներ պահանջող հարցեր պարզաբանելու կամ թարգմանություն կատարելու համար.

6) առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցելու իր պաշտպանյալի հետ՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման, այդ թվում՝ տեսակցությանը հրավիրելու արտոնագրված թարգմանչի, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

Փաստաբանը փաստաբանական գործունեություն իրականացնելիս ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլ անձանց իրավունքները և ազատությունները:

Հոդված 19. Փաստաբանի հիմնական պարտականությունները

Փաստաբանը պարտավոր է՝

1) ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով.

2) պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները.

3) չհրապարակել փաստաբանական գաղտնիքը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.

4) մշտապես կատարելագործել իր գիտելիքները.

4.1) սահմանված կարգով և ժամաքանակով մասնակցել սույն օրենքով նախատեսված վերապատրաստման դասընթացներին.

5) մուծել անդամավճարներ.

6) չկատարել վստահորդի շահերին հակասող որևէ գործողություն, չընդունել դիրքորոշում՝ առանց նրա հետ համաձայնեցնելու~~, բացառությամբ այն դեպքերի, երբ փաստաբանը համոզված է պաշտպանյալի ինքնազրպարտության մեջ, հակառակ պաշտպանյալի դիրքորոշման՝ չընդունել դեպքի հետ նրա առնչությունը և մեղավորությունը~~.

7) կատարել «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պարտականությունները,

եթե այդ պարտականությունների կատարումը չի խախտում սույն օրենքով նախատեսված փաստաբանական գաղտնիքի պահպանման պահանջը.

8) կատարել փաստաբանների պալատի մարմինների և փաստաբանների պալատի նախագահի՝ իրենց իրավասության սահմաններում ընդունված իրավական ակտերի պահանջները:

Հոդված 20. Փաստաբանի հիմնական իրավունքների և պարտականությունների առանձնահատկությունները

Փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ստանալու համար դիմած անձի հանձնարարությունն ընդունելու, եթե՝

1) այն ակնհայտ անօրինական բնույթ է կրում.

2) վստահորդի հետ կնքած պայմանագրի առարկայի շուրջ ունի ինքնուրույն շահ, որը տարբերվում է տվյալ անձի հետապնդած շահից:

Փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ցույց տալու այն դեպքում, երբ

1) առկա է հակասություն նույն հարցով իր կամ իր վստահորդների շահերի միջև.

2) տվյալ գործին կամ քրեական վարույթին մասնակցել է որպես դատավոր, դատախազ, քննիչ, հետաքննության մարմնի ~~աշխատող~~ աշխատակից, փորձագետ, տուժող կամ վկա, ինչպես նաև եթե նա հանդիսացել է պաշտոնատար անձ, որի իրավասության մեջ էր մտնում տվյալ անձի շահերից բխող որոշման ընդունումը.

3) ազգակցական, անձնական կամ կախյալ հարաբերությունների մեջ է գտնվում այն պաշտոնատար անձի հետ, որը մասնակցել կամ մասնակցում է տվյալ անձի ~~գործի քննությանը~~վերաբերյալ գործի կամ վարույթի քննությանը.

4) պետք է ներկայացնի վստահորդի շահերը որևէ գործում կամ վարույթում, և այդ անձի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին, բացառությամբ այն դեպքերի, երբ նախկին վստահորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը:

Փաստաբանն իրավունք չունի՝

~~1) հայտարարություններ անելու վստահորդի մեղավորության ապացուցված լինելու վերաբերյալ, եթե վերջինս ժխտում է դա.~~

~~2) հրապարակելու վստահորդի կողմից իրավաբանական օգնություն ցույց տալու կապակցությամբ իրեն հայտնած տեղեկությունները՝ առանց վստահորդի համաձայնության:~~

Փաստաբանն իրավունք չունի հրապարակելու վստահորդի կողմից իրավաբանական օգնություն ցույց տալու կապակցությամբ իրեն հայտնած տեղեկությունները՝ առանց վստահորդի համաձայնության:

Փաստաբանը պետք է դադարեցնի իրավաբանական օգնություն ցույց տալ երկու կամ ավելի անձանց, եթե նրանց շահերի միջև առաջանում է հակասություն:

Փաստաբանն իրավունք ունի հրաժարվելու վստահորդի նկատմամբ իր ստանձնած պարտավորությունից միայն սույն օրենքով, ինչպես նաև վստահորդի հետ կնքված պայմանագրով նախատեսված դեպքերում:

Վստահորդն իրավունք ունի ցանկացած պահի հրաժարվելու փաստաբանի ծառայությունից՝ փոխհատուցելով նրա արդեն մատուցած ծառայության դիմաց:

Վստահորդի շահերը ներկայացնելուց հրաժարվելու դեպքում փաստաբանը պարտավոր է հրաժարվելու մասին ժամանակին տեղեկացնել վստահորդին, մինչև իր հեռանալը բավարար ժամանակ տրամադրել նրան նոր փաստաբան ընտրելու համար, վստահորդին հանձնել գործին կամ վարույթին վերաբերող իր մոտ եղած փաստաթղթերը:

Փաստաբանների պալատի անդամ օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը, ինչպես նաև այլ պետության փաստաբանը իրավունք չունեն իրավաբանական օգնություն ցույց տալու Հայաստանի Հանրապետության պետական կամ ծառայողական գաղտնիքին առնչվող հարցերով:

Փաստաբանն ունի օրենքով սահմանված այլ իրավունքներ և պարտականություններ:

Հոդված 21. Փաստաբանի գործունեության երաշխիքները

1. Փաստաբանն իր գործունեությունն իրականացնելիս անկախ է, ղեկավարվում է միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և օրենքներով, փաստաբանական պալատի կանոնադրությամբ և փաստաբանական վարքագծի կանոնագրքով:

2. Արգելվում է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ֆիզիկական և իրավաբանական անձանց (ներառյալ՝ զանգվածային լրատվության միջոցների) միջամտությունը փաստաբանական գործունեությանը:

3. Փաստաբանը պետք է ապահովվի իր վստահորդի հետ առանձին, անարգել, մեկուսի հաղորդակցվելու, խորհրդատվություն տրամադրելու հնարավորությամբ պետական մարմիններում և հիմնարկներում, տեղական ինքնակառավարման մարմիններում, այդ թվում՝ ~~դատական մարմիններում~~դատարաններում: ~~Պետական և դատական մարմիններն~~ Պետական մարմինները, դատարաններն ու դրանց պաշտոնատար անձինք պարտավոր են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները ապահովելու փաստաբանի՝ վստահորդի հետ առանձին, անարգել և մեկուսի հաղորդակցվելու իրավունքը:

4. Փաստաբանը չի կարող հետապնդվել, պատասխանատվության ~~և բերման ենթարկվել~~ենթարկվել, ձերբակալվել, կալանավորվել կամ ենթարկվել իրավունքների այլ սահմանափակման իր մասնագիտական պարտականությունների կատարման կապակցությամբ, ներառյալ՝ վարույթն իրականացնող և այլ մարմիններում հայտնած կարծիքի կամ դիրքորոշման համար:

5. Փաստաբանը չպետք է նույնացվի իր վստահորդի հետ՝ ելնելով փաստաբանի կողմից իր մասնագիտական պարտականությունների կատարումից:

6. Փաստաբանի բնակարանը, տրանսպորտային միջոցը կամ գրասենյակը, ինչպես նաև փաստաբանական կազմակերպության գրասենյակը չեն կարող խուզարկվել

փաստաբանական գործունեության հետ առնչվող հանգամանքները պարզելու կապակցությամբ: Չի թույլատրվում փաստաբանին խուզարկել իր մասնագիտական պարտականություններն անմիջականորեն կատարելիս:

7. Փաստաբանի մոտ կամ փաստաբանական կազմակերպության գրասենյակում գտնվող իրավաբանական օգնությանը վերաբերող փաստաթղթերը և տեղեկատվական կրիչները (համակարգիչները, տեսաձայնագրող սարքերը, լազերային սկավառակները, տեսաժապավենները և այլն) անձեռնմխելի են, չեն կարող առգրավվել (վերցվել) և չեն կարող որպես ապացույց օգտագործվել:

8. Արգելվում է փաստաբանին որպես վկա հարցաքննել այն հանգամանքների վերաբերյալ, որոնք նրան հայտնի են դարձել իրավաբանական օգնություն ցույց տալու կամ իրեն դիմելու կապակցությամբ: Սույն մասի իմաստով փաստաբանի կարգավիճակին է հավասարեցվում նաև փաստաբանի մոտ աշխատող ոչ փաստաբան յուրաքանչյուր անձ:

9. Փաստաբանին չի կարելի արգելել ծանոթանալու դատարանում գտնվող գործի բոլոր այն նյութերին, որոնք առնչվում են իր վստահորդի հետ, ինչպես նաև դրանցից կատարել ցանկացած ծավալի դուրսգրումներ և պատճենահանումներ, բացառությամբ պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների:

Հոդված 23. Փաստաբանի օգնականը

1. Փաստաբանն իրավունք ունի ունենալու օգնականներ: Փաստաբանի օգնական կարող է լինել միայն բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող անձը: Փաստաբանի օգնական չի կարող լինել սույն օրենքի 33-րդ հոդվածում նշված անձը:

2. Փաստաբանի օգնականը իր կարգավիճակը ձեռք է բերում պարզեցված կարգով փաստաբանների պալատի խորհրդի կողմից արտոնագրվելու միջոցով՝ փաստաբանների պալատի խորհրդի սահմանած կարգով:

3. Սույն օրենքի իմաստով փաստաբանի օգնականի կարգավիճակը հավասարեցվում է փաստաբանի կարգավիճակին, որը օգտվում է փաստաբանի բոլոր իրավունքներից հետևյալ բացառություններով.

1) փաստաբանի օգնականն իրավունք չունի մասնակցելու ~~դատարանում կամ մինչդատական վարույթում քննչական կամ դատավարական~~ նախաքննության ընթացքում կամ դատարանում քննչական կամ այլ վարութային գործողություններին՝ առանց իր ղեկավար փաստաբանի.

2) փաստաբանի օգնականն իրավունք չունի ստորագրելու և ներկայացնելու հայցադիմումներ, միջնորդություններ, առարկություններ, հայտարարություններ, պատասխաններ, բացարկներ, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքներ, ինչպես նաև հարցեր տալու քննչական կամ այլ դատավարական գործողություններին մասնակցելիս.

3) փաստաբանի օգնականն իրավունք չունի մասնակցելու փաստաբանների պալատի ընդհանուր ժողովին, այդ թվում՝ հեռակա կարգով անցկացվող ընդհանուր

ժողովին, ընտրելու և ընտրվելու պալատի մարմիններում և պալատի նախագահ, մասնակցելու պալատի կանոնադրության և վարքագծի կանոնագրքի քվեարկությանը:

4. Փաստաբանի օգնականի իրավունքների սահմանափակման այլ դեպքեր կարող են նախատեսվել նաև փաստաբանների վարքագծի կանոնագրքով:

5. Փաստաբանի օգնականը կրում է բոլոր պարտականությունները, որոնք սույն օրենքով վերապահված են փաստաբանին, բացառությամբ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականության:

6. Փաստաբանական պալատի կանոնադրությամբ կարող են նախատեսվել փաստաբանի օգնականի պարտականությունների սահմանափակման այլ դեպքեր:

7. Փաստաբանի օգնականը փաստաբանի վարքագծի կանոնագրքի կանոնների պահանջները խախտելու դեպքում ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի 6-րդ գլխով նախատեսված կարգով:

8. Փաստաբանի օգնականի արտոնագրի դադարեցումը կամ կասեցումը իրականացվում է սույն օրենքի 36-րդ և 38-րդ հոդվածներով նախատեսված կարգով և դեպքերում:

9. Փաստաբանի օգնականն իր ինքնությունը հաստատում է փաստաբանի օգնականի վկայականով, որի ձևը և տրամադրման կարգը հաստատում է փաստաբանների պալատի խորհուրդը:

Հոդված 39. Փաստաբանին պատասխանատվության ենթարկելու հիմքերը

1. Փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, իսկ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջները խախտելու համար՝ կարգապահական և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված պատասխանատվության:

2. ~~Փաստաբանի մասնակցությամբ քրեական, վարչական կամ քաղաքացիական գործով ի վնաս փաստաբանի վստահորդի ընդունված դատական ակտն ինքնին չի առաջացնում փաստաբանի կարգապահական պատասխանատվություն:~~

Ի վնաս փաստաբանի վստահորդի ընդունված դատական ակտն ինքնին չի առաջացնում փաստաբանի կարգապահական պատասխանատվություն

Հոդված 41. Հանրային պաշտպանությունը

1. Հանրային պաշտպանություն է համարվում սույն հոդվածով նախատեսված դեպքերում տրամադրվող անվճար իրավաբանական օգնությունը:

2. Անվճար իրավաբանական օգնությունը ներառում է՝

1) խորհրդատվությունը՝ հայցադիմումների, դիմումների, բողոքների և այլ իրավաբանական բնույթի դատավարական փաստաթղթերի կազմում, ներառյալ՝ իրավաբանական տեղեկատվության տրամադրում.

2) ներկայացուցչությունը կամ պաշտպանությունը՝ քրեական վարույթներով, քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով:

3. Սույն հոդվածի իմաստով ներկայացուցչությունը կամ պաշտպանությունն իրականացվում է քրեական ~~գործով մինչդատական վարույթում~~վարույթներով նախաքննության ընթացքում, Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանում:

4. Քրեական ~~գործերով վարույթն~~ վարույթն իրականացնող մարմինը անվճար իրավաբանական օգնությունն ապահովում է հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում, կամ եթե դա է պահանջում արդարադատության շահը:

5. Հանրային պաշտպանի գրասենյակը, բացառությամբ քրեական ~~գործով կասկածյալին~~ վարույթի շրջանակներում ձերբակալված անձին կամ մեղադրյալին իրավաբանական օգնություն տրամադրելու, ինչպես նաև սույն հոդվածի 6-րդ մասում նշված դեպքերի, սույն հոդվածով նախատեսված անվճար իրավաբանական օգնությունը տրամադրում է հետևյալ անձանց՝

1) օրենքով սահմանված կարգով հաստատված՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապով զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներին.

2) 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամներին.

3) դատապարտյալներին.

4) ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամներին.

5) Հայրենական մեծ պատերազմի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակիցներին.

6) գործազուրկներին.

7) միայնակ բնակվող կենսաթոշակառուներին.

8) առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց.

9) փախստականներին.

10) Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր պաշտպանություն ստացածներին.

11) անվճարունակ այն ֆիզիկական անձանց, որոնք իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ են ներկայացնում: Սույն կետի իմաստով անվճարունակ է համարվում այն ֆիզիկական անձը, որը չունի բավարար եկամուտ, համատեղ բնակվող աշխատող ընտանիքի անդամ, ինչպես նաև բացի անձնական բնակարանից, որպես սեփականություն չունի այլ անշարժ գույք կամ նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող արժեքի փոխադրամիջոց.

12) հոգեբուժական կազմակերպությունում գտնվող հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց.

13) օրենքով սահմանված կարգով մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչված անձանց.

14) Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողներին.

15) խոշտանգումից տուժած անձանց՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածով սահմանված կարգով փոխհատուցում ստանալու նպատակով.

16) «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ընտանիքում բռնության ենթարկված անձանց.

17) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա հարուցված քաղաքացիական գործերով պատասխանողներին:

6. Անվճար իրավաբանական օգնություն ցույց չի կարող տրվել սույն հոդվածի 5-րդ մասում նշված անձանց՝

1) ձեռնարկատիրական բնույթի գործերով (ներառյալ՝ կորպորատիվ վեճերով).

2) նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գույքային (գումարի) պահանջով գործերով, բացառությամբ այն գործերի, որտեղ անձը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ.

3) եթե առկա են դիմող անձի անվճարունակությունը ժխտող փաստական հավաստի տվյալներ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքի իմաստով՝

1) **գույքը** Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ~~103.1-ին հոդվածի 4-րդ մասով~~ 121-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված գույքն է.

2) **փողերի լվացումը** Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ~~190-րդ~~ 296-րդհոդվածով նախատեսված արարքն է.

2.1) **նախորդող հանցագործությունը** հանցագործություն է, որի կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի ստացվել կամ առաջացել է գույքը.

3) **ահաբեկչության ֆինանսավորումը** Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ~~217.1-ին~~ 310-րդ հոդվածով նախատեսված արարքն է.

3.1) **զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորումը** գույքի տրամադրումը կամ հավաքումն է կամ ֆինանսական ծառայությունների մատուցումը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 3~~86-րդ հոդվածով և 387-րդ հոդվածի 2-րդ մասով~~ 153-րդ հոդվածով նախատեսված ~~արարքների~~ արարքի կատարման նպատակով.

4) **հաշվետվություն տրամադրող անձինք են՝**

ա. բանկերը,

բ. վարկային կազմակերպությունները,

գ. արտարժույթի առուվաճառքի գործունեություն իրականացնող անձինք,

դ. դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող անձինք,

ե. «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձինք, բացառությամբ կորպորատիվ ներդրումային ֆոնդերի կառավարիչների՝ ներդրումային ֆոնդերի կառավարման գործունեության մասով,

զ. «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված Կենտրոնական դեպոզիտարիան,

է. ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) ընկերությունները և ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) միջնորդային գործունեություն իրականացնող անձինք,

ը. կորպորատիվ ներդրումային ֆոնդերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված կառավարիչ չունեցող ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդերը,

թ. գրավատները,

ժ. ռիելթորական գործունեություն իրականացնող անձինք,

ժա. նոտարները,

ժբ. փաստաբանները, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերը և իրավաբանական անձինք,

ժգ. անհատ ձեռնարկատեր հաշվապահները և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք,

ժդ. աուդիտորական կազմակերպությունները և աուդիտորները,

ժե. թանկարժեք մետաղների դիլերները,

ժզ. թանկարժեք քարերի դիլերները,

ժէ. արվեստի գործերի դիլերները,

ժը. սակարկությունների կազմակերպիչները,

ժթ. խաղատների, շահումով խաղերի, ներառյալ՝ ինտերնետ շահումով խաղերի, վիճակախաղերի կազմակերպիչները,

ի. հավատարմագրային կառավարման և իրավաբանական անձանց գրանցման ծառայություններ մատուցող անձինք,

իա. վարկային բյուրոները, որոնց նկատմամբ սույն օրենքը տարածվում է միայն 6-8-րդ հոդվածներով սահմանված կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության ներկայացման պարտականության, 9-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված հաշվառման պարտականության և 30-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով սահմանված պատասխանատվության մասերով,

իբ. անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող լիազորված մարմինը, որի նկատմամբ սույն օրենքը տարածվում է միայն 6-8-րդ հոդվածներով սահմանված հաշվետվությունների տրամադրման պարտականության, 9-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված հաշվառման պարտականության և 30-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված պատասխանատվության մասերով,

իգ. իրավաբանական անձանց գրանցող պետական մարմինը (պետական ռեգիստրը), որի նկատմամբ սույն օրենքը տարածվում է միայն 6-8-րդ հոդվածներով սահմանված հաշվետվությունների տրամադրման պարտականության մասով՝ 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերում, ինչպես նաև 9-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով սահմանված պարտականությունների և 30-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված պատասխանատվության մասերով.

5) **ֆինանսական հաստատությունները** սույն մասի 4-րդ կետի «ա»-«թ» ենթակետերով սահմանված հաշվետվություն տրամադրող անձինք են.

6) **ոչ ֆինանսական հաստատությունները** կամ անձինք սույն մասի 4-րդ կետի «ժ»-«ի» ենթակետերով սահմանված հաշվետվություն տրամադրող անձինք են:

Սույն օրենքի 4-րդ, 23-րդ և 25-րդ հոդվածները ոչ ֆինանսական հաստատությունների կամ անձանց նկատմամբ տարածվում են միայն դրանց՝ 10-ից ավելի աշխատակից ունենալու դեպքում.

7) **լիազոր մարմինը** Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն է.

8) **վերահսկող մարմինը** հաշվետվություն տրամադրող անձին լիցենզավորող (նշանակող, որակավորում տվող կամ այլ կերպ գործունեության թույլտվություն տրամադրող) և վերահսկողություն իրականացնող իրավասու մարմինն է.

9) **գործարքը** հաշվետվություն տրամադրող անձի և հաճախորդի կամ լիազորված անձի միջև, ինչպես նաև հաճախորդի կամ լիազորված անձի և այլ անձի միջև գործարքն է, որը կատարվում է հաշվետվություն տրամադրող անձի միջոցով կամ հանդիսանում է հաշվետվություն տրամադրող անձի ուսումնասիրության (դիտարկման) առարկա: Գործարք կարող է համարվել նաև որոշակի գործարքի հիման վրա կամ դրա արդյունքում իրավունքներ և պարտականություններ առաջացնող, փոփոխող կամ դադարեցնող յուրաքանչյուր գործողություն.

9.1) **դրամական փոխանցումը** գործարք է, որը ֆինանսական հաստատության միջոցով կատարվում է փոխանցումը կատարողի անունից՝ նպատակ ունենալով այդ կամ այլ ֆինանսական հաստատությունում որոշակի գումար հասանելի դարձնել փոխանցումն ստացողի համար՝ անկախ փոխանցումը կատարողի և փոխանցումն ստացողի՝ նույն անձը լինելու հանգամանքից.

10) **միանգամյա գործարքը** գործարք է, որի արդյունքում պարբերական ծառայությունների տրամադրման պարտավորություններ չեն առաջանում, և (կամ) որը գործարար հարաբերության հաստատում չի ենթադրում.

11) **փոխկապակցված միանգամյա գործարքները** միևնույն կողմի մասնակցությամբ միատեսակ բնույթի միանգամյա գործարքներն են, որոնք կատարվում են 24 ժամվա ընթացքում.

12) **գործարար հարաբերությունը** հաշվետվություն տրամադրող անձի կողմից հաճախորդին մատուցվող պարբերական ծառայություններն են, որոնք չեն սահմանափակվում մեկ կամ մի քանի միանգամյա գործարքներով: Գործարար հարաբերությունը չի ներառում հաշվետվություն տրամադրող անձի այն գործունեությունը, որի շրջանակներում հաշվետվություն տրամադրող անձը սեփական կարիքների համար իրականացնում է տվյալ տեսակի հաշվետվություն տրամադրող անձանց համար օրենքով սահմանված գործունեությունից տարբեր այլ գործունեություն.

13) **հաճախորդը** հաշվետվություն տրամադրող անձի հետ գործարար հարաբերություն հաստատող կամ այդպիսի հարաբերությունների մեջ գտնվող անձն է, ինչպես նաև այն անձը, որը հաշվետվություն տրամադրող անձին առաջարկում է կատարել կամ կատարում է միանգամյա գործարք.

14) **իրական շահառուն** ֆիզիկական անձ է, որի անունից կամ օգտին հաճախորդն իրականում գործում է, և (կամ) որն իրականում (փաստացի) վերահսկում է հաճախորդին կամ այն անձին, որի անունից կամ օգտին գործարքը կատարվում է, կամ գործարար հարաբերությունը հաստատվում է: Իրավաբանական անձի (բացառությամբ տրաստի կամ օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այլ իրավաբանական կազմավորման) իրական շահառու է համարվում այն ֆիզիկական անձը, որը՝

ա. ուղղակի կամ անուղղակի տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում,

բ. տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով,

գ. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ սույն կետի «ա» և «բ» ենթակետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ.

15) **լիազորված անձը** հաճախորդի հանձնարարությամբ և հաճախորդի անունից գործարքի կատարման կամ գործարար հարաբերությունում որոշակի իրավաբանական կամ փաստացի գործողությունների իրականացման լիազորություն ունեցող, այդ թվում՝ լիազորագրով կամ օրենքով սահմանված այլ հիմքով հաճախորդի կողմից տրված լիազորությունների հիման վրա ներկայացուցչություն իրականացնող անձն է.

16) **իրավաբանական անձը** Հայաստանի Հանրապետության և (կամ) օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպությունը

կամ հիմնարկն է, ինչպես նաև տրաստը կամ օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող իրավաբանական կազմավորումը.

16.1) **տրաստը** օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այլ իրավաբանական կազմավորում է, որտեղ տրաստի կառավարիչը ֆիդուցիար պարտավորությունների հիման վրա կատարում է տրաստի հիմնադրի կողմից սեփականության իրավունքով իրեն փոխանցված գույքի հետ կապված գործարքներ՝ ի շահ տրաստի շահառուի.

17) **հաճախորդի գործարար բնութագիրը** հաճախորդի գործունեության բնույթի, ազդեցության ու նշանակության, գործարար հարաբերությունների և միանգամյա գործարքների առկա ու ակնկալվող շարժի, ծավալների և ոլորտների, լիազորված անձանց և իրական շահառուների առկայության, ինքնության ու փոխկապակցվածության բնույթի, ինչպես նաև հաճախորդի գործունեությանը վերաբերող այլ փաստերի և հանգամանքների վերաբերյալ հաշվետվություն տրամադրող անձի տեղեկությունների (պատկերացումների) ամբողջությունն է.

18) **գործարքի մյուս կողմը** հաճախորդի կողմից իրականացվող գործարքի այլ մասնակից է, որը տրամադրում (փոխանցում) կամ որին հասցեագրվում է գործարքից բխող գույքը.

19) **հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունը** հաշվետվություն տրամադրող անձի կողմից հաճախորդի վերաբերյալ պատշաճ պատկերացում կազմելու նպատակով նրա ինքնության և գործարար բնութագրի վերաբերյալ ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառմամբ տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր) ձեռք բերելու ու վերլուծության գործընթաց է, որը ներառում է՝

ա. հաճախորդի (այդ թվում՝ լիազորված անձի և իրական շահառուի) նույնականացումը և ինքնության ստուգումը,

բ. գործարքի կամ գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի պարզումը,

գ. գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրությունը.

20) **ռիսկը** փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման վտանգավորության և դրա հավանականության մասին վկայող հանգամանք է, որը կարող է բնութագրվել ըստ երկրների կամ աշխարհագրական տեղակայման, հաճախորդների տեսակի, գործարքների կամ գործարար հարաբերությունների տեսակի, ծառայությունների տեսակի կամ այլ չափանիշների.

21) **բարձր ռիսկի չափանիշը** սույն օրենքով, լիազոր մարմնի իրավական ակտերով, ինչպես նաև հաշվետվություն տրամադրող անձի ներքին իրավական ակտերով սահմանված այնպիսի չափանիշ է, որը վկայում է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման բարձր հավանականության մասին, այդ թվում՝ քաղաքական ազդեցություն ունեցող անձ հանդիսացող հնարավոր կամ առկա հաճախորդները կամ իրական շահառուները, կյանքի ապահովագրության վկայագրերի շահառուները, անձինք (ներառյալ՝ ֆինանսական հաստատությունները), որոնք գտնվում կամ բնակվում են չհամապատասխանող երկրներում կամ տարածքներում կամ այդպիսի երկրներից կամ

տարածքներից են, բոլոր բարդ կամ անսովոր մեծ գումարով գործարքները, ինչպես նաև անսովոր պայմաններով գործարքները կամ գործարար հարաբերությունները, որոնց տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներն ակնհայտ չեն: Ընդ որում, գործարքում կամ գործարար հարաբերությունում բարձր ռիսկի չափանիշի առկայությունը լիազոր մարմնի նախատեսած դեպքերում կարող է բնորոշվել սահմանված չափանիշների համակցությամբ.

22) **հաճախորդի հավելյալ ուսումնասիրությունը** հաշվետվություն տրամադրող անձի կողմից հաճախորդի պատշաճ ուսումնասիրության գործընթացի ընդլայնված կիրառումն է, որի դեպքում, ի լրումն հաճախորդի պատշաճ ուսումնասիրությամբ սահմանված գործողությունների, անհրաժեշտ է նաև առնվազն՝

ա. ստանալ ավագ ղեկավարության հավանությունը՝ հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելուց առաջ, գործարար հարաբերությունը շարունակելու համար, ինչպես նաև այն դեպքերում, երբ հետագայում պարզվում է, որ հաճախորդը կամ իրական շահառուն բնութագրվում է բարձր ռիսկի չափանիշով, կամ գործարքը կամ գործարար հարաբերությունը ներառում են այդպիսի չափանիշ,

բ. ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ հաճախորդի, ինչպես նաև քաղաքական ազդեցություն ունեցող անձ հանդիսացող իրական շահառուի եկամուտների և ունեցվածքի աղբյուրը պարզելու համար,

գ. հնարավորին չափ մանրամասն ուսումնասիրել գործարքի կամ գործարար հարաբերության նախապայմանները և նպատակը,

դ. քաղաքական ազդեցություն ունեցող անձի դեպքում իրականացնել ընթացիկ հավելյալ դիտարկում.

23) **ցածր ռիսկի չափանիշը** սույն օրենքով կամ լիազոր մարմնի իրավական ակտերով սահմանված այնպիսի չափանիշ է, որը վկայում է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման ցածր հավանականության մասին, այդ թվում՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի տեսանկյունից արդյունավետորեն վերահսկվող ֆինանսական հաստատությունները, պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, պետական ոչ առևտրային կազմակերպությունները, համայնքային կառավարչական հիմնարկները, բացառությամբ չհամապատասխանող երկրներում կամ տարածքներում գտնվող մարմինների կամ կազմակերպությունների: Ընդ որում, գործարքում կամ գործարար հարաբերությունում ցածր ռիսկի չափանիշի առկայությունը լիազոր մարմնի նախատեսած դեպքերում կարող է բնորոշվել սահմանված չափանիշների համակցությամբ.

24) **հաճախորդի պարզեցված ուսումնասիրությունը** հաշվետվություն տրամադրող անձի կողմից հաճախորդի պատշաճ ուսումնասիրության գործընթացի սահմանափակ կիրառումն է, որի դեպքում նույնականացում և ինքնության ստուգում իրականացնելիս հավաքվում են հետևյալ տեղեկությունները՝

ա. ֆիզիկական անձի համար՝ անունը, ազգանունը և անձը հաստատող փաստաթղթի տվյալները,

բ. իրավաբանական անձի համար՝ անվանումը և անհատականացման համարը (պետական գրանցման, հաշվառման համարը և այլն),

գ. պետական մարմնի և տեղական ինքնակառավարման մարմնի համար՝ լրիվ պաշտոնական անվանումը.

25) **քաղաքական ազդեցություն ունեցող անձը** պետական, քաղաքական կամ հանրային բնույթի, ինչպես նաև միջազգային կազմակերպությունում նշանակալից գործառույթներ իրականացրած կամ իրականացնող անձն է (այդ թվում՝ նրա ընտանիքի անդամը կամ նրա հետ սերտորեն փոխկապակցված անձը): Ընդ որում, քաղաքական ազդեցություն ունեցող անձանց շրջանակը չի ընդգրկում միջին և ցածր դասի գործառույթներ իրականացնող անձանց: Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք են մասնավորապես՝

ա. պետության ղեկավարները, կառավարության ղեկավարները, նախարարները և նախարարի տեղակալները,

բ. խորհրդարանի անդամները,

գ. բարձրագույն ատյանի դատարանի, սահմանադրական դատարանի կամ այլ բարձր դատական ատյանների դատավորները, անդամները, որոնց որոշումները բողոքարկման ենթակա չեն, բացառությամբ առանձնահատուկ հանգամանքներով պայմանավորված բողոքարկման դեպքերի,

դ. կենտրոնական բանկի նախագահը, նրա տեղակալները և խորհրդի անդամները,

ե. դեսպանները, գործերի հավատարմատարները և զինված ուժերի բարձրաստիճան սպաները,

զ. քաղաքական կուսակցության պաշտոնատար անձինք,

է. պետական սեփականություն հանդիսացող կազմակերպության վարչական, կառավարման կամ վերահսկողական մարմինների անդամները,

ը. տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարները,

թ. միջազգային կազմակերպության ղեկավարները, ղեկավարի տեղակալները, խորհրդի անդամները կամ կառավարչական կամ վերահսկողական այլ համանման գործառույթներ իրականացնող մարմինների անդամները.

25.1) **միջազգային կազմակերպությունը** անդամ երկրների միջև միջազգային պայմանագրի կարգավիճակ ունեցող պաշտոնական քաղաքական համաձայնության հիման վրա ստեղծված կազմակերպություն է, որն իր գտնվելու վայրի երկրում ռեզիդենտ կառուցվածքային միավոր չի համարվում.

25.2) **ընտանիքի անդամը** «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված անձն է.

26) **չհամապատասխանող երկիրը կամ տարածքը** լիազոր մարմնի հրապարակած ցանկերին համապատասխան՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային պահանջները չկիրառող կամ ոչ պատշաճ կիրառող արտասահմանյան երկիրը կամ տարածքն է.

27) **կենսական շահերի կենտրոնը** այն վայրն է, որտեղ կենտրոնացած են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Ընտանեկան կամ տնտեսական շահը կարող է դրսևորվել այն վայրում, որտեղ գտնվում է անձի բնակելի տունը (բնակարանը), որտեղ բնակվում է անձը և (կամ) նրա ընտանիքը, որտեղ գտնվում է նրա (ընտանիքի)

անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը կամ հիմնական տնտեսական (մասնագիտական) գործունեության իրականացման վայրը.

28) **ավագ ղեկավարությունը** հաշվետվություն տրամադրող անձի այն մարմինը կամ աշխատակիցն է, որն իրավասու է հաշվետվություն տրամադրող անձի անունից փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման կանխարգելման հարցերով որոշումներ կայացնելու և գործողություններ կատարելու.

29) **ներքին դիտարկումների մարմինը** սույն օրենքով և լիազոր մարմնի իրավական ակտերով սահմանված՝ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման կանխարգելման գործառույթներ իրականացնող հաշվետվություն տրամադրող անձի ստորաբաժանումը կամ աշխատակիցն է, բացառությամբ լիազոր մարմնի սահմանած ստորաբաժանումների կամ աշխատակիցների, ինչպես նաև հաշվետվություն տրամադրող այն անձը, որն իր գործառույթներն իրականացնում է միանձնյա: Լիազոր մարմնի սահմանած դեպքերում և կարգով հաշվետվություն տրամադրող անձի ներքին դիտարկումների մարմնի գործառույթները կարող են վերապահվել մասնագիտացված գործունեություն իրականացնող անձի.

30) **կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը** այն գործարքը կամ գործարար հարաբերությունն է, այդ թվում՝ գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման փորձը, որի դեպքում կասկածվում է կամ բավարար հիմքեր կան կասկածելու, որ գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով կամ կապված է ահաբեկչության, ահաբեկչական գործողությունների, ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների հետ կամ օգտագործվել է կամ առկա է մտադրություն այն օգտագործելու ահաբեկչության նպատակով կամ ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների կողմից.

31) **կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշը** լիազոր մարմնի իրավական ակտերով, ինչպես նաև հաշվետվություն տրամադրող անձի ներքին իրավական ակտերով սահմանված՝ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հնարավորության մասին վկայող իրավիճակը կամ ազդակն է.

32) **տիպաբանությունը** լիազոր մարմնի իրավական ակտերով, ինչպես նաև հաշվետվություն տրամադրող անձի ներքին իրավական ակտերով սահմանված՝ փողերի լվացմանը կամ ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված գործողությունների և (կամ) քայլերի տրամաբանությունն ու հաջորդականությունը նկարագրող հնարավոր սխեմա է.

33) **ահաբեկչության հետ կապված անձը** ցանկացած անհատ ահաբեկիչ, ներառյալ՝ ահաբեկչության կամ ահաբեկչության փորձի մեջ կասկածվող, մեղադրվող կամ դրանց համար դատապարտված անձ կամ ահաբեկչական կազմակերպություն է, նրանց հետ փոխկապակցված անձ, նրանց կողմից կամ նրանց անունից կամ նրանց ցուցումների ներքո գործող կամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն նրանց պատկանող կամ նրանց կողմից կառավարվող այլ անձը, որը ներառվել է Միավորված ազգերի

կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն կամ լիազոր մարմնի հրապարակած ցանկերում.

33.1) **զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձը** ցանկացած անձ է, որը ներառվել է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի՝ զանգվածային ոչնչացման զենքի տարածման և (կամ) դրա ֆինանսավորման համար թիրախային ֆինանսական պատժամիջոցներ սահմանող բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ցանկերում.

34) **գործարքի կամ գործարար հարաբերության կասեցումը** կասկածելի գործարքի և (կամ) գործարար հարաբերության առարկա գույքի փաստացի և իրավաբանական շարժի ժամկետային արգելքն է.

35) **գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժումը** գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման համար նախատեսված գործողություններ չիրականացնելն է.

36) **գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցումը** գործարքի կատարման կամ գործարար հարաբերության իրականացման ընդհատումն է.

37) **գույքի սառեցումը** ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող գույքի փաստացի և (կամ) իրավաբանական շարժի անորոշ ժամկետով արգելքն է, այդ թվում՝ այդ գույքի ուղղակի կամ անուղղակի տիրապետման, օգտագործման կամ տնօրինման արգելքը, ինչպես նաև որևէ գործարար հարաբերության (ներառյալ՝ ֆինանսական ծառայությունների) կամ միանգամյա գործարքների հաստատման կամ իրականացման արգելքը.

38) **արժեթուղթը** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված արժեթղթերը, այդ թվում՝ պարտատոմսը, չեկը (չեկային գրքույկը), մուրհակը (վճարագիրը), բաժնետոմսը, կոնոսամենտը, բանկային վկայագիրը (բանկային գրքույկը, բանկային սերտիֆիկատը), պահեստային վկայագիրն է և այլ օրենքներով սահմանված արժեթղթերը.

39) **կեղծ («շել») բանկը** բանկն է, որը հիմնադրված, գրանցված, լիցենզավորված կամ այլ կերպ ինկորպորացված լինելով որևէ երկրում, իրականում դրա տարածքում չի կառավարվում կամ չունի փաստացի գտնվելու կամ գործունեության վայր, և որը փոխկապակցված չէ արդյունավետ համախմբված վերահսկողության ենթակա, կարգավորվող գործունեություն իրականացնող ֆինանսական հաստատությունների որևէ խմբի հետ.

40) **տարանցիկ հաշիվը** ֆինանսական հաստատությունում բացված այն թղթակցային հաշիվն է, որն ուղղակիորեն օգտագործում է թղթակից ֆինանսական հաստատության հաճախորդը՝ իր անունից գործարքներ կատարելու համար.

41) **ֆինանսական խումբը** խումբ է, որի կազմում առկա է այնպիսի իրավաբանական անձ, որը ղեկավարում և համակարգում է խմբի անդամ՝ սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա», «ե», «զ» կամ «է» ենթակետերով նախատեսված գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց (այդ թվում՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի՝ ամբողջ խմբի համար կիրառելի

քաղաքականություն և ընթացակարգեր իրականացնող մասնաճյուղերի և (կամ) ներկայացուցչությունների) գործառույթները՝ խմբի մակարդակով արդյունավետ, համախմբված վերահսկողություն իրականացնելու նպատակով:

42) **Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ցանկերը** Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված՝ ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ցանկերն են:

Հոդված 10. Լիազոր մարմինը

1. Լիազոր մարմնի իրավասություններն են՝

1) հաշվետվություն տրամադրող անձանցից հաշվետվությունների և այլ տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի), պետական մարմիններից տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) ստացումը.

2) ստացված հաշվետվությունների և տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) վերլուծությունը.

3) ~~քրեական հետապնդում իրականացնող մարմիններին~~ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին, վարույթի հանրային մասնակիցներին ծանուցման տրամադրումը՝ սույն օրենքի 13-րդ հոդվածով նախատեսված դեպքերում.

4) հաշվետվություն տրամադրող անձանցից սույն օրենքի նպատակներից բխող այլ տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր), այդ թվում՝ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող տեղեկություններ պահանջելը և ստանալը, բացառությամբ սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի.

5) պետական, այդ թվում՝ վերահսկող և ~~քրեական հետապնդում իրականացնող մարմիններից~~ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններից, վարույթի հանրային մասնակիցներից սույն օրենքի նպատակներից բխող տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր), այդ թվում՝ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող տեղեկություններ պահանջելը.

6) հաշվետվություն տրամադրող անձանց կողմից սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական ակտերով սահմանված պարտականությունների պատշաճ կատարմանն ուղղված հանձնարարականներ տալը (ոչ ֆինանսական հաստատությունների կամ անձանց վերահսկող մարմինների առկայության դեպքում՝ այդ մարմինների միջոցով), այդ թվում՝ իր տրամադրած նույնականացման տվյալների, կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշների կամ տիպաբանությունների հիման վրա գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, կասեցնելու, գործարքի կատարումը կամ գործարար հարաբերության հաստատումը մերժելու, դադարեցնելու կամ հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն իրականացնելու հանձնարարականներ տալը.

7) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում սույն օրենքով սահմանված իրավական ակտերի ընդունումը, այդ թվում՝ իրավական ակտերի կիրառության ընթացակարգերը պարզաբանող ուղեցույցների հաստատումը, ներառյալ՝ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշների կամ տիպաբանությունների վերաբերյալ.

8) սույն օրենքով սահմանված կարգով և դեպքերում հաշվետվություն տրամադրող անձանց նկատմամբ վերահսկողություն իրականացնելը, այլ վերահսկող մարմինների կողմից իրականացվող վերահսկողությանն օժանդակելը, այդ թվում՝ պատասխանատվություն կիրառելու միջնորդություն ներկայացնելը.

9) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում ֆինանսական հաստատությունների կողմից ներքին աուդիտի իրականացման դեպքերն ու հաճախականությունը սահմանելը, արտաքին աուդիտի իրականացում պահանջելը.

10) փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման մեջ ներգրավվածության համար իրավաբանական անձանց, ինչպես նաև հաշվետվություն տրամադրող այն անձանց նկատմամբ, որոնք չունեն օրենքով սահմանված վերահսկող մարմիններ, կամ որոնց մասով բացակայում է վերահսկող մարմնին փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում վերապահված գործառույթների իրականացման իրավական կարգավորումը, սույն օրենքով և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված պատասխանատվության միջոցներ կիրառելը.

11) կասկածելի գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելը, ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց գույքը սառեցնելը.

12) սույն օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ահաբեկչության հետ կապված անձանց ցանկեր կազմելը, վերանայելը և հրապարակելը.

13) հաշվետվություն տրամադրող անձանց տրամադրած հաշվետվությունների վերաբերյալ լիազոր մարմնի սահմանված կարգով հաշվետվություն տրամադրող անձանց պարբերաբար տեղեկություններ տրամադրելը (հետադարձ կապ ապահովելը).

14) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հարցերով ուսուցում իրականացնելը, ինչպես նաև սույն օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա ֆինանսական հաստատությունների ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցներին որակավորում տալը.

15) իր գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվություններ հրապարակելը.

16) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին հանրային իրազեկում իրականացնելը.

17) սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված կարգով միջազգային կառույցների և ֆինանսական հետախուզության օտարերկրյա մարմինների հետ համագործակցության համաձայնագրեր կնքելը, սույն օրենքի նպատակներից բխող տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր), այդ թվում՝ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող տեղեկություններ փոխանակելը.

18) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում գործող միջազգային կառույցների և (կամ) արտասահմանյան երկրների հրապարակած տվյալների հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի բնագավառում լիազորված մարմնի հետ համաձայնեցնելով՝ չհամապատասխանող երկրների կամ տարածքների ցանկերը հրապարակելը.

19) հաշվետվություն տրամադրող անձանց հանձնարարական տալը՝ ձեռնարկելու համապատասխան միջոցառումներ այն անձանց (ներառյալ՝ ֆինանսական հաստատությունների) նկատմամբ, որոնք գտնվում կամ բնակվում են չհամապատասխանող երկրներում կամ տարածքներում կամ չհամապատասխանող երկրներից կամ տարածքներից են.

20) սույն օրենքով սահմանված այլ իրավասություններ:

2. Սույն օրենքի նպատակներից ելնելով՝ լիազոր մարմնում գործում է պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանում՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոն, որը լիազոր մարմնի կառավարման բարձրագույն մարմնի հաստատած կանոնադրության և այլ իրավական ակտերի հիման վրա իրականացնում է լիազոր մարմնի համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված իրավասությունները, բացառությամբ լիազոր մարմնի կառավարման բարձրագույն մարմնին և բարձրագույն պաշտոնատար անձին վերապահված իրավասությունների:

3. Լիազոր մարմնի կառավարման բարձրագույն մարմինը հաստատում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կանոնադրությունը, գործունեության ծրագիրը, բյուջեն, իրականացնում է սույն հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանված իրավասությունը:

4. Սույն հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված իրավասությունն իրականացվում է լիազոր մարմնի կառավարման բարձրագույն մարմնի և բարձրագույն պաշտոնատար անձի կողմից՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ 10-րդ կետով սահմանված իրավասությունը, ինչպես նաև 11-րդ կետով սահմանված՝ ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց գույքը սառեցնելու իրավասությունը՝ կառավարման բարձրագույն մարմնի կողմից:

5. Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարին և աշխատակիցներին աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է լիազոր մարմնի կառավարման բարձրագույն մարմինը:

6. Ֆինանսական դիտարկումների կենտրոնը լիազոր մարմնի կառավարման բարձրագույն մարմնի սահմանած պարբերականությամբ և կարգով այդ մարմին ներկայացնում է հաշվետվություններ իր գործունեության վերաբերյալ:

7. Ֆինանսական դիտարկումների կենտրոնը պետք է ապահովի սույն օրենքով սահմանված՝ ստացվող, վերլուծվող և տրամադրվող տեղեկությունների համար անվտանգ պահպանության անհրաժեշտ պայմաններ: Այդ տեղեկությունները կարող են հասանելի լինել միայն օրենքով սահմանված կարգով իրավասու մարմինների կամ անձանց համար:

8. Ֆինանսական դիտարկումների կենտրոնի այն աշխատակիցները, որոնց հասանելի են ստացվող, վերլուծվող և տրամադրվող տեղեկությունները, օրենքով և լիազոր մարմնի իրավական ակտերով սահմանված կարգով պահպանում են գաղտնիք հանդիսացող տեղեկություններն իրենց պարտականությունների կատարման ընթացքում և դրանց դադարումից հետո, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում դրա անօրինական հրապարակման համար: Այդպիսի տեղեկությունները կարող են օգտագործվել միայն սույն օրենքի նպատակներով:

Հոդված 12. Տեղեկությունների պաշտպանությունը

1. Լիազոր մարմնին արգելվում է իր կողմից ստացվող, վերլուծվող և տրամադրվող ցանկացած տեղեկության, այդ թվում՝ լիազոր մարմնին կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն կամ այլ տվյալներ տրամադրած և (կամ) դրանց տրամադրմանը մասնակցած կամ լիազոր մարմնի կողմից ~~քրեական հետապնդում իրականացնող մարմիններին~~ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին, վարույթի հանրային մասնակիցներին ծանուցման տրամադրման մեջ ներգրավված անձի վերաբերյալ տեղեկությունների հրապարակումը՝ դրանք բանավոր կամ գրավոր ձևով զանգվածային լրատվության միջոցներով կամ այլ կերպ այլ անձանց հայտնի դարձնելը, այլ անձանց նման տեղեկություններ հայթայթելու հնարավորություն ուղղակիորեն կամ անուղղակի ընձեռելը, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

2. Սույն օրենքի նպատակներից բխող՝ լիազոր մարմնի կողմից ստացվող և պահպանվող տեղեկատվությունը, ինչպես նաև լիազոր մարմնին հասանելի այլ տեղեկությունները չեն կարող տրամադրվել կամ օգտագործվել փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հետ չառնչվող որևէ նպատակի համար: Սույն օրենքով նախատեսված դեպքերում լիազոր մարմնի կողմից ~~քրեական հետապնդման մարմիններին~~ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին, վարույթի հանրային մասնակիցներին տրամադրված ծանուցումները և այլ տեղեկությունները հանդիսանում են օպերատիվ տեղեկություններ, որոնք կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ սահմանված կարգով և չեն կարող տրամադրվել երրորդ անձի, բացառությամբ քրեական հետապնդման մարմինների:

Հոդված 13. Լիազոր մարմնի և այլ մարմինների փոխհարաբերությունները

1. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի արդյունավետ իրականացման նպատակով լիազոր մարմինը սույն օրենքով նախատեսված կարգով և սահմաններում համագործակցում է այլ մարմինների, ներառյալ՝ վերահսկող ու ~~քրեական հետապնդում իրականացնող մարմինների~~ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների, վարույթի հանրային մասնակիցների հետ՝ կնքելով երկկողմ համաձայնագրեր կամ առանց դրանց:

2. Լիազոր մարմինը, սույն օրենքի 29-րդ հոդվածով սահմանված կարգով, համագործակցում է վերահսկող մարմինների հետ՝ սույն օրենքի և դրա հիման վրա ընդունված իրավական ակտերի պահանջներին հաշվետվություն տրամադրող անձանց համապատասխանության ապահովման նպատակով:

3. Լիազոր մարմինը ~~քրեական հետապնդում իրականացնող մարմիններին~~ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների, վարույթի հանրային մասնակիցներին տրամադրում է ծանուցում, եթե հաշվետվություն տրամադրող անձանցից սույն օրենքով սահմանված կարգով ստացված հաշվետվության կամ այլ տեղեկությունների հիման վրա կատարված վերլուծության արդյունքում գալիս է եզրակացության, որ առկա են փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված հիմնավոր կասկածներ կամ նախորդող հանցագործության այնպիսի հիմնավոր կասկածներ, որոնք կարող են հանգեցնել փողերի լվացման: Ծանուցման հետ միաժամանակ կամ հետագայում, ի լրումն ծանուցման, լիազոր մարմինը կարող է սեփական նախաձեռնությամբ ~~քրեական հետապնդում իրականացնող մարմիններ~~ վարույթի հանրային մասնակիցներին ներկայացնել նաև ծանուցման մեջ նշված հանգամանքներին առնչվող այլ տեղեկություններ: Ծանուցումը կամ ի լրումն ծանուցման տրամադրված տեղեկությունները կարող են պարունակել օրենքով սահմանված գաղտնիք հանդիսացող տեղեկություններ:

4. ~~Քրեական հետապնդման մարմինների~~ Վարույթի հանրային մասնակիցների հարցման հիման վրա լիազոր մարմինը տրամադրում է իր տրամադրության տակ առկա, այդ թվում՝ օրենքով սահմանված գաղտնիք հանդիսացող տեղեկություններ, եթե հարցումը պարունակում է բավարար հիմնավորում փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածի կամ դեպքի վերաբերյալ կամ նախորդող հանցագործության կասկածի կամ դեպքի վերաբերյալ, որը լիազոր մարմնի կարծիքով կարող է հանգեցնել փողերի լվացման: Այդպիսի տեղեկությունները տրամադրվում են 10-օրյա ժամկետում, եթե հարցման մեջ այլ ժամկետ նշված չէ, կամ լիազոր մարմնի հիմնավորված կարծիքով անհրաժեշտ չէ ավելի երկար ժամկետ հարցմանը պատասխանելու համար:

5. ~~Սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերով սահմանված տեղեկությունները պահանջելու դեպքում հաշվետվություն տրամադրող անձինք, պետական, այդ թվում՝ վերահսկող և քրեական հետապնդում իրականացնող մարմինները պետք է այդ տեղեկությունները լիազոր մարմնին տրամադրեն 10-օրյա ժամկետում, եթե հարցման մեջ այլ ժամկետ նշված չէ, կամ պետական մարմնի հիմնավորված կարծիքով անհրաժեշտ չէ ավելի երկար ժամկետ հարցմանը պատասխանելու համար: Քրեական հետապնդում իրականացնող մարմինները~~

~~նախնական քննության գաղտնիք պարունակող տեղեկություններ տրամադրում են, եթե լիազոր մարմնի հարցումը պարունակում է բավարար հիմնավորում փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածի կամ դեպքի վերաբերյալ~~

Սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերով սահմանված տեղեկությունները պահանջելու դեպքում հաշվետվություն տրամադրող անձինք, պետական, այդ թվում՝ վերահսկող և վարույթի հանրային մասնակիցներին պետք է այդ տեղեկությունները լիազոր մարմնին տրամադրեն 10-օրյա ժամկետում, եթե հարցման մեջ այլ ժամկետ նշված չէ, կամ պետական մարմնի հիմնավորված կարծիքով անհրաժեշտ չէ ավելի երկար ժամկետ հարցմանը պատասխանելու համար: Վարույթի հանրային մասնակիցները նախաքննության՝ հրապարակումն արգելված տվյալները տրամադրում են, եթե լիազոր մարմնի հարցումը պարունակում է բավարար հիմնավորում փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածի կամ դեպքի վերաբերյալ:

6. ~~Քրեական հետապնդում իրականացնող մարմինները~~ Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները, վարույթի հանրային մասնակիցները սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ծանուցումների և սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված տեղեկությունների քննարկման, իսկ ~~քրեական գործ հարուցելու~~ քրեական վարույթ նախաձեռնելու դեպքում՝ նաև կատարված նախաքննության արդյունքում ընդունված որոշումների մասին տեղեկացնում են լիազոր մարմնին՝ որոշումն ընդունելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

7. Մաքսային մարմնի կողմից արժութային արժեքների և (կամ) ըստ ներկայացնողի արժեթղթերի՝ մաքսային սահմանով տեղափոխման կասեցման մասին տեղեկանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, լիազոր մարմինը պարտավոր է մաքսային մարմնին տեղեկացնել կասեցման վերացման մասին կամ ծանուցում տրամադրել իրավապահ մարմնին: Ծանուցում տրամադրելու դեպքում լիազոր մարմինը տեղեկություններ է ներկայացնում կասեցված արժութային արժեքների և (կամ) ըստ ներկայացնողի արժեթղթերի՝ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հետ հնարավոր կապը հիմնավորելու վերաբերյալ: Ծանուցում տրամադրելու մասին լիազոր մարմինը անհապաղ տեղեկացնում է մաքսային մարմնին:

8. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում պետական մարմինները պետք է ամփոփեն և լիազոր մարմնի սահմանած կարգով, ձևով և ժամկետներում լիազոր մարմնին տրամադրեն պարբերական վիճակագրություն, որը պետք է ներառի՝

1) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման, ինչպես նաև փողերի լվացմանը նախորդող՝ լիազոր մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության դատախազության հետ համաձայնեցմամբ սահմանված ցանկում ընդգրկված հանցագործությունների հատկանիշներով ~~հարուցված քրեական գործերի~~ նախաձեռնված այն քրեական վարույթների թիվը և նկարագրությունը.

2) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հատկանիշներով ~~հարուցված քրեական գործերի քննության~~ նախաձեռնված քրեական վարույթների

նախաքննության ընթացքում առգրավված կամ կալանքի տակ գտնվող գույքի արժեքը՝ ըստ առանձին գործերի.

3) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հատկանիշներով ~~հարուցված այն քրեական գործերի~~ նախաձեռնված այն քրեական վարույթների թիվը, որոնցով քրեական հետապնդումը դադարեցվել է, ինչպես նաև դադարեցման պատճառները.

4) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հատկանիշներով ~~հարուցված և դատական քննության փուլում գտնվող քրեական գործերի~~ նախաձեռնված և դատաքննության փուլում գտնվող քրեական վարույթների թիվն ու նկարագրությունը.

5) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հատկանիշներով ~~հարուցված քրեական գործերի~~նախաձեռնված քրեական վարույթների, դրանց հետ կապված այլ հանցագործությունների կապակցությամբ կայացված դատավճիռների (մեղադրական և արդարացման) թիվը, նշանակված պատիժները, ինչպես նաև բռնագրավված և բռնագանձված գույքի արժեքը.

6) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ~~քրեական գործերով~~ քրեական վարույթներով միջազգային իրավական օգնության շրջանակներում ստացված և ուղարկված հարցումների վերաբերյալ տեղեկություններ.

7) լիազոր մարմնի կողմից չվերահսկվող հաշվետվություն տրամադրող անձանց նկատմամբ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի՝ օրենսդրությանը համապատասխանության հետ կապված ստուգումների, ինչպես նաև օրենսդրության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերում կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ տեղեկություններ:

Հոդված 22. Տեղեկությունների պահպանումը

1. Հաշվետվություն տրամադրող անձը պետք է պահպանի սույն օրենքով պահանջվող, ներառյալ՝ հաճախորդի պատշաճ ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը)՝ անկախ նրանից, թե գործարքը կամ գործարար հարաբերությունը շարունակվում է, թե դադարեցվել է, այդ թվում՝

1) հաճախորդի նույնականացման տվյալները, այդ թվում՝ հաշվեհամարի և հաշվի շարժի վերաբերյալ տվյալները, ինչպես նաև գործարար թղթակցության տվյալները.

2) ներպետական և միջազգային գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ բոլոր անհրաժեշտ տվյալները (ներառյալ՝ հաճախորդի (և գործարքի մյուս կողմի) անունը, հաշվառման հասցեն (առկայության դեպքում) և բնակության (գտնվելու) վայրը, գործարքի բնույթը, կատարման ժամկետը, գումարը և արժույթը, առկայության դեպքում նաև՝ հաշվի տեսակը և հաշվեհամարը), որոնք բավարար կլինեն տվյալ գործարքի կամ գործարար հարաբերության ամբողջական պատկերը վերականգնելու համար.

3) սույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև կասկածելի չորակված գործարքների կամ գործարար հարաբերությունների դիտարկման ընթացքի (կատարված վերլուծության) և արդյունքների վերաբերյալ տեղեկությունները.

4) սույն օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հնարավոր և առկա ռիսկերի գնահատման արդյունքները.

5) սույն օրենքի 20-րդ հոդվածով նախատեսված տեղեկությունները.

6) սույն օրենքով սահմանված այլ տեղեկություններ:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը) պետք է պահպանվեն գործարար հարաբերության ավարտից կամ գործարքի կատարումից հետո՝ առնվազն 5 տարվա ընթացքում, իսկ օրենքով նախատեսված լինելու դեպքում՝ ավելի երկար ժամկետով:

3. Սույն օրենքով պահանջվող և հաշվետվություն տրամադրող անձի կողմից պահպանվող տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը) պետք է բավարար լինեն լիազոր մարմնի կամ, օրենքով սահմանված դեպքերում, ~~քրեական հետապնդում իրականացնող մարմինների~~ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների, վարույթի հանրային մասնակիցների կողմից հարցվող հաճախորդների, գործարքների կամ գործարար հարաբերությունների վերաբերյալ յուրաքանչյուր դեպքում ամբողջական ու լիարժեք տեղեկությունների տրամադրման համար:

4. Սույն հոդվածով սահմանված տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը) պետք է ժամանակին և օրենքով սահմանված կարգով հասանելի լինեն իրավասու վերահսկող և ~~քրեական հետապնդում իրականացնող մարմինների~~ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների, վարույթի հանրային մասնակիցների, ինչպես նաև աուդիտորների համար:

Հոդված 26. Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության կասեցումը

1. Ֆինանսական հաստատությունը փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածի առկայության դեպքում իրավունք ունի մինչև 5 օրով, իսկ սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված հանձնարարականի ստացման դեպքերում պարտավոր է 5 օրով կասեցնել գործարքը կամ գործարար հարաբերությունը և այդ մասին անմիջապես սույն օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն տրամադրել լիազոր մարմնին:

2. Լիազոր մարմինն իրավասու է գործարքը կամ գործարար հարաբերությունը մինչև 15 օրով կասեցնելու՝ տրամադրված հաշվետվությունների, ֆինանսական հետախուզության օտարերկրյա մարմինների հարցումների, վերահսկող և ~~քրեական~~

~~հետապնդում իրականացնող մարմինների~~ ներկայացրած կամ այլ տեղեկությունների վերլուծությունների հիման վրա: Գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին լիազոր մարմնի որոշումը պետք է կատարվի անմիջապես՝ այն ֆինանսական հաստատության կողմից ստանալու պահից:

3. Այն դեպքում, երբ լիազոր մարմինը սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով կասեցված գործարքի կամ գործարար հարաբերության առնչությամբ ծանուցում է տրամադրում ~~քրեական հետապնդում իրականացնող մարմնին~~ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին, վարույթի հանրային մասնակիցներին, կասեցման ժամկետը համարվում է երկարաձգված ծանուցման տրամադրման պահից 15 օրով, որի մասին լիազոր մարմինը տեղեկացնում է ֆինանսական հաստատությանը: Կասեցման ժամկետը երկարաձգելու հիմնավոր անհրաժեշտության դեպքում ~~քրեական հետապնդում իրականացնող մարմինը~~ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինը, վարույթի հանրային մասնակիցները ~~15 օրվա ընթացքում տեղեկացնում է~~ 15 օրվա ընթացքում տեղեկացնում են լիազոր մարմնին: Կասեցման ժամկետը երկարաձգելու անհրաժեշտության մասին լիազոր մարմնին չտեղեկացնելու դեպքում կասեցումը վերանում է:

3.1. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կասեցման ժամկետը լիազոր մարմնի հիմնավոր կարծիքով երկարաձգելու անհրաժեշտության դեպքում լիազոր մարմինը որոշում է կայացնում կասեցման ժամկետը մինչև 30 օրով երկարաձգելու մասին: Սույն մասում նշված ժամկետում լիազոր մարմնի որոշումը ֆինանսական հաստատությանը չտրամադրվելու դեպքում կասեցման մասին որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Ֆինանսական հաստատության կամ լիազոր մարմնի՝ գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին որոշումը, մինչև կասեցման ժամկետի ավարտը կարող է ուժը կորցրած ճանաչել միայն լիազոր մարմինը՝ իր նախաձեռնությամբ կամ ֆինանսական հաստատության միջնորդությամբ, եթե առկա չէ գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման հետագա անհրաժեշտությունը:

Հոդված 28. Ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց գույքի սառեցումը

1. Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ցանկերում, ինչպես նաև սույն հոդվածի 2-րդ մասում նշված ցանկերում ներառված անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող գույքը անմիջապես և առանց նշված անձանց նախապես տեղեկացնելու ենթակա է սառեցման, այդ թվում՝ մաքսային մարմինների և հաշվետվություն տրամադրող անձանց կողմից: Այն պետական մարմինները կամ անձինք, որոնք ունեն սույն մասով, ինչպես նաև սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված գույքի տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման

սահմանափակման (կալանքի, արգելանքի, սառեցման, կասեցման)՝ օրենքով սահմանված իրավասություն, այդ գույքի հայտնաբերման դեպքում կիրառում են իրենց այդ իրավասությունը՝ օրենքով սահմանված կարգով:

1.1. Ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց կամ ի շահ նրանց ուղղակի կամ անուղղակի կերպով, ամբողջությամբ կամ համատեղ կարգով գույք, տնտեսական ռեսուրսներ կամ ֆինանսական կամ այլ հարակից ծառայություններ հասանելի դարձնելն արգելվում է:

2. Լիազոր մարմինն իր նախաձեռնությամբ կամ օտարերկրյա իրավասու մարմինների խնդրանքի հիման վրա կազմում, վերանայում և հրապարակում է ահաբեկչության հետ կապված անձանց ցանկեր: Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի հրապարակում է համարվում լիազոր մարմնի ինտերնետային կայքում դրանց տեղադրումը: Սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված՝ ահաբեկչության հետ կապված անձանց հասկացությանը համապատասխանող անձանց վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում պետական, այդ թվում՝ վերահսկող, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները և ~~քրեական հետապնդում իրականացնող մարմինները~~վարույթի հանրային մասնակիցները, ինչպես նաև հաշվետվություն տրամադրող անձինք լիազոր մարմնին հայտնում են այդ մասին՝ սույն մասով սահմանված ցանկերում ներառելու համար:

3. Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով հրապարակված ցանկերում ներառված ցանկացած անձ կարող է դիմել Միավորված ազգերի կազմակերպությանը՝ իրեն ցանկերից հանելու խնդրանքով: Լիազոր մարմնի հրապարակած՝ ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերում ներառված ցանկացած անձ կարող է դիմել լիազոր մարմնին՝ իրեն ցանկից հանելու խնդրանքով, որը քննարկվում է լիազոր մարմնի սահմանած կարգով:

4. Սառեցումը վերացվում է միայն լիազոր մարմինը՝ գույքը սխալմամբ սառեցվելու, ինչպես նաև ~~քրեական հետապնդում իրականացնող մարմնի կողմից սառեցված գույքի վրա կալանք դնելու~~ քննիչի կողմից սառեցված գույքի արգելադրման դեպքում: Սույն հոդվածի 2-րդ մասում նշված անձանց գույքի սառեցումը նաև վերացվում է, եթե բացահայտվում է, որ այն անձը, որի միջոցները սառեցվել են, հանվել է ահաբեկչության հետ կապված անձանց ցանկից:

5. Անձն իրավունք ունի լիազոր մարմնից պահանջելու սառեցված գույքի հաշվին իր ընտանեկան, բժշկական, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով սահմանված այլ նպատակներով վճարումների կատարումը: Այդպիսի վճարումների վերաբերյալ որոշում կայացվում է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերին համապատասխան, եթե տվյալ անձի անունն ընդգրկված է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով հրապարակված ցանկերում:

6. Հաշվետվություն տրամադրող անձն ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց գույքը սառեցնելու դեպքում գործարքը կամ գործարար հարաբերությունը անմիջապես որակում է կասկածելի և

տրամադրում է սույն օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն: Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պետական մարմինները և անձինք ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց գույքը սառեցնելու (դրանց վրա կալանք կամ արգելանք դնելու կամ կասեցնելու) դեպքում դրա մասին անմիջապես տեղեկացնում են լիազոր մարմնին:

7. Ֆինանսական հետախուզության օտարերկրյա մարմիններից կամ օտարերկրյա այլ մարմիններից գույքի սառեցման խնդրանք ստանալու դեպքում լիազոր մարմինը նույն օրվա ընթացքում քննարկում է սառեցման հիմնավորվածությունը: Սառեցման հիմնավորվածությունը հաստատվելու դեպքում լիազոր մարմինը սույն հոդվածով սահմանված կարգով որոշում է կայացնում գույքի սառեցման մասին:

8. Սառեցման մասին լիազոր մարմնի տեղեկանալու պահից 5 օրվա ընթացքում լիազոր մարմինը այդ մասին սույն օրենքի 13-րդ հոդվածով սահմանված կարգով ~~քրեական հետապնդման մարմիններին~~ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին, վարույթի հանրային մասնակիցներին տրամադրում է ծանուցում, բացառությամբ լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով սառեցումը վերացնելու մասին որոշում կայացնելու դեպքերի:

9. Սույն հոդվածի իմաստով սառեցման առարկա չի կարող լինել այն գույքը, որը պատկանում է բարեխիղճ երրորդ անձին, այսինքն՝ այն անձին, որը գույքը այլ անձի հանձնելիս չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ դրանք օգտագործվելու են կամ նախատեսվում են օգտագործել հանցավոր, ներառյալ՝ ահաբեկչության կամ ահաբեկչության ֆինանսավորման կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման կամ դրա ֆինանսավորման նպատակներով, ինչպես նաև այն անձին, որը գույքը ձեռք բերելիս չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ դրանք ստացվել են հանցավոր ճանապարհով:

Հոդված 29. Հաշվետվություն տրամադրող անձանց և ոչ առևտրային կազմակերպությունների նկատմամբ վերահսկողությունը

1. Հաշվետվություն տրամադրող անձանց նկատմամբ սույն օրենքի և դրա հիման վրա ընդունված իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են համապատասխան վերահսկող մարմինները: Հաշվետվություն տրամադրող որևէ տեսակի անձի նկատմամբ վերահսկող մարմին առկա չլինելու կամ վերահսկող մարմնին փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում վերապահված գործառույթների իրականացման իրավական կարգավորման բացակայության դեպքում այդ հաշվետվություն տրամադրող անձի նկատմամբ վերահսկողություն կարող է իրականացնել լիազոր մարմինը՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական

բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5.1-ին գլխով սահմանված կարգով:

2. Օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև լիազոր մարմնի առաջարկի հիման վրա վերահսկող մարմիններն իրականացնում են հաշվետվություն տրամադրող անձանց մոտ ստուգումներ՝ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման պահանջների կատարումն ուսումնասիրելու և ռիսկերը գնահատելու նպատակով:

3. Ոչ առևտրային կազմակերպություններին վերահսկելու իրավասություն ունեցող մարմինները պետք է լիազոր մարմնի դիմումով միջոցներ ձեռնարկեն ոչ առևտրային կազմակերպություններին փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման մեջ ներգրավելը կամ օգտագործելը կանխարգելելու համար: Ոչ առևտրային կազմակերպությունները պարտավոր են սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետում պահպանել՝

1) ներպետական և միջազգային գործարքների վերաբերյալ տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը) այնպիսի մանրամասնությամբ, որը հնարավորություն կտա հավաստիանալու, թե արդյոք դրանց առարկա գույքը ծախսվել է կազմակերպության նպատակներին համապատասխան.

2) կառավարման մարմինների անդամների նույնականացման տվյալները՝ սույն օրենքի 16-րդ հոդվածին համապատասխան.

3) հիմնադիր փաստաթղթերը և կառավարման մարմինների որոշումները.

4) ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ փաստաթղթերը:

4. Լիազոր մարմինը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև ~~քրեական հետապնդում իրականացնող մարմինները~~ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները, վարույթի հանրային մասնակիցները կարող են ոչ առևտրային կազմակերպություններից կամ դրանց գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմիններից պահանջել փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր):

Հոդված 31. Փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման մեջ ներգրավվածության համար իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող պատասխանատվությունը

1. Փողերի լվացման մեջ իրավաբանական անձի (բացառությամբ հաշվետվություն տրամադրող անձի) ներգրավված լինելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով, ինչպես նաև կարող է հայց ներկայացվել դատարան՝ օրենքով սահմանված կարգով այդ իրավաբանական անձին լուծարելու պահանջով:

2. Փողերի լվացման մեջ իրավաբանական անձ հանդիսացող հաշվետվություն տրամադրող անձի ներգրավված լինելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկի չափով, ինչպես նաև կարող է ուժը կորցրած ճանաչվել կամ կասեցվել կամ դադարեցվել այդ անձի լիցենզիան կամ հայց ներկայացվել դատարան՝ օրենքով սահմանված կարգով այդ իրավաբանական անձին լուծարելու պահանջով:

3. Ահաբեկչության ֆինանսավորման մեջ իրավաբանական անձի (բացառությամբ հաշվետվություն տրամադրող անձի) ներգրավված լինելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկի չափով, ինչպես նաև հայց է ներկայացվում դատարան՝ օրենքով սահմանված կարգով այդ իրավաբանական անձին լուծարելու պահանջով:

4. Ահաբեկչության ֆինանսավորման մեջ իրավաբանական անձ հանդիսացող հաշվետվություն տրամադրող անձի ներգրավված լինելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի քսանհազարապատիկի չափով, ինչպես նաև ուժը կորցրած է ճանաչվում կամ դադարեցվում է այդ անձի լիցենզիան կամ հայց է ներկայացվում դատարան՝ օրենքով սահմանված կարգով այդ իրավաբանական անձին լուծարելու պահանջով:

5. Փողերի լվացման մեջ իրավաբանական անձի ներգրավվածություն կարող է առաջանալ այն դեպքում, երբ՝

1) իրավաբանական անձի ցանկացած ներկայացուցչի կողմից ի շահ իրավաբանական անձի կամ իրավաբանական անձի անունից կատարված գործողությունը կամ դրսևորված անգործությունն առաջացնում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ~~190-րդ~~ 296-րդ հոդվածով նախատեսված արարք, որի համար այդ անձի նկատմամբ կայացվել է մեղադրական դատավճիռ, կամ

2) ~~իրավաբանական անձի ներկայացուցիչը չի ենթարկվել քրեական պատասխանատվության քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը չբացառող հանգամանքների առկայության հետևանքով, բացառությամբ համաներման ակտի ընդունման կամ անձի մահանալու պատճառով քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքերի, կամ~~իրավաբանական անձի ներկայացուցիչը չի ենթարկվել քրեական պատասխանատվության քրեական հետապնդումը չբացառող հանգամանքների առկայության հետևանքով, բացառությամբ համաներման ակտի ընդունման կամ անձի մահանալու պատճառով քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքերի, եթե Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի համապատասխանաբար 3-րդ կամ 4-րդ մասով սահմանված ընթացակարգի արդյունքում կայացվել է անմեղության վերդիկտ,

3) լիազոր մարմնի կառավարման բարձրագույն մարմնի հիմնավորված կարծիքով իրավաբանական անձի ցանկացած ներկայացուցչի կողմից իրավաբանական անձի անունից կատարված գործողության կամ դրսևորված անգործության հետևանքով տեղի է ունեցել փողերի լվացում:

6. Ահաբեկչության ֆինանսավորման մեջ իրավաբանական անձի ներգրավվածություն կարող է առաջանալ այն դեպքում, երբ՝

1) իրավաբանական անձի ցանկացած ներկայացուցչի կողմից իրավաբանական անձի անունից կատարված գործողությունը կամ դրսևորված անգործությունը առաջացնում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ~~217.1-ին~~ 310-ր~~դ~~հոդվածով նախատեսված արարք, որի համար այդ անձի նկատմամբ կայացվել է մեղադրական դատավճիռ, կամ

2) ~~իրավաբանական անձի ներկայացուցիչը չի ենթարկվել քրեական պատասխանատվության քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը չբացառող հանգամանքների առկայության հետևանքով, բացառությամբ համաներման ակտի ընդունման կամ անձի մահանալու պատճառով քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքերի, կամ~~իրավաբանական անձի ներկայացուցիչը չի ենթարկվել քրեական պատասխանատվության քրեական հետապնդումը չբացառող հանգամանքների առկայության հետևանքով, բացառությամբ համաներման ակտի ընդունման կամ անձի մահանալու պատճառով քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու դեպքերի, եթե Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի համապատասխանաբար 3-րդ կամ 4-րդ մասով սահմանված ընթացակարգի արդյունքում կայացվել է անմեղության վերդիկտ,

3) լիազոր մարմնի կառավարման բարձրագույն մարմնի հիմնավորված կարծիքով իրավաբանական անձի ցանկացած ներկայացուցչի կողմից իրավաբանական անձի անունից կատարված գործողության կամ դրսևորված անգործության հետևանքով տեղի է ունեցել ահաբեկչության ֆինանսավորում:

7. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման մեջ իրավաբանական անձի ներգրավվածությունը հիմնավորելիս լիազոր մարմնի կառավարման բարձրագույն մարմինը կարող է հիմք ընդունել այն հանգամանքը, որ իրավաբանական անձի ներկայացուցչի գործողությունը կամ անգործությունը ամբողջությամբ կամ մասամբ համապատասխանում է տիպաբանություններին:

8. Սույն հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցները կարող են կիրառվել Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված կամ գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց նկատմամբ:

9. Սույն հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցները կիրառվում են լիազոր մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, սույն հոդվածի 5-րդ մասի 3-րդ և 6-րդ մասի 3-րդ կետերով նախատեսված դեպքերում սույն հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցները կիրառվում են լիազոր մարմնի կառավարման բարձրագույն մարմնի կողմից:

10. Ոչ ֆինանսական հաստատությունների նկատմամբ սույն հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցները կիրառելու վարույթ հարուցելու պահից ինգօրյա ժամկետում լիազոր մարմինը տեղեկացնում է համապատասխան վերահսկող մարմնին:

11. Իրավաբանական անձի նկատմամբ սույն հոդվածի 5-րդ մասի 1-ին և 6-րդ մասի 1-ին կետերով նախատեսված դեպքերում սույն հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցները կարող են կիրառվել իրավաբանական անձի ներկայացուցչի նկատմամբ մեղադրական դատավճռի կայացման պահից մեկ տարվա ընթացում:

12. Համաներման ակտի ընդունման կամ անձի մահանալու պատճառով քրեական պատասխանատվություն չկիրառելու դեպքում լիազոր մարմինը սույն հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցները կարող է կիրառել մեկ տարվա ընթացքում՝ այն պահից սկսած, երբ իմացել է կամ կարող էր իմանալ այդ հանգամանքներն առաջանալու մասին:

13. Սույն հոդվածի 11-րդ և 12-րդ մասերով չնախատեսված՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման մեջ իրավաբանական անձի ներգրավվածության այլ դեպքերում սույն հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցները կարող են կիրառվել փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կատարման պահից տասը տարվա ընթացքում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 162.1. Ոչ նյութական վնասի հասկացությունը և դրա հատուցումը

1. Սույն օրենսգրքի իմաստով ոչ նյութական վնասը ֆիզիկական կամ հոգեկան տառապանք է, որն առաջացել է անձին ի ծնե կամ օրենքի ուժով պատկանող նյութական կամ ոչ նյութական բարիքների դեմ ոտնձգող կամ նրա անձնական գույքային կամ ոչ գույքային իրավունքները խախտող որոշմամբ, գործողությամբ կամ անգործությամբ:

2. Անձը, իսկ նրա մահվան կամ անգործունակության դեպքում նրա ամուսինը, ծնողը, որդեգրողը, երեխան, որդեգրվածը, խնամակալը, հոգաբարձուն իրավունք ունեն դատական կարգով պահանջելու պատճառված ոչ նյութական վնասի հատուցում, եթե նախաքննության մարմինը, դատախազը~~քրեական հետապնդման մարմինը~~ կամ դատարանը հաստատել է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով խախտվել են այդ անձի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով երաշխավորված հետևյալ հիմնարար իրավունքները.

1) կյանքի իրավունքը.

2) խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքը.

3) անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը.

4) արդար դատաքննության իրավունքը.

5) անձնական և ընտանեկան կյանքը հարգելու, բնակարանի անձեռնմխելիության իրավունքը.

6) մտքի, խղճի և կրոնի ազատության, սեփական կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը.

7) հավաքների և միավորման ազատության իրավունքը.

8) իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը.

9) սեփականության իրավունքը:

3. Եթե դատապարտյալն արդարացվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային կից թիվ 7 Արձանագրության 3 հոդվածով նախատեսված պայմաններում, ապա նա իրավունք ունի դատական կարգով պահանջելու իրեն պատճառված ոչ նյութական վնասի հատուցում (սույն օրենսգրքի իմաստով՝ հատուցում անարդարացի դատապարտման համար):

4. Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասը հատուցվում է սույն օրենսգրքի 1087.1 հոդվածով, իսկ հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասը՝ 1087.2 հոդվածով սահմանված կարգին և պայմաններին համապատասխան:

5. Ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

(162.1-ին հոդվածը լրաց. 19.05.14 ՀՕ-21-Ն, լրաց., խմբ., փոփ. 21.12.15 ՀՕ-184-Ն)

Հոդված 243. Գրավ դրված գույքը հարկադրաբար վերցնելու և առգրավելու հետևանքները

1. Այն դեպքերում, երբ գրավի առարկա գույքի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքը դադարել է օրենքով սահմանված հիմքերով և կարգով հանրության գերակա շահերի ապահովման նպատակով օտարվելու, ռեկվիզիցիայի կամ ազգայնացման հետևանքով, ու գրավատուին տրվել է այլ գույք և (կամ) համապատասխան հատուցում, գրավի իրավունքը տարածվում է փոխարենը տրված գույքի վրա, կամ գրավառուն ձեռք է բերում գրավատուին հասանելիք հատուցման գումարից իր պահանջը բավարարելու նախապատվության իրավունք:

2. Այն դեպքում, երբ գրավի առարկա գույքն օրենքով սահմանված կարգով առգրավվել է գրավատուից՝ բռնագանձում տարածելու միջոցով կամ բռնագրավվել է~~կամ որպես հանցագործության համար պատժամիջոց~~, գրավառուն այդ գույքի արժեքից իր պահանջը բավարարելու նախապատվության իրավունք ունի:

3. Այն դեպքում, երբ գրավի առարկա գույքն օրենքով սահմանված կարգով առգրավվել է գրավատուից այն հիմքով, որ իրականում այդ գույքի սեփականատերն ուրիշ անձ է, այդ գույքի նկատմամբ գրավը դադարում է:

4. Սույն հոդվածով նախատեսված դեպքերում գրավառուն իրավունք ունի պահանջել վաղաժամկետ կատարելու գրավով ապահովված պարտավորությունը:

(243-րդ հոդվածը փոփ. 27.11.06 ՀՕ-187-Ն, 24.10.18 ՀՕ-408-Ն)

~~Հոդված 288.~~ ~~Բռնագրավում~~

~~Օրենքով նախատեսված դեպքերում գույքը սեփականատիրոջից կարող է անհատույց առգրավվել դատավճռով՝ որպես հանցագործության համար պատժամիջոց (բռնագրավում):~~

Հոդված 288. Բռնագրավում

1. Օրենքով նախատեսված դեպքերում գույքը սեփականատիրոջից կարող է անհատույց վերցվել դատավճռով՝ որպես հանցագործության արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ստացված գույք, այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտ և այլ տեսակի օգուտ, հանցագործության համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիք և միջոց, հանցագործության առարկա:

Հոդված 341. Հայցային վաղեմության ժամկետի ընթացքը հայցն առանց լուծման**~~քննության~~ թողնելու դեպքում**

1. Եթե դատարանն առանց քննության է թողել հայցը, ապա մինչև հայցի հարուցումն սկսված հայցային վաղեմության ժամկետի ընթացքը շարունակվում է ընդհանուր կարգով:

2. ~~Եթե դատարանն առանց քննության է թողել քրեական գործով ներկայացված հայցը, ապա մինչև հայցի հարուցումն սկսված հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է մինչև այն դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը, որով հայցը թողնվել է առանց քննության:~~ Եթե դատարանն առանց լուծման է թողել քրեական վարույթով ներկայացված հայցը, ապա մինչև հայցի հարուցումն սկսված հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է մինչև այն դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը, որով հայցը թողնվել է առանց լուծման: Ժամանակը, որի ընթացքում վաղեմությունը կասեցվել էր, չի հաշվվում հայցային վաղեմության ժամկետի մեջ: Ընդ որում, եթե ժամկետի մնացած մասը վեց ամսից պակաս է, այն երկարաձգվում է մինչև վեց ամիս:

Հոդված 928.1. Հատուկ բանկային հաշվի պայմանագրի առանձնահատկությունները

1. Հատուկ բանկային հաշիվներ են սույն գլխով նախատեսված էսքրոու հաշիվը, սոցիալական փաթեթի հաշիվը, անվանատիրոջ հաշիվը, նոտարի դեպոզիտ հաշիվը, կառուցապատողի հատուկ հաշիվը, պետական աջակցության հաշիվը, միանվագ դրամական վճարների հաշիվը, սոցիալական ապահովության հաշիվը, ինչպես նաև

օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կամ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով որպես հատուկ բանկային հաշիվ նախատեսված այլ բանկային հաշիվները:

2. Հատուկ բանկային հաշիվներն այն հաշիվներն են, որոնցում ներդրված միջոցները՝

1) սույն գլխով սահմանված դրույթների կամ սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված նորմատիվ իրավական ակտերի համաձայն՝ կարող են օգտագործվել միայն սույն գլխի դրույթների հիման վրա պայմանագրերով կամ նորմատիվ իրավական ակտերով սահմանված ուղղություններով, դեպքերում, պայմաններով կամ գործառնություններով, և (կամ)

2) չեն կարող գրավադրվել, արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել հաճախորդի պարտավորությունների դիմաց կամ հաճախորդի սնանկության դեպքում հանդիսանալ պարտավորությունների կատարման համար լուծարային միջոց, բացառությամբ սույն գլխով նախատեսված դեպքերի:

3. Հատուկ բանկային հաշվում ներդրված միջոցները, բացառությամբ 928.9-րդ հոդվածում նշված դեպքի, կարող են գրավադրվել, արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել միայն այն դեպքերում, երբ՝

1) հատուկ բանկային հաշվի պայմանագրով հաճախորդ հանդիսացող անձի պարտավորությունները կապված են սույն հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված ուղղություններից, դեպքերից, պայմաններից կամ գործառնություններից բխող պարտավորությունների հետ, կամ

2) այդ միջոցները հատուկ բանկային հաշվում եղած դրամական միջոցներն օգտագործելու համար բանկի կողմից հաճախորդին վճարված տոկոսներից ձևավորված միջոցներ են, բացառությամբ նոտարի կամ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված այլ դեպքերի, կամ

3) սոցիալական փաթեթի հաշվի դեպքում՝ այդ միջոցները տվյալ հաշվում առկա ոչ պետական բյուջեի միջոցների հաշվին մուտքագրված միջոցներ են, կամ

4) էսքրոու հաշվի դեպքում՝ այդ միջոցները Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ~~190~~ 296-րդ հոդվածի 5-րդ ~~կետով~~ մասով նախատեսված գույք են, կամ

5) էսքրոու հաշվի դեպքում՝ էսքրոու հաշվի պայմանագրի կնքման օրվանից անցել է 30 և ավելի օր, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

4. Հատուկ բանկային հաշվի պայմանագրի լուծման դեպքում տվյալ հատուկ բանկային հաշվում եղած դրամական միջոցների մնացորդը ենթակա է փոխանցման տվյալ հաճախորդի համապատասխան այլ հատուկ բանկային հաշվին կամ վերադարձման՝ համապատասխան դրամական միջոցները մուտք արած անձին, բացառությամբ պայմանագրով, այլ իրավական ակտերով և (կամ) սույն հոդվածով սահմանված դեպքերի: Հատուկ բանկային հաշվի պայմանագրով նման վերադարձ կարող է նախատեսվել նաև պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

5. Անվանատիրոջ հաշվի պայմանագրի լուծման դեպքում անվանատիրոջ հաշվում եղած դրամական միջոցների մնացորդը կարող է վերադարձվել տվյալ անվանատիրոջը,

փոխանցվել տվյալ անվանատիրոջ համապատասխան այլ հատուկ բանկային հաշվին և (կամ) փոխանցվել տվյալ անվանատիրոջ մատնանշած այլ անձի, եթե այլ բան նախատեսված չէ անվանատիրոջ հաշվի պայմանագրով:

6. Նոտարի դեպոզիտ հաշվի պայմանագրի լուծման դեպքում նոտարի դեպոզիտ հաշվում եղած դրամական միջոցների մնացորդը կարող է վերադարձվել տվյալ նոտարին, փոխանցվել տվյալ նոտարի համապատասխան այլ հատուկ բանկային հաշվին և (կամ) փոխանցվել տվյալ նոտարի մատնանշած այլ անձի, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ նոտարի դեպոզիտ հաշվի պայմանագրով:

7. Պայմանագրով նախատեսված դեպքերում հաճախորդը բանկի ծառայությունների դիմաց վճարում է իր հատուկ բանկային հաշվով կատարվող գործառնությունների համար: Ընդ որում, բանկի ծառայությունների համար վճարը բանկը չի կարող վերցնել հաճախորդի հատուկ բանկային հաշվում եղած միջոցներից, բացառությամբ սույն հոդվածի 9-րդ կետով նախատեսված տոկոսների: Սույն կետով նախատեսված բացառությունը չի տարածվում նոտարի դեպոզիտ հաշիվների վրա:

8. Հաճախորդի հատուկ բանկային հաշվում եղած դրամական միջոցներն օգտագործելու համար բանկը տոկոսները վճարում է հաճախորդին, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Սույն կետով նախատեսված տոկոսների գումարը մուտքագրվում է հատուկ բանկային հաշվում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

9. Սույն հոդվածի 8-րդ կետում նշված տոկոսները բանկը վճարում է հատուկ բանկային հաշվի պայմանագրով սահմանված չափով, իսկ պայմանագրում համապատասխան պայմանի բացակայության դեպքում՝ տվյալ բանկի կողմից ցպահանջ ավանդների համար սահմանված չափով (սույն օրենսգրքի 906-րդ հոդված):

10. Տոկոսների գումարը հաշվում մուտքագրվում է պայմանագրով նախատեսված ժամկետներում, իսկ պայմանագրում նման ժամկետների բացակայության դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո, բայց ոչ ուշ, քան պայմանագրի դադարմանը հաջորդող օրը:

11. Հատուկ բանկային հաշվի միջոցների հաշվին հատուկ բանկային հաշվի տիրոջ և բանկի՝ հատուկ բանկային հաշվի տիրոջ նկատմամբ ունեցած ցանկացած հանդիպական պահանջների հաշվանց չի կարող իրականացվել, անգամ եթե հատուկ հաշիվը տվյալ բանկում հաշվի տիրոջ միակ հաշիվն է: Սույն կետով նախատեսված սահմանափակումը չի վերաբերում սույն հոդվածի 9-րդ կետով նախատեսված տոկոսներից ձևավորված միջոցների չափով հաշվանց կատարելուն, իսկ սոցիալական փաթեթի հաշվի դեպքում՝ նաև տվյալ հաշվում առկա ոչ պետական բյուջեի միջոցների հաշվին հաշվանց կատարելուն:

12. Պետական աջակցության հաշիվների կարգավորման առանձնահատկությունները սահմանվում են կառավարության որոշմամբ:

13. Սույն օրենսգրքի 50-րդ գլխով սահմանված պահանջները տարածվում են հատուկ բանկային հաշիվների վրա այնքանով, որքանով չեն հակասում սույն գլխի դրույթներին:

(928.1-ին հոդվածը լրաց. 06.12.17 ՀՕ-238-Ն)

~~Հոդված 1064.~~ ~~Պատասխանատվությունը հետաքննության, նախաքննության մարմինների, դատախազության և դատարանի ապօրինի գործողություններով պատճառված վնասի համար~~

~~1. Ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու, վարչական տույժի ենթարկելու հետևանքով պատճառված վնասը, օրենքով սահմանված կարգով, լրիվ ծավալով հատուցում է Հայաստանի Հանրապետությունը՝ անկախ հետաքննության, նախաքննության, դատախազության և դատարանի պաշտոնատար անձանց մեղքից:~~

~~2. Քաղաքացուն կամ իրավաբանական անձին հետաքննության, նախաքննության, դատախազության մարմինների ապօրինի գործունեությամբ պատճառված վնասը, որը չի հանգեցրել սույն հոդվածի 1-ին կետում նախատեսված հետևանքներին, հատուցվում է սույն օրենսգրքի 1063 հոդվածում նախատեսված հիմքերով և կարգով:~~

~~3. Արդարադատություն իրականացնելիս պատճառված վնասը հատուցվում է միայն այն դեպքում, երբ դատավորի մեղքը հաստատվել է օրինական ուժի մեջ մտած դատավճռով:~~

Հոդված 1064. Պատասխանատվությունը նախաքննության մարմինների, դատախազության և դատարանի ապօրինի գործողություններով պատճառված վնասի համար

1. Ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, կալանք, տնային կալանք, վարչական հսկողություն կամ բացակայելու արգելք խափանման միջոց կիրառելու, վարչական տույժի ենթարկելու հետևանքով պատճառված վնասը, օրենքով սահմանված կարգով, լրիվ ծավալով հատուցում է Հայաստանի Հանրապետությունը՝ անկախ նախաքննության մարմնի, դատախազության և դատարանի պաշտոնատար անձանց մեղքից:

2. Քաղաքացուն կամ իրավաբանական անձին նախաքննության, դատախազության մարմինների ապօրինի գործունեությամբ պատճառված վնասը, որը չի հանգեցրել սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված հետևանքներին, հատուցվում է սույն օրենսգրքի 1063-րդ հոդվածում նախատեսված հիմքերով և կարգով:

3. Արդարադատություն իրականացնելիս պատճառված վնասը հատուցվում է միայն այն դեպքում, երբ դատավորի մեղքը հաստատվել է օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Հոդված 1087.2. Հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման կարգը և պայմանները

(վերնագիրը փոփ. 21.12.15 ՀՕ-184-Ն)

1. Հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման եղանակը, հիմքը և չափը որոշվում են սույն հոդվածին և սույն օրենսգրքի 162.1 հոդվածին համապատասխան:

2. Ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման՝ անկախ հատուցման ենթակա գույքային վնասից:

3. Ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման՝ անկախ վնաս պատճառելիս պաշտոնատար անձի մեղքի առկայությունից:

4. Ոչ նյութական վնասը հատուցվում է պետական բյուջեի միջոցների հաշվին: Եթե սույն օրենսգրքի 162.1 հոդվածով սահմանված հիմնարար իրավունքը խախտվել է տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից, ապա ոչ նյութական վնասը հատուցվում է համապատասխան համայնքային բյուջեի միջոցների հաշվին:

5. Ոչ նյութական վնասի հատուցման չափը որոշում է դատարանը՝ ողջամտության, արդարացիության (equitableness) և համաչափության սկզբունքներին համապատասխան:

6. Ոչ նյութական վնասի հատուցման չափը որոշելիս դատարանը հաշվի է առնում ֆիզիկական կամ հոգեկան տառապանքի բնույթը, աստիճանը և տևողությունը, պատճառած վնասի հետևանքները, վնասը պատճառելիս մեղքի առկայությունը, ոչ նյութական վնաս կրած անձի անհատական հատկանիշները, ինչպես նաև այլ վերաբերելի հանգամանքներ:

7. Հատուցման չափը չի կարող գերազանցել՝

1) նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկը՝ սույն օրենսգրքի 162.1 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, ինչպես նաև նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավունքների խախտման պարագայում,

2) նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը՝ սույն օրենսգրքի 162.1 հոդվածի 2-րդ մասի 3-9-րդ կետերով նախատեսված իրավունքների խախտման պարագայում:

8. Ոչ նյութական վնասի հատուցման չափը բացառիկ դեպքերում կարող է գերազանցել սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսած առավելագույն սահմանը, եթե պատճառված վնասի արդյունքում առաջացել են ծանր հետևանքներ:

9. Ոչ նյութական վնասի հատուցման պահանջը դատարան կարող է ներկայացվել ինչպես սույն օրենսգրքի 162.1 հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավունքի խախտումը հաստատելու պահանջի հետ՝ խախտման մասին անձին հայտնի դառնալու պահից, այնպես էլ այդ իրավունքի խախտումը հաստատող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո կամ ~~ոչ արդարացնող հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին քննիչի կամ դատախազի կայացրած՝~~ ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու կամ քրեական վարույթը կարճելու մասին չվերացված կամ չբողոքարկված որոշման մասին այդ անձին հայտնի դառնալու պահից մեկ տարվա ընթացքում:

10. Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը, որը հատուցել է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով պատճառած վնասը, հետադարձ պահանջի (ռեգրեսի) իրավունք ունի այդ անձի նկատմամբ՝ իր վճարած հատուցման չափով: Հետադարձ պահանջ ներկայացնելու հիմք է հանդիսանում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի պաշտոնատար անձի մեղքի առկայությունը:

(1087.2-րդ հոդվածը լրաց. 19.05.14 ՀՕ-21-Ն, փոփ., լրաց., խմբ. 21.12.15 ՀՕ-184-Ն, խմբ. 16.12.16 ՀՕ-241-Ն)

(1087.2-րդ հոդվածի 8-րդ մասի «բացառիկ դեպքերում» բառակապակցությունը ճանաչվել է Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 78 և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր 03.03.20 ՍԴՈ-1513 որոշմամբ:)

Հոդված 1087.3. Խոշտանգումից տուժած անձանց փոխհատուցման հասկացությունը, բովանդակությունը, կարգն ու պայմանները

1. Սույն օրենսգրքի իմաստով՝ խոշտանգումից տուժած է համարվում անձը, որին պաշտոնատար անձի կամ պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձի կողմից կամ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք է պատճառվել այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու նպատակով կամ այն արարքի համար պատժելու նպատակով, որն այդ կամ երրորդ անձը կատարել է կամ որի կատարման մեջ կասկածվում կամ մեղադրվում է, ինչպես նաև այդ կամ երրորդ անձին վախեցնելու կամ որևէ արարք կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով:

2. Խոշտանգումից տուժած անձանց տրամադրվող փոխհատուցումը ներառում է այդ անձանց կրած նյութական, ոչ նյութական վնասների հատուցումը (compensation) և ռեաբիլիտացիայի իրավունքը:

3. Խոշտանգումից տուժած անձի ռեաբիլիտացիայի իրավունքը ներառում է բժշկական օգնության և սպասարկման դիմաց հատուցում ստանալու, ինչպես նաև անվճար հոգեբանական և անվճար իրավաբանական ծառայություններից օգտվելու իրավունքը: Հոգեբանական ծառայությունները տրամադրվում են խոշտանգման մասին ենթադրյալ տուժողի կողմից հայտարարություն ներկայացվելուց հետո ողջամիտ ժամկետում՝ հաշվի առնելով տուժողի իրավաչափ շահերը: Հոգեբանական ծառայությունները մատուցվում են ավանդական և այլընտրանքային միջամտության եղանակներով՝ հաշվի առնելով տուժողի անհատական կարիքները: Հոգեբանական ծառայություններից օգտվելու կարգի և պայմանների մանրամասները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

4. Խոշտանգումից տուժած անձը, իսկ նրա մահվան, անչափահաս լինելու կամ անգործունակության դեպքում նրա ծնողը, որդեգրողը, զավակը, որդեգրվածը,

ամուսինը, խնամակալը, հոգաբարձուն դատական կարգով իրավունք ունեն պահանջելու և ստանալու փոխհատուցում՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով և պայմաններով:

5. Խոշտանգումից տուժած անձի փոխհատուցման պահանջը սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված անձինք դատարան կարող են ներկայացնել տուժած անձի նկատմամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ~~309.1 հոդվածով նախատեսված արարք կատարելու վերաբերյալ դատարանի մեղադրական դատավճիռը օրինական ուժի մեջ մտնելուց հետո կամ նրա նկատմամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 309.1 հոդվածով նախատեսված արարք կատարելու համար ոչ արդարացնող հիմքով քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին քննիչի կամ դատախազի կայացրած՝~~ 450-րդ հոդվածով նախատեսված արարք կատարելու վերաբերյալ դատարանի մեղադրական դատավճիռը օրինական ուժի մեջ մտնելուց հետո կամ նրա նկատմամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածով նախատեսված արարք կատարելու համար ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու կամ քրեական վարույթը կարճելու մասին չվերացված կամ չբողոքարկված որոշման մասին այդ անձին հայտնի դառնալու պահից մեկ տարվա ընթացքում: Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած դատական ակտով խոշտանգման փաստը հաստատվելու դեպքում այդ ակտի ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, խոշտանգումից տուժած անձը կամ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված անձինք իրավունք ունեն ստանալու փոխհատուցում այնքանով, որքանով դա չի տրամադրվել միջազգային դատարանի դատական ակտով:

6. Փոխհատուցման չափը որոշում է դատարանը՝ ողջամտության, արդարացիության (equitableness) և համաչափության սկզբունքներին համապատասխան՝ ներառելով նյութական և ոչ նյութական վնասը, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման համար փաստացի կրած ողջամիտ և անհրաժեշտ ծախսերը:

7. Խոշտանգումից տուժած անձի վնասը փոխհատուցվում է պետական բյուջեի միջոցների հաշվին: Հայաստանի Հանրապետությունը, որը փոխհատուցել է պաշտոնատար անձի կամ պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձի կողմից կամ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ կատարված խոշտանգման հետևանքով պատճառած վնասը, հետադարձ պահանջի (ռեգրեսի) իրավունք ունի այդ անձի նկատմամբ՝ իր վճարած փոխհատուցման չափով:

8. Սույն հոդվածով նախատեսված փոխհատուցման տարրերից յուրաքանչյուրով խոշտանգումից տուժած անձը կարող է խոշտանգման յուրաքանչյուր փաստով պատճառված վնասների հատուցում ստանալ միայն մեկ անգամ:

(1087.3-րդ հոդվածը լրաց. 16.12.16 ՀՕ-241-Ն)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՁՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 8. Անձնագիրը վերցնելը

1. Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինները իրենց վերապահված լիազորություններն իրականացնելիս պարտավոր են անձնագիրը վերցնել, եթե առկա են անձնագիրը անվավեր ճանաչելու՝ սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-2-րդ և 5-6-րդ կետերով նախատեսված հիմքերը, կամ քաղաքացին օգտագործում է այլ քաղաքացուն պատկանող անձնագիր: Անձնագիրը վերցնելուց հետո անմիջապես քաղաքացուն տրվում է անձնագիրը վերցնելու փաստը հավաստող տեղեկանք: Տեղեկանքի ձևը հաստատվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հրամանով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում օտարերկրյա պետությունում գտնվող քաղաքացու անձնագիրը վերցնում է Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկը:

3. Վերցված անձնագիրը փոխանցվում է այն տրամադրած ոստիկանության մարմին, բացի սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերից:

4. ~~Կասկածյալի կամ մեղադրյալի~~ Մեղադրյալի անձնագիրը ժամանակավորապես վերցնում է ~~հետաքննության կամ~~ նախաքննության մարմինը: Ժամկետային զինվորական ծառայության զորակոչված անձանց անձնագիրը վերցնում է զինկոմիսարիատը: ~~Կասկածյալի և մեղադրյալի~~ Մեղադրյալի անձնագիրը պահվում է վարույթ իրականացնող պաշտոնատար անձանց մոտ և վերադարձվում է հարուցված քրեական հետապնդումը դադարեցվելուց հետո անմիջապես: Ժամկետային զինվորական ծառայության զորակոչված անձի անձնագիրը վերադարձվում է ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելուց հետո անմիջապես: Ազատազրկման դատապարտված անձի անձնագիրը պահվում է պատիժը կատարող մարմնում և քաղաքացուն վերադարձվում է պատիժը կրելուց հետո անմիջապես:

5. Արգելվում է անձնագիրը վերցնելը (բացառությամբ սույն հոդվածում նշված դեպքերի) կամ գրավ ընդունելը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ» ՕՐԵՆՍԳՐՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 61. Ապացուցելուց ազատվելու հիմքերը

1. Հանրահայտ փաստերն ապացուցման կարիք չունեն:

2. Նախկինում քննված քաղաքացիական, սնանկության կամ վարչական գործով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով հաստատված գործի քննության համար նշանակություն ունեցող փաստերը գործին մասնակցող նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում:

3. Քրեական ~~գործով~~ վարույթով օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված որոշակի արարքների և դրանք կատարած անձանց վերաբերյալ փաստերն այլ գործ քննելիս կրկին ապացուցման ենթակա չեն:

4. Նոտարական գործողության արդյունքով նոտարի հաստատած փաստն ապացուցման ենթակա չէ, եթե նոտարական կարգով վավերացված փաստաթղթի իսկությունը վիճարկված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով, կամ նոտարական գործողությունը չի ճանաչվել ոչ իրավաչափ՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

5. Գործին մասնակցող անձն ազատվում է գործի լուծման համար նշանակություն ունեցող այն փաստերն ապացուցելու պարտականությունից, որոնք գործին մասնակցող մյուս անձինք ընդունում են առաջին ատյանի դատարան ներկայացված դատավարական փաստաթղթով, դատական նիստի ընթացքում արված հայտարարությամբ, դիրքորոշում հայտնելու կամ ցուցմունք տալու ընթացքում (անվիճելի փաստեր), բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը գտնում է, որ՝

1) առկա են ողջամիտ կասկածներ, որ փաստն ընդունվում է խաբեության, բռնության, սպառնալիքի, մոլորության ազդեցության տակ, մեկ կողմի ներկայացուցչի հետ մյուս կողմի չարամիտ համաձայնության հետևանքով, ճշմարտությունը թաքցնելու կամ ոչ իրավաչափ գործողություններ քողարկելու նպատակով.

2) այդ փաստը կարող է հաստատվել միայն օրենքով կամ այլ իրավական ակտով սահմանված որոշակի ապացույցով.

3) այդ փաստի հաստատումն անխուսափելիորեն ազդում է գործին չմասնակցող անձի՝ գործին մասնակցող անձանցից որևէ մեկի նկատմամբ ունեցած իրավունքների կամ պարտականությունների վրա:

6. Գործին մասնակցող անձի կողմից հաշտարարության ընթացքում որևէ փաստի ընդունումը չի կարող հիմք հանդիսանալ դատավարության ընթացքում այդ փաստը հաստատված համարելու համար:

Հոդված 153. Դատական սանկցիաները և դրանց կիրառման ընդհանուր կարգը

1. Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք սահմանադրական օրենքով նախատեսված հիմքերով դատարանն իրավունք ունի դատավարության մասնակցի, դատական նիստին ներկա այլ անձի նկատմամբ կիրառել հետևյալ սանկցիաները.

1) նկատողություն.

2) դատական նիստերի դահլիճից հեռացում.

3) դատական տուգանք:

2. Դատավորն անհրաժեշտության դեպքում հասկանալի ձևով նախազգուշացնում է դատական սանկցիա կիրառելու դատարանի իրավասության մասին, պարզաբանում դատական սանկցիա կիրառելու հիմքերը և հետևանքները:

3. Դատական նիստերի դահլիճում ներկա անձի նկատմամբ սանկցիա կիրառելիս դատարանն անհրաժեշտության դեպքում նրան տալիս է արտահայտվելու հնարավորություն: Տուգանք կիրառելիս կամ գործին մասնակցող անձին դատական նիստերի դահլիճից հեռացնելիս արտահայտվելու իրավունք չտրամադրելը դատարանը պետք է պատճառաբանի:

4. Եթե անձն ընդունում է իր արարքի հակաիրավականությունը և հայցում է դատարանի ներողամտությունը, ապա նշված անձի նկատմամբ դատական սանկցիա կարող է չկիրառվել:

5. Եթե դատական սանկցիայի ենթակա անձը չարաշահում է սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված իրավունքը և արտահայտվելու իրավունքն օգտագործում է դատական սանկցիայի կիրառման հիմք հանդիսացող արարքը շարունակելու կամ նոր արարք կատարելու համար, ապա դատավորն իրավասու է այդ անձի նկատմամբ կիրառելու առավել խիստ դատական սանկցիա:

6. Եթե դատարանը գտնում է, որ դատավարության մասնակիցը կամ դատական նիստին ներկա այլ անձը դատարանի նկատմամբ դրսևորել է այնպիսի վարքագիծ կամ կատարել է այնպիսի արարք, որն առաջացնում է քրեական պատասխանատվություն, ապա նրա նկատմամբ դատարանը կիրառում է դատական սանկցիա և դիմում է ~~դատախազին քրեական գործ հարուցելու~~ նախաքննության մարմին վարույթ նախաձեռնելու միջնորդությամբ:

Հոդված 234.3. Հայցադիմումի քննությունը

1. Դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

2. Հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումն ստանալու օրվանից՝ եռօրյա ժամկետում:

3. Դատարանը պաշտպանական որոշման կիրառման մասին հայցադիմումը քննում և դրա վերաբերյալ որոշում է կայացնում առանց դատական նիստ հրավիրելու հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնելու պահից՝ տասնօրյա ժամկետում:

4. Գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե (“ex officio”): Դատարանը կաշկանդված չէ դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծմանն անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:

5. Հայցադիմումի քննության ընթացքում առերևույթ հանցակազմի հատկանիշներ հայտնաբերելիս դատարանը, առանց վարույթը կասեցնելու, դիմում է գլխավոր դատախազին՝ ~~քրեական գործ հարուցելու~~ քրեական վարույթ նախաձեռնելու հիմքերի առկայությունն ստուգելու միջնորդությամբ:

Հոդված 346. Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա դատական ակտերը ճանաչելը և կատարման թույլատրելը

1. Օտարերկրյա պետությունների դատարանների քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերը ճանաչվում են, իսկ կատարում պահանջող դատական ակտերը նաև կատարվում են Հայաստանի Հանրապետությունում, եթե այդպիսի ճանաչումը և կատարումը նախատեսված են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով կամ փոխադարձության հիման վրա:

2. Սույն ենթաբաժնի իմաստով՝ օտարերկրյա դատական ակտ է համարվում այլ պետության դատական մարմնի ընդունած եզրափակիչ դատական ակտը՝ անկախ դրա անվանումից, որն ունի իրավական ուժ այն պետությունում, որտեղ կայացվել է, այդ թվում՝ օտարերկրյա դատարանի հաստատած հաշտության համաձայնությունները, արձակած դատական հրամանները և վճարման կարգադրությունները, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման մասով քրեական ~~գործերով~~վարույթով կայացրած դատավճիռները:

3. Հայաստանի Հանրապետությունում կարող են ճանաչվել նաև օտարերկրյա դատարանի՝ հայցի ապահովման մասին որոշումները:

4. Օտարերկրյա դատական ակտը Հայաստանի Հանրապետությունում ենթակա է ճանաչման և կատարման, եթե այդ ակտով լուծվող վեճը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համարվում է քաղաքացիական, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրով:

5. Եթե օտարերկրյա դատական ակտի ճանաչումը և կատարումը կախված են փոխադարձությունից, ապա փոխադարձությունը համարվում է գոյություն ունեցող, քանի դեռ չի ապացուցվել հակառակը:

6. Հայաստանի Հանրապետությունում առանց միջազգային պայմանագրի կամ փոխադարձության առկայության ճանաչվում են՝

1) անձանց իրավական վիճակի վերաբերյալ դատական ակտերը.

2) օտարերկրյա քաղաքացիների միջև ամուսնալուծության կամ ամուսնությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ օտարերկրյա դատական ակտերը.

3) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների միջև կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց միջև ամուսնալուծության կամ ամուսնությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ օտարերկրյա դատական ակտերը.

4) օրենքով նախատեսված դեպքերում՝ օտարերկրյա այլ դատական ակտեր:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքով կարգավորվում են օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման բնագավառում ծագող իրավահարաբերությունները: Օրենքը սահմանում է օպերատիվ-հետախուզական գործունեության հասկացությունը, խնդիրները, սկզբունքները, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելիս նրանց իրավունքները և պարտականությունները, օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները, քրեական վարույթի ընթացքում օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման առանձնահատկությունները, օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ հսկողությունը և վերահսկողությունը:

Հոդված 2. Օպերատիվ-հետախուզական գործունեությունը կարգավորող իրավական ակտերը

1. Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, սույն օրենքից, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքից, Մաքսային օրենսգրքից, «Դատախազության մասին», «Ազգային անվտանգության մարմինների մասին», «Ոստիկանության մասին», «Ռազմական ոստիկանության մասին», «Քրեակատարողական ծառայության մասին», «Հարկային ծառայության մասին», «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին», «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներից~~, սույն օրենքից~~, այլ իրավական ակտերից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից:

2. Օպերատիվ-հետախուզական գործունեության նախապատրաստման և անցկացման գործելակերպը կարգավորվում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների նորմատիվ իրավական ակտերով: Քրեական պատասխանատվությունից խուսափող, անհայտ կորած անձանց, ինչպես նաև պարտապանների հետախուզման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

(2-րդ հոդվածը լրաց. 19.03.09 ՀՕ-61-Ն, 31.05.19 ՀՕ-51-Ն, 16.04.20 ՀՕ-250-Ն, 24.03.21 ՀՕ-148-Ն)

~~**Հոդված 3. Օպերատիվ-հետախուզական գործունեության հասկացությունը**~~

~~Օպերատիվ-հետախուզական գործունեությունը մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պետական ու հասարակական անվտանգությունը հակաիրավական ոտնձգություններից պաշտպանելու նպատակով՝ օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացումն է:~~

Հոդված 3. Օպերատիվ-հետախուզական գործունեության հասկացությունը

1. Օպերատիվ-հետախուզական գործունեությունը մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պետական և հասարակական անվտանգությունը հակաիրավական ոտնձգություններից պաշտպանելու նպատակով՝ օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից գաղտնի և բացահայտ մեթոդների ու միջոցների կիրառմամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների նախապատրաստումը, իրականացումը և արդյունքների ամրագրումն ու իրացումն է:

2. Օպերատիվ-հետախուզական միջոցառումներն ամբողջ ծավալով իրականացվում են ինչպես օպերատիվ-հետախուզական մարմինների կողմից իրենց վերապահված հիմնական խնդիրների իրականացման շրջանակներում, որպես ինքնուրույն գործունեություն, այնպես էլ նախաձեռնված քրեական վարույթի իրականացվող հետաքննության շրջանակներում որպես օժանդակող գործունեություն:

Հոդված 4. Օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակները

1. Օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակներն են՝

1) հանցագործությունների հայտնաբերումը, կանխումը, խափանումը և բացահայտումը ~~բացահայտումը, կանխումը և խափանումը~~.

2) հանցագործություն ~~հանցագործությունը~~ նախապատրաստող, կատարող կամ կատարած անձանց հայտնաբերումը.

3) քրեական պատասխանատվությունից և պատժից խուսափող անձանց հետախուզումը և հայտնաբերումը, ինչպես նաև անհայտ կորած անձանց հետախուզումը.

4) վկաների, դիակի, հանցագործության հետքերի, առարկաների, իրեղեն ապացույցների և այլ իրերի, փաստաթղթերի հայտնաբերումը.

5) ազգային անվտանգության ապահովման համար անհրաժեշտ տեղեկությունների ձեռքբերումը.

6) մաքսանենգության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տրանսպորտային միջոցների ապօրինի տեղափոխման խափանումն ու բացահայտումը.

7) հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների խախտումների նախազգուշացումը, կանխումը, խափանումն ու բացահայտումը.

7.1) ապօրինի ծագում ունեցող գույքի մասին տեղեկությունների և տվյալների հայտնաբերումը, այդ գույքի բռնագանձման գործընթացին աջակցելը.

8) քրեակատարողական հիմնարկների բնականոն գործունեության ապահովումը, քրեակատարողական հիմնարկներում նախապատրաստվող , կատարվող կամ կատարված հանցագործությունների նախազգուշացումը, կանխումը և բացահայտումը.

9) հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգությանն սպառնացող հանգամանքների առկայությունը, ինչպես նաև հատուկ պետական պաշտպանություն իրականացնող մարմնի կողմից՝ օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում օպերատիվ-հետախուզական մարմիններին տրված ցուցումները, որոնք վերաբերում են հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգությանն սպառնացող հանգամանքների վերացմանը.

10) պետական և ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկություններին առնչվելու թույլտվության որոշման կայացման համար տեղեկություններ հավաքելը.

11) օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցների, ինչպես նաև այդ մարմինների հետ համագործակցող կամ համագործակցած անձանց (և նրանց ընտանիքի անդամների) անվտանգությունն ապահովելու համար տեղեկություններ հավաքելը.

12) ոստիկանության կողմից օրենքով սահմանված կարգով սահմանային գոտում գտնվելու թույլտվության համար տեղեկություններ հավաքելը.

13) սահմանապահ զորքերի կողմից օրենքով սահմանված կարգով սահմանային շերտ մուտք գործելու և այնտեղ գտնվելու թույլտվության համար տեղեկություններ հավաքելը.

14) օպերատիվ-հետախուզական գործունեությանը մասնակցելու կամ դրա իրականացման հետևանքով ստացված նյութերին ծանոթանալու թույլտվության մասին որոշում ընդունելու համար տեղեկություններ հավաքելը.

15) ազգային անվտանգության մարմիններում և ոստիկանությունում, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում այլ պետական մարմիններում, աշխատանքի անցնելու համար դիմում ներկայացրած անձանց ուսումնասիրելու, այդ թվում՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված դեպքերում անձանց բարեվարքությունն ուսումնասիրելու համար տեղեկություններ հավաքելը.

16) օտարերկրյա քաղաքացիներին կամ քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, Հայաստանի Հանրապետությունում քաղաքական ապաստան կամ կացության կարգավիճակ տալու մասին եզրակացություն կազմելու և որոշում ընդունելու համար տեղեկություններ հավաքելը.

17) Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի պատճառաբանված միջնորդությամբ կամ օրենքով սահմանված դեպքերում տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառի իրավախախտումների՝ հակամրցակցային համաձայնությունների, մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահման կամ տնտեսական գործունեության արգելված համակարգման կանխումը կամ բացահայտումը:

(4-րդ հոդվածը խմբ. 21.12.17 ՀՕ-293-Ն, լրաց. 16.04.20 ՀՕ-250-Ն, 19.01.21 ՀՕ-54-Ն, 03.03.21 ՀՕ-96-Ն)

Հոդված 6. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում~~հետևանքով~~ ստացված նյութերի և փաստաթղթերի հասանելիությունը~~իրապարակայնությունը~~

~~1. Յուրաքանչյուր անձ իր նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժվելուց կամ հարուցված քրեական գործի վարույթը կարճվելուց՝ հանցագործության դեպքի բացակայության կամ արարքի կատարման մեջ հանցակազմի բացակայության պատճառով, կամ պատճառված վնասը քրեական օրենքով օրինաչափ համարվելուց կամ իր նկատմամբ արդարացման դատավճիռ կայացվելուց կամ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթն ավարտվելուց հետո՝ եռամսյա ժամկետում, իրավունք ունի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններից պահանջելու իր նկատմամբ իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների հետևանքով ստացված նյութերը և փաստաթղթերը:~~

1. Յուրաքանչյուր ոք իր նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-9-րդ կետերով նախատեսված հանգամանքներով քրեական հետապնդում չհարուցելուց, քրեական հետապնդումը դադարեցնելուց, իր նկատմամբ արդարացման դատավճիռ կայացվելուց կամ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթն ավարտվելուց հետո՝ չորս ամսվա ընթացքում, իրավունք ունի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններից պահանջելու իր նկատմամբ իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ստացված նյութերը և փաստաթղթերը:

2. Նշված նյութերը և փաստաթղթերն ամբողջ ծավալով կամ դրանց մի մասը~~փաստաթղթերը~~ տրամադրելը մերժվում է, եթե քրեական վարույթը շարունակվում է, և դրանց տրամադրումը կարող է խոչընդոտել հանցագործության բացահայտմանը, կամ եթե առկա է պետական կամ ծառայողական գաղտնիքի հրապարակման վտանգ, կամ երբ դրանով կարող են բացահայտվել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային գաղտնի աշխատակիցները և այդ մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող կամ համագործակցած անձինք:

~~3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում և ժամկետում, եթե անձը չի պահանջում տրամադրել իր նկատմամբ իրականացված օպերատիվ-հետախուզական~~

~~միջոցառումների հետևանքով ստացված նյութերը և փաստաթղթերը, ապա դրանք ոչնչացվում են:~~

3. Եթե սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում և ժամկետում, ինչպես նաև սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում՝ քրեական վարույթը կարճելուց հետո՝ չորս ամսվա ընթացքում, անձը չի պահանջում տրամադրել իր նկատմամբ իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ստացված նյութերը և փաստաթղթերը, ապա դրանք նշված ժամկետները անցնելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, ոչնչացվում են:

~~4. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված նյութերը ենթակա են ոչնչացման անձի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժվելուց, կամ հարուցված քրեական գործի վարույթը կարճվելուց՝ հանցագործության դեպքի բացակայության կամ արարքի կատարման մեջ հանցակազմի բացակայության պատճառով, կամ պատճառված վնասը քրեական օրենքով օրինաչափ համարվելուց կամ անձի նկատմամբ արդարացման դատավճիռ կայացվելուց կամ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթն ավարտվելուց հետո՝ եռամսյա ժամկետում:~~

5. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումների՝ տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառի իրավախախտումների վերաբերյալ արդյունքների, այդ թվում՝ տեղեկությունների, նյութերի և փաստաթղթերի փոխանցումը Մրցակցության պաշտպանության հանձնաժողովին չի հանդիսանում դրանց հրապարակում:

(6-րդ հոդվածը լրաց. 16.04.20 ՀՕ-250-Ն, 03.03.21 ՀՕ-96-Ն)

Հոդված 7. Հատուկ տեխնիկական միջոցները

1. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օգտագործվող հատուկ տեխնիկական միջոցների ցանկը լիազոր պետական մարմնի ներկայացմամբ հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում կիրառվող հատուկ տեխնիկական միջոցները չպետք է վնաս պատճառեն մարդկանց կյանքին ու առողջությանը, ինչպես նաև շրջակա միջավայրին:

3. Արգելվում է գաղտնի տեղեկություններ ստանալու համար նախատեսված (մշակված, ծրագրված, հարմարեցված) հատուկ տեխնիկական և այլ միջոցների օգտագործումը և օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացումը սույն օրենքով չլիազորված պետական մարմինների, դրանց ստորաբաժանումների կամ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից:

Հոդված 8. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները

1. Օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելու և քրեական վարույթի շրջանակներում օրենքով նախատեսված դեպքերում և կարգով հետաքննություն կատարելու իրավունք ունեն՝

1) ոստիկանությունը.

1.1) ռազմական ոստիկանությունը.

2) ազգային անվտանգության մարմինները.

3) հարկային մարմինները.

4) մաքսային մարմինները՝ մաքսանենգության և այլ հանցագործությունների խափանման ու բացահայտման նպատակով.

5) քրեակատարողական ծառայությունը՝ միայն քրեակատարողական հիմնարկներում.

6) հակակոռուպցիոն կոմիտեն:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված մարմիններն իրենց կառուցվածքում պետք է ունենան համապատասխան ստորաբաժանումներ, որոնց վրա է դրված օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով նշված ստորաբաժանումներն իրականացնում են նաև գաղտնի քննչական գործողություններ: Այդ ստորաբաժանումների կառուցվածքը, ենթակայությունը, ինչպես նաև աշխատանքի կազմակերպման և օպերատիվ-հետախուզական միջոցառումների փաստաթղթավորման կարգը սահմանում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարը:

3. Օպերատիվ ստորաբաժանումների աշխատակիցներն իրենց գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում են օրենքով և ենթարկվում իրենց անմիջական ղեկավարին: Հրաման կամ ցուցում ստանալու դեպքում օպերատիվ ստորաբաժանման աշխատակիցը պարտավոր է ստացած հրամանի կամ ցուցումի օրինականության վերաբերյալ իր կասկածների մասին անհապաղ գրավոր զեկուցել հրամանը կամ ցուցումը տվողին կամ նրա վերադասին կամ նրանց փոխարինող անձին: Եթե ցուցում տվողը գրավոր հաստատում է տրված հրամանը կամ ցուցումը, ապա օպերատիվ ստորաբաժանման աշխատակիցը պարտավոր է դա կատարել, բացառությամբ, եթե դա կհանգեցնի օրենքով սահմանված քրեական պատասխանատվության: Օպերատիվ ստորաբաժանման աշխատակցի կողմից այդ հրամանի կամ ցուցումի կատարման համար պատասխանատվությունը կրում է դրանք գրավոր հաստատած անձը:

3.1. Քրեական վարույթի ընթացքում կատարվող հետաքննության շրջանակներում օպերատիվ ստորաբաժանման ղեկավարի և աշխատակիցների հարաբերությունները վարույթն իրականացնող քննիչի, հսկող դատախազի և վերադաս դատախազի հետ կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով:

4. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցները կարող են համատեղ ընդունված գերատեսչական նորմատիվ

իրավական ակտերով սահմանված կարգով համագործակցել սույն օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելիս:

5. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները ֆինանսավորվում են պետական բյուջեի միջոցներից:

(8-րդ հոդվածը լրաց. 19.03.09 ՀՕ-61-Ն, 24.03.21 ՀՕ-148-Ն)

Հոդված 9. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հանրապետական մարմնի համակարգում գործող օպերատիվ-տեխնիկական գլխավոր վարչությունը

(վերնագիրը խմբ. 08.04.09 ՀՕ-87-Ն)

1. Սույն օրենքով նախատեսված թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության~~խոսակցությունների~~ վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացումն ապահովում է միայն Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հանրապետական մարմնի համակարգում գործող օպերատիվ-տեխնիկական գլխավոր վարչությունը (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) այդ օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու իրավասություն ունեցող մարմինների միջնորդության հիման վրա՝ սույն օրենքով սահմանված կարգով:

2. Գլխավոր վարչության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հանրապետական մարմնի ղեկավարը: Գլխավոր վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է Գլխավոր վարչության պետը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է վարչապետը՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հանրապետական մարմնի ղեկավարի ներկայացմամբ: Գլխավոր վարչության պետի պաշտոնն ազգային անվտանգության մարմիններում ծառայողների գլխավոր խմբի պաշտոն է:

3. ***(մասն ուժը կորցրել է 23.03.18 ՀՕ-270-Ն)***

4. Գլխավոր վարչությունը հեռահաղորդակցության օպերատորի մոտ ապահովում է համապատասխան օպերատիվ-տեխնիկական անհրաժեշտ պայմաններ՝ սույն օրենքով լիազորված մարմինների կողմից թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության~~խոսակցությունների~~ վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու համար:

(9-րդ հոդվածը խմբ. 08.04.09 ՀՕ-87-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-270-Ն)

(9-րդ հոդվածը 21.01.20 ՀՕ-5-Ն օրենքի 1-ին հոդվածի փոփոխություններով ուժի մեջ կմտնի վարչապետի կողմից Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգում գործող օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանման պետին նշանակելու օրվան հաջորդող օրը:)

Հոդված 10. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների իրավունքները

1. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններն իրենց խնդիրներն իրականացնելիս իրավունք ունեն՝

1) բացահայտ կամ գաղտնի մեթոդներով իրականացնելու սույն օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված միջոցառումները.

2) հատուցմամբ~~հատուցումով~~ կամ անհատույց, պայմանագրով կամ առանց դրա համագործակցելու օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ գաղտնի համագործակցելու ցանկություն հայտնած անձանց հետ.

2.1. Քրեական վարույթի ընթացքում օպերատիվ-հետախուզական միջոցառումներ և գաղտնի քննչական գործողություններ կարող են իրականացվել միայն Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում:

3) օգտագործելու օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների պաշտոնատար անձանց, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին պատկանող շինությունները, հատուկ և այլ տեխնիկական ու տրանսպորտային միջոցները:

Ազգային անվտանգության մարմինները, հակակոռուպցիոն կոմիտեն և ոստիկանությունը իրենց խնդիրները, այդ թվում՝ տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի իրավախախտումների՝ հակամրցակցային համաձայնությունների, մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահման կամ տնտեսական գործունեության համակարգման կանխումը կամ բացահայտումը, իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են ստեղծել իրականում գոյություն չունեցող կազմակերպություններ, ինչպես նաև օգտագործել ազգային անվտանգության մարմինների պատրաստած քողարկող փաստաթղթեր:

2. Սույն օրենքով սահմանված կարգով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ կարող են իրականացվել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան՝ օտարերկրյա պետությունների իրավապահ մարմինների և հատուկ ծառայությունների, միջազգային իրավապահ կազմակերպությունների հարցումների հիման վրա:

3. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններն իրավունք չունեն սույն հոդվածով նախատեսված իրենց իրավունքներն իրականացնելու ի շահ կամ ի վնաս որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի կամ միջամտելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կուսակցությունների գործունեությանը:

(10-րդ հոդվածը փոփ. 03.03.21 ՀՕ-96-Ն, լրաց. 24.03.21 ՀՕ-148-Ն)

Հոդված 11. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների պարտականությունները

1. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները պարտավոր են՝

~~1) կատարել քննիչի պարտադիր գրավոր հանձնարարությունները, հետաքննության մարմնի հանձնարարությունները, դատախազի պարտադիր գրավոր ցուցումները, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հետ կապված իրավասու մարմնի կողմից տրված գրավոր հանձնարարությունները, քննիչի և դատարանի որոշումները՝ անհրաժեշտ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու վերաբերյալ.~~

1) կատարել դատախազի, քննիչի քրեական վարույթի ընթացքում տրված հանձնարարությունները, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հետ կապված իրավասու մարմնի կողմից տրված գրավոր հանձնարարությունները՝ անհրաժեշտ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու և գաղտնի քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ.

1.1) ստուգել ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ստացված անանուն հաղորդումը, եթե հաղորդմամբ ներկայացվող տեղեկությունը բավարար չափով հիմնավորված է, վերաբերում է կոնկրետ պաշտոնատար անձի կամ մարմնի և պարունակում է տվյալներ, որոնք ողջամտորեն կարող են ստուգվել.

1.2) «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հայտարարագրերի վերլուծության և բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրության գործընթացների շրջանակներում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի դիմումի հիման վրա ստուգել հայցվող տեղեկատվությունը՝ հանձնաժողով փոխանցելով իրենց հայտնի դարձած տվյալները:

2) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված կարգով համագործակցել միջազգային իրավապահ կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների իրավապահ մարմինների և հատուկ ծառայությունների հետ.

3) հանցավոր ոտնձգություններից պաշտպանել օպերատիվ ստորաբաժանումների աշխատակիցներին, այդ մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող անձանց, քրեական դատավարությանը մասնակցող անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներին.

4) իրենց լիազորություններն իրականացնելիս համագործակցել իրավապահ մարմինների հետ՝ նրանց փոխանցելով իրենց հայտնի դարձած և այդ մարմինների իրավասությանը վերաբերող տեղեկությունները, բացառությամբ սույն օրենքով նախատեսված ոչնչացման ենթակա տեղեկությունների.

5) Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից անհրաժեշտ տեղեկությունն անմիջականորեն ձեռք բերելու անհնարինության դեպքում Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի պատճառաբանված միջնորդության հիման վրա աջակցել վերջինիս տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի իրավախախտումների կանխման կամ բացահայտման գործում՝ իրականացնելով սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գործողությունները, 14-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 8-րդ, 11-րդ և 12-րդ կետերով սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառումները և դրանց արդյունքները, այդ թվում՝ տեղեկությունները, նյութերը և փաստաթղթերը տրամադրելով Մրցակցության պաշտպանության հանձնաժողովին:

(11-րդ հոդվածը լրաց. 09.06.17 ՀՕ-100-Ն, 16.04.20 ՀՕ-250-Ն, 19.01.21 ՀՕ-54-Ն, 03.03.21 ՀՕ-96-Ն)

Հոդված 14. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները

1. Օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ~~Օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում~~ կարող են անցկացվել օպերատիվ-հետախուզական հետևյալ միջոցառումները.

1) օպերատիվ հարցում.

2) օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում.

3) համեմատական հետազոտումների նմուշների հավաքում.

4) հսկիչ գնում.

5) վերահսկելի մատակարարում և գնում.

6) իրերի և փաստաթղթերի հետազոտում.

7) արտաքին դիտում.

8) ներքին դիտում.

9) անձի նույնացում.

10) շենքերի, կառույցների, տեղանքի, շինությունների և տրանսպորտային միջոցների հետազոտում.

11) նամակագրության, ~~փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում~~ և այլ ոչ թվային հաղորդակցության վերահսկում.

12) ~~հեռախոսային խոսակցությունների վերահսկում.~~ թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում.

13) օպերատիվ ներդրում.

14) օպերատիվ փորձարարություն.

15) ~~ֆինանսական տվյալների մատչելիության ապահովում և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկում.~~

ֆինանսական գործարքների վերահսկում.

16) կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումները սահմանվում են միայն օրենքով:

2. Ոստիկանությունն իրավունք ունի անցկացնելու սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները:

2.1. Ռազմական ոստիկանությունն իրավունք ունի անցկացնելու սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 14-րդ և 16-րդ կետերով նախատեսված օպերատիվ հետախուզական միջոցառումները:

3. Ազգային անվտանգության մարմիններն իրավունք ունեն անցկացնելու սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները:

4. Մաքսային մարմիններն իրավունք ունեն անցկացնելու սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 13-րդ և 14-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները:

5. Հարկային մարմիններն իրավունք ունեն անցկացնելու սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 10-րդ, 13-րդ և 14-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները:

6. Քրեակատարողական ծառայության մարմիններն իրավունք ունեն անցկացնելու սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները՝ միայն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ~~համակարգի նախնական կալանքի վայրերում և ուղղիչ աշխատանքային~~ հիմնարկների տարածքներում:

7. Հակակոռուպցիոն կոմիտեն իրավունք ունի անցկացնելու սույն հոդվածի 1-ին մասի 1-16-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները:

8. Սույն օրենքով առանձին օպերատիվ-հետախուզական միջոցառմանը վերաբերող կարգավորումները կիրառելի են նույնանուն գաղտնի քննչական գործողության նկատմամբ, եթե Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով այլ կարգավորում նախատեսված չէ:

(14-րդ հոդվածը լրաց. 19.03.09 ՀՕ-61-Ն, 24.03.21 ՀՕ-148-Ն)

Հոդված 20. Իրերի և փաստաթղթերի հետազոտումը

1. Իրերի և փաստաթղթերի հետազոտումը հատուկ կամ այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրա դրանց զննումն է, հատկանիշների և բովանդակության բացահայտումը՝ տեսաձայնագրման, տեսագրման, ձայնագրման կամ լուսանկարման միջոցով էլեկտրոնային կամ այլ կրիչների վրա հետազոտման արդյունքների ամրագրմամբ: Հետազոտման ընթացքում, դրանից հետո ապահովվում է օբյեկտների և դրանց վրա եղած հետքերի պահպանությունը:

~~Իրերի և փաստաթղթերի հետազոտումը դրանց զննումն է, հատկանիշների և բովանդակության բացահայտումը՝ տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց, ինչպես նաև հետազոտման արդյունքների ամրագրումը տեսանկարահանման, ձայնագրման, լուսանկարահանման, էլեկտրոնային և այլ կրիչների միջոցով կամ առանց դրանց: Հետազոտման ընթացքում դրանից հետո ապահովվում է օբյեկտների և դրանց վրա եղած հետքերի պահպանությունը:~~

Հոդված 21. Արտաքին դիտումը

~~Արտաքին դիտումը, առանց բնակարանի անձեռնմխելիության խախտման, անձանց հետևելը կամ առանձին դեպքերի և իրադարձությունների ընթացքի վերահսկումն է բաց տարածությունում կամ հասարակական վայրերում՝ հատուկ և այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց, ինչպես նաև դիտման արդյունքների~~

~~ամրագրումը տեսանկարահանման, լուսանկարահանման, էլեկտրոնային և այլ կրիչների միջոցով կամ առանց դրանց:~~

1. Արտաքին դիտումը, առանց բնակարանի անձեռնմխելիության սահմանափակման, հատուկ կամ այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց անձանց հետևելը կամ առանձին դեպքերի և իրադարձությունների ընթացքը վերահսկելն է բաց տարածությունում կամ հանրային վայրերում կամ բնակարան չհանդիսացող փակ տարածությունում տեսաձայնագրման, տեսագրման կամ լուսանկարման միջոցով էլեկտրոնային կամ այլ կրիչների վրա դիտման արդյունքների ամրագրմամբ:

Հոդված 22. Ներքին դիտումը

1. Ներքին դիտումը հատուկ կամ այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ, կամ առանց դրանց, անձին բնակարանում հետևելը կամ առանձին դեպքերի և իրադարձությունների ընթացքը վերահսկելն է՝ տեսաձայնագրման, տեսագրման, ձայնագրման կամ լուսանկարման միջոցով, կամ առանց դրանց՝ էլեկտրոնային կամ այլ կրիչների վրա դիտման արդյունքների ամրագրմամբ:

~~1. Ներքին դիտումը բնակարանում հատուկ և այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց անձին (անձանց) հետևելն ու առանձին դեպքերի և իրադարձությունների ընթացքի վերահսկումն է, ինչպես նաև դիտման արդյունքների ամրագրումը տեսանկարահանման, ձայնագրման, լուսանկարահանման, էլեկտրոնային և այլ կրիչների միջոցով կամ առանց դրանց:~~

2. Սույն օրենքում բնակարան հասկացությունը օգտագործվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իմաստով:

Հոդված 24. Շենքերի, շինությունների, կառույցների, տեղանքի և տրանսպորտային միջոցների հետազոտումը

~~Շենքերի, շինությունների, կառույցների, տեղանքի և տրանսպորտային միջոցների հետազոտումը դրանց արտաքին զննումն է, հատկանիշների և այլ տեղեկությունների բացահայտումն է հատուկ և այլ տեխնիկական միջոցներով կամ առանց դրանց, ինչպես նաև հետազոտման արդյունքների ամրագրումը տեսանկարահանման, ձայնագրման, լուսանկարահանման, էլեկտրոնային և այլ կրիչների միջոցով կամ առանց դրանց:~~

1. Շենքերի, շինությունների, կառույցների, տեղանքի և տրանսպորտային միջոցների հետազոտումը դրանց արտաքին զննումն է, հատկանիշների և այլ տեղեկությունների բացահայտումն է հատուկ և այլ տեխնիկական միջոցներով կամ առանց դրանց, տեսաձայնագրման, տեսագրման, ձայնագրման կամ լուսանկարման միջոցով, կամ առանց դրանց՝ էլեկտրոնային կամ այլ կրիչների վրա հետազոտման արդյունքների ամրագրմամբ:

~~**Հոդված 25. Նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկումը**~~

~~Նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների, այդ թվում՝ հեռապատճենի (ֆաքսի) վերահսկումը՝ տեխնիկական միջոցների օգտագործմամբ կամ առանց դրանց, փոխանցվող նամակների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների, այդ թվում՝ դրանց բովանդակության հետազոտումն է և դրանց արդյունքների ամրագրումը, ինչպես նաև նամակի, փոստային, հեռագրական և այլ հաղորդումներն ուղարկող անձի նույնացումը նրա ձեռագրի միջոցով կամ այլ տեխնիկական միջոցների օգտագործմամբ:~~

Հոդված 25. Նամակագրության և այլ ոչ թվային հաղորդակցության վերահսկումը

1. Նամակագրության և այլ ոչ թվային հաղորդակցության վերահսկումը, տեխնիկական միջոցների օգտագործմամբ կամ առանց դրա, փոխանցվող փոստային առաքանու, հեռապատճենի (ֆաքսի), հեռագրային կամ այլ ոչ թվային հաղորդագրությունների, ներառյալ՝ դրանց բովանդակության հետազոտումն է՝ դրա արդյունքների ամրագրմամբ կամ այդ հաղորդումների առգրավմամբ:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս փոստային կապի կազմակերպությունները պարտավոր են իրավասու մարմինների պահանջով տրամադրել տեխնիկական համակարգեր և ստեղծել օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման համար անհրաժեշտ այլ պայմաններ:

~~**Հոդված 26. Հեռախոսային խոսակցությունների վերահսկումը**~~

~~Հեռախոսային խոսակցությունների վերահսկումը հատուկ և այլ տեխնիկական միջոցների օգտագործմամբ իրականացվող խոսակցությունների, այդ թվում՝ ինտերնետային հեռախոսային խոսակցությունների և էլեկտրոնային հաղորդումների գաղտնի վերահսկումն է, որը նշանակում է՝~~

~~1) հեռախոսային ֆիքսված ցանցի դեպքում՝~~

~~ա. հեռախոսային խոսակցության ձայնագրումը կամ դրա բովանդակության այլ ձևով ամրագրումը,~~

~~բ. տվյալ հեռախոսահամարի հետ ուղիղ կապ ունեցած հեռախոսահամարները, հեռախոսային խոսակցությունն սկսելու ամսաթիվը, սկիզբը և ավարտը պարզելու համար անհրաժեշտ տվյալներ հավաքելը և (կամ) ամրագրելը,~~

~~գ. տվյալ հեռախոսահամարի հետ անուղղակի (միջնորդավորված) եղանակով կապ ունեցած հեռախոսահամարները, հեռախոսային խոսակցությունն սկսելու ամսաթիվը, սկիզբը և ավարտը պարզելու համար անհրաժեշտ տվյալներ հավաքելը և (կամ) ամրագրելը,~~

դ. հեռախոսային զանգի վերահասցեագրման կամ փոխանցման դեպքում այն հեռախոսահամարի պարզումը, որի վրա փոխանցվել է զանգը.

2) բջջային հեռախոսային ցանցի դեպքում՝

ա. հեռախոսային խոսակցության, ներառյալ՝ կարճ հաղորդագրությունների (sms) և ձայնային հաղորդագրությունների ձայնագրումը կամ դրանց բովանդակության այլ ձևով ամրագրումը,

բ. տվյալ հեռախոսահամարի հետ ուղիղ կապ ունեցած հեռախոսահամարները, հեռախոսային խոսակցությունները սկսելու ամսաթիվը, սկիզբը և ավարտը պարզելու համար անհրաժեշտ տվյալներ հավաքելը և (կամ) ամրագրելը,

գ. տվյալ հեռախոսահամարի հետ անուղղակի (միջնորդավորված) եղանակով կապ ունեցած հեռախոսահամարները, հեռախոսային խոսակցությունները սկսելու ամսաթիվը, սկիզբը և ավարտը պարզելու համար անհրաժեշտ տվյալներ հավաքելը և (կամ) ամրագրելը,

դ. հեռախոսային զանգի վերահասցեագրման կամ փոխանցման դեպքում այն հեռախոսահամարի պարզումը, որի վրա փոխանցվել է զանգը.

3) ինտերնետային հաղորդակցության, այդ թվում՝ ինտերնետային հեռախոսային խոսակցությունների և ինտերնետի միջոցով փոխանցվող էլեկտրոնային հաղորդումների դեպքում հաղորդման ձայնագրումը կամ դրա բովանդակության այլ ձևով ամրագրումը, ինչպես նաև տվյալները, որոնց միջոցով կարող են պարզվել՝

ա. ինտերնետային ցանցին միանալու և ցանցից դուրս գալու աշխարհագրական վայրը, օրը, ժամը և տևողությունը, ներառյալ՝ IP (ինտերնետ պրոտոկոլի) հասցեն,

բ. ինտերնետն օգտագործողի կամ բաժանորդի անունը և անհատականացման տվյալները (user ID),

գ. հեռախոսի համարը, որով նա միանում է ընդհանուր օգտագործման հեռախոսացանցին, ինտերնետային հասցեն, ինտերնետային հեռախոսային զանգն ստացողի անունը կամ այդ անձին վերաբերող փաստերի, դեպքերի, հանգամանքների մասին յուրաքանչյուր տվյալ այնպիսի տեսքով, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ նույնականացնել նրա ինքնությունը:

(26-րդ հոդվածը խմբ. 23.03.18 ՀՕ-270-Ն)

Հոդված 26. Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկումը

1. Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկումը հատուկ կամ այլ տեխնիկական միջոցների օգտագործմամբ՝ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տվյալների գաղտնի պարզումը, հավաքումը, ամրագրումն ու պահպանումն է:

2. Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկման ենթակա են՝

1) ֆիքսված կամ բջջային հեռախոսային ցանցի դեպքում՝ հեռախոսային խոսակցության, տեքստային, պատկերային, ձայնային, տեսաձայնային և այլ հաղորդագրության բովանդակությունը, բաժանորդի մուտքային և ելքային զանգերը,

բաժանորդի հետ անուղղակի (միջնորդավորված) եղանակով կապ ունեցող հեռախոսահամարները, հեռախոսային հաղորդակցությունը սկսելու և ավարտելու ժամանակը, հեռախոսազանգի վերահասցեագրման կամ փոխանցման դեպքում այն հեռախոսահամարը, որին փոխանցվել է հեռախոսազանգը.

2) համացանցային հաղորդակցության, այդ թվում՝ համացանցային հեռախոսային հաղորդակցության և համացանցի միջոցով փոխանցվող էլեկտրոնային հաղորդումների դեպքում՝ հաղորդակցության բովանդակությունը, համացանցային հեռախոսազանգերի մուտքային և ելքային զանգերը (յուրաքանչյուր տվյալ այնպիսի տեսքով, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ նույնականացնել հաղորդակցվողի ինքնությունը):

3. Սույն հոդվածով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելիս հեռահաղորդակցության կազմակերպությունները պարտավոր են իրավասու մարմինների պահանջով տրամադրել տեխնիկական համակարգեր և ստեղծել օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման համար անհրաժեշտ այլ պայմաններ:

~~**Հոդված 29. Ֆինանսական տվյալների մատչելիության ապահովումը և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկումը**~~

~~Ֆինանսական տվյալների մատչելիության ապահովումը և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկումը բանկային կամ այլ ֆինանսական կազմակերպություններից բանկային և այլ տեսակի հաշիվների (ավանդների) վերաբերյալ տեղեկությունների ստացումն է, ինչպես նաև իրականացվող ֆինանսական գործարքների մշտական վերահսկումը առանց այն անձանց գիտության, որոնց վերաբերում են այդ գործարքները:~~

Հոդված 29. Ֆինանսական գործարքների վերահսկումը

1. Ֆինանսական գործարքների վերահսկումը բանկային կամ այլ ֆինանսական կազմակերպությունների միջոցով իրականացվող՝ անձի ֆինանսական գործարքների գաղտնի դիտարկումն է:

2. Բանկային կամ այլ ֆինանսական կազմակերպությունները պարտավոր են իրավասու մարմինների պահանջով տրամադրել սույն միջոցառման կատարումն ապահովելու համար անհրաժեշտ տեղեկությունները:

~~**Հոդված 30. Կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը**~~

~~1. Կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը՝ որպես օպերատիվ-հետախուզական միջոցառում, կարող է իրականացվել միայն կաշառք ստանալու կամ կաշառք տալու հանցագործության բացահայտման համար՝ բացառապես կաշառք ստանալու կամ կաշառք տալու առաջարկ ստացած անձի գրավոր հայտարարության հիման վրա:~~

~~2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված «կաշառք ստանալ» և «կաշառք տալ» հասկացությունները սույն օրենքում օգտագործվում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված իմաստով:~~

~~3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքները հավաստվում են բացառապես տեսանկարահանման կամ ձայնագրման միջոցով: Ընդ որում, տեսանկարահանումը կամ ձայնագրումը անձի բնակարանում իրականացվում է բացառապես դատարանի որոշմամբ:~~

Հոդված 30. Կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը

1. Կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը համապատասխան առաջարկ ստացած կամ այլ անձի ներգրավմամբ նախապես անհատականացված կաշառքի առարկան օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի վերահսկողության ներքո ստանալն է կամ կաշառքը պահանջած կամ նրա նշած անձին փոխանցելը:

2. Կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը կարող է իրականացվել միայն կաշառք ստանալու կամ կաշառք տալու հանցագործության բացահայտման համար՝ բացառապես կաշառք ստանալու կամ կաշառք տալու առաջարկ ստացած անձի գրավոր հայտարարության հիման վրա:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված՝ «կաշառք ստանալ» և «կաշառք տալ» հասկացությունները սույն օրենքում օգտագործվում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 218-220-րդ, 258-րդ, 272-276-րդ, 435-440-րդ, 477-րդ, 496-րդ և 497-րդ հոդվածներով սահմանված իմաստով:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքները հավաստվում են բացառապես տեսաձայնագրման միջոցով: Ընդ որում, տեսաձայնագրումն անձի բնակարանում իրականացվում է բացառապես դատարանի որոշմամբ:

Հոդված 31. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացմանը ներկայացվող ընդհանուր պահանջները

1. ~~Հեռախոսային խոսակցությունների~~ Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկումը ոստիկանության կամ քրեակատարողական ծառայության մարմինների կամ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից անցկացվում է՝ Գլխավոր վարչության կողմից օպերատիվ-տեխնիկական պայմաններ ստեղծելով, այդ թվում՝ կապի ուղիների և միջոցների տրամադրումով, ոստիկանության կամ քրեակատարողական ծառայության մարմինների կամ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից ստացվող տվյալների, տեղեկատվության և հաղորդումների անմիջական հսկմամբ և ամրագրմամբ, ընդ որում՝ բացառելով ազգային անվտանգության մարմինների և Գլխավոր վարչության կողմից այդ տվյալների, տեղեկատվության և հաղորդումների հսկումը և (կամ) ամրագրումը:

~~2. Ինտերնետային ցանցով փոխանցվող հաղորդումների, միջազգային նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկումը ոստիկանության, ռազմական ոստիկանության, հակակոռուպցիոն կոմիտեի կամ քրեակատարողական ծառայության մարմինների կողմից անցկացվում է՝ ազգային անվտանգության մարմինների կողմից օպերատիվ-տեխնիկական պայմաններ ստեղծելով, այդ թվում՝ կապի ուղիների և միջոցների տրամադրումով, ոստիկանության, ռազմական ոստիկանության, հակակոռուպցիոն կոմիտեի կամ քրեակատարողական ծառայության մարմինների կողմից ստացվող տվյալների, տեղեկատվության և հաղորդումների անմիջական հսկմամբ և ամրագրմամբ, ընդ որում՝ բացառելով ազգային անվտանգության մարմինների կողմից այդ տվյալների, տեղեկատվության և հաղորդումների հսկումը և (կամ) ամրագրումը:~~

~~3. Նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկումը, բացառությամբ միջազգային նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների փոխանցման, ոստիկանությունը, ռազմական ոստիկանությունը, հակակոռուպցիոն կոմիտեն և քրեակատարողական ծառայության մարմիններն իրավունք ունեն անցկացնելու ինչպես ինքնուրույն, այնպես էլ ազգային անվտանգության մարմինների կողմից կապի միջոցների տրամադրումով՝ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով:~~

3. Նամակագրության և այլ ոչ թվային հաղորդակցության վերահսկումը, բացառությամբ միջազգային նամակագրության ոստիկանությունը, ռազմական ոստիկանությունը և քրեակատարողական ծառայության մարմիններն իրավունք ունեն անցկացնելու ինչպես ինքնուրույն, այնպես էլ ազգային անվտանգության մարմինների կողմից օպերատիվ-տեխնիկական պայմաններ ստեղծելով, այդ թվում՝ կապի ուղիներ և միջոցներ տրամադրելով՝ բացառելով ազգային անվտանգության մարմինների կողմից այդ տվյալների, տեղեկատվության և հաղորդումների հսկումը և (կամ) ամրագրումը:

4. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ, 12-րդ և 15-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները կարելի է անցկացնել միայն այն դեպքերում, ~~երբ անձը, ում նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կասկածվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ, և եթե կան հիմնավոր ապացույցներ, որ~~ երբ առերևույթ առկա են հիմքեր կասկածելու, որ անձը, ում նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կատարել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն և այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից սույն օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումը ողջամտորեն~~ձեռքբերումն~~ անհնարին է: ***(նախադասությունն ուժը կորցրել է 03.03.21 <Օ-90-Ն)***

~~5. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելիս հեռահաղորդակցության և փոստային կապի կազմակերպությունները պարտավոր են Գլխավոր վարչության պահանջով տրամադրել տեխնիկական համակարգեր և ստեղծել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու համար անհրաժեշտ այլ պայմաններ:~~

~~6. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելիս հեռահաղորդակցության և փոստային կապի կազմակերպությունները պարտավոր են ազգային անվտանգության մարմինների, իսկ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում ոստիկանության, ռազմական ոստիկանության, հակակոռուպցիոն կոմիտեի և քրեակատարողական ծառայության մարմինների պահանջով տրամադրել տեխնիկական համակարգեր և ստեղծել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու համար անհրաժեշտ այլ պայմաններ:~~

7. Արգելվում է անցկացնել սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ և 12-րդ կետերով նախատեսված օպերատիվ միջոցառումները, երբ անձը, որի նկատմամբ իրականացվելու է այդ միջոցառումը, հաղորդակցվում է իր փաստաբանի , ներկայացուցչի կամ օրինական ներկայացուցչի հետ: ~~Անհապաղ ոչնչացման են ենթակա սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ և 12-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման նպատակից անկախ պատճառով ստացված փաստաբանական գաղտնիք պարունակող տեղեկությունները:~~ Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ և 12-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման նպատակից անկախ պատճառով ստացված փաստաբանական գաղտնիք պարունակող տեղեկությունները ենթակա են անհապաղ ոչնչացման:

(31-րդ հոդվածը լրաց. 19.03.09 ՀՕ-61-Ն, փոփ. 08.04.09 ՀՕ-87-Ն, լրաց. 16.04.20 ՀՕ-250-Ն, փոփ. 03.03.21 ՀՕ-90-Ն, լրաց. 24.03.21 ՀՕ-148-Ն)

(31-րդ հոդվածը 21.01.20 ՀՕ-5-Ն օրենքի 2-րդ հոդվածի փոփոխություններով ուժի մեջ կմտնի վարչապետի կողմից Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգում գործող օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանման պետին նշանակելու օրվան հաջորդող օրը)

Հոդված 32. ~~Հեռախոսային խոսակցությունների վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման ընթացակարգը~~ Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման ընթացակարգը

1. ~~Հեռախոսային խոսակցությունների~~ Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու իրավասություն ունեցող մարմինները, ներառյալ՝ ազգային անվտանգության մարմինները, տվյալ օպերատիվ-հետախուզական միջոցառումն~~հեռախոսային խոսակցության վերահսկում~~ իրականացնելու նպատակով Գլխավոր վարչություն են ներկայացնում դատարանի որոշման քաղվածքը, իսկ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում՝ օպերատիվ-հետախուզական

միջոցառում անցկացնելու մասին օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարի որոշումը: Քաղվածքը տրվում է դատարանի կողմից՝ նշված օպերատիվ-հետախուզական գործունեության վերաբերյալ որոշման հետ միաժամանակ, և այն պետք է պարունակի միայն վերահսկման ենթակա հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն, որոնողական հետաքրքրություն ներկայացնող բառերը կամ բառակապակցությունները կամ այլ վերաբերելի անհատականացնող տվյալներ:

2. Այն դեպքերում, եթե թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում~~սույն հոդվածով~~ օպերատիվ-հետախուզական միջոցառման~~միջոցառումների~~ անցկացման հապաղումը կարող է հանգեցնել ահաբեկչության կատարման կամ վտանգել Հայաստանի Հանրապետության պետական, ռազմական կամ բնապահպանական անվտանգությունը, ~~անվտանգությանն սպառնացող իրադարձությունների կամ գործողությունների, ապա~~ Գլխավոր վարչությունը , սույն հոդվածով նախատեսված կարգով,~~սույն հոդվածով նախատեսված կարգով~~ ապահովում է այդ միջոցառման~~միջոցառումների~~ իրականացումը, սակայն այդ օպերատիվ-հետախուզական միջոցառման~~միջոցառումների~~ իրականացման միջնորդությամբ Գլխավոր վարչություն~~վարչությանը~~ դիմած մարմինը պարտավոր է 48 ժամվա ընթացքում Գլխավոր վարչություն ներկայացնել դրա~~դրանց~~ իրականացումը թույլատրելու կամ չթույլատրելու մասին դատարանի որոշման քաղվածքը:

3.~~ Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ 48 ժամվա ընթացքում դատարանի թույլտվությունը չներկայացնելու կամ սույն հոդվածով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը չթույլատրելու մասին դատարանի որոշման քաղվածքը Գլխավոր վարչություն ներկայացնելու դեպքում դրանց անցկացումն անմիջապես դադարեցվում է, իսկ արդեն ձեռք բերված տեղեկությունները և նյութերը միջոցառումն իրականացնող մարմնի կողմից ենթակա են անհապաղ ոչնչացման:~~ Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամկետում թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումը թույլատրելու մասին դատարանի որոշման քաղվածքը չներկայացնելու կամ դրա իրականացումը չթույլատրելու մասին դատարանի որոշման քաղվածքը Գլխավոր վարչություն ներկայացնելու դեպքում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացումն անմիջապես դադարեցվում է, իսկ արդեն ձեռք բերված տեղեկությունները և նյութերը միջոցառումն իրականացնող մարմնի կողմից ենթակա են անհապաղ ոչնչացման: Սույն մասով նախատեսված յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հանրապետական մարմնի ղեկավարը անհապաղ զեկուցում է Հայաստանի Հանրապետության վարչապետին:

4. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հանրապետական մարմնի ղեկավարը օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման իրավասություն ունեցող յուրաքանչյուր մարմնի կտրվածքով յուրաքանչյուր հաջորդ տարվա հունվարի 31-ից ոչ ուշ Հայաստանի Հանրապետության վարչապետին տարեկան հաշվետվություն է ներկայացնում, որը պարունակում է նախորդ տարվա ընթացքում՝

1) սույն հոդվածով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ Գլխավոր վարչություն ներկայացրած միջնորդությունների ընդհանուր թվաքանակը.

2) այն միջնորդությունների թվաքանակը, որ բերվել են առանց դատարանի որոշման քաղվածքի, և հետագայում քաղվածքը չի ներկայացվել.

3) այն միջնորդությունների թվաքանակը, որ բերվել են առանց դատարանի որոշման քաղվածքի, իսկ դատարանը հետագայում իր որոշմամբ չի թույլատրել նման օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը:

(32-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-270-Ն)

(32-րդ հոդվածը 21.01.20 ՀՕ-5-Ն օրենքի 3-րդ հոդվածի փոփոխություններով ուժի մեջ կմտնի վարչապետի կողմից Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգում գործող օպերատիվ-տեխնիկական ստորաբաժանման պետին նշանակելու օրվան հաջորդող օրը:)

Հոդված 34. Դատական վերահսկողությունը օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ

1. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ, 12-րդ, 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները, ինչպես նաև արտաքին դիտում օպերատիվ-հետախուզական միջոցառումը, եթե արտաքին դիտման արդյունքների ամրագրումն առանց տեխնիկական միջոցների օգտագործման հնարավոր չէ, և անձը (անձինք), որի (որոնց) նկատմամբ իրականացվում է արտաքին դիտումը, ողջամտորեն չէր (չէին) կարող ենթադրել դրա անցկացման հնարավորության մասին, ապա կարող են անցկացվել միայն դատարանի թույլտվությամբ:

2. Սույն հոդվածով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման կամ դրանց ժամկետի երկարաձգման համար դատարանի թույլտվությունը ստանալու համար օպերատիվ ստորաբաժանման ղեկավարը օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարին ներկայացնում է օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին որոշումը և միջնորդությունը՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելու համար դատարան դիմելու վերաբերյալ: ~~Որոշումը և դրան կցվող նյութերը դատարան է ներկայացնում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:~~

Միջնորդությունը և դրան կցվող նյութերը դատարան է ներկայացնում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարը կամ նրա տեղակալը՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով գաղտնի քննչական գործողություն կատարելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու համար սահմանված կարգով՝ հաշվի առնելով օպերատիվ-հետախուզական գործունեության՝ սույն օրենքով նախատեսված առանձնահատկությունները:

~~2.1. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող իրավասու մարմինը սույն օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետով և 2-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված տեղեկատվությունը ստանալու վերաբերյալ համապատասխան միջնորդություն կարող է ներկայացնել դատարան միայն ահաբեկչության կամ Հայաստանի Հանրապետության պետական, ռազմական կամ բնապահպանական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակով:~~

2.1. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող իրավասու մարմինը թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկման ենթակա ֆիքսված կամ բջջային հեռախոսային ցանցի դեպքում՝ բաժանորդի հետ անուղղակի (միջնորդավորված) եղանակով կապ ուեցող հեռախոսահամարների, հեռախոսային հաղորդակցությունը սկսելու և ավարտելու ժամանակի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու վերաբերյալ համապատասխան միջնորդություն կարող է ներկայացնել դատարան միայն ահաբեկչության կամ Հայաստանի Հանրապետության պետական, ռազմական կամ բնապահպանական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների կանխման, խափանման կամ բացահայտման նպատակով:

~~3. Եթե օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման հապաղումը կարող է հանգեցնել ահաբեկչության կատարման կամ Հայաստանի Հանրապետության պետական, ռազմական կամ բնապահպանական անվտանգությանն սպառնացող իրադարձությունների կամ գործողությունների, որոնց անցկացման համար սույն օրենքով պարտադիր է համարվում դատարանի թույլտվությունը, ապա օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարի որոշման հիման վրա թույլատրվում է նման միջոցառումների անցկացումը 48 ժամվա ընթացքում՝ այդ մասին Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ծանուցելով դատարանին: Եթե դատարանը բավարար չի համարում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման հիմքերը, ապա դրա անցկացումն անմիջապես դադարեցվում է, իսկ դրա արդյունքում ձեռք բերված տեղեկությունները և նյութերը անհապաղ ոչնչացվում են: Հակառակ դեպքում դատարանը որոշում է կայացնում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացումը թույլատրելու մասին: Սույն մասի դրույթները չեն տարածվում սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների և 32-րդ հոդվածով նախատեսված հարաբերությունների նկատմամբ:~~

3. Եթե դատարանի թույլտվությամբ կատարվող օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման հապաղումը կարող է հանգեցնել ահաբեկչության կատարման կամ վտանգել Հայաստանի Հանրապետության պետական, ռազմական կամ բնապահպանական անվտանգությունը, ապա օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարի որոշման հիման վրա թույլատրվում է նման միջոցառման անցկացումը՝ անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում օպերատիվ-հետախուզական միջոցառումը շարունակելու թույլտվություն ստանալու մասին միջնորդություն ներկայացնելով դատարան: Եթե դատարանը թույլ չի տալիս շարունակել օպերատիվ-հետախուզական միջոցառումը, ապա դրա անցկացումն

անմիջապես դադարեցվում է, իսկ դրա արդյունքում ձեռք բերված տեղեկությունները և նյութերը անհապաղ ոչնչացվում են: Հակառակ դեպքում դատարանը որոշում է կայացնում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացումը թույլատրելու մասին: Սույն մասի դրույթները չեն տարածվում սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների և 32-րդ հոդվածով նախատեսված հարաբերությունների նկատմամբ:

4. Օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու կամ դրա ժամկետը երկարաձգելու թույլտվություն ստանալու վերաբերյալ միջնորդությունը դատարանը քննում է գաղտնի քննչական գործողություն կատարելու վերաբերյալ միջնորդության քննության համար Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ հաշվի առնելով օպերատիվ-հետախուզական գործունեության՝ սույն օրենքով նախատեսված առանձնահատկությունները:

(34-րդ հոդվածը լրաց. 23.03.18 ՀՕ-270-Ն)

Հոդված 35. Դատախազական հսկողությունը օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ

1. Մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն ~~Նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում~~, ինչպես նաև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթաց իրականացնելիս դատախազը հսկողություն է իրականացնում օպերատիվ-հետախուզական գործունեության օրինականության նկատմամբ՝ օրենքով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում: Դատախազի կողմից հսկողության ենթակա չեն օպերատիվ-հետախուզական գործունեության կազմակերպման և իրականացման եղանակները:

2. ~~Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված լիազորություններն~~ Օպերատիվ-հետախուզական գործունեության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս դատախազի պահանջով օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարը պարտավոր է ~~մարմինների ղեկավարները պարտավոր են~~ նրան ներկայացնել այդ միջոցառումների անցկացման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը և այլ անհրաժեշտ տեղեկատվություն: Դատախազը պարտավոր է ապահովել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների՝ իրեն ներկայացրած փաստաթղթերի և տեղեկությունների գաղտնիությունը:

3. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային աշխատակիցների և այդ մարմինների հետ գաղտնի համագործակցող անձանց վերաբերյալ տեղեկությունները դատախազին ներկայացվում են միայն այդ անձանց համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ առաջ է գալիս նրանց քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը:

(35-րդ հոդվածը լրաց. 16.04.20 ՀՕ-250-Ն)

Հոդված 36. Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու մասին որոշման հիմքերը

1. Օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացվում է~~միջոցառումներն անցկացվում են~~ օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի օպերատիվ ստորաբաժանման ղեկավարի որոշման հիման վրա, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

~~2. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման որոշում կայացնելու հիմք են դատախազի գրավոր ցուցումները և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացի կապակցությամբ տրվող գրավոր հանձնարարությունները, քննիչի, հետաքննության մարմնի և դատարանի որոշումները՝ իրենց վարույթում գտնվող քրեական գործերով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու վերաբերյալ, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու թույլտվություն ստանալու վերաբերյալ օպերատիվ ստորաբաժանման աշխատակցի պատճառաբանված միջնորդությունը:~~

2. Օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման որոշում կայացնելու հիմք են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացի կապակցությամբ դատախազի գրավոր հանձնարարությունը, քննիչի՝ քրեական վարույթի ընթացքում տրված հանձնարարությունը, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու թույլտվություն ստանալու վերաբերյալ օպերատիվ ստորաբաժանման աշխատակցի պատճառաբանված միջնորդությունը:

(36-րդ հոդվածը լրաց. 16.04.20 ՀՕ-250-Ն)

Հոդված 37. Օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու թույլտվություն ստանալու վերաբերյալ օպերատիվ ստորաբաժանման աշխատակցի պատճառաբանված միջնորդությունը և դրա քննարկման կարգը

1. Օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու թույլտվություն ստանալու վերաբերյալ օպերատիվ ստորաբաժանման աշխատակցի պատճառաբանված միջնորդության մեջ պետք է նշվեն՝

1) օպերատիվ-հետախուզական այն միջոցառումը (միջոցառումները), որ (որոնք) նախատեսվում է (են) անցկացնել.

2) օպերատիվ-հետախուզական միջոցառման կամ միջոցառումների անցկացման հիմքերը.

3) տվյալ տեսակի միջոցառումն անցկացնելու անհրաժեշտությունը հիմնավորող հանգամանքները.

4) այն տեղեկատվությունը, նյութերը կամ փաստաթղթերը, որոնք նախատեսվում են ստանալ դրա արդյունքում~~հետևանքով~~.

5) միջոցառման կամ միջոցառումների անցկացման տեղը, սկիզբը և ավարտը:

2. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելու վերաբերյալ միջնորդությունը պետք է պարունակի հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն, որոնողական հետաքրքրություն ներկայացնող բառերը կամ բառակապակցությունները կամ այլ վերաբերելի անհատականացնող տվյալներ~~նաև այն հեռախոսահամարը (հեռախոսահամարները), որը (որոնք) լսվելու է (են)~~:

~~3. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելու վերաբերյալ միջնորդությունը պետք է պարունակի նաև փոստային կամ էլեկտրոնային հասցեն, որը վերահսկվելու է, որոնողական հետաքրքրություն ներկայացնող բառերը կամ բառակապակցությունները (փոստային առաքումների և այլ հաղորդումների վերահսկման դեպքում փոստային կամ էլեկտրոնային հասցեի, որոնողական հետաքրքրություն ներկայացնող բառերի կամ բառակապակցությունների բացակայության դեպքում կարող են ներկայացվել անձի ձեռագրի նմուշը կամ այդ անձին նույնացնելու համար բավարար այլ հատկանիշներ, որի նամակագրության, փոստային, հեռագրական կամ այլ հաղորդումները պետք է վերահսկվեն):~~

3. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելու վերաբերյալ միջնորդությունը պետք է պարունակի նաև համապատասխան փոստային հասցեն: Դրա բացակայության դեպքում կարող են ներկայացվել համապատասխան անձի ձեռագրի նմուշը կամ նրան նույնացնելու համար բավարար այլ հատկանիշներ:

4. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելու վերաբերյալ միջնորդությունը պետք է պարունակի նաև վերահսկվող բանկային հաշվի (ավանդի) տվյալները, տվյալներ այն ֆինանսական գործարքների վերաբերյալ, որոնք պետք է վերահսկվեն, ինչպես նաև այն անձանց անհատական տվյալները, որոնց վերաբերում են այդ գործարքները, կամ որոնց պատկանում է բանկային հաշիվը:

5. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելու վերաբերյալ միջնորդությանը կից պետք է ներկայացվի նաև կաշառք ստանալու կամ կաշառք տալու առաջարկության վերաբերյալ համապատասխան անձի հայտարարությունը:

6. Օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելու հիմքերի բավարար լինելը ստուգելու համար օպերատիվ ստորաբաժանման ղեկավարը կարող է միջնորդությունը ներկայացրած օպերատիվ ստորաբաժանման աշխատակցից պահանջել բացատրություններ և լրացուցիչ այլ նյութեր:

7. Միջնորդությունը քննարկում է օպերատիվ ստորաբաժանման ղեկավարը միանձնյա՝ միջնորդություն ներկայացրած աշխատակցի մասնակցությամբ:

Հարցի քննարկումից հետո օպերատիվ ստորաբաժանման ղեկավարը որոշում է կայացնում օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելը թույլատրելու կամ

միջնորդությունը մերժելու մասին՝ որոշման մեջ նշելով բավարարման կամ մերժման հիմքերը:

8. Այն դեպքերում, երբ օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման հապաղումը կարող է հանգեցնել ահաբեկչության կատարման, կամ վտանգել~~հնարավոր են~~ Հայաստանի Հանրապետության պետական, ռազմական կամ բնապահպանական ~~անվտանգությանն սպառնացող իրադարձություններ կամ գործողություններ~~անվտանգությունը, ապա թույլատրվում է նման միջոցառումների անցկացումը՝ այդ մասին 6 ժամվա ընթացքում տեղյակ պահելով օպերատիվ ստորաբաժանման ղեկավարին: Եթե օպերատիվ ստորաբաժանման ղեկավարը բավարար չի համարում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման հիմքերը, ապա դրա անցկացումն անմիջապես դադարեցվում է, իսկ դրա հետևանքով ձեռք բերված տեղեկությունները և նյութերը անհապաղ ոչնչացվում են: Հակառակ դեպքում օպերատիվ ստորաբաժանման ղեկավարը տեղեկացվելուց հետո՝ մեկ ժամվա ընթացքում, որոշում է կայացնում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացումը թույլատրելու մասին: Սույն մասի դրույթները չեն տարածվում ~~հեռախոսային խոսակցությունների վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառման, ինչպես նաև~~ այն օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման ընթացքում ծագող հարաբերությունների վրա, որոնք կարող են անցկացվել միայն դատարանի թույլտվությամբ:

Հոդված 38. Օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին որոշումը

1. Օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին որոշման մեջ պետք է նշվեն սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված բոլոր տեղեկությունները, ինչպես նաև որոշումը կայացրած օպերատիվ ստորաբաժանման ղեկավարի անունը, ազգանունը և պաշտոնը, թե այդ միջոցառումն ում վրա է տարածվում, որոշում կատարելու համար իրավասու օպերատիվ ստորաբաժանման աշխատակցի անունը, ազգանունը և պաշտոնը:

2. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինն իրավունք չունի իրականացնելու այնպիսի գործողություններ, որոնք նախատեսված չեն օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելու մասին որոշմամբ:

3. Եթե օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման ընթացքում այն անձի վերաբերյալ, ում նկատմամբ այդ միջոցառումներն իրականացվում են, ձեռք են բերվել տեղեկություններ, նյութեր և փաստաթղթեր, որոնց ստացումը նախատեսված չէր տվյալ միջոցառումներն անցկացնելու մասին որոշմամբ, ապա դրանք չեն կարող օգտագործվել ~~չեն հանդիսանում ապացույցներ~~ և ենթակա են ոչնչացման, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

1) օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները գործել են բարեխղճորեն, և

2) ստացված տեղեկությունները պարունակում են ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կամ դրա նախապատրաստման վերաբերյալ տեղեկություններ կամ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ գործընթաց սկսելու կամ սկսված վարույթին առերևույթ առնչվող տվյալներ, և

3) այդ տեղեկությունների ձեռքբերման համար սույն օրենքով թույլատրվում է իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացումը: Սույն մասով նախատեսված տեղեկությունների, նյութերի և փաստաթղթերի վերաբերյալ կազմվում է առանձին արձանագրություն:

(38-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-270-Ն, լրաց. 16.04.20 ՀՕ-250-Ն)

Հոդված 39. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման ժամկետները

1. Օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին որոշման ժամկետի հաշվարկումը սկսվում է դրա ընդունման օրից և չի կարող 2 ամսից ավելի լինել: Որոշման ժամկետը կարող է երկարաձգվել օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման մասին որոշման ընդունման համար սույն օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, յուրաքանչյուր անգամ դատարանի թույլտվությունը կարող է տրվել երկու ամիսը չգերազանցող ժամկետով:

2. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ, 12-րդ և 15-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների, ինչպես նաև սույն օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում արտաքին դիտում օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման ընդհանուր ժամկետը չի կարող 12 ամսից ավելի տևել:

3. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումը նույն անձի նկատմամբ նույն անձի կողմից տրված նույն հայտարարության հիման վրա կարող է իրականացվել միայն մեկ անգամ:

Հոդված 40. Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների ամրագրումը և **օգտագործումը**

~~1. Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները, որոնք ձեռք են բերվել սույն օրենքով սահմանված կարգով, հանդիսանում են ապացույցներ, բացառությամբ սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 6-րդ և 9-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքների:~~

2. Օպերատիվ-հետախուզական միջոցառումներն արձանագրում է դրանք անցկացնող պաշտոնատար անձը: Արձանագրությունում պետք է նշվեն օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման տեղը, ժամանակը, հանգամանքները, օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող օպերատիվ աշխատակցի, օպերատիվ-հետախուզական միջոցառման այլ մասնակիցների անունները, ազգանունները, պաշտոնները, ինչպես նաև այն անձանց (կամ նրանց օրինական

ներկայացուցիչների) անունները և ազգանունները, որոնց վրա տարածվում են օպերատիվ-հետախուզական միջոցառման ընթացքում ձեռնարկված բոլոր գործողությունները այն հաջորդականությամբ, ինչպես որ դրանք կատարվել են, կիրառված գիտատեխնիկական մեթոդները և միջոցները, ինչպես նաև միջոցառման հետևանքով ձեռք բերված տեղեկությունները, նյութերը և փաստաթղթերը: Արձանագրությունը ստորագրում է օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող պաշտոնատար անձը (անձինք): Օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնող պաշտոնատար անձի, դրա այլ մասնակիցների անունները, ազգանունները և պաշտոնները արձանագրության մեջ կարող են չնշվել, եթե դրանով կարող են բացահայտվել օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնող մարմինների հաստիքային գաղտնի աշխատակիցները կամ այդ մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող անձինք:

~~3. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները քրեական վարույթն իրականացնող կամ այլ իրավասու մարմիններին ներկայացնելու կարգը սահմանվում է օրենքով և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների իրավական ակտերով: Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինը սույն օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում ստացված տեղեկատվությունը կարող է փոխանցել միայն քրեական վարույթ, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթ կամ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող այլ մարմինների, Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի՝ նրանց խնդրանքով օրենքով իրենց վերապահված կոնկրետ լիազորության իրականացման համար, բացառությամբ սույն օրենքով սահմանված ոչնչացման ենթակա տեղեկությունների:~~

3. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները, բացառությամբ սույն օրենքով սահմանված ոչնչացման ենթակա տեղեկությունների, քրեական վարույթն իրականացնող կամ այլ իրավասու մարմիններին ներկայացնելու կարգը սահմանվում է օրենքով և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների իրավական ակտերով՝ օրենքով իրենց վերապահված կոնկրետ լիազորության իրականացման համար:

3.1. Սույն օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում կազմված արձանագրությունը հիմք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով հարկային իրավախախտումների համար սահմանված պատասխանատվության միջոցներ կիրառելու համար հետևյալ դեպքերում.

1) առանց օրենքով սահմանված պետական գրանցման (հաշվառման) կամ առանց հարկային մարմիններում հաշվառման ձեռնարկատիրական գործունեության (ապօրինի գործունեության) հայտնաբերման դեպքում.

2) ապօրինի գործունեություն իրականացնողի մոտ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպված վարձու աշխատողներ հայտնաբերելու դեպքերում.

3) «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ լիցենզավորման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի իրականացնելու կամ «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան ծանուցման ենթակա գործունեությունն առանց ծանուցման իրականացնելու կամ առանց թույլտվության կամ առանց լիցենզիայի ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելու (այդ թվում՝ լիցենզիայի կամ թույլտվության գործողությունը կամ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքն օրենքով սահմանված կարգով կասեցված լինելու) դեպքերում.

4) ապրանքների մատակարարման կամ տեղափոխության փաստաթղթավորման համար օրենսգրքով սահմանված պահանջների խախտման՝ օրենսգրքով սահմանված պահանջները չբավարարող ուղեկցող փաստաթղթով կամ առանց ուղեկցող փաստաթղթի ապրանքների մատակարարման կամ տեղափոխության հայտնաբերման դեպքերում.

5) արգելված գործունեության հայտնաբերման դեպքերում:

Սույն մասով սահմանված խախտումներ հայտնաբերելու նպատակով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառման ընթացքում հարկ վճարողի պահանջով հարկային մարմնի պաշտոնատար անձը ներկայացնում է օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու մասին որոշման քաղվածքը:

Սույն մասում նշված դեպքերում հարկային պարտավորությունները հաշվարկում և գանձման է առաջադրում հարկային մարմինը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներին համապատասխան հարուցված վարչական վարույթի շրջանակներում և նույն օրենքով սահմանված կարգով հարկային մարմնի ղեկավարի կամ նրա լիազորած պաշտոնատար անձի ընդունած վարչական ակտով:

~~4. Եթե օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման ընթացքում ձեռք են բերվում այնպիսի տեղեկություններ, նյութեր և փաստաթղթեր, որոնք չեն վերաբերում այն անձին, որի նկատմամբ իրականացվում են այդ միջոցառումները, և որոնց ստացումը նախատեսված չէր տվյալ միջոցառումներն անցկացնելու մասին որոշմամբ, ապա դրանք չեն հանդիսանում ապացույցներ և ենթակա են ոչնչացման, բացառությամբ, եթե՝~~

~~1) օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները գործել են բարեխղճորեն, և~~

~~2) ստացված տեղեկությունները պարունակում են ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կամ դրա նախապատրաստման վերաբերյալ տեղեկություններ կամ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ գործընթաց սկսելու կամ սկսված վարույթին առերևույթ առնչվող տվյալներ, և~~

~~3) այդ տեղեկությունների ձեռքբերման համար սույն օրենքով թույլատրվում է իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացումը: Սույն մասով նախատեսված տեղեկությունների, նյութերի և փաստաթղթերի վերաբերյալ կազմվում է առանձին արձանագրություն:~~

5. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները վարում են օպերատիվ հաշվառման գործեր: Օպերատիվ հաշվառման գործերում կուտակվում են օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման հիմքերի, դրանց արդյունքում ձեռք բերված տվյալների, տվյալների ստուգման, համակարգման, վերլուծության, ինչպես նաև ընդունվող որոշումների վերաբերյալ օպերատիվ-ծառայողական փաստաթղթերը:

Օպերատիվ հաշվառման գործերի ցանկը, գործերը վարելու, դրանցով անցնող անձանց հաշվառման կարգը սահմանվում են օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների իրավական ակտերով:

(40-րդ հոդվածը լրաց. 23.06.11 ՀՕ-244-Ն, 07.12.11 ՀՕ-310-Ն, խմբ.19.12.12 ՀՕ-254-Ն, լրաց. 13.11.15 ՀՕ-125-Ն, խմբ. 21.12.17 ՀՕ-293-Ն, լրաց. 31.05.19 ՀՕ-51-Ն, 16.04.20 ՀՕ-250-Ն, 03.03.21 ՀՕ-96-Ն)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 19. **Հիմնադրամի կառավարման մարմինները**

1. Հիմնադրամի կառավարման մարմիններն են՝

ա) Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը.

բ) Հիմնադրամի տնօրենը:

2. Հոգաբարձուների խորհուրդը կազմված է յոթ անդամից: Հոգաբարձուների խորհրդի անդամներին նշանակում է՝

երկուսին՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը,

երկուսին՝ Կենտրոնական բանկի խորհուրդը,

երկուսին՝ Հայաստանի Հանրապետության բանկերի միությունը:

Մեկից ավելի բանկերի միություն լինելու դեպքում բանկերի միություններից թեկնածուների առաջադրման և ընտրման կարգը սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը:

Հոգաբարձուների խորհրդի մեկ անդամին ընտրում են հոգաբարձուների խորհրդի նշանակված անդամները:

Հոգաբարձուների խորհրդի նախագահին իրենց կազմից ընտրում են հոգաբարձուների խորհրդի անդամները՝ հինգ տարի ժամկետով:

Հոգաբարձուների խորհրդի անդամները նշանակվում (ընտրվում) են հինգ տարի ժամկետով և կարող են նույն պաշտոնում վերանշանակվել կամ վերընտրվել:

Հոգաբարձուների խորհուրդն աշխատում է հասարակական հիմունքներով: Հոգաբարձուների խորհրդի նիստերը գումարվում են առնվազն եռամսյակը մեկ անգամ:

Հոգաբարձուների խորհրդի անդամ չեն կարող լինել այն անձինք, ովքեր՝

ա) դատարանի վճռով ճանաչվել են անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ դատապարտվել են դիտավորությամբ կատարված հանցագործության համար, և ~~դատվածությունը հանված կամ մարված չէ~~դատվածությունը մարված կամ վերացված չէ.

բ) օրենքով սահմանված կարգով զրկվել են ֆինանսական ոլորտում պաշտոն զբաղեցնելու կամ գործունեությամբ զբաղվելու իրավունքից:

Հոգաբարձուների խորհրդի անդամը վաղաժամկետ ազատվում է պաշտոնից, եթե՝

ա) դատարանի վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ դատապարտվել է դիտավորությամբ կատարված հանցագործության համար.

բ) օրենքով սահմանված կարգով զրկվել է ֆինանսական ոլորտում պաշտոն զբաղեցնելու կամ գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

գ) մեկ տարվա ընթացքում ավելի քան երեք անգամ անհարգելի բացակայել է խորհրդի նիստերից.

դ) նրան նշանակած կամ ընտրած մարմինը որոշում է կայացրել նրան Հոգաբարձուների խորհրդի անդամի պաշտոնից վաղաժամկետ ազատելու մասին:

3. Հոգաբարձուների խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է խորհրդի առնվազն հինգ անդամ: Հոգաբարձուների խորհուրդը որոշումներ է կայացնում խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հոգաբարձուների խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է:

4. Սույն օրենքին և հիմնադրամի կանոնադրությանը համապատասխան՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն իրականացնում է հետևյալ լիազորությունները՝

ա) ընդունում է որոշում ավանդների հատուցումն սկսելու մասին.

բ) հաստատում է Հիմնադրամի կանոնադրությունը, դրանում փոփոխությունները և լրացումները.

գ) հաստատում է Հիմնադրամի գործունեությունը կարգավորող ներքին կարգերը.

դ) հաստատում է Հիմնադրամի միջոցների տեղաբաշխման ձևերը, ուղղությունները և սահմանաչափերը (քաղաքականությունը)՝ համաձայնեցնելով Կենտրոնական բանկի խորհրդի հետ.

ե) որոշում է Հիմնադրամի միջոցների կառավարման նպատակով Հիմնադրամի միջոցների ներդրման ուղենիշային պայուսակը՝ համաձայնեցնելով Կենտրոնական բանկի խորհրդի հետ: Սույն օրենքի և սույն օրենքի հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի իմաստով ուղենիշային պայուսակը Հիմնադրամի կողմից կառավարվող միջոցների նկատմամբ ներկայացվող պահանջները (ընդունելի ռիսկերի մակարդակը) սահմանող նպատակային ցուցանիշ է կամ ցուցանիշների համախումբ, որի սահմանափակումների ներքո գնահատվում է պայուսակի փաստացի կառավարման կատարողականը, այսինքն՝ Հիմնադրամի ընդունած որոշումների արդյունքները: Ուղենիշային պայուսակը կարող է սահմանել արտարժութային միջոցների արժութային բաղադրությունը, առանձին արժույթների տեսակարար կշիռները, թույլատրելի գործիքները, գործընկերների նվազագույն թույլատրելի վարկային ռիսկը, առանձին գործիքների թույլատրելի առավելագույն ժամկետայնությունը, ընդհանուր պայուսակի

միջին ժամկետայնությունը, ինչպես նաև առանձին ակտիվների եկամտաբերության մակարդակները.

զ) որոշում է ընդունում հատուցման համար Հիմնադրամի միջոցների անբավարարության մասին.

է) հատուցման համար Հիմնադրամի միջոցների անբավարարության դեպքում որոշում է ընդունում անհրաժեշտ միջոցներ ներգրավելու ուղղությունների և պայմանների մասին.

ը) Հիմնադրամի կանոնադրությամբ սահմանված պարբերականությամբ լսում է Հիմնադրամի տնօրենի հաշվետվությունները.

թ) ընտրում է Հիմնադրամի աուդիտն իրականացնող անձին (աուդիտորին).

ժ) ընտրում է Հոգաբարձուների խորհրդի՝ սույն հոդվածի 2-րդ մասով նշված անդամին.

ժա) վերահսկում է իր որոշումների կատարման ընթացքը.

ժբ) վերահսկում է Հիմնադրամի ընթացիկ և ֆինանսատնտեսական գործունեությունը.

ժգ) ընդունում է որոշումներ Հիմնադրամի տնօրենի, կանոնադրությամբ սահմանված այլ մարմիններ ձևավորվելու դեպքում՝ դրանց ընտրության և նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին.

ժդ) հաստատում է Հիմնադրամի տարեկան վարչական ծախսերը, գործառնական ծախսերը և կապիտալ ներդրումների ծրագիրը և դրանց փոփոխությունները, տարեկան ֆինանսական հաշվետվությունները և հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունները.

ժե) հաստատում է Հիմնադրամի աշխատակիցների վարձատրման և պարգևատրման կարգը.

ժե.1) առնվազն հինգ տարին մեկ քննարկում է երաշխավորված ավանդի՝ սույն օրենքով սահմանված չափերի վերանայման հարցը՝ Հիմնադրամի կանոնադրությամբ սահմանված չափորոշիչներին համապատասխանության տեսանկյունից:

ժզ) իրականացնում է օրենքով և Հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ.

5. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված լիազորությունները կանոնադրությամբ չեն կարող փոխանցվել այլ մարմնի:

Հոգաբարձուների խորհուրդն իրավունք ունի ծանոթանալու Հիմնադրամի բոլոր փաստաթղթերին:

6. Հոգաբարձուների խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով խորհրդի որոշմամբ կարող է հրավիրվել փորձագետ:

Հոգաբարձուների խորհրդում սույն հոդվածով նախատեսված որևէ հարցի քննարկման դեպքում խորհրդի շահագրգռված անդամը քննարկումն սկսելուց առաջ պարտավոր է հայտարարել իր շահագրգռվածության մասին և չմասնակցել քննարկմանն ու տվյալ հարցի վերաբերյալ քվեարկությանը:

Սույն օրենքի իմաստով Հոգաբարձուների խորհրդի անդամը համարվում է որևէ հարցի քննարկման կապակցությամբ շահագրգիռ, եթե տվյալ հարցի քննարկման արդյունքում կայացվելիք որոշումը կապված է նրա կամ նրա ընտանիքի անդամների եկամտի աղբյուրների, ինչպես նաև նրա և նրա հետ ընդհանուր տնտեսություն վարող անձանց ֆինանսական շահերի հետ:

Հիմնադրամի կանոնադրությունում նշվում են Հոգաբարձուների խորհրդի անդամների վարքագծի էթիկայի հիմնական սկզբունքները, նրանց գործելակերպի արդյունավետությունն ապահովող շարժառիթները, Հոգաբարձուների խորհրդի կողմից որոշումների ընդունման դեպքում խորհրդի անդամների շահագրգռվածության և շահերի բախման ընդհանուր սկզբունքները, ինչպես նաև նախատեսվում են Հոգաբարձուների խորհրդի անդամների միջև աշխատանքի բաշխման և նրանց պատասխանատվության վերաբերյալ դրույթներ:

7. Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Հիմնադրամի տնօրենը: Հիմնադրամի տնօրենին նշանակում է Հոգաբարձուների խորհուրդը: Հիմնադրամի տնօրենը՝

ա) ապահովում է Հիմնադրամի բնականոն գործունեությունը.

բ) իր իրավասության սահմաններում պատրաստում է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշումների նախագծերը.

գ) հոգաբարձուների խորհրդի որոշած ուղենիշային պայուսակին համապատասխան՝ կառավարում է Հիմնադրամի միջոցները.

դ) առանց լիազորագրի հանդես է գալիս Հիմնադրամի անունից.

ե) տալիս է լիազորագրեր.

զ) Հիմնադրամի անունից կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.

է) հոգաբարձուների խորհրդի հաստատմանն է ներկայացնում Հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգը, Հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.

ը) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Հիմնադրամի աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ՝ Կանոնադրությանը համապատասխան.

թ) Հոգաբարձուների խորհրդի հաստատմանն է ներկայացնում Հիմնադրամի տարեկան վարչական ծախսերը, գործառնական ծախսերը և կապիտալ ներդրումների ծրագիրը.

ժ) իրականացնում է Հիմնադրամի կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

8. Հիմնադրամի տնօրենը պետք է համապատասխանի Կենտրոնական բանկի՝ բանկի գործադիր տնօրենների համար սահմանած մասնագիտական համապատասխանության և որակավորման պահանջներին և պետք է ունենա համապատասխան որակավորման վկայական: Հիմնադրամի տնօրենի որակավորման կարգը սահմանում է Կենտրոնական բանկը:

9. Հիմնադրամը պետք է ունենա վերստուգիչ հանձնաժողով կամ վերստուգիչ, որին նշանակում է Հոգաբարձուների խորհուրդը: Վերստուգիչ հանձնաժողովի կամ վերստուգիչի լիազորությունները սահմանվում են Հիմնադրամի կանոնադրությամբ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ԱՎԻԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 38. Օդանավում կատարվող հանցագործությունները կամ այլ իրավախախտումները

1. Օդանավի հրամանատարը սահմանված կարգով և դեպքերում նախաձեռնում և իրականացնում է օդանավում հանցագործության կամ այլ իրավախախտման կանխմանն ու խափանմանն ուղղված անհետաձգելի միջոցներ:

2. Օդանավի հրամանատարը համապատասխան միջոցներ է ձեռնարկում օդանավում հանցագործություն կամ այլ իրավախախտում կատարած անձին Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա պետության իրավասու մարմիններին հանձնելու ուղղությամբ: Թռիչքի ընթացքում օդանավում հանցագործություն կամ այլ իրավախախտում կատարած անձի նկատմամբ հնարավորության դեպքում սահմանում է հսկողություն, իսկ վայրէջքից հետո միջոցներ է ձեռնարկում նրա հնարավոր փախուստը կանխելու նպատակով:

3. Օդանավի հրամանատարն ապահովում է հանցագործության կամ այլ իրավախախտման հետ առնչվող, ~~հետաքննության կամ~~ նախաքննության համար կարևոր նշանակություն ունեցող իրերի, առարկաների, հետքերի կամ նյութերի պահպանությունը՝ դրանք սույն հոդվածի 2-րդ մասում նշված իրավասու մարմիններին տրամադրելու համար: Օդանավի հրամանատարը, հնարավորության դեպքում, ապահովում է նաև հանցագործության դեպքի վայրի պահպանումը: Սույն մասով նախատեսված պահպանության կանոնները սահմանում է Կառավարությունը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ԱՐՏՈՆԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 9. Հայտերի գործավարության գաղտնիությունը

1. Պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններ պարունակող գյուտերի գաղտնիության աստիճանի որոշումը, դրանց օգտագործումը և դրանց մասին

տեղեկությունների հրապարակումն իրականացվում են Կառավարության սահմանած կարգով:

2. «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի համաձայն գաղտնի համարվող օբյեկտի մասին տեղեկություններ ներառող հայտի (գաղտնի օբյեկտի հայտի) բոլոր փաստաթղթերը կազմվում և հաշվառվում են նշված օրենքի պահանջներին համապատասխան:

3. Մինչև պետական լիազոր մարմնի պաշտոնական տեղեկագրում գյուտի արտոնագիր ստանալու հայտերի կամ գյուտերի կարճաժամկետ արտոնագրերի մասին տեղեկությունների հրապարակումը դրանց նյութերը համարվում են գաղտնի:

4. Սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն գաղտնի համարվող նյութերը ծանոթացման համար դառնում են մատչելի միայն հայտատուի գրավոր համաձայնությամբ կամ թույլտվությամբ, իսկ ~~քրեական գործերով նախնական քննություն~~ քրեական վարույթներով նախաքննությունիրականացնող մարմինների և դատարանի համար՝ օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, նշված նյութերը համարվում են ծանոթացման համար մատչելի, եթե դրանց հնարավոր է ծանոթանալ օրենքով չարգելված միջոցով:

5. Ցանկացած անձ, որն ապացուցում է, որ հայտատուն իրեն գրավոր տեղեկացրել է հայտի և խնդրարկվող իրավական ծավալի բովանդակության մասին, սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն գաղտնի համարվող նյութերին կարող է ծանոթանալ առանց հայտատուի լրացուցիչ համաձայնության կամ թույլտվության:

6. Սույն օրենքի 44-րդ հոդվածի 3-րդ մասում նշված ավանդադրված կենսաբանական նյութը հասանելի է դրա նմուշի տրամադրման միջոցով՝

1) մինչև գյուտի հայտի մասին տեղեկությունների հրապարակումը՝ միայն սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգով սահմանված և սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված համապատասխան լիազորություն ունեցող անձանց համար.

2) գյուտի հայտի մասին տեղեկությունների հրապարակումից հետո մինչև արտոնագիր տալը՝ ցանկացած անձի, որը դիմում է դրա համար, կամ հայտատուի պահանջով՝ միայն անկախ փորձագետին.

3) արտոնագիրը տալուց հետո՝ ցանկացած անձի դիմումի հիման վրա, անկախ արտոնագիրը չեղյալ կամ անվավեր ճանաչվելու հանգամանքից:

7. Սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ավանդադրված կենսաբանական նյութի նմուշը տրամադրվում է, եթե դիմում ներկայացնող անձն արտոնագրի գործողության ժամանակահատվածում երաշխավորում է՝

1) նմուշը կամ դրանից ստացված ցանկացած նյութ մատչելի չդարձնել երրորդ անձանց համար.

2) նմուշը կամ դրանից ստացված ցանկացած նյութ չօգտագործել որևէ այլ նպատակով (բացառությամբ հետազոտական նպատակների), եթե հայտատուն կամ արտոնագրատերը չի տվել այդպիսի իրավունք:

8. Եթե կենսաբանական նյութին վերաբերող հայտը մերժվել կամ հետ է կանչվել, ապա հայտատուի դիմումի հիման վրա ավանդադրված նյութի մատչելիությունը սահմանափակվում է հայտի ներկայացման թվականից հաշված՝ 20 տարի ժամկետով՝

այդ իրավունքը վերապահելով անկախ փորձագետի: Այս դեպքում կիրառվում են սույն հոդվածի 7-րդ մասի դրույթները:

9. Սույն հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետում և 8-րդ մասում նշված դիմումները հայտատուն կարող է ներկայացնել հայտի մասին տեղեկությունների նախատեսվող հրապարակման օրվանից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օր առաջ:

10. Մինչև պաշտոնական տեղեկագրում գյուտի արտոնագիր ստանալու հայտի կամ գյուտի կարճաժամկետ արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակումը պետական լիազոր մարմինը կարող է բացահայտել կամ երրորդ անձանց տրամադրել հետևյալ տվյալները.

1) հայտի համարը.

2) հայտի ներկայացման թվականը, իսկ առաջնություն խնդրարկելու դեպքում՝ նաև առաջին հայտի ներկայացման թվականը, համարը և երկիրը.

3) հայտատուին վերաբերող տվյալները (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, բնակության վայրը, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը (առկայության դեպքում) (անհատ ձեռնարկատեր նշումով), հաշվառման վայրը, կազմակերպության դեպքում՝ անվանումը, գտնվելու վայրը).

4) գյուտի անվանումը, եթե այն չի բացահայտում տվյալ գյուտի էությունը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 25. Դիվանագիտական ծառայության պաշտոնում նշանակման համար սահմանափակումները

1. Դիվանագիտական ծառայության պաշտոնի չեն կարող նշանակվել այն անձինք, որոնք՝

1) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ են ճանաչվել.

2) դատական կարգով զրկվել են որոշակի պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

3) տառապում են այնպիսի հիվանդությամբ, որը ծառայության ընթացքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների և լիազորությունների իրականացմանը.

4) դատապարտվել են հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով ~~չի հանվել կամ չի մարվել~~մարված կամ վերացված չէ:

2. Դիվանագիտական ծառայության պաշտոնում նշանակումը սահմանափակող հիվանդությունների ցանկը հաստատում է Կառավարությունը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 12. Ուսումնական հաստատության տնօրենը և նրա իրավասությունները

1. Պետական ուսումնական հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն) ընտրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած մրցութային կարգով:

Տնօրենի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին կարող է մասնակցել, իսկ ոչ պետական ուսումնական հաստատության և հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ստորաբաժանման ղեկավարի թափուր պաշտոնում կարող է նշանակվել կամ ընտրվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով վերապատրաստված և ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստացած անձը: Բացառություն կարող են կազմել սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա», «բ», «գ» և «դ» ենթակետերով սահմանված կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական ուսումնական հաստատությունների ղեկավարները:

2. Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) համար կարող է վերապատրաստվել այն անձը, որն ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական, գիտամանկավարժական աշխատանքի կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն յոթ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:

3. Վերապատրաստումը և հավաստագրումը անցկացվում են հետևյալ փուլերով.

1) փաստաթղթերի համապատասխանության ճանաչում՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած փաստաթղթերի ցանկի.

2) ուսուցումների կազմակերպում՝ դիմողի նախաձեռնությամբ.

3) քննություն՝ թեստավորման և հարցազրույցի միջոցով.

4) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրում՝ հինգ տարի ժամկետով:

4. Վերապատրաստման, քննությունների և հավաստագրման ընթացակարգերը, ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) դադարեցման դեպքերն ու ընթացակարգը, ինչպես նաև հավաստագրման լիազոր մարմնի կազմավորման և գործունեության կարգը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

5. Վերապատրաստումը կազմակերպվում է տարեկան առնվազն մեկ անգամ:

6. Վերապատրաստումների մասին հայտարարությունը հրապարակվում է քննություններն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներով:

7. Վերապատրաստման բովանդակությունը կազմվում է կրթության բնագավառում իրավական, կառավարչական, մանկավարժական, հոգեբանական, ուսուցման մեթոդաբանության վերաբերյալ գիտելիքները և գործնական կարողությունները ձևավորելու և դրանք ամրապնդելու նպատակով:

8. Վերապատրաստումից հետո սահմանված կարգով քննություն հանձնած անձը ճանաչվում է ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագիր ստացած:

9. Հավաստագրված անձանց ցանկը հրապարակվում է:

10. Քննության արդյունքները կարող են բողոքարկվել դատական կարգով կամ կրթության պետական կառավարման լիազորված մարմնին՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի:

11. Վերապատրաստված և ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագիր ստացած անձը կարող է հավաստագիրը ստանալու օրվանից հետո՝ հինգ տարվա ընթացքում, մասնակցել տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար անցկացվող մրցույթին:

12. Տնօրենի թափուր տեղի համար անցկացվող մրցույթին մասնակցելու համար տնօրենի թեկնածուն խորհրդին ներկայացնում է՝

1) սահմանված ցանկին համապատասխան փաստաթղթերը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագիրը.

3) դպրոցի զարգացման իր ծրագիրը:

13. Մրցույթի ժամանակ տնօրենի թեկնածուի հետ խորհուրդն անցկացնում է հարցազրույց՝ տվյալ հավակնորդի ներկայացրած զարգացման ծրագրի շրջանակում:

14. Մրցույթում հաղթած և սահմանված կարգով աշխատանքային պայմանագիր կնքած պետական ուսումնական հաստատության տնօրենը պաշտոնավարում է մինչև իր լիազորությունների ավարտը՝ անկախ ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի հնգամյա ժամկետի լրանալուց:

15. Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագիր ստացած անձը կարող է մինչև հավաստագրի ժամկետի լրանալը դիմել և անցնել սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված վերապատրաստումը և ստանալ ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի նոր հավաստագիր:

16. Ուսումնական հաստատության տնօրենը (հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ստորաբաժանման ղեկավարը) պատասխանատու է հանրակրթության պետական կրթական և առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, սովորողների առողջության պահպանման, կադրերի ընտրության, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի պահանջների պահպանման համար, ինչպես նաև օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորությունների ապահովման համար:

17. Ուսումնական հաստատության տնօրեն (հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ստորաբաժանման ղեկավար) չի կարող առաջադրվել, ընտրվել (նշանակվել) այն անձը, որը՝

1) սույն հոդվածի 1-4-րդ մասերով սահմանված կարգով չի ստացել ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագիր.

2) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

3) դատական կարգով զրկվել է մանկավարժական կամ վարչական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

4) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական կամ վարչական գործունեության կատարմանը: Այդ հիվանդությունների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

5) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով ~~հանված կամ մարված չէ~~մարված կամ վերացված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:

18. Պետական ուսումնական հաստատության տնօրենը՝

1) խորհրդի քննարկմանն է ներկայացնում ուսումնական հաստատության ֆինանսատնտեսական հաշվետվությունը, արտաքին և ներքին գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկանք, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը.

2) ղեկավարում է ուսումնական հաստատության մանկավարժական խորհուրդը, աջակցում է ուսումնական հաստատության խորհրդակցական մարմինների աշխատանքներին.

3) կազմում է ուսումնական հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և հաստատության խորհրդի հավանությամբ ներկայացնում պետական լիազորված մարմին.

4) խորհրդի հավանությանն է ներկայացնում ուսումնական հաստատության զարգացման ծրագիրը.

5) իրականացնում է օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

Հոդված 24. Մանկավարժական աշխատողները

1. ***(մասն ուժը կորցրել է 09.02.22 ՀՕ-35-Ն)***

2. Մանկավարժական աշխատողի պաշտոն զբաղեցնելու իրավունք չունի այն անձը, որը՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

3) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության կատարմանը: Այդ հիվանդությունների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

4) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով ~~հանված կամ մարված չէ~~մարված կամ վերացված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:

3. Պետական ուսումնական հաստատությունում ուսուցչի թափուր տեղ առաջանալու դեպքում այն համալրվում է մրցութային հիմունքներով՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած մրցույթի օրինակելի կարգի և ուսումնական հաստատության կանոնադրության, բացառությամբ նպատակային ուղեգրով մասնագիտական կրթություն ստացած թեկնածուի առկայության կամ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի պետական ուսումնական հաստատություններ համապատասխան մասնագետ գործուղվելու դեպքում, եթե մինչ այդ առնվազն 1 անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը չի համալրվել:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 4. Հանրային խորհրդի կառուցվածքը

1. Հանրային խորհուրդը կազմված է 45 անդամից:

2. Հանրային խորհրդի անդամ կարող է լինել 25 տարին լրացած, Հայաստանի Հանրապետությանը ծառայություններ մատուցած, հանրային կամ իր մասնագիտական ոլորտում հեղինակություն վայելող, ինչպես նաև Հանրային խորհրդի առջև դրված խնդիրների կենսագործման համար անհրաժեշտ հմտություններ ունեցող յուրաքանչյուր անձ:

3. Հանրային խորհրդի անդամ չեն կարող լինել՝

1) քաղաքական, վարչական կամ ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձինք, զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության և քննչական մարմինների ծառայողները, հանրային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնող անձինք.

2) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձինք.

3) հանցագործության համար դատապարտված անձինք, որոնց դատվածությունը սահմանված կարգով ~~հանված կամ մարված չէ~~մարված կամ վերացված չէ.

4) օրենքի խախտմամբ ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն չանցած անձինք:

4. Հանրային խորհրդի անդամն իր գործունեության ընթացքում քաղաքական հարցերում պարտավոր է պահպանել չեզոքություն:

5. Հանրային խորհրդին կից գործում են 15 ոլորտային մշտական հանձնաժողովներ:

6. Հանրային խորհրդին առընթեր գործում է Ազգային փոքրամասնությունների պալատ, որի կազմավորման կարգը և գործառույթները սահմանվում են օրենքով:

Հոդված 9. Հանրային խորհրդի անդամների գործունեության դադարումը

1. Հանրային խորհրդի անդամի լիազորությունները դադարում են, եթե՝

1) նա այդ մասին դիմում է ներկայացրել.

2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած.

3) օրինական ուժի մեջ է մտել նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը, որով նա դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար, ~~կամ որով նախատեսվում է ազատությունից զրկում~~կամ որով նշանակվել է ազատությունից զրկելու հետ կապված պատիժ.

4) Կառավարության պաշտոնական համացանցային կայքում հրապարակվել է վարչապետի՝ սույն օրենքի 5-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված գրավոր հայտարարությունը.

5) նա մահացել է:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դեպքում Հանրային խորհրդի անդամի լիազորությունները դադարում են նրա կողմից դիմումը ներկայացվելու օրվան հաջորդող օրը, 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերում՝ համապատասխան դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը, 4-րդ կետով նախատեսված դեպքում՝ վարչապետի գրավոր հայտարարությունը Կառավարության պաշտոնական համացանցային կայքում հրապարակվելու օրը, իսկ 5-րդ կետով նախատեսված դեպքում՝ նրա մահվան օրը:

3. Հանրային խորհրդի նախագահի լիազորությունները դադարեցվում են սույն օրենքի 5-րդ հոդվածի 12-րդ և 14-րդ մասերով նախատեսված դեպքերում, իսկ դադարում են՝ նրա՝ որպես Հանրային խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվելու կամ դադարելու դեպքերում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 7.

Հանրային վերահսկողության խորհրդի կազմը

1. Հանրային վերահսկողության խորհուրդը կազմված է յոթ անդամից՝ նախագահ, նախագահի տեղակալ և հինգ անդամ: Խորհրդի անդամները նշանակվում են հինգ տարի ժամկետով: Խորհրդի անդամներին, այդ թվում՝ նախագահին և նախագահի տեղակալին նշանակում է ֆինանսների նախարարը՝ հետևյալ կառույցների ներկայացմամբ.

1) ֆինանսների նախարարություն՝ երեք անդամ.

2) Կենտրոնական բանկ՝ երկու անդամ.

3) էկոնոմիկայի նախարարություն՝ մեկ անդամ.

4) պետական եկամուտների կոմիտե՝ մեկ անդամ:

Խորհրդի նախագահը և նախագահի տեղակալը նշանակվում են հինգ տարի ժամկետով: Խորհրդի առաջին կազմի անդամների պաշտոնավարման ժամկետներն են.

1) մեկ անդամը՝ մեկ տարի.

2) մեկ անդամը՝ երկու տարի.

3) մեկ անդամը՝ երեք տարի.

4) մեկ անդամը՝ չորս տարի.

5) մեկ անդամը՝ հինգ տարի:

Հետագայում նշանակված խորհրդի անդամները նշանակվում են հինգ տարի ժամկետով:

2. Հանրային վերահսկողության խորհրդի անդամ կարող են նշանակվել բարձրագույն կրթություն, հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտին առնչվող առնվազն երեք տարվա մասնագիտական փորձ ունեցող քաղաքացիները, որոնք իրենց մասնագիտական կարողություններով ի վիճակի են ապահովել օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պարտականությունների կատարումը:

3. Հանրային վերահսկողության խորհրդի անդամ չի կարող նշանակվել՝

1) ֆինանսատնտեսական ոլորտին, ինչպես նաև ոչ մեծ ծանրության հանցագործություններին վերաբերող՝ ~~չհանված կամ չմարված~~ չմարված կամ չվերացված դատվածություն ունեցող անձը.

2) միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործություններին վերաբերող դատվածություն ունեցող անձը.

3) օրենքով սահմանված կարգով որոշակի պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկված անձը.

4) մասնագիտացված կառույցի խորհրդի կամ գործադիր մարմնի անդամը.

5) գործող աուդիտորը:

4. Հանրային վերահսկողության խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են սույն հոդվածի 3-րդ մասում նշված դեպքերում:

5. Ֆինանսների նախարարը Հանրային վերահսկողության խորհրդի եզրակացության հիման վրա կարող է վաղաժամկետ դադարեցնել Հանրային վերահսկողության խորհրդի անդամի լիազորությունները, եթե վերջինս՝

1) չի կատարել սույն օրենքով սահմանված իր պարտականությունները.

2) մեկ տարվա ընթացքում երեք անգամ անհարգելի բացակայել է Հանրային վերահսկողության խորհրդի նիստերից:

6. Հանրային վերահսկողության խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում սույն հոդվածի 1-ին մասում նշված համապատասխան կառույցի ներկայացմամբ նշանակվում է խորհրդի նոր անդամ՝ սահմանված ժամկետի մնացած ժամանակահատվածի համար: Նման դեպքում, եթե մնացած պաշտոնավարման ժամանակահատվածը պակաս է մեկ տարուց, ապա խորհրդի նոր անդամի պաշտոնավարման ժամկետը սահմանվում է հինգ տարի՝ գումարած մնացած ժամանակահատվածը:

7. Հանրային վերահսկողության խորհրդի անդամը կարող է զբաղեցրած պաշտոնից հրաժարական տալ՝ դիմելով ֆինանսների նախարարին և տեղեկացնելով սույն հոդվածի 1-ին մասում նշված համապատասխան կառույցին: Ֆինանսների նախարարը Հանրային վերահսկողության խորհրդի անդամի հրաժարականն ընդունում է մեկ ամսվա ընթացքում:

Հոդված 20.

Ֆիզիկական անձի անդամակցումը մասնագիտացված կառույցին

1. Մասնագիտացված կառույցին անդամակցելու համար ֆիզիկական անձը պետք է բավարարի հետևյալ պահանջները.

1) ունենա աուդիտորի որակավորում՝ «Աուդիտորական գործունեության մասին» օրենքի համաձայն, կամ փորձագետ հաշվապահի որակավորում՝ «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքի համաձայն.

2) չունենա ֆինանսատնտեսական ոլորտին, ինչպես նաև ոչ մեծ ծանրության հանցագործություններին վերաբերող՝ ~~չհանված կամ չմարված~~ չմարված կամ չվերացված դատվածություն.

3) չունենա միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործություններին վերաբերող դատվածություն.

4) վճարի մուտքի վճար մասնագիտացված կառույցին՝ վերջինիս սահմանած կարգով և չափով:

2. Որպես աուդիտոր կամ փորձագետ հաշվապահ մասնագիտացված կառույցին անդամակցելու համար ֆիզիկական անձը գրավոր դիմում է մասնագիտացված կառույցին՝ նշելով ազգանունը, անունը, անձը հաստատող փաստաթղթի վավերապայմանները, բնակության (հաշվառման) վայրի հասցեն, ինչպես նաև ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.

1) որակավորման վկայականը.

2) համապատասխան մասնագիտական աշխատանքի բավարար փորձի վերաբերյալ տեղեկանք: Տեղեկանքին ներկայացվող պահանջները սահմանվում են մասնագիտացված կառույցի ներքին իրավական ակտերով.

3) տեղեկանք ֆինանսատնտեսական ոլորտին, ինչպես նաև ոչ մեծ ծանրության հանցագործություններին վերաբերող՝ ~~չհանված կամ չմարված~~ չմարված կամ չվերացված դատվածության բացակայության մասին.

4) տեղեկանք միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործություններին վերաբերող դատվածության բացակայության մասին:

3. Անդամակցության համար մասնագիտացված կառույց ներկայացվող փաստաթղթերը պետք է լինեն պահանջվող փաստաթղթերի բնօրինակները և (կամ) պատշաճ ձևով վավերացված պատճենները: Մասնագիտացված կառույցը կարող է պահանջել օտար լեզվով փաստաթղթերի՝ պատշաճ վավերացմամբ հայերեն թարգմանություններ:

4. Անդամակցության համար սույն հոդվածով նախատեսված փաստաթղթերը մասնագիտացված կառույց մուտքագրվելուց հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում, կայացվում է որոշում՝ ֆիզիկական անձին որպես մասնագիտացված կառույցի անդամ ընդունելու կամ անդամակցությունը մերժելու վերաբերյալ:

5. Ֆիզիկական անձի անդամակցության վերաբերյալ մասնագիտացված կառույցի որոշումն ուժի մեջ է մտնում մուտքի վճարը վճարելու ամսաթվից: Այն դեպքում, երբ անդամակցության վերաբերյալ որոշման ընդունման ամսաթվին հաջորդող օրվանից սկսած՝ 60 աշխատանքային օրվա ընթացքում, ֆիզիկական անձը չի վճարում մուտքի վճարը, այդ որոշումը մասնագիտացված կառույցը ճանաչում է անվավեր:

6. Մասնագիտացված կառույցի կողմից ֆիզիկական անձի՝ անդամակցության վերաբերյալ մերժման որոշում կայացնելու համար հիմք են՝

1) ֆիզիկական անձի անհամապատասխանությունը սույն օրենքի պահանջներին.

2) սույն հոդվածով սահմանված պահանջները չբավարարող փաստաթղթեր ներկայացնելը.

3) մասնագիտացված կառույց ներկայացված փաստաթղթերում ոչ հավաստի տեղեկությունների բացահայտումը:

7. Անդամակցության համար սույն հոդվածով նախատեսված փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպակների, ոչ իրավաբանական անճշտությունների, թվաբանական սխալների և նման այլ բացթողումների) առկայության, ինչպես նաև փաստաթղթերը թերի լինելու դեպքում մասնագիտացված կառույցը դրանք հայտնաբերելու պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում առաջարկում է ֆիզիկական անձին հինգ աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները:

8. Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված հիմքերով ֆիզիկական անձի անդամակցությունը մերժվում է, եթե այդ մասին պատշաճ ձևով նախազգուշացումը մասնագիտացված կառույցի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում ֆիզիկական անձը չի վերացնում փաստաթղթերում առկա ոչ էական թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր:

9. Մասնագիտացված կառույցի կողմից ֆիզիկական անձի անդամակցության վերաբերյալ մերժման որոշումը գրավոր ուղարկվում է այդ ֆիզիկական անձին՝ այդ որոշման ընդունման ամսաթվին հաջորդող օրվանից սկսած՝ յոթ աշխատանքային օրվա ընթացքում:

10. Մասնագիտացված կառույցի կողմից ֆիզիկական անձի անդամակցության վերաբերյալ մերժման որոշումը կարող է բողոքարկվել Հանրային վերահսկողության խորհուրդ՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում: Բողոքարկման բավարարման դեպքում Հանրային վերահսկողության խորհրդի որոշման հիման վրա մասնագիտացված կառույցը կայացնում է ֆիզիկական անձի անդամակցության վերաբերյալ որոշում:

11. Աուդիտորի կամ փորձագետ հաշվապահի անդամակցության վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ յոթ աշխատանքային օրվա ընթացքում, մասնագիտացված կառույցը գրավոր այդ մասին տեղեկացնում է Հանրային վերահսկողության խորհրդին

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 13. Արտոնագրված հաշտարարը

1. Արտոնագրված հաշտարար է սույն օրենքով սահմանված կարգով արտոնագրված հաշտարարի որակավորում ստացած և արտոնագրված հաշտարարների ռեեստրում գրանցված ֆիզիկական անձը:

2. Արտոնագրված հաշտարարի որակավորում կարող է ստանալ՝

1) 25 տարին լրացած և բարձրագույն կրթություն ունեցող անձը.

2) դատավորի պաշտոնում պաշտոնավարման առնվազն երեք տարվա փորձառություն ունեցող նախկին դատավորը, բացառությամբ այն դեպքերի, երբ նրա լիազորությունները դադարեցվել են կարգապահական խախտում թույլ տալու, կամ նրա լիազորությունները դադարել են նրա նկատմամբ կայացված մեղադրական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու կամ քրեական հետապնդումը ~~ոչ արդարացնող հիմքով~~ ոչ ռեաբիլիտացնող դադարեցվելու հիմքով.

3) իրավունքի ոլորտում մասնագիտական աշխատանքի առնվազն երեք տարվա փորձառություն ունեցող իրավաբան գիտնականը:

3. Արտոնագրված հաշտարարի որակավորում չի կարող շնորհվել այն անձին՝

1) որը հանրային ծառայող է.

2) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը ~~մարված կամ հանված չէ~~ մարված կամ վերացված չէ.

3) որը դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ճանաչված է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ սնանկ, և սնանկության վարույթը չի ավարտվել.

4) որի նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում.

5) որը հեռացվել է հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպությունից, և հեռացվելուց հետո չի անցել երեք տարի:

Հոդված 15. Արտոնագրված հաշտարարի որակավորում տալը մերժելը, արտոնագրված հաշտարարի որակավորումը դադարեցնելը

1. Որակավորման հանձնաժողովի եզրակացության հիման վրա արդարադատության նախարարն արտոնագրված հաշտարարի որակավորում տալը մերժում է, եթե հաշտարարի թեկնածուն՝

1) իր մասին ներկայացրել է կեղծ տեղեկություններ.

2) որակավորման հանձնաժողովի սահմանած ժամկետում կրկին թերի է ներկայացրել կամ չի ներկայացրել պահանջվող տեղեկությունները կամ դրանք հաստատող փաստաթղթերը.

3) չի հաղթահարել որակավորման քննության թեստավորման կամ հարցազրույցի փուլը:

2. Արդարադատության նախարարի կողմից արտոնագրված հաշտարարի որակավորումը դադարեցվում է, եթե՝

1) նա դիմել է այդ մասին.

2) պարզվել է, որ որակավորումը շնորհվել է օրենքի պահանջների խախտմամբ.

3) նա մահացել է կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ճանաչվել է մահացած.

4) նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող.

5) նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով դատապարտվել է հանցագործության համար.

6) նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ ~~արդարացնող~~ ոչ ռեաբիլիտացնող հիմքով.

7) հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության ընդհանուր ժողովը որոշում է կայացրել նրան հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպությունից հեռացնելու մասին, և այդ որոշումը սահմանված ժամկետում չի բողոքարկվել կամ բողոքարկման արդյունքում թողնվել է անփոփոխ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 7. Կոչումների շնորհման ժամկետները

1. Սույն օրենքով սահմանված կարգով հերթական կոչումների շնորհման համար սահմանվում են ծառայության հետևյալ ժամկետները.

- արդարադատության լեյտենանտ՝ 2 տարի,
- արդարադատության ավագ լեյտենանտ՝ 3 տարի,
- արդարադատության կապիտան՝ 3 տարի,
- արդարադատության մայոր՝ 4 տարի,
- արդարադատության փոխգնդապետ՝ 5 տարի:

Արդարադատության գնդապետի կոչումով ծառայության ժամկետ չի սահմանվում:

2. Այլ պետական մարմնում ծառայություն անցած (աշխատած) և զինվորական կամ հատուկ կոչում (դասային աստիճան, որակավորման դաս) ունեցող քաղաքացիներին հարկադիր կատարման ծառայությունում պաշտոնի նշանակելիս շնորհվում է նրանց զինվորական կամ հատուկ կոչմանը (դասային աստիճան, որակավորման դաս) համապատասխան կոչում, բացառությամբ սույն հոդվածի 3.1-ին մասով սահմանված դեպքի, պաշտոնի նշանակվելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում:

3. Այլ պետական մարմիններում շնորհված զինվորական կամ հատուկ կոչումների (դասային աստիճանների, որակավորման դասերի) համապատասխանությունը սույն օրենքով սահմանված կոչումներին սահմանում է Կառավարությունը:

(պարբերությունն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-16-Ն)

3.1. Հարկադիր կատարման ծառայությունում հարկադիր ծառայության պաշտոնի նշանակելիս զինվորական կամ հատուկ կոչում (դասային աստիճան, որակավորման դաս) չունեցող կամ հարկադիր կատարման ծառայության տվյալ պաշտոնին համապատասխան սկզբնական կոչումից ավելի ցածր զինվորական կամ հատուկ կոչում (դասային աստիճան, որակավորման դաս) ունեցող քաղաքացիներին շնորհվում է հարկադիր կատարման ծառայության տվյալ պաշտոնին համապատասխան սկզբնական կոչում: Հարկադիր կատարման ծառայության պաշտոններին համապատասխան սկզբնական կոչումները սահմանում է Կառավարությունը:

4. ***(մասն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-16-Ն)***

5. Հարկադիր կատարողի հերթական կոչումի շնորհումը հետաձգվում է, երբ՝

1) ***(կետն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-16-Ն)***

2) նա ունի կարգապահական տույժ.

3) ~~նա գտնվում է քրեական հետապնդման մեջ~~նա քրեական վարույթում ունի մեղադրյալի կարգավիճակ, կամ նրա նկատմամբ կատարվում է ծառայողական քննություն:

Հերթական կոչումի շնորհումը հետաձգելու դեպքում ծառայողի հերթական կոչումը շնորհվում է սույն մասի 1-ին կետում նշված խոչընդոտների վերացումից հետո՝ 15-օրյա ժամկետում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 105. Հողամասերի ռեկվիզիցիան և բռնագրավումը

1. Տարերային աղետների, վթարների, համաճարակների և արտակարգ բնույթ կրող այլ հանգամանքների դեպքում հողամասը կամ դրա մասը պետական մարմնի որոշմամբ կարող է վերցվել սեփականատիրոջից՝ ի շահ հասարակության՝ դրա արժեքը վճարելու պայմանով (ռեկվիզիցիա):

2. Անձը, որի հողամասը կամ դրա մի մասը հարկադրաբար վերցվել է, իրավունք ունի պահանջել, որ իրեն վերադարձվի պահպանված հողամասը կամ դրա մասը, եթե վերացել է այն հանգամանքը, որոնց կապակցությամբ կատարվել է ռեկվիզիցիան:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նշված հանգամանքները վրա հասնելու դեպքերում, եթե բացակայում է հողամասի կամ դրա մասի ռեկվիզիցիայի անհրաժեշտությունը, հողամասը կամ դրա մասը ժամանակավորապես, այդ հանգամանքների գործողության ժամանակահատվածում, կարող է օգտագործվել պետության կամ համայնքների կարիքների համար՝ այդ հողամասի սեփականատիրոջ իրավունքների ժամանակավոր սահմանափակման հետ կապված վնասների հատուցմամբ:

Հողամասի սեփականատերը վնասների համար փոխհատուցման վճարների չափերը կարող է վիճարկել դատական կարգով:

Որոշակի ժամանակահատվածում կարանտին կամ տնտեսական գործունեության արգելք հայտարարելու դեպքում հողամասերը չեն վերցվում, իսկ դրանց սեփականատերերին, օգտագործողներին հատուցվում են դրա հետ կապված վնասները:

4. Ռեկվիզիցիայի ենթարկված հողամասը վերադարձնելու անհնարինության դեպքում սեփականատիրոջը հատուցվում է հողամասի արժեքը:

5. ~~Օրենքով նախատեսված դեպքերում հողամասը կարող է դատավճռով, որպես հանցագործության համար պատժամիջոց, անհատույց առգրավվել սեփականատիրոջից (բռնագրավում~~)Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված դեպքերում հողամասը դատարանի կողմից ենթակա է բռնագրավման՝ անհատույց վերցման:.

6. Սեփականատերերից հողամասերը դատական կարգով անհատույց վերցվում են սույն օրենսգրքի 104-րդ հոդվածով նախատեսված կանոնների պահպանմամբ՝ հողային օրենսդրության հետևյալ դիտավորյալ և պարբերաբար խախտումների համար՝

1) հողերի աղտոտումը ռադիոակտիվ և քիմիական նյութերով, արտադրական թափոններով, կեղտաջրերով, թունավորումը մանրէապարազիտային և կարանտինային օրգանիզմներով, ծածկելը մոլախոտերով.

2) հողի բարելավմանը, դա հողմային և ջրային հողատարումից պահպանելուն, հողի վիճակը վատթարացնող այլ գործընթացների կանխմանն ուղղված պարտադիր միջոցառումներ չիրականացնելը, ինչպես նաև հողի, դրա բերրի շերտի, բնական պաշարների, հնէաբանական և պատմամշակութային ժառանգության օբյեկտների փչացումն ու ոչնչացումը կանխարգելող միջոցառումներ չձեռնարկելը.

3) հողն այլ բնական պաշարների ոչնչացմանը կամ պարբերաբար վնաս պատճառելուն հանգեցնող եղանակներով օգտագործելը.

4) բնապահպանական, բնական արգելանոցային, առողջարարական, հանգստի համար նախատեսված և օգտագործման հատուկ պայմաններ ունեցող այլ հողերի, ինչպես նաև ռադիոակտիվ և քիմիական ախտահարման ենթարկվող հողերի օգտագործման սահմանված ռեժիմի խախտումը.

5) հողերի օգտագործումը մարդկանց առողջությանը վնաս պատճառելուն հանգեցնող կամ նման վնաս պատճառելու իրական վտանգ ստեղծող եղանակներով.

6) երեք տարի շարունակ գյուղատնտեսական նշանակություն ունեցող հողերը չօգտագործելը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՄԱՍՆԱՎՈՐ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 12. Թիկնապահի և պահնորդի իրավական կարգավիճակը

1. Թիկնապահը և պահնորդն աշխատում են աշխատանքային պայմանագրի հիման վրա, և նրանց վրա տարածվում են աշխատանքային օրենսդրության պահանջները:

2. Թիկնապահի և պահնորդի աշխատանքին հավակնող անձը աշխատանքային պայմանագիր կնքելիս աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերի հետ մեկտեղ պարտավոր է ներկայացնել իր կողմից հատուկ պատրաստություն (որակավորում) անցնելը հավաստող փաստաթուղթ:

3. Թիկնապահի և պահնորդի կարգավիճակ ձեռք բերելու և թիկնապահական և պահնորդական գործառույթներ իրականացնելու (այդ թվում՝ զենքի օգտագործմամբ և հատուկ միջոցների գործադրմամբ) իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն թիկնապահի կամ պահնորդի որակավորում:

4. Թիկնապահի և պահնորդի կարգավիճակ ձեռք բերելու և թիկնապահական և պահնորդական գործառույթ իրականացնելու իրավունք չունեն այն անձինք, ովքեր՝

1) դատական կարգով ճանաչվել են անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) հոգեկան հիվանդության, հարբեցողության կամ թմրամոլության պատճառով հաշվառման են կանգնած բուժհիմնարկներում.

3) դատապարտվել են դիտավորյալ հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով ~~մարված կամ հանված չէ~~մարված կամ վերացված չէ.

4) խուսափել են ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունի

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 17. Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողը, մանկավարժական աշխատողի վերապատրաստումը

1. Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագիրը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը: Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի պաշտոն զբաղեցնելու իրավունք չունի այն անձը, որը՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

3) ունի այնպիսի հիվանդություն, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության կատարմանը.

4) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով ~~հանված կամ մարված չէ~~մարված կամ վերացված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է անզգուշությամբ հանցագործություն կատարելու համար:

2. Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողն իրավունք ունի՝

1) մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը՝ օրենսդրությամբ և նախադպրոցական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով.

2) մասնակցելու նախադպրոցական հաստատության գործունեությանը վերաբերող հարցերի քննարկմանը և լուծմանը.

3) առաջարկներ ներկայացնելու նախադպրոցական կրթական չափորոշիչների, ծրագրերի, ձեռնարկների բարելավման վերաբերյալ.

4) օգտվելու նախադպրոցական հաստատության ուսումնամեթոդական և տեղեկատվական ռեսուրսներից.

5) կրթական ծրագրի շրջանակներում ընտրելու և կիրառելու ուսուցման այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք ապահովում են ուսումնական գործընթացի ներառականությունը, մատչելիությունն ու որակը.

6) օգտագործելու կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կրթական ծրագրեր, ձեռնարկներ և ուսուցողական նյութեր, ուսումնաօժանդակ ձեռնարկներ և սաների գիտելիքների, հմտությունների և կարողությունների գնահատման մեթոդներ.

7) ուսումնադաստիարակչական աշխատանքներն իրականացնելու համար կիրառելու տարբերակային ձևեր՝ պահպանելով պլանավորմանը ներկայացվող սկզբունքներն ու չափանիշները.

8) նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին, նախադպրոցական կրթական ծրագրին համապատասխան՝ մշակելու և իրականացնելու պարապմունքների պլաններ, թեմատիկ միավորներ.

9) մասնակցելու վերապատրաստումների, գիտաժողովների, քննարկումների և լսումների.

10) օգտվելու օրենքներով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ իրեն վերապահված իրավունքներից, լիազորություններից և խրախուսման ձևերից.

11) իրականացնելու ծնողական կրթության դասընթացներ:

3. Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողը պարտավոր է՝

1) հարգել և պաշտպանել յուրաքանչյուր երեխայի իրավունքները, ազատություններն ու արժանապատվությունը.

2) ապահովել երեխայի կրթության իրավունքի իրացումը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր երեխայի մտավոր ֆիզիկական և հոգեկան զարգացման առանձնահատկությունները.

3) ապահովել սաների կողմից նախադպրոցական ծրագրերի յուրացումը, նրանց զարգացումը և համապատասխան գիտելիքների ու հմտությունների ձևավորումը՝ համաձայն նախադպրոցական կրթական չափորոշիչների և ծրագրերի.

4) նպաստել սաների արժեքային համակարգի ձևավորմանը, խմբերում ներառական և երեխայակենտրոն միջավայրի ստեղծմանը.

5) համագործակցել երեխայի ծնողների (օրինական ներկայացուցիչների) հետ.

6) կանխել երեխայի նկատմամբ գործադրվող բռնության կամ դրա իրական սպառնալիքի դեպքում հաղորդում ներկայացնել իրավապահ մարմիններ.

7) անցնել պարտադիր բուժզննություն՝ տարեկան առնվազն մեկ անգամ:

4. Յուրաքանչյուր տարի նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների մեկ հինգերորդը անցնում է պարտադիր վերապատրաստում, որն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգին համապատասխան:

Հոդված 19. Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենը, նրա իրավասություններն ու պարտականությունները

1. Նախադպրոցական ուսումնական հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ուսումնական հաստատության կամ դրա ստորաբաժանման գործադիր մարմինը՝ տնօրենը, որը նշանակվում (ընտրվում) և ազատվում է (նրա լիազորությունները դադարում են) օրենսդրությամբ և ուսումնական հաստատության կամ կազմակերպության կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

2. Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենի թափուր տեղի համար կարող է դիմել, իսկ ընտրվելու դեպքում հայտարարված մրցույթին մասնակցել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով վերապատրաստված և նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստացած անձը: Բացառություն կարող են լինել սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերով սահմանված կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավարները:

3. Նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) համար կարող է վերապատրաստվել այն անձը, որն ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական աշխատանքի կամ հանրային կառավարման ոլորտի առնվազն հինգ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:

4. Վերապատրաստման, քննությունների և հավաստագրման ընթացակարգերը, նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) դադարեցման դեպքերն ու ընթացակարգը, ինչպես նաև հավաստագրման լիազոր մարմնի կազմավորման և գործունեության կարգը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

5. Վերապատրաստումը կազմակերպվում է տարեկան առնվազն մեկ անգամ:

6. Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրեն չի կարող առաջադրվել, նշանակվել, ընտրվել այն անձը, որը՝

1) սույն հոդվածի 1-4-րդ մասերով սահմանված կարգով չի ստացել նախադպրոցական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագիր.

2) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

3) դատական կարգով զրկվել է մանկավարժական կամ վարչական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

4) ունի այնպիսի հիվանդություն, որը կարող է խոչընդոտել մանկավարժական կամ վարչական գործունեության կատարմանը.

5) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով ~~հանված կամ մարված չէ~~մարված կամ վերացված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:

7. Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենը պատասխանատու է նախադպրոցական կրթության պետական չափորոշչին և համապատասխան տարիքային խմբի ծրագրերին համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, սաների առողջության պահպանման, կադրերի

ընտրության, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի պահանջների պահպանման համար, ինչպես նաև օրենքով և համապատասխան կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորությունների ապահովման համար:

8. Պետական և համայնքային ուսումնական հաստատության տնօրենը՝

1) լիազոր մարմին է ներկայացնում նախադպրոցական ուսումնական հաստատության ֆինանսատնտեսական հաշվետվությունը, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը.

2) կազմում է ուսումնական հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և ներկայացնում համապատասխան լիազորված մարմնի հաստատմանը.

3) լիազոր մարմնի հավանությանն է ներկայացնում նախադպրոցական ուսումնական հաստատության զարգացման ծրագիրը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած ձևաչափի և պահանջների համաձայն.

4) իրականացնում է օրենքով և նախադպրոցական ուսումնական հաստատության կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 18.1. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության ուսումնական հաստատության տնօրենը և նրա իրավասությունը

1. Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության տնօրեն, բացառությամբ ոստիկանության ուսումնական հաստատության համապատասխան ստորաբաժանումների պետերի, կարող է ընտրվել կամ նշանակվել այն անձը, որն ունի արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) (այսուհետ՝ Հավաստագիր):

2. Արհեստագործական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենն ընտրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած մրցութային կարգով:

3. Արհեստագործական և միջին մասնագիտական ոչ պետական ուսումնական հաստատության տնօրենը, ինչպես նաև ուսումնական հաստատության արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանման ղեկավարը նշանակվում է ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով:

4. Արհեստագործական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին կարող է մասնակցել, իսկ արհեստագործական և միջին մասնագիտական ոչ պետական

ուսումնական հաստատության տնօրեն, ինչպես նաև ուսումնական հաստատության արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանման ղեկավար կարող է նշանակվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով վերապատրաստված և Հավաստագիր ստացած անձը:

5. Հավաստագիր ստանալու համար կարող է դիմել այն անձը, որն ունի բարձրագույն կրթություն, սույն օրենքով սահմանված կարգով ստացած վերապատրաստման վկայական և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական աշխատանքի առնվազն հինգ կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն երեք կամ կառավարման ոլորտի առնվազն հինգ կամ մասնագիտական առնվազն հինգ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:

6. Հավաստագիր ստանալու համար դիմած անձի վերապատրաստում կարող են իրականացնել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով ընտրված (երաշխավորված) կազմակերպությունները:

7. Հավաստագրումն անցկացվում է հետևյալ փուլերով.

1) փաստաթղթերի համապատասխանության ճանաչում՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած փաստաթղթերի ցանկի.

2) քննություն՝ թեստավորման և հարցազրույցի միջոցով.

3) Հավաստագրի շնորհում՝ հինգ տարի ժամկետով:

8. Հավաստագրման քննությունների կազմակերպման և հավաստագրման ընթացակարգերը, ինչպես նաև հավաստագրման հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

9. Հավաստագրումը կազմակերպվում է առնվազն տարին մեկ անգամ:

10. Հավաստագրման գործընթացի մասին հայտարարությունը հրապարակվում է քննություններն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներով:

11. Հավաստագրման քննությունների հարցաշարի բովանդակությունը կազմվում է կրթության բնագավառում իրավական, կառավարչական, մանկավարժական, հոգեբանական, ուսուցման մեթոդաբանության վերաբերյալ գիտելիքները և գործնական կարողությունները ստուգելու նպատակով:

12. Հավաստագրման քննությունը հավաստագրման ընթացակարգով հանձնած անձին շնորհվում է Հավաստագիր:

13. Հավաստագիր ստացած անձանց ցուցակը հրապարակում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝ հավաստագրման ընթացակարգով սահմանված ժամկետում:

14. Հավաստագրման քննության արդյունքները կարող են բողոքարկվել դատական կարգով կամ կրթության պետական կառավարման լիազորված մարմին՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի:

15. Հավաստագիր ստացած անձը կարող է Հավաստագիրը ստանալու օրվանից հետո՝ հինգ տարվա ընթացքում, մասնակցել արհեստագործական և միջին

մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար անցկացվող մրցույթին, իսկ ոչ պետական ուսումնական հաստատության, ինչպես նաև ուսումնական հաստատության արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանման դեպքում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով նշանակվել ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում:

16. Արհեստագործական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի թափուր տեղի համար անցկացվող մրցույթին մասնակցելու համար տնօրենի թեկնածուն խորհրդին ներկայացնում է՝

1) կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած ցանկին համապատասխան փաստաթղթերը.

2) Հավաստագիրը.

3) ուսումնական հաստատության զարգացման հինգ տարվա ծրագիրը:

17. Արհեստագործական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի թեկնածուի ղեկավարման գործնական հմտությունները ստուգելու նպատակով խորհուրդն անցկացնում է հարցազրույց՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած հարցաշարի հիման վրա:

18. Մրցույթում հաղթած և օրենսդրությամբ սահմանված կարգով լիազոր մարմնի ղեկավարի հետ աշխատանքային պայմանագիր կնքած արհեստագործական կամ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենը պաշտոնավարում է մինչև իր լիազորությունների ավարտը՝ անկախ Հավաստագրի հնգամյա ժամկետի լրանալուց, իսկ ոչ պետական ուսումնական հաստատության տնօրենը, ինչպես նաև ուսումնական հաստատության արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանման ղեկավարը պաշտոնավարում է մինչև հավաստագրի ժամկետի լրանալը:

19. Հավաստագիր ստացած անձը կարող է մինչև Հավաստագրի ժամկետի լրանալը դիմել և սահմանված կարգով հավաստագրվել:

20. Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության տնօրեն չի կարող առաջադրվել և ընտրվել (նշանակվել) այն անձը, որը՝

1) սահմանված կարգով չի ստացել ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագիր.

2) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

3) դատական կարգով զրկվել է մանկավարժական կամ վարչական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

4) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական կամ վարչական գործունեությանը: Այդ հիվանդությունների ցանկը հաստատում է կառավարությունը.

5) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով~~ հանված կամ մարված չէ~~մարված կամ վերացված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:

21. Արհեստագործական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենը՝

1) խորհրդի քննարկմանն է ներկայացնում արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ֆինանսատնտեսական հաշվետվությունը, արտաքին և ներքին գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկանքը, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը.

2) պատասխանատու է մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների (որակավորման չափորոշիչների) և կարողությունների զարգացմանը միտված մոդուլային ուսուցման ծրագրի կատարման չափանիշներն ապահովող համապատասխան կրթության և ուսուցման գործընթացի կազմակերպման, ուսանողների առողջության պահպանման, կադրերի ընտրության, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի պահանջների պահպանման համար, ինչպես նաև օրենքով և արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորությունների ապահովման համար.

3) ղեկավարում է արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության մանկավարժական խորհուրդը, աջակցում է տվյալ ուսումնական հաստատության խորհրդակցական մարմինների աշխատանքին.

4) կազմում է արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և տվյալ ուսումնական հաստատության խորհրդի հավանությամբ ներկայացնում լիազոր մարմին.

5) խորհրդի հավանությանն է ներկայացնում արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության զարգացման ծրագիրը.

6) իրականացնում է օրենքով և տվյալ ուսումնական հաստատության կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 4.1.	**Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի, խաղատների կազմակերպիչների՝ նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետերերի, փայատերերի կամ մասնակիցների, նրանց իրական շահառուների, ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց և նրանց հետ փոխկապակցված անձանց հանդեպ կիրառվող պահանջները**

1. Կազմակերպչի՝ նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետեր, փայատեր կամ մասնակից կամ նրա իրական շահառու կամ նրանց հետ փոխկապակցված անձ չի կարող լինել այն ֆիզիկական անձը, որը՝

1) դիտավորությամբ կատարված հանցագործության համար ունի դատվածություն, և դատվածությունը օրենքով սահմանված կարգով ~~հանված կամ մարված չէ~~մարված կամ վերացված չէ.

2) օրինական ուժի մեջ մտած դատավճռով զրկվել է ֆինանսական, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ զբաղեցնելու իրավունքից.

3) սնանկ է ճանաչվել և ունի չմարված (չներված) պարտավորություններ.

4) նախկինում պատճառ է հանդիսացել խաղատան, շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի կազմակերպչի կամ այլ անձի սնանկացմանը.

5) չի ներկայացնում իր կողմից ներդրվող դրամական միջոցների ծագման աղբյուրների վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ (փաստաթղթեր, տեղեկություններ և այլն).

6) այնպիսի իրավաբանական անձի մասնակից է հանդիսացել, որի՝ շահումով խաղերի կամ ինտերնետ շահումով խաղերի կամ խաղատան կազմակերպման լիցենզիայի գործողությունը վերջին երեք տարվա ընթացքում դադարեցվել է՝ որպես պատասխանատվության միջոց:

2. Կազմակերպչի՝ նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետեր, փայատեր կամ մասնակից կամ նրանց հետ փոխկապակցված անձ չի կարող լինել այն իրավաբանական անձը՝

1) որի նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետերը, փայատերը կամ մասնակիցը կամ Տնօրենը չի համապատասխանում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պայմաններին և պահանջներին.

2) որը գտնվում է սնանկացման վարույթում.

3) որի գործունեությունը նախկինում պատճառ է հանդիսացել խաղատան, շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի կազմակերպչի կամ այլ անձի սնանկացմանը.

4) որի շահումով խաղերի կամ ինտերնետ շահումով խաղերի կամ խաղատան գործունեության կազմակերպման լիցենզիայի գործողությունը վերջին երեք տարվա ընթացքում դադարեցվել է՝ որպես պատասխանատվության միջոց.

5) որը չի ներկայացնում իր կողմից ներդրվող դրամական միջոցների ծագման աղբյուրների վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ (փաստաթղթեր, տեղեկություններ և այլն):

3. Ղեկավար պաշտոններ չի կարող զբաղեցնել այն անձը, որը կամ որի հետ փոխկապակցված անձը հանդիսանում է սույն հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերով նշված անձ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ

ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 4.1. **Վիճակախաղի կազմակերպիչների՝ նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետերերի, փայատերերի կամ մասնակիցների, նրանց իրական շահառուների, ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց և նրանց հետ փոխկապակցված անձանց հանդեպ կիրառվող պահանջները**

1. Կազմակերպչի՝ նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետեր, փայատեր կամ մասնակից կամ նրա իրական շահառու կամ նրանց հետ փոխկապակցված անձ չի կարող լինել այն ֆիզիկական անձը, որը՝

1) դիտավորությամբ կատարված հանցագործության համար ունի դատվածություն, և դատվածությունը օրենքով սահմանված կարգով ~~հանված կամ մարված չէ~~մարված կամ վերացված չէ.

2) օրինական ուժի մեջ մտած դատավճռով զրկվել է ֆինանսական, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ զբաղեցնելու իրավունքից.

3) սնանկ է ճանաչվել և ունի չմարված (չներված) պարտավորություններ.

4) նախկինում պատճառ է հանդիսացել իր՝ խաղային բիզնեսի ոլորտում կազմակերպած գործունեության սնանկացմանը.

5) չի ներկայացնում իր ներդրած դրամական միջոցների ծագման աղբյուրների վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ (փաստաթղթեր, տեղեկություններ և այլն).

6) այնպիսի իրավաբանական անձի մասնակից է հանդիսացել, որի՝ վիճակախաղի կազմակերպման լիցենզիայի գործողությունը վերջին երեք տարվա ընթացքում դադարեցվել է որպես պատասխանատվության միջոց:

2. Կազմակերպչի՝ նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետեր, փայատեր կամ մասնակից կամ նրանց հետ փոխկապակցված անձ չի կարող լինել այն իրավաբանական անձը՝

1) որի նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետերը, փայատերը կամ մասնակիցը կամ գործադիր մարմնի ղեկավարը չի համապատասխանում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պայմաններին և պահանջներին.

2) որը սնանկության վարույթում է.

3) որի գործունեությունը նախկինում պատճառ է հանդիսացել վիճակախաղի կազմակերպչի կամ այլ անձի սնանկացմանը.

4) որի վիճակախաղի կազմակերպման լիցենզիայի գործողությունը վերջին երեք տարվա ընթացքում դադարեցվել է որպես պատասխանատվության միջոց.

5) որը չի ներկայացնում իր ներդրած դրամական միջոցների ծագման աղբյուրների վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ (փաստաթղթեր, տեղեկություններ և այլն):

3. Ղեկավար պաշտոններ չի կարող զբաղեցնել այն անձը, որը կամ որի հետ փոխկապակցված անձը հանդիսանում է սույն հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերով նշված անձ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 20. Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորման կարգը

1. Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումն իրականացվում է սույն օրենքով սահմանված կարգով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ընթացակարգով:

Վճարահաշվարկային կազմակերպության լիցենզավորման համար նրա հիմնադիրները Կենտրոնական բանկ են ներկայացնում՝

ա) լիցենզիա ստանալու մասին հայտը.

բ) վճարահաշվարկային կազմակերպության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված վճարահաշվարկային կազմակերպության կանոնադրությունը՝ երեք օրինակից.

գ) վճարահաշվարկային կազմակերպության իրավասու մարմնի որոշումը՝ վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարներ նշանակելու մասին.

դ) վճարահաշվարկային կազմակերպության մասնակիցների և ղեկավարների մասին տեղեկանքը՝ կազմված Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած ձևով, ներառյալ՝ մասնակցի և ղեկավարի անունը, ազգանունը, հասցեն, քաղաքացիությունը, անձնագրի տվյալները, 10 և ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակիցը դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն չունենալու (կամ այդպիսի դատվածությունն օրենքով սահմանված կարգով ~~հանված կամ մարված~~ մարված կամ վերացված լինելու) մասին գրավոր հայտարարություն.

ե) վճարահաշվարկային կազմակերպության աշխատանքի կանոնակարգը, որը հաստատում է նրա կառավարման բարձրագույն մարմինը և ներառում է նրա կողմից մատուցվող վճարահաշվարկային ծառայությունների տեսակները, կարգն ու պայմանները.

ե.1) վճարահաշվարկային կազմակերպության գործունեության տնտեսական ծրագիրը՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևով.

զ) *(կետն ուժը կորցրել է 14.04.11 ՀՕ-131-Ն)*

է) դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների դեպքում՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերից մեկում անհրաժեշտ դրամական միջոցների կամ արժեթղթերի դեպոնացման մասին պայմանագրի օրինակը կամ անվերադարձելի բանկային երաշխիքը, եթե նման պահանջ սահմանված է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով.

է.1) ընդհանուր կապիտալի նվազագույն չափի տնտեսական նորմատիվին համապատասխանելու վերաբերյալ փաստաթղթեր.

ը) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը:

2. Կենտրոնական բանկը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերն ու տեղեկություններն ստանալու պահից երկամսյա ժամկետում լիցենզավորում է վճարահաշվարկային կազմակերպությունը կամ մերժում է դրա լիցենզավորումը:

Սույն մասով նախատեսված երկամսյա ժամկետը որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով կարող է Կենտրոնական բանկի որոշմամբ կասեցվել մինչև մեկ ամիս ժամկետով:

(պարբերությունն ուժը կորցրել է 14.04.11 ՀՕ-131-Ն)

3. Լիցենզավորման մասին որոշման ընդունման պահից եռօրյա ժամկետում Կենտրոնական բանկը վճարահաշվարկային կազմակերպությանը տալիս է լիցենզիա:

4. Լիցենզավորման մասին որոշումն ուժի մեջ մտնելու պահից վճարահաշվարկային կազմակերպությունը համարվում է լիցենզավորված:

5. *(մասն ուժը կորցրել է 14.04.11 ՀՕ-131-Ն)*

6. Կենտրոնական բանկի կողմից երկամսյա ժամկետում դիմումը չմերժվելու կամ երկամսյա ժամկետը կասեցնելու մասին վճարահաշվարկային կազմակերպությանը չտեղեկացնելու դեպքում վճարահաշվարկային կազմակերպությունը համարվում է լիցենզավորված՝ օրենքով սահմանված պետական տուրքը վճարված լինելու պայմանով:

6.1. Եթե Կենտրոնական բանկ ներկայացված փաստաթղթերում առկա են ձևական սխալներ, որոնք կարող են շտկվել, ապա Կենտրոնական բանկը դրանք մատնացույց է անում դիմողին՝ նրան հնարավորություն ընձեռելով շտկելու այդ սխալները, կամ ինքն է շտկում դրանք՝ նախապես կամ հետագայում դիմողին իրազեկելով այդ մասին: Եթե Կենտրոնական բանկ ներկայացված փաստաթղթերն ամբողջական չեն, ապա Կենտրոնական բանկը դիմողին առաջարկում է սահմանված ժամկետում համալրել դրանք:

7. Վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիան անժամկետ է:

Վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիան չի կարող այլ անձանց տրվել օգտագործման, օտարվել կամ գրավադրվել:

Վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիայում նշվում են «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» բառակապակցությունը, լիցենզիայի համարը, լիցենզիան տալու ամսաթիվը, վճարահաշվարկային կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը, գործունեության իրականացման վայրը (եթե, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, լիցենզավորման ենթակա գործունեությունը պետք է իրականացվի միայն լիցենզիայում նշված վայրում), վճարահաշվարկային կազմակերպության պետական գրանցման համարը, գործունեության այն տեսակը, որի իրականացման համար տրվել է լիցենզիան, լիցենզիայի գործողության ժամկետը, Կենտրոնական բանկի նախագահի ստորագրությունը և Կենտրոնական բանկի՝ պետական զինանշանի պատկերով կնիքի դրոշմը: Վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիայի միասնական ձևը սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը:

Կենտրոնական բանկը վարում է տրամադրված լիցենզիաների գրանցամատյանը, որը բաց է համընդհանուր ծանոթացման համար: Գրանցամատյանի ձևը, վարման կարգը, ինչպես նաև դրանում ներառվող տեղեկությունները սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը:

Հոդված 20.1. Վճարահաշվարկային կազմակերպության լիցենզավորման մերժումը

1. Կենտրոնական բանկը կարող է մերժել վճարահաշվարկային կազմակերպության լիցենզավորումը, եթե՝

ա) ներկայացվել են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ.

բ) ներկայացված փաստաթղթերը ամբողջական չեն կամ հակասում են Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին.

գ) կազմակերպության ընդհանուր կապիտալը փոքր է օրենքով սահմանված նվազագույն չափից.

դ) վճարահաշվարկային կազմակերպության գործունեության վայրը չի համապատասխանում Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված տեխնիկական հագեցվածության, տարածքային, ծրագրային, անվտանգության պահանջներին.

ե) վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարները չեն համապատասխանում Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված որակավորման և մասնագիտական համապատասխանելիության չափանիշներին.

ե1) կազմակերպության 10 և ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակիցներից թեկուզ մեկն ունի հանցագործության համար դատվածություն, և այդ դատվածությունն օրենքով սահմանված կարգով ~~հանված կամ մարված չէ~~մարված կամ վերացված չէ.

զ) վճարահաշվարկային կազմակերպությունը չի կարող ապահովել վճարահաշվարկային ծառայությունների մատուցման համապատասխանությունը իր աշխատանքի կանոնակարգով սահմանված կարգին կամ պայմաններին:

Հոդված 22. Վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարները, նրանց մասնագիտական չափանիշները և որակավորման կարգը

1. Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարներ են համարվում վճարահաշվարկային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը, նրա տեղակալը, գլխավոր հաշվապահը:

2. Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավար չեն կարող լինել՝

ա) դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատապարտված անձինք, որոնց դատվածությունը ~~հանված կամ մարված չէ~~մարված կամ վերացված չէ.

բ) դատարանի կողմից ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից զրկված անձինք.

գ) սնանկ ճանաչված և չմարված (չներված) պարտավորություններ ունեցող անձինք.

դ) անձինք, որոնց որակավորումը կամ մասնագիտական գիտելիքները չեն համապատասխանում Կենտրոնական բանկի սահմանած մասնագիտական կամ որակավորման համապատասխանության չափանիշներին.

ե) անձինք, որոնք անցյալում կատարել են այնպիսի արարք, որը, Կենտրոնական բանկի խորհրդի հաստատած ուղեցույցով հիմնավորված, Կենտրոնական բանկի կարծիքով հիմք է տալիս կասկածելու, որ տվյալ անձի՝ որպես վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարի գործողությունները կարող են հանգեցնել վճարահաշվարկային կազմակերպության սնանկացմանը կամ ֆինանսական վիճակի վատթարացմանը:

3. Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարների որակավորման, մասնագիտական համապատասխանության չափանիշները և կարգը սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը: Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ կարող է սահմանվել, որ վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարների որակավորման, մասնագիտական համապատասխանության քննություններն անցկացնում են մասնագիտացված այլ անձինք:

4. Անձը կարող է վճարահաշվարկային կազմակերպության ղեկավար աշխատել Կենտրոնական բանկում գրանցվելու պահից, ընդ որում՝ գրանցվելու համար անձը պետք է ունենա վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարի որակավորման, մասնագիտական համապատասխանության վկայական: Սույն մասով նախատեսված գրանցումը կատարվում է դիմելու պահից տասնօրյա ժամկետում:

Հոդված 23.

Վճարահաշվարկային կազմակերպությունների համար սահմանվող տնտեսական նորմատիվներ և այլ պահանջներ

(վերնագիրը փոփ. 14.04.11 ՀՕ-131-Ն)

1. ***(մասն ուժը կորցրել է 14.04.11 ՀՕ-131-Ն)***

1.1. Դրամական (փողային) փոխանցումների իրականացման լիցենզիա կամ վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգի և քլիրինգի իրականացման լիցենզիա ունեցող վճարահաշվարկային կազմակերպությունների համար սահմանվում է ընդհանուր կապիտալի նվազագույն չափի տնտեսական նորմատիվ՝ հարյուր միլիոն դրամի չափով:

1.2. Կենտրոնական բանկի խորհուրդը վճարահաշվարկային կազմակերպությունների համար կարող է սահմանել իրացվելիության տնտեսական նորմատիվ:

1.3. Տնտեսական նորմատիվների հաշվարկման կարգը և հաշվարկում մասնակցող տարրերի կազմը սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը:

1.4. Տնտեսական նորմատիվները պարտադիր են վճարահաշվարկային կազմակերպությունների համար:

2. Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների համար սահմանել դրամական միջոցներ կամ արժեթղթեր դեպոնացնելու կամ անվերադարձելի բանկային երաշխիք ներկայացնելու պահանջ:

Սույն մասով նախատեսված դեպոնացվող գումարի չափը, արժեթղթերի տեսակները, գումարի և արժեթղթերի դեպոնացման կարգը, պայմանները, ժամկետները, ինչպես նաև բանկային երաշխիքի պայմանները սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը:

Ընդ որում՝ Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է սահմանել դեպոնացվող գումարի կամ արժեթղթերի նվազագույն չափը, ինչպես նաև այն գործակիցը, որը կարող է կիրառվել դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող յուրաքանչյուր կազմակերպության համար՝ ելնելով տվյալ կազմակերպության կողմից մատուցվող վճարահաշվարկային ծառայությունների քանակից և (կամ) փոխանցումների ծավալներից և (կամ) աշխարհագրությունից և (կամ) կիրառվող վճարային գործիքից: Ընդ որում՝ գործակիցը կարող է սահմանվել դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող յուրաքանչյուր կազմակերպության կամ կազմակերպությունների խմբերի համար:

3. Դեպոնացված գումարը, արժեթղթերը, բանկային երաշխիքը հանդիսանում են երաշխավորող միջոց, որը կարող է օգտագործվել բացառապես Կենտրոնական բանկի կողմից դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության պարտավորություններն այն անձանց նկատմամբ մարելու համար, որոնք դրամական միջոցներ են տրամադրել դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությանը, կամ որոնց օգտին դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունը դրամական միջոցներ է ստացել՝ դրամական փոխանցումներ կատարելու նպատակով: Պարտավորությունների մարման կարգը, պայմանները, ժամկետները սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը:

4. Կենտրոնական բանկը կարող է թույլատրել դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությանը տնօրինելու դեպոնացված գումարը կամ արժեթղթերը կամ բանկային երաշխիքը, եթե բացակայում են սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված չմարված պարտավորությունները:

5. Դեպոնացված գումարը կամ արժեթղթերը կամ բանկային երաշխիքը չեն կարող օգտագործվել դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության այլ պարտավորությունների մարման համար, քան սահմանված են սույն հոդվածի 3-րդ մասով, իսկ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության՝ օրենքով սահմանված հիմքերով լուծարման (ինքնալուծարման) դեպքում չեն ընդգրկվում օրենքով սահմանված լուծարային միջոցների կազմում:

6. Վճարահաշվարկային կազմակերպության 10 և ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակիցը չի կարող ունենալ դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն, եթե այդ դատվածությունն օրենքով սահմանված կարգով ~~հանված կամ մարված չէ~~մարված կամ վերացված չէ: Վճարահաշվարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում 10 և ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակիցների և ղեկավարների մասին սույն մասով նախատեսված տեղեկությունների վերաբերյալ հաշվետվություն՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով և ժամկետներում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 21. Ֆինանսական համակարգի հաշտարարին ներկայացվող պահանջները

1. Ֆինանսական համակարգի հաշտարարը պետք է ունենա բարձրագույն կրթություն, բարձր հեղինակություն և առնվազն հինգ տարվա աշխատանքային փորձ:

2. Ֆինանսական համակարգի հաշտարար չի կարող լինել այն անձը, որը վերջին երեք տարիների ընթացքում աշխատել է որևէ Կազմակերպությունում:

3. Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, լինել որևէ կուսակցության ղեկավար մարմնի անդամ, զբաղեցնել պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից, և պետք է զերծ մնա իր անկախությունը և անաչառությունը կասկածի տակ դնող գործողություններից:

4. Ֆինանսական համակարգի հաշտարար չի կարող լինել այն անձը, որը՝

1) դատարանի վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով ~~հանված կամ մարված չէ~~մարված կամ վերացված չէ.

3) դատավճռով զրկվել է իրավաբանական կամ ֆինանսական ոլորտներում պաշտոն զբաղեցնելու կամ գործունեությամբ զբաղվելու իրավունքից:

Հոդված 29. Խորհրդի անդամները

1. Խորհրդի անդամ չի կարող լինել այն անձը, որը՝

1) դատարանի վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով ~~հանված կամ մարված չէ~~մարված կամ վերացված չէ.

3) օրենքով սահմանված կարգով զրկվել է իրավաբանական կամ ֆինանսական ոլորտում պաշտոն զբաղեցնելու կամ գործունեությամբ զբաղվելու իրավունքից:

2. Խորհրդի անդամը չի կարող լինել որևէ կուսակցության ղեկավար մարմնի անդամ:

3. Խորհրդի անդամներն աշխատում են հասարակական հիմունքներով:

4. Խորհրդի անդամներն իրավունք ունեն հատուցում ստանալու այն ծախսերի դիմաց, որոնք կապված են Խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 7. Արտաքին ազդարարումը և արտաքին ազդարարման վարույթը

1. Արտաքին ազդարարումն սկսվում է ազդարարի կողմից իրավասու մարմին հաղորդում ներկայացնելով:

2. Եթե հաղորդումը վերաբերում է իրավասու մարմնի աշխատակցին, ապա ազդարարումը կատարվում է իրավասու մարմնի ղեկավարին: Եթե հաղորդումը վերաբերում է իրավասու մարմնի ղեկավարին, ապա այն ներկայացվում է իրավասու մարմնի վերադաս մարմնի ղեկավարին: Իրավասու մարմնի վերադաս մարմնի բացակայության դեպքում հաղորդումը ներկայացվում է համապատասխան մարմնի հանրային ծառայողի էթիկայի հանձնաժողով (առկայության դեպքում), իսկ բարձրաստիճան պաշտոնատար անձանց դեպքում՝ կոռուպցիայի կանխարգելման ոլորտում լիազոր մարմին:

3. Իրավասու մարմինը՝

1) ապահովում է հաղորդման անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվառումը.

2) իր իրավասության շրջանակներում հիմքերի առկայության դեպքում հաղորդման հաշվառման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում հարուցում է վարույթ.

3) ապահովում է վարույթի գաղտնիությունը.

4) իր իրավասությունների շրջանակներում միջոցներ է ձեռնարկում հաղորդման իսկությունն ստուգելու նպատակով.

5) իր իրավասության շրջանակներում հաղորդման իսկությունն ստուգելիս հանցագործության առերևույթ հատկանիշներ հայտնաբերելու դեպքում անհապաղ այդ մասին հայտնում է Հայաստանի Հանրապետության դատախազություն.

6) իր իրավասության շրջանակներում միջոցներ է ձեռնարկում ազդարարներին վնասակար գործողություններից պաշտպանելու, ինչպես նաև վնասակար գործողությունների և դրանց հետևանքների վերացման նպատակով.

7) ապահովում է ազդարարի անձնական տվյալների չբացահայտումը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

8) ազդարարի պահանջով ապահովում է վարույթի ընթացքի և ձեռնարկված միջոցների մասին տեղեկությունների տրամադրումը.

9) հնարավորություն է տալիս ազդարարին ներկայացնելու պարզաբանումներ, փաստաթղթեր և դիմումներ:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված պարտականությունների չկատարումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

5. Եթե հաղորդումը ներկայացվել է ոչ իրավասու մարմին, ապա հաղորդում ստացած մարմինը եռօրյա ժամկետում այն վերահասցեագրում է իրավասու մարմնին՝ ծանուցելով ազդարարին:

6. Արտաքին ազդարարում չի համարվում ~~քրեական հետապնդման~~ նախաքննություն իրականացնող մարմինների կողմից հանցագործության վերաբերյալ հաղորդումների քննարկման և լուծման՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընթացակարգը:

7. Եթե ազդարարը համաձայնություն չի տվել իր անձնական տվյալները բացահայտելու վերաբերյալ, ապա մարմինը, որն ստացել է ազդարարի ներկայացրած հաղորդումը և իրավասու չէ վարույթ հարուցելու, պարտավոր է մինչև հաղորդումն ըստ ենթակայության ուղարկելը ստանալ ազդարարի նախնական համաձայնությունը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Ազդարարի համաձայնության բացակայության դեպքում հաղորդումն ուղարկվում է ըստ ենթակայության՝ առանց ազդարարի անձնական տվյալները բացահայտելու:

8. Արտաքին ազդարարման հիման վրա հարուցված վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Հարուցված վարույթի արդյունքում ընդունվում է համապատասխան ակտ, որի մասին ակտի ընդունման պահից եռօրյա ժամկետում ազդարարը ծանուցվում է:

9. Եթե վարույթի ընթացքում պարզվում է, որ ազդարարը սույն օրենքով նախատեսված կարգով հաղորդում ներկայացնելիս գործել է անբարեխղճորեն, ապա իրավասու մարմինը դադարեցնում է ազդարարին պաշտպանության տրամադրումը, որի մասին որոշման կայացման պահից եռօրյա ժամկետում ծանուցում է ազդարարին:

10. Եթե ազդարարի ոչ բարեխիղճ գործողությունը պարունակում է հանցագործության հատկանիշներ, ապա իրավասու մարմինը պարտավոր է անհապաղ այդ մասին հայտնել Հայաստանի Հանրապետության դատախազություն:

Հոդված 10. Ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց պաշտպանության իրավունքը

1. Ազդարարը, սույն օրենքին համապատասխան, ունի պաշտպանության իրավունք: Ազդարար ֆիզիկական անձին տրվող պաշտպանությունը տարածվում է ազդարար

իրավաբանական անձի վրա այնքանով, որքանով այդ պաշտպանությունն իր էությամբ կիրառելի է դրա նկատմամբ:

2. Ազդարարն ունի իր անձնական տվյալների գաղտնիության, վնասակար գործողություններից և դրանց հետևանքներից պաշտպանության իրավունք:

3. Ազդարարը, որ հաղորդում է ներկայացրել, կամ որի հաղորդումն ուղարկվել է ~~քրեական հետապնդման~~ նախաքննություն իրականացնող մարմիններ, ենթակա է պաշտպանության Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

4. Յուրաքանչյուր պայմանագիր կամ պայմանագրի դրույթ, որը միտված է անձին ազդարարման կամ ազդարարի պաշտպանության իրավունքից զրկելուն կամ այն սահմանափակելուն, առ ոչինչ է:

5. Ազդարարի հետ փոխկապակցված անձն ազդարարի պաշտպանության միջոցներից օգտվելու իրավունք ունի, եթե ողջամտորեն հիմնավորում է, որ ազդարարի հետ ունեցած կապի պատճառով իր դեմ կարող են կատարվել վնասակար գործողություններ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 12. Պետական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք չունեցող անձը

1. Պետական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք չունի այն անձը, որը՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատական կարգով զրկվել է պետական (քաղաքացիական) ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

3) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը պետական ծառայության պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանը և լիազորությունների իրականացմանը: Այդ հիվանդությունների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

4) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով ~~հանված կամ մարված չէ~~ մարված կամ վերացված չէ.

5) խուսափել է ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 23. Ընկերության ղեկավարների նկատմամբ պահանջները

1. Ընկերության ղեկավար կարող է լինել ցանկացած գործունակ անձ, որը՝

1) համապատասխանում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշներին.

2) դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով ~~չմարված կամ չհանված~~ չմարված կամ չվերացված դատվածություն.

3) դատավճռով զրկված չէ ֆինանսական, ապահովագրական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից.

4) ճանաչված չէ սնանկ և չունի չմարված (չներված) պարտավորություններ.

5) անցյալում չի կատարել այնպիսի արարք, որը Կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ուղեցույցով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի կարծիքով հիմք է տալիս եզրակացնելու, որ տվյալ անձը՝ որպես Ընկերության ղեկավար, չի կարող պատշաճորեն կառավարել Ընկերության գործունեության համապատասխան ոլորտը, կամ նրա գործողությունները կարող են հանգեցնել Ընկերության սնանկացմանը կամ ֆինանսական վիճակի վատթարացմանը կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկմանը.

6) ~~քրեական գործով ներգրավված չէ որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ~~որի նկատմամբ հարուցված չէ քրեական հետապնդում:

2. Ընկերության խորհրդի նախագահը կամ խորհրդի անդամը չի կարող միաժամանակ լինել տվյալ Ընկերության գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատակից, ինչպես նաև այլ Ընկերության խորհրդի նախագահ կամ անդամ, գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատակից, բացառությամբ այն դեպքերի, երբ երկու Ընկերություններից մեկը մյուսի դուստր կամ մայր ընկերությունն է:

3. Ընկերության գործադիր տնօրենը, գործադիր տնօրենի տեղակալը, գլխավոր հաշվապահը, տնօրինության անդամները, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը կամ անդամները չեն կարող միևնույն Ընկերությունում զբաղեցնել այլ պաշտոն կամ այլ Ընկերությունում լինել ղեկավար կամ այլ աշխատակից: Բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքներից, սույն մասում նշված անձինք կարող են վճարովի այլ աշխատանք կատարել միայն խորհրդի համաձայնությամբ:

4. Պատասխանատու ակտուարը տվյալ Ընկերությունում կամ այլ ֆինանսական կազմակերպությունում, բացի ակտուարի պաշտոնից, չի կարող զբաղեցնել այլ պաշտոն: Ընկերությունում պատասխանատու ակտուար աշխատող անձն այլ Ընկերությունում

պատասխանատու ակտուարի գործառույթներ կարող է իրականացնել միայն այն Ընկերության խորհրդի համաձայնության առկայության դեպքում, որում (որոնցում) նա հանդիսանում է պատասխանատու ակտուար:

Հոդված 88. Ապահովագրական միջնորդը

1. Ապահովագրական միջնորդներ են ապահովագրական բրոքերները և ապահովագրական գործակալները:

2. Ապահովագրական բրոքերը, ապահովագրական բրոքերային գործունեությունից բացի, այլ գործունեություն չի կարող իրականացնել, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Ապահովագրական գործակալը չի կարող միաժամանակ իրականացնել ապահովագրական բրոքերի գործունեություն:

3. Սույն օրենքի իմաստով՝ ապահովագրական գործակալի գործունեություն իրականացնող անձն ապահովագրական գործակալ չի համարվում, եթե ապահովագրության պայմանագիրը, որի կնքմանը միջնորդել է անձը, բավարարում է սույն մասով նախատեսված բոլոր պահանջները միաժամանակ՝

1) ապահովագրության պայմանագիրը կյանքի ապահովագրության կամ պատասխանատվության ապահովագրության պայմանագիր չէ.

2) ապահովագրական գործակալի գործունեությունը տվյալ անձի հիմնական գործունեությունը չէ.

3) ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրավճարների տարեկան գումարը չի գերազանցում Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված գումարը, և այդ պայմանագրի գործողության ժամկետը (ներառյալ՝ պայմանագրի գործողության ժամկետի երկարաձգման ժամկետը) չի գերազանցում 5 տարին.

4) ապահովագրության պայմանագիրը կցված է մատակարարի կողմից վաճառվող և (կամ) առաջարկվող ապրանքներին կամ ծառայություններին, և ապահովագրության պայմանագրով ապահովագրվում է՝

ա. վաճառվող և (կամ) առաջարկվող ապրանքների կորստի կամ վնասվածքի ռիսկը, կամ՝

բ. տվյալ մատակարարի կողմից վաճառված ճանապարհորդական ծառայությանը կցված բեռի կորստի կամ վնասվածքի կամ ճանապարհորդության հետ կապված այլ ռիսկ, նույնիսկ եթե ապահովագրվել է կյանքը կամ պատասխանատվության ռիսկը, եթե դրանք կապված են ճանապարհորդության հիմնական ռիսկին:

4. Սպառողների շահերի պաշտպանության, ինչպես նաև ապահովագրական խարդախությունների կանխարգելման նպատակով Կենտրոնական բանկը կարող է նորմատիվ իրավական ակտերով պահանջներ սահմանել ապահովագրական միջնորդների կողմից ապահովագրության պայմանագրերի կնքման, փոփոխության, պայմանագրերի սպասարկման գործընթացի, ինչպես նաև ապահովագրական

միջնորդների գործունեության, վարվելակերպի կանոնների և ներքին հսկողության համակարգերի նկատմամբ:

5. Ապահովագրական միջնորդների նշանակալից մասնակիցները չեն կարող լինել դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն ունեցող անձինք, եթե այդ դատվածությունն օրենքով սահմանված կարգով ~~հանված կամ մարված չէ~~մարված կամ վերացված չէ: Ապահովագրական միջնորդները Կենտրոնական բանկ են ներկայացնում սույն մասով նախատեսված տեղեկությունների վերաբերյալ հաշվետվություն՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով և ժամկետներում:

Հոդված 90. Ապահովագրական միջնորդների պատասխանատու անձանց նկատմամբ պահանջները

1. Ապահովագրական բրոքերի պատասխանատու անձինք են համարվում գործադիր տնօրենը կամ վարչության նախագահը, վարչության անդամները, գլխավոր հաշվապահը, գործադիր տնօրենի տեղակալը, ինչպես նաև ապահովագրական բրոքերի հետ աշխատանքային կամ այլ քաղաքացիական իրավահարաբերությունների մեջ գտնվող բրոքերի գործառնություններ իրականացնող ֆիզիկական անձը:

2. Ապահովագրական գործակալի պատասխանատու անձինք են համարվում խորհրդի այն անդամը (անդամները) և գործադիր մարմնի կամ դրան համարժեք այլ մարմնի անդամը, որոնք պատասխանատու են ապահովագրական գործակալի գործառնությունների համար, և ապահովագրական գործակալի գործառնություններն իրականացնող ֆիզիկական անձը:

3. Ապահովագրական միջնորդի պատասխանատու անձ կարող է լինել այն անձը, որը՝

1) համապատասխանում է Կենտրոնական բանկի սահմանած մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշներին.

2) դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար չունի օրենքով սահմանված կարգով ~~չմարված կամ չհանված~~ չմարված կամ չվերացված դատվածություն.

3) դատավճռով զրկված չէ ֆինանսական, ապահովագրական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից.

4) ճանաչված չէ սնանկ և չունի չմարված (չներված) պարտավորություններ.

5) անցյալում չի կատարել այնպիսի արարք, որը Կենտրոնական բանկի հաստատած ուղեցույցով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի կարծիքով հիմք է տալիս կասկածելու, որ տվյալ անձը, որպես ապահովագրական միջնորդի պատասխանատու անձ, չի կարող պատշաճորեն կառավարել ապահովագրական միջնորդի գործունեության համապատասխան ոլորտը, կամ նրա գործողությունները կարող են հանգեցնել

Ընկերության սնանկացմանը, ֆինանսական վիճակի վատթարացմանը կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկմանը.

6) ~~քրեական գործով ներգրավված չէ որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ:~~որի նկատմամբ հարուցված չէ քրեական հետապնդում:

4. Ապահովագրական միջնորդի պատասխանատու անձին ներկայացվող մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշները, ինչպես նաև մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը սահմանում է Կենտրոնական բանկը:

5. Մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումն ապահովելու համար ապահովագրական միջնորդը պարտավոր է կնքել պատասխանատվության ապահովագրության պայմանագիր հետևյալ պայմաններով՝

1) ապահովագրական պատահարը պետք է ներառի մասնագիտական անփութության հետևանքով ապահովագրական միջնորդի կողմից ապահովադրին, ապահովագրված անձին կամ շահառուին հասցրած ուղղակի դրամական վնասները.

2) ապահովագրական պատասխանատվության չափը ինչպես մեկ ապահովագրական պատահարի համար, այնպես էլ ամբողջ պայմանագրի համար պետք է առնվազն հավասար լինի Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված նվազագույն սահմանաչափերին.

3) ապահովագրության պայմանագրով ապահովագրական պատահար է համարվում ապահովագրական միջնորդի միջնորդությամբ կնքված ապահովագրական պայմանագրի գործողության ընթացքում միջնորդի մեղքով առաջացած վնասը:

6. Այն միջնորդը, որն իրականացնում է սույն օրենքի 3-րդ հոդվածի 12-րդ կետի «գ» ենթակետի գործառնությունները, պարտավոր է ապահովել Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կանոնադրական և ընդհանուր կապիտալի նվազագույն սահմանաչափը՝ ապահովագրական բրոքերի և իրավաբանական անձ հանդիսացող ապահովագրական գործակալի դեպքում կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող որևէ առևտրային բանկում բացված հաշվին մշտապես ապահովել առնվազն Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված նվազագույն երաշխիքային գումարի առկայություն՝ ֆիզիկական անձ ապահովագրական գործակալի դեպքում:

7. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դրույթները չեն տարածվում այն ապահովագրական գործակալների վրա, որոնց մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումն ապահովելու պատասխանատվությունն ստանձնել է Ընկերությունը:

8. Ապահովագրական բրոքերի պատասխանատու անձը չի կարող միաժամանակ մատուցել ապահովագրական գործակալի ծառայություններ կամ հանդիսանալ ապահովագրական գործակալի պատասխանատու անձ: Ապահովագրական գործակալի պատասխանատու անձը չի կարող միաժամանակ մատուցել ապահովագրական բրոքերի ծառայություններ կամ հանդիսանալ ապահովագրական բրոքերի պատասխանատու անձ:

Հոդված 97. Ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզավորումը

1. Ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզիա կարող է ստանալ միայն առևտրային կազմակերպությունը:

2. Ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզիա ստանալու համար առևտրային կազմակերպությունը Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևով, բովանդակությամբ ու կարգով Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերն ու տեղեկությունները՝

1) միջնորդագիր.

2) սույն օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջներին համապատասխանող ապահովագրական բրոքերային կազմակերպության պատասխանատվությունն ապահովագրող պայմանագիրը.

3) առևտրային կազմակերպության մասնակիցների մասին տեղեկատվություն.

4) առևտրային կազմակերպության իրավասու մարմնի որոշումը՝ ապահովագրական բրոքերային կազմակերպության պատասխանատու անձինք նշանակելու մասին.

5) ապահովագրական բրոքերային կազմակերպության պատասխանատու անձանց գործունեության մասին տեղեկանք, դրանց վավերացված ստորագրությունների նմուշները.

6) ապահովագրական բրոքերային կազմակերպության գործունեության կանոնակարգերը.

7) ապահովագրական բրոքերի գործունեության տարածքը Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված չափանիշներին համապատասխանելու մասին հայտարարություն.

8) ապահովագրական բրոքերային կազմակերպության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնացություն ունեցող անձանց, նրանց անհատական տվյալների, դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն չունենալու (եթե այդ դատվածությունը ~~հանված կամ մարված է~~ մարված կամ վերացված է օրենքով սահմանված կարգով) մասին գրավոր հայտարարություն) և մասնակցության չափի մասին տեղեկություններ.

9) պետական տուրքի վճարման անդորրագիրը.

10) Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանած այլ փաստաթղթեր:

Հոդված 99. Ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզիայի մերժման հիմքերը

Կենտրոնական բանկի խորհուրդը մերժում է ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզիայի տրամադրումը, եթե՝

1) միջնորդագիր ներկայացրած առևտրային կազմակերպությունը չի բավարարում սույն օրենքով և այլ իրավական ակտերով ապահովագրական բրոքերային գործունեության համար սահմանված պահանջները.

2) միջնորդագիր ներկայացրած առևտրային կազմակերպության ղեկավարները չեն համապատասխանում սույն օրենքով կամ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին.

3) միջնորդագիր ներկայացրած առևտրային կազմակերպությունը չի ներկայացրել սույն օրենքի 97-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերը, կամ ներկայացվել են կեղծ կամ թերի փաստաթղթեր, կամ ներկայացված փաստաթղթերում արտացոլվել են անարժանահավատ կամ կեղծ տվյալներ.

4) միջնորդագիր ներկայացրած առևտրային կազմակերպության կանոնադրության կամ գործունեության կանոնակարգերի դրույթները ճշգրիտ և բավականաչափ հստակ չեն, ինչի պատճառով կարող են վտանգվել ապահովադիրների, ապահովագրված անձանց կամ շահառուների շահերը.

4.1) նշանակալից մասնակիցներից թեկուզ մեկն ունի դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն, և այդ դատվածությունն օրենքով սահմանված ~~կարգով հանված կամ մարված չէ~~մարված կամ վերացված չէ.

5) միջնորդագիր ներկայացրած առևտրային կազմակերպությունը չունի Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված չափանիշներին համապատասխանող անհրաժեշտ տարածք և տեխնիկական հագեցվածություն:

Հոդված 103. Ապահովագրական գործակալի հաշվառման հայտը

1. Ապահովագրական գործակալների ռեգիստրում հաշվառվելու կամ ռեգիստրում առկա տեղեկատվությունը փոփոխելու համար անձը կամ ապահովագրական գործակալը Կենտրոնական բանկի նորմատիվ ակտերով սահմանված կարգով, ձևով և բովանդակությամբ ներկայացնում է հետևյալ փաստաթղթերն ու տեղեկությունները՝

1) իրավաբանական անձ դիմումատուի համար՝

ա. հաշվառման դիմում,

բ. իրավաբանական անձ դիմումատուի կանոնադրությունը, կանոնադրության փոփոխությունները կամ կանոնադրությունը նոր խմբագրությամբ,

գ. իրավաբանական անձ դիմումատուի ղեկավար անձանց ցանկը, որը ներառում է նաև նրանց վերաբերյալ տվյալներ,

դ. Ընկերության հետ ապահովագրական գործակալի գործառնություններ իրականացնելու պայմանագրի պատճենը, որում նշված պետք է լինեն, թե սույն օրենքի 3-րդ հոդվածի 12-րդ կետով սահմանված որ գործառնություններն են թույլատրված ապահովագրական գործակալին, և որ ապահովագրության դասերի գծով, իսկ սույն

օրենքի 3-րդ հոդվածի 12-րդ կետի «գ» ենթակետով սահմանված գործառնության դեպքում նաև գործակալին ապահովագրավճարների հավաքագրման և հատուցումների փոխանցման իրականացման՝ Ընկերության կողմից թույլատրված չափերը,

ե. ղեկավար անձանց մասնագիտական որակավորման վկայականը,

զ. սույն օրենքի 90-րդ հոդվածի 5-7-րդ մասերով նախատեսված պահանջների առկայությունը վկայող փաստաթղթեր,

է. ղեկավար անձանց հայտարարությունը սույն օրենքի 90-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքերի բացակայության մասին,

է.1. Իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց, նրանց անհատական տվյալների և մասնակցության չափի մասին տեղեկություններ, նշանակալից մասնակիցների կողմից դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն չունենալու (կամ այդ դատվածությունն օրենքով սահմանված կարգով ~~հանված կամ մարված~~մարված կամ վերացված լինելու) մասին գրավոր հայտարարություն,

ը. Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ տեղեկատվություն.

2) անհատ ձեռնարկատեր հայտատուի համար՝

ա. հաշվառման դիմում,

բ. անհատ ձեռնարկատեր գործակալի հետ աշխատանքային հարաբերություններում գտնվող ղեկավար անձանց վերաբերյալ տվյալներ,

գ. Ընկերության հետ անհատ ձեռնարկատեր գործակալի գործառնություններ իրականացնելու պայմանագրի պատճենը, որում նշված պետք է լինեն, թե սույն օրենքի 3-րդ հոդվածի 12-րդ կետով սահմանված որ գործառնություններն են թույլատրված ապահովագրական գործակալին որ ապահովագրության դասերի գծով, իսկ 12-րդ կետի «գ» ենթակետով սահմանված գործառնության դեպքում նաև գործակալին ապահովագրավճարների հավաքագրման և հատուցումների փոխանցման իրականացման՝ Ընկերության կողմից թույլատրված չափերը,

դ. անհատ ձեռնարկատեր գործակալի հետ աշխատանքային հարաբերություններում գտնվող ղեկավար անձանց մասնագիտական որակավորման վկայականները,

ե. անհատ ձեռնարկատիրոջ և անհատ ձեռնարկատեր գործակալի հետ աշխատանքային հարաբերություններում գտնվող ղեկավար անձանց՝ սույն օրենքի 90-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքերի բացակայության մասին հայտարարությունը,

զ. սույն օրենքի 90-րդ հոդվածի 5-7-րդ մասերով նախատեսված պահանջների առկայությունը վկայող փաստաթղթեր,

է. Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ տեղեկատվություն:

Հոդված 105. Ապահովագրական գործակալի հաշվառման մերժման հիմքերը

Կենտրոնական բանկը մերժում է ապահովագրական գործակալների ռեգիստրում ապահովագրական գործակալի հաշվառումը, եթե՝

1) դիմումատուն չի բավարարում սույն օրենքով և այլ իրավական ակտերով ապահովագրական գործակալի գործունեության համար սահմանված պահանջները.

2) դիմումատուի ղեկավար անձինք չեն համապատասխանում սույն օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին.

2.1) դիմումատուի նշանակալից մասնակիցներից թեկուզ մեկն ունի դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն, և այդ դատվածությունն օրենքով սահմանված կարգով ~~հանված կամ մարված չէ~~մարված կամ վերացված չէ.

3) դիմումատուն չի ներկայացրել սույն օրենքի 103-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերը կամ ներկայացվել են կեղծ կամ թերի փաստաթղթեր, կամ ներկայացված փաստաթղթերում արտացոլվել են անարժանահավատ կամ կեղծ տվյալներ:

Հոդված 112. Ապահովագրական գաղտնիքի տրամադրումը ~~քրեական հետապնդում~~ նախաքննություն իրականացնող մարմիններին

1. Ապահովագրողը, վերաապահովագրողը, ապահովագրական միջնորդություն իրականացնող անձն և Բյուրոն, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններին սույն օրենքին համապատասխան տրամադրում են միայն դատարանի որոշման հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան:

2. Ապահովագրողը, վերաապահովագրողը, ապահովագրական միջնորդություն իրականացնող անձը և Բյուրոն պարտավոր են դատարանի որոշումն ստանալուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, քրեական հետապնդում իրականացնող մարմնին կամ նրա կողմից լիազորված անձին տրամադրել տվյալ որոշմամբ պահանջվող տեղեկությունները և փաստաթղթերը՝ փակ և փակվող մասում գործադիր մարմնի ղեկավարի կամ նրան փոխարինող անձի կողմից ստորագրված ծրարում: Ապահովագրողին, վերաապահովագրողին, ապահովագրական միջնորդություն իրականացնող անձին և Բյուրոյին արգելվում է իր հաճախորդներին (Բյուրոյի դեպքում՝ իր անդամների հաճախորդներին) տեղեկացնել նրանց մասին ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններին տրամադրելու փաստի մասին:

3. Ապահովագրողի, վերաապահովագրողի, ապահովագրական միջնորդություն իրականացնող անձի և Բյուրոյի ղեկավարը կամ ծառայողը չի կարող հարցաքննվել հաճախորդի վերաբերյալ ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունների

վերաբերյալ, բացառությամբ սույն հոդվածում և սույն օրենքի 113-րդ, 114-րդ և 119-րդ հոդվածներով սահմանված դեպքերի ու կարգի:

Հոդված 113. Ապահովագրական գաղտնիքի տրամադրումը դատարանին

1. Ապահովագրողը, վերաապահովագրողը, ապահովագրական միջնորդություն իրականացնող անձը քաղաքացիական գործերով և ~~քրեական գործերի~~ քրեական վարույթներով կողմ հանդիսացող իր հաճախորդների և Բյուրոն՝ իր անդամների հաճախորդների վերաբերյալ ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունները սույն օրենքին համապատասխան տրամադրում են միայն դատարանի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության կամ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով ընդունված որոշման հիման վրա:

2. Ապահովագրողը, վերաապահովագրողը, ապահովագրական միջնորդություն իրականացնող անձը և Բյուրոն պարտավոր են դատարանի որոշումը, վճիռը կամ դատավճիռն ստանալու պահից՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, դատարանին կամ դատարանի լիազորած անձին տրամադրել տվյալ որոշմամբ, վճռով կամ դատավճռով պահանջվող տեղեկությունները և փաստաթղթերը՝ փակ և փակվող մասում գործադիր մարմնի ղեկավարի կամ նրան փոխարինող անձի կողմից ստորագրված ծրարում: Այդ ընթացքում ապահովագրողը, վերաապահովագրողը, ապահովագրական միջնորդություն իրականացնող անձը և Բյուրոն ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով ընդունված դատարանի որոշումը կամ վճիռն ստանալու և ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրելու բանկի պարտավորության մասին իր հաճախորդին տեղեկացնելու համար:

Ապահովագրողին, վերաապահովագրողին, ապահովագրական միջնորդություն իրականացնող անձին արգելվում է իր հաճախորդներին և Բյուրոյին՝ իր անդամների հաճախորդներին, տեղեկացնել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով ընդունված դատարանի որոշման կամ դատավճռի ստացման և նրա մասին ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունները դատարանի կամ դատարանի լիազորած անձին տրամադրելու փաստի վերաբերյալ:

Հոդված 120. Հանցագործության մասին հայտնելու պարտականությունը

1. Ապահովագրողների, վերաապահովագրողների, ապահովագրական միջնորդություն իրականացնող անձանց և Բյուրոյի ղեկավարները պարտավոր են

~~քրեական հետապնդում~~ նախաքննություն իրականացնող մարմնին հայտնել իրենց հաստատապես հայտնի նախապատրաստվող ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների մասին: Ընդ որում, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունները և փաստաթղթերը ~~քրեական հետապնդում~~ նախաքննություն իրականացնող մարմնին տրամադրվում են սույն օրենքի 112-րդ և 113-րդ հոդվածներին համապատասխան: Ապահովագրողների, վերաապահովագրողների, ապահովագրական միջնորդություն իրականացնող անձանց աշխատակիցները պարտավոր են իրենց հաստատապես հայտնի նախապատրաստվող կամ արդեն իսկ կատարված հանցագործության վերաբերյալ նման տեղեկությունների մասին գրավոր հայտնել ապահովագրողների, վերաապահովագրողների, ապահովագրական միջնորդություն իրականացնող անձանց ղեկավարներին կամ նրանցից թեկուզ մեկին:

2. Սույն օրենքի որևէ դրույթ չի կարող մեկնաբանվել որպես հանցագործության հետքերը և հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցները պարտակելու կամ հանցագործության մասին չհայտնելու մեջ մեղավոր անձանց Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված պատասխանատվությունից ազատող:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ԱՊԱՀՈՎՎԱԾ ՀԻՊՈՏԵԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 11. Ապահովման միջոցների հսկողի նշանակումը

1. Ապահովման միջոցների հսկողն անկախ ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որն իրականացնում է հիպոտեկային պարտատոմսերում ներդրողների շահերի պաշտպանությանն ուղղված հատուկ գործառույթներ: Ապահովման միջոցների հսկողին նշանակում է թողարկողը:

2. Ցանկացած թողարկող պետք է ունենա հսկող: Հսկողը թողարկողի հետ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա իրականացնում է ապահովման միջոցների ռեգիստրի նկատմամբ հսկողություն, հետևում է ապահովման միջոցների՝ սույն օրենքով սահմանված համարժեքությանը հիպոտեկային պարտատոմսերի գծով պարտավորություններին: Ապահովման միջոցների հսկողը կարող է հսկել միևնույն թողարկողի մեկ կամ մեկից ավելի ապահովման միջոցների զամբյուղները:

3. Հսկող կարող է լինել՝

1) ֆիզիկական անձը, որը՝

ա. չունի դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատվածություն,

բ. դատարանի կողմից զրկված չէ ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ զբաղեցնելու իրավունքից,

գ. սնանկ չի ճանաչվել, ինչպես նաև չունի ժամկետանց պարտավորություններ,

դ. որակավորումը կամ մասնագիտական գիտելիքները համապատասխանում են Կենտրոնական բանկի սահմանած որակավորման և (կամ) մասնագիտական համապատասխանության չափանիշներին, և որին Կենտրոնական բանկի կողմից տրվել է որակավորման վկայական,

ե. ~~չի գտնվում ժամանակավոր անազատության մեջ, կամ նրա նկատմամբ հայտարարված չէ հետախուզում,~~չի կրում ազատությունից զրկելու հետ կապված պատիժ, կամ նրա նկատմամբ հայտարարված չէ հետախուզում,

զ. փոխկապակցված չէ թողարկողի հետ: Հսկողի և թողարկողի փոխկապվածությունը որոշվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածին համապատասխան.

2) իրավաբանական անձը, որը՝

ա. ունի սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետում նշված չափանիշները բավարարող առնվազն մեկ աշխատակից և

բ. համապատասխանում է սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի «գ» և «զ» ենթակետերում նշված պահանջներին:

4. Կենտրոնական բանկը նորմատիվ իրավական ակտերով սահմանում է հսկողի որակավորման կարգը և մասնագիտական համապատասխանության չափանիշները:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 35. Բյուրոյի գործադիր տնօրենը

1. Բյուրոյի գործադիր տնօրենն իրականացնում է Բյուրոյի ընթացիկ գործունեության ղեկավարումը:

2. Բյուրոյի գործադիր տնօրենը նշանակվում է խորհրդի կողմից և հաշվետու է նրան: Գործադիր տնօրեն կարող է լինել այն անձը, որն ունի բարձրագույն կրթություն, բարձր հեղինակություն, առնվազն երեք տարվա աշխատանքային փորձ ապահովագրական ոլորտի ղեկավար պաշտոնում և փոխկապակցված չէ որևէ ապահովագրական ընկերության հետ: Բյուրոյի գործադիր տնօրենը պետք է համապատասխանի ապահովագրական ընկերության գործադիր տնօրենի համար օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված մասնագիտական համապատասխանության, որակավորման և Կենտրոնական բանկում գրանցման պահանջներին:

3. Գործադիր տնօրենը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, լինել որևէ կուսակցության ղեկավար մարմնի անդամ, զբաղեցնել պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

4. Գործադիր տնօրեն չի կարող լինել այն անձը, որը՝

1) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել է դիտավորությամբ կատարված հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով ~~հանված կամ մարված չէ~~մարված կամ վերացված.

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով զրկվել է ֆինանսական ոլորտում պաշտոն զբաղեցնելու կամ գործունեությամբ զբաղվելու իրավունքից:

5. Գործադիր տնօրենը՝

1) ապահովում է Բյուրոյի կառավարման մարմինների որոշումների կատարումը և Բյուրոյի բնականոն գործունեությունը.

2) որոշում է ընդունում փորձաքննություն (ներառյալ՝ նաև լրացուցիչ և կրկնակի) նշանակելու մասին.

3) ապահովում է Երաշխավորման ֆոնդի կառավարումը, մասնավորապես ապահովում է Երաշխավորման ֆոնդի միջոցների հավաքագրումը, բնականոն գործունեությունը, որոշում է ընդունում Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին սույն օրենքի 49-րդ հոդվածով նախատեսված հատուցումները և սույն օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված բժշկական օգնության հետ կապված ծախսերի վճարումները կատարելու կամ հատուցումը (վճարումը) մերժելու մասին և կազմակերպում է հատուցումների (վճարման) գործընթացը.

4) սահմանված կարգով կազմակերպում է ԱՊՊԱ պայմանագրերի հաշվառումը.

5) ապահովում է Տեղեկատվական համակարգի բնականոն գործունեությունը, կազմակերպում է միասնական Տեղեկատվական համակարգի վարումը, ապահովում է Տեղեկատվական համակարգ տեղեկությունների ժամանակին և ամբողջությամբ մուտքագրումը, ինչպես նաև երաշխավորում է ապահովագրական, բանկային, առևտրային և օրենքով պաշտպանվող այլ գաղտնիք կազմող տեղեկությունների գաղտնիությունը.

6) խորհրդի սահմանած կարգով և պարբերականությամբ խորհրդին հաշվետվություններ է ներկայացնում Երաշխավորման ֆոնդի և Տեղեկատվական համակարգի գործունեության, ինչպես նաև Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին սույն օրենքի 49-րդ հոդվածով նախատեսված հատուցումները և սույն օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված բժշկական օգնության հետ կապված ծախսերի վճարումները կատարելու կամ հատուցումը (վճարումը) մերժելու մասին որոշումների ընդունման վերաբերյալ.

7) օրենքով սահմանված դեպքերում տուժած անձանց պահանջով տրամադրում է Տեղեկատվական համակարգում առկա տեղեկությունները վնաս պատճառած

ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվությունն ապահովագրած ապահովագրական ընկերության անվանման և գտնվելու վայրի մասին.

8) կողմերի համաձայնությամբ քննում է Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունների միջև, ինչպես նաև Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունների, ապահովադիրների, ապահովագրված անձանց և տուժողների միջև ծագած վեճերը. դրանց արդյունքում կայացված որոշումները կրում են խորհրդատվական բնույթ և կողմերի համար պարտադիր չեն: Սույն կետով նախատեսված հարցով գործադիր տնօրենի կողմից որոշում չկայացվելու դեպքում այդ հարցի քննությունն իրականացնում է Բյուրոյի խորհուրդը.

9) իրականացնում է սույն օրենքով, ինչպես նաև Բյուրոյի կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

6. Այն հարցերը, որոնք օրենքով կամ Բյուրոյի կանոնադրությամբ վերապահված չեն ժողովի, խորհրդի, ներքին աուդիտի, գլխավոր հաշվապահի կամ պատասխանատու ակտուարի իրավասությանը, իրականացնում է գործադիր տնօրենը: Գործադիր տնօրենի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել Բյուրոյի կառավարման այլ մարմինների կամ այլ անձանց, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

7. Բյուրոյի գործադիր տնօրենի նշանակման և լիազորությունների դադարեցման, ինչպես նաև նրա կողմից որոշումների ընդունման կարգը սահմանվում է Բյուրոյի կանոնադրությամբ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 101. Ծառայողական տեղեկությունների տրամադրումը դատարանի որոշմամբ

1. Ներդրումային ծառայություններ մատուցող անձը քաղաքացիական գործերով պահանջվող ծառայողական տեղեկությունները տրամադրում է միայն դատարանի կողմից՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ընդունված որոշման հիման վրա, որի մեջ պետք է նշվեն նաև անձը և նրան վերաբերող այն տեղեկությունները, որոնք ենթակա են տրամադրման:

2. ~~Քրեական գործերով~~ Քրեական վարույթներով ծառայողական տեղեկությունների տրամադրումը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով:

2.1. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում ծառայողական տեղեկությունները տրամադրվում են իրավասու մարմնին՝ դատարանի որոշման հիման վրա:

3. Արգելվում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված որոշման հիման վրա այդ որոշման մեջ չնշված այլ անձանց վերաբերյալ ծառայողական տեղեկությունների տրամադրումը

Հոդված 102.1. Կենտրոնական բանկի միջազգային համագործակցությունը և համագործակցությունն անձանց հետ

1. Կենտրոնական բանկն արժեթղթերի շուկայի ոլորտում իր խնդիրների իրագործման և օրենքով սահմանված իրավասությունների իրականացման նպատակով համագործակցում է օտարերկրյա պետության իրավասու մարմինների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ միջազգային պայմանագրեր կամ համագործակցության պայմանագրեր կնքելու միջոցով, իսկ դրանց բացակայության դեպքում՝ միջազգային պրակտիկայում ընդունված կարգով:

2. Կենտրոնական բանկը սեփական նախաձեռնությամբ կամ հարցման հիման վրա օրենքով սահմանված կարգով փոխանակում է տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր), այդ թվում՝ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող (բացառությամբ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական և ծառայողական գաղտնիքի) տեղեկություններ օտարերկրյա պետության իրավասու մարմինների հետ, որոնք միջազգային պայմանագրից կամ համագործակցության պայմանագրից բխող պարտականությունների հիման վրա ապահովում են տեղեկությունների համարժեք գաղտնիություն և այդ տեղեկություններն օգտագործում են արժեթղթերի շուկայի կարգավորման, վերահսկողության, արժեթղթերի շուկայում չարաշահումների դեմ պայքարի կամ արժեթղթերում ներդրողների շահերի պաշտպանության բնագավառում միջազգային համագործակցության նպատակով:

3. Կենտրոնական բանկը կարող է բացահայտել օտարերկրյա պետության իրավասու մարմիններից գաղտնիք պարունակող հարցումների ստացման փաստը, ինչպես նաև տեղեկությունների ստացման փաստը և դրանց բովանդակությունը՝

1) սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված նպատակներով կամ

2) համապատասխան հարցումն ուղարկած, տեղեկատվությունը հայցած օտարերկրյա իրավասու մարմնի համաձայնությամբ:

4. Կենտրոնական բանկը կարող է օտարերկրյա պետության իրավասու մարմիններին տրամադրել օրենքով սահմանված գաղտնիք պարունակող տեղեկություններ (բացառությամբ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական և ծառայողական գաղտնիքի), պայմանով, որ պետք է կիրառվեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գաղտնիության պահպանման պահանջները, եթե դրանք

ավելի խիստ են, քան համագործակցող օտարերկրյա պետության օրենքներով և իրավական ակտերով սահմանված գաղտնիության պահպանման պահանջները:

5. Կենտրոնական բանկը մերժում է օտարերկրյա պետության իրավասու մարմիններին տեղեկատվության տրամադրումը, եթե՝

1) դա կարող է բացասաբար ազդել Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության, անվտանգության ու հասարակական կարգի վրա.

2) նման տվյալները հանդիսանում են պետական կամ ծառայողական գաղտնիք.

3) դա կհանգեցնի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պահանջների խախտմանը.

4) Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով այն չի օգտագործվելու սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված նպատակներով.

5) հարցման մեջ նշված անձի նկատմամբ նույն հանգամանքներով Հայաստանի Հանրապետությունում ~~քրեական գործ~~ քրեական հետապնդում է հարուցվել, կամ եթե նույն անձը նույն հանգամանքներով ենթարկվել է պատասխանատվության Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, քանի դեռ հարցում կատարող օտարերկրյա պետության իրավասու մարմինը չի հավաստիացրել, որ խնդրարկվող տեղեկատվությունն անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության օրենքով կիրառված պատասխանատվության միջոցներից այլ պատասխանատվություն կիրառելու համար:

6. Տեղեկատվության տրամադրման մերժման դեպքում Կենտրոնական բանկը պետք է այդ մասին գրավոր կարգով տեղեկացնի հարցում կատարող մարմնին և ներկայացնի մերժման հիմքերը:

7. Տեղեկատվության փոխանակում իրականացնելու նպատակով Կենտրոնական բանկը կարող է համագործակցության պայմանագրեր կամ այլ համաձայնագրեր կնքել օտարերկրյա պետության իրավասու մարմինների հետ:

8. Արժեթղթերի շուկայի չարաշահումները կանխելու կամ քննելու, ինչպես նաև միջազգային պայմանագրով կամ համագործակցության պայմանագրով նախատեսված դեպքերում փոխանակման ենթակա տեղեկությունները (այդ թվում՝ փաստաթղթերի և(կամ) դրանց պատճենները) ձեռք բերելու անհրաժեշտության դեպքում Կենտրոնական բանկը համագործակցում է ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ, որոնք Կենտրոնական բանկի գրավոր դիմումի հիման վրա տրամադրում են անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 7[1]. Արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր), արտարժույթի առուվաճառքի սակարկություններ

իրականացնող անձինք և նրանց գործունեությունը

1. ***(մասն ուժը կորցրել է 25.03.20 ՀՕ-182-Ն)***

2. Արտարժույթի առուվաճառք իրականացնող անձը (փոխանակման կետը) իրավաբանական անձ է, որը Կենտրոնական բանկի տված լիցենզիայի հիման վրա կարող է իրականացնել արտարժույթի առուվաճառքի կանխիկ գործառնություններ միայն ֆիզիկական անձանց հետ՝ Հայաստանի Հանրապետության դրամով:

Խանութում արտարժույթի առուվաճառքի լիցենզիա կարող է ստանալ միայն տվյալ խանութում առուվաճառք իրականացնող իրավաբանական անձը, առևտրի կենտրոնում՝ միայն առևտրի իրականացման կազմակերպիչը, իսկ հյուրանոցում՝ հյուրանոցային ծառայություններ մատուցող իրավաբանական անձը:

«Արտարժույթի առուվաճառքի գործունեություն իրականացնող անձ», «փոխանակման կետ» կամ արտարժույթի առուվաճառքի գործունեություն իրականացնողներին արտահայտող այլ բառերը, «արտարժույթի առուվաճառք», «տարադրամի փոխանակում» կամ արտարժույթի առուվաճառքը կամ փոխանակումը արտահայտող այլ բառերը կամ դրանց թարգմանություններն ու ածանցյալները, ինչպես նաև արտարժույթի առուվաճառքի փոխարժեքներն արտացոլող ցուցատախտակները կարող են օգտագործել միայն արտարժույթի առուվաճառք իրականացնելու լիցենզիա ունեցող անձինք և դրանց մասնաճյուղերը:

Արգելվում է արտարժույթի առուվաճառքի գործունեության լիցենզիա չունեցող անձանց կողմից «արտարժույթի առուվաճառքի գործունեություն իրականացնող անձ», «փոխանակման կետ» կամ արտարժույթի առուվաճառքի գործունեություն իրականացնողներին արտահայտող այլ բառերի, «արտարժույթի առուվաճառք», «տարադրամի փոխանակում» կամ արտարժույթի առուվաճառքը կամ փոխանակումը արտահայտող այլ բառերի կամ դրանց թարգմանությունների ու ածանցյալների, ինչպես նաև արտարժույթի առուվաճառքի փոխարժեքներն արտացոլող ցուցատախտակների օգտագործումը:

3. Արտարժույթի առուվաճառքի սակարկություններ իրականացնող անձն իրավաբանական անձ է, որը կազմակերպում է արտարժույթի հրապարակային սակարկություններ:

4. Արտարժույթի առուվաճառքի սակարկություններ իրականացնող անձանց գործունեության կանոնները, կարգը և պայմանները սահմանում է Կենտրոնական բանկը:

5. Արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպության կամ դրա լիցենզիա ստանալու համար դիմած կազմակերպությունների 10 և ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակիցները չպետք է ունենան դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն, և այդ դատվածությունն օրենքով սահմանված կարգով ~~հանված կամ մարված չէ~~մարված կամ վերացված չէ, իսկ

արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպության կամ դրա լիցենզիա ստանալու համար դիմած կազմակերպության ղեկավարները չպետք է ունենան դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն, եթե այդ դատվածությունն օրենքով սահմանված կարգով~~ հանված կամ մարված չէ~~մարված կամ վերացված չէ: Արտարժույթի առուվաճառք իրականացնող (փոխանակման կետեր) կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն մասով նախատեսված տեղեկությունների վերաբերյալ հաշվետվություն՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով և ժամկետներում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 11. Բժշկական գաղտնիքը և դրա մշակմանը ներկայացվող պահանջները

1. Բժշկական գաղտնիք չեն համարվում ապանձնավորված տվյալները, որոնց միջոցով հնարավոր չի լինի ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը: Ապանձնավորված տվյալները կարող են օգտագործել գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնողները:

2. Բժշկական գաղտնիք համարվող տվյալների փոխանցում է հանդիսանում այդ տվյալները որոշակի կամ անորոշ շրջանակի անձանց փոխանցելուն կամ դրանց հետ ծանոթացնելուն ուղղված որևէ գործողություն (անգործություն), այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներով գաղտնիք համարվող տվյալները հրապարակելը, տեղեկատվական հաղորդակցման ցանցերում տեղադրելը կամ այլ եղանակով այլ անձի մատչելի դարձնելը:

3. Բժշկական գաղտնիք համարվող տվյալները կարող են փոխանցվել պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնությամբ, բացառությամբ օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերի: Բժշկական գաղտնիք համարվող տվյալների փոխանցման վերաբերյալ պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության ձևը սահմանում է լիազոր մարմինը:

4. Բժշկական գաղտնիք համարվող տվյալների տիրապետող անձը պարտավոր է պահպանել (չփոխանցել) բժշկական գաղտնիքը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Օրենքի խախտմամբ բժշկական գաղտնիքի փոխանցում համարվող գործողություն կատարելը առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

5. Բժշկական գաղտնիք համարվող տվյալները, առանց պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության, Կառավարության սահմանած կարգով կարող են փոխանցվել միայն՝

1) բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներին՝ պացիենտին բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու նպատակով, եթե առանց այդ տվյալների հնարավոր չէ պացիենտին տրամադրել բժշկական օգնություն և սպասարկում.

2) լիազոր մարմնին՝

ա. ներառյալ՝ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջության բնագավառում գործունեություն իրականացնող պետական կազմակերպություններին՝ վարակիչ, ինչպես նաև քիմիական, ճառագայթային, կենսաբանական գործոններով պայմանավորված հիվանդացության դեպքերում, և լիազոր մարմնի սահմանած առանձին ոչ վարակիչ հիվանդությունների կամ զանգվածային թունավորումների կամ դրանց սպառնալիքի դեպքերում,

բ. լիազոր մարմնին, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին կնքված պայմանագրերով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքի և որակի ստուգման աշխատանքներ իրականացնելիս.

3) օրինական ուժի մեջ մտած դատական ակտով.

4) ռազմաբժշկական փորձաքննություն անցկացնելու նպատակով զինվորական կոմիսարիատների կամ բժշկական կամ ռազմաբժշկական հանձնաժողովների հարցման դեպքում.

5) բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող պետական իրավասու մարմնին՝ բժշկասոցիալական փորձաքննություն և վերափորձաքննություն իրականացնելու նպատակով.

6) անգիտակից պացիենտի կոնտակտային անձին կամ ընտանիքի չափահաս անդամներին: Սույն կետի իմաստով՝ ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, օրինական ներկայացուցիչը, ամուսինը, ամուսնու ծնողները, որդեգրողը, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, այդ թվում՝ որդեգրվածը.

7) սույն օրենքով նախատեսված դեպքերում գիտական կամ գիտատեխնիկական գործունեության իրականացնողներին.

8) ոստիկանությանը՝ բժշկական հաստատություն տեղափոխված այն պացիենտի (ինչպես նաև մահացած անձի) մասին, որի վերաբերյալ առկա են կասկածներ, որ առողջության վատթարացումը կամ մահը հետևանք է բռնի, ներառյալ՝ հակաօրինական գործողությունների.

9) ~~հետաքննության մարմնին (օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին),~~ քննիչին, դատախազին, դատարանին՝ իրենց վարույթային պարտականությունները կատարելիս, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանին՝ ~~պատճառաբանված որոշման հիման վրա~~օրենքով սահմանված կարգով ներկայացված հարցումների հիման վրա.

10) արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկին, արդարադատության նախարարության քրեակատարողական և պրոբացիայի ծառայություններին՝ օրենքով նախատեսված դեպքերում.

11) լիազոր մարմնին (ներառյալ՝ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջության բնագավառում գործունեություն իրականացնող պետական կազմակերպություններին) և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներին՝ սույն օրենքով նախատեսված՝ առողջապահության բնագավառի տվյալների բազաների վարման նպատակով.

12) Կառավարության լիազորած՝ առողջապահության բնագավառի վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին՝ առողջապահության, աշխատողների առողջության պահպանման նորմերի կիրառման նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնելիս:

6. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները բժշկական գաղտնիք համարվող տվյալները (այդ թվում՝ էլեկտրոնային փաստաթղթերը) պահպանում են Կառավարության սահմանած պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկով սահմանված՝ առողջապահության ոլորտի փաստաթղթերի պահպանության համար սահմանված ժամկետներով:

Հոդված 28. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների պարտականությունները և պատասխանատվությունը

1. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները պարտավոր են՝

1) յուրաքանչյուր մարդու ցուցաբերել շտապ և անհետաձգելի բժշկական օգնություն՝ անկախ այդ օգնության դիմաց վարձատրությունը երաշխավորող հիմքերի և այլ հանգամանքների առկայությունից.

2) ապահովել ցուցաբերվող բժշկական օգնության և սպասարկման տվյալ տեսակի, մեթոդների, ծավալների համապատասխանությունը լիազոր մարմնի սահմանած չափանիշներին.

3) յուրաքանչյուրին ապահովել նրան տրամադրվելիք բժշկական օգնության և սպասարկման տվյալ տեսակի, մեթոդների, ծավալների, տրամադրման կարգի և պայմանների մասին տեղեկատվության տրամադրումը.

4) յուրաքանչյուր մարդու պահանջով կամ նրա իրազեկ գրավոր համաձայնությամբ բժշկական օգնության համար այլ վճարողի տրամադրել անհրաժեշտ տվյալներ ցուցաբերած բժշկական օգնության և սպասարկման տեսակի, մեթոդի, ծավալների և քանակի ու դրան համարժեք կատարված ծախսերի մասին.

5) պահպանել բժշկական գաղտնիքը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.

6) ներկայացնել վիճակագրական և այլ տեղեկություններ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով.

7) ապահովել հոգատար և հարգալից վերաբերմունք պացիենտների նկատմամբ.

8) ունենալ պաշտոնական ինտերնետային կայքէջ, որն առնվազն պետք է պարունակի տեղեկատվություն ծառայությունների, գնացուցակի, բուժանձնակազմի վերաբերյալ, ինչպես նաև ապահովի հետադարձ կապի հնարավորություն մասնագիտական ծառայություններ մատուցողների հետ: Սույն պարտականությունը չի տարածվում ռազմաբժշկական հաստատությունների, գյուղական համայնքների բժշկական ամբուլատորիա կամ առողջության կենտրոն հանդիսացող կամ ստոմատոլոգիական կաբինետի կամ մասնագիտական ոչ ավելի, քան երկու կաբինետի ձևով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների նկատմամբ.

9) ՇՄՀ հավաստագիր չունեցող անձի (բացառությամբ առաջին անգամ մասնագիտական գործունեություն իրականացնող՝ համապատասխան մասնագիտական կրթություն, որակավորում և մասնագիտացում ունեցող անձի) հետ դադարեցնել աշխատանքային հարաբերությունները՝ օրենսդրությամբ սահմանված կարգով.

10) ապահովել ընթացակարգերով, պացիենտի վարման գործելակարգերով սահմանված պահանջների կատարումը.

11) ստացիոնար պայմաններում պացիենտին բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելուց առաջ, իսկ անգիտակից կամ կյանքին սպառնացող վիճակում գտնվող պացիենտներին գիտակցության գալուց կամ կյանքին սպառնացող վտանգի վերացումից հետո իրազեկել պացիենտի իրավունքների (ներառյալ՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի) և պարտականությունների մասին: Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստացողներին կամ նրա օրինական ներկայացուցչին նրանց համար մատչելի ձևաչափով տրամադրվում է իրազեկման թերթիկ, իսկ վճարովի կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստացողների հետ կնքվում են վճարովի ծառայությունների մասին պայմանագրեր.

12) պացիենտի իրավունքների և պարտականությունների իրազեկման թերթիկի, ինչպես նաև վճարովի ծառայությունների մասին պայմանագրի օրինակելի ձևերը և դրանց տրամադրման կարգը հաստատում է լիազոր մարմինը.

13) Կառավարության սահմանած կարգով հաղորդում ներկայացնել Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, եթե բժշկական հաստատություն տեղափոխված պացիենտն անգիտակից է կամ ունի գլխի վնասվածք կամ ուղեղի ցնցում կամ 3-րդ կամ 4-րդ աստիճանի այրվածք կամ կտրող-ծակող գործիքով առաջացրած վերք կամ թափանցող վերք կամ հրազենային վնասվածք կամ պոլիտրավմա կամ թունավորում, կամ պարզված տեղեկությունները հիմք են տալիս ենթադրելու, որ պացիենտի առողջությանը կամ կյանքին պատճառված վնասը բռնի կամ հակաօրինական գործողությունների կամ ինքնավնասման կամ ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանք է, ինչպես նաև այն դեպքերում, երբ բժշկական հաստատություն է տեղափոխվել դիակ.

14) բժշկական գաղտնիք համարվող տվյալները, առանց անձի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության, տրամադրել ~~հետաքննության մարմնին (օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին),~~ քննիչին, դատախազին, դատարանին, Մարդու իրավունքների պաշտպանին՝ ~~գրավոր հարցումների պատճառաբանված որոշումների հիման վրա~~օրենքով սահմանված կարգով ներկայացված հարցումների հիման վրա:

2. Իրենց մեղքով մարդու առողջությանը հասցրած վնասի համար, ինչպես նաև բժշկական գաղտնիք պարունակող տեղեկություններ փոխանցելու դեպքում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները, ապօրինի բժշկական գործունեությամբ զբաղվող անձինք պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

Հոդված 40. Դատաբժշկական փորձաքննությունը

1. Դատաբժշկական փորձաքննությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քրեական կամ քաղաքացիական կամ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված փորձաքննություն նշանակելու մասին որոշման առկայության դեպքում:

2. Դատաբժշկական փորձաքննությունն իրականացվում է հետևյալ ձևերից մեկով կամ մի քանիսով.

1) դիահերձում.

2) կենդանի անձի հետազոտում.

3) մարդու օրգանիզմի կենսաբանական ծագման նմուշների և հետքերի քիմիական կամ կենսաքիմիական կամ կենսաբանական կամ հյուսվածաբանական կամ մոլեկուլյար գենետիկական կամ բժշկաքրեագիտական կամ բջջաբանական հետազոտություններ (այդ թվում՝ մարդու օրգանիզմ ներթափանցած արտաքին նյութերի).

4) կենդանի կամ մահացած անձի բժշկական փաստաթղթերի հետազոտում:

3. Դիահերձման ձևով դատաբժշկական փորձաքննություններն իրականացվում են՝

1) մահացածի ինքնությունը հաստատված չլինելու դեպքում.

2) հիվանդանոցային բժշկական հաստատությունում կլինիկական ախտորոշումը պարզված չլինելու դեպքում՝ անկախ տարիքից և հիվանդանոցային բժշկական հաստատությունում գտնվելու տևողությունից.

3) բուժաշխատողի պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ներկայացված հաղորդում ներկայացնելու կամ իրենց լիազորություններն իրականացնելիս ~~հետաքննության մարմնի,~~ քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերման դեպքում՝ դրանց օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացք տալու դեպքերում.

4) բռնի մահվան կասկածի դեպքում՝ անկախ պայմաններից և մահը վրա հասնելու պահից, ինչպես նաև բռնի մահվան դեպքում՝ սպանության կամ ինքնասպանության կամ

դժբախտ պատահարի դեպքում (մեխանիկական վնասվածքներ, մեխանիկական շնչահեղձություն, թունավորումներ, էլեկտրահարություն, ծայրահեղ բարձր կամ ցածր ջերմաստիճան, ճառագայթային էներգիայի ազդեցություն, բարձր և ցածր մթնոլորտային ճնշում և այլ դեպքեր).

5) օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ՝ հղիության արհեստական ընդհատման (աբորտի) դեպքում.

6) հանկարծամահության դեպքում՝ անկախ տարիքից, մահը վրա հասնելու հանգամանքից և վայրից.

7) հղիների, ծննդկանների, ծննդաբերողների մահվան (մայրական մահացության) դեպքերում.

8) ազատազրկման վայրերում գտնվող անձանց մահվան դեպքում.

9) հոգեբուժական հաստատություններում բուժվող պացիենտների մահվան դեպքում.

10) երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում, տուն-ինտերնատներում գտնվող անձանց մահվան դեպքում.

11) բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում հսկողության տակ չգտնվող անձանց մահվան դեպքում.

12) շտապօգնության ավտոմեքենայի մեջ կամ բժշկական հաստատություն տեղափոխելու ճանապարհին արձանագրված մահերի դեպքում:

4. Դատաբժշկական փորձաքննության իրականացման կարգը սահմանում է Կառավարությունը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 28. Որոշումների կատարման ընթացակարգը

1. Գործերի քննության արդյունքում ընդունված որոշումները կատարվում են սույն հոդվածով սահմանված ընթացակարգով:

2. Գործի քննության արդյունքում ընդունված որոշման մեկ օրինակը եռօրյա ժամկետում հանձնվում կամ ուղարկվում է ստուգվող սուբյեկտին:

Որոշումը հանձնվում է ստորագրությամբ կամ ուղարկվում է փոստով՝ համապատասխան նշում կատարելով գործերի քննության գրանցամատյանում:

3. Սույն օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի՝

1) «ա» կետով սահմանված որոշումը ստուգվող սուբյեկտին տրամադրվում է սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով.

2) «բ» կետով սահմանված որոշումը ստուգվող սուբյեկտին օրենքով սահմանված կարգով տրամադրելուց հետո վարչական տուգանքի ենթարկված անձը որոշմամբ

սահմանված ժամկետում որոշում կայացնող պաշտոնատար անձին ներկայացնում է վճարման անդորրագիրը, որը կցվում է որոշման մյուս օրինակին.

3) «գ» կետով սահմանված որոշումն ընդունելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, ստուգման նյութերը ներկայացվում են ~~հետաքննություն~~ նախաքննություն իրականացնող համապատասխան մարմիններին՝ միաժամանակ որոշման մեկ օրինակը սույն հոդվածով սահմանված կարգով տրամադրելով ստուգվող սուբյեկտին.

4) «դ» կետով սահմանված որոշումը ստուգվող սուբյեկտին սույն հոդվածով սահմանված կարգով տրամադրելուց հետո իրավախախտում թույլ տված սուբյեկտը տասնհինգօրյա ժամկետում որոշում կայացնող պաշտոնատար անձին ներկայացնում է վճարման անդորրագիրը, որը կցվում է որոշման մյուս օրինակին: Սահմանված ժամկետում անդորրագիրը չներկայացնելու կամ շրջակա միջավայրին հասցված վնասի փոխհատուցման վերաբերյալ որոշումը չկատարելու դեպքում գանձումն իրականացվում է դատական կարգով.

5) «ե» կետով սահմանված որոշումը ստուգվող սուբյեկտին, բացառությամբ ֆիզիկական անձանց (ներառյալ՝ օտարերկրյա) ու անհատ ձեռնարկատերերի, տրամադրվում է սույն հոդվածով սահմանված կարգով, իսկ որոշման կատարումն իրականացվում է սույն օրենքի 29-րդ հոդվածով սահմանված ընթացակարգով:

Ֆիզիկական անձանց (ներառյալ՝ օտարերկրյա) ու անհատ ձեռնարկատերերին «ե» կետով սահմանված որոշման վերաբերյալ ստուգման պահին տեղեկացնում է ստուգող պաշտոնատար անձը.

6) «զ» կետով սահմանված որոշման վերաբերյալ ստուգվող սուբյեկտը տեղեկացվում է ստուգման պահին.

7) «է» կետով սահմանված որոշումը կայացնելուց հետո բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարը հնգօրյա ժամկետում միջնորդագիր է ներկայացնում համապատասխան պայմանագրեր կնքող, լիցենզավորող կամ թույլտվություն տվող իրավասու պետական կառավարման մարմնի ղեկավարին՝ պայմանագրի, թույլտվության, լիցենզիայի և արտոնագրի գործողությունը կասեցնելու կամ ուժը կորցրած ճանաչելու մասին:

Բնապահպանության ոլորտում լիազորված պետական մարմնի կնքած պայմանագրերի, թույլտվությունների, լիցենզիաների և արտոնագրերի գործողությունը կասեցնելու կամ ուժը կորցրած ճանաչելու որոշման վերաբերյալ միջնորդագիրը համապատասխան պաշտոնատար անձին ներկայացնում է բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարը որոշումը կայացնելու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում:

Միջնորդագրին կցվում է խախտման վերաբերյալ արձանագրության պատճենը: Պայմանագիր կնքող կամ թույլտվություն տվող կամ լիցենզավորող կամ արտոնագիր տվող մարմնի ղեկավարը կամ պաշտոնատար անձը միջնորդագիրն ստանալուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում, քննում է այն և ընդունում որոշում պայմանագրի, թույլտվության կամ լիցենզիայի գործողությունը դադարեցնելու կամ ուժը կորցրած ճանաչելու կամ միջնորդագիրը մերժելու մասին և հնգօրյա ժամկետում տեղյակ է պահում միջնորդագիրը ներկայացնող պաշտոնատար անձին.

8) սույն օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի «ը» կետով սահմանված որոշումը կարող է ընդունվել սույն օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի «բ», «գ», «դ», «ե» և «է» կետերով սահմանված որոշումների ընդունման հետ միաժամանակ:

4. Գործերի քննության արդյունքների և սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված որոշումների, դրանց ներկայացման ու կատարման ընթացքի վերաբերյալ տվյալները գրառվում են գործերի քննության գրանցամատյանում, որի ձևն ու լրացման կարգը սահմանում է բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 6. Գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորման չափանիշները

1. Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ.

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

3) որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով ~~հանված կամ մարված է~~մարված կամ վերացված է.

4) որոնց վերաբերյալ հայտը ներկայացվելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում առկա է օրենքով սահմանված կարգով կայացված անբողոքարկելի վարչական ակտ՝ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար.

5) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության

համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, հրապարակում է լիազորված մարմինը: Գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի [հետ]՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

3. Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

4. Չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

5. Հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր տվյալների համապատասխանության ապահովման շրջանակում մասնակիցը, անհրաժեշտության դեպքում կարող է հիմնվել այլ անձանց ֆինանսական և տեխնիկական միջոցների վրա՝ համապատասխան պայմանագրով սահմանված իրավահարաբերության հիման վրա:

6. Հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 10. Սահմանափակումների պետական գրանցումը

1. Սահմանափակումների պետական գրանցման համար հիմք են՝

1) դատական ակտերը, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների, ~~քրեական հետապնդում իրականացնող~~ նախաքննություն իրականացնող մարմինների, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում այլ պետական մարմինների (այսուհետ՝ սահմանափակում կիրառող իրավասու մարմիններ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կայացված որոշումները.

2) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ սահմանափակում կիրառող վարչական մարմիններ) իրավական ակտերը, որոնց հիման վրա օրենքով նախատեսված դեպքերում և կարգով կարող է սահմանափակվել քաղաքացիների կամ իրավաբանական անձանց գույքային իրավունքների իրականացումը.

3) օրենքի ուժով կիրառվող սահմանափակումների դեպքում՝ այն փաստաթղթերը, որոնք հաստատում են սահմանափակման կիրառման համար անհրաժեշտ և բավարար պայմանների առկայությունը, եթե օրենքով նման պահանջ նախատեսված է.

4) գույքի նկատմամբ իրավունքների իրականացման սահմանափակման՝ օրենքին չհակասող պայման պարունակող, գործարքների կնքման վերաբերյալ փաստաթղթերը:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերով սահմանափակումների պետական գրանցումն իրականացվում է սահմանափակումը կիրառող մարմնի կողմից ներկայացված դատական ակտի կամ որոշման հիման վրա, 4-րդ կետով սահմանված հիմքերով սահմանափակման պետական գրանցումը կատարվում է սահմանափակման պայման պարունակող գործարքի կողմերից մեկի ներկայացմամբ, իսկ 3-րդ կետով սահմանված հիմքերով սահմանափակման պետական գրանցումը կարող է կատարվել նաև առանց համապատասխան դիմումի առկայության, եթե սահմանափակումը սահմանող օրենքով կամ դրա կիրարկումն ապահովող իրավական ակտով այդ պարտականությունը դրված է գրանցող մարմնի վրա:

3. Սահմանափակման գրանցման համար ներկայացված փաստաթղթերի բովանդակության հիման վրա սահմանափակման կիրառման օբյեկտը կամ սուբյեկտը միանշանակ որոշելու անհնարինության դեպքում գրանցող մարմինը փաստաթղթերը

ստանալուց հետո՝ 1-օրյա ժամկետում, կասեցնում է սահմանափակման պետական գրանցումը, այդ մասին գրավոր ծանուցելով սահմանափակումը կիրառած իրավասու մարմնին՝ նշելով կասեցման պատճառները:

Սույն մասով նախատեսված հիմքերով սահմանափակման գրանցումը չի կարող կասեցվել, եթե ներկայացված փաստաթղթերում նշված են առնվազն՝

1) սահմանափակման օբյեկտ հանդիսացող անշարժ գույքի միավորի կադաստրային ծածկագիրը կամ հասցեն կամ գույքի գտնվելու վայրը հստակ բնութագրող տեղեկություններ և գույքի նկատմամբ գրանցված իրավունք ունեցող որևէ անձի անունը (անվանումը).

2) ֆիզիկական անձի իրավունքների սահմանափակման դեպքում՝ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, ծննդյան ամսաթիվը և անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը կամ սոցիալական ապահովության քարտի համարը.

3) իրավաբանական անձի իրավունքների սահմանափակման դեպքում՝ իրավաբանական անձի լրիվ անվանումը:

4. Սահմանափակման պետական գրանցման կասեցված վարույթը վերսկսվում է սահմանափակումը կիրառող մարմնի կողմից սահմանափակման օբյեկտը կամ սուբյեկտը որոշելու համար լրացուցիչ տեղեկություններ ներկայացվելու դեպքում:

5. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված հիմքերով գրանցված սահմանափակումը կարող է բացառել դրան հակասող իրավունքի պետական գրանցումը միայն օրենքով նախատեսված դեպքերում:

6. Սահմանափակման գրանցումը կասեցնելու հիմքերի բացակայության դեպքում գրանցող մարմինն իրականացնում է սահմանափակման պետական գրանցում՝ այդ մասին իրազեկելով սահմանափակումը կիրառած մարմնին կամ գործարքի համապատասխան կողմին:

7. Սույն հոդվածով սահմանված կարգով գրանցված սահմանափակումների դադարման պետական գրանցումն իրականացվում է սահմանափակումը վերացնելու (դադարեցնելու) մասին համապատասխան փաստաթղթի հիման վրա, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև այնպիսի հանգամանքների երևան գալով, որոնք օրենքի հիման վրա դադարեցնում են կիրառված սահմանափակման գործողությունը:

Հոդված 11. Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տեղեկատվության մատչելիությունը

1. Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տեղեկատվության ազատությունը սահմանափակվում է սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված տեղեկատվության, ինչպես նաև պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների սահմանափակ մատչելիությամբ:

2. Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի՝ պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունները տրամադրվում են

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

3. Պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդի տեղեկատվության մաս կազմող՝ անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տեղեկությունները տրամադրվում են Կառավարության սահմանած կարգով:

4. Պետական գրանցման գործառույթի իրականացման արդյունքում գրանցում իրականացնող մարմնի կողմից ստեղծված, հավաքագրված, այդ թվում՝ գրանցման համար ներկայացված, ինչպես նաև անշարժ գույքի գույքագրման փաստաթղթերում առկա տեղեկատվությունից՝ անկախ դրա նյութական կրիչի (այսուհետ՝ իրավական կադաստրի տեղեկատվություն), ֆիզիկական անձանց անձնական և ընտանեկան, ինչպես նաև իրավաբանական անձանց առևտրային գաղտնիք չեն համարվում՝

1) գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման միասնական մատյանում գրառման ենթակա տեղեկությունները, բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով սահմանված դեպքերի.

2) հողամասի և շինությունների կադաստրային արժեքի (զուտ եկամտի) և դրա հաշվարկման համար հիմք հանդիսացող տվյալները:

Սույն մասով սահմանված տեղեկությունները տրամադրվում են փաստաթղթերից քաղվածքների ձևով:

5. Իրավական կադաստրի տեղեկատվության կազմից սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված տեղեկատվությունը փաստաթղթերից պատճենների ձևով, ինչպես նաև սույն հոդվածի 4-րդ մասով չնախատեսված այլ տեղեկատվությունը փաստաթղթերից քաղվածքների կամ պատճենների ձևով տրամադրվում են՝

1) հարցվող անշարժ գույքի միավորի կամ օբյեկտի նկատմամբ հարցման պահին սեփականատեր հանդիսացող անձանց կամ նրանց համաձայնությամբ՝ այլ անձանց.

2) հարցվող անշարժ գույքի միավորի կամ օբյեկտի նկատմամբ գրանցված այլ իրավունքի սուբյեկտներին կամ այդ անշարժ գույքի նկատմամբ իրավունքներ ունեցող կամ ունեցած անձանց, այդ թվում՝ իրավատերերին՝ իրենց իրավունքների և սահմանափակումների ծագման, փոխանցման, փոփոխման կամ դադարման վերաբերյալ, կամ նրանց համաձայնությամբ՝ այլ անձանց.

3) ֆիզիկական կամ իրավաբանական անձին պատկանող, այդ թվում՝ տվյալ անձի անվամբ գրանցված կամ գույքագրված գույքի կամ գույքային իրավունքների կազմի կամ որևէ տարածքում նման գույքի կամ գույքային իրավունքների առկայության վերաբերյալ տեղեկությունները՝ այդ իրավունքների իրավատերերին, գրանցված իրավունքների դեպքում՝ գրանցված իրավունքների սուբյեկտներին կամ նրանց համաձայնությամբ՝ այլ անձանց.

4) գործարքների կամ դրանց առանձին պայմանների վերաբերյալ տեղեկությունները՝ այդ գործարքների կողմերին կամ նրանց համաձայնությամբ՝ այլ անձանց:

Սույն մասով նախատեսված համաձայնությունը կարող է տրվել նոտարի վավերացրած կամ հասարակ գրավոր ձևով:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված տեղեկություններն առանց համապատասխան համաձայնության Հայաստանի Հանրապետության օրենքով իրենց

վերապահված լիազորությունների իրականացման համար կարող են տրամադրվել Հանրապետության նախագահի աշխատակազմին, վարչապետի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմին և պատգամավորներին, Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատին, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններին, դատարաններին, Հայաստանի Հանրապետության դատախազությանը և վարույթի հանրային այլ մասնակիցների, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ~~քրեական հետապնդման այլ~~ մարմինների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին, Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմիններին, ինքնավար մարմիններին և անկախ պետական մարմիններին, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին, Հայաստանի Հանրապետությունում արտոնագրված փաստաբաններին, Հայաստանի Հանրապետության նոտարներին, սնանկության գործով կառավարչին, որոնց կողմից այդ տեղեկությունների հրապարակման կամ դրանց գաղտնիության պահպանման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են օրենքով:

7. Քաղաքացիությունը դադարեցրած կամ հատուկ կացության կարգավիճակի ժամկետը լրացած կամ այդ կարգավիճակից զրկված անձանց վերաբերյալ տեղեկատվության հիման վրա անշարժ գույքի պետական ռեգիստրը պարզում է այդ անձանց սեփականության իրավունքով պատկանող հողի առկայությունը և այդ մասին ոչ ուշ, քան մեկշաբաթյա ժամկետում տեղեկացնում է համապատասխան համայնքի ղեկավարին, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետին:

Հոդված 32. Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տեղեկատվության տրամադրումը

1. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տվյալների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով դիմելու գրանցումն իրականացնող լիազոր մարմնին:

2. Տեղեկատվության տրամադրման դիմումը պետք է բովանդակի սույն օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 2-7-րդ կետերով սահմանված տվյալները, ինչպես նաև հայցվող տեղեկատվության էությունը որոշելու համար անհրաժեշտ տվյալները:

Դիմումին կից ներկայացվում է տեղեկատվության տրամադրման վճարի մուծման անդորրագիրը, բացառությամբ սույն օրենքի 75-րդ հոդվածով նախատեսված տեղեկատվության անվճար տրամադրման դեպքերի:

3. Գրավոր դիմումը ներկայացվում է կամ փոստով առաքվում է սպասարկման գրասենյակ, ընդ որում՝ այն կարող է ներկայացվել ցանկացած սպասարկման գրասենյակ՝ անկախ անշարժ գույքի գտնվելու վայրից:

Տեղեկատվության տրամադրման դիմումը կարող է ներկայացվել նաև էլեկտրոնային եղանակով՝ անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջի էլեկտրոնային համակարգի միջոցով:

3.1. Սույն օրենքի 11-րդ հոդվածի հիմքերով սահմանափակված մատչելիությամբ կամ սույն օրենքի 75-րդ հոդվածով նախատեսված անվճար հայցվող տեղեկատվության դեպքերում դիմողի ինքնությունն ստուգվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված անձը հաստատող փաստաթղթի բնօրինակի կամ սահմանված կարգով հաստատված պատճենի հիման վրա, առանց որի դիմում չի ընդունվում:

3.2. Էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումով սույն օրենքի 11-րդ հոդվածի հիմքերով սահմանափակված մատչելիությամբ կամ սույն օրենքի 75-րդ հոդվածով նախատեսված անվճար հայցվող տեղեկատվության դեպքերում դիմումը պետք է հաստատված լինի դիմումը ներկայացնող անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ կամ Կառավարության կողմից սահմանված անձի նույնականացման այլ եղանակով:

3.3. Փոստային կապի միջոցով ներկայացված տեղեկատվության տրամադրման դիմումով կարող են պահանջվել միայն սույն օրենքի 11-րդ հոդվածի հիմքերով սահմանափակված մատչելիությամբ տեղեկություն չպարունակող և վճարովի հիմունքներով հայցվող տեղեկություններ:

3.4. Հայաստանի Հանրապետության տարածքում փոստային կապի միջոցով անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տվյալների մասին տեղեկատվության տրամադրման կարգը սահմանում է Կառավարությունը:

4. Գրանցումն իրականացնող լիազոր մարմինը մերժում է տեղեկատվության տրամադրումը միայն այն դեպքերում, եթե՝

1) տեղեկատվությունը պարունակում է օրենքով սահմանված կարգով պետական, ծառայողական գաղտնիք համարվող տեղեկություն, և տեղեկատվությունը հայցող անձը չունի դրան առնչվելու համապատասխան իրավունք.

2) տեղեկատվությունը պարունակում է սույն օրենքի 11-րդ հոդվածի հիմքերով և կարգով սահմանափակված մատչելիությամբ տեղեկություն, և տեղեկատվությունը հայցող անձը չունի այն ստանալու իրավունք:

5. Գույքի և դրա նկատմամբ իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է գրանցման մատյանից և կադաստրային գործից անշարժ գույքի միավորի վերաբերյալ տեղեկությունների միասնական քաղվածքի (այսուհետ՝ միասնական տեղեկանք), գույքի նկատմամբ գրանցված առանձին իրավունքների, սահմանափակումների կամ անշարժ գույքի պետական միասնական կադաստրում առկա գույքի վերաբերյալ այլ տեղեկությունների, ինչպես նաև կադաստրային գործի առանձին փաստաթղթերի քաղվածքների կամ պատճենների ձևով:

6. Միասնական տեղեկանք ում պետք է նշվեն դրա տրամադրման պահին տվյալ անշարժ գույքի միավորի նկատմամբ գրանցման մատյանում գրանցված բոլոր իրավունքները և սահմանափակումները, ինչպես նաև գրանցման մատյանում գույքի վերաբերյալ գրառված այլ տեղեկությունները: Միասնական տեղեկանք ը գործարքներ կնքելու համար միակ փաստաթուղթն է, որով հավաստվում են սույն մասում ներկայացված տեղեկությունները, և որը պարտադիր է սույն օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված գործարքների վավերացման համար, բացառությամբ

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ մասով և «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման դեպքերի:

Միասնական տեղեկանք տրամադրվում է միայն անշարժ գույքի այն միավորների վերաբերյալ, որոնց նկատմամբ իրավունքները գրանցվել են 1998 թվականի մարտի 1-ից հետո: Միասնական տեղեկանք ն ուժի մեջ է 15 աշխատանքային օր:

Միասնական տեղեկանքի ձևը հաստատում է անշարժ գույքի պետական ռեգիստրի ղեկավարը:

6.1. Սույն օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով սահմանված տեղեկատվության մեջ նշվում են իրավունքի տեսակը, անշարժ գույքի միավորի կադաստրային ծածկագիրը, ինչպես նաև գույքի գտնվելու վայրը բնութագրող տեղեկություններ:

7. Կադաստրային գործի փաստաթղթերի իսկական օրինակները կարող են տրամադրվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝ դատական կամ դատախազության կամ քրեական վարույթն իրականացնող~~հետաքննման~~ այլ մարմինների որոշումների հիման վրա:

Սույն մասով նախատեսված հիմքերով կադաստրային գործի փաստաթղթերի իսկական օրինակները համապատասխան մարմնում գտնվելու ընթացքում, գրանցող մարմնում պահպանվող այդ փաստաթղթերի պատճենները, այդ թվում նաև էլեկտրոնային պատճենները, հիմք են գրանցող մարմնի կողմից համապատասխան գործառույթներ իրականացնելու համար, եթե նման գործառույթի իրականացումն օրենքով սահմանված կարգով չի արգելվել կամ սահմանափակվել:

8. *(մասն ուժը կորցրել է 20.10.16 ՀՕ-166-Ն)*

9. Համապատասխան համակարգչային ծրագրային ապահովման առկայության դեպքում անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տվյալների մասին տեղեկատվությունը կարող է տրամադրվել նաև համացանցի միջոցով կամ այդ նպատակով կիրառելի էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցներով (էլեկտրոնային կամ ինքնաշխատ եղանակով տեղեկատվության տրամադրում):

10. Էլեկտրոնային եղանակով տեղեկատվություն ստանալու դիմումների ներկայացման և տեղեկատվության տրամադրման ընթացակարգերի առանձնահատկությունները, անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջի էլեկտրոնային համակարգի միջոցով ինքնաշխատ եղանակով տրամադրվող վճարովի տեղեկությունների ցանկը, ինչպես նաև ինքնաշխատ եղանակով փաթեթով տրամադրվող վճարովի տեղեկությունների ցանկը սահմանում է անշարժ գույքի պետական ռեգիստրի ղեկավարը:

Սույն օրենքի իմաստով փաթեթ է համարվում ինքնաշխատ եղանակով տրամադրվող առնվազն չորս վճարովի տեղեկությունների համախումբը:

Հոդված 75. Պետական գրանցման և տեղեկատվության տրամադրման վճարների մասով արտոնությունները

1. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար սույն օրենքով սահմանված վճարները չեն գանձվում քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող, մինչև 1998 թվականի մարտի 1-ը ձեռք բերված և 1998 թվականի մարտի 1-ից հետո չգրանցված, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գույքային իրավունքները վերականգնված և 1998 թվականի մարտի 1-ից հետո չգրանցված բնակելի նշանակության անշարժ գույքի (բացառությամբ առանձին միավոր հանդիսացող ավտոտնակների) և գյուղատնտեսական նշանակության հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի առաջին պետական գրանցման դեպքում:

Սույն մասով սահմանված արտոնությունները չեն տարածվում սույն օրենքի 74-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ արագացված կարգով իրավունքների պետական գրանցման վրա:

1.1. Անշարժ գույքի պետական ռեգիստրի հետ պետական գրանցման համար օրենքով նախատեսված վճարները տարաժամկետ կարգով վճարելու պայմանագրի հիման վրա համայնքի ղեկավարի որոշմամբ օրինական ճանաչված ինքնակամ կառույց հանդիսացող ավտոտնակի և համապատասխան հողամասի նկատմամբ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման համար սույն օրենքով նախատեսված վճարի գումարը վճարվում է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման պահից՝ երկու տարվա ընթացքում, եռամսյակային պարբերականությամբ՝ վճարի մեկ ութերորդի չափով:

2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում գույքի նկատմամբ սահմանափակում կիրառելու լիազորություն ունեցող իրավասու մարմիններն ազատվում են սահմանափակման պետական գրանցման վճարից:

3. Կառավարության սահմանած ցանկերում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերում գտնվող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման կամ այդ գույքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման համար սույն օրենքով սահմանված վճարները գանձվում են 50%-ի չափով:

3.1. Ֆիզիկական անձինք կամ Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց գույքի կամ գույքային իրավունքների մասին հայցվող՝ սույն օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 11.1-12-րդ և 15-րդ (մինչև 10 էջ պատճենահանված փաստաթղթերի մասով) կետերով սահմանված տեղեկության համար ազատվում են տեղեկատվության տրամադրման վճարից:

Սույն մասով սահմանված արտոնությունները չեն տարածվում սույն օրենքի 74-րդ հոդվածի 8-րդ և 11-րդ մասերով սահմանված՝ արագացված կարգով տեղեկատվության տրամադրման վրա:

4. Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տվյալների մասին տեղեկատվությունը, բացառությամբ միասնական տեղեկատվության, Հանրապետության

նախագահի աշխատակազմին, վարչապետի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմին և պատգամավորներին, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի մարմիններին, Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին, դատարաններին, Հայաստանի Հանրապետության դատախազությանը և քրեական վարույթի հանրային այլ մասնակիցների, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին, ~~հետաքննության այլ մարմիններին~~, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին, Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատին, ինքնավար մարմիններին և անկախ պետական մարմիններին, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին, հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին տրամադրվում է անվճար՝ Հայաստանի Հանրապետության օրենքով իրենց վերապահված լիազորությունների իրականացման համար:

Պետական կառավարման մարմիններին սույն մասով սահմանված կարգով տրամադրված տեղեկատվությունը, ինչպես նաև կադաստրային, տեղագրական կամ հողաշինարարական քարտեզները կարող են վերջիններիս կողմից փոխանցվել այլ անձանց միայն Կառավարության որոշման հիման վրա, որի դիմաց անշարժ գույքի պետական ռեգիստրին հատկացվում է համապատասխան փոխհատուցում:

4.1. Կադաստրային և տեղագրական քարտեզների բազային և թեմատիկ տեղեկատվությունը՝ վեկտորային ֆորմատով, օրթոֆոտոհատակագծերը Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններին տրամադրվում են անվճար՝ բացառապես կրթական նպատակներով օգտագործելու համար:

5. Սույն հոդվածի 4-րդ մասի առաջին պարբերությամբ նախատեսված տեղեկատվությունը այլ անձանց տրամադրվում է անվճար միայն «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով և 8-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև այլ օրենքով սահմանված դեպքերում:

6. Սույն հոդվածով սահմանված տեղեկատվության տրամադրման արտոնությունները, բացառությամբ ֆիզիկական անձանց մասով սույն հոդվածի 3.1-ին մասով սահմանված դեպքերի, չեն տարածվում սույն օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ և 28-րդ կետերով սահմանված տեղեկատվության տրամադրման վրա:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ԳՐԱՎԱՏՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՎԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 6. Գրավատներին ներկայացվող պահանջները

Գրավատան վարկային միջոցների աղբյուր են համարվում սեփական միջոցները, մասնակիցներից ներգրավված փոխառությունները, բանկերից և այլ կազմակերպություններից ստացված վարկերն ու փոխառությունները:

Գրավատունը՝

ա) գրավատնային գործունեություն է իրականացնում միայն լիցենզիայում նշված տարածքում (հասցեում), ընդ որում, գրավատան կողմից այլ տարածքներում գրավատնային գործունեություն իրականացնելը համարվում է առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեության իրականացում.

բ) փոքրածավալ իրեր հանդիսացող գրավադրված (ի պահ հանձնված) գույքը պահպանում է գրավատան տարածքում գտնվող երկաթբետոնյա պատերով (ծածկով) առանձնացված սենյակի չիրկիզվող պահարաններում կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող որևէ բանկում՝ վերջինիս հետ կնքված պայմանագրի համաձայն.

գ) մեծածավալ իրեր հանդիսացող գրավադրված (ի պահ հանձնված) գույքը պահպանում է սեփականության, վարձակալության կամ օգտագործման իրավունքով իրեն պատկանող երկաթբետոնյա պատերով (ծածկով) առանձնացված տարածքում, որը պետք է համապատասխանի սույն մասի «ե» ենթակետի պահանջներին.

դ) իրականացնում է գրավ ընդունած շարժական գույքի, ինչպես նաև ի պահ հանձնված գույքի ապահովագրություն բնական աղետներից, հրդեհից, կողոպուտից, գողությունից և ավազակային հարձակումից՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող որևէ ապահովագրական ընկերությունում.

ե) ապահովում է գրավատան տարածքի պաշտպանությունը պահպանիչ և հակահրդեհային ազդարարման համակարգերով.

զ) իր տարածքը պաշտպանելու նպատակով աշխատանքային ժամերին իրականացնում է պահպանության ծառայություն, որի աշխատակիցները նկատելիորեն տարբերվում են իրենց միասնական համազգեստով: Օրենքով սահմանված կարգով նրանք կարող են ստանալ զենք կրելու իրավունք.

է) լիցենզիա ստանալուց հետո յուրաքանչյուր հաջորդ տարվա համար վճարում է «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տարեկան տուրքի գումարը՝ մինչև այդ ժամկետի սկիզբը.

ը) սույն հոդվածի 1-ին մասով սահմանված բանկերից և այլ կազմակերպություններից ստացված վարկերի և փոխառությունների, մասնակիցներից ներգրավված փոխառությունների և դրանց մուտքը հաստատող փաստաթղթերի, սույն հոդվածի 2-րդ մասի «դ» ենթակետով սահմանված ապահովագրական պայմանագրերի, դրանցում կատարված փոփոխությունների և լրացումների մասին տեղեկացնում է լիազոր մարմնին՝ համապատասխան պայմանագրերը կնքելուց կամ դրանցում փոփոխություններ կամ լրացումներ կատարելուց հետո՝ 15 օրվա ընթացքում, գրավոր ձևով՝ կցելով պայմանագրի կամ դրանում փոփոխությունների (լրացումների) պատճենը.

ը.1) չպետք է ունենա դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն (եթե այդ դատվածությունն օրենքով սահմանված կարգով ~~հանված կամ մարված չէ~~ մարված կամ վերացված չէ) ունեցող 10 և ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակից կամ դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն ունեցող ղեկավար.

թ) կանոնադրությունում տեղի ունեցած փոփոխությունների մասին գրավոր տեղեկացնում է լիազոր մարմնին, այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից 15 օրվա ընթացքում՝ կցելով փոփոխության պատճենը:

(6-րդ հոդվածը լրաց. 23.05.06 ՀՕ-82-Ն, 28.06.19 ՀՕ-110-Ն)

Հոդված 9. Վարկավորմանը վերաբերող փաստաթղթերի ձևակերպումը և պահպանումը

1. Գրավատունը յուրաքանչյուր վարկը տրամադրելիս (գույքն ի պահ ընդունելիս) ձևակերպում է գրավատոմս (անվանական պահպանական անդորրագիր) և վարկառուի (պահատուի) վճարների հաշվառման անձնական քարտ (այսուհետ՝ քարտ)՝ սույն օրենքի 10-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածներին համապատասխան:

2. Գրավատունը վարկավորման վերաբերյալ փաստաթղթերը պահպանում է համապատասխան պայմանագիրը դադարելուց հետո՝ առնվազն երեք տարվա ընթացքում:

3. Վարկավորման վերաբերյալ փաստաթղթերը պահպանվում են գրավատան տարածքում՝ մետաղյա պահարանում կամ առանձին սենյակում, որտեղ կողմնակի անձանց մուտքը սահմանափակ է, կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող որևէ բանկում:

4. Գրավատունը երաշխավորում է վարկավորման վերաբերյալ փաստաթղթերի գաղտնիությունը:

5. Գրավատունը տվյալ անձի վարկավորման վերաբերյալ փաստաթղթերը կամ դրանցում ներառված տեղեկությունները տրամադրում է միայն՝

ա) լիազոր մարմնին՝ ելնելով վերջինիս վերահսկողության լիազորությունների իրականացման անհրաժեշտությունից, ինչպես նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում և կարգով.

բ) դատարանին, ~~հետաքննության մարմնին,~~ քննիչին, դատախազին՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով.

գ) վարկառուի կողմից լիազորված անձանց.

դ) նոտարական գրասենյակին՝ ժառանգության վերաբերյալ հարցերով.

ե) ***(ենթակետն ուժը կորցրել է 08.12.05 ՀՕ-246-Ն)***

Սույն մասում նշված մարմինները և անձինք օրենքով սահմանված կարգով պահպանում են իրենց տրամադրված տեղեկությունների գաղտնիությունը:

(9-րդ հոդվածը լրաց. 14.12.04 ՀՕ-20-Ն, լրաց., փոփ. 08.12.05 ՀՕ-246-Ն, փոփ. 26.05.08 ՀՕ-92-Ն)

Հոդված 13. Գրավատնային գործունեության լիցենզավորումը

1. Գրավատնային գործունեության լիցենզավորումն իրականացնում է լիազոր մարմինը՝ Հայաստանի Հանրապետության օրենքներին և իրավական այլ ակտերին համապատասխան:

2. Լիցենզիա ստանալու հայտը մերժվում է, եթե՝

ա) հայտը և դրան կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն օրենքի և իրավական այլ ակտերի պահանջներին, կամ դրանցում ներկայացված են կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություններ.

բ) սույն օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում.

բ.1) հայտատուի 10 և ավելի տոկոս ձայնի իրավունք տվող մասնակցություն ունեցող մասնակիցներից թեկուզ մեկն ունի դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն, և այդ դատվածությունն օրենքով սահմանված կարգով ~~հանված կամ մարված չէ~~մարված կամ վերացված չէ, կամ ղեկավարն ունի դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատվածություն.

գ) հայտատուն ունի հարկային և օրենքով սահմանված այլ պարտադիր վճարների ժամկետանց պարտավորություն.

դ) սույն օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված վարկավորման ընդհանուր պայմանները հակասում են Հայաստանի Հանրապետության օրենքներին կամ դրանցում ներառված են պայմաններ, որոնք կարող են վարկառուներին վնաս պատճառել.

ե) օրենքով սահմանված այլ դեպքերում:

3. Լիցենզիա ստանալու հայտը մերժելու մասին լիազոր մարմնի որոշումը դրա կայացման հիմքերի հետ միասին եռօրյա ժամկետում տրամադրվում կամ փոստով ուղարկվում է հայտատուին:

4. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված հիմքերի բացակայության դեպքում լիազոր մարմինը որոշում է ընդունում բավարարել լիցենզիա ստանալու հայտը և այդ որոշումը եռօրյա ժամկետում տրամադրում կամ փոստով ուղարկում է հայտատուին:

5. Լիցենզիա ստանալու հայտում կամ կից փաստաթղթերում ոչ էական թերությունների՝ վրիպումների, ոչ իրավաբանական բնույթի անճշտությունների, նման այլ բացթողումների առկայության դեպքում լիազոր մարմինը որոշում է ընդունում բավարարել լիցենզիա ստանալու հայտը վերապահումով, որ հայտատուն մեկամսյա ժամկետում կվերացնի նկատված թերությունները: Լիազոր մարմինը լիցենզիա ստանալու հայտը վերապահումով բավարարելու մասին որոշումը եռօրյա ժամկետում տրամադրում կամ փոստով ուղարկում է հայտատուին:

6. Լիցենզիա ստանալու հայտը բավարարելու որոշում ընդունելու դեպքում լիցենզիան հայտատուին է տրամադրվում «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական տուրքի առաջին տարեկան վճարումը կատարելուց և վճարումը հավաստող փաստաթուղթը ներկայացնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

7. Եթե սույն հոդվածի 5-րդ մասում նշված թերությունները վերացնելու մասին տեղեկությունները կամ լիցենզիա ստանալու համար «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական տուրքի առաջին տարեկան վճարման անդորրագիրը լիազոր մարմին են ներկայացվում սահմանված

ժամկետից ուշ, ապա լիազոր մարմինը, որպես լիցենզիան հանձնելու պայման, հայտատուից հայտարարագիր է պահանջում այն մասին, որ անցած ժամանակահատվածում լիցենզիա ստանալու հայտին կից փաստաթղթերը չեն կորցրել իրենց իրավական ուժը՝ սույն օրենքի և իրավական այլ ակտերի պահանջներին համապատասխանության իմաստով:

8. Եթե սույն հոդվածի 7-րդ մասում նշված հայտարարագիրը չի ներկայացվում կամ հայտատուն հայտնում է, որ հայտին կից փաստաթղթերից որևէ մեկը կորցրել է իրավական ուժը՝ սույն օրենքի և իրավական այլ ակտերի պահանջները բավարարելու իմաստով, ապա լիցենզիայի տրման մասին լիազոր մարմնի որոշումը համարվում է չեղյալ, եթե միաժամանակ հայտատուն չի ներկայացնում այնպիսի փաստաթղթեր, որոնք կապահովեն սույն հոդվածի 4-րդ մասի պայմանը:

9. Լիցենզիայի ձևը սահմանում է լիազոր մարմինը:

10. Լիցենզիան տրվում է անժամկետ:

11. Լիցենզիան չի կարող գրավադրվել կամ օտարվել: Իրավաբանական անձի առանձնացման դեպքում լիցենզիան պահպանում է լիցենզիա ստացած անձը, իսկ անձի բաժանման դեպքում ստեղծված անձինք կարող են օրենքով սահմանված կարգով դիմել նոր լիցենզիա ստանալու համար:

12. Լիազոր մարմինը վարում է տրամադրված լիցենզիաների գրանցամատյան:

(13-րդ հոդվածը փոփ. 08.12.05 ՀՕ-246-Ն, լրաց. 28.06.19 ՀՕ-110-Ն)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 41. **Ընտրական հանձնաժողովներ կազմավորելու հիմունքները**

1. Կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կազմում կարող են ընդգրկվել սույն օրենսգրքի՝ համապատասխանաբար 42-րդ և 43-րդ հոդվածների պահանջներին համապատասխանող ընտրական իրավունք ունեցող քաղաքացիները:

2. Ընտրական հանձնաժողովի անդամ չեն կարող լինել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ~~149-154.9-րդ հոդվածներով նախատեսված~~ 210-224-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների համար դատապարտված անձինք՝ անկախ դատվածությունը ~~հանված կամ մարված~~ մարված կամ վերացվածլինելու հանգամանքից, ինչպես նաև դիտավորությամբ կատարված միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների համար դատվածություն ունեցող անձինք: Ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամ չեն կարող լինել Ազգային ժողովի պատգամավորները, նախարարները և նրանց

տեղակալները, համայնքների ղեկավարները, ավագանու անդամները, մարզպետները և նրանց տեղակալները, դատավորները, դատախազները, ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք, ոստիկանությունում, ազգային անվտանգության, հարկադիր կատարումն ապահովող, քրեակատարողական, պրոբացիայի, փրկարար ծառայություններում ծառայողները, զինծառայողները, վստահված անձինք, ընտրություններին մասնակցող կուսակցության, համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուի լիազոր ներկայացուցիչները, դիտորդները, թեկնածուները:

3. Տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել ընտրական իրավունք ունեցող և ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայական ունեցող անձինք: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի և քարտուղարի համար կարող է սահմանել որակավորման ավելի բարձր չափանիշներ, քան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների համար:

4. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կազմավորումից հետո Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իրականացնում է այդ հանձնաժողովների անդամների ուսուցումը:

5. Ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար կազմակերպում և անցկացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ իր սահմանած կարգին համապատասխան: Դասընթացները կազմակերպվում են Երևանում և մարզերում տարին առնվազն մեկ անգամ՝ քաղաքացիների դիմումների, կուսակցությունների ներկայացրած ցուցակների հիման վրա: Ներկայացված ցուցակներում ընդգրկված, ինչպես նաև դիմում ներկայացրած անձինք մասնակցում են մասնագիտական դասընթացներին՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից նախապես հրապարակված գրաֆիկին (օր, ժամ, վայր) համապատասխան: Նշված անձինք կարող են մասնակցել ստուգարքին՝ անկախ դասընթացին մասնակցելու հանգամանքից՝ հրապարակված գրաֆիկին համապատասխան: Որակավորման վկայականները տրվում են ստուգարքի հիման վրա: Ստուգարքն անցկացվում է համակարգչային կամ թեստային ստանդարտ եղանակով: Դասընթացների, ստուգարքի ընթացքին կարող են հետևել զանգվածային լրատվության միջոցների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

6. Քաղաքացին միաժամանակ կարող է ընդգրկվել միայն մեկ ընտրական հանձնաժողովի կազմում, բացառությամբ այն դեպքերի, երբ սահմանված են ընտրությունների քվեարկության անցկացման տարբեր օրեր: Եթե մեկ բնակավայրում կազմավորվել են մեկից ավելի տեղամասային կենտրոններ, ապա անձը կարող է լինել միայն այն տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ, որին սպասարկող տեղամասային կենտրոնը տեղակայված չէ իր աշխատանքի վայրում:

7. Ընտրական հանձնաժողովների կազմերի վերաբերյալ տեղեկությունները հրապարակվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով:

8. Ընտրական հանձնաժողովի կազմում ընդգրկվելուց հետո հանձնաժողովի անդամները մասնակցում են ընտրությունների անցկացման վերաբերյալ գործնական

դասընթացներին, որոնք կազմակերպում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ իր սահմանած ժամանակացույցին համապատասխան: Գործնական դասընթացներին մասնակցությունը պարտադիր է:

Հոդված 45. Ընտրական հանձնաժողովի նախագահին, նախագահի տեղակալին, հանձնաժողովի քարտուղարին պաշտոնանկ անելու և հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարելու կարգը

1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի կամ հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները համարվում են դադարած, եթե նա ներկայացրել է այդ պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի պաշտոնից ինքնաբացարկի դեպքում դադարեցվում է նրա անդամությունը հանձնաժողովին, իսկ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալի, կամ հանձնաժողովի քարտուղարի պաշտոններից ինքնաբացարկի դեպքում նախագահի տեղակալի կամ քարտուղարի անդամությունը հանձնաժողովին չի դադարեցվում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի ինքնաբացարկի մասին դիմումը ներկայացվում է Ազգային ժողովի նախագահին, իսկ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալի կամ հանձնաժողովի քարտուղարի պաշտոններից ինքնաբացարկի մասին դիմումը ներկայացվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին:

2. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարման փաստն արձանագրում է Ազգային ժողովի նախագահը դիմումն ստանալուց ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում. այդ մասին հայտարարվում է Ազգային ժողովի առաջիկա նիստում: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները համարվում են վաղաժամկետ դադարեցված՝ Ազգային ժողովի նախագահի կողմից փաստն արձանագրվելու պահից:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալի կամ հանձնաժողովի քարտուղարի պաշտոններից դուրս գալու փաստն արձանագրվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից՝ դիմումն ստանալուց ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում:

3. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը և հանձնաժողովի քարտուղարը կարող են պաշտոնանկ արվել հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ:

Սույն մասում նշված դեպքերում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալի կամ հանձնաժողովի քարտուղարի անդամությունը հանձնաժողովին չի դադարեցվում:

4. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի կամ հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները համարվում են դադարած, եթե նա ներկայացրել է այդ պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմում:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը, նախագահի տեղակալը և հանձնաժողովի քարտուղարը կարող են պաշտոնանկ արվել հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ:

Սույն մասում նշված դեպքերում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի կամ հանձնաժողովի քարտուղարի անդամությունը հանձնաժողովին չի դադարեցվում:

5. Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ կարող են պաշտոնանկ արվել միայն, եթե քվեարկության նախորդ օրը կամ քվեարկության օրը ցուցաբերում են ակնհայտ անգործություն, որի հետևանքով կարող է վտանգվել քվեարկության նախապատրաստումը կամ քվեարկության բնականոն ընթացքը կամ քվեարկության արդյունքների ամփոփումը: Այդ դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ կամ քարտուղար նշանակում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմից:

6. Ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են՝

1) եթե նա չունի ընտրական հանձնաժողովում նշանակվելու իրավունք.

2) եթե կենտրոնական կամ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամը ներկայացրել է հանձնաժողովի անդամի պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմում.

3) եթե տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, քարտուղարը կամ հանձնաժողովի անդամը ներկայացրել է այդ պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմում: Նման դիմում կարող է ներկայացվել մինչև քվեարկության օրվան նախորդող հինգերորդ օրվա ժամը 18.00-ն՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին.

4) եթե զորակոչվել է.

5) եթե դատապարտվել է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ~~149-154.9-րդ հոդվածներով նախատեսված~~ 210-224-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների համար՝ անկախ դատվածությունը ~~մարված կամ հանված~~ մարված կամ վերացված լինելու հանգամանքից, կամ դատապարտվել է դիտավորությամբ կատարված միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար, և դատվածությունը մարված կամ հանված չէ, կամ նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը, կամ որպես պատիժ կիրառվել է ~~կալանք~~կարճաժամկետ ազատազրկում կամ ազատազրկում:

Սույն մասի 1-5-րդ կետերով նախատեսված դեպքերում լիազորությունների վաղաժամկետ դադարման փաստը ընտրատարածքային և տեղամասային ընտրական

հանձնաժողովների անդամների դեպքում արձանագրում է վերադաս ընտրական հանձնաժողովի նախագահը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման փաստն արձանագրում է Ազգային ժողովի նախագահը՝ դիմումն ստանալուց ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում. այդ մասին հայտարարվում է Ազգային ժողովի առաջիկա նիստում: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունները համարվում են վաղաժամկետ դադարեցված՝ Ազգային ժողովի նախագահի կողմից փաստն արձանագրվելու պահից:

7. Եթե ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամը կոպտորեն խախտել է սույն օրենսգրքի դրույթները կամ 3 օրացուցային ամսվա ընթացքում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի հերթական նիստերից երեք կամ ավելի անգամ անհարգելի բացակայել է, ապա նրա լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ:

8. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը կարող է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ վաղաժամկետ դադարեցնել տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունները, եթե հանձնաժողովի անդամը կոպտորեն խախտել է սույն օրենսգրքի դրույթները (բացառությամբ տեղամասային ընտրական հանձնաժողովի հերթական նիստերից անհարգելի բացակայության դեպքի): Նման պահանջով ընտրատարածքային ընտրական հանձնաժողով կարող են դիմել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը, տեղամասային ընտրական հանձնաժողովում նրան նշանակած կուսակցությունը կամ նրան առաջարկած ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 40. Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված գործերով հարցումները և հանձնարարությունների կատարումը

1. Դատավորների, դատախազների, ինչպես նաև քննիչների և ~~հետաքննության մարմինների~~ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնող մարմինների պաշտոնատար անձանց հարցումները՝ կապված թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության և ապօրինի

շրջանառության հետ, կատարում են պաշտոնատար անձինք նշված հարցումների ստացման օրվանից սկսած 3 օրվա ընթացքում՝ չհաշված հանգստյան և տոնական օրերը:

2. Նշված հարցումներով տեղեկությունները բանկային և վարկային կազմակերպությունները ներկայացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 45. Սույն օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության լիազորություն ունեցող մարմինների պաշտոնատար անձանց իրավունքներն ու պարտականությունները

1. Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության գործունեության հետ կապված խախտումների մասին բավարար տվյալների առկայության դեպքում Հայաստանի Հանրապետության դատախազության, ոստիկանության, ազգային անվտանգության, մաքսային մարմինների և սահմանապահ ծառայությունների պաշտոնատար անձինք իրենց իրավասությունների շրջանակներում իրավունք ունեն՝

1) ստուգել թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների արտադրության և պատրաստման ընթացակարգերի համապատասխանությունը սահմանված կանոններին, անհրաժեշտության դեպքում վերցնել նմուշներ համեմատական հետազոտություն կատարելու համար.

2) կնքել համապատասխան շինությունները և պահանջել ներկայացնել փաստաթղթեր և տալ բացատրություններ.

3) թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության գործունեության տեսակների թույլտվություն ունեցող կազմակերպություններին տալ պարտադիր կատարման հանձնարարականներ՝ հայտնաբերված խախտումների վերացման համար:

2. ~~Նախաքննության և հետաքննության մարմինների~~ Նախաքննություն և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնող մարմինների պաշտոնատար անձինք, քննիչները կամ դատախազները հանցագործության առկայության դեպքում կարող են՝

1) մուտք գործել ձեռնարկատիրական և աշխատանքային այլ գործունեությամբ զբաղվելու համար օգտագործվող տարածքներ (բացի օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների և օտարերկրյա պետությունների հյուպատոսական հիմնարկների տարածքներից և նրանց ծառայողական տրանսպորտային միջոցներից), գույքի սեփականատիրոջ կամ նրա ներկայացուցչի կամ նրա լիազորած անձանց, իսկ նրանց բացակայության դեպքում նաև պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների ներկայությամբ կատարել

զննություն (այդ թվում՝ տրանսպորտային միջոցները), արձանագրությամբ առգրավել իրավախախտման փաստին անմիջականորեն առնչվող անհրաժեշտ փաստաթղթեր, հումքի և արտադրանքի նմուշներ, կնքել փաստաթղթերի, դրամի և ապրանքանյութական արժեքների պահատեղերը.

2) պահանջել և ստանալ պաշտոնատար ու նյութական պատասխանատու անձանցից տեղեկություններ և բացատրություններ իրավախախտման փաստի վերաբերյալ.

3) պահանջել կատարելու վերստուգումներ, գույքագրումներ, այլ ստուգողական գործողություններ.

4) կասեցնել իրավախախտում թույլ տված անձանց գործողությունները:

3. Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության գործունեության հետ կապված խախտումների հայտնաբերման դեպքում նշված գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք պարտավոր են իրենց իրավասությունների շրջանակներում միջոցներ ձեռնարկել դրանց վերացման ուղղությամբ, իսկ վարչական իրավախախտման կամ հանցագործության առկայության դեպքում անհրաժեշտ նյութեր տրամադրել համապատասխան մարմիններին:

4. Սույն հոդվածի առաջին մասում նշված պաշտոնատար անձինք պարտավոր են միջոցներ ձեռնարկել թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության հետ կապված հայտնաբերված վարչական իրավախախտումների և հանցագործությունների կանխման և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

Հոդված 45.6. Արտադրական կանեփի արտադրության և ներմուծման, արտահանման կամ մեծածախ առևտրի լիցենզավորման առանձնահատկությունները

1. Արտադրական կանեփի հետ կապված գործունեության լիցենզիա տրամադրում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման համակարգի մարմինը:

2. Արտադրական կանեփի հետ կապված գործունեության լիցենզիաները տրվում են մինչև տասը տարի ժամկետով:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած լիցենզավորման կարգում արտադրական կանեփի հետ կապված գործունեության լիցենզավորման համար նախատեսվում են պահանջներ, այդ թվում՝ լիցենզիա ստանալու համար դիմողի կողմից բիզնես-ծրագրի ներկայացման և դրա բովանդակության, հիմնավորումների, դիմողի ֆինանսական վիճակի, կանոնադրական կապիտալի (հիմնադրամի) նվազագույն չափի վերաբերյալ, ինչպես նաև այլ պահանջներ:

4. Անձը կարող է զբաղվել արտադրական կանեփի հետ կապված գործունեությամբ միայն այն դեպքում, եթե դիմել է արտադրական կանեփի հետ կապված գործունեության տեսակների լիցենզիա ստանալու համար և օրենքով սահմանված կարգով ստացել է այդ

լիցենզիան՝ անկախ այլ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի կամ պրեկուրսորների հետ կապված գործունեության լիցենզիա ունենալու հանգամանքից:

5. Արտադրական կանեփի հետ կապված գործունեության լիցենզիայի ստացման համար դիմողը պարտավոր է բացահայտել և լիցենզիա ստանալու հայտի հետ լիցենզավորման կարգով սահմանված ձևով ներկայացնել փոխկապակցված անձանց և իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները:

6. Արտադրական կանեփի հետ կապված գործունեության լիցենզիա չեն կարող ստանալ այն անձինք կամ փոխկապակցված անձինք, իրական շահառուները կամ արտադրության կամ ներմուծման, արտահանման կամ մեծածախ առևտրի ընթացքում կանեփի, կանեփի բույսի, դրա սերմերի հետ անմիջական շփում ունեցող անձինք (այսուհետ՝ աշխատակից), որոնք՝

1) ունեն դատվածություն թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի հետ կապված հանցագործության համար՝ անկախ դատվածությունը ~~հանված կամ մարված~~ մարված կամ վերացված լինելու հանգամանքից, կամ ենթարկվել են պատասխանատվության այդպիսի վարչական իրավախախտման համար.

2) տառապում են թմրամոլությամբ:

7. Արտադրական կանեփի հետ կապված գործունեության լիցենզիա ստացած անձինք նախքան արտադրական կանեփի հետ կապված գործունեությանը ներգրավվելը լիցենզավորող մարմին են ներկայացնում աշխատակիցների տվյալները՝ անուն, ազգանուն, հայրանուն, հասցե, անձնագրային տվյալներ, թմրամիջոցների կամ հոգեմետ դեղերի հետ կապված դիտավորյալ հանցագործության կատարման համար քրեական պատասխանատվության ենթարկված լինելու կամ այդպիսի վարչական իրավախախտման կատարման համար պատասխանատվության ենթարկված լինելու վերաբերյալ տեղեկություն: Լիցենզավորող մարմինը վարում է աշխատակիցների ռեեստր: Թմրամիջոցների կամ հոգեմետ դեղերի հետ կապված դիտավորյալ հանցագործության կատարման համար դատապարտված կամ այդպիսի վարչական իրավախախտման համար պատասխանատվության ենթարկված կամ թմրամոլությամբ տառապող անձինք չեն կարող հանդիսանալ աշխատակիցներ: Լիցենզավորման կարգով կարող են նախատեսվել աշխատակիցներին վերաբերող այլ պահանջներ: Աշխատակիցների ռեեստրի տվյալներին հասանելիություն պետք է ունենան նաև լիցենզավորված անձի գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող պետական մարմինները:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 12. Համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք չունեցող անձը

Համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք չունի այն անձը, որը՝

ա) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

բ) դատական կարգով զրկվել է հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

գ) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը համայնքային ծառայության պաշտոնում նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանը և լիազորությունների իրականացմանը: Այդ հիվանդությունների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

դ) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով ~~հանված կամ մարված չէ~~մարված կամ վերացված չէ.

ե) օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 17. Հաշվեքննիչ պալատի անդամը

1. Հաշվեքննիչ պալատի անդամ, ներառյալ՝ պալատի նախագահ, կարող է ընտրվել Ազգային ժողովի պատգամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանող, բարձրագույն կրթություն ունեցող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աուդիտորի որակավորում ունեցող այն քաղաքացին, որն ունի աուդիտորի նվազագույնը հինգ տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող իրավաբանական անձի ղեկավար պաշտոնի աշխատանքային ստաժ կամ հաշվեքննիչ պալատում ղեկավար պաշտոններում նվազագույնը հինգ տարվա աշխատանքային ստաժ կամ հաշվեքննիչ պալատի անդամի նվազագույնը երեք տարվա աշխատանքային ստաժ կամ ֆինանսների ոլորտում նվազագույնը տասը տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն հինգ տարին՝ ղեկավարի պաշտոնում:

2. Հաշվեքննիչ պալատի անդամի պաշտոնավարման ժամկետը լրանալուց 100 օր առաջ հաշվեքննիչ պալատի նախագահն այդ մասին տեղեկացնում է Ազգային ժողովին: Հաշվեքննիչ պալատի անդամի վաղաժամկետ թափուր տեղ առաջանալու դեպքում հաշվեքննիչ պալատի նախագահն այդ մասին հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է Ազգային ժողովին: Այս դեպքում հաշվեքննիչ պալատի նոր անդամն ընտրվում է նախկին անդամի պաշտոնավարման չլրացած ժամկետով:

3. Հաշվեքննիչ պալատի նախագահը և մյուս անդամներն ընտրվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով:

4. Հաշվեքննիչ պալատի անդամ, ներառյալ՝ պալատի նախագահ, չի կարող ընտրվել այն անձը, որը՝

1) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) ենթարկվել է քրեական պատասխանատվության, և դատվածությունը օրենքով սահմանված կարգով ~~հանված կամ մարված չէ~~մարված կամ վերացված չէ.

3) օրենքով սահմանված կարգով զրկված է որոշակի պաշտոն զբաղեցնելու իրավունքից:

5. Հաշվեքննիչ պալատի անդամները, ներառյալ՝ պալատի նախագահը, չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպությունում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

6. Հաշվեքննիչ պալատի անդամի, այդ թվում՝ նախագահի լիազորությունները դադարեցնում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով՝ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված անհամատեղելիության պահանջի խախտման կամ հաշվեքննիչ պալատի անդամի որևէ կուսակցության անդամ լինելու, քաղաքական գործունեությամբ զբաղվելու, հրապարակային ելույթներում քաղաքական զսպվածություն չցուցաբերելու դեպքերում:

7. Հաշվեքննիչ պալատի անդամի լիազորությունները դադարում են՝

1) պաշտոնավարման ժամկետը լրանալու դեպքում.

2) հաշվեքննիչ պալատի անդամի՝ հանցագործության կատարման համար դատապարտվելու կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչվելու մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի (վճռի) հիման վրա.

3) եթե ի հայտ է եկել հաշվեքննիչ պալատի անդամի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն, որը ներառված է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված՝ դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների ցանկում.

4) հաշվեքննիչ պալատի անդամի հրաժարականի դեպքում.

5) հաշվեքննիչ պալատի անդամի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարելու կամ օտարերկրյա քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում.

6) նրա մահվան դեպքում:

8. Հաշվեքննիչ պալատի անդամի հրաժարականի մասին դիմումը ներկայացվում է Ազգային ժողովի նախագահին, որի մասին տեղեկացվում է հաշվեքննիչ պալատը: Այդ տեղեկությունը տեղադրվում է հաշվեքննիչ պալատի պաշտոնական ինտերնետային

կայքում: Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված՝ հաշվեքննիչ պալատի անդամի լիազորությունների դադարման այլ հիմքեր ի հայտ գալու պարագայում հաշվեքննիչ պալատի նախագահն այդ հիմքերն ի հայտ գալու վերաբերյալ տեղեկատվությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է Ազգային ժողով:

Հոդված 34. Հաշվեքննության իրականացման կարգը

1. Հաշվեքննիչ պալատը հաշվեքննությունը կազմակերպում և իրականացնում է սույն օրենքի պահանջներին համապատասխան: Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ու հիմնարկներում իրականացվող հաշվեքննության արդյունքում կազմվում է եզրակացություն կամ ընթացիկ եզրակացություն: Իրավաբանական անձանց մոտ իրականացվող հաշվեքննության արդյունքում կազմվում է հաշվեքննության արձանագրություն:

2. Հաշվեքննությունն իրականացվում է հաշվեքննիչ պալատի որոշմամբ հաստատված հաշվեքննության առաջադրանքի հիման վրա:

3. Հաշվեքննության առաջադրանքի նախագիծը կազմում է համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը և ներկայացնում է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքները համակարգող հաշվեքննիչ պալատի անդամին՝ հավանության: Կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքները համակարգող հաշվեքննիչ պալատի անդամը հաշվեքննության առաջադրանքի նախագիծը ներկայացնում է հաշվեքննիչ պալատի հաստատմանը:

4. Հաշվեքննիչ պալատը գործունեության ծրագրի 2-րդ մասի ծրագրային կետի կատարումն սկսելուց առնվազն մեկ ամիս առաջ, իսկ գործունեության ծրագրում ավելացված նոր ծրագրային կետի դեպքում՝ ծրագրային կետի ավելացման վերաբերյալ որոշում կայացնելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան հաշվեքննությունն սկսելուց յոթ աշխատանքային օր առաջ հաշվեքննության օբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող անձին պատշաճ ձևով տեղեկացնում է հաշվեքննության անցկացման, դրա տեսակների, ընթացակարգերի, ժամկետների, հաշվեքննվող ժամանակաշրջանի մասին:

5. Հաշվեքննության խմբի աշխատանքները ղեկավարում է հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը: Հաշվեքննության առաջադրանքի մեջ չնշված անձինք չեն կարող մասնակցել հաշվեքննությանը:

6. Հաշվեքննության առաջադրանքում նշված օբյեկտում զննման և դիտարկման ընթացակարգի իրականացման ժամկետը սահմանվում է մինչև 24 աշխատանքային օր, որը հաշվեքննության ընթացքում կարող է երկարաձգվել ոչ ավելի, քան 24 աշխատանքային օրով՝ հաշվեքննիչ պալատի որոշմամբ:

7. Սույն օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պարտականությունների կատարման անհնարինության, ինչպես նաև հաշվեքննության ընթացքում հաշվեքննության արդյունքի վրա էական ազդեցություն ունեցող առանձին տեղեկությունների ճշտման անհրաժեշտություն առաջանալու կամ հաշվեքննությանն առնչվող փաստաթղթերը ~~հետաքննության,~~ նախաքննության մարմինների կամ

դատարանի որոշման հիման վրա առգրավված լինելու կամ տարերային աղետի պատճառով կամ հաշվեքննության իրականացումն անհնարին դարձնող այլ անկանխատեսելի հանգամանքի դեպքում հաշվեքննիչ պալատի որոշմամբ հաշվեքննությունը կասեցվում է: Կասեցման հիմքերի վերացումից հետո հաշվեքննիչ պալատի որոշմամբ հաշվեքննությունը կարող է վերսկսվել մնացած ժամկետով:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 20. Կենսաթոշակային գաղտնիքի տրամադրումը ~~քրեական հետապնդում իրականացնող~~ նախաքննություն իրականացնող մարմիններին

1. Գործատուն, մասնակիցների ռեեստրը վարողը, հաշվի օպերատորը, հարկային մարմինը կենսաթոշակային գաղտնիք կազմող տեղեկությունները ~~քրեական հետապնդում իրականացնող~~ նախաքննություն իրականացնող մարմիններին, սույն օրենքին համապատասխան, տրամադրում են միայն Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան կայացված դատարանի որոշման հիման վրա:

2. Գործատուն, մասնակիցների ռեեստրը վարողը, հարկային մարմինը պարտավոր են դատարանի որոշումն ստանալուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, ~~քրեական հետապնդում իրականացնող~~ նախաքննություն իրականացնող մարմնին կամ նրա լիազորած անձին տրամադրել տվյալ որոշմամբ պահանջվող տեղեկությունները:

3. Արգելվում է մասնակիցներին տեղեկացնել նրանց մասին կենսաթոշակային գաղտնիք կազմող տեղեկությունները ~~քրեական հետապնդում իրականացնող~~ նախաքննություն իրականացնող մարմիններին տրամադրելու փաստի մասին:

4. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տեղեկատվությունը Կենտրոնական բանկի կողմից վերլուծվելու արդյունքում, եթե պարզվում է, որ տեղի է ունեցել փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման դեպք կամ փորձ, ապա Կենտրոնական բանկն ուղղակիորեն հաղորդում է ներկայացնում ~~քրեական հետապնդում իրականացնող~~ նախաքննություն իրականացնող համապատասխան մարմին:

Հոդված 21. Կենսաթոշակային գաղտնիքի տրամադրումը դատարանին

1. Գործատուն, մասնակիցների ռեեստրը վարողը, հարկային մարմինը քաղաքացիական և ~~քրեական գործերի~~ քրեական վարույթի կողմ հանդիսացող

մասնակցի վերաբերյալ կենսաթոշակային գաղտնիք կազմող տեղեկությունները, սույն օրենքին համապատասխան, տրամադրում են դատարանին միայն վերջինիս՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության կամ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով ընդունված որոշման հիման վրա:

2. Գործատուն, մասնակիցների ռեեստրը վարողը, հարկային մարմինը պարտավոր են դատարանի որոշումը ստանալու պահից՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, դատարանին կամ դատարանի լիազորած անձին տրամադրել տվյալ որոշմամբ, վճռով կամ դատավճռով պահանջվող տեղեկությունները և փաստաթղթերը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՄԱՐԴՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 18. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման հետ կապված տեղեկությունների գաղտնիության պահպանումը

1. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների՝ արհեստական սերմնավորման կամ բեղմնավորման և փոխնակ մայրության կիրառման հետ կապված տեղեկությունները համարվում են բժշկական գաղտնիք և հրապարակման ենթակա չեն:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված տեղեկությունները տրամադրվում են միայն դատարանի (դատավորի), դատախազության, նախաքննության, հետաքննության մարմինների~~ հարուցած քրեական կամ քաղաքացիական գործերի կապակցությամբ~~պահանջով՝ նախաձեռնված քրեական վարույթների կամ հարուցված քաղաքացիական գործերի կապակցությամբ, ինչպես նաև այլ իրավասու մարմինների պահանջով՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 65. Կառավարչի ղեկավարների և կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող անձանց նկատմամբ պահանջները

1. Կառավարչի ղեկավարներն են կառավարչի խորհրդի նախագահը և անդամները, գործադիր տնօրենը կամ գործադիր մարմնի ղեկավարը և անդամները, գործադիր տնօրենի տեղակալը, գլխավոր հաշվապահը և նրա տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը և անդամները, ինչպես նաև տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

2. Կառավարչի ղեկավար չի կարող լինել, կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն չի կարող իրականացնել, ինչպես նաև նման գործունեություն իրականացնելու առաջարկությամբ չի կարող հանդես գալ այն անձը, որը՝

1) օրենքով սահմանված կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) չունի սույն օրենքով սահմանված համապատասխան մասնագիտական որակավորում.

3) դիտավորությամբ կատարված հանցագործության համար ունի ~~չմարված (չհանված)~~ չվերացված դատվածություն.

4) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով զրկված է ֆինանսական, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ զբաղեցնելու իրավունքից.

5) ճանաչված է սնանկ կամ ունի ժամկետանց պարտավորություններ.

6) նախկինում, բայց ոչ շուտ, քան երեք տարի առաջ զրկվել է սույն օրենքով կամ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված մասնագիտական որակավորումից.

7) անցյալում կատարել է այնպիսի արարք (գործողություն կամ անգործություն), որը Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ուղեցույցով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի կարծիքով հիմք է տալիս եզրակացնելու, որ տվյալ անձը՝ որպես կառավարչի ղեկավար կամ կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող անձ, չի կարող պատշաճ կերպով կառավարել կառավարչի գործունեության համապատասխան ոլորտը, կամ նրա գործողությունները կարող են հանգեցնել կառավարչի սնանկացմանը կամ ֆինանսական վիճակի վատթարացմանը կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկմանը:

3. Կառավարչի խորհրդի նախագահը կամ անդամը չի կարող միաժամանակ լինել տվյալ կառավարչի գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատակից, ինչպես նաև այլ կառավարչի կամ ներդրումային ծառայություն մատուցող այլ անձի խորհրդի նախագահ կամ անդամ, գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատակից, բացառությամբ, եթե կառավարիչներից մեկը (ներդրումային ծառայություն մատուցող այլ անձը) մյուսի դուստր ընկերությունն է:

4. Կառավարչի գործադիր տնօրենը կամ գործադիր մարմնի ղեկավարը և անդամները, գործադիր տնօրենի տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը և անդամները չեն կարող միևնույն կառավարչի մոտ զբաղեցնել այլ պաշտոն կամ այլ կառավարչի կամ ներդրումային ծառայություն մատուցող այլ անձի մոտ լինել ղեկավար (բացառությամբ դուստր կամ հիմնական ընկերության խորհրդի նախագահի և անդամի, ինչպես նաև սույն օրենքի 64-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքի) կամ այլ

աշխատակից: Կառավարչի գործադիր մարմնի ղեկավարը կամ անդամը կամ գործադիր տնօրենի տեղակալը կարող է իրականացնել միևնույն կառավարչի ֆոնդի կառավարման գործունեություն: Սույն մասում նշված անձինք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքներից, վճարովի այլ աշխատանք կարող են կատարել միայն խորհրդի համաձայնությամբ: Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով կառավարչի ղեկավարների և (կամ) այլ աշխատակիցների համար կարող են նախատեսվել պաշտոնների համատեղելիության այլ սահմանափակումներ՝ ուղղված շահերի հնարավոր բախումների և այլ ռիսկերի կանխարգելմանը:

5. Կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող անձին արգելվում է սույն օրենքով սահմանված ֆոնդի կառավարման գործունեությունը այլ կառավարչի կազմում կամ անունից իրականացնելը, ինչպես նաև ներդրումային ծառայություն մատուցող անձի կազմում կամ անունից «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-5-րդ կետերով սահմանված ներդրումային ծառայությունների մատուցումը: Սույն պահանջի խախտումը անձին մասնագիտական որակավորումից զրկելու հիմք է:

6. Կառավարչի ղեկավարները և աշխատակիցներն իրենց պարտականությունների կատարման ընթացքում պարտավոր են գործել՝ ելնելով ֆոնդի մասնակիցների շահերից, իրենց իրավունքներն իրականացնել և ֆոնդի մասնակիցների նկատմամբ իրենց պարտականությունները կատարել բարեխիղճ ու ողջամիտ կերպով, պատշաճ մասնագիտական մակարդակով (ֆիդուցիար պարտականություն):

Հոդված 97. Ծառայողական տեղեկատվությունը

1. Ֆոնդը (ֆոնդի մասնակցին) սպասարկելու կապակցությամբ կառավարչին, պահառուին, ինչպես նաև ֆոնդի կառավարման առանձին գործառույթներ իրականացնող այլ անձին (այդ թվում՝ Կենտրոնական դեպոզիտարիային) ֆոնդի (ֆոնդի մասնակցի) հայտնի դարձած հաշիվների վերաբերյալ որևէ տեղեկությունը, ֆոնդի (ֆոնդի մասնակցի) առևտրային կամ ծառայողական գաղտնիքը և նրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն, որը ֆոնդը (ֆոնդի մասնակիցը) մտադիր է եղել գաղտնի պահել, և կառավարիչը, պահառուն կամ սույն մասով նախատեսված այլ անձը տեղյակ է եղել կամ պետք է տեղյակ լիներ այդ մտադրության մասին, համարվում է ծառայողական տեղեկատվություն:

2. Ծառայողական տեղեկատվություն է համարվում նաև սույն օրենքով վերահսկման ենթակա անձանց կողմից վերահսկողության իրականացման կապակցությամբ ֆոնդի (ֆոնդի մասնակցի) վերաբերյալ Կենտրոնական բանկին տրամադրված՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկությունը:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված ծառայողական տեղեկատվության վրա տարածվում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ ծառայողական տեղեկատվության պահպանմանը, տրամադրմանը և հրապարակմանը վերաբերող դրույթները:

~~4. Եթե Կենտրոնական բանկի կողմից «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տեղեկատվությունը վերլուծելիս պարզվում է, որ տեղի է ունեցել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման կամ ահաբեկչության ֆինանսավորման դեպք կամ փորձ, Կենտրոնական բանկն ուղղակիորեն հաղորդում է ներկայացնում քրեական հետապնդում իրականացնող համապատասխան մարմին:~~

4. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված տեղեկությունները այդ օրենքով սահմանված լիազոր մարմնի (սույն հոդվածի իմաստով՝ լիազոր մարմին) կողմից վերլուծվելու արդյունքում, եթե լիազոր մարմինը գալիս է եզրակացության, որ առկա են փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված հիմնավոր կասկածներ կամ նախորդող հանցագործության այնպիսի հիմնավոր կասկածներ, որոնք կարող են հանգեցնել փողերի լվացման, ծանուցում է տրամադրում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին, ինչպես նաև քրեական վարույթի հանրային մասնակցին:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 11. Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումը դատարանին

1. Բանկերը ~~քաղաքացիական և քրեական գործերի~~ քաղաքացիական գործերի և քրեական վարույթների կողմ հանդիսացող իր հաճախորդների վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները սույն օրենքին համապատասխան տրամադրում են միայն դատարանի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության կամ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով ընդունված որոշման հիման վրա, ինչպես նաև իր հաճախորդի բանկային հաշվի վրա բռնագանձում տարածելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի կամ դատավճռի հիման վրա:

1.1. Բանկերը «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում իրենց հաճախորդների վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրում են իրավասու մարմնին՝ դատարանի որոշման հիման վրա:

2. Բանկը պարտավոր է դատարանի որոշումը, վճիռը կամ դատավճիռը ստանալու պահից երկու բանկային օրվա ընթացքում դատարանին կամ դատարանի կողմից լիազորված անձին տրամադրել տվյալ որոշմամբ, վճռով կամ դատավճռով պահանջվող տեղեկությունները և փաստաթղթերը՝ փակ և փակվող մասում գործադիր մարմնի

ղեկավարի կամ նրան փոխարինող անձի կողմից ստորագրված ծրարում: Այդ ընթացքում բանկը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով ընդունված դատարանի որոշումը կամ վճիռը ստանալու և բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրելու բանկի պարտավորության մասին իր հաճախորդին տեղեկացնելու համար:

Բանկին արգելվում է իր հաճախորդներին տեղեկացնել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով ընդունված դատարանի որոշման կամ դատավճռի ստացման և նրանց մասին բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները դատարանին կամ դատարանի կողմից լիազորված անձին տրամադրելու փաստի վերաբերյալ:

Հոդված 13.1 **Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի շրջանակներում բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումը**

1. ~~«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված, ներառյալ՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններն այդ օրենքով սահմանված լիազոր մարմնի (սույն հոդվածի իմաստով՝ լիազոր մարմին) կողմից վերլուծվելու արդյունքում, եթե լիազոր մարմինը գալիս է եզրակացության, որ առկա են փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հիմնավոր կասկածներ, ապա ծանուցում է տրամադրում քրեական հետապնդում իրականացնող մարմիններին:~~ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված, ներառյալ՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններն այդ օրենքով սահմանված լիազոր մարմնի (սույն հոդվածի իմաստով՝ լիազոր մարմին) կողմից վերլուծվելու արդյունքում եթե լիազոր մարմինը գալիս է եզրակացության, որ առկա են փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված հիմնավոր կասկածներ կամ նախորդող հանցագործության այնպիսի հիմնավոր կասկածներ, որոնք կարող են հանգեցնել փողերի լվացման, ծանուցում է տրամադրում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին, ինչպես նաև քրեական վարույթի հանրային մասնակցին: Ծանուցման հետ միաժամանակ կամ հետագայում, ի լրումն ծանուցման, լիազոր մարմինը կարող է սեփական նախաձեռնությամբ ~~քրեական հետապնդում իրականացնող մարմիններ~~ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններ, ինչպես նաև քրեական վարույթի հանրային մասնակիցներին ներկայացնել նաև ծանուցման մեջ նշված հանգամանքներին առնչվող այլ տեղեկություններ:

«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ ~~քրեական հետապնդման մարմինների~~ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների,

ինչպես նաև քրեական վարույթի հանրային մասնակիցների հարցման հիման վրա լիազոր մարմինը տրամադրում է իր տրամադրության տակ առկա, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, եթե հարցումը պարունակում է բավարար հիմնավորում փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածի կամ դեպքի վերաբերյալ:

«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով լիազոր մարմնի կողմից ֆինանսական հետախուզության օտարերկրյա մարմիններին կարող են տրամադրվել բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր):

Հոդված 17. Հանցագործության մասին հայտնելու պարտականությունը

1. Բանկերի ղեկավարները պարտավոր են ~~քրեական հետապնդում իրականացնող մարմնին~~ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին, ինչպես նաև քրեական վարույթի հանրային մասնակիցներին հայտնել իրենց հաստատապես հայտնի նախապատրաստվող կամ արդեն իսկ կատարված հանցագործության մասին, ընդ որում բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները և փաստաթղթերը քրեական հետապնդում իրականացնող մարմնին տրամադրվում են սույն օրենքի 10 և 11 հոդվածներին համապատասխան: Բանկերի ծառայողները պարտավոր են իրենց հաստատապես հայտնի նախապատրաստվող կամ արդեն իսկ կատարված հանցագործության վերաբերյալ նման տեղեկությունների մասին գրավոր ձևով հայտնել բանկի ղեկավարներին, կամ նրանցից թեկուզ մեկին:

2. Սույն օրենքի որևէ հոդված չի կարող մեկնաբանվել որպես հանցագործության հետքերը և հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցները պարտակելու, կամ հանցագործության մասին չհայտնելու մեջ մեղավոր անձանց Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված պատասխանատվությունից ազատող:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 7. Միասնական էլեկտրոնային գրանցամատյանում առկա տեղեկատվության գաղտնիությունը

1. Միասնական էլեկտրոնային գրանցամատյանում առկա տեղեկատվությունը, ներառյալ՝ քաղաքացիական կացության ակտային գրանցումների թղթային արխիվում պահվող տեղեկությունները հրապարակման ենթակա չեն:

2. Միասնական էլեկտրոնային գրանցամատյանից վկայականները, Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Քները կամ այլ տեղեկատվությունը տրամադրվում են սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

3. ~~Քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վերաբերյալ տեղեկությունները տրամադրվում են Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրի ձևավորման և վարման նպատակներով համապատասխան լիազոր մարմիններին, դատարանին (դատավորին), դատախազությանը, նախաքննության, հետաքննության մարմիններին՝ հարուցված քրեական կամ քաղաքացիական գործերի կապակցությամբ և օրենքով նախատեսված իրավասու այլ մարմինների կամ անձանց պահանջով:~~Քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վերաբերյալ տեղեկությունները տրամադրվում են Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրի ձևավորման և վարման նպատակներով համապատասխան լիազոր մարմիններին, դատարանին (դատավորին), դատախազությանը, նախաքննության մարմիններին՝ նախաձեռնված քրեական վարույթների կամ հարուցված քաղաքացիական գործերի կապակցությամբ և օրենքով նախատեսված իրավասու այլ մարմինների կամ անձանց պահանջով:

4. Սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով միասնական էլեկտրոնային գրանցամատյանի տեղեկությունները հասանելի են նաև վիճակագրական կոմիտեին, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության էլեկտրոնային հյուպատոսական համակարգին, սոցիալական ապահովության ծառայությանը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը և այլ իրավասու մարմինների և իրավաբանական անձանց՝ էլեկտրոնային տեղեկատվական համակարգերի համակցման միջոցով:

5. Միասնական էլեկտրոնային գրանցամատյանի տեղեկությունները կարող են փոխանցվել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային բյուրո: Տրամադրվող տեղեկությունների ցանկը, դրանց դիմաց վճարը և տրամադրման կարգը սահմանում է Կառավարությունը:

Հոդված 65. Քաղաքացիական կացության ակտային գրանցման մեջ ուղղում կամ լրացում կամ փոփոխություն կատարելու ընդհանուր դրույթները

1. Քաղաքացիական կացության ակտային գրանցման մեջ ուղղում կամ լրացում կամ փոփոխություն կատարվում է սույն օրենքի 66-րդ հոդվածով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

2. Քաղաքացիական կացության ակտային գրանցման մեջ ուղղում կամ լրացում կամ փոփոխություն կատարելու դիմում կարող է ներկայացվել, եթե՝

1) քաղաքացիական կացության ակտը, որում անհրաժեշտ է ուղղում կամ փոփոխություն կամ լրացում կատարել, գրանցվել է Հայաստանի Հանրապետության ՔԿԱԳ մարմիններում կամ դիվանագիտական ծառայության մարմիններում.

2) քաղաքացիական կացության ակտը, որում անհրաժեշտ է ուղղում կամ փոփոխություն կամ լրացում կատարել, գրանցել է օտարերկրյա պետությունը, և Հայաստանի Հանրապետությունը իրավասու է կատարելու դրանում ուղղում կամ փոփոխություն կամ լրացում՝ երկկողմ կամ բազմակողմ միջազգային պայմանագրի հիման վրա:

3. Եթե քաղաքացիական կացության ակտային գրանցման մեջ ուղղում կամ լրացում կամ փոփոխություն կատարելը առաջացնելու է անձը հաստատող փաստաթղթի փոփոխություն, ապա դիմումին կից նաև պետք է ներկայացվի տասնվեց տարին լրացած անձի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում ~~քրեական գործ~~ քրական հետապնդում հարուցված չլինելու, քրեական պատիժ չկրելու, հետախուզման մեջ չգտնվելու մասին իրավասու մարմնի կողմից՝ մինչև դիմումը ներկայացնելը առնվազն մեկ ամիս առաջ տրված փաստաթուղթ:

4. Քաղաքացիական կացության ակտում ուղղում կամ լրացում կամ փոփոխություն կատարելու դիմումը ներկայացնում է քաղաքացիական կացության ակտում նշված անձը:

5. Քաղաքացիական կացության ակտային գրանցման մեջ ուղղում կամ լրացում կամ փոփոխություն կատարելու դիմումը լիազորված անձի միջոցով ներկայացվելու դեպքում ներկայացվում է նաև լիազորագիր, որը չի պահանջում նոտարական վավերացում:

6. Մահացածի վերաբերյալ նախկինում կատարված քաղաքացիական կացության ակտի գրառման մեջ ուղղում կամ լրացում կամ փոփոխություն կատարվում է շահագրգիռ անձի դիմումի հիման վրա:

Հոդված 69. Քաղաքացիական կացության ակտային գրանցման մեջ ուղղում կամ լրացում կամ փոփոխություն կատարելու մերժումը

1. Քաղաքացիական կացության ակտային գրանցման մեջ ուղղում կամ լրացում կամ փոփոխություն կատարելը մերժվում է, եթե՝

1) դիմումը ներկայացրել է ոչ իրավասու անձը.

2) դիմումին կից ներկայացված փաստաթղթերը չեն հիմնավորում դիմումով ներկայացված պահանջը.

3) սույն օրենքի 65-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված փաստաթղթի համաձայն՝ անձի նկատմամբ հարուցված է ~~քրեական գործ~~քրեական հետապնդում, կամ նա կրում է քրեական պատիժ կամ գտնվում է հետախուզման մեջ:

2. Քաղաքացիական կացության ակտում ուղղում կամ փոփոխություն կամ լրացում կատարելու մասին պահանջը հիմնավորված չլինելու եզրակացությունը հաստատվելուց հետո քաղաքացիական կացության ակտային գրանցման մեջ ուղղում կամ լրացում կամ փոփոխություն կատարելու մերժման մասին կազմվում է որոշում, որը պետք է պարունակի մերժման բոլոր հիմքերը, ներկայացված փաստաթղթերում առկա և գրանցմանը խոչընդոտող բոլոր թերությունները, ինչպես նաև հղում կատարվի կոնկրետ իրավական նորմին, որը տրամադրվում է դիմողին՝ սույն օրենքով սահմանված կարգով:

3. Քաղաքացիական կացության ակտային գրանցման մեջ ուղղում կամ լրացում կամ փոփոխություն կատարելու մերժումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 65. Վարչական վարույթի կասեցումը և վերսկսումը

1. Հանձնաժողովի կողմից իրականացվող վարույթը կասեցվում է, եթե՝

1) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում որոշման ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործով կամ քրեական դատավարության կարգով քննվող վարույթով ~~կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով~~ եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը.

2) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում որոշման ընդունումը մինչև այլ վարչական վարույթով որոշում կայացնելը.

3) գործում է անհաղթահարելի ուժ կամ այլ հանգամանք, որը ժամանակավորապես խոչընդոտում է վարույթի ընթացքը.

4) առկա են օրենքով նախատեսված այլ հիմքեր:

2. Տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթը կարող է կասեցվել, եթե՝

1) չեն ներկայացվել պահանջված փաստաթղթերը, նյութերը կամ այլ տեղեկատվություն կամ ներկայացվել են ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ.

2) նշանակվել է փորձաքննություն.

3) առկա են օրենքով նախատեսված այլ հիմքեր:

3. Վարույթը կասեցվում է մինչև այն կասեցնելու հիմք հանդիսացած հանգամանքների վերանալը կամ վարույթի կարճման հիմքի ի հայտ գալը: Դրանք վերանալուց կամ վարույթի կարճման հիմքի ի հայտ գալուց կամ առաջանալուց հետո Հանձնաժողովի որոշմամբ վարչական վարույթը վերսկսվում է:

4. Վարույթի կասեցման ընթացքում Հանձնաժողովը կարող է կատարել կասեցման հիմքերի վերացումը պարզելուն ուղղված և վարույթի՝ ըստ էության քննությանը չուղղված այլ գործողություններ:

5. Վարույթի իրականացման ժամկետի ընթացքը կասեցվում է վարույթի կասեցման ժամանակահատվածով:

Հոդված 78. Պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի հաղորդումը

1. Պետական մարմնի հաղորդումը պարունակում է այն ներկայացրած պետական մարմնի անվանումը և հասցեն կամ համապատասխան պաշտոնատար անձի անունը, ազգանունը, պաշտոնը, սույն օրենքի առերևույթ խախտման և այն կատարողի մասին տեղեկություններ, ինչպես նաև բացահայտում է համապատասխան մարմնի կամ պաշտոնատար անձի այն գործունեությունը, որի իրականացման ընթացքում նրան հայտնի է դարձել սույն օրենքի առերևույթ խախտման փաստը: Հաղորդմանը կարող են կցվել այն հաստատող նյութեր, այդ թվում՝ լուսանկարներ, տեսագրություններ, ձայնագրություններ և այլն:

2. Քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու ~~գործ հարուցելը մերժելու կամ քրեական գործով վարույթը կարճելու մասին~~ որոշում կայացվելու դեպքում, երբ անձի գործողություններում առերևույթ առկա են տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման հատկանիշներ, նախաքննություն իրականացնող ~~քրեական հետապնդման~~ մարմինը նման որոշում կայացնելուց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում այդ որոշումն անհրաժեշտ նյութերի հետ միասին ուղարկում է Հանձնաժողով:

Հոդված 81. Հաղորդման վերահասցեագրումը

1. Իրավախախտման վերաբերյալ հաղորդումը վերահասցեագրվում է, եթե վարույթի հարուցման առիթներում առկա հարցերը մտնում են այլ վարչական կամ նախաքննություն իրականացնող ~~քրեական հետապնդման~~ մարմնի իրավասության մեջ:

2. Հաղորդումը վերահասցեագրելու մասին գրությունը հաղորդման հետ ուղարկվում է իրավասու մարմին և հաղորդում ներկայացրած անձին:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 23. Հանրային հեռարձակողի խորհուրդը

1. Հանրային հեռարձակողի կառավարումն ապահովող և հսկողություն իրականացնող մարմինը Խորհուրդն է:

2. Խորհուրդը բաղկացած է յոթ անդամից՝ Խորհրդի նախագահ և Խորհրդի վեց անդամ: Խորհրդում պետք է ապահովվի սեռային ներկայացվածությունը:

3. Խորհրդի անդամներին մրցութային կարգով նշանակում է վարչապետը՝ վեց տարի ժամկետով: Նույն անձը չի կարող անընդմեջ երկու անգամից ավել ընդգրկվել Խորհրդի կազմում:

4. Խորհրդի անդամ կարող են լինել Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, հայերենին տիրապետող և բարձրագույն կրթություն ունեցող, տեսալսողական բնագավառի, ինչպես նաև գիտության, կրթության, մշակույթի և լրագրության ոլորտի գործիչներ:

5. Խորհրդի անդամի թեկնածու չեն կարող առաջադրվել՝

1) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձը.

2) անձը, որը դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով ~~հանված կամ մարված չէ~~ մարված կամ վերացված չէ.

3) կուսակցությունների ղեկավար մարմինների անդամները և նրանց փոխկապակցված անձինք.

4) մասնավոր Հեռարձակողների հիմնադիրները.

5) Հանրապետության նախագահը և նրա հետ փոխկապակցված անձինք.

6) Կառավարության անդամները և նրանց հետ փոխկապակցված անձինք.

7) Ազգային ժողովի նախագահը և նրա հետ փոխկապակցված անձինք:

6. Խորհրդի անդամ նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, Խորհրդի անդամը պարտավոր է՝

1) դադարեցնել ձեռնարկատիրական կամ քաղաքական գործունեությամբ զբաղվելը.

2) ազատվել վճարովի հիմունքներով աշխատանքից, բացառությամբ գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանքի:

Հոդված 34. Կարգավորող պետական մարմնի անդամների թեկնածուներին և անդամներին ներկայացվող պահանջները և նրանց վարձատրության կարգը

1. Կարգավորող պետական մարմնի անդամի թեկնածու կարող է լինել 25 տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք, որն ունի հեռարձակման, տնտեսության, կառավարման, ճարտարագիտության, մշակույթի, արվեստի կամ իրավագիտության բնագավառներում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային փորձառություն, բարձրագույն կրթություն, զանգվածային լրատվության բնագավառում հեղինակավոր մասնագետ է:

2. Կարգավորող պետական մարմնի անդամ չի կարող լինել՝

1) անձը, որը դատապարտվել է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա, և դատվածությունը սահմանված կարգով ~~հանված կամ մարված չէ~~ մարված կամ վերացված չէ.

2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձը:

3. Կարգավորող պետական մարմնի անդամներն իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ որևէ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հրապարակային ելույթներում նրանք պետք է ցուցաբերեն քաղաքական զսպվածություն:

4. Կարգավորող պետական մարմնի անդամները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Կարգավորող պետական մարմնի անդամի պարտականությունները գերակա են նրա կողմից իրականացվող այլ գործունեության նկատմամբ:

5. Կարգավորող պետական մարմնի անդամի լիազորություններն ստանձնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, կարգավորող պետական մարմնի անդամը պարտավոր է՝

1) դադարեցնել ձեռնարկատիրական կամ քաղաքական գործունեությամբ զբաղվելը.

2) ազատվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև առևտրային կազմակերպություններում զբաղեցրած պաշտոններից.

3) ազատվել վճարովի հիմունքներով աշխատանքից, բացառությամբ գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանքի:

6. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ իր պաշտոնն ստանձնելիս տալիս է հետևյալ երդումը.

«Ստանձնելով կարգավորող պետական մարմնի անդամի պարտականությունները՝ երդվում եմ, հավատարիմ լինելով Սահմանադրությանը և օրենքներին, պաշտպանել մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, աջակցել քաղաքացիական հասարակության ձևավորմանը՝ կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի, տեղեկատվության ազատության և բազմակարծության ապահովման միջոցով:

Երդվում եմ, որ պարտականություններս կկատարեմ անաչառ, առավելագույն բարեխղճությամբ և ազնվությամբ, կգործեմ հրապարակայնության, անկողմնակալության և արդարության սկզբունքով՝ անկախ որևէ քաղաքական կամ տնտեսական շահից:»:

7. Կարգավորող պետական մարմնի անդամների վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 8. Տեղեկատվության ազատության սահմանափակումները

1. Տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝

1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք.

2) խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը.

3) ~~պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները.~~ պարունակում է քրեական վարույթի՝ հրապարակման ոչ ենթակա տվյալներ.

4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).

5) խախտում է հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները:

2. Եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ:

3. Տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե դա՝

1) վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը և առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաև տարերային (ներառյալ՝ պաշտոնապես կանխատեսվող) աղետներին և դրանց հետևանքներին.

2) ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առևտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը.

3) չտրամադրելը բացասական ազդեցություն կունենա Հայատանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական և հոգևոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 23. Կառավարչի որակավորումը

1. Որպես կառավարիչ կարող է որակավորվել 63 տարին չլրացած այն անձը, որն ունի բարձրագույն կրթություն, որակավորման համար դիմելու օրվան նախորդած վերջին հինգ տարվա ընթացքում ունի իրավաբանական, հաշվապահական կամ այլ տնտեսագիտական գործունեության ոլորտում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի սահմանած կարգով անցել է համապատասխան ուսուցում:

2. Անձը որպես կառավարիչ չի կարող որակավորվել, եթե՝

1) հանրային ծառայող է.

2) դատապարտվել է հանցագործություն կատարելու համար, և դատվածությունը մարված կամ ~~հանված չէ~~ վերացված չէ.

3) դիմելու օրվան նախորդող վերջին հինգ տարիների ընթացքում ճանաչվել է սնանկ.

4) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

3. Որակավորումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը: Որակավորումն իրականացվում է որակավորման ստուգման միջոցով, որն անցկացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին կից խորհրդակցական մարմին հանդիսացող որակավորման հանձնաժողովը:

4. Որակավորման ստուգում անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակվում է որակավորման ստուգումն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ:

5. Որակավորման ստուգմանը մասնակցելու համար դիմումը և պահանջվող փաստաթղթերը, ներառյալ՝ որակավորման ստուգմանը մասնակցելու համար պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն են ներկայացվում որակավորման ստուգում անցկացնելու մասին հրապարակված հայտարարության մեջ նշված ժամկետում:

6. Դիմումի մեջ կամ դրան կից փաստաթղթերում թերությունների առկայության դեպքում որակավորման ստուգման անցկացման օրվանից ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օր առաջ դիմողը տեղեկացվում է այդ մասին՝ նրան հնարավորություն ընձեռելով տեղեկացվելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, շտկելու դրանք:

7. Որակավորման ստուգմանը դիմողի մասնակցության դիմումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը մերժում է, եթե՝

1) դիմողի ներկայացրած փաստաթղթերում առկա են ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություններ.

2) դիմողի տվյալները չեն բավարարում սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջները.

3) դիմողը հայտարարության մեջ նշված ժամկետում կամ սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքում նույն մասով սահմանված ժամկետում չի ներկայացրել պահանջվող բոլոր փաստաթղթերը:

8. Որակավորման հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը, որակավորման ստուգմանը մասնակցելու դիմումին ներկայացվող պահանջները, որակավորման ստուգմանը մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերի ցանկը, որակավորման ստուգման և որակավորում շնորհելու ընթացակարգը սահմանվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով:

Հոդված 58. Պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծությունը

1. Պարտապանին սնանկ ճանաչելուց հետո՝ 35 օրվա ընթացքում, կառավարիչը դատարան է ներկայացնում պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծությունը: Պարտապանի գործունեությունը բազմաբնույթ լինելու և մեծ ծավալներ ունենալու կամ այլ հարգելի պատճառների առկայության դեպքում դատարանը կարող է երկարաձգել ֆինանսական վիճակի վերլուծությունը ներկայացնելու ժամկետը ողջամիտ ժամկետով:

2. Պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծությունն առնվազն պետք է պարունակի՝

1) տեղեկություններ՝

ա. սնանկության պատճառների մասին,

բ. դատական ծախսերի փոխհատուցման և կառավարչի վարձատրության համար պարտապանի միջոցների բավարար լինելու մասին,

գ. պարտապանի վճարունակության վերականգնման հնարավորությունների մասին,

դ. պարտապանի դեբիտորական պարտավորությունների հավաքման հնարավորության մասին,

ե. սույն օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պայմանագրերի մասին,

զ. սույն օրենքի 54-րդ հոդվածով նախատեսված գործարքների մասին,

է. կեղծ կամ կանխամտածված սնանկության հատկանիշների առկայության, ինչպես նաև սնանկության վարույթը ֆինանսական առողջացմամբ ավարտելու հնարավորության մասին:

3. Կեղծ կամ կանխամտածված սնանկության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում կառավարիչը պարտավոր է անհապաղ հաղորդում ներկայացնել ~~քրեական հետապնդման~~ իրավասու մարմիններ:

4. Պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծության ձևը սահմանվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով:

5. Յուրաքանչյուր պարտատեր իրավունք ունի սնանկության վարույթի ընթացքում ցանկացած պահի ծանոթանալու պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծությանը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ»
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 7. Սահմանադրական դատարանի դատավորի անկախությունը

1. Արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, պաշտոնատար, ֆիզիկական և իրավաբանական անձանցից, հաշվետու չէ որևէ մեկին, այդ թվում՝ պարտավոր չէ որևէ բացատրություն տալ:

2. Սահմանադրական դատարանի դատավորն իրավունք չունի իր գործունեության կապակցությամբ հայցելու որևէ ցուցում:

3. Սահմանադրական դատարանի դատավորի գործունեության կապակցությամբ նրա նկատմամբ որևէ ներգործություն անթույլատրելի է և հետապնդվում է օրենքով:

4. Սահմանադրական դատարանի դատավորի գործունեությանը միջամտության կամ նրա նկատմամբ այլ ներգործության յուրաքանչյուր փաստի մասին Սահմանադրական դատարանի դատավորն անհապաղ իրազեկում է Սահմանադրական դատարանի նախագահին, որն անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու պահանջով դիմում է իրավասու պետական մարմիններին:

5. Պաշտոնավարման ընթացքում և լիազորությունները դադարեցվելուց կամ դադարելուց հետո Սահմանադրական դատարանի դատավորը չի կարող որպես վկա հարցաքննվել այն վարույթով~~գործով~~, որի շրջանակում նա իրականացրել է իր լիազորությունները որպես դատավոր:

Հոդված 9. Սահմանադրական դատարանի դատավորի անձեռնմխելիությունը

1. Սահմանադրության 164-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը չի կարող պատասխանատվության ենթարկվել արդարադատություն իրականացնելիս հայտնած կարծիքի կամ կայացրած դատական ակտի համար, բացառությամբ երբ առկա են հանցագործության կամ կարգապահական խախտման հատկանիշներ:

2. Սահմանադրության 164-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Սահմանադրական դատարանի համաձայնությամբ:

3. Սահմանադրական դատարանի դատավորն իր լիազորությունների իրականացման կապակցությամբ առանց Սահմանադրական դատարանի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո:

4. Ի լրումն Սահմանադրության 27-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավունքի՝ ազատությունից զրկելու պահից դատավորն իրավունք ունի հեռախոսազանգով կամ հաղորդակցման այլ միջոցներով այդ մասին անհապաղ տեղեկացնելու Սահմանադրական դատարանի նախագահին կամ այլ դատավորի:

5. Սույն մասով նախատեսված դեպքերում դատավորին ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանասուներկու ժամից ավելի: Սահմանադրական դատարանի դատավորին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում են Սահմանադրական դատարանի նախագահը և գլխավոր դատախազը: Սահմանադրական դատարանի դատավորին ձերբակալելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է Սահմանադրական դատարանի նախագահին և գլխավոր դատախազին: Դատավորին ազատությունից զրկած մարմինները և պաշտոնատար անձինք

պարտավոր են ապահովել Սահմանադրական դատարանի նախագահի և մյուս դատավորների անարգել մուտքն այն վայր, որտեղ պահվում է ազատությունից զրկված դատավորը, և ապահովել նրանց տեսակցությունը դատավորի հետ:

6. Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական հետապնդման հարուցումը և տվյալ վարույթով~~գործով~~ մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատախազական հսկողությունն իրականացնում է գլխավոր դատախազը կամ նրա հանձնարարությամբ՝ տեղակալը:

7. Քրեական վարույթի շրջանակում դատավորի նկատմամբ գործողությունները կատարվում են՝ առավելագույնս ապահովելով մինչդատական վարույթի գաղտնիությունը, դատավորի և դատական իշխանության հեղինակության ու անկախության նկատմամբ հարգանքը, բացառելով դատավորի գործունեությանը ուղղակի կամ անուղղակի որևէ միջամտություն:

8. Սահմանադրական դատարանի շենքում քննչական գործողություն կատարելու համար դատարանի շենք մուտք գործելն իրականացվում է Սահմանադրական դատարանի նախագահի իրազեկմամբ:

9. Քրեական հետապնդման մեջ չգտնվող դատավորի մասնակցությամբ քննչական գործողություններ կարող են կատարվել Սահմանադրական դատարանի նախագահի իրազեկմամբ:

10. Քրեական հետապնդման մեջ չգտնվող դատավորի մասնակցությամբ առանց դատարանի թույլտվության իրականացվող ապացուցողական~~քննչական~~ գործողությունները կատարվում են նախապես դատավորի հետ համաձայնեցված ժամանակ և վայրում՝ առավելագույնս ապահովելով ապացուցողական~~քննչական~~ գործողության գաղտնիությունը, դատավորի հեղինակության և անկախության նկատմամբ հարգանքը, բացառելով դատավորի գործունեությանը ուղղակի կամ անուղղակի որևէ միջամտություն:

(9-րդ հոդվածը փոփ. 29.03.19 ՀՕ-5-Ն, լրաց. 25.03.20 ՀՕ-198-Ն)

(25.03.20 ՀՕ-198-Ն օրենքն ունի 9-րդ հոդվածին վերաբերող անցումային դրույթ)

Հոդված 12. Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունների դադարման և դադարեցման հիմքերը

1. Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարում են, եթե՝

1) ավարտվել է նրա լիազորությունների ժամկետը.

2) լրացել է նրա պաշտոնավարման տարիքը.

3) նա մահացել է.

4) նա կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կամ ձեռք է բերել այլ պետության քաղաքացիություն.

5) նա «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով հրաժարական է ներկայացրել.

6) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով նա ճանաչվել է անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած.

7) օրինական ուժի մեջ է մտել նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը, կամ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ ռեաբիլիտացնող~~ոչ արդարացնող~~ հիմքով:

2. Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները սույն օրենքի 83-րդ հոդվածով սահմանված կարգով դադարեցվում են, եթե նա՝

1) խախտել է Սահմանադրությամբ և սույն օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները.

2) պաշտոնավարման ընթացքում զբաղվել է քաղաքական գործունեությամբ.

3) ժամանակավոր անաշխատունակության պատճառով վեց ամիս շարունակ ի վիճակի չի եղել կատարելու Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները, բացառությամբ հղիության և ծննդաբերության արձակուրդում գտնվելու դեպքերի.

4) նշանակումից հետո ձեռք է բերել այնպիսի ֆիզիկական արատ կամ հիվանդություն, որի հետևանքով այլևս ի վիճակի չէ կատարելու Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները.

5) կատարել է էական կարգապահական խախտում:

3. Էական կարգապահական խախտում է՝

1) Սահմանադրական դատարանի դատավորի՝ Սահմանադրական դատարանի նիստերից առանց հարգելի պատճառի մեկ տարվա ընթացքում երեք և ավելի անգամ բացակայելը.

2) երկու նկատողություն կամ մեկ խիստ նկատողություն ունեցող Սահմանադրական դատարանի դատավորի կրկին կարգապահական խախտում կատարելը.

3) սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ, 8-րդ և 9-րդ, 11-րդ և 12-րդ, 15-րդ և 16-րդ կետերով, ինչպես նաև նույն հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ, 5-10-րդ կետերով նախատեսված վարքագծի կանոնները դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտելը, որը, պայմանավորված կատարման հանգամանքներով և (կամ) առաջացրած հետևանքներով, համատեղելի չէ դատավորի կարգավիճակի հետ:

3.1. Սույն հոդվածի իմաստով՝ արարքը համարվում է կոպիտ անփութությամբ կատարված, եթե դատավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել:

3.2. Սույն հոդվածի իմաստով՝ արարքը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե դատավորը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը:

4. Սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված դեպքում Ազգային ժողովին հրաժարական ներկայացնելիս Սահմանադրական դատարանի դատավորը այդ մասին անհապաղ տեղեկացնում է Սահմանադրական դատարանի նախագահին:

5. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերով Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարելու դեպքերում՝

նրա լիազորությունները դադարելու օրվան նախորդող յոթերորդ ամսվա վերջին օրը, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 3-7-րդ կետերով սահմանված հիմքերով Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարելուց, ինչպես նաև սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերով Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարեցվելուց ոչ ուշ, քան մեկ օր հետո Սահմանադրական դատարանի նախագահն այդ մասին տեղեկացնում է համապատասխանաբար Հանրապետության նախագահին, Վճռաբեկ դատարանի նախագահին կամ Կառավարությանը՝ հաշվի առնելով սույն օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգավորումները:

(12-րդ հոդվածը խմբ. 29.03.19 ՀՕ-5-Ն, խմբ., լրաց. 25.03.20 ՀՕ-198-Ն, փոփ. 30.06.20 ՀՕ-376-Ն)

(25.03.20 ՀՕ-198-Ն օրենքն ունի 12-րդ հոդվածին վերաբերող անցումային դրույթ)

Հոդված 50. Սահմանադրական դատարանի կողմից կիրառվող սանկցիաները

1. Սահմանադրական դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու կամ դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու կամ դատավարական պարտականություններն անհարգելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, նիստը նախագահողի կարգադրությունները չկատարելու, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ արարքի միջոցով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքում նիստը նախագահողն իրավասու է խախտում թույլ տված անձին նախազգուշացնելու, իսկ Սահմանադրական դատարանը՝ անհրաժեշտության դեպքում նշանակելու տուգանք կամ կարգը խախտողին հեռացնելու նիստերի դահլիճից:

2. Սանկցիան պետք է համաչափ լինի արարքի ծանրությանը և դատարանի գործունեության բնականոն ընթացքն ապահովելու նպատակ հետապնդի:

3. Դատավարության մասնակիցների նկատմամբ նիստերի դահլիճից հեռացումը կարող է կիրառվել ոչ ավելի, քան 36 ժամով, իսկ դատական նիստին ներկա այլ անձանց նկատմամբ՝ որոշակի ժամկետով կամ մինչև դատաքննության ավարտը:

4. Նիստերի դահլիճից հեռացումը չի կարող կիրառվել տվյալ պահին ցուցմունք տվող վկայի նկատմամբ: Դատավարության կողմի նկատմամբ նիստերի դահլիճից հեռացում կիրառվելու դեպքում նիստը կարող է հետաձգվել սանկցիայի կիրառման ժամկետով:

5. Դատավարությանը մասնակցող՝ նիստերի դահլիճից հեռացված անձի կամ նրա ներկայացուցչի հիմնավորված միջնորդությամբ դատարանն իրավունք ունի մինչև սանկցիայի կիրառման ժամկետը լրանալը վերականգնելու հեռացված անձի մասնակցությունը դատական նիստին:

6. Նիստերի դահլիճից հեռացնելու մասին աշխատակարգային որոշումն անհապաղ կամովին չկատարվելու դեպքում կատարվում է հարկադիր կարգով:

7. Դատական տուգանքը կիրառվում է մինչև 100.000 դրամի չափով: Դատական տուգանքի չափը որոշվում է դատարանի հայեցողությամբ, ընդսմին, բացի արարքի ծանրությունից, պետք է հաշվի առնվի նաև արարք կատարողի անձը: Դատական տուգանքը կիրառվում է նույն դատական նիստում կայացվող՝ դատարանի աշխատակարգային որոշմամբ: Դատական տուգանք կիրառելու մասին որոշումը ենթակա է հարկադիր կատարման օրենքով սահմանված կարգով:

8. Գործի քննությանը որպես կողմի ներկայացուցիչ մասնակցող դատախազի կամ փաստաբանի նկատմամբ չի կիրառվում «դատական նիստերի դահլիճից հեռացում» դատական սանկցիան: Գործի քննությանը որպես կողմի ներկայացուցիչ մասնակցող դատախազի կամ փաստաբանի նկատմամբ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված խախտումները թույլ տալու համար դատական սանկցիա կիրառելուց հետո դատական սանկցիայի վերաբերյալ աշխատակարգային որոշումը Սահմանադրական դատարանն ուղարկում է համապատասխանաբար գլխավոր դատախազին կամ Փաստաբանների պալատի նախագահին: Դատական սանկցիա կիրառելու մասին աշխատակարգային որոշումը չի բացառում նույն արարքի համար դատախազի կամ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հնարավորությունը:

9. Սույն հոդվածով նախատեսված դատական սանկցիա կիրառելու փոխարեն Սահմանադրական դատարանը կարող է դիմել գլխավոր դատախազին կամ Փաստաբանների պալատի նախագահին համապատասխանաբար դատախազին կամ փաստաբանին պատասխանատվության ենթարկելու պահանջով: Գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելն իրականացվում է Սահմանադրական դատարանի՝ նույն դատական նիստում ընդունվող աշխատակարգային որոշմամբ: Այն պարտադիր հիմք է դատախազի կամ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար:

10. Դատական սանկցիա կիրառելու մասին դատարանի աշխատակարգային որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

11. Եթե դատարանը գտնում է, որ վարույթի մասնակիցը կամ դատական նիստին ներկա այլ անձ դատարանի նկատմամբ դրսևորել է այնպիսի վարքագիծ կամ կատարել է այնպիսի արարք, որն առաջացնում է քրեական պատասխանատվություն, ապա կարող է առանց նախազգուշացման սույն հոդվածով սահմանված կարգով անձի նկատմամբ կիրառել դատական սանկցիա, բացառությամբ տուգանքի, և վարույթ նախաձեռնելուքրեական գործ հարուցելու միջնորդությամբ դիմում է դատախազին: Այդ հարցով Սահմանադրական դատարանն ընդունում է աշխատակարգային որոշում:

Հոդված 80. Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին եզրակացություն տալու վերաբերյալ գործերի քննությունը

1. Սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարան կարող է դիմել Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ

ընդունված որոշմամբ՝ Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի մասին Ազգային ժողովին հայտնի դառնալուց հետո՝ ոչ ուշ, քան եռամսյա ժամկետում:

2. Ազգային ժողովն իր որոշման մեջ պետք է մատնանշի Հանրապետության նախագահի այն իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որում առկա են պետական դավաճանության կամ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված այլ առանձնապես ծանր կամ ծանր հանցագործության կամ Սահմանադրության կոպիտ խախտման հատկանիշներ:

3. Սույն հոդվածում նշված գործերով դիմումները պետք է համապատասխանեն դիմումին ներկայացվող՝ սույն օրենքով նախատեսված ընդհանուր պահանջներին, ինչպես նաև Ազգային ժողովի որոշմանը պետք է կցվեն Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերը հավաստող ապացույցներ:

4. Սույն հոդվածում նշված գործերով դատավարությանը որպես պատասխանող ներգրավվում է Հանրապետության նախագահը, որն օգտվում է դատավարության կողմի՝ սույն օրենքով սահմանված իրավունքներից և կրում է նրա համար սահմանված պարտականությունները:

5. Հանրապետության նախագահի չներկայանալն արգելք չէ գործի դատաքննության համար:

6. Սույն հոդվածում նշված գործերի դատաքննությունն իրականացվում է բանավոր ընթացակարգով:

7. Սույն հոդվածում նշված գործերով ապացուցման բեռը կրում է դիմող կողմը:

8. Սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարանի եզրակացությունը պետք է ընդունվի ոչ ուշ, քան դիմումի մուտքագրման օրվանից երեք ամիս հետո:

9. Գործը դատաքննության նախապատրաստելիս Սահմանադրական դատարանը կարող է ձևավորել աշխատանքային խումբ իր տված հանձնարարականների հիման վրա գործի առանձին հանգամանքներ պարզելու նպատակով, ինչպես նաև իրավասու մարմիններին կարող է հանձնարարականներ տալ տվյալ գործին առնչվող որոշակի հանգամանքներ պարզելու համար:

10. Սույն հոդվածում նշված գործերի քննության ընթացքում Սահմանադրական դատարանը կամ աշխատանքային խումբն իրավասու է՝

1) դատական, դատախազական, քննչական մարմիններից, պետական այլ մարմիններից, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններից պահանջելու իրենց տրամադրության տակ գտնվող նյութեր, ~~քրեական,~~ քաղաքացիական, վարչական գործեր, քրեական վարույթի նյութեր, դատավճիռներ, վճիռներ, որոշումներ, տեղեկանքներ և այլ նյութեր.

2) պատվիրելու փորձաքննություններ և ստանալու եզրակացությունները.

3) հրավիրելու և լսելու այն անձանց, որոնց բացատրությունները կարող են նշանակություն ունենալ գործով կայացվելիք եզրակացության համար:

11. Դատական նիստը բացվելուց հետո Ազգային ժողովի ներկայացուցիչը ներկայացնում է դիմող կողմի դիրքորոշումը, որից հետո ներկայացված փաստերի առնչությամբ իր դիրքորոշումն է հայտնում Հանրապետության նախագահը կամ նրա

ներկայացուցիչը: Դրանից հետո կատարվում է ապացույցների հետազոտում: Նիստի վերջում եզրափակիչ խոսքով հանդես են գալիս դիմող կողմը, որը կարող է պնդել իր դիմումը կամ հրաժարվել դրանից, և Հանրապետության նախագահը կամ նրա ներկայացուցիչը, որին տրամադրվում է պաշտպանությամբ հանդես գալու հնարավորություն: Հանրապետության նախագահը կամ նրա ներկայացուցիչն ունի վերջին ելույթի իրավունք: Վերջին ելույթից հետո Սահմանադրական դատարանը կարող է սույն օրենքով նախատեսված կարգով աշխատակարգային որոշում ընդունել գործի վարույթը վերսկսելու վերաբերյալ, իսկ այդպիսի որոշում չընդունվելու դեպքում նիստը նախագահողը հայտարարում է գործի քննության ավարտի մասին:

12. Եթե սույն օրենքով սահմանված ժամկետում դիմող կողմը հրաժարվում է դիմումից, և Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում չի առարկում դրա դեմ, ապա գործի վարույթը ենթակա է կարճման:

13. Դիմումից հրաժարվելը կատարվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով:

14. Սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարանը կարող է ընդունել հետևյալ եզրակացություններից մեկը.

1) Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի բացակայության մասին.

2) Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին:

15. Եզրակացություն ընդունելիս Սահմանադրական դատարանն իրավասու է նաև գնահատելու Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի՝ սույն հոդվածի 2-րդ մասում նշված հանցագործության հատկանիշներն ամրագրող դրույթների սահմանադրականությունը: Հանգելով այդ դրույթների՝ Սահմանադրությանը հակասելու համոզմանը՝ Սահմանադրական դատարանն ընդունում է դրանք Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշում և ընդունում սույն հոդվածի 14-րդ մասի 1-ին կետով նախատեսված եզրակացությունը:

16. Սույն հոդվածի 14-րդ մասի 2-րդ կետով նախատեսված եզրակացությունում Սահմանադրական դատարանը պետք է նշի՝

1) Հանրապետության նախագահի այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնցում առկա են պետական դավաճանության կամ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված այլ առանձնապես ծանր կամ ծանր հանցագործության հատկանիշներ և այդ հանցագործության որակումը կամ այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնցում առկա են Սահմանադրության կոպիտ խախտման հատկանիշներ.

2) սույն մասի 1-ին կետում նշված արարքներում Հանրապետության նախագահի մեղավորությունը հաստատող ապացույցները և դատարանի պատճառաբանված դիրքորոշումը դրանց գնահատման վերաբերյալ:

17. Եզրակացությունն ընդունվելուց հետո՝ ոչ ուշ, քան հաջորդ օրը, ուղարկվում է Ազգային ժողով և հայտարարվում հանրային հեռուստատեսությամբ:

Հոդված 84. Իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու մասին համաձայնություն տալու վերաբերյալ գործերի քննությունը

1. Իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու մասին համաձայնություն տալու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարան կարող է դիմել գլխավոր դատախազը:

2. Սույն հոդվածում նշված գործերով դիմումները պետք է համապատասխանեն դիմումին ներկայացվող՝ սույն օրենքով նախատեսված ընդհանուր պահանջներին, ինչպես նաև դիմումին պետք է կցվեն Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու հիմքերը հավաստող ապացույցներ:

3. Սույն հոդվածով նշված գործերով դիմումը քննության ընդունելու պահից Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները կասեցվում են մինչև դատաքննության ավարտը: ~~Դատավորի նկատմամբ հարուցված քրեական գործի կասեցման դեպքում դատավորը շարունակում է իրականացնել իր լիազորությունները մինչև քրեական գործի վերսկսման մասին որոշման կայացումը:~~ Դատավորի նկատմամբ հարուցված քրեական հետապնդման ժամկետի կասեցման դեպքում դատավորը շարունակում է իրականացնել իր լիազորությունները մինչև քրեական հետապնդման ժամկետի վերսկսման մասին որոշման կայացումը:

4. Դատավորի լիազորությունների կասեցման ընթացքում դատավորը շարունակում է ստանալ իր վարձատրությունը:

5. Սահմանադրական դատարանի այն դատավորը, որի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ գործ է քննվում, դատավարությանը ներգրավվում է որպես պատասխանող և օգտվում է դատավարության կողմի՝ սույն օրենքով նախատեսված իրավունքներից և կրում նրա պարտականությունները:

6. Պատշաճ ծանուցված՝ Սահմանադրական դատարանի դատավորի առանց հարգելի պատճառի չներկայանալն արգելք չէ գործի դատաքննության համար:

7. Սույն հոդվածում նշված գործերի դատաքննությունն իրականացվում է բանավոր ընթացակարգով:

8. Սույն հոդվածում նշված գործերով ապացուցման բեռը կրում է դիմող կողմը:

9. Եթե սույն օրենքով սահմանված ժամկետում դիմող կողմը հրաժարվում է դիմումից, և Սահմանադրական դատարանի դատավորը եռօրյա ժամկետում չի առարկում դրա դեմ, ապա գործի վարույթը ենթակա է կարճման:

10. Սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարանն իրականացնում է սույն օրենքի 80-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված իրավազորությունները:

11. Սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարանը ոչ ուշ, քան դիմումի մուտքագրման օրվանից 48 ժամվա ընթացքում ընդունում է հետևյալ որոշումներից որևէ մեկը, իսկ սույն մասի 1-ին կետում նշված որոշումն ընդունելու դեպքում՝ նաև սույն մասի 2-րդ կետում նշված որոշումը՝

1) Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն տալու մասին.

2) Սահմանադրական դատարանի դատավորին ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին.

3) դիմումը մերժելու մասին:

12. Սույն հոդվածում նշված գործերով որոշում ընդունելիս Սահմանադրական դատարանը գնահատում է նաև Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու հիմքերն ամրագրող օրենքների սահմանադրականությունը և, հանգելով դրանց՝ Սահմանադրությանը հակասելու համոզմանը, ընդունում է սույն հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետում նշված որոշումը:

Հոդված 84.1. Սահմանադրական դատարանի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը՝ կախված քրեական վարույթից

1. Սահմանադրական դատարանի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը կասեցվում է, եթե նույն փաստերի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ~~հարուցվել է քրեական գործ~~, և վերսկսվում է քրեական վարույթի ավարտից հետո:

2. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը Սահմանադրական դատարանը կարճում է, եթե կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը վերսկսելուց հետո առկա են սույն օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված՝ Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունների դադարման հիմքեր: Քրեական վարույթով~~Քրեական գործով~~ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննելիս պարտադիր է Սահմանադրական դատարանի համար միայն այն փաստերով, որոնցով հաստատված են որոշակի գործողությունների կատարումը և դրանք կատարած անձինք:

(84.1-ին հոդվածը լրաց. 25.03.20 ՀՕ-198-Ն)

(25.03.20 ՀՕ-198-Ն օրենքն ունի 84.1-ին հոդվածին վերաբերող անցումային դրույթ)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՄԱՐԴՈՒՆ ՕՐԳԱՆՆԵՐ ԵՎ (ԿԱՄ) ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐ ՓՈԽՊԱՏՎԱՍՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 13. Պատասխանատվությունը դոնորի և ռեցիպիենտի տվյալները հրապարակելու համար

Դոնորին և ռեցիպիենտին վերաբերող տեղեկությունները բժշկական գաղտնիք են:

Բժիշկներին, բժշկական հաստատության այլ աշխատակիցներին արգելվում է դոնորի և (կամ) ռեցիպիենտի կամքին հակառակ վերջիններիս մասին տվյալներ հրապարակելը: Այդ տվյալները հրապարակող (տարածող) անձինք ենթակա են պատասխանատվության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հետաքննական մարմինների պահանջով դատարանին, դատախազությանը, քննչական մարմնին դոնորի և ռեցիպիենտի մասին տվյալներ, տեղեկան**քներ և փաստաթղթեր են տրվում միայն նրանց վարույթում գտնվող** ~~քրեական կամ քաղաքացիական գործերի կապակցությամբ~~**քրեական վարույթների կամ քաղաքացիական գործերի կապակցությամբ**:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 22. Դատարաններում պետական տուրքի գծով արտոնությունները

1. Դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են՝

1) հայցվորները՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման և աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով.

2) հայցվորները՝ ալիմենտի գանձման, ալիմենտի չափի ավելացման, ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությամբ ալիմենտ վճարելու պարտավոր անձի մեղքով պարտք առաջանալիս մեղավոր անձին պատասխանատվության ենթարկելու, ալիմենտը ժամանակին չվճարելու համար տուգանք բռնագանձելու կամ ալիմենտային պարտավորությունների ուշացմամբ պատճառված վնասների հատուցման վերաբերյալ հայցերով.

3) հայցվորները՝ խեղման կամ առողջությանը պատճառված այլ վնասի, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով.

4) սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության մարմինները՝ տուժողին կամ նրա ընտանիքի անդամներին վճարված թոշակի և նպաստի գումարները վնաս պատճառողից գանձելու վերաբերյալ ռեգրեսիվ հայցերով.

~~5) հայցվորները՝ հանցագործության հետևանքով իրենց պատճառված նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով.~~

5) հայցվորները՝ քրեական վարույթի ընթացքում հատուցման ենթակա գույքային վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով

6) հայցվորները՝ օրենքով նախատեսված դեպքերում այլ անձանց՝ օրենքով պաշտպանվող իրավունքների և շահերի պաշտպանության հարցերով դատարան տրվող հայցադիմումների (դիմումների) գծով.

7) արդարացված մեղադրյալները~~արդարացվածները~~՝

~~ա. իրենց անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավվելու և ապօրինի դատապարտման հետևանքով պատճառված վնասի գույքային հատուցման հայցերով,~~

ա. անօրինական քրեական հետապնդում հարուցելու, հարկադրանքի միջոցներ կիրառելու, դատապարտելու, ինչպես նաև իրավունքների կամ ազատությունների անօրինական այլ սահմանափակումների հետևանքով իրեն պատճառված վնասի գույքային հատուցման հայցերով,

բ. նախկին աշխատանքում (նախկին պաշտոնում) վերականգնման, իսկ դրա անհնարինության դեպքում՝ համարժեք աշխատանք (պաշտոն) ստանալու կամ նախկին աշխատանքը (պաշտոնը) կորցնելու հետևանքով պատճառված վնասի դրամական փոխհատուցման հայցերով,

~~գ. ազատազրկման, կալանքի կամ ազատության սահմանափակման ձևով պատիժը կրելու, ինչպես նաև կարգապահական գումարտակում պահվելու ժամանակը բոլոր տեսակի աշխատանքային ստաժների մեջ հաշվակցելու հայցերով,~~

գ. անազատության մեջ պահելու ձևով պատիժը կրելու ժամանակը բոլոր տեսակի աշխատանքային ստաժների մեջ հաշվակցելու հայցերով,

դ. նախկինում զբաղեցրած բնակելի տարածքը հետ ստանալու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ բնակմակերեսով և գտնվելու վայրով համարժեք բնակելի տարածք ստանալու հայցերով.

ե. գույքն առգրավելու, արգելադրելու, բռնագրավելու կամ այլ կերպ տնօրինելու հետևանքով պատճառված վնասի հատուցման հայցերով.

8) հայցվորները՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ խոշտանգման հետևանքով պատճառված վնասների փոխհատուցման վերաբերյալ հայցով.

9) ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝

ա. կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, կատարման եղանակն ու կարգը փոխելու, դատական ակտի կատարման շրջադարձ կատարելու վերաբերյալ դիմումների քննության արդյունքով կայացվող որոշումների վերաբերյալ բողոքներով,

բ. մշակութային արժեքներն ապօրինի տիրապետողից հետ պահանջելու մասին հայց ներկայացնելիս.

10) բողոք բերող անձինք՝ նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հետևանքով դատական ակտը վերանայելու վերաբերյալ բողոքներով.

11) պետական մարմինները՝ սույն հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի «ա» ենթակետով սահմանված դեպքերում.

12) դիմողները՝ արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմումների համար.

13) դիմողները կամ հայցվորները՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ, 29.3-րդ և 31.3-րդ գլուխներով նախատեսված գործերով.

14) հայցվորները՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պաշտպանական որոշման վերաբերյալ հայցերով.

15) դատախազության մարմինները՝ պետական շահերի պաշտպանության վերաբերյալ հայցերով.

16) դիմողները՝ ընտրելու և (կամ) ընտրվելու իրենց իրավունքների խախտման վերաբերյալ դիմումներով.

17) ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունները՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ գլխով նախատեսված գործերով.

18) դիմողները՝ քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու, անգործունակ ճանաչված քաղաքացուն գործունակ ճանաչելու կամ քաղաքացու գործունակության սահմանափակումները վերացնելու վերաբերյալ դիմումներով.

19) ապաստան հայցողները և փախստականները՝

ա. ապաստանի հայցի և փախստականի ճանաչման վերաբերյալ ընդունված որոշումները բողոքարկելու վերաբերյալ հայցերով,

բ. ապաստանի հայցի կամ փախստականի ճանաչման առնչությամբ հարուցված՝ ապաստանի ընթացակարգի շրջանակներում իրենց իրավունքների և երաշխիքների խախտման վերաբերյալ հայցերով.

20) հոգեբուժական կազմակերպությունները՝ քաղաքացուն հոգեբուժական կազմակերպություն ոչ հոժարակամ հոսպիտալացման ենթարկելու վերաբերյալ դիմումներով.

21) բժշկական կազմակերպությունները կամ առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը՝ քաղաքացուն բժշկական ոչ հոժարակամ հետազոտության և (կամ) բուժման ենթարկելու վերաբերյալ դիմումներով.

22) հարկադիր կատարողը՝ կողմերի հաշտության համաձայնության հիման վրա դատարանի վճռի վերանայման վերաբերյալ դիմումներով.

23) ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարը և լուծարային կառավարիչը՝ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրենց խնդիրներն իրագործելու նպատակով ներկայացվող հայցերով.

24) պարտապանը՝ կամավոր սնանկության դիմումներով.

25) սնանկության գործով կառավարիչները (ժամանակավոր կառավարիչները)՝ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրենց լիազորությունների շրջանակներում դատարաններ ներկայացվող հայցադիմումների, դիմումների համար, ինչպես նաև դատական ակտն իրենց վարձատրության մասով բողոքարկելու համար.

26) մարդու իրավունքների պաշտպանը՝ իր ներկայացրած հայցերով.

27) հայցվորները՝ պետական նպաստների (այդ թվում՝ նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման), պետական կենսաթոշակների, սոցիալական ապահովության ծրագրերով վճարվող դրամական այլ վճարների, սոցիալական ապահովագրության վճարների նշանակման, վճարման, հաշվարկման, վերահաշվարկման և այլ հայցերով.

28) հայցվորը՝ Հայաստանի Հանրապետություն անօրինական տեղափոխված կամ Հայաստանի Հանրապետությունում ապօրինի պահվող երեխայի վերադարձի վերաբերյալ գործերով.

29) դիմողները՝ ռազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած զինծառայողին կամ այլ քաղաքացուն անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ գործերով:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված անձինք տուրքի վճարումից ազատվում են նաև դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

3. Դատական ակտը միայն դատական ծախսերի մասով բողոքարկվելու դեպքում բողոք բերող անձից պետական տուրք չի գանձվում:

4. Միջանկյալ դատական ակտերի դեմ ներկայացված բողոքներով պետական տուրք չի գանձվում:

5. Քրեական դատավարությունում հարուցված գույքային հայցի~~քաղաքացիական հայցի~~ համար պետական տուրք չի գանձվում:

(22-րդ հոդվածը փոփ., լրաց. 28.12.98 ՀՕ-277, 12.10.99 ՀՕ-4, 13.12.00 ՀՕ-123, լրաց. 06.11.01 ՀՕ-258, խմբ., լրաց. 07.07.05 ՀՕ-159-Ն, լրաց. 01.06.06 ՀՕ-116-Ն, փոփ. 28.11.07 ՀՕ-282-Ն, լրաց. 27.11.08 ՀՕ-220-Ն, փոփ. 07.04.09 ՀՕ-84-Ն, լրաց. 22.12.10 ՀՕ-15-Ն, 25.10.11 ՀՕ-265-Ն, 16.12.16 ՀՕ-243-Ն, փոփ., լրաց. 09.02.18 ՀՕ-111-Ն, լրաց. 09.12.19 ՀՕ-305-Ն, խմբ. 19.04.21 ՀՕ-177-Ն)

(19.04.21 ՀՕ-177-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 26. Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի և մատուցվող ծառայությունների,

ինչպես նաև հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար պետական տուրքի գծով արտոնությունները

(վերնագիրը լրաց. 28.12.98 ՀՕ-277)

1. Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների կացության կարգավիճակի հետ կապված փաստաթղթեր տալու, Հայաստանի Հանրապետություն մուտքի արտոնագիր ձևակերպելու հետ կապված ծառայությունների համար պետական տուրքի վճարումից ազատվում են.

ա) Հայաստանի Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի և կառավարության կողմից աշխատանքի հրավիրված օտարերկրյա մասնագետներն ու նրանց ընտանիքի անդամները.

բ) Հայաստանի Հանրապետությանը մարդասիրական և տեխնիկական օգնություն ցույց տալու նպատակով Հայաստանի Հանրապետություն ժամանող անձինք: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով) ուղղակիորեն նշված չլինելու դեպքում ծրագրի (գործունեության) տարբերակումն ըստ մարդասիրական օգնության և բարեգործական ու տեխնիկական (այլ) բնույթի իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության մարդասիրական օգնությունը կոորդինացնող լիազորված մարմինը.

գ) Հայաստանի Հանրապետության քաղաքացու մերձավոր ազգականները (ամուսին, երեխա, հայր, մայր, քույր, եղբայր).

գ[1]) Հայաստանի Հանրապետությունում հանրակրթական և մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում սովորող, աշխատող (մանկավարժ, դասախոս) օտարերկրյա անձինք.

դ) ***(ենթակետն ուժը կորցրել է 25.12.06 ՀՕ-49-Ն)***

ե) ***(ենթակետն ուժը կորցրել է 25.12.06 ՀՕ-49-Ն)***

զ) մինչև 18 տարեկան անձինք.

է) դիվանագիտական անձնագրերով Հայաստանի Հանրապետություն մուտք գործող անձինք, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների աշխատակիցներն ու նրանց ընտանիքի անդամները.

ը) Հայաստանի Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի նախագահի[ուղղ], սահմանադրական դատարանի նախագահի, վարչապետի կամ արտաքին գործերի նախարարի, մարդու իրավունքների պաշտպանի հրավերով Հայաստանի Հանրապետություն այցելող պաշտոնական անձինք և պատվիրակությունների անդամները.

թ) փախստականի կարգավիճակ ստացած անձի՝ Հայաստանի Հանրապետություն ժամանող մերձավոր ազգականները (ամուսին, երեխա, հայր, մայր, քույր, եղբայր).

ժ) ազգությամբ հայ այն օտարերկրյա քաղաքացիները, որոնց մշտական բնակության օտարերկրյա պետությունում ստեղծվել է այնպիսի արտակարգ իրավիճակ, որը սպառնում է քաղաքացիների կյանքին կամ առողջությանը:

2. Հայաստանի Հանրապետություն մուտքի արտոնագիր տալու համար պետական տուրքի վճարումից ազատվում են.

ա) Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունում հավատարմագրված միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները.

բ) ***(ենթակետն ուժը կորցրել է 25.12.06 ՀՕ-49-Ն)***

գ) ***(ենթակետն ուժը կորցրել է 25.12.06 ՀՕ-49-Ն)***

դ) քաղաքացիական, ընտանեկան գործերով և քրեական վարույթներով ~~քրեական գործերով~~ որպես կողմ, վկա կամ փորձագետ Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների դատարաններ կամ նախաքննության մարմիններ~~նախաքննական մարմիններ~~ հրավիրվող անձինք:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր (բացառությամբ կենսաչափականի) տալու համար պետական տուրքի վճարումից ազատվում են 16 տարին լրանալուց հետո առաջին անգամ անձնագիր ստացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և աղքատության ընտանեկան նպաստ ստացող ընտանիքի անդամ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

3.1. Նույնականացման քարտ տալու համար պետական տուրքի վճարումից ազատվում են աղքատության ընտանեկան նպաստ ստացող ընտանիքի անդամ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և առաջին անգամ նույնականացման քարտ ստացող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք 16 տարին լրանալուց հետո չեն ստացել Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր:

4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության մարմինների կողմից ֆիզիկական անձանց հաշվառման հասցեների վերաբերյալ տեղեկանք տալու համար պետական տուրքի վճարումից ազատվում են՝

ա) միայնակ կենսաթոշակառուները.

բ) առաջին և երկրորդ խմբի հաշմանդամները.

գ) ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվող անձինք:

5. Հայաստանի Հանրապետությունում հանրակրթական և մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում սովորող կամ որպես մանկավարժ, դասախոս աշխատող օտարերկրյա անձի ծնողներին, ամուսնուն, զավակին, քրոջը կամ եղբորը Հայաստանի Հանրապետությունում կացության ժամանակավոր կարգավիճակ և կացության քարտ տալու, կացության ժամանակավոր կարգավիճակի ժամկետը երկարաձգելու, ինչպես նաև հաշվառելու համար պետական տուրքը նվազեցվում է 60 տոկոսի չափով: Սույն մասով նախատեսված արտոնությունից օգտվելու համար պահանջվող՝ Հայաստանի Հանրապետությունում սովորող կամ որպես մանկավարժ, դասախոս աշխատող օտարերկրյա անձանց ծնող, ամուսին, զավակ, քույր կամ եղբայր հանդիսանալու փաստը հավաստող փաստաթղթերի ցանկը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

(26-րդ հոդվածը լրաց. 19.11.02 ՀՕ-462-Ն, 01.12.03 ՀՕ-46-Ն, 03.03.04 ՀՕ-50-Ն, 01.06.06 ՀՕ-116-Ն, փոփ. 25.12.06 ՀՕ-49-Ն, լրաց. 28.11.07 ՀՕ-254-Ն, 10.05.11 ՀՕ-149-Ն, 24.10.12 ՀՕ-185-Ն, 19.06.13 ՀՕ-65-Ն, 11.12.13 ՀՕ-138-Ն)

Հոդված 29. Այլ ծառայությունների կամ գործողությունների համար պետական տուրքի գծով արտոնությունները

Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար պետական տուրքի վճարումից ազատվում են՝

ա) մինչև 12 տարեկան երեխաները.

բ) տարանցիկ ուղևորները.

գ) Հայրենական մեծ պատերազմի մասնակիցները և նրանց հավասարեցված անձինք, Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամները և նրանց հավասարեցված անձինք, Հայրենական մեծ պատերազմի 1-ին խմբի հաշմանդամին ուղեկցող անձը, Հայրենական մեծ պատերազմում զոհվածների այրիները, Խորհրդային Միության հերոսները և Փառքի երեք աստիճանների շքանշաններով պարգևատրված անձինք, Հայաստանի Հանրապետության ազգային հերոսները.

դ) Հայաստանի Հանրապետության օդանավակայաններից մինչև 450 կիլոմետր շառավղով օդային փոխադրումների իրականացման դեպքում՝ օդային տրանսպորտի միջոցով մեկնող ֆիզիկական անձինք.

ե) Գյումրու «Շիրակ» օդանավակայանի օդային ուղևորները.

զ) օդային տրանսպորտով մեկնող այն ֆիզիկական անձինք, որոնք սույն կետով սահմանված արտոնության ժամկետներում մեկնում են այդ ուղղությամբ առաջին թռիչքի մեկնարկի պահին նախորդող վերջին 12 ամիսներին չսպասարկված IATA կոդով օդանավակայաններ առևտրային ավիափոխադրումներ իրականացնող ավիաընկերությունների միջոցով, եթե այդ ավիաընկերությունները դեպի այդ նույն օդանավակայաններ չվերթեր են իրականացնում IATA ամառային և ձմեռային ժամանակահատվածներում:

Սույն կետով նախատեսված արտոնության ժամկետը տրամադրվում է 36 ամսով (24 ամսով երկարաձգելու հնարավորությամբ), որը հաշվարկվում է ամիսների նվազման կարգով՝ սկսած տվյալ ուղղությամբ արտոնության տրամադրման հիմք հանդիսացող պայմանները բավարարող առաջին ավիաընկերության առաջին թռիչքի մեկնարկից: Սույն կետով սահմանված արտոնությունների կիրառման համապատասխան ժամկետների, այդ թվում՝ երկարաձգման, ավիափոխադրողի, չվերթերի հաճախականության պահանջների և չսպասարկվող ուղղության վերաբերյալ, ինչպես նաև այլ անհրաժեշտ տեղեկատվությունը հրապարակվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում առկա տեղեկությունների տրամադրման համար պետական տուրքի վճարումից ազատվում են օրենսդիր և գործադիր իշխանության, տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության

կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամը, մարդու իրավունքների պաշտպանը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ հայտ ներկայացրած՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետով սահմանված լրատվական գործունեություն իրականացնողները, որոնց հայտի հիման վրա տրամադրված հասանելիությունը օրենքով նախատեսված կարգով չի սահմանափակվել: Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում առկա և ինտերնետային կայքում տեղադրված ամբողջական տեղեկությունների տրամադրման համար պետական տուրքի վճարումից ազատվում են նաև դատական իշխանության մարմինները, Հայաստանի Հանրապետության դատախազական մարմինները, օրենքով ստեղծված մշտապես գործող մարմինները, նոտարները, բանկերը և այլ կազմակերպություններ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Տրանսպորտային միջոցների տարեկան տեխնիկական զննության համար պետական տուրքի վճարումից ազատվում են սոցիալական ապահովության մարմիններից արտոնյալ պայմաններով ավտոմեքենաներ ստացած հաշմանդամները՝ այդ ավտոմեքենաների մասով:

~~Պետական իրավասու մարմինները կալանք և (կամ) արգելանք դնելու միջոցով անշարժ գույքի նկատմամբ իրավունքի սահմանափակման պետական գրանցման համար ազատվում են պետական տուրքի վճարումից:~~

Պետական իրավասու մարմինները կալանք և (կամ) արգելանք դնելու, ինչպես նաև արգելադրման միջոցով անշարժ գույքի նկատմամբ իրավունքի սահմանափակման պետական գրանցման համար ազատվում են պետական տուրքի վճարումից

Կադաստրային քարտեզագրումն ավարտված տարածքներում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման գործընթացի ժամանակ քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող՝ բնակելի նշանակության անշարժ գույքի (բացառությամբ առանձին միավոր հանդիսացող ավտոտնակների) և գյուղատնտեսական նշանակության հողամասերի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման, այդ թվում՝ այդ գործընթացի ժամանակ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի օտարման կամ վարձակալության պայմանագրերի պետական գրանցման համար սեփականատերերը ազատվում են պետական տուրքի վճարումից:

Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար պետական տուրքի վճարումից ազատվում են պետական սեփականություն համարվող բնակելի նշանակության անշարժ գույք անհատույց ձեռք բերած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները՝ այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման համար:

Օրենքով նախատեսված դեպքերում սեփականության իրավունքով անհատույց տրամադրված պետական սեփականություն համարվող հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցելիս սեփականատերերն ազատվում են պետական տուրքի վճարումից:

1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած՝ իրենց զբաղեցրած համայնքային բնակարանային ֆոնդի բնակելի տարածքների նկատմամբ սահմանված կարգով վարձակալ ճանաչված անձինք ազատվում են այդ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար պետական տուրքի վճարումից:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 225 հոդվածով սահմանված դեպքերում բնակելի տարածության օգտագործման իրավունքը գրանցելու համար սեփականատերերը և օգտագործողներն ազատվում են պետական տուրքի վճարումից:

Հայաստանի Հանրապետության պետական ծրագրերի շրջանակներում հողերի միավորման (կոնսոլիդացիա) պայմանագրերով սեփականության իրավունքը գրանցելու համար սեփականատերերն ազատվում են պետական տուրքի վճարումից:

Իրավաբանական անձն ազատվում է վերակազմակերպմամբ պայմանավորված պետական գրանցման համար, նոր խմբագրությամբ կանոնադրության պետական գրանցման կամ իր առանձնացված ստորաբաժանման, հիմնարկի նոր խմբագրությամբ կանոնադրության պետական հաշվառման համար պետական տուրքի վճարումից, եթե պետական գրանցումը կամ հաշվառումը պայմանավորված է պետական ռեգիստրում գրանցումից կամ հաշվառումից հետո ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն վերակազմակերպվելու կամ կանոնադրությունն օրենքին համապատասխանեցնելու՝ օրենքով սահմանված անհրաժեշտությամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկերում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերում գտնվող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար սույն օրենքի 16-րդ հոդվածի 36-րդ կետով սահմանված վճարները գանձվում են 50 տոկոսի չափով:

Անշարժ գույքի պետական ռեգիստրի հետ պետական գրանցման համար օրենքով նախատեսված տուրքը տարաժամկետ կարգով վճարելու պայմանագրի հիման վրա համայնքի ղեկավարի որոշմամբ օրինական ճանաչված ինքնակամ կառույց հանդիսացող ավտոտնակի և համապատասխան հողամասի նկատմամբ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման համար սույն օրենքով նախատեսված տուրքի գումարը վճարվում է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման պահից՝ երկու տարվա ընթացքում, եռամսյակային պարբերականությամբ՝ պետական տուրքի մեկ ութերորդի չափով:

(29-րդ հոդվածը լրաց. 28.12.98 ՀՕ-277, լրաց., փոփ. 12.10.99 ՀՕ-4, լրաց. 30.05.00 ՀՕ-67, 15.12.00 ՀՕ-136, 09.10.01 ՀՕ-234, փոփ. 12.06.02 ՀՕ-375-Ն, լրաց. 04.10.05 ՀՕ-198-Ն, 01.06.06 ՀՕ-116-Ն, խմբ. 26.12.08 ՀՕ-241-Ն, լրաց. 19.03.12 ՀՕ-131-Ն, 17.12.14 ՀՕ-223-Ն, 16.12.15 ՀՕ-192-Ն, խմբ., փոփ., լրաց. 20.10.16 ՀՕ-167-Ն,

լրաց. 16.12.16 ՀՕ-33-Ն, 14.11.19 ՀՕ-215-Ն, 09.12.19 ՀՕ-258-Ն, փոփ., լրաց. 06.03.20 ՀՕ-146-Ն, խմբ. 19.01.21 ՀՕ-41-Ն)

(19.01.21 ՀՕ-41-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 37. Քաղաքացիների պատասխանատվությունը

1. Պետական նպաստ ստացող ընտանիքի (քաղաքացու) ներկայացրած փաստաթղթերում կամ այլ մարմիններից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված տվյալներում նպաստի իրավունք տվող ոչ հավաստի տեղեկությունների հայտնաբերման դեպքում նպաստի վճարումը դադարեցվում է հայտնաբերման ամսից:

1.1. Պետական նպաստ ստացող անձը (ընտանիքի անդամը) պարտավոր է՝

1) տարածքային կենտրոն ներկայացնել իրեն (ընտանիքին) վերաբերող հավաստի տվյալներ.

2) տարածքային կենտրոնին տեղեկացնել այն հանգամանքների մասին, որոնց առկայությունը կարող է հանգեցնել պետական նպաստի չափը փոփոխելուն կամ դրա վճարումը դադարեցնելուն:

1.2. Սույն հոդվածի 1.1-ին մասով սահմանված պարտականությունները չկատարելու հետևանքով պետական նպաստ ստացող անձին կամ ընտանիքին ավել վճարված պետական նպաստի գումարները ենթակա են հետգանձման՝ սույն օրենքով սահմանված կարգով:

2. Ավել վճարված գումարները, բացառությամբ սույն հոդվածի 2.1-ին և 2.3-րդ մասերում նշված դեպքերի, ամբողջությամբ ենթակա են վերադարձման կամ դատական կարգով բռնագանձման, սակայն ավել գումարների վճարման հանգամանքի հայտնաբերման ամսվան նախորդած 12 ամիսների ընթացքում ստացած ավել գումարի չափից ոչ ավելի: Ավել վճարված նպաստի գումարները, նպաստ նշանակող տարածքային կենտրոնի հետ փոխհամաձայնեցված ժամանակացույցի հիման վրա կարող են վերադարձվել նաև՝

1) նպաստ նշանակող տարածքային կենտրոնի այն աշխատակցի կողմից, որի մեղքով (գործողությունների կամ անգործության արդյունքում) վճարվել են նպաստի գումարները.

2) այն անձի կողմից, որին նշանակվել (վճարվել) է նպաստը, նրա օրինական ներկայացուցչի կողմից, նրանց փոխարեն նպաստն ստանալու՝ օրենքով այդ իրավունքն ունեցող անձի կողմից կամ այլ անձի կողմից:

2.1. Ժամանակավոր անաշխատունակության և վարձու աշխատողի, ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի մայրության նպաստների ավել վճարված գումարների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

2.2. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված նպաստի, 23.2-րդ հոդվածում նշված չաշխատող անձանց տրվող մայրության նպաստի ավել վճարված գումարները ենթակա են վերադարձման, եթե նպաստը նշանակվել է դիմումին կից սխալ տեղեկություններով փաստաթղթեր ներկայացնելու հիման վրա, և խախտումը հայտնաբերվել է նպաստը նշանակելուց հետո՝ 12 ամսվա ընթացքում:

2.3. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 7-9-րդ կետերով սահմանված նպաստներից պահումներ կատարելու, այդ նպաստների ավել վճարված գումարները հետ գանձելու (վերադարձնելու, բռնագանձելու) հետ կապված հարաբերությունները կարգավորվում են կենսաթոշակի ավել վճարված գումարները հետ գանձելու (Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերականգնելու, բռնագանձելու) համար «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Սույն մասում նշված նպաստների՝ ավել վճարված գումարների չափում չեն հաշվարկվում այն գումարները, որոնք վճարվել են մինչև 2017 թվականի հունվարի 1-ը, բացառությամբ այն դեպքի, երբ նպաստի գումարը վճարվել է՝

1) նպաստ ստանալու իրավունք ունեցող անձի մահվան ամսվան հաջորդող ամիսների համար կամ Հայաստանի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջազգային պայմանագիր կնքած պետությունում նպաստ ստանալու իրավունք ունեցող անձին կենսաթոշակ նշանակելու ամսվան հաջորդող ամիսների համար կամ

2) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված արարքի հետևանքով, որը հաստատված է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած ~~վճռով~~դատավճռով:

Սույն մասում նշված նպաստ ստանալու իրավունքը սույն օրենքով սահմանված կարգով չդադարեցնելու հետևանքով սխալմամբ (Հայաստանի Հանրապետության օրենքի խախտմամբ) ավել վճարված նպաստի գումարների չափը հաշվարկելիս եթե նպաստառուն նպաստի գումարն ավել վճարված ժամանակահատվածում ունի սույն մասում նշված այլ նպաստի կամ պետական բյուջեից ֆինանսավորվող կենսաթոշակի իրավունք, ապա համարվում է, որ նպաստառուն այլ նպաստ կամ կենսաթոշակ նշանակելու դիմում է ներկայացրել այն օրը (բայց ոչ շուտ, քան այլ նպաստի կամ կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու օրը), երբ նպաստ ստանալու իրավունքը պետք է դադարեցվեր: Այս դեպքում նպաստ նշանակելու դիմում ներկայացնելու օրվանից մինչև նպաստ ստանալու իրավունքը փաստացի դադարեցնելու օրն ընկած ժամանակահատվածի համար հաշվարկված այլ նպաստի կամ կենսաթոշակի գումարը համարվում է տարածքային կենտրոնի մեղքով չվճարված նպաստի գումար և հաշվանցվում է ավել վճարված նպաստի գումարներից:

2.4. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված նպաստի, 23.2-րդ հոդվածում նշված չաշխատող անձանց տրվող մայրության նպաստի ավելի վճարված գումարները կարող են դատական կարգով բռնագանձվել գործատուից, եթե այդ գումարները վճարվել են «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ գրանցման հայտը ներկայացնելու ժամկետների խախտման հետևանքով (այդ թվում՝ եթե գրանցման հայտը ներկայացվել է «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ տեղեկատվական բազայում ներառված տվյալներում փոփոխություններ կատարելու նպատակով):

3. Խորհրդի պատշաճ հիմնավորված առաջարկությամբ ընտանիքի (քաղաքացու) ներկայացրած փաստաթղթերում նպաստի իրավունք տվող կամ նպաստի չափի փոփոխություն առաջացնող ոչ հավաստի տեղեկությունների հիման վրա սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով սահմանված նպաստների ավել վճարված գումարները կարող են վերադարձվել ընտանիքի (քաղաքացու) հետ գրավոր համաձայնությամբ կազմված ժամանակացույցով կամ համարվել մարած՝ ոչ ավելի ստացած վերջին ամսվա նպաստի եռապատիկը: Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերով սահմանված նպաստների, 23.2-րդ հոդվածում նշված չաշխատող անձանց տրվող մայրության նպաստի ավել վճարված գումարները կարող են վերադարձվել քաղաքացու հետ գրավոր համաձայնությամբ կազմված ժամանակացույցով:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ խորհրդի առաջարկության մասին որոշման կայացման և ընտանիքի (քաղաքացու) հետ գրավոր համաձայնությամբ ժամանակացույց կազմելու կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 31. Զինվորական ծառայության ստաժում հաշվառվող ժամանակահատվածները և դրանք հաշվարկելու առանձնահատկությունները

1. Զինծառայողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ զինվորական ծառայության ստաժում օրացուցային հաշվարկով հաշվառվում են՝

1) համապատասխան մարմինների համակարգերի հրամանատարական և ոչ հրամանատարական (սպայական, ենթասպայական, շարքային) կազմերի

պաշտոններում զինծառայության, քրեակատարողական ծառայողի և հարկադիր կատարողի ծառայության, ինչպես նաև համապատասխան մարմինների ուսումնական հաստատություններում ուսման ժամանակահատվածները՝ անկախ զինվորական կամ հատուկ կոչման առկայությունից.

2) ԽՍՀՄ զինված ուժերում, ԽՍՀՄ պետական անվտանգության կոմիտեի և ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության համակարգերում զինվորական ծառայության, ինչպես նաև դրանց ուսումնական հաստատություններում ուսման ժամանակահատվածները՝ անկախ զինվորական կամ հատուկ կոչման առկայությունից.

3) դատապարտված կամ քրեական հետապնդման ենթարկված այն զինծառայողների՝ կալանքի տակ, ազատազրկման վայրում և աքսորում գտնվելու ժամանակաշրջանները, որոնց նկատմամբ կայացվել է արդարացման դատավճիռ~~ կամ ընդունվել քրեական գործը վարույթկարճելու մասին որոշում՝ հանցագործության դեպքի, հանցակազմի բացակայության կամ հանցագործության կատարմանը մեղադրյալի մասնակցությունն ապացուցված չլինելու պատճառով~~կամ քրեական հետապնդումը դադարեցվել է քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ռեաբիլիտացնող հիմքերից որևէ մեկով:

2. Զինծառայողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ զինվորական ծառայության ստաժի առկայության դեպքում զինվորական ծառայության ստաժում հաշվառվում են՝

1) եռակի չափով՝

ա. զինված ուժերի կազմում մարտական գործողություններին մասնակցելու ժամանակահատվածները,

բ. Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ մարտական գործողություններին մասնակցելու ժամանակահատվածը կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս զինվորական ծառայությունը՝ հատուկ մարտական առաջադրանք կատարելու դեպքում,

գ. 1986 թվականի ապրիլի 26-ից մինչև 1987 թվականի դեկտեմբերի 31-ը Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի վթարի հետևանքների վերացման աշխատանքներին զինծառայողների մասնակցության ժամանակահատվածը,

դ. սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված ժամանակահատվածը,

ե. մարտական գործողություններ կամ հատուկ առաջադրանք կատարելիս վիրավորված, կոնտուզիա, վնասվածք, խեղում կամ հիվանդություն ստացած զինծառայողների անընդհատ բուժման ժամանակահատվածը,

զ. զինծառայությունն այլ երկրների տարածքներում, որտեղ տեղի են ունեցել մարտական գործողություններ (բացի այն զինծառայողներից, ովքեր զինծառայությունից արձակվել են կամ այդ պետություններից հետ են կանչվել զինծառայողի կոչումը վարկաբեկող արարքների կապակցությամբ), ինչպես նաև այդ երկրներում վիրավորվելու, կոնտուզիա, վնասվածք, խեղում կամ հիվանդություն ստանալու կապակցությամբ բուժհիմնարկներում անընդհատ բուժման ժամանակահատվածը,

է. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ ժամանակահատվածներ.

2) կրկնակի չափով՝

ա. զինված ուժերի ավիացիոն ստորաբաժանումների օդաչուների ծառայության ժամանակահատվածը՝ թռիչքների տարեկան նորմաները կատարելու դեպքում,

բ. գերության ժամանակահատվածը, եթե զինծառայողը կամավոր չի գերվել և գերության ընթացքում Հայաստանի Հանրապետության դեմ հանցագործություն չի կատարել,

գ. 1961 թվականի հունվարի 1-ից մինչև 1982 թվականի դեկտեմբերի 31-ը զինվորական մասնագետների (բացի օդաչուներից)՝ այն երկրներ գործուղվելու ժամանակահատվածը, որոնց բանակները մարտական գործողություններ են կատարել կամ ռազմական օգնություն են ցույց տվել այլ երկրների (անկախ այդ մարտական գործողություններին նշված զինծառայողների մասնակցությունից),

դ. 1976 թվականի հունվարի 1-ից սկսած՝ ծովի մակերևույթից 2500 մետր և ավելի, իսկ 1997 թվականի օգոստոսի 11-ից՝ 2000 մետր և ավելի բարձրության բարձրլեռնային վայրերում զինծառայության ժամանակահատվածը,

դ.1. 2016 թվականի հունվարի 1-ից երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք ձեռք բերող՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի զինծառայողների համար՝ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության իրականացման ժամանակահատվածը,

ե. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ ժամանակահատվածներ.

3) մեկուկեսի չափով՝

ա. պարաշյուտիստների ծառայության ժամանակահատվածը՝ համապատասխան մարմինների սահմանած թռիչքների տարեկան նորմաները կատարելու դեպքում, և սակրավորների ծառայության ժամանակահատվածը,

բ. հատուկ ստորաբաժանումներում զինծառայող կանանց ծառայության ժամանակահատվածը՝ ըստ համապատասխան մարմինների սահմանած պաշտոնների ցանկի,

գ. զինծառայության ժամանակահատվածն այն վայրերում, որտեղ արտակարգ դրություն է հայտարարվել,

դ. 1992 թվականի փետրվարի 1-ից մինչև 1994 թվականի մայիսի 1-ը Հայաստանի Հանրապետության զինված ուժերում զինծառայության ժամանակահատվածը,

ե. 1973 թվականի ապրիլի 1-ից սկսած՝ ծովի մակերևույթից 1500 մետր և ավելի, իսկ 1998 թվականի նոյեմբերի 30-ից՝ 1700-2000 մետր բարձրության լեռնային վայրերում զինծառայության ժամանակահատվածը,

զ. 1988 թվականի հունվարի 1-ից մինչև 1990 թվականի դեկտեմբերի 1-ը Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի վթարի հետևանքների վերացման աշխատանքներին զինծառայողների մասնակցության ժամանակահատվածը,

է. ազգային անվտանգության բնագավառի լիազորված պետական կառավարման մարմնի «Ա» ստորաբաժանումում զինծառայության ժամանակահատվածը,

ը. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ ժամանակահատվածներ.

4) այլ բնույթի գործունեության մեկ ամսվա ժամանակահատվածը՝ որպես մեկ ամսվա զինվորական ծառայություն՝

ա. մինչև զինվորական ծառայության անցնելը ԽՍՀՄ ԴՕՍԱԱՖ-ի և քաղաքացիական ավիացիայի համակարգերի օդաչուական և ինժեներատեխնիկական անձնակազմի անդամի աշխատանքային ստաժը,

բ. Հայաստանի Հանրապետության զինված ուժեր զորակոչված, սպայական կոչում ստացած և սպայական պաշտոնում առնվազն 5 տարի ծառայած սպաների՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների մագիստրատուրայում և ասպիրանտուրայում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության պատվերով սովորելու ժամանակահատվածը.

5) այլ բնույթի գործունեության մեկ տարվա ժամանակահատվածը՝ որպես 6 ամսվա զինվորական ծառայություն՝

ա. պահեստից զորակոչված սպայական անձնակազմի զինծառայողի՝ մինչև զինծառայության անցնելը բարձրագույն ուսումնական հաստատություններում առկա ուսման ժամանակահատվածը՝ 5 տարուց ոչ ավելի,

բ. Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության պատվերով սովորած, Հայաստանի Հանրապետության զինված ուժեր զորակոչված, սպայական կոչում ստացած ու սպայական պաշտոնում առնվազն 5 տարի ծառայած զինծառայողների ուսման ժամանակահատվածը:

3. Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտերին մասնակցած անձանց մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ է տրվում Կառավարության սահմանած կարգով:

4. Զինվորական ծառայության ստաժը հաշվարկելու կանոնները սահմանում է Կառավարությունը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 20. Զինապարտության կատարման ապահովումը

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, անկախ կազմակերպական-իրավական ձևից՝ գործատու կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների պաշտոնատար անձինք պարտավոր են՝

1) սահմանված կարգով վարել զինապարտների գրանցամատյանը, զինվորական հաշվառման ենթակա անձանց ցուցակները ներկայացնել նրանց հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատներ, ինչպես նաև տրամադրել համայնքի բնակության վայրի հաշվառումից հանվելու կամ աշխատանքի (ուսումնական հաստատություն) ընդունվելու, տեղափոխվելու, ազատվելու (հեռացվելու) վերաբերյալ տվյալները.

2) համապատասխան զինվորական կոմիսարիատի պահանջով զինապարտներին ծանուցել զինվորական կոմիսարիատ կանչվելու մասին.

3) զինապարտներին ազատել աշխատանքից կամ արձակել ուսումից՝ պարտադիր զինվորական ծառայության կամ զինվորական կոմիսարիատի ծանուցագրում նշված անհրաժեշտ ժամանակով:

2. Հայաստանի Հանրապետության ոստիկանության մարմինները պարտավոր են՝

1) զինապարտներին անձնագիր, նույնականացման քարտ տալու կամ փոխանակելու (բացառությամբ օտարերկրյա պետություններում բնակվող պահեստազորում հաշվառված կամ սույն օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կամ 3-րդ կետի համաձայն՝ զինվորական հաշվառումից հանված անձանց), ըստ բնակության վայրի հաշվառելու կամ հաշվառումից հանելու գործողությունները կատարել նրանց զինվորական փաստաթղթերում համապատասխան զինվորական կոմիսարիատի կողմից զինվորական հաշվառման վերաբերյալ նշումների առկայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով.

2) զինվորական կոմիսարիատներին աջակցել զինապարտներին զինվորական հաշվառման վերցնելու, պարտադիր զինվորական ծառայության զորակոչելու, վարժական հավաքների կամ հրամանատարաշտաբային, շտաբային վարժանքների, զորավարժությունների ներգրավելու գործընթացում:

3. Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովները յոթ աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր են համապատասխան զինվորական կոմիսարիատ հայտնել նախորդ ամսում հաշմանդամության խումբ տրված զինապարտների մասին:

4. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինները պարտավոր են յոթ աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան զինվորական կոմիսարիատ հայտնել քաղաքացիական կացության ակտերում զինապարտ քաղաքացու ազգանվան, անվան, հայրանվան, ծննդյան տարեթվի փոփոխության, ինչպես նաև մահվան գրանցման մասին:

5. ~~Քրեական վարույթ իրականացնող մարմինները~~ Նախաքննության մարմինները պարտավոր են յոթ աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան զինվորական կոմիսարիատ հայտնել այն զինապարտների (բացառությամբ պահեստազորում հաշվառված կամ սույն օրենքի 22-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կամ 3-րդ կետի համաձայն՝ զինվորական հաշվառումից հանված անձանց) մասին, որոնց նկատմամբ հ~~արուցվել է քրեական վարույթ~~հարուցվել է քրեական հետապնդում:

6. Քրեակատարողական հիմնարկները պարտավոր են յոթ աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան զինվորական կոմիսարիատ հայտնել ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտված և (կամ) ուղղիչ հիմնարկում պատժի կրումից ազատված զինապարտների (բացառությամբ պահեստազորում հաշվառված կամ սույն օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կամ 3-րդ կետի համաձայն՝ զինվորական հաշվառումից հանված անձանց) մասին:

7. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական մարմինները պարտավոր են՝

1) Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատից ստացված իրազեկման հիման վրա իրենց հյուպատոսական տարածաշրջանում հյուպատոսական հաշվառման կանգնած պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա անձին Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ծանուցել դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հիմնարկ ներկայանալու համար և ներկայացած անձանց ստորագրությամբ ծանուցագիր հանձնել պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու մասին.

2) իրենց հյուպատոսական տարածաշրջանում հյուպատոսական հաշվառման կանգնած զինապարտի վերաբերյալ տվյալները երկշաբաթյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով տրամադրել Հայաստանի Հանրապետության զինվորական կոմիսարիատին.

3) իրենց իրավասությունների շրջանակներում աջակցել պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա անձանց վերադարձին Հայաստանի Հանրապետություն:

Հոդված 29.1. Աշխարհազորը

1. Աշխարհազորը Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ ռազմական գործողությունների պայմաններում Հայաստանի Հանրապետության զինված պաշտպանությանը կամավորության սկզբունքով քաղաքացիների մասնակցության համակարգ է:

2. Աշխարհազորի նպատակներն են՝

1) Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը համընդհանուր և համազգային բնույթ հաղորդելը.

2) հակառակորդի դիվերսիոն կամ ահաբեկչական կամ հետախուզական կամ հատուկ օպերացիաների ուժերի և այլ գործողություններից Հայաստանի Հանրապետության տարածքի, բնակչության և ենթակառուցվածքների պաշտպանության պլանավորված միջոցառումների իրականացմանն աջակցությունը.

3) Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի կիրառման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու հատուկ և կարևորագույն նշանակության օբյեկտների կենսագործունեության ապահովմանն աջակցությունը:

3. Աշխարհազորի կիրառումը ներառում է՝

1) մասնակցությունը Հայաստանի Հանրապետության սահմանների կամ հակառակորդի հետ շփման գծի վտանգված հատվածների զինված պաշտպանությանը.

2) մասնակցությունը հակառակորդի դիվերսիոն կամ ահաբեկչական կամ հետախուզական կամ հատուկ օպերացիաների ուժերի և այլ գործողությունների դեմ պայքարին.

3) մասնակցությունը հատուկ և կարևորագույն նշանակության օբյեկտների զինված պաշտպանությանը.

4) մասնակցությունը զորքերի և բնակչության զանգվածային տեղաշարժի կենտրոնական երթուղիների զինված պահպանությանը և պաշտպանությանը.

5) մասնակցությունը քաղաքացիական պաշտպանությանը:

4. Աշխարհազորի համակարգը գործում է տարածքային սկզբունքով և ըստ Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման՝ պայմանականորեն բաղկացած է զորամիավորումներից և դրանց ենթակա բրիգադներից ու գումարտակներից: Աշխարհազորի կառուցվածքը, պատրաստության և կիրառման պլանները հաստատվում են Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետի հրամանով:

5. Աշխարհազորի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետը՝ զինված ուժերի պատրաստության գլխավոր վարչությունում ձևավորված աշխարհազորային շտաբի միջոցով:

6. Աշխարհազորային զորամիավորման ղեկավարը (հրամանատարը) խաղաղ և պատերազմի ժամանակ համապատասխան տարածքային կառավարման մարմնի ղեկավարի տեղակալն է, իսկ Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետի տեղակալը:

7. Աշխարհազորային բրիգադի ղեկավարը (հրամանատարը) խաղաղ և պատերազմի ժամանակ համապատասխան քաղաքային բնակավայր ընդգրկող կամ միավորված համայնքի ղեկավարի տեղակալն է, իսկ Երևան քաղաքի վարչական շրջաններում՝ վարչական շրջանի ղեկավարի տեղակալը:

8. Աշխարհազորային գումարտակի ղեկավարը (հրամանատարը) խաղաղ և պատերազմի ժամանակ գյուղական բնակավայրեր ներառող չմիավորված համայնքի ղեկավարի տեղակալն է կամ միավորված համայնքի կազմում ներառված բնակավայրի վարչական ղեկավարը:

9. Սույն հոդվածի 6-8-րդ հոդվածներով սահմանված աշխարհազորային զորամիավորումների և դրանց ենթակա բրիգադների ու գումարտակների ղեկավարումն իրականացվում է աշխարհազորի պատրաստության ու կիրառման պլանների համաձայն:

10. Աշխարհազորային պայմանական բրիգադների և գումարտակների համալրումն աշխարհազորայիններով (այսուհետ նաև՝ աշխարհազորայինի հավաքագրում) տարածքային սկզբունքով իրականացնում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման տարածքային ստորաբաժանումները՝ պահեստազորում հաշվառված և պատերազմական ժամանակի հաստիքների չկցագրված քաղաքացիներից, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները՝ համապատասխան համայնքում (Երևան քաղաքում՝ ըստ վարչական շրջանների) հաշվառված քաղաքացիներից:

11. Աշխարհազորայինի հավաքագրման հիմքը նրա հետ կնքված պայմանագիրն է: Պայմանագիր չի կարող կնքվել այն քաղաքացու հետ՝

1) որը ենթակա է պարտադիր զինվորական ծառայության.

2) որը հանդիսանում է զինծառայող կամ ոստիկանության ծառայող կամ փրկարար ծառայող կամ քրեակատարողական ծառայող կամ հարկադիր ծառայող.

3) որը պատիժ է կրում ազատազրկման կամ ~~կալանքի~~ կարճաժամկետ ազատազրկման ձևով, կամ որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում:

12. Հավաքագրված աշխարհազորայինների անվանացուցակները և կնքված պայմանագրերը ներկայացվում են աշխարհազորային շտաբ: Աշխարհազորայինին ամրակցվում է զենք, հատկացվում է զինվորական համազգեստ, և աշխարհազորայինը նշանակվում է համապատասխան պաշտոնի աշխարհազորային շտաբի ղեկավարի (պետի) հրամանով: Աշխարհազորայիններին զենքի ամրակցման և պահպանման կարգը, կնքվող պայմանագրի օրինակելի ձևը սահմանվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով:

13. Աշխարհազորայինների պատրաստությունն իրականացվում է պատրաստության պլանների համաձայն անցկացվող պարապմունքների և վարժանքների միջոցով՝ աշխարհազորային շտաբի ղեկավարի (պետի) հրամանով: Աշխատող աշխարհազորայինների պատրաստության և կիրառման գործընթացի վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջները: Աշխարհազորայինները պատրաստության և կիրառման ընթացքում ապահովվում են անվճար սննդով՝ զինծառայողների համար սահմանված կարգով:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 11. Ոստիկանությունում ծառայության անցնելու համար ներկայացվող պահանջները

1. Անկախ ազգությունից, ռասայից, սեռից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից ոստիկանությունում ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետության 18-ից (բացառությամբ ոստիկանության ուսումնական հաստատության դիմորդների) մինչև 35 տարեկան այն քաղաքացին, որը՝

1) անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի քաղաքացիների և «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ»-«ե» կետերով, 13-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի).

2) իր կրթությամբ, անձնական հատկանիշներով, առողջական վիճակով և ֆիզիկական պատրաստականությամբ ունակ է կատարելու ոստիկանության ծառայողի պարտականությունները:

2. Առանձին մասնագիտություններով ոստիկանությունում ծառայության անցնելու համար կարող են սահմանվել տարիքային ավելի բարձր սահմանափակումներ: Այդ

մասնագիտությունների ցանկը և դրանց համար նախատեսված առավելագույն տարիքային սահմանափակումները սահմանում է Կառավարությունը:

3. Ոստիկանության ծառայողին ներկայացվող մասնագիտական, ֆիզիկական պատրաստականության, առողջական վիճակի հետ կապված պահանջները սահմանում է Կառավարությունը:

4. Ոստիկանությունում ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին՝

1) որը դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) որը դատական կարգով զրկվել է քաղաքացիական կամ այլ ծառայությունում պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

3) որը դատապարտվել է դիտավորյալ հանցագործություն կատարելու համար.

4) որը դատապարտվել է անզգույշ հանցագործություն կատարելու համար, և դատվածությունը սահմանված կարգով ~~հանված կամ մարված~~ չէ մարված կամ վերացված չէ.

5) որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում:

Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված անձնական հատկանիշները կարող են ստուգվել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

5. Ոստիկանությունում ծառայության անցնող քաղաքացիները, ինչպես նաև ոստիկանության ծառայողները Կառավարության սահմանած կարգով անցնում են հոգեֆիզիոլոգիական հետազոտություն, թեստավորում՝ ալկոհոլից, թմրամիջոցներից և հոգեմետ նյութերից կախվածությունը ստուգելու նպատակով:

6. Ոստիկանությունում ծառայության անցնելու համար պահանջվող փաստաթղթերի ցանկը և ոստիկանությունում ծառայության անցնելու հետ կապված որոշումներ ընդունելու կարգը սահմանվում են Ոստիկանության պետի հրամանով:

Հոդված 45. Ոստիկանությունում ծառայությունից ազատելը

1. Ծառայողները ոստիկանությունում ծառայությունից ազատվում են՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցման, ոստիկանության բարձրագույն խմբի պաշտոն զբաղեցնող ծառայողի կողմից այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում.

2) անձնական նախաձեռնությամբ՝ գրավոր զեկուցագրի հիման վրա, այդ թվում՝ երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու կապակցությամբ.

2.1) հաստիքների կրճատման, ստորաբաժանման լուծարման կամ վերակազմակերպման դեպքում, եթե ոստիկանության ծառայողը գրավոր հրաժարվում է այլ պաշտոնի նշանակվելուց.

3) սույն օրենքի 47-րդ հոդվածով նախատեսված սահմանային տարիքը լրանալու կապակցությամբ.

4) հիվանդության պատճառով՝ ծառայությանը ոչ պիտանի լինելու մասին ոստիկանության բժշկական հանձնաժողովի որոշման հիման վրա (խաղաղ ժամանակ՝ ծառայությանը ոչ պիտանի, իսկ պատերազմի ժամանակ՝ երկրորդ աստիճանի սահմանափակ պիտանի ճանաչվելու դեպքում).

5) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու դեպքում.

6) կարգապահական խախտումների համար, եթե մեկ տարվա ընթացքում նրա նկատմամբ կիրառվել է կարգապահական երեք տույժ, որոնցից գոնե մեկը սույն օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-7-րդ կետերով սահմանված տույժերից է, կամ սույն օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում.

7) սույն օրենքի 39-րդ հոդվածի առաջին և երկրորդ մասերի պահանջները խախտելու դեպքում.

8) օրենքով սահմանված կարգով իր եկամուտների հայտարարագիրը ներկայացնելուց խուսափելու դեպքում.

9) նրանց նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու, այդ թվում՝ դատարանի դատավճռով ~~ոչ արդարացման~~ ոչ ռեաբիլիտացնող հիմքերով պատժից ազատվելու կամ պատիժը կրելը հետաձգելու դեպքում.

10) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում վեց ամսից ավելի ծառայության չներկայանալու դեպքում՝ չհաշված հղիության, ծննդաբերության և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդը.

11) սահմանված կարգով կադրերի ռեզերվից հանվելու դեպքում:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, Փրկարար ծառայության, Ազգային անվտանգության ծառայության, Քրեակատարողական ծառայության և Հայաստանի Հանրապետության դատախազության մարմիններում հետագա ծառայությունը շարունակելու նպատակով Հայաստանի Հանրապետության ոստիկանությունից տեղափոխված ծառայողին թույլատրվում է ուսումնառությունը շարունակել ոստիկանության ուսումնական հաստատության հեռակա ուսուցման ֆակուլտետում:

11[1]) ոստիկանությունում ծառայության անցնելու՝ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտում հայտնաբերվելու դեպքում.

11.2) ոստիկանության ուսումնական հաստատությունից ազատվելու դեպքում, բացառությամբ կադրերի գործող ռեզերվում գտնվող կամ հեռակա ուսուցման ձևով սովորող ծառայողների.

11.3) սույն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված փորձաշրջանի արդյունքներով.

12) մահվան դեպքում:

(պարբերությունն ուժը կորցրել է 24.10.06 ՀՕ-169-Ն)

Ոստիկանությունում ծառայությունից ազատելը ոստիկանության ուսումնական հաստատությունից ազատելու հիմք է:

1.1. Ոստիկանության պետն իրավունք ունի նաև ոստիկանությունում ծառայությունից ազատելու դիտավորյալ հանցագործության հատկանիշներ պարունակող արարք կատարած ոստիկանության այն ծառայողին, որի նկատմամբ ~~քրեական գործի վարույթը~~

~~կարճվել, կամ քրեական գործի հարուցումը մերժվել է ոչ արդարացման հիմքերով~~քրեական հետապնդում չի հարուցվել կամ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ ռեաբիլիտացնող հիմքով:

2. Ոստիկանության ծառայողին ոստիկանությունում ծառայությունից ազատում է նրան համապատասխան պաշտոնին նշանակելու (ծառայության ընդունելու) իրավունք ունեցող ղեկավարը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 26. Հերթական փրկարարական կոչում շնորհելը

1. Հերթական փրկարարական կոչում շնորհվում է հաջորդական կարգով, եթե ծառայողի զբաղեցրած հաստիքային պաշտոնը համապատասխանում է շնորհվող փրկարարական կոչմանը:

Հերթական փրկարարական կոչում շնորհվում է նախորդ փրկարարական կոչումը կրելու ժամկետն ավարտվելու օրը:

2. Բարձրագույն ուսումնական հաստատությունների ունկնդիր, ադյունկտ (ասպիրանտ), օրդինատոր և դոկտորանտ ծառայողներին հերթական փրկարարական կոչում, մինչև «գնդապետը» ներառյալ, շնորհվում է նախկին կոչումով ծառայության ժամկետը լրանալու օրը, եթե հերթական փրկարարական կոչումը համապատասխանում է մինչև ուսման ընդունվելն զբաղեցրած հաստիքային պաշտոնով նախատեսված փրկարարական կոչմանը:

Տվյալ փրկարարական կոչումը կրելու ժամկետն անցած ունկնդիրներին, ադյունկտին (ասպիրանտին), օրդինատորին և դոկտորանտին համապատասխան նախարարը բացառության կարգով կարող է շնորհել մինչև ուսման ընդունվելն զբաղեցրած հաստիքային պաշտոնով նախատեսվածից մեկ աստիճան բարձր փրկարարական կոչում՝ ուսման առաջադիմության կամ գիտական աշխատանքներին ակտիվ մասնակցության համար:

3. Հերթական կոչումը կարող է շնորհվել վաղաժամկետ՝ փրկարարական ծառայության կազմակերպման գործում նշանակալի անձնական վաստակ ունեցող և անձնական ներդրման, պաշտոնեական պարտականությունները բարեխիղճ կատարող ծառայողներին, բայց տվյալ կոչումով առնվազն վեց ամիս ծառայելուց հետո և զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված փրկարարական կոչումից ոչ բարձր:

4. ~~Կալանքի տակ~~Կարճաժամկետ ազատազրկման մեջ գտնվելու ժամանակահատվածում ծառայողին չի շնորհվում փրկարարական կոչում, ինչպես նաև վերը նշված ժամանակահատվածը չի հաշվարկվում փրկարարական կոչումով ծառայության ժամկետում:

5. Փրկարարական ծառայության պաշտոնի նշանակելու ժամանակ հերթական կոչում շնորհելիս հաշվի է առնվում նախկին կոչումով պահեստազորում եղած ժամանակահատվածը: Այս դեպքում հերթական կոչումը շնորհվում է փրկարարական ծառայության համապատասխան պաշտոնում վեց ամիս ծառայելուց հետո:

(26-րդ հոդվածը փոփ., լրաց. 08.12.11 ՀՕ-305-Ն, լրաց. 07.04.16 ՀՕ-44-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-289-Ն)

Հոդված 28. Փրկարարական կոչումը վերականգնելը

1. Նախկին փրկարարական կոչումը վերականգնում է փրկարարական կոչումը շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը՝ կոչումից զրկված անձանց դատվածության ~~հանման կամ մարման~~ մարման կամ վերացման դեպքերում:

2. Փրկարարական կոչումը վերականգնելու վերաբերյալ զեկուցագրերը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ատեստացիոն հանձնաժողովը քննարկում է ստանալու օրվանից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում: Դրական հիմքերի առկայության դեպքում հանձնաժողովը նախապատրաստում է փրկարարական կոչումը վերականգնելու վերաբերյալ միջնորդագիր, որին ընթացք է տրվում կոչում շնորհելու ներկայացման համար սահմանված կարգով:

3. Անօրինական դատապարտված քաղաքացիների նախկին փրկարարական կոչումը վերականգնվում է փրկարարական կոչումից զրկվելու օրվանից՝ ~~արդարացման որոշումն~~ արդարացման դատավճիռն ուժի մեջ մտնելուց հետո:

Հոդված 59. Ծառայողական պարտականությունների կասեցումը

(վերնագիրը խմբ. 21.01.20 ՀՕ-19-Ն)

1. ***(մասն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-19-Ն)***
2. ***(մասն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-19-Ն)***
3. ***(մասն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-19-Ն)***
4. ***(մասն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-19-Ն)***
5. ***(մասն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-19-Ն)***
6. ***(մասն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-19-Ն)***
7. ***(մասն ուժը կորցրել է 09.01.17-ից՝ սույն օրենքի 113-րդ հոդվածի 1.1-ին մասի համաձայն)***
8. ***(մասն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-19-Ն)***
9. ***(մասն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-19-Ն)***
10. ***(մասն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-19-Ն)***
11. ***(մասն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-19-Ն)***
12. ***(մասն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-19-Ն)***

13. Ծառայողական քննության, ինչպես նաև ծառայողի նկատմամբ ~~քրեական գործ հարուցելու~~ քրեական հետապնդում իրականացնելու ժամանակահատվածում ծառայողի ~~լիազորությունները կարող են ժամանակավորապես դադարեցվել~~պաշտոնավարումը կարող է կասեցվել՝ վարձատրության պահպանմամբ, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ պաշտոնում մնալով՝ նա կխոչընդոտի ծառայողական քննության անցկացմանը:

14. Ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում իրականացվելիս ~~լիազորությունների ժամանակավորապես~~պաշտոնավարման կասեցումը կատարվում է մինչև ~~քրեական գործի~~ քրեական հետապնդման ավարտը կամ մինչև տվյալ գործով դատարանի դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Այդ դեպքում ծառայողին շարունակում է վճարվել աշխատավարձ:

(59-րդ հոդվածը փոփ., խմբ., լրաց. 08.12.11 ՀՕ-305-Ն, փոփ. 12.12.13 ՀՕ-166-Ն, 23.03.18 ՀՕ-289-Ն, խմբ. 24.10.19 ՀՕ-203-Ն, խմբ., փոփ. 21.01.20 ՀՕ-19-Ն)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 76. Կարգապահական տույժ տալու կարգը

1. Կարգապահությունը կամ հասարակական կարգը խախտած փրկարարական ծառայողներին կարող են տրվել սույն կանոնագրքով սահմանված միայն այն կարգապահական տույժերը, որոնք համապատասխանում են կոչման և նրա՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշում կայացնող հրամանատարի (պետի) կարգապահական իրավունքին:

2. Հրամանատարի (պետի) կողմից ենթակային կարգապահական տույժ տալու որոշմանը պետք է նախորդի ծառայողական քննություն, որը կատարվում է մեղավորներին հայտնաբերելու և զանցանքի կատարմանը նպաստող պատճառներն ու պայմանները բացահայտելու նպատակով:

3. Ծառայողական քննության ընթացքում հրամանատարը (պետը) պարզում է, թե կատարվել է արդյոք զանցանք՝ երբ, որտեղ, ինչ պարագաներում, ինչ զանցանք է՝ մեղքի առկայությունը կոնկրետ անձանց գործողություններում կամ անգործության մեջ, յուրաքանչյուրի մեղքի աստիճանը, եթե զանցանքը կատարել է մի քանի անձ, զանցանքի հետևանքները, մեղավորի պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, զանցանքի կատարման պատճառներն ու պայմանները:

4. Եթե ծառայողական քննությամբ պարզվում է, որ փրկարարական ծառայողի արարքը պարունակում է հանցակազմի հատկանիշներ, ~~ապա պետերը անհրաժեշտության դեպքում նշանակում են հետաքննություն~~ապա պետերը սահմանված կարգով նյութերը ներկայացնում են համապատասխան իրավապահ մարմիններին:

5. Մեղքի աստիճանը և կարգապահական տույժի միջոցը որոշելիս հաշվի են առնվում զանցանքի բնույթը, դրա կատարման հանգամանքները, հետևանքները, մեղավորի նախկին վարքը, ինչպես նաև նրա փրկարարական ծառայության տևողությունը և ծառայության անցկացման կարգի իմացության աստիճանը:

6. Կարգապահական տույժը խստացվում է, եթե զանցանքը կատարվել է հերթապահության և ծառայողական այլ պարտականություններ կատարելու ժամանակ, ոչ սթափ վիճակում կամ այն դեպքում, երբ զանցանքի հետևանքով տեղի է ունեցել կարգ ու կանոնի խախտում:

7. Փրկարարական ծառայողին կարգապահական տույժը, որպես կանոն, պետք է տրվի զանցանքի կատարման պահից մեկ ամսվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան «Փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը, և կարգապահական տույժ տալիս հրամանատարը (պետը) չպետք է նվաստացնի ենթակայի անձնական արժանապատվությունն ու կոպտություն թույլ տա:

8. Ծառայության մեջ բացթողումների համար հրամանատարի (պետի) նախազգուշացումը, դիտողությունն ու խիստ ցուցումը կարգապահական տույժ չեն համարվում:

9. Եթե փրկարարական ծառայողն իրեն անմեղ է համարում, իրավունք ունի կարգապահական տույժ տալու պահից 10 օրվա ընթացքում բողոքարկելու այն:

10. Օրվա հերթափոխում գտնվելու ընթացքում կատարած զանցանքի համար կարգապահական տույժ կարող է տրվել վերակարգի հերթափոխից կամ այլ փրկարարական ծառայողի կողմից նրան փոխարինելուց հետո, բայց ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում:

11. Անսթափ վիճակում գտնվող փրկարարական ծառայողին կարգապահական տույժ տալը, ինչպես նաև նրանից որևէ բացատրություն ստանալը հետաձգվում են մինչև նրա սթափվելը:

12. Արգելվում է միևնույն զանցանքի համար մի քանի կարգապահական տույժ տալը կամ մի տույժ մյուսին միացնելը, անմիջական մեղավորին պատժելու փոխարեն ստորաբաժանման ամբողջ անձնակազմին տույժ տալը:

13. Եթե ենթակայի կատարած զանցանքի ծանրության համեմատ հրամանատարը (պետը) տրված կարգապահական իրավունքը համարում է ոչ բավարար, ապա միջնորդություն է հարուցում ավելի բարձր հրամանատարի (պետի) առջև՝ մեղավորին տույժ տալու համար:

14. Իրեն տրված կարգապահական իրավունքը գերազանցելու համար հրամանատարը (պետը) ենթակա է պատասխանատվության:

15. Ավագ հրամանատարը (պետը) իրավունք չունի փոխելու կամ նվազեցնելու կրտսեր հրամանատարի (պետի) տված կարգապահական տույժը, եթե վերջինս չի գերազանցել իրեն տրված իրավունքը:

16. Ավագ հրամանատարը (պետը) իրավունք ունի փոխելու կրտսեր հրամանատարի (պետի) տված կարգապահական տույժը, եթե գտնում է, որ այդ տույժը չի համապատասխանում զանցանքի ծանրությանը և կարող է ավելի խիստ տույժ տալ:

17. Հանցագործության համար կարգապահական տույժ ստացած և պետությանը նյութական վնաս հասցրած փրկարարական ծառայողը չի ազատվում քրեական և նյութական պատասխանատվությունից:

18. Ծառայողական քննության անցկացման կարգը սահմանում է լիազոր մարմնի ղեկավարը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **շարժական գույք՝** անշարժ չհամարվող ցանկացած գույք, ներառյալ՝ կանխիկ դրամական միջոցները, ապագայում ձեռք բերվելիք շարժական գույքը և գույքային իրավունքները, մտավոր սեփականության օբյեկտի նկատմամբ գույքային իրավունքները, շարժական գույքի լիզինգի պայմանագրից ծագող վարձակալության իրավունքները, սեփականության իրավունքի պահպանմամբ առք ու վաճառքի իրավունքը, շրջանառության մեջ գտնվող ապրանքները, պահանջի իրավունքները, մեկ տարի և ավելի ժամկետով կնքված շարժական գույքի վարձակալության իրավունքը, կոմիսիայի առարկա շարժական գույքի նկատմամբ իրավունքները, օդանավերը, հաստոցները, սարքավորումները, գյուղատնտեսական տեխնիկան, գյուղատնտեսական մթերքները, կենդանիները և թռչունները, ներմուծված, սակայն չմաքսազերծված շարժական գույքը և այլ շարժական գույք.

2) **լիազոր մարմին՝** շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցում իրականացնող մարմին.

3) **ծանրաբեռնում՝** պայմանագրի կամ օրենքի ուժով ծագած՝ պարտապանի պարտավորության կատարման ապահովման միջոց, որն առաջացնում է շարժական գույքի նկատմամբ պարտատիրոջ գույքային իրավունք.

4) **սահմանափակում՝** դատական ակտերի, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների, ~~քրեական հետապնդում իրականացնող մարմինների~~նախաքննություն իրականացնող, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում այլ պետական մարմինների (այսուհետ՝ սահմանափակում կիրառող իրավասու մարմիններ) որոշումների հիման վրա օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային իրավունքների իրացման սահմանափակում.

5) **գրանցում՝** շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքի գրանցում, ներառյալ՝ իրավունքների փոփոխում, դադարեցում.

6) **միասնական գրանցամատյան** (այսուհետ՝ **Գրանցամատյան**)՝ էլեկտրոնային տվյալների համակարգ, որը պարունակում է սույն օրենքով նախատեսված տեղեկություններ շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների վերաբերյալ.

7) **գույքացուցակ՝** պարտապանի՝ սույն օրենքով գրանցման ենթակա մեկից ավելի շարժական գույքի ցանկ.

8) **առաջնային գրանցում՝** շարժական գույքը ծանրաբեռնելու վերաբերյալ Գրանցամատյանում կատարված գրանցում.

9) **շարժական գույքի նույնականացում՝** շարժական գույքի տեսակների դասակարգմանը համապատասխանող թվային և այբբենական ձևով շարժական գույքը համարակալող անփոփոխ համարանիշ.

10) **դիմող անձի ստորագրություն՝** դիմող անձի կողմից դիմումի վրա կատարված էլեկտրոնային ստորագրություն կամ թղթային դիմումի հիման վրա սպասարկման գրասենյակի կողմից կատարված էլեկտրոնային ստորագրություն.

11) **սպասարկման գրասենյակ՝** լիազոր մարմնի՝ համացանցում բոլորին հասանելի ապահովված տիրույթ, սպասարկման գրասենյակի գործառույթներ իրականացնող նոտար, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի սպասարկման գրասենյակի գործառույթներ իրականացնող բաժին, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և դեպքերում փաստաբան և փաստաբանական գրասենյակ, պետական ծառայությունների մատուցման միասնական գրասենյակ, որոնք իրականացնում են շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 5. Նոտարական գաղտնիքը

1. Նոտարը պարտավոր է գաղտնի պահել իր կողմից նոտարական գործողություն կատարելու կամ այլ ծառայություն մատուցելու վերաբերյալ, ինչպես նաև վավերացված կամ հաստատված փաստաթղթերից բխող իրեն հայտնի դարձած տեղեկությունները (նոտարական գաղտնիք հանդիսացող տեղեկատվություն): Այդ պարտականությունը պահպանվում է նաև նոտարի՝ աշխատանքից ազատվելուց հետո:

2. Անձը, որի համաձայնությամբ կամ որի նկատմամբ կատարվել է նոտարական գործողությունը, ինչպես նաև նրա իրավահաջորդը կամ ներկայացուցիչն իրենց գրավոր համաձայնությամբ կարող են նոտարին ազատել նոտարական գործողությունների կատարման գաղտնիքը պահպանելու պարտականությունից:

Սույն մասով նշված անձանց մահից հետո, նրա իրավահաջորդի բացակայության կամ վերջինիս հետ առնչվելու անհնարինության դեպքում, նոտարը կարող է նոտարական գաղտնիքը պահպանելու պարտականությունից ազատվել դատարանի վճռով:

Այլ հարգելի պատճառների առկայությամբ ևս դատարանը կարող է նոտարին ազատել նոտարական գաղտնիքի պահպանման պարտականությունից:

3. Նոտարը նոտարական գործողությունների կատարման մասին տեղեկանքներ է տալիս միայն այն ֆիզիկական անձանց, ինչպես նաև իրավաբանական անձանց, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին (այսուհետ՝ կազմակերպություն) կամ նրանց ներկայացուցիչներին, որոնց դիմումով, համաձայնությամբ կամ որոնց նկատմամբ ինքը կատարել է նոտարական գործողություններ:

4. Դատախազի կամ դատարանի կամ քննիչի ~~կամ հետաքննության մարմնի~~՝ օրենքի համաձայն տրված գրավոր պահանջով նոտարը նոտարական կամ իր կողմից իրականացվող այլ գործողությունների վերաբերյալ տեղեկանքներ, նոտարական գործից քաղվածքներ, պատճեններ կամ բնօրինակներ է տալիս նախաքննության կամ դատաքննության մեջ գտնվող քրեական վարույթների և քաղաքացիական գործերի առնչությամբ, ինչպես նաև «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում:

Դատավորին, դատախազին, քննիչին, հետաքննության մարմնին կամ փաստաբանին արգելվում է մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելն այլ անձանց, ներառյալ՝ զանգվածային լրատվության միջոցներին, տեղեկատվություն տալ նոտարական գործողությունների մասին, ինչպես նաև այդ տեղեկատվությունը հրապարակել իրենց ելույթներում:

Իրենց իրավասության սահմաններում նոտարական գործողություններին ծանոթանալու իրավունք ունեն նաև օրենքով սահմանված կարգով և պայմաններով նոտարական գործողությունների նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները կամ դրանց պաշտոնատար անձինք:

5. Նոտարը կարող է կտակի կամ դրա բովանդակության մասին սույն օրենքով սահմանված կարգով տեղեկություններ տրամադրել միայն կտակարարի մահից հետո:

Ժառանգության բացման վերաբերյալ ժառանգներին, պարտատերերին տեղեկություններ հայտնելը չի համարվում նոտարական գաղտնիք հանդիսացող տեղեկատվություն տրամադրելու՝ սույն օրենքով սահմանված կարգի խախտում:

5.1. Նոտարական գործի շրջանակում նոտարական գործողություններ իրականացնելու նպատակով նոտարին, ինչպես նաև օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում օրենքում նշված անձին տեղեկություններ հայտնելը չի համարվում նոտարական գաղտնիք հանդիսացող տեղեկատվություն տրամադրելու՝ սույն օրենքով սահմանված կարգի խախտում:

6. Սույն հոդվածով նախատեսված նոտարական գաղտնիքը չհրապարակելու կանոնները տարածվում են նոտարական գործողություններին օրենքով սահմանված կարգով մասնակցած (վկա, թարգմանիչ և այլն), ինչպես նաև այն անձանց վրա, որոնց

այդ տեղեկությունները հայտնի են դարձել իրենց աշխատանքային և ծառայողական պարտականությունների կատարման կապակցությամբ:

7. Նոտարներն օրենքով սահմանված կարգով պահպանում են պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունները և փաստաթղթերը:

8. Սույն հոդվածի 4-րդ կետի առաջին պարբերությամբ նախատեսված դեպքերում նոտարը նոտարական գործողությունների կատարման մասին տեղեկանքներ, քաղվածքներ, պատճեններ կամ բնօրինակ տալուց հետո՝ երեք օրվա ընթացքում, այդ մասին իրավունք ունի հայտնել տվյալ նոտարական գործողությանը մասնակցած անձանց, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

9. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված և նոտարական գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը տրամադրվում է այդ օրենքով սահմանված լիազոր մարմնին պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելիս, փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ կասկածի կամ լիազոր մարմնի հարցման հիման վրա՝ այդ օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Հոդված 24. Նոտարի կարգապահական պատասխանատվությունը

1. Նոտարի նկատմամբ կարգապահական վարույթ կարող են հարուցել՝

1) արդարադատության նախարարը.

2) նոտարական պալատը:

2. Արդարադատության նախարարը կարգապահական վարույթը հարուցում է սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված առիթների ուսումնասիրության արդյունքում՝ սույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգապահական խախտման հատկանիշների հայտնաբերման հիմքով:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ուսումնասիրությունն իրականացվում է փաստաթղթերը հետազոտելու, ինչպես նաև նոտարական գործողությունների նկատմամբ վերահսկողություն իրականացնող արդարադատության նախարարության ստորաբաժանումների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից նոտարական գրասենյակ այցելելու կամ առանց նոտարական գրասենյակ այցելելու՝ նոտարից նոտարական գործերը և այլ փաստաթղթերը պահանջելու, ինչպես նաև էլեկտրոնային համակարգում ուսումնասիրությունն ապահովելու միջոցով: Սույն մասով նախատեսված գործողությունները պետք է կատարվեն կարգապահական վարույթում քննարկվող հարցերի շրջանակում:

Սույն մասում նշված փաստաթղթերը, նյութերը նոտարը տրամադրում է ծանուցումը ստանալու պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում:

4. Նոտարական պալատը կարգապահական վարույթ հարուցում է սույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հիմքով: Միևնույն առիթով և հիմքով

արդարադատության նախարարի և նոտարական պալատի կողմից կարգապահական վարույթ հարուցված լինելու դեպքում նոտարական պալատի հարուցած կարգապահական վարույթը կարճվում է: Նոտարական պալատը կարճման որոշմանը կցում է իր եզրակացությունը՝ կարգապահական հիմքի վերաբերյալ:

5. Կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են՝

ա) դիմումը կամ բողոքը.

բ) պետական և տեղական ինքնակառավարման մարմնի, պաշտոնատար անձի հաղորդումը.

գ) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը.

դ) նոտարական պալատի հաղորդումը՝ իրեն ներկայացված նոտարական գործողությունների կամ նոտարի մատուցած այլ ծառայությունների բողոքների կամ դիմումների վերաբերյալ.

ե) Հայաստանի Հանրապետության օրենքների, իրավական այլ ակտերի, ինչպես նաև նոտարական էթիկայի կանոնների խախտման հատկանիշների ինքնուրույն հայտնաբերումը.

զ) նոտարական պրակտիկայի ամփոփման կամ ծրագրային ուսումնասիրության արդյունքում խախտման հատկանիշների հայտնաբերումը:

6. Կարգապահական վարույթի տևողությունը չի կարող վեց շաբաթից ավելի լինել, որը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ երեք շաբաթ ժամկետով: Նոտարը ծանուցվում է կարգապահական վարույթ հարուցելու մասին վարույթ հարուցելու պահից մեկ օրվա ընթացքում:

7. Կարգապահական վարույթն իրականացնող անձը կարգապահական վարույթում քննարկվող հարցերի շրջանակում իրավունք ունի՝

1) կարգապահական վարույթի ընթացքում նոտարից պահանջելու անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկատվություն, որը պետք է նոտարի կողմից տրամադրվի պահանջը ստանալու պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում:

2) նոտարի գրասենյակում ծանոթանալու անհրաժեշտ փաստաթղթերին և նյութերին.

3) նոտարից պահանջելու գրավոր բացատրություններ.

4) դիմելու այն անձին, որի դիմումը կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել՝ լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն տալու առաջարկությամբ:

8. Նոտարը, որի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել, պարտավոր է վարույթ հարուցած անձին ներկայացնել գրավոր բացատրություններ:

Գրավոր բացատրություն ներկայացնելուց հրաժարվելու դեպքում այդ մասին նշում է կատարվում, որի վերաբերյալ ստորագրում է նոտարը, կամ նշում է կատարվում վերջինիս ստորագրելուց հրաժարվելու մասին:

Նոտարը, որի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել, իրավունք ունի չտրամադրելու՝ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված փաստաթղթերը, եթե դա չի բխում կարգապահական վարույթի շրջանակներից:

9. Մինչև կարգապահական վարույթ հարուցող անձի կողմից որոշում կայացնելը կարգապահական վարույթի նյութերին ծանոթանալու իրավունք ունի այն նոտարը, որի նկատմամբ վարույթ է հարուցվել: Նոտարին նյութերը հանձնվում են ոչ ուշ, քան

կարգապահական վարույթ հարուցող անձի կողմից որոշում կայացնելու վերջնաժամկետից յոթ աշխատանքային օր առաջ: Նյութերը ստանալու պահից յոթ աշխատանքային օրվա ընթացքում նոտարն իրավունք ունի ներկայացնելու լրացուցիչ բացատրություններ կամ միջնորդություն հարուցելու լրացուցիչ ուսումնասիրություն կատարելու մասին:

10. Կարգապահական վարույթի արդյունքների հիման վրա վարույթ հարուցող անձը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

1) կարգապահական վարույթը կարճելու մասին.

2) նոտարին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին:

11. Վարույթ հարուցողն իր կողմից կարգապահական վարույթը կարճելու մասին որոշում կայացնելուց հետո չի կարող նույն հիմքով կրկին վարույթ հարուցել:

12. Վարույթ հարուցող անձը, վարույթին մասնակցած վկաները և այլ անձինք պարտավոր են պահպանել կարգապահական վարույթի գաղտնիությունը:

13. Նոտարական պալատի կողմից կարգապահական վարույթի արդյունքում կայացված որոշումները դրանց կայացման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում են արդարադատության նախարարություն:

14. Կարգապահական վարույթ հարուցելու դեպքում կարգապահական պատասխանատվության ենթարկելու՝ սույն օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետներն ընդհատվում են:

15. Եթե սույն օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետների ընթացքում նոտարի նկատմամբ ~~հարուցվել է քրեական գործ (հետապնդում),~~ հարուցվել է քրեական հետապնդում կամ դատարանում բողոքարկվում է խախտման հիմք հանդիսացող գործողության իրավաչափությունը, ապա կարգապահական վարույթ հարուցելու ժամկետի ընթացքը, իսկ կարգապահական վարույթը հարուցված լինելու դեպքում՝ հարուցված վարույթի ընթացքը կասեցվում է: Կարգապահական վարույթ հարուցելու ժամկետի կամ հարուցված վարույթի ընթացքը կասեցվում է մինչև ~~քրեական գործով~~ քրեական վարույթով վերջնական լուծումը կամ դատարանի կողմից վերջնական դատական ակտի կայացումը: ~~Քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու~~ Քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելուդեպքում, ինչպես նաև դատարանի կողմից կայացված դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո կարգապահական վարույթ հարուցելու ժամկետի կամ հարուցված վարույթի ընթացքը շարունակվում է կասեցման պահից՝ սույն օրենքով սահմանված կարգով:

16. Եթե նոտարի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել մի քանի փաստերի հիման վրա, ապա նրա նկատմամբ կիրառվում է ավելի խիստ կարգապահական տույժի միջոցը:

Հոդված 52. Նոտարական գործողությունների կատարումը մերժելը

1. Նոտարը նոտարական գործողության կատարումը մերժում է, եթե՝

1) նոտարական գործողության կատարումը հակասում է օրենքին, իրավական այլ ակտերին կամ կազմակերպության կանոնադրությանը.

2) ներկայացված փաստաթուղթը կամ պահանջվող նոտարական գործողությունը ենթակա չէ նոտարական վավերացման կամ հաստատման.

3) օրենքի համաձայն նոտարական գործողությունը ենթակա չէ տվյալ նոտարի կողմից կատարման.

4) նոտարական գործողություն կատարելու մասին խնդրանքով դիմել է անգործունակ անձ կամ անհրաժեշտ լիազորություններ չունեցող անձ կամ նրա անգործունակ կամ անհրաժեշտ լիազորություններ չունեցող ներկայացուցիչ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.

5) նոտարական գործողության կատարման համար դիմած անձը թեև գործունակ է, սակայն տվյալ պահին գտնվում է այնպիսի վիճակում, որ չի հասկանում իր գործողությունների նշանակությունը կամ չի կարող կառավարել դրանք.

6) դիմող անձը հրաժարվում է ներկայացնել նոտարական գործողության կատարման համար օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերը.

7) դիմող անձը չի վճարում նոտարական գործողության կատարման համար նախատեսված պետական տուրքը կամ նոտարի մատուցած այլ ծառայությունների վճարը.

8) նոտարական գործողությունը պետք է կատարվի դատարանի~~, դատախազի կամ քննիչի~~ որոշմամբ հետախուզվող և քրեական պատասխանատվությունից խուսափող անձի կամ նրա գույքի նկատմամբ: Սույն կետով նշված հիմքով նոտարը նոտարական գործողության կատարումը մերժում է միայն, եթե հետախուզման որոշում կայացրած անձից կամ մարմնից կամ արդարադատության նախարարությունից ստացել է անձի հետախուզման վերաբերյալ պաշտոնական տեղեկատվություն:

2. Նոտարական գործողությունների կատարման մերժման հիմքերի առկայության դեպքում դիմողի պահանջով նոտարը կայացնում է մերժման գրավոր որոշում, որում նշվում են մերժման իրավական հիմքերը և բողոքարկման կարգը: Նոտարական գործողության մերժման մասին որոշման մեկ օրինակը հանձնվում է նոտարական գործողությունների կատարման համար դիմած անձանց:

Եթե ներկայացված փաստաթղթերը լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտություն չունեն, ապա նոտարը նոտարական գործողությունը մերժելու մասին որոշումը կայացնում է իրեն դիմելու օրը կամ դիմումը ներկայացնելու հաջորդ օրը:

Ներկայացված փաստաթղթերը լրացուցիչ ուսումնասիրելու անհրաժեշտության դեպքում նոտարը նոտարական գործողությունը մերժելու մասին որոշում է կայացնում մինչև դիմելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

Հոդված 53. Փաստաթղթերը պահպանելը և տրամադրելը

1. Նոտարական ակտերի բնօրինակները պահպանվում են դրանք վավերացրած նոտարի մոտ: Նոտարական գործողությունների կատարումից հետո, կողմերի դիմումի համաձայն, նրանց տրամադրվում են փաստաթղթերի կրկնօրինակները կամ դրանցից քաղվածքներ, որոնք ունեն բնօրինակին հավասար իրավաբանական ուժ:

2. Փաստաթղթի կրկնօրինակը կամ քաղվածքը պետք է համապատասխանի նրա բնօրինակին նաև ուղղագրական, կետադրական, բառերի կրճատման առումով: Նոտարը փաստաթղթից քաղվածքը տալիս է, եթե փաստաթղթի մնացած մասը չի հակասում քաղվածքի բովանդակությանը:

3. Նոտարը պարտավոր է ֆիզիկական անձանց կամ կազմակերպությունների գրավոր խնդրանքով, որոնց անունից կամ ի շահ որոնց կատարվել են նոտարական գործողությունները, քաղվածքներ տալ նոտարական գրանցամատյանից:

4. Կատարված նոտարական գործողությանն առնչվող նախաքննության կամ դատաքննության մեջ գտնվող քրեական վարույթներով կամ քաղաքացիական գործերի առնչությամբ նոտարը դատախազի, դատարանի, քննիչի կամ նախաքննության մարմնի՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով տրված գրավոր պահանջի հիման վրա նրանց տալիս է նոտարական ակտի կրկնօրինակը կամ քաղվածք նոտարական գրանցամատյանից: Օրենքով նախատեսված դեպքերում նոտարը փաստաթղթի բնօրինակը պարտավոր է հանձնել նշված անձանց, ովքեր նոտարին ստորագրություն են տալիս փաստաթղթի ստացման մասին: Այս դեպքում նոտարը պարտավոր է իր մոտ պահել հանձնված փաստաթղթի պատճենը, որի վրա կատարում է գրառում, որ փաստաթղթի բնօրինակը գտնվում է համապատասխան մարմնում՝ նշելով տրամադրման ամսաթիվը: Կրկնօրինակին կցվում է նաև փաստաթղթի բնօրինակը պահանջելու մասին որոշումը:

Համապատասխան ~~գործի վարույթն~~ գործը կամ վարույթը ավարտելուց կամ փաստաթղթի բնօրինակից օգտվելու անհրաժեշտությունը դադարելուց հետո՝ եռօրյա ժամկետում, դատարանը կամ փաստաթղթի բնօրինակը պահանջած մարմինը պարտավոր է նոտարին վերադարձնել բնօրինակը:

5. Իրենց իրավասության սահմաններում նոտարական գործողությունների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավունք ունեցող մարմինների գրավոր պահանջով նոտարը նրանց տալիս է նոտարական ակտը կամ դրա կրկնօրինակը կամ քաղվածք նոտարական գրանցամատյանից:

6. Նոտարական գործից փաստաթղթեր հանելն արգելվում է, բացառությամբ՝

1) օրենսդրությամբ սահմանված կարգով գործարքը կամ նոտարական գործողությունն անվավեր ճանաչվելու դեպքերի, եթե այդ կապակցությամբ կողմերին վերադարձվելու են նրանց ներկայացրած փաստաթղթերի իսկական օրինակները: Այս դեպքում նոտարական գործում կարվում է վերադարձվող փաստաթղթի պատճենը, ինչպես նաև գործարքը կամ նոտարական գործողությունն անվավեր ճանաչելու մասին փաստաթուղթը կամ դրա պատճենը.

2) նոտարական գործում գտնվող փաստաթուղթն օրենքով սահմանված կարգով փորձաքննության ուղարկելու դեպքի, եթե դրա փորձաքննությունն անհնար է կատարել

առանց փաստաթուղթն առանձնացնելու: Փաստաթղթի փորձաքննության ավարտից հետո դա պետք է կարվի նոտարական գործում:

Նոտարական գործից փաստաթուղթ հանելու կամ դա պատճենով փոխելու վերաբերյալ նոտարի կողմից կատարվում է գրառում նոտարական գործի կազմի վերջին էջի վրա կամ առանձին թղթի վրա, որը նույնպես կարվում է նոտարական գործի վերջում:

7. Նոտարական գործավարության կարգը սահմանում է արդարադատության նախարարը՝ նոտարական պալատի առաջարկությամբ:

8. Նոտարների կողմից արխիվի վարման կարգը սահմանում է արդարադատության նախարարը՝ նոտարական պալատի առաջարկությամբ:

9. Նոտարական ակտերի, ինչպես նաև ժառանգական գործերի առցանց շտեմարանների վարման կարգը սահմանվում է արդարադատության նախարարի հրամանով:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 31. Մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորման վկայականի գործողության դադարեցման հիմքերը և կարգը

1. Մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորման վկայականի գործողությունը դադարեցվում է, եթե՝

1) հաստատվում է մաքսային ձևակերպումների մասնագետի՝ կեղծ փաստաթղթեր օգտագործելու միջոցով որակավորման վկայական ստացած լինելու փաստը.

2) օրինական ուժի մեջ է մտնում մաքսային ձևակերպումների մասնագետի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու վերաբերյալ դատական ակտը.

3) մաքսային մասնագետը ի շահ իրեն կամ երրորդ անձանց օգտագործում, հրապարակում կամ երրորդ անձանց է տրամադրում իր ներկայացրած անձանց վերաբերող պետական, առևտրային, բանկային, ծառայողական կամ ապահովագրական գաղտնիք պարունակող տեղեկությունները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.

4) մաքսային ձևակերպումների մասնագետը մեկ տարվա ընթացքում երեք և ավելի անգամ ենթարկվել է պատասխանատվության՝ մաքսային վճարների թերի հաշվարկմանը և (կամ) վճարմանը և (կամ) ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառմանը հանգեցնող մաքսային կանոնների խախտման համար.

5) մաքսային ձևակերպումների մասնագետը դատապարտվել է մաքսանենգության, խարդախության կամ զեղծարարության համար, և դատվածությունը սահմանված կարգով ~~հանված կամ մարված չէ~~մարված կամ վերացված չէ.

6) մաքսային ձևակերպումների մասնագետն արձանագրել է սույն օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված վերապատրաստման բացասական արդյունք:

2. Մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորման վկայականի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ որոշումն ընդունում է կոմիտեի համապատասխան պաշտոնատար անձը: Նշված որոշման պատճենը տրամադրվում է այն անձին, որի առնչությամբ ընդունվել է այդ որոշումը, այն ընդունելուց հետո՝ երեք օրվա ընթացքում:

3. Մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորման վկայականի գործողության դադարեցման արդյունքում մաքսային ձևակերպումների մասնագետի գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ որոշումը կարող է բողոքարկել մաքսային ձևակերպումների մասնագետը՝ վերադասության կարգով կամ դատարան:

Հոդված 54. Լիազորված տնտեսական օպերատորի ռեեստրում հաշվառվելու վկայականի գործողությունը կասեցնելու, դադարեցնելու և լիազորված տնտեսական օպերատորի ռեեստրից հանելու կարգը

1. Մաքսային մարմինն իրականացնում է պարբերական վերլուծություն՝ լիազորված տնտեսական օպերատորի՝ իր կարգավիճակին և այդ կարգավիճակից բխող գործունեության իրականացման նկատմամբ համապատասխանության որոշման նպատակով:

2. Կոմիտեն իրավասու է անցկացնելու լիազորված տնտեսական օպերատորին տրամադրված կարգավիճակի տրամադրման չափանիշների պահպանման կրկնակի ստուգում՝

1) Հայաստանի Հանրապետության մաքսային գործին վերաբերող և Միության մաքսային օրենսդրության փոփոխության դեպքում՝ կոմիտեի որոշման հիման վրա.

2) մաքսային հսկողության արդյունքում լիազորված տնտեսական օպերատորի կողմից Հայաստանի Հանրապետության և Միության մաքսային օրենսդրությամբ սահմանված չափանիշներից առնվազն մեկի չպահպանման վերաբերյալ տվյալների բացահայտման դեպքում:

3. Լիազորված տնտեսական օպերատորի ռեեստրում հաշվառման վկայականի գործողությունը լիազոր մաքսային մարմինը կարող է կասեցնել՝

1) լիազորված տնտեսական օպերատորի կողմից օրենքով սահմանված կարգավիճակ տրամադրելու չափանիշներից մեկին չհամապատասխանելու դեպքում.

2) կոմիտեի սահմանած կարգով, ձևով և պարբերականությամբ լիազորված տնտեսական օպերատորի կողմից մաքսային մարմիններին հաշվետվություններ չներկայացվելու դեպքում՝ մինչև համապատասխան հաշվետվություն ներկայացնելը.

3) Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ սահմանված մաքսային կանոնների խախտման առկայության դեպքում՝ մաքսային կանոնների խախտման արդյունքում պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական որոշման ուժի մեջ մտնելու ժամկետից մինչև դրա՝ օրենքով սահմանված կարգով մարումը.

4) ընկերության բաժնետերերի կամ մասնակիցների նկատմամբ տնտեսական գործունեության բնագավառին վերաբերող ~~քրեական գործ հարուցվելու~~ քրեական հետապնդում հարուցվելու դեպքում՝ քրեական պատասխանատվության վերաբերյալ դատական որոշման ուժի մեջ մտնելու ժամկետից մինչև դրա՝ օրենքով սահմանված կարգով մարումը.

5) մաքսային մարմինների իրականացրած ստուգումների արդյունքում հարկերի, տուրքերի կամ այլ պարտադիր վճարների գծով չկատարված պարտավորությունների հայտնաբերման դեպքում՝ մինչև այդ պարտավորությունների կատարումը.

6) լիազորված տնտեսական օպերատորի ներկայացրած վկայականի կասեցման դիմումի հիման վրա՝ խնդրարկված ժամկետով:

4. Լիազոր մաքսային մարմինը նախքան լիազորված տնտեսական օպերատորի ռեեստրում գրանցվելու հավաստագիրը կասեցնելու մասին որոշման ընդունումը բացահայտված խախտումների վերաբերյալ ծանուցում է ուղարկում լիազորված տնտեսական օպերատորին: Եթե վերջինս 30 օրվա ընթացքում չի վերացնում խախտումները կամ չի ներկայացնում համապատասխան հաշվետվություններ, ապա կոմիտեն որոշում է ընդունում լիազորված տնտեսական օպերատորի վկայականի գործողության կասեցման վերաբերյալ:

5. Կասեցման վերաբերյալ որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակումից հետո: Այդ որոշման պատճենը ոչ ուշ, քան որոշման հրապարակմանը հաջորդող աշխատանքային օրը, փոստով կամ էլեկտրոնային եղանակով ուղարկվում է լիազորված տնտեսական օպերատորին:

6. Լիազորված տնտեսական օպերատորի ռեեստրում հաշվառման վկայականի գործողությունը դադարեցվում է՝

1) իրավաբանական անձի ներկայացրած՝ ռեեստրից դուրս գալու դիմումի հիման վրա.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան իրավաբանական անձի լուծարման դեպքում.

3) իրավաբանական անձի վերակազմակերպման (բացառությամբ վերակազմավորման) դեպքում.

4) լիազորված տնտեսական օպերատորի ռեեստրում հաշվառվելու վկայականի գործողության ժամանակավոր կասեցումից հետո սահմանված ժամկետներում պահանջվող գործողությունները չիրականացնելու դեպքում.

5) իրավաբանական անձի կողմից մեկ տարվա ընթացքում երկու և ավելի անգամ մաքսային կանոնների խախտման արձանագրման դեպքում:

Հոդված 136. Արտագնա մաքսային ստուգման ժամանակ ապրանքների վրա արգելանք դնելու, ապրանքները և փաստաթղթերը առգրավելու կարգը

1. Ապրանքների վրա արգելանք դնելը և ապրանքների առգրավումն իրականացվում են Միության մաքսային օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով նախատեսված նպատակներով:

2. Արտագնա ստուգման ժամանակ ապրանքների վրա արգելանք դնելու հիմքերն են՝

1) հատուկ դրոշմանիշներ, նույնականացման նշաններ կամ այլ եղանակներով կատարված նշագրում չունեցող ապրանքների տեղափոխումը, եթե ապրանքների դրոշմանիշները, նույնականացման նշանները, նշագրումը նախատեսված են Հայաստանի Հանրապետության կամ Միության մաքսային օրենսդրությամբ, կամ կեղծված դրոշմանիշներով կամ նույնականացման միջոցներով ապրանքների հայտնաբերումը.

2) ստուգվող անձի առևտրային փաստաթղթերում ապրանքների մաքսային հայտարարագրման և (կամ) բաց թողնման փաստերը հաստատող տեղեկությունների բացակայությունը, եթե, Հայաստանի Հանրապետության կամ Միության մաքսային օրենսդրության համաձայն, առևտրային փաստաթղթերում այդ տեղեկությունների նշումը պարտադիր է, ինչպես նաև ոչ հավաստի տեղեկությունների բացահայտումը կամ Հայաստանի Հանրապետության կամ Միության մաքսային օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերի բացակայությունը.

3) պայմանականորեն բաց թողնված ապրանքների՝ նպատակից տարբերվող նպատակով օգտագործելու փաստերի բացահայտումը.

4) մաքսատուրքի, հարկերի վճարման համար սահմանված արտոնությունների տրամադրման պայմանների և (կամ) կարգի չպահպանման մասին փաստերի բացահայտումը.

5) մաքսային ընթացակարգի պայմանների և պահանջների խախտումներով ապրանքների օգտագործման մասին վկայող փաստերի բացահայտումը:

3. Ապրանքների վրա արգելանքը դրանց տնօրինման և օգտագործման արգելքն է: Արգելանքի տակ գտնվող ապրանքները փոխանցվում են դրանց տիրապետողին կամ այդ ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող այլ անձի պահպանմանը: Արգելանքի տակ դրված ապրանքների օգտագործումը կարող է թույլատրվել արտագնա մաքսային ստուգումն իրականացնող մաքսային մարմնի ղեկավարի կամ նրա լիազորած՝ մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից՝ այդպիսի ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող անձի դիմումի հիման վրա: Արգելանքի տակ գտնվող ապրանքների փոխանցումն այլ անձանց, դրանց օտարումը կամ այլ կերպ տնօրինումը չեն թույլատրվում:

4. Ստուգվող ապրանքները կարող են առգրավվել, եթե բացահայտվել է, որ դրանց ներմուծումը Միության մաքսային տարածք կամ Հայաստանի Հանրապետության տարածք արգելված է, ինչպես նաև, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ ապրանքների արգելանքը դրանց պահպանման համար բավարար միջոց չէ: Առգրավված ապրանքները տեղավորվում են ժամանակավոր պահպանման պահեստներում՝ սույն օրենքով սահմանված կարգով:

5. Մաքսային ստուգման ժամանակ փաստաթղթերի պատճենների ներկայացումը անբավարար համարվելու դեպքում, եթե հիմքեր կան ենթադրելու, որ փաստաթղթերի բնօրինակները կարող են ոչնչացվել, թաքցվել, ուղղվել կամ փոփոխվել, ապա մաքսային մարմնի պաշտոնատար անձն իրավունք ունի առգրավելու փաստաթղթերի բնօրինակները: Փաստաթղթերի բնօրինակների առգրավման ժամանակ կազմվում է փաստաթղթերի բնօրինակների առգրավման արձանագրություն՝ երկու օրինակից: Սույն մասով սահմանված արձանագրության մի օրինակը՝ առգրավված փաստաթղթերի պատճենների հետ, փոխանցվում է ստուգվող անձին: Փաստաթղթի պատճենների վրա նշվում է փաստաթղթերի բնօրինակների առգրավման արձանագրության համարն ու ամսաթիվը, և դրվում է դրանք առգրավող պաշտոնատար անձի ստորագրությունը:

6. Ապրանքների, փաստաթղթերի առգրավումը և ապրանքների վրա արգելանք դնելն իրականացվում են արտագնա մաքսային ստուգում անցկացնող պաշտոնատար անձի հիմնավորված որոշման հիման վրա՝ ստուգվող անձի և առնվազն երկու ընթերակաների ներկայությամբ:

7. Բոլոր առգրավվող ապրանքները, փաստաթղթերը կամ ապրանքները, որոնց վրա արգելանք է դրվում, ներկայացվում են ընթերականերին, սույն օրենքով նախատեսված՝ առգրավման գործողություններին մասնակցող այլ անձանց, որից հետո, ըստ անհրաժեշտության, փաթեթավորվում, կնքվում կամ կապարակնքվում են: Առգրավված փաստաթղթերը պետք է համարակալի, կնքի և ստորագրի ստուգվող անձը կամ նրա լիազոր անձը: Ստուգվող անձի կամ նրա լիազոր անձի կողմից առգրավվող փաստաթղթերը կնքելուց կամ ստորագրելուց հրաժարվելու դեպքում փաստաթղթերի առգրավման արձանագրության մեջ մաքսային մարմինն այդ մասին նշում է կատարում:

8. Ապրանքների, փաստաթղթերի առգրավումը, ապրանքների վրա արգելանք դնելը ձևակերպվում են արձանագրությամբ, որի մեջ մանրամասն նկարագրվում են առգրավված ապրանքները, փաստաթղթերը կամ այն ապրանքները, որոնց վրա արգելանք է դրվել՝ դրանց անվանումների, քանակի և անհատական հատկանիշների նշումով: Նշված արձանագրությունը ստորագրում են առգրավումը կամ արգելանքը իրականացրած պաշտոնատար անձը և ստուգվող անձը, ինչպես նաև ընթերակաները: Սույն մասի համաձայն կազմվող արձանագրության պատճենը հանձնվում է ստուգվող անձին կամ նրա լիազորած անձին:

9. Առգրավված ապրանքների, փաստաթղթերի վերադարձը և դրված արգելանքի հանումն իրականացվում են արտագնա մաքսային ստուգման ավարտի օրվանից ոչ ուշ, բացառությամբ այն դեպքերի, երբ ապրանքները ենթակա են արգելանքի վերցման՝ սույն օրենքին համապատասխան, կամ այն դեպքում, երբ ապրանքները, փաստաթղթերը ենթակա են վերցման կամ առգրավման՝ Հայաստանի Հանրապետության վարչական

իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքին կամ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան: Սույն հոդվածին համապատասխան առգրավված ապրանքների, փաստաթղթերի վերադարձը և դրված արգելանքի հանումն իրականացվում են մաքսային մարմնի՝ արտագնա մաքսային ստուգումն անցկացրած պաշտոնատար անձի որոշման հիման վրա:

10. Առգրավված ապրանքների, փաստաթղթերի վերադարձի, դրված արգելանքի հանումը ձևակերպվում է մաքսային մարմնի պաշտոնատար անձի և ստուգված անձի կողմից ստորագրված արձանագրությամբ, որը կազմվում է 2 օրինակից: Սույն մասով նախատեսված արձանագրության մի օրինակը հանձնվում է ստուգված անձին, իսկ մյուսը պահպանվում է մաքսային մարմնում:

11. Առգրավված ապրանքների պահպանման ծախսերը կրում է առգրավված ապրանքների նկատմամբ տնօրինման, տիրապետման, օգտագործման իրավունք ունեցող անձը: Ստուգման արդյունքներով ստուգվող ապրանքների տեղափոխման հետ կապված՝ մաքսային գործին վերաբերող օրենսդրության դրույթների խախտում չհայտնաբերվելու դեպքում առգրավված ապրանքների պահպանման ծախսերը փոխհատուցվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից՝ Կառավարության սահմանած կարգով:

12. Այն դեպքերում, երբ առգրավված ապրանքները, փաստաթղթերը սույն հոդվածի 9-րդ մասին համապատասխան վերադարձման ենթակա չեն, սույն հոդվածին համապատասխան առգրավված ապրանքները, փաստաթղթերը արտագնա մաքսային ստուգման ավարտի օրվանից համարվում են՝

1) սույն օրենքի 146-րդ հոդվածով նախատեսված հիմքերով արգելանքի վերցված կամ

2) վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի շրջանակում վերցված կամ

3) քրեական ~~գործի~~ վարույթի շրջանակում առգրավված:

Սույն մասում նշված դեպքերում արտագնա մաքսային ստուգման ակտի մեջ նշվում է այն արձանագրության համարը, որի հիման վրա ապրանքները, փաստաթղթերը առգրավվել են:

13. Արտագնա մաքսային ստուգման ավարտի օրվան հաջորդող երկու ամսվա ընթացքում չպահանջված՝ առգրավված ապրանքները հանձնվում են Հայաստանի Հանրապետությանը՝ դատական ակտի համաձայն:

Ապրանքների առգրավման հիմքերը և (կամ) դրանց պահպանման անհրաժեշտությունը վերանալուց հետո այդ ապրանքները մեկ աշխատանքային օրվա ընթացքում վերադարձվում են տնտեսավարող սուբյեկտին:

Հոդված 143. Ապրանքների հանձնումը պետությանը

1. Ապրանքները հանձնվում են պետությանը՝

1) ~~քրեական գործով~~ քրեական վարույթով կամ վարչական իրավախախտման գործով դատական ակտի հիման վրա՝ մաքսային մարմինների կողմից գույքի բռնագրավման կիրառման դեպքում.

2) մաքսային մարմնի կամ այլ լիազոր մարմնի հայցի հիմքով կայացված՝ գույքը տիրազուրկ ճանաչելու կամ առգրավված ապրանքները պետությանը հանձնելու մասին դատական ակտի հիման վրա.

3) ապրանքները «Հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգով ձևակերպելու դեպքում:

Հոդված 253. Մաքսային մարմինները՝ որպես հետաքննության և նախաքննության մարմիններ

1. Մաքսային մարմինները համարվում են հետաքննության և նախաքննության մարմիններ՝ մաքսանենգության գործերով և քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այն ~~հանցագործությունների գործերով~~հանցագործությունների վերաբերյալ վարույթներով, որոնց հետաքննության և նախաքննության վարույթի իրականացումը մտնում է մաքսային մարմինների լիազորությունների մեջ:

Հոդված 254. Մաքսային մարմինների՝ հետաքննության և նախաքննության վարույթ իրականացնելը

1. Մաքսանենգության և մաքսային գործի հետ կապված այլ հանցագործությունների հատկանիշների դեպքերում հետաքննության և նախաքննության վարույթն իրականացնում են Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները: Մաքսային մարմինը ~~քրեական գործ է հարուցում~~քրեական վարույթ է նախաձեռնում՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսդրության դրույթներով, կատարում է անհետաձգելի~~ քննչական գործողություններ~~վարութային գործողություններ՝ իրավախախտման հետքերը բացահայտելու ու ամրապնդելու և իրավախախտում կատարած անձանց հայտնաբերելու նպատակով:

Հոդված 256. Թմրամիջոցների և հոգեկան խիստ ներգործություն ունեցող նյութերի վերահսկելի մատակարարումները

1. Թմրամիջոցների և հոգեկան խիստ ներգործություն ունեցող նյութերի միջազգային ապօրինի շրջանառությունը կասեցնելու և դրան մասնակցող անձանց բացահայտելու նպատակով մաքսային մարմինները յուրաքանչյուր առանձին դեպքում, օտարերկրյա պետությունների մաքսային և այլ իրավասու մարմինների հետ ունեցած պայմանավորվածությանը համապատասխան կամ Հայաստանի Հանրապետության

միջազգային պայմանագրերի հիման վրա օգտագործում են «վերահսկելի մատակարարման» մեթոդը, այսինքն՝ թույլատրում են իրենց հսկողության ներքո ապօրինի շրջանառության մեջ մտցված թմրամիջոցների ու հոգեկան խիստ ներգործություն ունեցող նյութերի ներմուծում Հայաստանի Հանրապետություն, արտահանում Հայաստանի Հանրապետությունից կամ տարանցիկ փոխադրում դրա տարածքով:

2. «Վերահսկելի մատակարարման» մեթոդի օգտագործման վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում ~~քրեական գործ~~ քրեական հետապնդում չի հարուցվում այն անձի նկատմամբ, որն իրականացնում է թմրամիջոցների և հոգեկան խիստ ներգործություն ունեցող նյութերի միջազգային ապօրինի շրջանառությունը, իսկ ընդունած որոշման մասին մաքսային մարմիններն անհապաղ տեղյակ են պահում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին:

3. «Վերահսկելի մատակարարման» մեթոդը կարող է կիրառվել նաև այն ապրանքների նկատմամբ, որոնք հանցագործության համար հանդիսացել են միջոց կամ գործիք, ձեռք են բերվել հանցավոր ճանապարհով և ենթակա են վերցման՝ օրենքով սահմանված դեպքերում:

Հոդված 257. «Վերահսկելի մատակարարման» մեթոդի կիրառմամբ բռնագրավված գույքի և դրամական միջոցների տնօրինումը

1. Դրամական միջոցները, որոնք Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների դատարանները բռնագրավել են այն~~ հանցագործությունների գործերով~~հանցագործությունների վերաբերյալ վարույթներով, որոնց բացահայտման կամ կանխման ժամանակ օգտագործվել է «վերահսկելի մատակարարման» մեթոդը, ինչպես նաև ստացվել են բռնագրավված գույքի իրացումից, բաշխվում են այն պետությունների միջև, որոնց մաքսային և այլ իրավասու մարմինները մասնակցել են այդ մեթոդի կիրառմանը՝ Հայաստանի Հանրապետության պետական իրավասու մարմինների և օտարերկրյա պետությունների իրավասու գերատեսչությունների միջև եղած պայմանավորվածության համաձայն:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 2. Հարկադիր կատարման ենթակա ակտերը

Հարկադիր կատարման ենթակա են՝

1) քաղաքացիական գործերով դատական ակտերը, բացառությամբ իրավաբանական անձին կամ քաղաքացուն սնանկ ճանաչելու և մրցութային վարույթ սկսելու մասին գործն ըստ էության լուծող դատական ակտերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դատական ակտերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ գլխով նախատեսված գործերով դատական ակտերի.

2) ~~քրեական գործերով~~ քրեական վարույթներով դատարանի դատավճիռները և որոշումները՝ տուգանքների, գույքի բռնագրավման և գույքային բռնագանձումների մասով.

3) արբիտրաժային տրիբունալների վճիռները.

4) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում օտարերկրյա դատարանների և արբիտրաժային տրիբունալների քաղաքացիական և տնտեսական գործերով վճիռները և որոշումները, ինչպես նաև ~~քրեական գործերով~~ քրեական վարույթներով օտարերկրյա դատարանների դատավճիռներն ու որոշումները՝ վնասի հատուցման և գույքային այլ բռնագանձումների մասով.

5) Հայաստանի Հանրապետության անդամակցությամբ (մասնակցությամբ) գործող միջազգային դատարանի, ինչպես նաև միջազգային արբիտրաժի քաղաքացիական և տնտեսական գործերով վճիռները և որոշումները:

6) Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները.

7) անբողոքարկելի վարչական ակտերը՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ գլխով սահմանված կարգով.

8) կատարողական մակագրության թերթը.

9) Բարձրագույն դատական խորհրդի որոշումները՝ «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 151-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով և 5-րդ մասով սահմանված դեպքերում.

10) Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի՝ որոշակի գործողություններ կատարելուն պարտադրող կամ որոշակի գործողություններից ձեռնպահ մնալուն հարկադրող վարչական ակտերը և արգելանք դնելու մասին որոշումները՝ սույն օրենքով և «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքով սահմանված կարգով.

11) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝ որոշակի գործողություններ կատարելուն պարտադրող կամ որոշակի գործողություններից ձեռնպահ մնալուն հարկադրող վարչական ակտերը և արգելանք դնելու մասին որոշումները՝ սույն օրենքով և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.

12) քանդման մասին վարչական ակտը:

Հոդված 72. Պատասխանատվությունը կատարողական վարույթի ընթացքում թույլ տրված խախտումների համար

1. Քաղաքացու կամ պաշտոնատար անձի կողմից հարկադիր կատարողի որոշումը դիտավորյալ չկատարելու, կատարմանը խոչընդոտելու կամ դիմադրություն ցույց տալու, ինչպես նաև պարտապանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի և գույքային իրավունքների կազմի ու քանակի մասին հայտարարագրում տվյալներ թաքցնելու կամ դրանք խեղաթյուրելու կամ հայտարարագիր ներկայացնելուց չարամտորեն խուսափելու դեպքերում հարկադիր կատարողն իրավունք ունի իր որոշմամբ կիրառելու վարչական պատասխանատվության միջոցներ:

~~2. Դատական ակտի կատարմամբ պայմանավորված՝ հարկադիր կատարողին զրպարտելու, ինչպես նաև նրա կամ նրա մերձավորի նկատմամբ սպանության, առողջությանը վնաս պատճառելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքի կամ հարկադիր կատարողի նկատմամբ բռնություն գործադրելու դեպքում առաջանում է քրեական պատասխանատվություն: Այդ դեպքերում միջնորդություն է ներկայացվում դատախազություն՝ մեղավոր անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու համար:~~

2. Հարկադիր կատարողի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նրա դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի մասին արատավորող կամ իրավունքներին ու օրինական շահերին այլ վնաս պատճառող տեղեկություն հրապարակելու կամ նրանց նկատմամբ բռնություն գործադրելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիք տալու, ինչպես նաև նշված անձանց մասին արատավորող կամ իրավունքներին ու օրինական շահերին այլ վնաս պատճառող տեղեկություն հրապարակելու կամ գույքը ոչնչացնելու կամ վնասելու կամ նրանց նկատմամբ բռնություն գործադրելու գործողությունները՝ կապված օրինական ծառայողական կամ մասնագիտական գործունեության կամ բացառապես հարկադիր կատարող կամ նրա մերձավոր ազգական կամ մերձավոր կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվող լինելու հանգամանքի հետ առաջացնում է քրեական պատասխանատվություն: Այդ դեպքերում միջնորդություն է ներկայացվում դատախազություն՝ մեղավոր անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու համար:

Հոդված 73.1. Դատախազության լիազորությունները՝ կապված դատական ակտի կատարման հետ

1. Դատախազության մարմիններն իրավունք ունեն ուսումնասիրելու ~~քրեական գործերով~~ քրեական վարույթներով դատարանի դատավճիռների հիման վրա հարուցված տուգանքների և գույքի բռնագրավումներով կատարողական վարույթների վերաբերյալ

գործերը, իսկ որպես կողմ՝ ծանոթանալու միայն իրենց հայցերով կատարողական վարույթներին:

2. Դատախազությունն իրավունք ունի վերացնելու ~~քրեական գործերով~~ քրեական վարույթներով դատարանի դատավճիռների հիման վրա հարուցված տուգանքների և գույքի բռնագրավումներով կատարողական վարույթն ավարտելու մասին հարկադիր կատարողի որոշումը այն կայացնելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, եթե որոշումը կայացնելիս թույլ են տրվել սույն օրենքով սահմանված ընթացակարգային խախտումներ:

Հարկադիր կատարողն իրավունք ունի դատական կարգով բողոքարկելու կատարողական վարույթն ավարտելու մասին հարկադիր կատարողի որոշումը վերացնելու մասին դատախազի որոշումը այն կայացվելու օրվանից հետո՝ 15 օրվա ընթացքում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 12. Հայաստանի Հանրապետությունից ելքը

1. Օտարերկրացիները Հայաստանի Հանրապետությունից կարող են դուրս գալ վավերական անձնագրի և մինչև դուրս գալու պահը Հայաստանի Հանրապետության տարածքում նրանց օրինական գտնվելը կամ բնակվելը հավաստող վավերական փաստաթղթի առկայության դեպքում, եթե այլ կարգ նախատեսված չէ օրենքով կամ միջազգային պայմանագրերով:

2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով վարչական պատասխանատվության ենթարկված օտարերկրացին առանց վավերական անձնագրի և մինչև Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու պահը Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական գտնվելը կամ բնակվելը հավաստող վավերական փաստաթղթի կարող է դուրս գալ Հայաստանի Հանրապետության տարածքից տուգանքի վճարման մասին անդորրագիրը (տուգանքի վճարումը հավաստող այլ փաստաթուղթը) սահմանային հսկողության մարմնին ներկայացնելու դեպքում:

3. Հայաստանի Հանրապետությունից օտարերկրացու ելքն արգելվում է, եթե օրենքով սահմանված կարգով՝

ա) նրա նկատմամբ նշանակվել է այնպիսի պատիժ, որի կրումը հնարավոր է միայն Հայաստանի Հանրապետությունում մինչև պատիժը կրելու ժամկետի ավարտը կամ պատիժը կրելուց օրենքով սահմանված կարգով ազատվելը.

բ) ~~հարուցված քրեական գործով նրա նկատմամբ կիրառվել է խափանման միջոց, բացառությամբ այն դեպքերի, երբ քրեական հետապնդման մարմինը տվյալ անձին Հայաստանի Հանրապետությունից ելքի գրավոր թույլտվություն է տվել~~նրա նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում և որպես խափանման միջոց է ընտրվել «բացակայելու արգելքը», բացառությամբ այն դեպքերի, երբ վարույթն իրականացնող մարմինը տվյալ անձին Հայաստանի Հանրապետությունից ելքի գրավոր թույլտվություն է տվել:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված անձանց մասին տվյալները անհապաղ փոխանցվում են Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Այն դեպքում, երբ վերանում են հանգամանքները, որոնց ուժով արգելվել է օտարերկրացու ելքը Հայաստանի Հանրապետությունից, իրավասու մարմինը կամ պաշտոնատար անձը պարտավոր է անմիջապես տեղեկացնել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնին:

Հոդված 19. Կացության կարգավիճակ տալը մերժելու հիմքերը

Օտարերկրացուն կացության կարգավիճակ տալը կարող է մերժվել, եթե՝

ա) նա արտաքսվել է Հայաստանի Հանրապետության տարածքից կամ նախկինում զրկվել է կացության կարգավիճակից, և արտաքսման կամ կացության կարգավիճակից զրկելու մասին որոշման ուժի մեջ մտնելու պահից չի անցել երեք տարի.

բ) նա դատապարտվել է Հայաստանի Հանրապետությունում՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար, և դատվածությունը սահմանված կարգով ~~չի հանվել կամ մարվել~~չի մարվել կամ վերացվել.

գ) գոյություն ունեն հավաստի տվյալներ, որ նա իրականացնում է այնպիսի գործունեություն, մասնակցում, կազմակերպում կամ հանդիսանում է այնպիսի կազմակերպության անդամ, որի նպատակն է՝

- վնաս պատճառել Հայաստանի Հանրապետության պետական անվտանգությանը, տապալել սահմանադրական կարգը, թուլացնել պաշտպանունակությունը,

- իրականացնել ահաբեկչական գործունեություն,

- սահմանով ապօրինաբար (առանց համապատասխան թույլտվության) տեղափոխել զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր, ռադիոակտիվ նյութեր, թմրանյութեր, հոգեներգործուն նյութեր կամ

- իրականացնել մարդու թրաֆիքինգ կամ շահագործում, պետական սահմանի ապօրինի հատում կամ անօրինական միգրացիայի կազմակերպում.

դ) նա տառապում է սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով նախատեսված հիվանդություններից որևէ մեկով.

ե) գոյություն ունեն նրա կողմից Հայաստանի Հանրապետության պետական անվտանգությանը կամ հասարակական կարգին լուրջ և հիմնավորված սպառնալիքներ.

զ) կացության կարգավիճակ հայցելիս նա ներկայացրել է իր մասին կեղծ տեղեկություններ կամ չի ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթեր, կամ գոյություն ունեն տվյալներ այն մասին, որ նրա գտնվելը Հայաստանի Հանրապետությունում ունի այլ նպատակ, քան հայտարարվածը.

է) նա սույն օրենքը խախտելու համար ենթարկվել է վարչական պատասխանատվության և չի կատարել վարչական ակտով իր վրա դրված պարտականությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ վարչական պատասխանատվության ենթարկվելու պահից անցել է մեկ տարի:

Սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դրույթները չեն տարածվում Հայաստանի Հանրապետությունում օրինական կարգով բնակվող ամուսին, ծնող կամ զավակ ունեցող անձանց վրա:

Հոդված 23. Աշխատանքի թույլտվություն ստանալու բացառությունները

1. Առանց աշխատանքի թույլտվության Հայաստանի Հանրապետությունում կարող են աշխատել՝

ա) Հայաստանի Հանրապետության մշտական և հատուկ կացության կարգավիճակ ունեցողները.

բ) սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «գ», «դ» և «զ» կետերով նախատեսված հիմքերով Հայաստանի Հանրապետության ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցողները՝ կացության ժամկետը չգերազանցող ժամանակահատվածով.

գ) Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, միջազգային կազմակերպությունների և դրանց ներկայացուցչությունների աշխատակիցների ընտանիքի անդամները՝ փոխադարձության սկզբունքի հիման վրա.

դ) կինեմատոգրաֆիայի, թատրոնի, համերգային շրջագայությունների նպատակով Հայաստանի Հանրապետություն ժամանող կատարողները, արտիստները և այդ միջոցառումների համար պատասխանատու վարչական և տեխնիկական սպասարկման անձնակազմը՝ Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմունքներով գտնվելու ժամկետում.

ե) կանոնադրությամբ կեսից ավելիին ձայնի իրավունք տվող օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ Հայաստանի Հանրապետությունում գտնվող առևտրային կազմակերպությունների հիմնադիրները և գործադիր մարմնի ղեկավարները՝ տվյալ կազմակերպություններում աշխատելու նպատակով.

զ) օտարերկրյա պետության առևտրային կազմակերպությունների աշխատակիցները՝ Հայաստանի Հանրապետությունում տեղակայված այդ կազմակերպությունների ներկայացուցչություններում աշխատելու նպատակով.

է) օտարերկրյա առևտրային կազմակերպության կողմից իր մասնաճյուղ կամ ներկայացուցչություն առաքվող կամ օտարերկրյա առևտրային կազմակերպություններից գնված մեքենաները, սարքավորումները, հաստոցները տեղադրելու, վերանորոգելու և դրանք շահագործելու համար աշխատողներին որակավորելու նպատակով ժամանող օտարերկրյա մասնագետները՝ Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմունքներով գտնվելու ժամկետում.

ը) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի հիման վրա ժամանող մասնագետները կամ այլ անձինք.

թ) Հայաստանի Հանրապետությունում գործող ուսումնական հաստատություններում դասավանդելու, գիտական աշխատանք կատարելու (գիտահետազոտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնելու) նպատակով հրավիրված օտարերկրացի դասախոսները, ուսուցիչները, գիտամանկավարժական գործունեություն իրականացնող այլ անձինք, ինչպես նաև այդ ուսումնական հաստատությունների ղեկավար կազմում ընդգրկված վարչակառավարչական գործառույթներ իրականացնող օտարերկրացիները.

ժ) լրատվական գործունեություն իրականացնող օտարերկրյա կազմակերպությունների հավատարմագրված ներկայացուցիչները՝ Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմունքներով գտնվելու ժամկետում.

ժա) Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող, փախստականի կարգավիճակ ունեցող և Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած օտարերկրյա քաղաքացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք՝ կացության ժամկետը չգերազանցող ժամանակահատվածով.

ժբ) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափանիշներին համապատասխանող բարձր որակավորում ունեցող օտարերկրացիները.

ժգ) տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց հետևանքների վերացմանն ուղղված աշխատանքներին մասնակցելու նպատակով ժամանած անձինք՝ այդ աշխատանքներում մասնակցելու ամբողջ ժամանակահատվածի ընթացքում՝ Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմունքներով գտնվելու ժամկետում.

ժդ) համատեղ ~~քննվող գործերով~~ իրականացվող վարույթներով հանցագործությունների բացահայտմանն ուղղված աշխատանքներում ներգրավվելու նպատակով ժամանած մասնագետները՝ Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմունքներով գտնվելու ժամկետում.

ժե) օտարերկրացի այն մարզիկները, որոնք ունեն պրոֆեսիոնալ կարգավիճակ և միաժամանակ կնքում են մարզական գործունեության մասին պայմանագիր, այդ թվում՝ աշխատանքային պայմանագիր գործատուի հետ.

ժզ) օրենքով սահմանված կարգով զոհի կամ հատուկ կատեգորիայի զոհի կարգավիճակ ունեցող անձինք և հատուկ կատեգորիայի զոհի օրինական ներկայացուցիչը.

ժէ) Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիները.

ժը) օտարերկրացի դատապարտյալները կամ կալանավորված անձինք, ինչպես նաև պրոբացիայի շահառու հանդիսացող օտարերկրացիները.

ժթ) Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատություններում սովորող օտարերկրացի ուսանողները կրթությունն ավարտելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, ինչպես նաև համապատասխան միջազգային պայմանագրերի հիման վրա արձակուրդների ժամանակ աշխատանքային փոխանակումների շրջանակներում աշխատանք կատարող ուսանողները.

ի) ազգությամբ հայ այն օտարերկրացիները, որոնց մշտական բնակության օտարերկրյա պետությունում ստեղծվել է այնպիսի արտակարգ իրավիճակ, որն սպառնում է այդ անձանց քաղաքացիների կյանքին կամ առողջությանը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված օտարերկրացիների հետ գործատուները աշխատանքային (ծառայությունների մատուցման) պայմանագիր են կնքում միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ընթացակարգով:

3. Աշխատանքի թույլտվություն ստանալու բացառությունների ցանկին համապատասխանելու վերաբերյալ եզրակացությունը, ըստ իրավասությունների շրջանակի, տրամադրում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած համապատասխան պետական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի՝
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ»
ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ

Հոդված 9. Քրեական օրենսդրության հետադարձ ուժը

1. Արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենսդրությունը հետադարձ ուժ չունի:

2. Արարքի հանցավորությունը լրիվ կամ մասնակիորեն վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ: Նշված դեպքում այն տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած այն անձանց վրա, որոնց վերաբերյալ դեռևս առկա չէ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատավարական ակտ:

3. Եզրափակիչ դատավարական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո արարքի հանցավորությունը լրիվ կամ մասնակիորեն վերացնող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ: Եզրափակիչ դատավարական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո պատիժը մեղմացնող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ, եթե նշանակված պատիժն ավելի խիստ է ուժի մեջ մտած օրենսդրությամբ նախատեսված պատժի առավելագույն ժամկետից կամ նշանակված պատժատեսակն ավելի խիստ է ուժի մեջ մտած օրենսդրությամբ նախատեսված առավել խիստ պատժատեսակից: Նշված դեպքերում այն տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած այն անձանց վրա, որոնք կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն:

4. Հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ, եթե դա նախատեսված է օրենքով:

5. Հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարելուց հետո ուժի մեջ մտած, սակայն մինչև իրավասու մարմնի կողմից եզրափակիչ դատավարական ակտը կայացնելն ուժը կորցրած միջանկյալ քրեական օրենսդրությունը հետադարձ ուժով կիրառվում է սույն հոդվածով նախատեսված չափանիշներին համապատասխան:

6. Պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող և միաժամանակ մասնակիորեն խստացնող օրենքը սույն հոդվածով նախատեսված չափանիշներին համապատասխան հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որը մեղմացնում է պատասխանատվությունը:

Հոդված 62. Օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը

1. Օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը Հայաստանի Հանրապետությունում քրեական պատասխանատվության ենթակա օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության սահմաններից հեռացնելն է՝ արգելելով նրան գտնվել Հայաստանի Հանրապետությունում:

2. Օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը որպես լրացուցիչ պատիժ սահմանվում է 5-10 տարի ժամկետով:

3. Օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը որպես լրացուցիչ պատիժ նշանակելիս դրա ժամկետի հաշվարկն սկսվում է Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելու պահից:

~~4. Այս պատժատեսակը չի կարող նշանակվել՝~~

~~1) փախստականի կարգավիճակ ունեցող կամ Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած անձի նկատմամբ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի,~~

~~2) չվերադարձելիության սկզբունքից օգտվող օտարերկրյա քաղաքացու նկատմամբ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի,~~

~~3) մինչև հանցանք կատարելը Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամ Հայաստանի Հանրապետությունում հատուկ կացության կարգավիճակ ունեցող կամ Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող անձի հետ ամուսնացած կամ խնամքին Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխա ունեցող անձի նկատմամբ,~~

~~4) եթե անձը վտարվող պետության տարածքում քրեական հետապնդման է ենթարկվում այնպիսի արարքի համար, որը կարող է պատժվել մահապատժով,~~

~~5) եթե հիմնավորվում է, որ վտարվող պետության տարածքում անձը կարող է հետապնդման ենթարկվել ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների համար, կամ~~

~~6) եթե հիմնավորվում է, որ վտարվող պետության տարածքում անձը կարող է ենթարկվել խոշտանգման կամ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:~~

~~5. Հայաստանի Հանրապետությունից չեն կարող վտարվել այն անձինք, որոնց նկատմամբ նշանակվել է սույն հոդվածով նախատեսված պատիժը, սակայն մինչև պատժի կատարումը դատապարտյալը ձեռք է բերել փախստականի կամ Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացածի կարգավիճակ, կամ նրա նկատմամբ հաստատվել է չվերադարձելիության սկզբունքի կիրառելիությունը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի:~~

4. Օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը կատարվում է դատապարտյալի նկատմամբ նշանակված հիմնական պատիժը կրելուց հետո: Այն դեպքում, երբ արդարադատության բնագավառում պետական լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված կարգով համաձայնություն է ձեռք բերում դատապարտյալին պատժի մնացած մասը կրելու նպատակով իր քաղաքացիության երկիր փոխանցելու վերաբերյալ, ապա օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտը համարվում է ի կատար ածված դատապարտյալի փոխանցումն իրականացնելու մասին արդարադատության բնագավառում պետական լիազոր մարմնի ծանուցումն ստանալուց հետո: Այն դեպքում, երբ սույն օրենսգրքի 84-րդ կամ 85-րդ հոդվածով սահմանված կարգով կայացվել է անձին պատժից ազատելու վերաբերյալ որոշում, օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը կատարվում է փորձաշրջանն ավարտվելուց հետո: Սույն օրենսգրքի 60-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերում անձին պատժի հետագա կրումից ազատելու, ինչպես նաև սույն օրենսգրքի 79-րդ հոդվածի 4-րդ մասով կամ 88-րդ հոդվածով սահմանված կարգով անձին հիմնական պատժից ազատելու դեպքում օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի

Հանրապետության տարածքից վտարելը կատարվում է պատժի հետագա կրումից կամ պատժից ազատելուց հետո:

5. Օտարերկրյա քաղաքացին կարող է վտարվել իր քաղաքացիության պետություն կամ այն պետություն, որտեղ վերջինս մշտապես բնակվում է: Վտարման երկիրը սահմանում է դատարանը՝ հաշվի առնելով դատապարտյալի կարծիքը:

6. Այս պատժատեսակը չի կարող նշանակվել՝

1) փախստականի կարգավիճակ ունեցող կամ Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած անձի նկատմամբ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի,

2) չվերադարձելիության սկզբունքից օգտվող օտարերկրյա քաղաքացու նկատմամբ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի,

3) մինչև հանցանք կատարելը Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամ Հայաստանի Հանրապետությունում հատուկ կացության կարգավիճակ ունեցող կամ Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող անձի հետ ամուսնացած կամ խնամքին Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխա ունեցող անձի նկատմամբ,

4) եթե անձը վտարվող պետության տարածքում քրեական հետապնդման է ենթարկվում այնպիսի արարքի համար, որը կարող է պատժվել մահապատժով,

5) եթե հիմնավորվում է, որ վտարվող պետության տարածքում անձը կարող է հետապնդման ենթարկվել ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների համար, կամ

6) եթե հիմնավորվում է, որ վտարվող պետության տարածքում անձը կարող է ենթարկվել խոշտանգման կամ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

7. Հայաստանի Հանրապետությունից չեն կարող վտարվել այն անձինք, որոնց նկատմամբ նշանակվել է սույն հոդվածով նախատեսված պատիժը, սակայն մինչև պատժի կատարումը դատապարտյալը ձեռք է բերել փախստականի կամ Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացածի կարգավիճակ, կամ նրա նկատմամբ հաստատվել է չվերադարձելիության սկզբունքի կիրառելիությունը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի:

Հոդված 83. Քրեական պատասխանատվությունից ազատելը վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով

1. Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտվելուն հաջորդող օրվանից անցել են հետևյալ ժամկետները.

1) 5 տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքի դեպքում.

2) 10 տարի՝ միջին ծանրության հանցանքի դեպքում.

3) 15 տարի՝ ծանր հանցանքի դեպքում.

4) 20 տարի՝ առանձնապես ծանր հանցանքի դեպքում:

2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտվելուն հաջորդող օրվանից մինչև ~~անձին որպես մեղադրյալ ներգրավելու~~ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու -մասին որոշում կայացնելը:

3. Տևող հանցագործության դեպքում վաղեմության ժամկետը հաշվարկվում է արարքը դադարելուն հաջորդող օրվանից, իսկ շարունակվող հանցագործության դեպքում՝ վերջին արարքը կատարելուն հաջորդող օրվանից:

4. Չավարտված հանցագործության դեպքում վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցագործության նախապատրաստություն կամ հանցափորձ համարվող արարքը դադարելու պահից:

5. Հանցակցությամբ հանցանք կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե կատարողի կողմից հանցանքն ավարտվելուն հաջորդող օրվանից անցել են սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետները:

6. Վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե մինչև նշված ժամկետներն անցնելն անձը կատարում է նոր հանցանք: Այդ դեպքում յուրաքանչյուր հանցագործության համար վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է նոր հանցանքն ավարտվելու պահից:

7. Վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե անձը խուսափում է քննությունից: Այս դեպքում վաղեմության ընթացքը վերսկսվում է անձին ձերբակալելու կամ մեղայականով նրա ներկայանալու պահից: Ընդ որում, անձը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել, եթե ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքն ավարտվելու օրվանից անցել է 15 տարի, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքն ավարտվելու օրվանից՝ 25 տարի, և վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատված չի եղել նոր հանցագործությամբ:

8. Վաղեմության ժամկետ չի կիրառվում այն հանցանքների կապակցությամբ, որոնց համար սույն օրենսգրքով որպես պատիժ նախատեսված է նաև ցմահ ազատազրկումը:

9. Սույն օրենսգրքի 133-154-րդ հոդվածներով, 308-րդ հոդվածով, 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով կամ 450-րդ հոդվածով նախատեսված հանցանք կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետներ չեն կիրառվում՝ անկախ հանցանքի կատարման պահից:

10. Վաղեմության ժամկետներ չեն կիրառվում նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ, եթե այդ պայմանագրերով վաղեմության ժամկետների կիրառման արգելք է սահմանված:

11. Սույն օրենսգրքի 189-րդ, 198-202-րդ, 241-րդ կամ 242-րդ հոդվածով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է հանցագործությունից տուժած անձի 18 տարին լրանալու պահից:

Հոդված 86. **~~Պատժի~~ Հղի կնոջ կամ խնամքին մինչև 6 տարեկան երեխա ունեցող անձի պատժի կատարումը հետաձգելը**

1. Մինչև 5 տարի ժամկետով ազատազրկման կամ ազատազրկումից ավելի մեղմ պատժի դատապարտված հղի կնոջ կամ խնամքին մինչև 6 տարեկան երեխա ունեցող անձի նկատմամբ նշանակված պատժի կատարումը կարող է հետաձգվել մինչև երեխայի 6 տարեկան դառնալը, եթե դատարանը համարում է, որ պատժի նպատակներին հասնելու համար պատիժն անմիջապես կատարելն անհրաժեշտ չէ:

2. Պատժի կատարումը հետաձգելու վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանը պետք է հաշվի առնի հետևյալ հանգամանքները.

1) անձին մեղսագրվող հանցանքի բնույթն ու վտանգավորությունը,

2) պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները,

3) հանցանք կատարածի անձը,

4) պատճառած վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու պահանջի բացակայությունը կամ այն հատուցած կամ այլ կերպ հարթած լինելու հանգամանքը, եթե հանցագործությամբ վնաս է պատճառվել:

3. Պատժի կատարումը հետաձգելու մասին որոշում կայացնելու դեպքում պատժի հետաձգված ժամկետը համարվում է փորձաշրջան, որի ընթացքում անձը գտնվում է դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողության ներքո և պարտավոր է կատարել դատարանի որոշմամբ սահմանված, սույն օրենսգրքի 84-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պարտականությունները:

4. Պատժի կատարումը հետաձգելու մասին որոշում կայացնելիս դատարանն անձի վրա դնում է սույն օրենսգրքի 84-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պարտականություններից մեկը կամ մի քանիսը: Դատարանը կարող է այնպիսի պարտականություններ դնել հղի կնոջ կամ խնամքին մինչև 6 տարեկան երեխա ունեցող անձի վրա, որոնք իրագործելի են նրա կողմից:

5. Այն դեպքում, երբ հղի կինը կամ խնամքին մինչև 6 տարեկան երեխա ունեցող անձը խուսափում է դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունները կատարելուց կամ փորձաշրջանի ընթացքում կատարում է նոր հանցանք, ապա դատարանը դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ վերացնում է պատժի կատարումը հետաձգելու վերաբերյալ որոշումը: Փորձաշրջանի ընթացքում նոր հանցանք կատարելու դեպքում դատարանն անձի նկատմամբ պատիժ է նշանակում սույն օրենսգրքի 75-րդ հոդվածով սահմանված կարգով:

6. Եթե փորձաշրջանի ընթացքում պարզվում է, որ մինչև դատապարտվելն անձը կատարել է մեկ այլ հանցանք, որի համար քրեական պատասխանատվության չի ենթարկվել կամ օրենքով սահմանված կարգով քրեական պատասխանատվությունից կամ պատժից չի ազատվել, ապա դատարանը պատիժ է նշանակում հանցագործությունների համակցության համար պատիժ նշանակելու՝ սույն օրենսգրքի 74-րդ հոդվածով նախատեսված կարգով: Եթե հանցագործությունների համակցությամբ վերջնական պատիժը չի գերազանցում 5 տարի ժամկետով ազատազրկումը, ապա դատարանը, ղեկավարվելով սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված

պայմաններով, կարող է որոշում կայացնել պատժի կատարումը հետաձգելու վերաբերյալ:

7. Եթե հղի կինն ընդհատում է հղիությունն առանց դրա ընդհատման համար օրենքով սահմանված բժշկական ցուցումների կամ հրաժարվում է երեխայից կամ նրան հանձնում է մանկատուն կամ խուսափում է նրան խնամելուց և դաստիարակելուց, ապա դատարանը դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ վերացնում է պատժի կատարումը հետաձգելու վերաբերյալ որոշումը:

8. Երեխայի մահվան դեպքում դատարանը չի վերացնում պատժի կատարումը հետաձգելու վերաբերյալ որոշումը, եթե փորձաշրջանի ընթացքում անձը բարեխղճորեն կատարել է դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունները:

9. Եթե պատժի կատարումը հետաձգելու վերաբերյալ որոշումը սույն հոդվածով նախատեսված որևէ հիմքով չի վերացվում, ապա փորձաշրջանն ավարտվելուց հետո անձն ազատվում է պատժի կրումից:

Հոդված 140. Պատերազմ վարելու արգելված եղանակների կիրառմամբ պատերազմական հանցագործությունները

1. Միջազգային զինված ընդհարման կամ միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման ժամանակ՝

1) քաղաքացիական բնակչության կամ ռազմական գործողություններին անմիջականորեն չմասնակցող առանձին քաղաքացիական անձանց կամ ռազմական գործողություններին անմիջական մասնակցությունը հանցավորի համար ակնհայտորեն դադարեցրած անձի վրա հարձակումը,

2) քաղաքացիական օբյեկտների, այդ թվում՝ կրոնական, կրթության, արվեստի, գիտության կամ բարեգործության նպատակների համար նախատեսված շենքերի, պատմական հուշարձանների, բժշկական հաստատությունների, հիվանդների կամ վիրավորների կենտրոնացման վայրերի կամ չպաշտպանվող տարածքների կամ ապառազմականացված գոտիների կամ չպաշտպանվող կամ ռազմական օբյեկտ չհանդիսացող այլ բնակավայրերի կամ շենքերի կամ շինությունների վրա հարձակումը,

3) հարձակումը, եթե ակնհայտ է, որ այն կհանգեցնի քաղաքացիական անձանց պատահական մահվան կամ խեղման կամ վնաս կպատճառի քաղաքացիական օբյեկտներին կամ լայնածավալ, երկարաժամկետ և լուրջ վնաս կպատճառի շրջակա միջավայրին, եթե այդպիսի վնասներ պատճառելը ակնհայտորեն անհամաչափ է կոնկրետ կամ անմիջականորեն ակնկալվող ընդհանուր ռազմական առավելության համեմատությամբ, կամ

4) վտանգավոր ուժեր պարունակող կառույցների և սարքերի վրա հարձակվելը, եթե ակնհայտ է, որ այդպիսի հարձակումը կհանգեցնի չափազանց մեծ կորուստների կամ վիրավորումների քաղաքացիական անձանց շրջանում կամ վնաս կպատճառի քաղաքացիական օբյեկտներին կամ շրջակա միջավայրին, եթե այդպիսի վնասներ

պատճառելը ակնհայտորեն անհամաչափ է կոնկրետ կամ անմիջականորեն ակնկալվող ընդհանուր ռազմական առավելության համեմատությամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից ութ տարի ժամկետով:

2. Միջազգային զինված ընդհարման կամ միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման ժամանակ՝

1) քաղաքացիական բնակչությանը սովի մատնելը՝ իբրև պատերազմ վարելու եղանակ, նրանց զրկելով գոյատևելու համար անհրաժեշտ միջոցներից, ներառյալ վերաբերելի միջազգային փաստաթղթերով նախատեսված օգնություն տրամադրելուն խոչընդոտելը,

2) ոչ ոքի կենդանի չթողնելու հրաման տալը կամ նման հրամանով սպառնալը,

3) սույն օրենսգրքի 137-րդ հոդվածի~~137-րդ հոդվածի~~ 4-րդ մասում նշված հովանավորվող անձանց ներկայության օգտագործումը՝ որոշակի վայրեր, տարածքներ կամ զինված ուժեր ռազմական գործողություններից անձեռնմխելի դարձնելու համար,

4) բռնազավթող պետության կողմից իր սեփական քաղաքացիական բնակչության մի մասի վերաբնակեցումը բռնազավթված տարածքում կամ բռնազավթած տարածքի ամբողջ բնակչության կամ դրա մի մասի տեղահանումը կամ տեղափոխումը բռնազավթված տարածքի սահմաններում կամ դրանից դուրս,

5) հատուկ պաշտպանության տակ գտնվող, հստակ տարորոշված, ժողովուրդների մշակութային կամ հոգևոր ժառանգություն համարվող պատմական հուշարձանները, արվեստի գործերը, ծիսակատարությունների վայրերը կամ մշակութային արժեքների պաշտպանությունը կանոնակարգող միջազգային փաստաթղթերով սահմանված մշակութային այլ արժեքներ հարձակման օբյեկտ դարձնելը և հարձակման հետևանքով դրանց խոշոր չափի վնաս պատճառելը, եթե դրանք չեն գտնվում ռազմական օբյեկտների անմիջական հարևանությամբ, և եթե տվյալներ չկան այդ պատմական հուշարձանները, արվեստի գործերը, ծիսակատարությունների վայրերը կամ մշակութային արժեքների պաշտպանությունը կանոնակարգող միջազգային փաստաթղթերով սահմանված մշակութային այլ արժեքները հակառակորդի կողմից ռազմական գործողություններին նպաստելու համար օգտագործելու մասին, կամ

6) ավելորդ վնասվածք առաջացնող կամ ավելորդ տառապանք պատճառող կամ իրենց բնույթով ոչ ընտրական համարվող պատերազմ վարելու եղանակների կիրառումը՝ ի խախտումն զինված ընդհարումների միջազգային իրավունքի, պայմանով, որ այդպիսի եղանակները համապարփակ արգելքի առարկա են՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասներկու տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ առողջությանը ծանր վնասի պատճառում ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմամբ:

4. Միջազգային զինված ընդհարման կամ միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման ժամանակ հակառակորդ պետության զինված ուժերի անդամի կամ հակառակորդի կոմբատանտի ուխտադրուժ սպանությունը կամ վիրավորումը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասներկու տարի ժամկետով:

Հոդված 153. Զանգվածային ոչնչացման զենք ստեղծելը, տրամադրելը, փոխարկելը կամ կիրառելը

1. Քիմիական, կենսաբանական, միջուկային կամ միջազգային պայմանագրով արգելված զանգվածային ոչնչացման այլ տեսակի զենք կամ դրան համալրող որևէ բաղադրամաս, կամ դա ստեղծելու նպատակով՝ դրա կազմի մեջ մտնող նյութ կամ դրա տարածման կամ փոխադրման հատուկ սարք կամ միջոց ստեղծելը, արտադրելը, մշակելը, ձեռք բերելը, պահելը, կուտակելը, փոխադրելը կամ իրացնելը, կամ միջազգային պայմանագրով արգելված զանգվածային ոչնչացման զենքի փոխադրման հատուկ միջոցներ օգտագործելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

2. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով արգելված զանգվածային ոչնչացման կամ այլ զենք կամ դրա արտադրության համար անհրաժեշտ բաղադրամաս կամ դրանց նկատմամբ վերահսկողությունն այլ պետությանը, պետությունների խմբին, միջազգային կամ այլ կազմակերպությանը կամ խմբավորմանը կամ անձին տրամադրելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

3. Միջազգային պայմանագրով արգելված զանգվածային ոչնչացման կամ այլ զենք կամ միջոց ապօրինի փոխարկելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով:

4. Միջազգային պայմանագրով արգելված զանգվածային ոչնչացման կամ այլ զենք կամ միջոց կիրառելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասներկուսից քսան տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմամբ:

5. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծված իրավաբանական անձանց կողմից «Քիմիական զենքի մշակման, արտադրության, կուտակման, կիրառման արգելման և դրա ոչնչացման մասին» կոնվենցիայի (սույն հոդվածում այսուհետ՝ Կոնվենցիա) 1-ին հավելվածի սանդղակով սահմանված նյութեր արտադրելը, ձեռք բերելը, պահպանելը Կոնվենցիայի մասնակից պետությանը չպատկանող տարածքում կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դրանք տեղափոխելը Կոնվենցիայի մասնակից պետությանը չպատկանող տարածք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

6. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծված իրավաբանական անձանց կողմից Կոնվենցիայի 1-ին սանդղակում ընդգրկված նյութեր արտադրելը, ձեռք բերելը, պահպանելը, տեղափոխելը և օգտագործելը այնպիսի նպատակներով, որոնք արտոնված չեն Կոնվենցիայով (հետազոտական,

առողջապահական, բժշկական, դեղագործական և պաշտպանական), ինչպես նաև վերափոխանցելը երրորդ պետություն՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

7. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծված իրավաբանական անձանց կողմից Կոնվենցիայի մասնակից չհանդիսացող պետության տարածքում Կոնվենցիայի 2-րդ սանդղակում ընդգրկված նյութեր ձեռք բերելը կամ այլ անձի տրամադրելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից չորս տարի ժամկետով:

Հոդված 171. Առողջությանը թեթև վնաս պատճառելը

1. Մեկ ուրիշին մարմնական վնասվածք կամ առողջությանն այլ վնաս պատճառելը, որն առաջացրել է՝

1) առողջության կարճատև քայքայում կամ

2) ընդհանուր աշխատունակության աննշան կայուն կորուստ՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ,

2) հղի կնոջ նկատմամբ,

3) անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ,

4) անչափահասի նկատմամբ,

5) մի խումբ անձանց կողմից,

6) մերձավոր ազգականի կողմից կամ

7) խուլիգանական դրդումներով՝

պատժվում է ~~տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ~~ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

3. Հոգեկան խիստ հուզմունքի վիճակում, անհրաժեշտ պաշտպանության կամ հակահիրավական ոտնձգություն կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ մեկ ուրիշի առողջությանը թեթև վնաս պատճառելը հանցագործություն չի համարվում:

Հոդված 181. Շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությամբ վարակելը

1. Մեկ ուրիշին շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությամբ վարակելը՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ~~երկու~~ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) հղի կնոջ նկատմամբ,

2) անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ կամ

3) անչափահասի նկատմամբ՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

Հոդված 194. Հոգեկան ներգործությունը

1. Սպանության, առողջությանը վնաս պատճառելու, խոշտանգման, սեռական ազատության կամ անձեռնմխելիության դեմ ուղղված հանցանք կատարելու, առևանգելու, ազատությունից ապօրինի զրկելու կամ խոշոր կամ առանձնապես խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքը, եթե այդ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգ է եղել, ինչպես նաև սոցիալական մեկուսացումը կամ պարբերաբար պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելը՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ,

2) հղի կնոջ նկատմամբ,

3) անչափահասի նկատմամբ,

4) մերձավոր ազգականի կողմից,

5) հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվողի նկատմամբ,

6) զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ,

7) խուլիգանական դրդումներով կամ

8) ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով՝

պատժվում է ~~տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ~~ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

Հոդված 198. Սեքսուալ բնույթի բռնի գործողությունները

1. Սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները, այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը, որոնք կատարվել են հանցագործությունից տուժած անձի կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով՝ հանցագործությունից տուժած անձի կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հանցագործությունից տուժած անձի անօգնական վիճակն օգտագործելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) հղի կնոջ նկատմամբ,

2) անչափահասի նկատմամբ,

3) մերձավոր ազգականի կամ զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից,

4) ընտանեկան դրությամբ կամ հաշմանդամությամբ պայմանավորված՝ խոցելի վիճակում գտնվող անձի նկատմամբ,

5) նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող անձի նկատմամբ,

6) արգելանքի վերցված, ձերբակալված, կալանավորված կամ քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող անձի, զորամասում կամ ծառայության այլ վայրում՝ զինծառայողի կամ բուժհաստատությունում բուժվող կամ հետազոտվող անձի նկատմամբ՝ համապատասխան հիմնարկի կամ հաստատության աշխատակցի կողմից,

7) մի խումբ անձանց կողմից,

8) առանձին դաժանությամբ կամ

9) զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ դա գործադրելու սպառնալիքով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է 18 տարին չլրացած անձի նկատմամբ վերընթաց ազգականի կամ այն անձի կողմից, որի վրա դրված է երեխայի դաստիարակության, խնամքի կամ բուժման պարտականություն,

2) կատարվել է 12-ից 14 տարին չլրացած անձի նկատմամբ կամ

3) անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ առողջությանը ծանր վնասի պատճառում կամ հոգեկան խանգարում կամ հանգեցրել է հանցագործությունից տուժած անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի ինքնասպանության կամ առաջացրել է այլ ծանր հետևանք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով:

4. Սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները, այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը, որոնք կատարվել են 12 տարին չլրացած անձի նկատմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով:

~~4. Սույն հոդվածի իմաստով՝ անօգնական վիճակում գտնվող է համարվում հանցավորին դիմադրություն ցույց տալու կամ իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը գիտակցելու հնարավորությունից զրկված անձը կամ 12 տարին չլրացած անձը:~~

5. Սույն հոդվածի իմաստով՝ անօգնական վիճակում գտնվող է համարվում հանցավորին դիմադրություն ցույց տալու կամ իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը գիտակցելու հնարավորությունից զրկված անձը:

Հոդված 199. Սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը

1. Սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները, այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը, որոնք կատարվել են շանտաժի, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ հանցագործությունից տուժած անձի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով կամ առանց նրա համաձայնության ողջամիտ համոզմունքի կամ նույն եղանակներով նրան սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ կատարելուն հարկադրելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 188-րդ կամ 189-րդ հոդվածով նախատեսված հանցանքների հատկանիշները՝

պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) հղի կնոջ նկատմամբ,

2) անչափահասի նկատմամբ,

3) մերձավոր ազգականի կամ զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից,

4) ընտանեկան դրությամբ կամ հաշմանդամությամբ պայմանավորված՝ խոցելի վիճակում գտնվող անձի նկատմամբ,

5) արգելանքի վերցված, ձերբակալված, կալանավորված կամ քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող անձի, զորամասում կամ ծառայության այլ վայրում՝

զինծառայողի կամ բուժհաստատությունում բուժվող կամ հետազոտվող անձի նկատմամբ՝ համապատասխան հիմնարկի կամ հաստատության աշխատակցի կողմից կամ

6) մի խումբ անձանց կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է 18 տարին չլրացած անձի նկատմամբ վերընթաց ազգականի կամ այն անձի կողմից, որի վրա դրված է երեխայի դաստիարակության, խնամքի կամ բուժման պարտականություն,

2) կատարվել է ~~12-ից~~ 16 տարին չլրացած անձի նկատմամբ կամ

3) անզգուշությամբ առաջացրել է առողջությանը ծանր վնասի պատճառում կամ հոգեկան խանգարում կամ հանգեցրել է հանցագործությունից տուժած անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի ինքնասպանության կամ առաջացրել է այլ ծանր հետևանք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:

Հոդված 210. Ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացումը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը կամ հանրաքվեին մասնակցող անձանց իրավունքների կամ պարտականությունների իրականացումը խոչընդոտելը

1. Անձի ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի ազատ իրականացումը կամ ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի աշխատանքը խոչընդոտելը, ինչպես նաև ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի կամ նախաձեռնող խմբի անդամի, թեկնածուի, այցելուի, լիազոր ներկայացուցչի, հանրաքվեի նախաձեռնող խմբի ներկայացուցչի, վստահված անձի, դիտորդի, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազորած անձի, տեխնիկական սարքավորումն սպասարկող անձի իրավունքների կամ պարտականությունների իրականացումը խոչընդոտելը՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) շանտաժով,

2) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու կամ գույք ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքով,

3) նյութապես շահագրգռելով,

4) ընտրական կամ հանրաքվեի հանձնաժողովի նախագահի կամ անդամի կողմից,

5) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

6) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

3. Հանրաքվեին կամ ընտրությանը որևէ ձևով քվեարկելուն կամ հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելուն կամ հանրաքվեին կամ ընտրությանը մասնակցելուց հրաժարվելուն կամ մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելուն հարկադրելը, որը կատարվել է՝

1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու կամ գույք ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքով,

2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

3) նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

Հոդված 221. Հանրաքվեի կամ ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելը

1. Հանրաքվեի կամ ընտրությունների նշանակման որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև հանրաքվեի կամ ընտրությունների արդյունքների ամփոփումը (իսկ Ազգային ժողովի ընտրությունների դեպքում՝ Ազգային ժողով ընտրվելու մասին որոշումը) թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) անդամի կամ լիազորված անձի, վստահված անձի, հանրաքվեի նախաձեռնող խմբի անդամի կամ լիազոր ներկայացուցչի կողմից անձամբ կամ նրանց (այդ թվում՝ կուսակցության կամ դաշինքի) անունից կամ որևէ այլ եղանակով կամ բարեգործության անվան տակ ընտրողներին, ինչպես նաև հանրաքվեի մասնակիցներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով դրամ, սննդամթերք, արժեթուղթ, ապրանք (բացի կուսակցության անվանումը կամ խորհրդանիշները կամ թեկնածուի անունը, ազգանունը կամ պատկերը բովանդակող և ~~նվազագույն աշխատավարձի եռապատիկը~~ 3000 Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող արժեքով քարոզչական տպագիր և այլ նյութի կամ առարկայի) տալը (խոստանալը) կամ ծառայություններ մատուցելը (խոստանալը) կամ բարեգործության հետ միաժամանակ նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն իրականացնելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

Հոդված 221.1. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ օրենքով սահմանված՝ նախընտրական քարոզչության ծախսերը նախընտրական հիմնադրամից չկատարելը կամ հանրաքվեի քարոզչության ծախսերը հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամից չկատարելը կամ հայտարարագրման ենթակա տվյալները չհայտարարագրելը կամ հայտարարագիր չներկայացնելը

1. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ օրենքով սահմանված՝ նախընտրական քարոզչության ծախսերը նախընտրական հիմնադրամից կամ հանրաքվեի քարոզչության ծախսերը հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամից խոշոր չափով չկատարելը կամ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ նախընտրական հիմնադրամ կամ հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրում քարոզչության նպատակով ձեռք բերված ապրանքը կամ մատուցված ծառայությունը շուկայական արժեքով չներառելը (եթե դա ձեռք է բերվել կամ մատուցվել է անհատույց կամ շուկայական արժեքից ցածր գնով կամ մինչև նախընտրական հիմնադրամի կամ հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամի ձևավորումը), որը կազմել է խոշոր չափ՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ նախընտրական հիմնադրամ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը կամ հանրաքվեի քարոզչության հիմնադրամ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը քվեարկությունից հետո օրենքով՝ ընտրությունների կամ հանրաքվեի արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ ընկած ժամանակահատվածում չներկայացնելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին մասի իմաստով՝ խոշոր չափ է համարվում 10 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը:

Հոդված 231. Կուսակցության օգտին խոշոր չափերով ապօրինի նվիրատվություն ներգրավելը

1. Կուսակցության անդամի կողմից կուսակցության օգտին օրենքով չթույլատրված աղբյուրից խոշոր չափերով կամ օրենքով սահմանված առավելագույն չափը խոշոր չափերով գերազանցող նվիրատվություն ներգրավելը՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի և սույն օրենսգրքի 232-րդ, 234-րդ և 235-րդ հոդվածների իմաստով՝ խոշոր չափ է համարվում 1 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը ~~նվազագույն աշխատավարձի հազարապատիկը~~ գերազանցող գումարին համարժեք նվիրատվությունը:

Հոդված 310. Ահաբեկչական գործունեությունը ֆինանսավորելը

1. Ահաբեկչական գործունեությունը ֆինանսավորելը՝ գույքի ուղղակի կամ անուղղակի տրամադրումը կամ հավաքագրումը՝ գիտակցելով, որ այն ամբողջությամբ կամ մասամբ օգտագործվելու է կամ կարող է օգտագործվել անհատ ահաբեկչի կամ ահաբեկչական կազմակերպության կողմից կամ սույն օրենսգրքի 308-րդ, 309-րդ, 311-րդ, 315-րդ, 316-րդ կամ 317-րդ հոդվածով նախատեսված հանցանքներ կատարելու համար կամ ֆինանսական ծառայության մատուցումը՝ գիտակցելով, որ այդ ծառայությունը կամ դրա արդյունքն օգտագործվելու է անհատ ահաբեկչի կամ ահաբեկչական կազմակերպության կողմից կամ ուղղված է կամ կարող է ուղղվել սույն օրենսգրքի 308-րդ, 309-րդ, 311-րդ, 315-րդ, 316-րդ կամ 317-րդ հոդվածով նախատեսված հանցանքներ կատարելուն՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից կամ

2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասներկու տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի իմաստով՝ գույք է համարվում սույն օրենսգրքի 121-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված գույքը:

Հոդված 396. Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) կամ պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի

1. Առանց իրացնելու նպատակի զգալի չափերով թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) կամ պրեկուրսոր ապօրինի արտադրելը, պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, տեղափոխելը կամ առաքելը՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է խոշոր չափերով՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է առանձնապես խոշոր չափերով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված առարկաները կամովին հանձնած և դրանց ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությանը բացահայտելուն աջակցած անձն ազատվում է սույն հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից, եթե նախկինում քրեական պատասխանատվությունից չի ազատվել նույն կամ սույն օրենսգրքի 393-րդ կամ 394-րդ հոդվածով նախատեսված հիմքով: Եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա անձը ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար:

5.Պրեկուրսորների զգալի չափերը սահմանում է Կառավարությունը:

Հոդված 447. Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը, ինչպես նաև շենքերի կամ շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու կամ անձին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ օրենքով սահմանված կարգով միջոցներ չձեռնարկելը կամ ինքնակամ կառույցների քանդման (ապամոնտաժման) մասին որոշում չկայացնելը կամ ինքնակամ կառույցների քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը չապահովելը

1. Պաշտոնատար անձի կողմից, որի վրա օրենսդրությամբ դրված է պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը, շենքերի կամ շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու պարտականություն, հողամասի ինքնակամ զավթումը կամ շենքի կամ շինության ինքնակամ կառուցումը կասեցնելու միջոց չձեռնարկելը, ինչպես նաև հողամասն ինքնակամ զավթած, ինքնակամ կառույց իրականացնող կամ իրականացրած անձի նկատմամբ օրենսդրությամբ նախատեսված վարչական պատասխանատվության միջոցը չկիրառելը՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Համայնքի ղեկավարի կողմից պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում չկայացնելը կամ իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը չապահովելը, որը կատարվել է նույն արարքի համար օրենքով սահմանված պատասխանատվության կիրառումից և խախտումները վերացնելու վերաբերյալ ուժի մեջ մտած վարչական ակտը չկատարելուց հետո՝

պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից քառասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեքից յոթ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժակետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

~~**Հոդված 448.**~~ ~~**Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը չդադարեցնելը և դրա հետևանքները չվերացնելը, ինչպես նաև ինքնակամ շենքերի, շինությունների կառուցումը չդադարեցնելը և անօրինական կառույցները չքանդելը**~~

~~1. Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի ինքնակամ զավթումը չդադարեցնելը և դրա հետևանքները չվերացնելը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ նախատեսված թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանի կամ քաղաքաշինական նորմի կամ կանոնի էական խախտումով շենքի կամ շինության կառուցումը կամ վերակառուցումը չդադարեցնելը կամ անօրինական կառույցը չքանդելը, որը կատարվել է օրենքով սահմանված պատասխանատվության կիրառումից հետո՝ մեկ տարվա ընթացքում՝~~

~~պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ:~~

Հոդված 448. Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը չդադարեցնելը և դրա հետևանքները չվերացնելը, ինչպես նաև ինքնակամ շենքերի, շինությունների կառուցումը չդադարեցնելը և անօրինական կառույցները չքանդելը

1. Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի ինքնակամ զավթումը չդադարեցնելը և դրա հետևանքները չվերացնելը, ինչպես նաև օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ նախատեսված

թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանի կամ քաղաքաշինական նորմի կամ կանոնի էական խախտումով շենքի, շինության կամ այլ կառույցի կառուցումը կամ վերակառուցումը կամ տեղադրումը չդադարեցնելը կամ անօրինական կառույցը չքանդելը կամ չապամոնտաժելը կամ առանց թույլտվության շինարարության կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ իրականացնելը, որը կատարվել է նույն արարքի համար օրենքով սահմանված պատասխանատվության կիրառումից հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից հիսնապատիկի չափով , կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժակետով, կամ կարճաժակետի ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժակետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

Հոդված 456. Փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ կամ տրանսպորտային միջոցների պետհամարանիշներ հափշտակելը, շորթելը, ոչնչացնելը, վնասելը կամ թաքցնելը

1. Ուրիշի անձնագիրը կամ նույնականացման քարտը կամ իրավունք վերապահող, պարտականությունից կամ պատասխանատվությունից ազատող կամ իրավաբանական նշանակություն ունեցող տեղեկություն պարունակող փաստաթուղթը, դրոշմը, կնիքը կամ տրանսպորտային միջոցի պետհամարանիշը հափշտակելը, շորթելը, ոչնչացնելը, վնասելը կամ թաքցնելը՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

~~2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝~~

~~1) կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,~~

~~2) կատարվել է շահադիտական դրդումներով կամ~~

~~3) պատճառել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս՝~~

~~պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:~~

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ

2) շահադիտական դրդումներով՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

Հոդված 499. Նոտարին սուտ տեղեկություններ հաղորդելը

1. Նոտարին սուտ տեղեկություն հաղորդելը՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:~~առավելագույնը երկու տարի ժամկետով~~

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
քրեական օրենսգրքի

ՑԱՆԿ

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱՆՔՆԵՐԻ~~ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ~~

Հոդված 218. Ընտրակաշառք ստանալը

Հոդված 219. Ընտրակաշառք տալը

Հոդված 220. Ընտրակաշառքի միջնորդությունը

Հոդված 221. Հանրաքվեի կամ ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելը

Հոդված 221.1. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ օրենքով սահմանված՝ նախընտրական քարոզչության ծախսերը նախընտրական հիմնադրամից չկատարելը կամ հանրաքվեի քարոզչության ծախսերը հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամից չկատարելը կամ հայտարարագրման ենթակա տվյալները չհայտարարագրելը կամ հայտարարագիր չներկայացնելը

Հոդված 231. Կուսակցության օգտին խոշոր չափերով ապօրինի նվիրատվություն ներգրավելը

Հոդված 232. Կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված չափը չգերազանցելու արգելքը կամ օրենքով չթույլատրված աղբյուրներից նվիրատվությունների արգելքը խոշոր չափերով շրջանցելը

Հոդված 255. 2-րդ մաս, 2-րդ կետ. Խարդախությունը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,

3-րդ մաս, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով

Հոդված 256. **2-րդ մաս, 2-րդ կետ. Վստահված գույքը հափշտակելը՝** իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,
3-րդ մաս, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով

Հոդված 258. **2-րդ մաս, 9-րդ կետ. Շորթումը՝** իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով
3-րդ մաս, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով

Հոդված 268. **3-րդ մաս, 2-րդ կետ. Ներքին տեղեկությունների անբարեխիղճ օգտագործումը՝** իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով

Հոդված 269. **3-րդ մաս, 3-րդ կետ. Արժեթղթերի շուկայում գնային չարաշահումը՝** իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով

Հոդված 272. **Մասնավոր ոլորտում կաշառք ստանալը**

Հոդված 273. **Մասնավոր ոլորտում կաշառք տալը**

Հոդված 274. **Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության մարզիկի, մրցավարի, թիմի ղեկավարի, մարզչի, արհեստավարժ մարզամրցման այլ մասնակցի կամ դրա կազմակերպչի, հանդիսադիր առևտրային մրցույթի մասնակցի կամ դրա կազմակերպչի կամ մրցանակաբաշխային հանձնաժողովի անդամի կողմից կաշառք ստանալը**

Հոդված 275. **Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության մարզիկին,**

	մրցավարին, թիմի ղեկավարին, մարզչին, արհեստավարժ մարզամրցման այլ մասնակցի կամ դրա կազմակերպչին, հանդիսադիր առևտրային մրցույթի մասնակցին կամ դրա կազմակերպչին կամ մրցանակաբաշխային հանձնաժողովի անդամին կաշառք տալը
Հոդված 276.	**Ծառայողական կամ մասնագիտական պարտականությունները կատարելու համար ապօրինի վարձատրություն ստանալը կամ պահանջելը**
Հոդված 277.	**Մասնավոր ոլորտում ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը**
Հոդված 282.	**2-րդ մաս, 1-ին կետ. Ֆինանսական բուրգ ստեղծելը, կազմակերպելը կամ ղեկավարելը՝** իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով. **3-րդ մաս,** եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով
Հոդված 284.	**2-րդ մաս, 2-րդ կետ. Հակամրցակցային գործունեությունը՝** իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով **3-րդ մաս,** եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով
Հոդված 296.	**Փողերի լվացումը**
Հոդված 435.	**Կաշառք ստանալը**
Հոդված 436.	**Կաշառք տալը**
Հոդված 437.	**Կաշառքի միջնորդությունը**
Հոդված 438.	**Պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելը**
Հոդված 439.	**Պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու նպատակով ապօրինի վարձատրություն տալը**
Հոդված 440.	**Կաշառք ստանալու, կաշառքի միջնորդության կամ իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով օգտագործելու պատրվակով գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ստանալը**

Հոդված 441.	**Պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը**
Հոդված 442.	**Պաշտոնատար անձի կողմից ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելը**
Հոդված 443.	**Ապօրինի հարստանալը**
Հոդված 444.	**Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալներ ներկայացնելը, հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելը կամ հայտարարագիր չներկայացնելը**
Հոդված 445.	**Պաշտոնական կեղծիքը**
Հոդված 477.	**Կաշառքի կամ մասնավոր ոլորտում կաշառքի պրովոկացիան**
Հոդված 480.	**Ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելը**
Հոդված 481.	**Քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատելը**
Հոդված 482.	**Ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելը**
Հոդված 486.	**2-րդ մաս, 2-րդ կետ. Արդարադատության իրականացմանը կամ գործի քննությանը միջամտելը,** որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, **3-րդ մաս,** եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով
Հոդված 496.	**Դատավարության մասնակիցներին՝ իրենց լիազորությունների հետ կապված կաշառք տալը**
Հոդված 497.	**Դատավարության մասնակիցների կողմից իրենց լիազորությունների հետ կապված կաշառք ստանալը**
Հոդված 549.	**Իշխանազանցությունը կամ իշխանությունը չարաշահելը**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի՝

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ»

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ

Հոդված 31. Դատարանի կազմը

1. Առաջին ատյանի դատարանում վարույթը՝ դատաքննությունը և դատական երաշխիքներով վարույթը, իրականացվում է միանձնյա:

2. Վերաքննիչ դատարանում վերաքննությունը, ինչպես նաև բացառիկ վերանայումն իրականացվում են կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով, իսկ հատուկ վերանայումը՝ միանձնյա:

3. Վճռաբեկ դատարանը՝

1) վերանայման բողոքը վերադարձնելու հարցը լուծում է միանձնյա՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի, իսկ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթներով՝ հակակոռուպցիոն պալատի՝ կոռուպցիոն հանցանքների քննության դատական կազմի մեկ դատավորի կազմով.

2) վերանայման բողոքն առանց քննության թողնելու, վարույթ ընդունելու կամ վարույթ ընդունելը մերժելու հարցերը լուծում է կոլեգիալ՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի, իսկ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթներով՝ հակակոռուպցիոն պալատի՝ կոռուպցիոն հանցանքների քննության դատական կազմի երեք դատավորի կազմով.

3) վարույթ ընդունված վճռաբեկ բողոքը քննում է կոլեգիալ՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի, իսկ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթներով՝ հակակոռուպցիոն պալատի՝ կոռուպցիոն հանցանքների քննության դատական կազմի դատավորների պարզ մեծամասնության կազմով:

4. Կոլեգիալ կազմով վարույթ իրականացնող բոլոր դատավորները դատարանի կողմից լուծման ենթակա բոլոր հարցերի կապակցությամբ օժտված են հավասար լիազորություններով:

Հոդված 33. Դատարանի իրավասությունը

1. Դատարանը սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավասու է՝

1) ~~քրեական գործերով~~ իրականացնելու վարույթ առաջին ատյանի կարգով.

2) իրականացնելու դատական երաշխիքների վարույթ.

3) իրականացնելու դատական վերանայման վարույթ.

4) վարույթ իրականացնելիս կիրառելու դատավարական սանկցիաներ.

5) ~~քրեական գործով~~ վարույթ իրականացնելիս կիրառելու խափանման և անվտանգության միջոցներ, գույքի արգելադրում.

6) դատական ակտը հանձնելու կատարման:

2. Դատարանը սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում իրականացնում է այլ լիազորություններ:

Հոդված 36. Վարույթի հանրային մասնակիցների փոխհարաբերությունները

1. Վերադաս դատախազն իրավասու է հանձնարարություն տալու հսկող դատախազին՝ նրա իրավասության ներքո գտնվող ցանկացած հարցի կապակցությամբ:

2. Իր իրավասության սահմաններում վերադաս դատախազի տված հանձնարարությունը պարտադիր է հսկող դատախազի համար, բացառությամբ այն դեպքերի, երբ հսկող դատախազը գտնում է, որ նման հանձնարարությունն անօրինական է կամ անհիմն: Այդ դեպքում հսկող դատախազը, առանց վերադաս դատախազի հանձնարարությունը կատարելու, առարկություն է ներկայացնում հանձնարարություն տված դատախազի վերադասին:

3. Հսկող դատախազն իրավասու է հանձնարարություն տալու՝

1) քննչական մարմնի ղեկավարին, քննիչին կամ հետաքննության մարմնի պետին՝ նրանց կատարած անօրինական գործողությունը դադարեցնելու կամ դրա հետևանքները չեզոքացնելու կապակցությամբ.

2) քննչական մարմնի ղեկավարին, քննիչին կամ հետաքննության մարմնի պետին՝ նրանց անօրինական որոշումը վերացնելու դեպքում դրա հետևանքները չեզոքացնելու կապակցությամբ.

3) քննիչին՝ քրեական հետապնդման հարուցման կամ դադարեցման հարցը լուծելու, հարկադրանքի միջոցներ կիրառելու, դատարանում հանրային մեղադրանքը պաշտպանելու կամ պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու համար նշանակություն ունեցող որոշակի հանգամանքներ պարզելու կապակցությամբ:

4. Իր իրավասության սահմաններում հսկող դատախազի տված հանձնարարությունը պարտադիր է քննչական մարմնի ղեկավարի, քննիչի և հետաքննության մարմնի պետի համար, սակայն վերջիններս իրավասու են իրենց հասցեագրված հանձնարարության վերաբերյալ առարկություն ներկայացնելու վերադաս դատախազին: Քննչական մարմնի ղեկավարն իրավասու է վերադաս դատախազին առարկություն ներկայացնելու նաև իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչին հասցեագրված հանձնարարության կապակցությամբ:

5. Քննչական մարմնի ղեկավարն իրավասու է հանձնարարություն տալու իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչին՝ նախաքննության պատշաճ կազմակերպմանը, ներառյալ դրա արդյունավետությանը վերաբերող ցանկացած հարցի, այդ թվում՝ կոնկրետ ապացուցողական գործողություն կատարելու կապակցությամբ:

6. Իր իրավասության սահմաններում քննչական մարմնի ղեկավարի տված հանձնարարությունը պարտադիր է քննիչի համար, սակայն վերջինս իրավասու է դրա վերաբերյալ առարկություն ներկայացնելու հսկող դատախազին՝ չկասեցնելով հանձնարարության կատարումը:

7. Քննիչն իրավասու է հանձնարարություն տալու հետաքննության մարմնին՝ նախաքննության համակողմանիությունը և բնականոն ընթացքն ապահովելու նպատակով:

8. Իր իրավասության սահմաններում քննիչի տված հանձնարարությունը պարտադիր է հետաքննության մարմնի համար, սակայն հետաքննության մարմնի պետն իրավասու է

դրա վերաբերյալ առարկություն ներկայացնելու հսկող ~~դատախազին՝~~ դատախազին՝ չկասեցնելով հանձնարարության կատարումը:

Հոդված 41. Քննիչի լիազորությունները

1. Քննիչը՝

1) առերևույթ հանցագործության հատկանիշների առկայության դեպքում կազմում է քրեական վարույթ նախաձեռնելու վերաբերյալ արձանագրություն և անմիջապես ձեռնամուխ լինում նախաքննության կատարմանը՝ այդ մասին անհապաղ գրավոր տեղեկացնելով հսկող դատախազին, իսկ ենթադրյալ հանցանքի փաստական նկարագրությունը կամ դրան տրված իրավական գնահատականը շտկելու անհրաժեշտության դեպքում հսկող դատախազի հանձնարարությամբ փոփոխություն է կատարում քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրության մեջ.

2) ինքնուրույն ուղղություն է տալիս նախաքննությանը, ընդունում անհրաժեշտ որոշումներ, սույն օրենսգրքին համապատասխան՝ կատարում է քննչական և վարութային այլ գործողություններ.

3) նախաքննության ընթացքում ենթադրյալ այլ հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում կազմում է քրեական վարույթ նախաձեռնելու վերաբերյալ արձանագրություն՝ այդ մասին անհապաղ գրավոր տեղեկացնելով հսկող դատախազին.

4) որոշում է կայացնում անձին ձերբակալելու կամ ձերբակալված անձին ազատ արձակելու մասին՝ որոշման պատճենն անհապաղ ուղարկելով հսկող դատախազին.

5) դիմում է դատարան սույն օրենսգրքով սահմանված հարկադրանքի միջոցներ կիրառելու, կալանքի ժամկետը երկարաձգելու, քննչական և գաղտնի քննչական գործողություններ կատարելու միջնորդություններով՝ միջնորդության պատճենն անհապաղ ուղարկելով հսկող դատախազին.

6) հսկող դատախազի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ ազատ է արձակում կալանավորված մեղադրյալին.

7) սույն օրենսգրքով սահմանված դեպքերում վերացնում է անձի իրավունքների կամ ազատությունների ոչ իրավաչափ սահմանափակումները.

8) իր իրավասության սահմաններում որոշում է կայացնում խափանման միջոց կիրառելու, փոխելու, վերացնելու մասին՝ որոշման պատճենն անհապաղ ուղարկելով հսկող դատախազին.

9) միջոցներ է ձեռնարկում ենթադրյալ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցումը, գույքի հնարավոր բռնագրավումը և ~~դատական~~վարութային ծախսերի հատուցումն ապահովելու համար.

10) հետաքննության մարմնին տալիս է գաղտնի քննչական գործողություններ և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ հանձնարարություններ.

11) հետաքննության մարմնից պահանջում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների արդյունքները.

12) հետաքննության մարմնին հանձնարարում է կատարել ձերբակալման, կալանավորման վերաբերյալ որոշումները, ինչպես նաև հետաքննության մարմնից աջակցություն է ստանում ապացուցողական և վարութային այլ գործողություններ կատարելիս.

13) քրեական հետապնդում հարուցելու, քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու կամ վերսկսելու, քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու միջնորդություն է ներկայացնում հսկող դատախազին.

14) քրեական հետապնդում հարուցելու մասին հսկող դատախազի որոշման հիման վրա մեղադրանք է ներկայացնում.

15) որոշում է կայացնում տուժող, օրինական ներկայացուցիչ ճանաչելու մասին.

16) ապահովում է վարույթին փաստաբանի մասնակցությունը որպես պաշտպան կամ լիազոր ներկայացուցիչ.

17) վարույթ է ներգրավում վկայի, փորձագետի, թարգմանչի, ընթերակայի.

18) իր իրավասության սահմաններում որոշում է կայացնում վարույթի մասնավոր մասնակիցների միջնորդությունների կապակցությամբ.

19) վարույթի մասնավոր մասնակիցների ներկայացրած առարկաները կամ փաստաթղթերը որպես ապացույց կցում է վարույթի նյութերին, իսկ սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով որոշում է կայացնում այդ առարկաների կամ փաստաթղթերի անթույլատրելիության մասին.

20) որոշում է կայացնում ընթերակային, թարգմանչին, փորձագետին հայտնած բացարկի կապակցությամբ.

21) սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով պաշտպանին, լիազոր ներկայացուցչին, օրինական ներկայացուցչին կամ վկայի փաստաբանին ազատում է վարույթին մասնակցելուց կամ հսկող դատախազի հաստատմամբ հեռացնում է վարույթից.

22) հսկող դատախազի հանձնարարության կամ վարութային ակտի վերաբերյալ եռօրյա ժամկետում առարկություն է ներկայացնում վերադաս դատախազին՝ չկասեցնելով հանձնարարության կամ որոշման կատարումը.

23) վարույթը կարճելու կամ նախաքննությունն այլ կերպ ավարտելու, հարկադրանքի միջոց կիրառելու մասին հսկող դատախազի հանձնարարության, ինչպես նաև ձերբակալման ներքո չգտնվող անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին հսկող դատախազի որոշման հետ համաձայն չլինելու դեպքում առանց այն կատարելու դրա վերաբերյալ մեկօրյա ժամկետում առարկություն է ներկայացնում վերադաս դատախազին.

24) քննչական մարմնի ղեկավարի հանձնարարության կամ վարութային ակտի վերաբերյալ եռօրյա ժամկետում առարկություն է ներկայացնում հսկող դատախազին՝ չկասեցնելով հանձնարարության կամ որոշման կատարումը.

25) որոշում է կայացնում քրեական վարույթը կարճելու մասին՝ այն ներկայացնելով հսկող դատախազի հաստատմանը.

26) կազմում է մեղադրական եզրակացություն կամ եզրափակիչ ակտ՝ այն ներկայացնելով հսկող դատախազի հաստատմանը.

27) քննչական մարմնի ղեկավարի հանձնարարությամբ շարունակում է վարույթը դատախազի կողմից վերադարձված նյութերով.

28) որոշում է կայացնում օրենքով նախատեսված ստուգում կամ վերստուգում կատարելու մասին.

29) իրականացնում է սույն օրենսգրքով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

Հոդված 42. Հետաքննության մարմնի լիազորությունները

1. Հետաքննիչը՝

1) «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքին համապատասխան՝ իրականացնում է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ.

2) սույն օրենսգրքին համապատասխան՝ կատարում է գաղտնի քննչական գործողություններ.

3) օժանդակում է ապացուցողական և վարութային այլ գործողությունների կատարմանը.

4) օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների արդյունքներն օրենքով սահմանված կարգով ներկայացնում է քննիչին.

5) հետաքննության կատարման ընթացքում ենթադրյալ այլ հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում այդ մասին անհապաղ գրավոր տեղեկացնում է քննիչին.

6) հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում կատարում է ձերբակալում և դրան ուղեկցող անձնական խուզարկություն՝ այդ մասին անհապաղ հայտնելով իրավասու դատախազին.

7) մինչև հետաքննության մարմնի վարչական շենք բերելը անհապաղ ազատ է արձակում ~~արձակում է~~ իր նախաձեռնությամբ ձերբակալված անձին, եթե վերանում է այդ անձին արգելանքի տակ պահելու անհրաժեշտությունը՝ այդ մասին անհապաղ հայտնելով հետաքննության մարմնի պետին.

8) միջոցներ է ձեռնարկում քրեական վարույթի համար նշանակություն ունեցող առարկաները և փաստաթղթերը, ինչպես նաև դեպքի վայրը պահպանելու ուղղությամբ.

9) իրականացնում է սույն օրենսգրքով և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված լիազորությունները հետաքննիչն իրականացնում է բացառապես քննիչի հանձնարարությամբ:

3. Հետաքննության մարմնի պետը՝

1) իր իրավասության սահմաններում կազմակերպում և ապահովում է հետաքննիչի կողմից սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված լիազորությունների իրականացումը.

2) անձամբ իրականացնում է սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված լիազորությունները.

3) քննիչի հանձնարարության հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ որոշում է կայացնում օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին.

4) վերադաս դատախազին եռօրյա ժամկետում առարկություն է ներկայացնում հսկող դատախազի հանձնարարության կամ վարութային ակտի վերաբերյալ՝ չկասեցնելով հանձնարարության կամ որոշման կատարումը.

5) հսկող դատախազին եռօրյա ժամկետում առարկություն է ներկայացնում քննիչի հանձնարարության կամ վարութային ակտի վերաբերյալ՝ չկասեցնելով հանձնարարության կամ որոշման կատարումը.

6) դատախազի գրավոր պահանջով նրա ստուգմանն է ներկայացնում օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների իրականացման վերաբերյալ՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով դատախազին տրամադրման ենթակա փաստաթղթերը.

7) անհապաղ ազատ է արձակում հետաքննիչի նախաձեռնությամբ ձերբակալված և հետաքննության մարմնի վարչական շենքում գտնվող անձին, եթե վերանում է այդ անձին արգելանքի տակ պահելու անհրաժեշտությունը՝ այդ մասին անհապաղ հայտնելով իրավասու դատախազին.

8) իրականացնում է սույն օրենսգրքով և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

4. Սույն հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված դեպքի վայրի պահպանությունը կարող է իրականացնել նաև Հայաստանի Հանրապետության ոստիկանության կամ օրենքով համապատասխան իրավասություն ունեցող այլ մարմնի՝ տվյալ լիազորությամբ օժտված ծառայողը:

Հոդված 43. Մեղադրյալի իրավունքները և պարտականությունները

1. Մեղադրյալը սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի՝

1) իրեն ձերբակալելուց կամ մեղադրանք ներկայացնելուց հետո անհապաղ անվճար ստանալու սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված իր իրավունքների մասին գրավոր ծանուցում և պարզաբանում.

2) իր համար հասկանալի լեզվով, անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացվող մեղադրանքի փաստական հանգամանքների և իրավական գնահատականի մասին, իսկ արգելանքի վերցվելու դեպքում՝ նաև իրեն ազատությունից զրկելու հիմքերի և պատճառների մասին.

3) մեղադրանք ներկայացնելուց հետո անհապաղ անվճար ստանալու քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման, իսկ արգելանքի վերցվելու դեպքում՝ ձերբակալման կամ կալանավորման որոշումների պատճենները, ինչպես նաև այն

դատավարական ակտերի պատճենները, որոնք նա սույն օրենսգրքով սահմանված կարգով բողոքարկելու իրավունք ունի.

4) որ ձերբակալումից կամ կալանավորումից հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում իր կողմից ընտրված անձը, իսկ զինծառայող լինելու դեպքում նաև հրամանատարը տեղեկացվի իր գտնվելու վայրի մասին.

5) ձերբակալման կամ կալանավորման դեպքում պահանջելու անվճար բժշկական զննում և ստանալու անվճար եզրակացություն, ինչպես նաև իր ընտրությամբ հրավիրելու բժիշկ և անարգել հաղորդակցվելու նրա հետ՝ առանց տեսողական կամ լսողական վերահսկման.

6) պահպանելու լռություն կամ տալ ցուցմունք, այդ թվում՝ պաշտպանի ներկայությամբ.

7) ձերբակալման կամ մեղադրանք ներկայացնելու պահից իր ընտրությամբ ունենալու պաշտպան կամ պաշտպանվելու ինքնուրույն, իսկ պաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար միջոցներ չունենալու դեպքում՝ ունենալու պետական միջոցների հաշվին նշանակված պաշտպան.

8) խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցելու իր պաշտպանի հետ՝ առանց տեսակցությունների սահմանափակման, բացառությամբ մեղադրյալի մասնակցությամբ վարութային գործողություններ կատարելու դեպքերի.

9) մինչև ցուցմունք տալը գրավոր տեղեկացվելու իր, ամուսնու և մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք չտալու իր իրավունքի, ինչպես նաև այն մասին, որ իր ցուցմունքը կարող է օգտագործվել որպես ապացույց.

10) հակընդդեմ հարցման ենթարկելու իր դեմ վկայած անձանց, կամ որ այդ անձինք ենթարկվեն հակընդդեմ հարցման, ինչպես նաև, որ իր օգտին վկայող անձինք կանչվեն և հարցաքննվեն նույն պայմաններով, ինչ իր դեմ վկայած անձինք.

11) մասնակցելու իր կամ պաշտպանի միջնորդությամբ կատարվող ապացուցողական և վարութային այլ գործողություններին, եթե դա չի վնասի այլ անձանց կամ արդարադատության շահերին.

12) ստանալու վարույթն իրականացնող մարմնի որոշումը՝ իր կամ պաշտպանի միջնորդությամբ կատարվող ապացուցողական գործողությանն իր մասնակցությունը չթույլատրելու մասին.

13) վարույթի նյութերին կցելու և հետազոտելու համար ներկայացնելու ապացույցներ.

14) հայտարարելու իր մեղավորության կամ անմեղության մասին.

15) հարուցելու միջնորդություններ.

16) հայտնելու բացարկներ.

17) առարկելու վարույթի հանրային մասնակիցների գործողությունների դեմ.

18) ծանոթանալու իր մասնակցությամբ կատարված ապացուցողական և վարութային այլ գործողության արձանագրությանը, դիտողություններ ներկայացնելու այդ արձանագրությունում գրառումների ճշտության և լրիվության կապակցությամբ, ծանոթանալու դատական նիստի արձանագրությանը և ներկայացնելու դրա վերաբերյալ իր դիտողությունները, ապացուցողական և վարութային այլ գործողությանը մասնակցելու, դատական նիստին ներկա գտնվելու դեպքում պահանջելու

համապատասխան արձանագրության մեջ կատարել իր մատնանշած հանգամանքների մասին գրառումներ.

19) իր խնդրանքով անվճար ստանալու իր մասնակցությամբ կատարված ապացուցողական և վարութային այլ գործողության արձանագրության, այդ թվում՝ դրա հավելվածի պատճենը.

20) ծանոթանալու իր նկատմամբ խափանման միջոց կամ հարկադրանքի այլ միջոց կիրառելու, փորձաքննություն նշանակելու մասին որոշումներին, իսկ իր խնդրանքով՝ նաև անվճար ստանալու այդ որոշումների, ինչպես նաև փորձագետի եզրակացության պատճենը.

21) անվճար ստանալու մեղադրական եզրակացության կամ եզրափակիչ ակտի, քրեական հայցի, գույքային հայցի, ինչպես նաև եզրափակիչ դատական ակտի պատճենը.

22) նախաքննության ավարտի մասին գրավոր ծանուցում ստանալու պահից ծանոթանալու վարույթի բոլոր նյութերին, դրանցից անվճար պատճեններ ստանալու կամ դուրս գրելու ցանկացած տեղեկություն.

23) դատարանին միջնորդելու՝ կիրառելու համաձայնեցման վարույթ.

24) հսկող դատախազին միջնորդելու՝ կիրառելու համագործակցության վարույթ.

25) դատական նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին ստանալու պատշաճ ծանուցում.

26) ներկա լինելու առաջին ատյանի, ~~և~~ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական նիստերին, մասնակցելու ապացույցների հետազոտմանը, հանդես գալու բացման խոսքով, եզրափակիչ ելույթով և եզրափակիչ հայտարարությամբ.

27) բողոքարկելու վարույթի հանրային մասնակիցների և դատարանի վարութային ակտերը, այդ թվում՝ եզրափակիչ դատավարական ակտերը.

28) հետ վերցնելու իր ներկայացրած բողոքը.

29) տեղեկացվելու վարույթի այլ մասնակցի կողմից բերված և իր շահերին առնչվող վերանայման բողոքի մասին, դրա վերաբերյալ ներկայացնելու պատասխան.

30) դատական նիստում կարծիք հայտնելու վարույթի այլ մասնակիցների միջնորդությունների և հայտարարությունների վերաբերյալ.

31) առարկելու վարույթի այլ մասնակիցների կամ դատական նիստը նախագահողի գործողությունների դեմ.

32) ստանալու վարույթի հանրային մասնակիցների կամ դատարանի ոչ իրավաչափ գործողությունների հետևանքով պատճառված վնասի հատուցում.

33) իր, ինչպես նաև իր ընտանիքի անդամի կամ այլ մերձավոր անձի կյանքին, առողջությանը և իրավաչափ շահերին սպառնացող վտանգի դեպքում վարույթն իրականացնող մարմնից հայցելու և ստանալու հատուկ պաշտպանություն.

34) իրականացնելու սույն օրենսգրքով իրեն վերապահված այլ իրավունքներ:

2. Մեղադրյալը պարտավոր է՝

1) ներկայանալ վարույթն իրականացնող մարմնի հրավերով.

2) վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել բժշկական զննման, մատնադրոշմման, անձնական խուզարկության, քննման և փորձաքննության,

լուսանկարվել կամ փորձաքննության համար հանձնել սույն օրենսգրքով նախատեսված նմուշներ.

3) չխոչընդոտել քրեական վարույթին, այդ թվում՝ ապօրինի չմիջամտել ապացուցման գործընթացին.

4) այլ վայր մեկնելիս վարույթն իրականացնող մարմնին նախապես տեղեկացնել իր գտնվելու նոր վայրի և իր հետ հաղորդակցվելու միջոցների մասին.

5) ենթարկվել վարույթն իրականացնող մարմնի կարգադրություններին և դատական նիստի կարգին:

Հոդված 57. Վկան

1. Վկան ցուցմունք տալու նպատակով կողմի կամ վարույթն իրականացնող մարմնի նախաձեռնությամբ կանչված այն անձն է, որին կարող է հայտնի լինել վարույթով պարզաբանման ենթակա որևէ հանգամանք:

2. Անձը որպես վկա կարող է հարցաքննվել սույն օրենսգրքի 58-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև ցուցմունք տալուց հրաժարվելու կամ սուտ ցուցմունք տալու համար օրենքով սահմանված պատասխանատվության մասին գրավոր տեղեկացվելուց հետո:

3. Որպես վկա չի կարող հարցաքննվել կամ առարկաներ, փաստաթղթեր կամ այլ նյութեր ներկայացնել՝

1) փաստաբանը՝ պարզելու համար տեղեկություններ, որոնք նրան կարող են հայտնի լինել՝ կապված իրավաբանական օգնության դիմելու կամ նման օգնություն ցույց տալու հետ.

2) անձը, որին տվյալ վարույթին վերաբերող տեղեկությունները հայտնի են դարձել որպես պաշտպան, տուժողի, գույքային պատասխանողի լիազոր ներկայացուցիչ, վկայի փաստաբան մասնակցելու կապակցությամբ.

3) մարդու իրավունքների պաշտպանը՝ իր պարտականությունները կատարելու կապակցությամբ իրեն հայտնի դարձած հանգամանքների մասին.

4) դատավորը, նախկին դատավորը, դատախազը կամ դատական նիստի քարտուղարը՝ այն վարույթով, որում նրանք իրականացրել են իրենց դատավարական լիազորությունները.

5) քննիչը՝ այն վարույթով, որում նա իրականացրել է իր դատավարական լիազորությունները, բացառությամբ սույն օրենսգրքի 331-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքի.

6) ձեռնադրված հոգևորական-խոստովանահայրը՝ խոստովանանքից իրեն հայտնի դարձած հանգամանքների մասին.

7) մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամը իր լիազորությունների իրականացման ժամանակահատվածում և դրանից հետո՝ պաշտոնավարման ընթացքում Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթի առնչությամբ, բացառությամբ տվյալ վարույթի ընթացքում թույլ տված սխալների և չարաշահումների քննության դեպքի:

Հոդված 155. Վարույթի մասնակից ճանաչելու միջնորդությունը

1. Վարույթի մասնակից չհանդիսացող ցանկացած անձ սույն օրենսգրքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում իրավունք ունի միջնորդելու իրեն ճանաչել տուժող կամ օրինական ներկայացուցիչ:

2. Տուժող կամ օրինական ներկայացուցիչ ճանաչելու մասին անձի միջնորդությունը պետք է ~~անհապաղ~~ քննության առնվի և լուծվի վարույթն իրականացնող մարմնի կողմից այն ստանալու պահից երեք օրվա ընթացքում: Միջնորդության վերաբերյալ ընդունված որոշման մասին անմիջապես ծանուցվում է դիմողը՝ նրան ուղարկելով համապատասխան որոշման պատճենը:

Հոդված 164. Արդարացված մեղադրյալի ռեաբիլիտացիան

1. Արդարացված մեղադրյալն իրավունք ունի պահանջելու անօրինական քրեական հետապնդում հարուցելու, հարկադրանքի միջոցներ կիրառելու, դատապարտելու, ինչպես նաև իրավունքների կամ ազատությունների անօրինական այլ սահմանափակումների հետևանքով իրեն պատճառված վնասի հատուցում:

2. Արդարացված մեղադրյալը որպես հատուցում իրավունք ունի ստանալու՝

1) աշխատավարձը, թոշակը, նպաստը կամ այլ եկամուտը, որից նա զրկվել է.

2) գույքն առգրավելու, արգելադրելու, բռնագրավելու կամ այլ կերպ տնօրինելու հետևանքով պատճառված վնասը.

3) անազատության մեջ գտնվելու հետևանքով ծախսված գումարը.

4) փաստաբանին վճարված գումարը.

5) վճարված ~~դատական~~վարութային ծախսերը:

3. Արդարացված մեղադրյալն իրավունք ունի նաև՝

1) վերականգնվելու նախկին աշխատանքում (նախկին պաշտոնում), իսկ դրա անհնարինության դեպքում ստանալու համարժեք աշխատանք (պաշտոն) կամ նախկին աշխատանքը (պաշտոնը) կորցնելու հետևանքով պատճառված վնասի դրամական փոխհատուցում.

2) բոլոր տեսակի աշխատանքային ստաժերի մեջ հաշվակցելու անազատության մեջ պահելու ձևով պատիժը կրելու ժամանակը.

3) վերականգնելու պատվավոր կամ զինվորական կոչումը, կարգը, աստիճանը, որակավորման դասը կամ պետական պարգևը:

4. Արդարացված մեղադրյալի պահանջով քրեական հետապնդում հարուցած մարմինը պարտավոր է հրապարակային ներողություն հայցել նրանից:

5. Արդարացված մեղադրյալի մահվան դեպքում սույն հոդվածով նախատեսված իրավունքներն իրականացնում է նրա օրինական ներկայացուցիչը:

6. Սույն օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-9-րդ կետերով նախատեսված հանգամանքներով քրեական հետապնդումը դադարեցնելու կամ վերաքննիչ դատարանի

կողմից արդարացման դատավճիռ կայացվելու դեպքում անձը սույն հոդվածով նախատեսված ռեաբիլիտացիա կարող է պահանջել միայն քաղաքացիական դատավարության կարգով:

Հոդված 178. Քրեական վարույթ նախաձեռնելու կարգը

1. Սույն օրենսգրքի 173-րդ հոդվածով նախատեսված աղբյուրից առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդում ստանալու յուրաքանչյուր դեպքում քննիչն անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում կազմում է քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրություն, իսկ դատախազը, սույն օրենսգրքով սահմանված քննչական ենթակայության կանոններին համապատասխան, այն վերահասցեագրում է իրավասու քննչական մարմնի ղեկավարին՝ քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու համար:

2. Արձանագրության մեջ նշվում են քննիչի անունը, ազգանունը, պաշտոնը, քրեական վարույթ նախաձեռնելու առիթը, հաղորդմամբ ներկայացված առերևույթ հանցանքի փաստական նկարագրությունը, քրեական օրենսգրքի այն հոդվածը, հոդվածի մասը կամ կետը, որի հատկանիշներով սկսվում է վարույթը, հաղորդմանը կցված նյութերի ցանկը՝ այդպիսիք լինելու դեպքում:

3. Արձանագրությունը կազմելուց հետո քննիչն անմիջապես ձեռնամուխ է լինում նախաքննության կատարմանը՝ արձանագրության և կից նյութերի պատճեններն անհապաղ ուղարկելով հսկող դատախազին: Արձանագրության պատճենը այն կազմելուց անմիջապես հետո հանձնվում կամ ուղարկվում է հաղորդումը ներկայացրած անձին:

4. Յուրաքանչյուր նոր դեպքի կապակցությամբ քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրություն կազմելու հետ միաժամանակ քննիչը պարտավոր է իր իրավասության սահմաններում ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր անհրաժեշտ միջոցառումները քրեորեն հետապնդելի արարքը կանխելու կամ խափանելու, այն կատարած անձին հայտնաբերելու, ինչպես նաև հանցագործության հետքերը կամ վարույթի համար նշանակություն ունեցող առարկաները կամ փաստաթղթերը պահելու և պահպանելու ուղղությամբ:

5. Քրեական վարույթ նախաձեռնելու յուրաքանչյուր դեպքում քննիչն այդ մասին անմիջապես գրավոր տեղեկացնում է հետաքննության իրավասու մարմնի պետին՝ կցելով քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրության պատճենը:

6. Եթե քրեական վարույթ նախաձեռնած քննիչը, սույն օրենսգրքով սահմանված քննչական ենթակայության կանոններին համապատասխան, իրավասու չէ նախաքննություն կատարելու, ապա իրավիճակից թելադրվող անհրաժեշտ բոլոր վարութային գործողությունները կատարելուց հետո նա քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրությունն ուղարկում է հսկող դատախազին՝ դրան կցելով վարույթի բոլոր նյութերը:

7. Նախաքննության ընթացքում այլ ենթադրյալ հանցանք կատարելու փաստի հայտնաբերման յուրաքանչյուր դեպքում նոր քրեական վարույթ է նախաձեռնվում, որի

արձանագրությանը կցվում են համապատասխան փաստը հաստատող վարույթի նյութերը:

Հոդված 179. Քրեական վարույթ չնախաձեռնելը

1. Այն դեպքում, երբ հաղորդումը չի համապատասխանում սույն օրենսգրքի 173-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված պայմաններին, ~~քննիչը~~ քննիչն այն ստանալու պահից 24 ժամվա ընթացքում քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրություն չի կազմում, որի վերաբերյալ գրավոր տեղեկացնում է հսկող դատախազին՝ նշելով քրեական վարույթ չնախաձեռնելու հիմքը:

2. Քրեական վարույթ չնախաձեռնելու մասին տեղեկանալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, հսկող դատախազը հաստատում է այն կամ հանձնարարում է քննիչին նախաձեռնել քրեական վարույթ և սկսել նախաքննություն:

3. Քրեական վարույթ չնախաձեռնելու և դրա օրինականությունը հսկող դատախազի կողմից հաստատելու մասին քննիչն անհապաղ գրավոր տեղեկացնում է հաղորդումը ներկայացրած անձին՝ նշելով քրեական վարույթ չնախաձեռնելու հիմքը, ինչպես նաև պարզաբանելով քրեական վարույթ նախաձեռնելուց հրաժարվելը բողոքարկելու կարգը և ժամկետները:

Հոդված 202. Մեղադրական եզրակացությունը և դրա հավելվածները

1. Մեղադրական եզրակացությունը կազմված է ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից:

2. Մեղադրական եզրակացության ներածական մասում նշվում է այն կազմելու ժամանակը և վայրը, կազմող անձի անունը, ազգանունը և պաշտոնը, վարույթի համարը:

3. Մեղադրական եզրակացության նկարագրական մասում շարադրվում են քրեական վարույթ նախաձեռնելու առիթը և հիմքը, մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու օրը և հիմքը, նախաքննության ընթացքում հաստատված փաստական հանգամանքները, այդ թվում՝ մեղադրյալին և տուժողին բնութագրող հանգամանքները:

4. Մեղադրական եզրակացության պատճառաբանական մասում վերլուծվում են մեղադրյալի մեղավորությունը հաստատող ապացույցները, ի պաշտպանություն մեղադրյալի բերված փաստարկները, դրանց ստուգման համար ձեռնարկված գործողությունները, ինչպես նաև այդ փաստարկները հերքող ապացույցները:

5. Մեղադրական եզրակացության եզրափակիչ մասում շարադրվում են մեղադրյալի անունը, հայրանունը, ազգանունը, նրա ծննդյան թվականը, ամիսը, օրը և ծննդավայրը, ընտանեկան դրությունը, աշխատանքի վայրը, զբաղմունքը, կրթությունը և մեղադրյալի անձին վերաբերող ու վարույթի համար նշանակություն ունեցող այլ անհրաժեշտ տեղեկություններ, ինչպես նաև նրան մեղսագրվող արարքի իրավական գնահատականը (քրեական օրենսգրքի այն հոդվածը կամ հոդվածի մասը կամ կետը, որով նախատեսված հանցանքի կատարման համար մեղադրվում է մեղադրյալը):

6. Մեղադրական եզրակացությունն ստորագրվում և կնքվում է քննիչի կողմից:

7. Քննիչը մեղադրական եզրակացությանը կցում է վարույթին ներգրավված բոլոր անձանց կարգավիճակի և վերաբերելի անձնական տվյալների, դատարանին հետազոտման համար ներկայացվող՝ մեղադրանքի կողմի ապացույցների ցանկի, իրեղեն ապացույցների գտնվելու վայրի, գույքի հնարավոր բռնագրավումը կամ հնարավոր գույքային հայցն ապահովելու համար ձեռնարկված միջոցների, կատարված ~~դատական~~վարութային ծախսերի, կիրառված հարկադրանքի միջոցների և քրեական հետապնդման ժամկետների մասին տեղեկանքները:

Հոդված 204. Մեղադրական եզրակացությամբ ստացված վարույթի նյութերով ստուգման ենթակա հանգամանքները

1. Հսկող դատախազը մեղադրական եզրակացությամբ ստացված վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքով պարզում է՝

1) առկա են արդյոք բավարար ապացույցներ մեղադրյալին վերագրվող արարքը կատարելու մեջ նրա մեղավորությունը դատարանում ապացուցելու համար.

2) մեղադրյալին ներկայացված մեղադրանքն ընդգրկում է արդյոք նրա կողմից ենթադրաբար կատարված բոլոր հանցանքները.

3) քրեական հետապնդում հարուցված է արդյոք ենթադրյալ հանցագործությանը մասնակցած բոլոր անձանց նկատմամբ.

4) ճիշտ է արդյոք տրվել մեղադրյալին վերագրվող արարքի իրավական գնահատականը.

5) կան արդյոք քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ վարույթը կարճելու հիմքեր.

6) հիմնավոր է արդյոք մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման միջոցը կամ այդպիսին չկիրառելը.

7) ձեռնարկված են արդյոք անհրաժեշտ միջոցներ՝ գույքի հնարավոր բռնագրավումը, հնարավոր գույքային հայցը և հնարավոր ~~դատական~~վարութային ծախսերն ապահովելու համար.

8) արդյոք կատարվել է համակողմանի և անաչառ նախաքննություն.

9) պահպանված են արդյոք նախաքննության կատարման կարգը սահմանող սույն օրենսգրքի մյուս կանոնները.

10) մեղադրական եզրակացությունը բավարարում է արդյոք սույն օրենսգրքի 202-րդ հոդվածով նախատեսված պահանջները:

Հոդված 207. Նախաքննության ավարտը քրեական վարույթը կարճելով

1. Սույն օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերից որևէ մեկն առկա համարելով՝ քննիչը նախաքննության ավարտի մասին գրավոր ծանուցում է վարույթի մասնավոր մասնակիցներին, ինչպես նաև սույն օրենսգրքի 199-րդ հոդվածի 3-րդ մասում նշված անձանց և հայտնում վարույթի նյութերին ծանոթանալու տեղը,

ժամանակը և հաջորդականությունը: Մինչև նախաքննության ավարտի մասին ծանուցելը քննիչը միջոցներ է ձեռնարկում իրականացվող գաղտնի քննչական գործողություններն ու օպերատիվ-հետախուզական միջոցառումները դադարեցնելու և դրանց արդյունքները վարույթի նյութերին կցելու համար:

2. Վարույթի նյութերը ծանոթացման համար ներկայացվում են այդ իրավունքն ունեցող անձանց գրավոր խնդրանքով: Վարույթի նյութերի ծանոթացման նկատմամբ կիրառվում է սույն օրենսգրքի 200-րդ հոդվածի 2-6-րդ մասերով և 201-րդ հոդվածներով նախատեսված կարգը:

3. Վարույթի նյութերին ծանոթանալուց հետո վարույթի մասնավոր մասնակիցներն իրավունք ունեն ներկայացնելու միջնորդություններ նոր վարութային գործողություններ կատարելու վերաբերյալ՝ նյութերին ծանոթանալու վերաբերյալ արձանագրություն կազմելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

4. Միջնորդություններ չներկայացնելու կամ միջնորդությունը չբավարարելու վերաբերյալ քննիչի որոշման դեմ բերված բողոքը հսկող դատախազի կողմից մերժվելու դեպքում քննիչը կազմում է ~~գործի~~քրեական վարույթը կարճելու մասին որոշում: Հսկող դատախազի որոշումը կարող է վիճարկվել ~~գործով~~ վարույթը կարճելու մասին որոշման բողոքարկման շրջանակներում:

5. ~~Գործով~~Քրեական վարույթը կարճելու մասին որոշման մեջ շարադրվում են քրեական վարույթ նախաձեռնելու առիթը և հիմքը, նախաքննության ընթացքում հաստատված փաստական հանգամանքները, դրանք հաստատող ապացույցները, քրեական վարույթը կարճելու իրավական հիմքերը և հիմնավորումները, արգելադրված կամ առգրավված գույքի և իրեղեն ապացույցների տնօրինման հետ կապված հարցերը, ինչպես նաև որոշումը բողոքարկելու կարգը և ժամկետները:

6. Քրեական վարույթը կարճելու մասին որոշումն ստանալուց հետո՝ յոթ օրվա ընթացքում, հսկող դատախազը հաստատում է այն կամ որոշում է կայացնում վարույթի նյութերը նախաքննության մարմին վերադարձնելու մասին, եթե պարզում է, որ անհրաժեշտ է շարունակել նախաքննությունը:

7. Քրեական վարույթը կարճելու մասին որոշման հանձնման և բողոքարկման նկատմամբ կիրառվում է սույն օրենսգրքի 196-րդ հոդվածի 6-9-րդ մասերով նախատեսված կարգը:

8. Քրեական վարույթը սույն օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կամ 5-րդ կետով սահմանված հիմքով կարճելու դեպքում քննիչը շահագրգիռ անձին նաև բացատրում է մասնավոր մեղադրանքով վարույթ նախաձեռնելու՝ սույն օրենսգրքի 54-րդ գլխով սահմանված կարգը:

9. Բողոք բերած անձը սույն օրենսգրքի 300-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում կարող է քրեական վարույթը կարճելու մասին որոշումը բողոքարկել դատարան:

10. Դատարանի կողմից բողոքը բավարարելու դեպքում նախաքննությունը շարունակվում է:

11. Քրեական վարույթը կարճելու մասին որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն օրենսգրքով սահմանված բողոքարկման ժամկետը լրանալու, իսկ բողոքարկվելու դեպքում՝ այն վերջնականապես հաստատվելու պահից:

12. Քրեական վարույթը կարճելու մասին օրինական ուժի մեջ մտած որոշումը կարող է վերացվել վերադաս դատախազի որոշմամբ, եթե այդ որոշումը դատական ստուգման չի ենթարկվել: Այդ դեպքում վարույթը նորոգվում է:

13. Քրեական վարույթը կարճելու մասին օրինական ուժի մեջ մտած որոշման անհստակությունները լուծվում են հսկող դատախազի որոշմամբ, եթե դրանց լուծումը չի փոխում որոշման էությունը: Լուծման ենթակա են ապացույցների պահպանման կամ տնօրինման, գույքի արգելադրման, վարութային ծախսերի բաշխման հարցերը, եթե քրեական վարույթը կարճելու մասին որոշմամբ դրանք չեն լուծվել կամ հստակ չեն լուծվել:

Հոդված 209. Քննչական գործողությունների կատարման հիմքերը

1. Քննչական գործողություն կարող է կատարվել միայն այն դեպքում, երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ դրա արդյունքում կարող է ձեռք բերվել տվյալ վարույթի համար նշանակություն ունեցող ապացույց:

2. Բացառապես քննիչի որոշման հիման վրա են կատարվում՝

1) դեպքի վայր հանդիսացող բնակարանում սկզբնական զննումը.

2) արտաշիրմումը.

3) խուզարկությունը~~Խուզարկությունը~~, բացառությամբ բնակարանի խուզարկության, թվային խուզարկության և սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ անձնական խուզարկության.

4) առգրավումը~~Առգրավումը~~, բացառությամբ բնակարանում կատարվող առգրավման, նամակագրության և հաղորդակցության այլ ձևերի առգրավման, բժշկական, նոտարական, բանկային կամ հարակից գաղտնիք պարունակող փաստաթղթերի և առարկաների առգրավման.

5) քննումը:

3. Բացառապես դատախազի թույլտվությամբ են կատարվում՝

1) սույն օրենսգրքի 232-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տվյալներ պարունակող տեղեկատվության պահանջը.

2) պետական գաղտնիք պարունակող փաստաթղթերի առգրավումը:

4. Բացառապես դատարանի որոշման հիման վրա են կատարվում՝

1) բնակարանում խուզարկությունը և առգրավումը.

2) դեպքի վայր չհանդիսացող բնակարանում զննումը և դեպքի վայր հանդիսացող բնակարանում հետագա զննումը.

3) թվային խուզարկությունը.

4) նամակագրության և հաղորդակցության այլ ձևերի առգրավումը.

5) բժշկական, նոտարական, բանկային կամ հարակից գաղտնիք պարունակող փաստաթղթերի և առարկաների առգրավումը.

6) էլեկտրոնային սարքերում կամ կրիչներում պարունակվող թվային տվյալների առգրավումը:

Հոդված 214. Քննչական գործողություն կատարելիս տեխնիկական միջոցների կիրառումը

1. Քննչական գործողության ընթացքը և արդյունքներն ամրագրելու, հանցագործության հետքերը և իրեղեն ապացույցները հայտնաբերելու, ամրապնդելու և վերցնելու նպատակով կարող են կատարվել ձայնագրում, լուսանկարում, պատրաստվել հետքերի ծեփապատճեններ և դրոշմվածքներ, կիրառվել այլ տեխնիկական միջոցներ:

2. Տեխնիկական միջոցներ կիրառելուց առաջ քննիչն այդ մասին տեղեկացնում է քննչական գործողության մասնակիցներին, ինչպես նաև միջոցներ է ձեռնարկում տեխնիկական միջոցների սարքինությունն ստուգելու ուղղությամբ:

3. Սույն օրենսգրքի 208-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քննչական գործողությունները (բացառությամբ փաստաթղթի զննության, տեղեկատվության պահանջի և առարկաներ կամ փաստաթղթեր վերցնելու) պարտադիր տեսաձայնագրվում են, բացառությամբ երբ դա օբյեկտիվորեն անհնար է:

4. Տեսաձայնագրումը պետք է իրականացվի քննչական գործողությունը սկսելու պահից մինչև դրա ավարտը, առանց ընդհատման, բացառությամբ անկանխատեսելի տեխնիկական անսարքության կամ օբյեկտիվ անհնարինության այլ դեպքերի: Տեսաձայնագրման ընդհատման դեպքում քննչական գործողության կատարումն ընդհատվում է, որի պատճառները նշվում են այդ նպատակով կազմվող առանձին արձանագրությունում: Քննչական գործողության կատարումը շարունակվում է տեսաձայնագրումը վերսկսելու պահից: Մինչ այդ քննիչը միջոցներ է ձեռնարկում քննչական գործողության բնականոն ընթացքը և արդյունավետությունն ապահովելու ուղղությամբ: Տեսաձայնագրման դեպքում ապահովվում են քննչական գործողության ընթացքի ամբողջականությունը, տեսանելիությունը (ընդգրկվածությունը, լուսավորությունը և այլն) և լսելիությունը: Տեսաձայնագրությունը չի կարող մոնտաժվել կամ այլ կերպ փոփոխվել:

5. Տեսաձայնագրման միջոցով կատարված քննչական գործողության արձանագրությունն ապացուցման գործընթացում չի կարող օգտագործվել առանց տվյալ քննչական գործողության տեսաձայնագրության էլեկտրոնային կրիչի:

6. Այն բացառիկ դեպքերում, երբ առողջական վիճակի կամ այլ վայրում գտնվելու պատճառով անձի ներկայությունը քննչական գործողության կատարմանն անհնար է, կամ երբ առկա է անձի անվտանգությունն ապահովելու, կամ անչափահաս տուժողի կամ վկայի իրավաչափ շահերի պաշտպանության անհրաժեշտություն, և դա է պահանջում արդարադատության շահը, քննչական գործողությունը կարող է կատարվել տեսահաղորդակցության տեխնիկական միջոցների օգտագործմամբ (տեսակապի միջոցով):

7. Տեսակապի միջոցով քննչական գործողության ընթացքում պետք է երաշխավորվի, որ քննիչը և այլ վայրում գտնվող քննչական գործողության մասնակիցները հստակ տեսնեն և լսեն միմյանց:

8. Տեսակապի միջոցով քննչական գործողությունն սկսելուց առաջ քննիչը պետք է հայտարարի՝

1) քննչական գործողությունը կատարելու տեղը, տարին, ամիսը, օրը և ժամը, ինչպես նաև տեղեկություններ, թե որ վարույթով է կատարվում տվյալ քննչական գործողությունը.

2) քննչական գործողությունը կատարող քննիչի անունը, ազգանունը, պաշտոնը.

3) այլ վայրում գտնվող և քննչական գործողության կատարմանն օժանդակող իրավասու անձի անունը, ազգանունը, պաշտոնը.

4) քննչական գործողության ժամանակ կիրառվող տեխնիկական միջոցները:

9. Այլ վայրում գտնվող և քննչական գործողության կատարմանն օժանդակող անձն ապահովում է քննչական գործողության մասնակիցների ինքնության ստուգումը: Քննչական գործողության ավարտին քննիչը քննչական գործողության մասնակիցներին հարցնում է, թե արդյոք ունեն առարկություններ քննչական գործողության կատարման կարգի կամ ընթացքի վերաբերյալ, և դրանց առկայության դեպքում խնդրում է բարձրաձայն ներկայացնել դրանք:

10. Տեսակապի միջոցով կատարված քննչական գործողության արձանագրությունն ապացուցման գործընթացում չի կարող օգտագործվել առանց տվյալ քննչական գործողության երկկողմանի տեսաձայնագրության էլեկտրոնային կրիչի:

11. Քննչական գործողության ընթացքում կիրառվող տեխնիկական միջոցների բնութագիրը և չափանիշները, ինչպես նաև տեխնիկական միջոցների օգտագործման կարգը սահմանում է Կառավարությունը:

Հոդված 226. Զննումը

1. Զննումը վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքներ պարզելու, ենթադրյալ հանցագործության հետքերը, այլ նյութական օբյեկտները հայտնաբերելու նպատակով տեղանքի, շինության, տրանսպորտային միջոցի, առարկայի, փաստաթղթի~~, էլեկտրոնային կամ մագնիսական կրիչի~~ բովանդակության, կենդանու, մարդու կամ կենդանու դիակի տեսողական ուսումնասիրությունն է:

2. Բնակարանում զննումը, բացառությամբ դեպքի վայրի սկզբնական զննության, կարող է կատարվել բացառապես դատարանի համապատասխան որոշման առկայության դեպքում:

3. Զննության ընթացքում զննության ենթակա օբյեկտները կարող են տեսողական դիտարկման համար մատչելի դարձվել տեխնիկական միջոցների կիրառմամբ, ինչպես նաև կարող են կատարվել զննվող վայրի կամ առանձին առարկաների չափումներ, կազմվել հատակագծեր, գծագրեր, սխեմաներ: Այդ մասին նշվում է արձանագրության մեջ, իսկ կազմված առանձին փաստաթղթերը կցվում են արձանագրությանը:

4. Տեղանքի, շինության, դրանց տարածքում գտնվող առարկայի, տրանսպորտային միջոցի զննումը հնարավորության դեպքում կատարվում է դրա սեփականատիրոջ կամ նրա ներկայացուցչի ներկայությամբ:

5. Դիակի կամ դրա առանձին մասերի զննումը կատարվում է բժշկության բնագավառի ձեռնհաս փորձագետի մասնակցությամբ: Չճանաչված դիակները ենթակա են լուսանկարման և մատնադրոշմման:

6. Հանրամատչելի համակարգչային ծրագրերի, համացանցային կայքերի, թվայնացված տվյալների զննությունից առաջ քննիչը համակարգչային եղանակով պատճենում է զննվող օբյեկտները, ըստ անհրաժեշտության պատրաստում դրանց թղթային պատճենները և այդ մասին նշում արձանագրության մեջ: Ամրագրման արդյունք հանդիսացող թղթային պատճենները (երբ դա հնարավոր է և անհրաժեշտ վարույթի համար) ստորագրվում են զննության մասնակիցների կողմից և համակարգչային պատճենի հետ միասին կցվում արձանագրությանը:

7. Զննության ընթացքում քննիչն ինքնուրույն կամ փորձագետի օգնությամբ վերցնում է հետքեր, առարկաներ, փաստաթղթեր, ինչպես նաև այլ օբյեկտներ, որոնք կարող են ունենալ ապացուցողական նշանակություն: Քննիչն ամեն դեպքում վերցնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ շրջանառությունից հանված կամ ապօրինի շրջանառության մեջ գտնվող օբյեկտները՝ անկախ տվյալ վարույթին դրանց առնչությունից:

8. Այլ քննչական գործողության ժամանակ հայտնաբերված օբյեկտների զննումը կատարվում է այդ քննչական գործողության ընթացքում, իսկ զննման արդյունքներն ամրագրվում են տվյալ քննչական գործողության արձանագրության մեջ:

Հոդված 243. Գաղտնի քննչական գործողությունների իրավաչափության երաշխիքները

1. Եթե գաղտնի քննչական գործողության կատարման ընթացքում ձեռք են բերվել անձի վերաբերյալ տեղեկություններ, նյութեր և փաստաթղթեր, որոնց ստացումը նախատեսված չէր տվյալ գործողությունն անցկացնելու մասին որոշմամբ, ապա դրանք քրեական վարույթում չեն կարող օգտագործվել, բացառությամբ այն դեպքերի, երբ հետաքննության մարմինը գործել է դատարանի որոշման հիման վրա և բարեխղճորեն: Այդ տեղեկությունների, նյութերի և փաստաթղթերի վերաբերյալ կազմվում է առանձին արձանագրություն:

2. Սույն օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերով նախատեսված գաղտնի քննչական գործողությունները կարող են կատարվել՝

1) այն ֆիզիկական անձի նկատմամբ, որի վերաբերյալ առկա են ենթադրյալ հանցանք կատարելու մասին վկայող փաստեր.

2) մեղադրյալի նկատմամբ.

3) այն ֆիզիկական անձի նկատմամբ, որի վերաբերյալ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ մեղադրյալը պարբերաբար անմիջականորեն հաղորդակցվել է կամ ողջամտորեն կարող է հաղորդակցվել նրա հետ.

4) այն իրավաբանական անձի նկատմամբ, որի վերաբերյալ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ դրա գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվում, վերահսկվում կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվում է սույն մասի 1-ին կամ 2-րդ կետով նշված անձի կողմից:

3. Սույն օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված գաղտնի քննչական գործողությունը կարող է կատարվել միայն այն դեպքում, երբ դրա արդյունքով ստացվելիք տեղեկությունները ողջամտորեն կարող են վերաբերել՝

1) այն ֆիզիկական անձին, որի վերաբերյալ առկա են ենթադրյալ հանցանք կատարելու մասին վկայող փաստեր.

2) մեղադրյալին.

3) այն ֆիզիկական անձին, որի վերաբերյալ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ նրա և սույն մասի 1-ին կամ 2-րդ կետով նշված անձի միջև առկա է անմիջական կապ, և ստացվելիք տեղեկություններն ուղղակիորեն առնչվում են վերջինիս վերագրվող փաստերին.

4) այն իրավաբանական անձին, որի կապակցությամբ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ դրա գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կարող է կառավարվել, վերահսկվել կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվել սույն մասի 1-ին կամ 2-րդ կետով նշված անձի կողմից, և ստացվելիք տեղեկություններն ուղղակիորեն առնչվում են վերջինիս վերագրվող փաստերին:

4. Սույն օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գաղտնի քննչական գործողությունը կարող է կատարվել բացառապես այն անձի նկատմամբ, որի վերաբերյալ առկա են ենթադրյալ հանցանք կատարելու մասին վկայող փաստեր:

5. Անկախ կարգավիճակից՝ նույն անձի նկատմամբ սույն օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի 1-5-րդ կետերով նախատեսված որևէ գաղտնի քննչական գործողության կատարման ընդհանուր ժամկետը նույն վարույթով չի կարող գերազանցել տասներկու ամիսը: Ընդ որում, յուրաքանչյուր անգամ դատարանի թույլտվությունը կարող է տրվել երեք ամիսը չգերազանցող ժամկետով:

6. Գաղտնի քննչական գործողությունը դադարեցվում է, եթե՝

1) վերացել է դրա անհրաժեշտությունը.

2) ավարտվել է նախաքննությունը.

3) լրացել է իրավասու դատարանի որոշմամբ սահմանված ժամկետը կամ գաղտնի քննչական գործողության կատարման ընդհանուր ժամկետը:

7. Արգելվում է կատարել սույն օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերով նախատեսված գաղտնի քննչական գործողությունները, երբ անձը, որի նկատմամբ իրականացվելու է այդ գործողությունը, հաղորդակցվում է իր փաստաբանի հետ: Ամեն դեպքում, այդ հաղորդակցության վերահսկման արդյունքով ստացված տեղեկությունները ենթակա են անհապաղ ոչնչացման:

8. Սույն օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գաղտնի քննչական գործողությունը նույն անձի նկատմամբ միևնույն անձի տված ցուցմունքի հիման վրա կարող է կատարվել միայն մեկ անգամ:

9. Գաղտնի քննչական գործողությունների կատարման ընթացքում հատուկ տեխնիկական միջոցների գործադրումը չպետք է վնաս պատճառի մարդկանց կյանքին և առողջությանը, ինչպես նաև շրջակա միջավայրին:

10. Արգելվում է գաղտնի տեղեկություններ ստանալու համար նախատեսված (մշակված, ծրագրված, հարմարեցված) հատուկ տեխնիկական և այլ միջոցների օգտագործումը և գաղտնի քննչական գործողությունների կատարումը ~~սույն օրենսգրքով~~օրենքով չլիազորված պետական մարմինների, ստորաբաժանումների կամ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից:

Հոդված 260. Առարկայական ընդդատությունը

1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին:

2. Վերաքննիչ քրեական դատարանին ընդդատյա են բոլոր այն վարույթները, որոնցով առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ վերանայման բողոք է բերվել:

3. Վճռաբեկ դատարանի քրեական պալատին ընդդատյա են բոլոր այն վարույթները, որոնցով վերաքննիչ քրեական դատարանի դատական ակտերի դեմ վերանայման բողոք է բերվել՝ բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի:

4. Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի՝ կոռուպցիոն հանցանքների քննության դատական կազմին ընդդատյա են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ բոլոր այն վարույթները, որոնցով վերաքննիչ քրեական դատարանի դատական ակտերի դեմ վերանայման բողոք է բերվել:

Հոդված 261. Տարածքային ընդդատությունը

1. Առաջին ատյանի դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:

2. Եթե վարույթը վերաբերում է տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի հանցանքներին, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը:

3. Եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված՝ ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում է

գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը:

4. Այլ պետության տարածքում ենթադրաբար կատարված հանցանքի վերաբերյալ վարույթն ընդդատյա է այն դատարանին, որի դատական տարածքում է գտնվում մեղադրյալի բնակության կամ հաշվառման վերջին վայրը, իսկ եթե հնարավոր չի եղել այն պարզել, ապա այն դատարանին, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթը վերջինն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը:

5. Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դատարանը:

6. Դատական երաշխիքների վարույթներն ընդդատյա են մինչդատական վարույթն իրականացնող նախաքննության մարմնի նստավայրի դատարանին, իսկ բացառիկ դեպքերում՝ նաև համապատասխան վարութային գործողության կատարման վայրի դատարանին, եթե դա չի հանգեցնի վարույթի մասնակիցների իրավունքների և իրավաչափ շահերի չարդարացված սահմանափակման:

7. Սույն հոդվածի 1-5-րդ մասերը չեն տարածվում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների վրա, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին:

Հոդված 262. Ընդդատությունը վարույթները միացնելիս

1. Եթե մինչդատական վարույթում միացվել են առաջին ատյանի տարբեր դատարաններին ընդդատյա երկու կամ ավելի վարույթներ, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը:

2. Եթե մինչդատական վարույթում միացված վարույթներից առնվազն մեկը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վարույթ է, ապա մեղադրանքը քննում է հակակոռուպցիոն դատարանը:

Հոդված 263. Վարույթի փոխանցումը՝ ըստ ընդդատության

1. Նախնական դատալսումների ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:

2. Եթե հիմնական դատալսումների ընթացքում ի հայտ են գալիս այնպիսի փաստեր, որոնց հիման վրա վարույթը ենթակա է փոխանցման ըստ ընդդատության, ապա կողմերի համաձայնությամբ դատարանը շարունակում է վարույթը: Կողմերից մեկի առարկության դեպքում վարույթը որոշմամբ փոխանցվում է ըստ ընդդատության:

3. Մինչև վարույթն ըստ ընդդատության փոխանցելը կարող են կատարվել միայն անհետաձգելի վարութային գործողություններ:

4. Վարույթն ըստ ընդդատության ստացած դատարանը մինչև նախնական դատալսումներ նշանակելն իրավասու է որոշմամբ վիճարկելու դրա ընդդատությունը: Այդ դեպքում վարույթի ընդդատության հարցը հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծվում է Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի որոշմամբ:

5. Սույն հոդվածի 2-4-րդ մասերը չեն տարածվում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների նկատմամբ, որոնք ամեն դեպքում փոխանցվում են հակակոռուպցիոն դատարանին:

Հոդված 295. Սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության ստուգման վարույթի հարուցումը

1. Սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության ստուգման վարույթը հարուցվում է գույքի արգելադրման մասին որոշման իրավաչափությունը հաստատելու՝ քննիչի միջնորդության հիման վրա, որը դատարան է ներկայացվում համապատասխան գույքն արգելադրելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

2. Քննիչի միջնորդությունը պարունակում է՝

1) իրավասու դատարանի անվանումը.

2) քննիչի անունը, ազգանունը և պաշտոնը.

3) միջնորդությունը դատարան ներկայացնելու տարին, ամիսը, օրը, ժամը և րոպեն.

4) վարույթի համարը.

5) արգելադրված գույքի սեփականատիրոջ կամ դրա նկատմամբ գույքային շահ ունեցող այլ անձին վերաբերելի անձնական տվյալները և հասցեն.

6) արգելադրված գույքի նկարագրությունը.

7) գույքի արգելադրման անհրաժեշտությունը և իրավաչափությունը հիմնավորող փաստարկները.

8) անհրաժեշտության դեպքում՝ միջնորդության քննությունը դռնփակ անցկացնելու մասին խնդրանք և դրա հիմնավորումները.

9) միջնորդությանը կցվող նյութերի ցանկը:

3. Միջնորդությանը կցվում են քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրության, համապատասխան անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման, գույքի արգելադրման մասին որոշման պատճենները, գույքի սեփականատիրոջը կամ դրա նկատմամբ գույքային շահ ունեցող այլ անձի տվյալ միջնորդության պատճենն ուղարկած լինելը հավաստող փաստաթուղթ, ինչպես նաև գույքի արգելադրման մասին որոշման հիմնավորվածությունը հաստատող անհրաժեշտ նյութերի պատճենները:

4. Ոչ ուշ, քան միջնորդությունն ստանալու հաջորդ օրը դատարանը կայացնում է սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության դատական ստուգման վարույթ հարուցելու կամ վարույթի հարուցումը մերժելու մասին որոշում:

5. Վարույթ հարուցելու մասին որոշման մեջ նշվում է այն գրավոր, իսկ սույն օրենսգրքի 264-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում՝ բանավոր ընթացակարգով իրականացնելու մասին: Բանավոր ընթացակարգով վարույթ իրականացնելու դեպքում որոշման մեջ նշվում են դատական նիստի անցկացման վայրը, տարին, ամիսը, օրը, ժամը, ինչպես նաև դռնբաց կամ դռնփակ լինելը: Որոշման պատճենը պատշաճ ձևով ուղարկվում է միջնորդությունը հարուցած քննիչին, ինչպես նաև արգելադրված գույքի սեփականատիրոջը կամ դրա նկատմամբ գույքային շահ ունեցող այլ անձի:

6. Դատական նիստը նշանակվում է յոթնօրյա ժամկետում:

7. Վարույթի հարուցումը հիմնավորված մերժվում է, եթե պահպանված չէ սույն հոդվածի ~~2-րդ և~~ 1-3-րդ մասերով սահմանված որևէ պայման: Վարույթի հարուցման մերժումը խոչընդոտ չէ նոր միջնորդություն ներկայացնելու համար:

Հոդված 352. Դատական վերանայման կառուցակարգերը

1. Դատական վերանայումը կարող է իրականացվել միայն սույն հոդվածով նախատեսված կառուցակարգերի շրջանակներում:

2. Վերաքննությունը կիրառվում է այն դեպքում, երբ բողոքարկվում է առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ չմտած՝

1) դատավճիռը.

2) վարույթը կարճելու մասին որոշումը.

3) անչափահասի նկատմամբ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին որոշումը.

4) անչափահասի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց նշանակելու մասին որոշումը:

3. Վճռաբեկությունը կիրառվում է այն դեպքում, երբ բողոքարկվում է վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ չմտած՝

1) դատավճիռը.

2) վերաքննության արդյունքով կայացված այլ եզրափակիչ դատական ակտը.

3) բացառիկ վերանայման արդյունքով վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտը:

4. Հատուկ վերանայումը վերաքննիչ դատարանում կիրառվում է այն դեպքում, երբ բողոքարկվում է առաջին ատյանի դատարանի՝ սույն օրենսգրքի 389-րդ հոդվածով նախատեսված՝ օրինական ուժի մեջ չմտած դատական ակտը:

5. Հատուկ վերանայումը Վճռաբեկ դատարանում կիրառվում է այն դեպքում, երբ բողոքարկվում է վերաքննիչ դատարանի՝ սույն օրենսգրքի 394-րդ հոդվածով նախատեսված՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:

6. Բացառիկ վերանայումը կիրառվում է այն դեպքում, երբ հիմնարար խախտման, նոր հանգամանքի կամ նոր ի հայտ եկած հանգամանքի հիմքով բողոքարկվում է սույն օրենսգրքի 401-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:

Հոդված 386. Վճռաբեկության արդյունքով կայացվող դատական ակտերը

1. Վճռաբեկության արդյունքում Վճռաբեկ դատարանը՝

1) դատական ակտը թողնում է անփոփոխ: Այն դեպքում, երբ Վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը, սակայն գտնում է, որ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ մասնակի սխալ է հիմնավորված, ապա հիմնավորում է անփոփոխ թողնված դատական ակտը.

2) ամբողջությամբ կամ որոշակի մասով բեկանում է դատական ակտը: Բեկանված մասով վարույթը փոխանցում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մտնում է օրինական ուժի մեջ.

3) փոփոխում է համապատասխան ստորադաս դատարանի դատական ակտը, եթե համապատասխան ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից.

4) ամբողջությամբ կամ որոշակի մասով բեկանում է դատական ակտը՝ դադարեցնելով քրեական հետապնդումը կամ կարճելով քրեական վարույթը.

5) վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը բեկանված կամ փոփոխված լինելու դեպքերում Վճռաբեկ դատարանն ամբողջությամբ կամ որոշակի մասով բեկանում է վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ օրինական ուժ տալով առաջին ատյանի դատարանի դատական ակտին: Այս դեպքում Վճռաբեկ դատարանը լրացուցիչ հիմնավորում է առաջին ատյանի դատարանի դատական ակտը, եթե այն թերի կամ մասնակի սխալ է հիմնավորված:

Հոդված 395. Վճռաբեկ դատարանում հատուկ վերանայման բողոք բերելու և բողոքի պատասխան ներկայացնելու ժամկետները

1. Վճռաբեկ դատարանում հատուկ վերանայման բողոքը բերվում է համապատասխան դատական ակտն ստանալու օրվանից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում:

2. ~~Վերաքննիչ~~Վճռաբեկ դատարանում հատուկ վերանայման բողոքի պատասխանը ներկայացվում է բողոքն ստանալու օրվանից հետո՝ տասնօրյա ժամկետում:

Հոդված 403. Բացառիկ վերանայման բողոք բերելու հիմքերը

1. Նոր հանգամանքներով բողոք կարող է բերվել հետևյալ հիմքերով.

1) օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված է վկայի, տուժողի, մեղադրյալի, փորձագետի ցուցմունքների սուտ լինելը կամ թարգմանչի կատարած

թարգմանության սխալ կամ փորձագետի եզրակացության կամ կարծիքի կեղծ լինելը, ինչպես նաև իրեղեն ապացույցների, ապացուցողական և վարութային այլ գործողությունների արձանագրությունների և արտավարութային փաստաթղթերի կեղծված լինելը, որոնք հանգեցրել են ոչ իրավաչափ դատական ակտ կայացնելուն.

2) օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված են դատավորի հանցավոր գործողությունները, որոնք նա թույլ է տվել տվյալ գործը քննելիս.

3) օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված են վարույթի հանրային մասնակիցների այնպիսի հանցավոր գործողություններ, որոնք հանգեցրել են ոչ իրավաչափ դատական ակտ կայացնելուն.

4) Սահմանադրական դատարանը տվյալ վարույթով դատարանի կիրառած նորմատիվ իրավական ակտի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն իր մեկնաբանությամբ ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ.

5) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը, կամ միջազգային դատարանը հաստատել է կողմերի միջև ձեռք բերված բարեկամական կարգավորումը կամ Հայաստանի Հանրապետության կողմից արված միակողմանի հայտարարությունը.~~Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հաստատվել կամ Հայաստանի Հանրապետության կողմից հաշտության համաձայնությամբ կամ միակողմանիորեն ճանաչվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը.~~

6) Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ դատական ակտը կայացրած դատավորը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ տվյալ գործով արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտման համար, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

2. Հիմնարար խախտման հիմքով բողոք կարող է բերվել միայն հօգուտ տվյալ մեղադրյալի՝ հետևյալ հիմքերով.

1) քրեական հետապնդումը բացառող ակնհայտ հանգամանքի առկայության պայմաններում կայացվել և օրինական ուժի մեջ է մտել մեղադրական դատավճիռ.

2) անձը դատապարտվել է այնպիսի արարքի համար, որն ստացել է ակնհայտ սխալ իրավական գնահատական.

3) մեղադրյալի նկատմամբ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռը կայացվել է բացառապես նրա խոստովանական ցուցմունքի հիման վրա.

4) օրինական ուժի մեջ մտած դատական ակտը կայացրած դատարանը վարույթն իրականացրել է ոչ օրինական կազմով.

5) օրինական ուժի մեջ մտած դատական ակտը կայացրած դատարանում վարույթն անիրավաչափորեն իրականացվել է մեղադրյալի բացակայությամբ.

6) օրինական ուժի մեջ մտած դատական ակտը կայացրած դատարանում վարույթն անիրավաչափորեն իրականացվել է պաշտպանի կամ թարգմանչի բացակայությամբ, և այդ հանգամանքն ազդել է վարույթի ելքի վրա.

7) քրեական գործում բացակայում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտը կայացրած դատարանի դատական նիստի արձանագրությունը, եթե այն հնարավոր չէ վերականգնել.

8) օրինական ուժի մեջ մտած դատական ակտում բացակայում է պատճառաբանական մասը:

3. Նոր ի հայտ եկած հանգամանքներով բողոք կարող է բերվել այն դեպքում, երբ՝

1) պարզվել են դատական ակտ կայացնելիս դատարանին անհայտ մնացած այնպիսի հանգամանքներ, որոնք ինքնին կամ մինչև այդ պարզված հանգամանքների հետ ապացուցում են դատապարտյալի անմեղությունը կամ նրա կատարած հանցանքի նվազ ծանր կամ ավելի ծանր լինելը, քան այն, որի համար նա դատապարտվել է, ապացուցում են արդարացվածի կամ այն անձի մեղավորությունը, որի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, ինչպես նաև հաստատում են վարույթը կարճելու ոչ իրավաչափ լինելը.

2) վերացել է մեղսունակության վիճակում հանցանքը կատարած անձի մոտ առկա և պատժի կրումը անհնար դարձնող հոգեկան առողջության խնդիրը:

Հոդված 483. Անցումային դրույթներ

1. Մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելը հետաքննության մարմնի կողմից ստացված հանցագործության մասին հաղորդումները, որոնցով քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում չի կայացվել, քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու համար սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո՝ հինգ օրվա ընթացքում, հսկող դատախազի միջոցով ուղարկվում են քննիչին՝ պահպանելով սույն օրենսգրքով սահմանված քննչական ենթակայության կանոնները:

2. 2022 թվականի հուլիսի 1-ի դրությամբ հետաքննության մարմնի վարույթում գտնվող քրեական գործերը սույն օրենսգրքով սահմանված կարգով նախաքննություն կատարելու համար սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո՝ հինգ օրվա ընթացքում, հսկող դատախազի միջոցով ուղարկվում են քննիչին՝ պահպանելով սույն օրենսգրքով սահմանված քննչական ենթակայության կանոնները:

3. Մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելը որպես մեղադրյալ ներգրավված անձանց նկատմամբ նախաքննությունը շարունակվում է իրականացվել մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

4. Սույն օրենսգրքով նախատեսված համագործակցության վարույթը կարող է կիրառվել նաև մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը որպես մեղադրյալ ներգրավված, սակայն համագործակցության համաձայնագիր չկնքած անձանց նկատմամբ, եթե դա հնարավոր է իրականացնել սույն օրենսգրքի պահանջների պահպանմամբ:

5. Սույն օրենսգրքով սահմանված քրեական հետապնդման ժամկետները գործում են 2023 թվականի հունվարի 1-ից հետո մեղադրյալի կարգավիճակ ստացած անձանց համար:

6. Մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը կասեցված քրեական գործերով վարույթները վեցամսյա ժամկետում քննիչի կամ դատարանի որոշմամբ վերսկսվում են:

7. Մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելը հարուցված քրեական գործերով մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունն իրականացվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով, բացառությամբ սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքի:

8. Մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելը որպես մեղադրյալ ներգրավված անձանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառվում է, իսկ արդեն կիրառված կալանքը վերացվում կամ երկարաձգվում է սույն օրենսգրքով սահմանված հիմքերով և կարգով:

9. Այն քրեական գործերը, որոնցով սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ նախաքննությունն ավարտվել է մեղադրական եզրակացությամբ կամ եզրափակիչ ակտով, դատարան են ուղարկվում և քննվում սույն օրենսգրքով սահմանված կարգով:

10. Մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելն ստացված ապացույցների թույլատրելիությունը որոշվում է դրանց ձեռքբերման ժամանակ գործող օրենսդրությանը համապատասխան:

11. Սույն օրենսգրքի 54-րդ գլխով նախատեսված մասնավոր մեղադրանքով վարույթը կիրառվում է այն իրականացնելու իրավասություն ունեցող դատարանների ստեղծումից կամ դատավորների նշանակումից հետո սկսված քրեական վարույթներով: Մինչ այդ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կարգով:

12. Այն քրեական գործերը, որոնցով մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելը դատական քննություն նշանակելու մասին որոշում է կայացվել, քննվում և լուծվում են մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

13. Մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելը կայացված դատական ակտերով վերաքննիչ և վճռաբեկ բողոքները բերվում և քննվում են մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

14. Մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելն օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի դեմ նոր կամ նոր երևան եկած հանգամանքների, ինչպես նաև հիմնարար խախտման հիմքով բերված բողոքները սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո քննվում են մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

15. Մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելն օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի դեմ 2022 թվականի հուլիսի 1-ից սկսած բացառիկ վերանայման բողոքները բերվում և քննվում են սույն օրենսգրքով սահմանված կարգով:

16. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ, 54.1-ին, 54.2-րդ, 54.3-րդ, 54.4-րդ գլուխների դրույթներն ուժը կորցրած չեն ճանաչվում:

17. Սույն օրենսգրքի 123-րդ և 124-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

18. Սույն օրենսգրքի 212-րդ, 329-րդ և 415-րդ հոդվածներով սահմանված հոգեբանի մասնակցության փոխարեն մինչև 2023 թվականի հունվարի 1-ը իրավաչափ համարել մանկավարժի կամ սոցիալական աշխատողի մասնակցությունը:

19. Սույն օրենսգրքի 53-րդ գլուխն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ

~~**Հոդված 3. Քննչական կոմիտեում դիմումների (հաղորդումների), միջնորդությունների և բողոքների քննարկումը**~~

~~1. Քննչական կոմիտեում քրեական վարույթին առնչվող դիմումները (հաղորդումները), բողոքները և միջնորդությունները քննարկվում են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:~~

Հոդված 20. Քննչական կոմիտեում պաշտոնի նշանակելը և պաշտոնից ազատելը

1. Քննչական կոմիտեի նախագահին նշանակում է Կառավարությունը Հայաստանի Հանրապետության վարչապետի ներկայացմամբ՝ վեց տարի ժամկետով:

2. Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել քննչական կոմիտեի նախագահի պաշտոնում:

3. Քննչական կոմիտեի նախագահի պաշտոնավարման ժամկետը չի կարող գերազանցել սույն օրենքով սահմանված պաշտոնավարման սահմանային տարիքը՝ անկախ վերանշանակման հանգամանքից, բացառությամբ սույն օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքի:

4. Քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին քննչական կոմիտեի նախագահի ներկայացմամբ նշանակում է վարչապետը:

5. Կառավարությունը և վարչապետը համապատասխանաբար քննչական կոմիտեի նախագահին և նրա տեղակալներին պաշտոնից ազատում է սույն օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված հիմքերով:

6. Քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչությունների, վարչությունների և բաժինների, զինվորական քննչական գլխավոր վարչության վարչությունների, բաժինների և կայազորային քննչական բաժինների, Երևան քաղաքի քննչական վարչության, Երևան քաղաքի վարչական շրջանների քննչական բաժինների, մարզային քննչական վարչությունների բաժինների կազմում գործող քննիչներին պաշտոնի է նշանակում քննչական կոմիտեի նախագահը քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում ընդգրկված այն անձանց թվից, որոնք, ավարտելով ուսումնառությունը արդարադատության ակադեմիայում, հաջողությամբ հանձնել են որակավորման քննությունը կամ սույն օրենքով սահմանված կարգով ազատված են եղել արդարադատության ակադեմիայում ուսումնառությունից: Պաշտոնի նշանակվելու դեպքում անձը քննչական կոմիտեի նախագահի կողմից հանվում է քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակից:

7. Քննչական կոմիտեի մյուս ծառայողներին նշանակում է քննչական կոմիտեի նախագահը՝ քննչական կոմիտեում ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկված անձանց թվից: Պաշտոնի նշանակվելու դեպքում անձը քննչական կոմիտեի նախագահի կողմից հանվում է քննչական կոմիտեում ծառայողական առաջխաղացման ցուցակից:

7.1. Քննչական կոմիտեում թափուր պաշտոնի համար կարող է նշանակվել պաշտոնակատար, բայց ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով:

8. Քննչական կոմիտեի նախագահը սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերում նշված քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց պաշտոնից ազատում է սույն օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված հիմքերով:

(20-րդ հոդվածը փոփ. 17.01.18 ՀՕ-79-Ն, 23.03.18 ՀՕ-311-Ն, 09.12.20 ՀՕ-494-Ն)

Հոդված 31. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգը

(վերնագիրը փոփ. 09.12.20 ՀՕ-494-Ն)

1. Սույն օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերով՝ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ իրականացվում է ծառայողական քննություն, որի փուլերն են՝ նախնական ուսումնասիրություն և կարգապահական վարույթ:

Կարգապահական խախտման փաստի առթիվ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ կարգապահական վարույթ կարող է հարուցվել կարգապահական հանձնաժողովի որոշմամբ՝ քննչական կոմիտեի նախագահի, նրա տեղակալի կամ կարգապահական հանձնաժողովի որևէ անդամի միջնորդությամբ:

1.1. Քննչական կոմիտեում կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծման նպատակով նախնական ուսումնասիրություն կատարելու կարգը սահմանում է քննչական կոմիտեի նախագահը:

2. Եթե կարգապահական վարույթը հարուցվել է կարգապահական հանձնաժողովի անդամներից մեկի նկատմամբ, ապա նրա մասնակցությունը հանձնաժողովի աշխատանքներին կասեցվում է մինչև համապատասխան որոշում ընդունելը:

3. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձն իրավունք ունի բացատրություն տալու իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի առնչությամբ:

4. Կարգապահական վարույթը հարուցվում է կարգապահական խախտում հայտնաբերելու օրվանից հետո՝ 30-օրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան այն կատարելու օրվանից 12 ամիս հետո:

5. Կարգապահական վարույթի տևողությունը չի կարող գերազանցել 3 շաբաթը, բացառությամբ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի բացակայության դեպքերի: Այդ դեպքերում կարգապահական վարույթի տևողությունը կարող է երկարաձգվել քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի բացակայության ժամանակահատվածով:

6. Եթե մինչև կարգապահական վարույթ հարուցելը կամ կարգապահական վարույթ հարուցելուց հետո պարզվել է, որ առկա է քննչական կոմիտեի տվյալ քննիչի մասնակցությամբ կամ նրա կատարած ենթադրյալ հանցագործության դեպք, ապա կարգապահական վարույթի հարուցումը հետաձգվում է, իսկ հարուցված կարգապահական վարույթը կասեցվում է մինչև համապատասխան քրեական վարույթի ~~նյութերի նախապատրաստման կամ քրեական գործի քննության~~ ավարտը:

7. Սույն օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով նախատեսված դեպքերում կարգապահական տույժը նշանակվում է կարգապահական վարույթի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում:

8. Սույն օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 4-6-րդ կետերով նախատեսված դեպքերում կարգապահական վարույթի ավարտից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, քննչական կոմիտեի նախագահը հարցը ներկայացնում է կարգապահական հանձնաժողովի քննարկմանը:

9. Կարգապահական հանձնաժողովը կարգապահական խախտման հարցը քննելիս քվեարկությամբ որոշում է կարգապահական խախտման փաստի առկայությունը, կատարված խախտման մեջ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի մեղավորության հարցը, իսկ համապատասխան միջնորդության դեպքում՝ նաև տվյալ իրավիճակում «պաշտոնից ազատում» կարգապահական տույժ կիրառելու հնարավորության հարցը:

10. Կարգապահական տույժի մասին քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը իրազեկվում է ոչ ուշ, քան կարգապահական տույժ նշանակելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

11. Մեկ կարգապահական վարույթի շրջանակներում, անգամ եթե քննչական կոմիտեի նույն քննիչը կատարել է մի քանի կարգապահական

խախտում, քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ կարող է նշանակվել միայն մեկ կարգապահական տույժ:

12. Եթե քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա նա համարվում է տույժ չունեցող:

13. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձն իրավունք ունի իր նկատմամբ նշանակված կարգապահական տույժի մասին որոշումն օրենքով սահմանված կարգով բողոքարկելու դատարանում:

14. Կարգապահական տույժի ենթարկված քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը չի ազատվում նույն արարքի համար օրենքով սահմանված վարչական կամ քրեական պատասխանատվությունից:

(31-րդ հոդվածը փոփ. 17.01.18 ՀՕ-79-Ն, փոփ., խմբ., լրաց. 09.12.20 ՀՕ-494-Ն)